



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնապրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնապրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



Ltn  
2099



1999



# ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԽՈՍՔ

ԵՐԵՄԻԱ. Վ. ԱՐԴԱՊԵՏԻ ՎԱԼԵՎԻԱՅ ՏԵՐ ՍԱՐԳԱՆԵԱՅ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՓԱՅ ԱԾԹՈՐՀՔԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. ԳԼՈՐԴԱՅ Դ.  
ՄՐԱՅՉԱՅՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՐՈՒՍԱԴԻՄԻ  
Տ. ԿԱՅԱՋԱՆ ԱՐԲ-ԵՎՀՈՎՈՎՈՍԻ

Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԻՒԶԱՆԴԻՄԻ  
ՄԴՐԻՄԵԱՆ ՄԿՐՏԻՇ ԱՐԲ-ԵՎՀՈՎՈՎՈՍԻ



ԽՈՏ Կ.

ՆԱՐԴԱՐԱՑ ԿԱՀԹՈՒՐԴԱՑ  
1872. — Կ Գ Օ Ւ

42099.60

28 9405

## ՈՒՂԵՐՁ

Ուր մեմէի ՚ի Հայաստան սրբիւ ՚ի լաց ,  
Եւ սիրեցի զրել զրան զհայրեննեաց ,  
Կոչել ձայնիւ հայրենասէրս անդ ՚ի շրմաց ,  
Զի սրբեացեն զաղի արտօռը յիմոց աշաց :

Մինչ վաստակեալ հասի յափունս Վասիտրի ,  
Եւ վարանեալ իրրեւ սրանդուխոտ թափառէի ,  
Ո՞ւ առել առեալ Նրեմիասս հասաշէի ,  
Մի թէ չմնաց ոք ազգասէր յիմում տոհմի :

Ո՞վ արդ լիցի ինձ մեկենսս որսիւ յօժար ,  
Որ զհայրեննեաց սիրոյ կասկա ՚ի քիրտն արդար ,  
Հանցէ ՚ի լոյս հայկազարմից սիրոզարար ,  
Զի ծանիցեն զարարս նախնեաց դարուց ՚ի դարս :

Պետն ՚ի տոհմէն Պալեան մեծ պէջ Յակոր ճարտար ,  
Ի շառաւխզէ հայկազարմից զեհ բարերար ,  
Ի յազդասէրս միայն զտաւ գործոյս սատար ,  
Ազնուութեան և մեծութեան հասեալ կասար :

Հայրենասէր վեհ ՄԵԿԵՆԱԱՐԻ ներբողեացիւ :  
Բնդ այնոցիկ : որք սիրեցին զհայրենիս ,  
Զորս յանուանէ ՚ի զիրս այսմիկ ես յիշեցի ,  
Եւ զու յաւերդ միշտ ընդ նոսին մեծ եղիցի :



## ՅԱՆՆ ԱՌԱՋԻՆ

Ա.Ռ. ՀԱՄՕՐԷՆ ՀԱՅՈՐԴԻԱ :

Մինչ 'ի 1867 ամին 'ի Եղովաց աշխարհէն ելեալ ,  
'ի 1868 ամի 'ի 5 Յունվարի հասի 'ի վասպուրական՝  
'ի բնագաւառ հայրենի աշխարհն իմ , կալայ անդ-  
զամիս ինն օթեւանս 'ի մենաստան Վարագայ . զի  
անտի դէմ եղեալ էաք դիմել 'ի գերագահ աժտոն  
սուրբ Լջմիածնի : Աղէտք և անձկութիւնք հայրե-  
նեացս , որք յանդիման լեալ էին աշացս ընդ շրջելն  
իմում շուրջ զգաւառոքն Հայաստանի , ընդ որս 'ի խոր  
խոցեալ էին զսիրտ իմ ; որք մինչ զի զչորս օր միայն  
թոյլ տայինն ինձ հանդիսատ առնուլ 'ի բոյն բնիկ հայ-  
րենեացս ընդ հովանեօք ծաղկաւէտ լերինն Վա-  
րագայ , ուր հայրենիք հանդերձ համօրէն գեղեց-  
կութեամբ իւրով յանդիման լինէր աշացս . անդ-  
խանդադատէի , գորովէի և մաշէի 'ի դութ և 'ի սէր  
հայրենեաց և չգտեալ զայլ ինչ հնար և չհանդուր-  
ժեալ աղէտիցն յուրվութեան խորհեցայ երկաթեայ  
դրչաւ որբել զվերս Հայաստանի և սեաւ մելանաւ  
դնել սպեղանիս 'ի վերայ կարմիաներկեալ խոցուա-  
ծոց նորաւ Ռւստի 'ի յիններբորդի Յունվարի ամսոյն-  
յորում աւուր ծնեալ էի 'ի սուրբ աւազանէն .  
սկիզբն արարի ծնանել 'ի մտաց իմոց զբանս և դրել  
կարդաւ . դքսան և երկու երրորդ դլուխս բանից վասն

Հայրենասիրութեան Հայոց : և հասեալ յաւարատ  
կնքեցի զրանս իմ՝ ՚ի 43 յօդոստոս ՚ի նոյն ամի .  
իսկ յանցելում ամի ՚ի հաղածանաց Սեբաստիոյ  
իբրեւ վտարանդի հասեալ ՚ի Բիւզանդին , ետու  
դդու զնաբքեայ վտատակն իմ՝ ՚ի տիպ գրոշմել :

Ի ջան վտատակոյս չեղէ ապաստան ՚ի ճարտա-  
րութիւն մարդկեղեն մտաց , այլ զանիւ մտաց իմոց  
ուղղեալ ՚ի յիմաստութիւն աստուածեղեն գիտու-  
թեան , կալոյ զառաջնորդ բանից և խորհրդոց ի-  
մոց դչոսին սուրբ , որ անսպառ ազրիւըն է ամե-  
նայն հանձարոյ , խորհրդոյ և իմաստութեան , յորմէ  
ու խոնիւք խնդրեցի չնորհել մտաց իմոց բղիսել զբանս  
բարիս վասն հայրենեաց և ասել կարդաւ զգործո  
տուաքինի նահապետաց , թագաւորաց , իշխանաց  
՚ի մարդու և ՚ի գաստիարակութիւն հայասեռ ման-  
կրտոյս , դործովք և կենդանի օրինակօք առաքի-  
նեացն իրիթել զնոսա ՚ի բարի վարս հայրենասիրաց  
աշխարհին մերոյ , եկեղեցականացն ասեմ և աշխար-  
հականաց , որք արեւամբ չափ ճդնեալ նահատակե-  
ցան ՚ի վերայ հայրենի օրինաց և աշխարհաց , պահե-  
ցին զազդ և զպետութիւն հայրենի ՚ի մի ալնդութիւն  
սիրոյ անվեհեր արութեամբ , թողլով մեզ անջինջ  
միշտակ զկենանս և զվարս հայրենասիրութեան  
իւրեանց ջանացայ ըստ կարի իմում խորչեցուցանել  
դրդիս Հայկայ ՚ի հայրենադաւ և ՚ի վտատարոյ  
արանց , զազդատեաց դործու նոցա համառօտելով  
՚ի սոյն :

Առ վշտին հայրենեաց թողի դհամբ լուսութիւն  
մտաց իմոց , աղազակեցի բարձրաձայն , գիտացի թէ  
ես ինձեն միայնակ չզօրեմ զբազմահարուած վերս

Հայրենեաց իմոց լուժել . վութացայ իրրեւ վողաւագափող կոչել առ վիրաւորն զամենայն որդիս  
Թողութունայ . ուժգին ձայնիւ դոչեցի ազազակեցի  
հայցելով ՚ի հայրենասիրաց վողովս հայրենասիրու-  
թեան ճեպել արագել առ հարուածեալն Հայաստան  
առ ՚ի սրբել զնա ՚ի վիրաց անտի իրրեւ բժիշկ ճար-  
տար , զի մի թանկադին կեանք նորա նեղեալ ՚ի վի-  
րաց անտի վախճանեացի ընդունայն և մի բարցձի  
անուն ազգատոհմի նորա յերկրէն կենդանեացս այլ  
կրկին ընծուլեալ արձակեցի ոստո մեծամեծո և  
ամբութիւն հաստատութեան տոհմի նորա կացցէ և  
մնասցէ ընդ արեւու յազդէ մինչեւ յազդ :

Արդ՝ որք ընակեալու էք ՚ի յընդարձակութիւն  
դրախտավայր Հայաստան աշխարհի . և որք ար-  
տաքոյ էք սահմանաց նորա ՚ի վայրս պանդխտու-  
թեան պերճացեալ կամ տառապեալ . դուք ամե-  
նեքեան , հարք և եղբարք իմ . արք , կանայք ,  
ծերք , տղայք , երիտասարդք և կուսանք՝ տուք  
ինձ այսօր զլաելիս ձեր . լուարուք ինձ , լուարուք,  
զի պարկեշտս բարբառիմ և բաշխեմ զբարբառ իմ  
որդւոցդ Հայկաց . եթէ ախորժիցէք և լուիցէք ինձ  
զբարութիւնս երկրի կերպիմք . և զկեանս յաւիտե-  
նականս ժառանգիցէք Մի անյօդ , աննշան և անզօր  
թուիցեն ձեզ ձայնքս այլ յոդաւոր , նշանաւոր  
և զօրաւոր . և գհուսվ իմաստիցս յայտնաւոր . ուստի  
որք սիրեն ՚ի մանկութենէ լսել զբանս արդահատա-  
նաց ՚ի վերաց հայրենեաց , լուիցեն զի ահա տրուպ  
ձայնս այսօր իրրեւ զձայն յանապատի բարբառոյ  
ազազակէ և հասանէ առ ամենեւուան , որք կրեն  
զանուն Հայկաց և Արամոց , առէք զբանս իմ ՚ի

ձեզ . զի իրեւու զմեզը քաղցրասցի ՚ի կոկորդ ո  
ձեր :

Քանզի վասն ամենայն հասակի լսելեաց գիւրա-  
մատոյց և վասն ամենայն մոաց հեշտնկալ առնելոյ  
զպարդ ոճն հոյեական ընտրեցի . զի ընթերցողք  
գիւրաւ յոշի կացցեն զբանս իմաստից . նախ ՚ի յա-  
ռաջին զլայն սկսեալ մինչեւ ցհինդերորդ գլուխն  
աշխարհիկ ոճով շարակարդեցի զբանս , յորոց տա-  
կաւ առ տակաւ զմունիկս և զդարձուածս հոլովմանց  
աշխարհիկ ոճին յառաւեալ ՚ի վեցերորդ գլուխն  
մուծի զոճ բանիս ՚ի գեղեցիկ դպրութիւնն նախ-  
նեաց , որովք վարեցայ մինչեւ ՚ի վախճան մատենիս  
զիւսումմատենչ վերծանողք զնախնեաց ընդ նորոյս  
համեմատեալ գիտացեն զափ վսեմութեամն նախնի  
դրութեան . և իդէ լիցին նոքոք երկասիրել զմա-  
տեանս . յորոց մերազնեայ մանկութիւնն դամ քան  
զդամ վարժեալ ՚ի նոյն , նորոգափայլ զարդարես-  
ցեն զդպրութիւն Արամախօս լեզուիս ՚ի պարծ անս  
ազգիս :

Զբաժանմունս դլիսոց , յօդուածոց և պարբերու-  
թեանց փոխանակ գրելոյ դաս առաջին , դաս երկ-  
րորդ . և երրորդ , գրեցաք գլուխ առաջին , յօդուած  
առաջին , երկրորդ . և երրորդ . վասն զի կամք կտակ և  
յօժարութիւնն սրտի իմայ է տալ զաս յընթերցումն ,  
ոչ միայն հասակու կատարելոց և հմագունից . այլ  
մանաւանդ առաջի առնել մատաղերամ մանկանց  
իբրեւ բարոյախօս դասադիրք , զի ՚ի յանտիական  
սիոց անափ վոյցի կացցեն մանկունք տպաւորել ՚ի  
միտս իւրեանց զսէր և զիսանդ հոյցբնեաց մինչդեռ  
յաճախեն ոտք նոցա ՚ի դպրոցս : Ուստի ամենայն

վաստահութեամբ խնդիր իմ է՝ ՚ի հայրենասէք հայրապետաց, առաջնորդաց և վարժապետաց ազգիս, զի աննախանձ հոգւով վոյլթ կացցեն զմատեանս իրեւ հայրենաւանդ բարոյական դասագիրք մուծանել ՚ի դպրոցս ՚ի գաստիարակութիւն մանկանց Հայաստանի, զի անեսցին սովու ՚ի գիտութիւն ՚ի հայրենասիրութիւն, որով զորացեալք և զուարթացեալք պազարերք լինիցին և պտուղ նոցա կացցէ յաւիտեան:

Զբարուք նախանձ հայրենեացս նախանձեալըստ կարի իմում հոտուցի զպարախիսն իմ առ նու. ՚ի դութ և ՚ի սէր նորա թերեւս ուրեք ուրեք անցի ըստ չափ ուզգագառութեան մուաց, եռանդի իմուն հայրենասիրութեան վարեալ քանթէ քանիւ. մի երբէք պախարակեսցի եռանդս այս, այլ գովելով գովեցի գեղեցիկ յանդգնութիւնս. զի ՚ի բազմաժամանակեայ և ՚ի սաստիկ խոցուածոց վիրացն Հայաստանի և իմ ուժգին ցոլացան արտաքս արձագանք ՚ի որտէս, զի թէ սիրու իմ ընէր թերեւս քարինք Հայրաստանի աղաղակէին:

Արդ՝ որդիք Հայկայ, որք զբանս իմ իբրեւ անշինչ կնիկ տպաւորեք ՚ի խորս սրտից ձերոց, և զիմաստիցն առնուք զճաշակն, զնժդեհ և զորուալ զերեմիասն ձեր մի մոռանայք, այլ յիշեցէք ՚ի բարի մազթանս ձեր. որ կամս աւասիկ վառեալ վարանեալ ՚ի վիշտս հայրենեաց իմոց, որում այց արասցէ Տէր ըստ մեծի ողորմութեան իւրում:

Մատեանս այս իրեւ զմահարձան յիշատակի աղդաստոհմին իմոց կացցէ ՚ի մէջ Հայաստան աշխարհի, սովու յիշեռնիք զպասին իմ տէր Սարդիս քահանայն,

հ՚ի Տէր Հանդուցեալ Ծնողքն իմ Յարութիւն և Ան-  
թառամն , զհանդուցեալ զաւագ Եղբայրն իմ վտէր  
Մելքիսեդեկ , զկենդանի Եղբարսն իմ զվըմթանէս և  
զԱրիստակէս վարդապետն , զաշխարհիկ Եղբարսն  
իմ զԱւետիս դՊօղոս և Սեղբագ : Զսա նուիրեցի ՚ի  
փառս մեծին Աստոծոյ , ՚ի պայծառութիւն Ե-  
կեղեցեացն Հայաստանի , ՚ի սէր սուրբ տաճարին  
Գէորգայ զօրավարին , որ ՚ի Ամ սուրբ անապատին ,  
յորում կրօնաւորեալ զամս ութիւն ուսայ զուսումն  
սուրբ և ընկալայ զկարդ և զգաւազմն վարապե-  
սութեան :



# ՅԱՆԿ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

#### ՀԱՅՐԵՆԱՍԱՄԲՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ ·

80Դ· Ա.	Հայրենասամբութիւն ընդհանրապէս ·	1
80Դ· Բ.	Հայրենասամբութիւն և հայրենիք ·	10
80Դ· Գ.	Պատմութիւն Հայոց և Հայրենասամբութիւն	13

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

#### ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՒՐ ԱՇԽԱՐՀ ԵՆԴՊԵԱՆ ԵԽ ՄՆԴԴԵԱՆ ՀԱՅՈՅ ·

80Դ· Ա.	Հայաստան երկիր ·	23
80Դ· Բ.	Աշխարհ ծննդեան Հայոց ·	33
80Դ· Գ.	Աշխարհ սննդեան Հայոց ·	43

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

#### ԵՆՈՒՔ ԵԽ ՈՐԴԻՒՔ · ԱԶԳԱԿԱՆՔ ԵԽ ԲԱՐԵԿԱՄՔ ·

80Դ· Ա.	Ենուք և Որդիք ·	49
80Դ· Բ.	Ազգականք ·	55
80Դ· Գ.	Բարեկամք ·	61

### ԳԼՈՒԽ ԶԱՐԾՈՐԴ

ԱԶԴ· Ա.	ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ ԵԽ ԺՈՂՈՎՐԴԻԴ ·	65
80Դ· Բ.	Ազգայնութիւն ·	71
80Դ· Գ.	Ժողովուրդ ·	76

**ԳԼՈՒԽ ՀԻՆԴԵՐԻՐՈՐԴԻ**  
 ՈՒԽՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ ։ ՀԱՅՐԱՊԵՏ ։ ՏԵՍՈՒՉ ՎԱՐ-  
 ԴԱՊԵՏ ։ ՔԱՀԱՆԱՅ ։

80Դ. Ա. Հայրապետ ։	81
80Դ. Բ. Եպիսկոպոս և Տեսուչ ։	95
80Դ. Գ. Ա. Արդապետ Քահանայ և Այլք ։	104

**ԳԼՈՒԽ ՎԵՅՏԵՐԻՐՈՐԴԻ**

ԱՐՕՆՔ ։ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՎԱՆՈՒՅԹ ։

80Դ. Ա. Կրօնք ։	144
80Դ. Բ. Եղեղեցի ։	126
80Դ. Գ. Վահովայք ։	141

**ԳԼՈՒԽ ԵՈԹԵՐԻՐՈՐԴԻ**

ՆԱՀԱՊԵՏՏՐ ։ ԹԱԳԱԼԻՈՒԹ ԵՒ ԽԵԽԱՆՔ ։

80Դ. Ա. Նահապետ ։	157
80Դ. Բ. Թագաւորք ։	168
80Դ. Գ. Խշանք ։	177

**ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐԻՐՈՐԴԻ**

ԼԵԶՈՒ ։ ԴՊՐՈՒԹԻՒԽ ԵՒ ԳԻՐ ։

80Դ. Ա. Լեզու ։	185
80Դ. Բ. Դպրութիւն ։	194
80Դ. Գ. Գիր ։	205

**ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐԻՐՈՐԴԻ**

ԻՄԱՍՏԱՍԻՐ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ ։ ԸՆԹԵՐՑՈՂ ։  
 ԵՒ ՎԻՊԱՍԱՆՔ ԵՒ ԲՈՆԱՍԵՂՄՐ ։

80Դ. Ա. Իմաստասիր և Մատենագիր ։	215
80Դ. Բ. Ռնդերցօղք և Վիպասանք ։	222
80Դ. Գ. Բանաստեղք ։	228

**ԳԼՈՒԽ ՏԱՐԱԾԱՆԵՐՐՈՐԴ**

ՅԱՏԿԱՆԻԹԻՒՆՔ · ԶԻՐՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ ·

ՅՈԴ · Ա · Յատկութիւնք ·	141
ՅՈԴ · Բ · Զիրք ·	251
ՅՈԴ · Գ · Առջորութիւնք ·	260

**ԳԼՈՒԽ ՄԵՑԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

ԳԵՐԵԶՄԱՆՔ · ԱՄԿԵՐՊ · ԱՐՀԱՆՔ · ՏՈՆԱԿՄԱՆԻ-  
ԹԻՒՆՔ · ՅԵՇԱՏԱԿԻՔ ԵՒ Ա.Ա.ՆԴՈՒԹԻՒՆՔ ·

ՅՈԴ · Ա · Գերեզմանք · Ամկերպ և Արձանք ·	271
ՅՈԴ · Բ · Տօնք և Յեշատակիք ·	279
ՅՈԴ · Գ · Աւանդութիւնք ·	290

**ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**  
ԼԵՐԻՆԴ · ՀՈՎԻՏՔ ԵՒ ԱՆՏԱՌ ·

ՅՈԴ · Ա · Լերինդ ·	304
ՅՈԴ · Բ · Հովիտք ·	514
ՅՈԴ · Գ · Անտառ ·	521

**ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ (\*)**

ԴԱՇՏՕՐԱՅՔ · ԵՐԿԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ · ԱՇԽԱՐՀԱ-  
ՇԻՆՈՒԹԻՒՆ ·

ՅՈԴ · Ա · Դաշտօրայք ·	527
ՅՈԴ · Բ · Երկիրագործութիւն ·	536
ՅՈԴ · Գ · Աշխարհաշինութիւն ·	546

**ԳԼՈՒԽ ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

ՔԱՂԱՔՔ · Ա.Ա.ՆՔ ԵՒ ԳԻՒՂ ·

535

(\*) Այս գլուխ ՚ի շաբաթ գլուխ մասենիս , զորիանակ  
զնելոց ժամ սիսականից եղեալ է ժամ :

Ժ

**ԳԼՈՒԽ ՀՆԴԵՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

**ՍԱՀՄԱՆՔ ։ ԲԵՐԴԻ ԵՒ ԱՄՈՒՐՔ ԱՊԱՍԱՆԱՑ ։**

Յ07. Ա. Առհմանք ։	565
Յ07. Բ. Բերդք և Ամուրք Ապասանաց ։	575

**ԳԼՈՒԽ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

**ՄԱԼԻ ։ Լիձք ։ ԵՒ ԶՈՒՐՔ ՀԱՆՔԱՅԻՆ ։**

**ԳԵՏՔ ։ Վ.ՏԱՐԵ ԵՒ ԱԴՅԻՒՐՔ ։**

Յ07. Ա. Մովք ։ Լիձք ։ և Զուրք Հանքային ։	585
Յ07. Բ. Գետք ։ Վ.Տարե և Ադյւրք ։	591

**ԳԼՈՒԽ Ե0ԹՆԵՒՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

**ԳԻՏՈՒԹԻՒՆ ։ ՀԱՆՁԱՐ ։ ԳԻՒՏ ԵՒ ԱՐՈՒԵՍ ։**

Յ07. Ա. Գիտութիւն ։	401
Յ07. Բ. Հանձար ։	409
Յ07. Գ. Գիւտ և Արուես ։	415

**ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՒՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

**ԽՈՐԱԴԻՏՈՒԹԻՒՆ ։ ԿԵՆՅԱԴԱԴԻՏՈՒԹԻՒՆ**

**ԵՒ ՔԱԴԱԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ ։**

Յ07. Ա. Խորադիտութիւն ։	422
Յ07. Բ. Կենյադադիտութիւն ։	451
Յ07. Գ. Քադակադականութիւն ։	459

**ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ**

**ԸԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՕՏԱՐ ԱԶԻՆՍ ։ ՇԱՀԱ-  
ԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ Վ.ԱՃԱՌ-ԱԿԱՆՈՒԹԻՒՆ ։**

Յ07. Ա. Յարաբերութիւն ընդ օտար ազինս ։	450
Յ07. Բ. Շահարերութիւն ։	456
Յ07. Գ. Վ.Աճառականութիւն ։	468

ԳԼՈՒԽ ՔԱՍՏԵՐԲՈՐԴ

ԿԱԾԱՆՔ ԱՌՈՂՋԱԿԻԹԻՒՆ ԵՒ ԱՐՖԱԿԻԹԻՒՆ .

80Դ. Ա. Կետնը .	475
80Դ. Բ. Առողջութիւն .	479
80Դ. Գ. Արկութիւն .	489

ԳԼՈՒԽ ՔԱՍՏԵՐԲՈՐԴ

ԵՎՐՈՅՑԻԹԻՒՆ ԱՀՅ ԵՒ ՄԵԼԻԹԻՒՆ .

80Դ. Ա. Եղբայրութիւն .	493
80Դ. Բ. ԱՀՅ .	504
80Դ. Գ. Ավագութիւն .	511

ԳԼՈՒԽ ՔԱՍՏԵՐԲՈՐԴ

ԱՆՁԵԱԼՆ ՀԱՅՈՅ ՎԻՃԱԿ ՆԵՐԿԱՅԻՑ .

ԽՈՐՀՈՒԱԿԱՆ ԱՌԱԾ Ի ՎԵՐԱՅ

ԱՊԱԳԱՑԻՆ ՀԱՅՈՅ .

80Դ. Ա. Անցեալն Հայոց .	518
80Դ. Բ. Կերկայու Հայոց .	528
80Դ. Գ. Խորհրդական առած ՚ի վերայ առադային Հայոց .	540
ՄԱԴՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԱԱՅԻՐԻ .	548

## ՀԱՅՐԵՆԱՍԼԵՐ

« Այս (Արամ) այր աշխատասէր և ՀԱՅՐԵՆԱԾԵՐ  
« եղեալ որպէս ցուցանէ նոյն պատմագիր (Մար  
« Արաս կատինայ) լաւ համարէր զմեռանելն ՚ի վե-  
« րայ ՀԱՅՐԵՆԵԱՅ քան թէ տեսանել զորդիս օտա-  
« րածնաց կոխելով զսահմանս հայրենիս և հարա-  
« զատից արեան նորա տիրել արանց օտարաց :

Խորենացի . Գլուխ ԺԴ :



## ՀԱՅՐԵՆԻՔ

« Քո հայրենիք լիցի քեզ մեծ քան զբնաւ ,  
« Զաստի բարիս թէ նըմա զոհես է իրաւ ,  
« Բնութեան է ազգ՝ հայրենի տանն ածել դութ ,  
« Եւ դաղանք զորջ ծննդեան օիրեն զիսաւարչուտ :

« Մի ինչ ըոլոր է հայրենիք , մի մարմին ,  
« Եւ մեք անդամք , մի մի մարմին եմք նորին ,  
« Մոլորի այր քաղաքացի թէ ուրոյն  
« Կարծիցէ զանձն ՚ի տոհմակցաց ժողովոյն :  
Քնար Հայկական . Երես 214 :



# ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Յ

Դ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

Յ Օ Դ Ա Խ Ա Ն Ա .

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԸՆԴՀԱՆՐԱՊէՍ

1. Ո՞չ, թէ ինչպէս պրտի մոռօք կղձայի՝ հայրենասիրութիւն իւր ճիշդ պարագային.ք նկարագրելը մի այնպիսի ողոքիչ և կենդանի գրչաւ, որպէս զի Հայոց սրտեր կարգային զայն, և ոչ թէ լեզուներ. բազում մոտածեցի, բազում աշխատեցայ, և բազում անդամ տարակուսեցայ. վասն դի եռ ո՛չ այն արագագիր գորեի զհայրենսասիրութեան վսեմութիւն Հայոց սրտի վրայ անդամնդեայ գըրշաւ. խորագոյնս քանդակելել, որ յաւիտեան անշնչելի մնայ. Մաս.ք բնութեան անսահման Ովմիամնուին մէջ սլանալով՝ հայրենասիրութեան բնական անպայոյցներ ու զեցի յառաջ բերել. բայց միեւնոյն վայրկենի մէջ խելամտեցի թէ՝ բնական անպայոյցներ միայն կարող չեն հայրենասիրութեան բովանդակ վսեմութեան ճշդրիս վկայ լինել: Ուստի բնութեան Արարտին, վերին խմաստութեան կողմն ուշ դարցուցի, առանց վարանելու երկնից գերբնական ձայնին անսացի, որ յերկնուան անտի սրտիս բարխաման կպատասխաներ թէ՝ որդի ի մարդոյ ելլէք ք

մի հաւատար, թէ՝ երկրածին ոք եթէ երկնային սիրոյ զեղմամբ տողորեալ, և ոգեւորեալ չէ, չէ, և չէ բաւական այն վսեմ առաքինութեան դաշդափար մատաց մէջ գաղափարել. վասնդի սէր բնութեան Արարէն կրղխ. հայրենասիրութիւն երկինքէն կիջնայ և առը սրտերու մէջ կրնակի, և աշխարհ իւր բոլոր զօրութեամբ և բռնութեամբ զայն հայրենասիրի սրտէն չեն կարող ջնջել երրէք.

2. Այս', բնական մէր մի ունիմք մեր սրտին մէջ, որ իւր ձգողական ներքին զօրութեամբ մեր սիրու մեզմէ յափշտակելով յանկարծ հայրենեաց աշխարհ կտանէ, առերակաց վրայ ողբալ կուտայ, և գեղեցկութեանց վրայ զմոցլել կհրամայէ, առանց գերբնական սիրոյ ներգործիւ զօրութեան չէ և չէ երրէք. մոփիր սիրոյ օրինաց խորութեան մէջ, բարձրացիր սիրոյ բոցափառ անսահման թեւերու վրայ, հուայ մերձեցիր կական լուսոյն, հոն կտեսնաս և կիմանաս թէ սէրն ոչ այլ ինչ է, բայց եթէ մի գերբնական բորբոք, և Աստուածային ծաւալումն որ միանդամ մարդոյս սրտի մէջ բորբոքելով, զայն մինչեւ ՚ի գառաթ վսեմութեան կրարձրացնէ: Նա սիրու հրեղէն կունենայ, հոգի Աստուածային, գործ գերմարդկային, քաջութիւն զիւցազնական, յիշտակ անմահ, երր ճշմարիտ հայրենասէք է:

3. Ո՞վ չգիտեր թէ՝ գարերու շրջան արեգական ներքեւ հոյակապ մարդիկ յառաջ բերաւ, որքարտաքին կերպարանօք մարդ երեւէին՝ իսկ ներքին կերպարանօք հրեշտակ կամ Աստուած, որք հայ բենասիրութեամբ վսեմացած անցան քան զըլնական կարողութիւն մարդոյ, յօդուտ համօրէն

մարդկութեան և հայրենեաց գործեցին գործում մեծամեծս, քաջացան ի մարտու պատերազմի, խորառակեցին զօրութիւն բռնաւորաց, և մարդկութեան սերունդ փրկեցին եղիպատական շղթայներէն : Վասն պոյց՝ իրաւամբ և տուանց երկմտնելու ժողովուրդք ՚ի մի ձայն զայնպիսիս՝ բարերարի, հայրենասիրի, հրեշտակի և. Աստուծոյ անունով պատուեցին . վասնողի Աստուծոյ և հրեշտակի նմանէին : Քանզի մարդիկ ժամանակին այնմիկ աչօք խրեանց տեսոնն թէ սիրոյ բորբոք առաւել քան զառաւել արծարծեր էր նոցա սրտի մէջ . մարդիկ՝ որք ոչ ընչից կը խնայէին , ոչ մահուանէ կերկնչէին և ոչ յօդուտ ազգի և հայրենեաց գործելէ կղադարէին . մարդիկ՝ որք զանձն ՚ի վերոյ բարեկամաց զնել փառք համարէին , և արեամբ հայրենեաց գրօշ կրարձրացը նէին . մարդիկ՝ որք զէնք կառնեին արդարութիւն , ճշմարտութիւն , և մարդոց իրաւունք պաշտպանելու :

4. ԱՌ չղիտեր՝ այն մեծ մարդոց շատեր մեղ պէս հասարակ մարդոցմէ ծնան և աշխարհ եկան , ով չղիտեր թէ շատերու մարմնոց քանակութիւն և ոյժ՝ հազիւ թէ մեր ուժին կհաւասարէր , շատեր ոչ հսկոց էին , և ոչ հսկայներէ ծնան , շատեր ոչ դեղեցիկ էին , և ոչ զօրաւոր . բայց բան մի կնկատուէր նոցա վրայ , որ հսկայներէ աւելի հսկայ , զեղեցիկներէն աւելի զեղեցիկ , և զօրաւորներէն աւելի զօրաւոր էր . սէր և հայրենասիրութիւն էր այն , որ նոցա սրտի մէջ հսկայացած զեղեցիացեր և զօրացեր էր : Սէրն է հայրենասիրի միակ առաքինութիւն , սէրն է հայրենա-

սիրին հրամանահան և առաջնորդ . սէրն է որ հայրենասիրի սիրոց ընդարձակէ , բաղուկ զօրացնէ , ընթացք փութացնէ , խնամք տարածէ . զաղդփրկէ , հայրենիք աղատէ : Եւ այս սէր երկրային չէ , այլ երկնային :

5. Պատճառն ի՞նչ է արդեօք , որ սոյն սիրոյ եռանդն հանրածաւալ եղած չէ ամեն մարդոց սրտի մէջ , վասն է՞ր շատեր սոյն վսեմ առաքինութենէն մասն և բաժին չունին . ո՞հ ինչու համար հազարաց մէջ մէկ , բիւրոց մէջ հազիւ երկուք գրանուին , և անոնք աշխարհք և ափեղերք մի կարգեն , անոնք երկրիս սիւն են , և մարդկութեան քաղաք ապաստանի . անոնք մահկանացու են , բայց գործքեր անմահ , անոնք սոսկ հոգեղին էակ չեն , բայց մարմին ունենալին տարակուսելի է . անոնց դոքք երկիր չօշափէ , բայց նոցա սիրու և գլուխ Աստուծոյ ձեռքին մէջն է : Եւ Աստուծ սէր է . գլուխ պատուիրանին սէր է , լրումն օրինաց սէր է . ով որ հայրենասէր է , սիրոյ պատուիրան բովանդակ կատարէ , Աստուծ սիրոյ լուսաճաճանչ անսպաս ազրիւն է . մերձեցիր Աստուծոյ , ա՛րք սոյն անտապական բաժակէն բաժակէն , որպէսզի կարողանաս զլսառուած , զընկերդ , զհայրենիքք և զհամօրէն մարդկութիւն սիրել . եթէ չմերձենաս Աստուծոյ , գերբնական սիրոյ ճաճանչ չտպաւորիր պրախդ մէջ չժաւալիր երակացդ մէջ . խաղառ դուրիկ մնաս հայրենասիւրութենէ , հեռանաս եղբայրափրութենէ , կը փախչիս մարդասիրութենէ , երես դարձունես Աստուծուածսիրութենէ . իբրեւ անբան անաստն բնական սիրով միայն կապրիս , և իբրեւ շարժական

անզդոյ արձան մի երկրիս երես թաւոլիս , երբ  
գերբնական սէր չունիս , ո՞չ մարդասիրութիւն :  
ո՞չ հայրենասիրութիւն : և ո՞չ Աստուածակարութիւն  
կարող ես ունենալ երբէք :

6. Այս' պէտք է խոստովանիլ թէ՝ Համօրէն  
մարդկութիւն Աստուածոյ սիրոյ օրինաց ծնունդն է,  
այս' նա իրեւ որդի սիրելով զմեղ՝ Համարձակու-  
թիւն տայ մեղ հայր անուամբ կոչել զիւր սքանչելի  
մեծ անուն . այս' , ո՞չ միայն այս չափամա՞ս՝ այլ  
բաղմատեսակ մարդասիրութեամբ պատուիրէ մեզ  
համօրէն մարդկութիւն սիրել . բայց խնդիր է  
թէ , արդեօք ո՞վ կարող է առանց հայրենասի-  
րութեան զմարդկութիւն սիրել , արդեօք նա ո՞ր  
իւր հայր , մայր , զեղրայր և զազգականս չփրէ , կա-  
րող է՝ Համարձակի ասելթէ ես օտարներ սիրեմ , ան-  
ժամովթներ և հեռաւորներ մարդասիրաբար խնա-  
մեմ ևայլն . Եթէ Համարձակի ասել , և ես Հա-  
մարձակապէս պատուիսանեմ թէ , այդ մարդա-  
սիրութիւն չէ , այլ մարդախարութիւն :

Ես կհամոզուիմ զքեղ մարդասէր կոչել , երբ  
տեսնամ թէ՝ դու քո ներքին և արաւաքին բո-  
լոր զօրութեամբդ և կարողութեամբդ . հայրեն-  
եացդ թէ բարոյական և թէ նիւթական զարդաց-  
ման , յառաջադիմութեան և ամեն կերպ բարօրու-  
թեան կաշխատիս , ջանաս , ո՞չ ընչիցդ , և ո՞չ  
անձինդ խնայես . այս' յայնժամ ասուզիւ Համոզ-  
ուիմ թէ՝ դու ո՞չ միայն հայրենասէր ես , այլ մար-  
դասէր եւս : վասն զի յայսնի է ամենեցուն թէ՝  
հայրենեաց ամէն կերպ յառաջադիմութիւն ո՞չ թէ  
միայն Հայոց ազգին օգտակար և շահառէտ է , որուն

մէջ ձնած և կեցած ես , այլ թէ հանուր աշխարհի  
և հանուր մարդկութեան . վասնզի երբ մէկ միտք  
դնէ բնական և խմաստափրական գիւտերով զաղդն  
հարստացնել և փառաւորել . յանկարծ կուեանայ  
թէ հանուր աշխարհի և հանուր մարդկութեան  
օգուտ բերելով հայրենասիրի և մարդասիրի պարտք  
միանդամայն կատարած է . ինչպէս Գոլոմառ  
Սպանիացւոց համար միայն ուղեց Ամերիկայ գըտ-  
նալ . բայց հիմույ նորա գիւտ համայն աշխարհի  
և համայն մարդկութեան օգտաւէտ եղաւ . նոյն-  
պէս կիւթենպէրի գիւտ՝ ոչ միայն իւր ազգին ,  
այլ համուրէն ազգաց և ազանց յառաջադիմութեան  
և փրկութեան պատճառ եղաւ :

7. Թերեւս մէկն ինձ պատասխանէ թէ՝ մար-  
դոց համար մի առանձին հայրենիք չկայ երկրի  
վրայ . — Հողագունդ ամբողջ համայն մարդկու-  
թեան հայրենիքն է , ինչպէս գրած է Սենեքայ  
իմաստակէրն թէ՝ մարդս երկու հայրենիք ունի .  
մին ամբողջ հողագունդ և միւս իր ծնած երկիր .  
բայց ոչ ամբողջ հողագունդ մեր հայրենիքն է ,  
և ո՛չ մեր ծնած երկիր . վասնզի հողագունդ ո՛չ  
միայն մարդկութեան , այլ համայն կենդանեաց  
հայրենիքն է , եթէ Սենեքայ՝ ծովերու ջուրեր ցա-  
մաքեցնէր , լեռներու շղթայներ հարթէր , հաւա-  
սարէր , մարդոց լեզուներ և ցեղեր միացնէր , հո-  
ղագունդ կլինէր մարդուս հայրենիք . եթէ մեր  
ծնած երկիր մեզ հայրենիք համարուէր . օտար  
երկիրներ ծնածներ իրաւունք չունէին զշայաստան  
իրենց հայրենիք կոչել . բայց մեք մեր բուն հայ-  
րենիք այս մոռօք չեմք ըմբռուներ երբէք . մեր

( 7 )

Հայութեան հայրենիքն է Հայաստան, դոր մեր Հայկ  
Նահապետ տիրեց և յորդւոց յորդի ժառանդեց .  
այն է մեր հայրենիք, որուն մէջ մեր նախնեաց  
յիշատակներ, աւանդութիւններ, լեզուն և ազ-  
գութիւն մեզ կներկայացնէ՝ զոր մեք կափեմք և  
օիրելէն չեմք կարող յետս կենալ :

8. Ստորիկեան իմաստակներ մարդասիրա թիւն  
սբատրուակ առնելով տուոցին իրենց հետեւողաց  
թէ՛ բախտ որ աշխարհի մէջ որ մարդուս յաջողի,  
նոյն աշխարհ յաջողուած մարդուն հայրենիքն է .  
ըստ իրենց առածին թէ՛ յիմարք զհայրենիս, իմաս-  
տանք զհանդիսաւ . բայց սոյն խեղճ մերի իմաստակ-  
ներ երբ իրենց բուն հայրենիքն ուրացան, արդարեւ  
ոչ երկրիս վրայ հայրենիք, և ո՛չ աշխարհիս մէջ  
հանդիսաւ գտան . երբ ցեղապետութեան, և ազ-  
գայնութեան պատմութիւն մերժեցին . մարդկու-  
թիւն գտնալու համար՝ մարդկութեան սահմանէն  
ելնելով անասնոց կարգն անցան . վոխանակ մարդի իլ  
դասախրակելավ կիրքերն ամաքելու, մարդ մաս-  
նեցին կրից հսաննաց . ամնունութեան կապ խզե-  
լու երան, որպէսզի մարդկութեան ճետ յերկ-  
րէս ընածինջ լինի . և ահա այս սոսկալի ոճրագոր-  
ծութեան անուն իմաստասիրութիւն գրին . Ստո-  
յիկեան խօլական ցնորից սակաւաթիւ հետեւողք  
եղան այն դարու մէջ, բայց դեռ սոյն շրջմալիկ զա-  
ռանցանք այժմեան իմաստակաց ուղեղի մէջ պտոյտ  
կառնէ երրեմնակի, յարմէ ըստ ամենայնի զգու-  
շանալ պարտին Հայաստանի որդիք :

9 Բայց Յունաց և Հռոմայեցւոց հեթանոս վիլի-  
տավայից հայրենասերներ, ինչպէս էին Զենոն, Սոկ-

բաս, Պղմատան, Արիստոտել, Սենեքայ և այլն . որք ընական լուսով և բարոյական խմաստասիրութեամբ և առաքինութամբ այնչափ վահմացան և բարձրացան , որ գոդ թէ՝ անծանօթ Լակին մերձենալով ծանօթացեալ ուէր և հայրենասիրութիւն բերին և քարոզեցին իրենց հայրենակցաց , խմացան իմաստունք թէ՝ մարդն Աստուած չէ որ ամենայն ուրեք ներկայ լինելով , տեղոյ և հայրենեաց կարութութիւն չունենայ , գիտեցին թէ անասունք անգամ հայրենիք ունին , հայրենիք կոիրեն և եթէ հայրենիքն զրկես , մեռանին , նոյնպէս բոյսեր հայրենիք ունին , եթէ տեղափոխես՝ չորանան :

Աւստինկատելու է թէ , ինչպէս մի մարդ իւրընտանեօք առանձին բնակելու համար առանձին տան մի պէտք կունենայ , նոյնպէս ազգ ային ամրող ընկերական մարմին հայրենեաց մի մէջ բնակելու կարեւորութիւն զգայ , ճանաչէ , յարդէ . ինչպէս մարդ մի առանց սեփիհական տան միշտ անհանդիստ և թափառական է , նոյն ազգ մի եթէ չունենայ հայրենիք՝ միշտ անհանդիստ և թափառական կլինի . մարդո իւր ներքին բնազդութիւներէն ստիպուած է , միշտ իւր անձն սիրել և փառաւորել , նոյն սիրոյ բնազդ մասի ստիպուած է իւր ազգ այնութիւն սիրել , փառաւորել . զի ինչպէս մարդ մի առանց տան , նոյնպէս ազգ մի առանց հայրենեաց ոչ փառք ունի , ո՛չ պատիւ և ո՛չ զօրութիւն : Զգիտեհու , թէ՝ Հայոց հայրենիք Հայաստան է , Հայոց մեծութիւն , հարստութիւն և պարծանք Հայաստան է , Հայու կերանք , ցնծութիւն և ուրախութիւն Հայաստան է :

10. Բայց եթէ երկիւղած հայ մի ինձ պատաս-  
խանէ թէ հաւասացեալ հայու հայրենիք երկին-  
քըն է , երկիրս չէ . արդարեւ մեր հոգւոյ քաղաք  
երկրիս վրայ չէ «զի շունիմք քաղաք , որ աստէն  
մնալոց է» այլ թէ երկնաւոր՝ և թէ երկրաւոր ամ-  
բողջ առաքինութեանց ասպարէզ երկրիս վրայ  
մեր հայրենիքն է , և մեր հայրենեաց պաշտելի  
անուն Հայաստան է : Եթէ կամիս , հայրենեացդ  
մէջէն աւելի փութով կարես երկնից արահետ ու-  
ղին դանալ և վերանալ 'ի գասա առաքինեաց . զի  
հայրենեացդ մէջ տեսանես զընկերն , և պաշտպա-  
նես . աղքատն , և ողորմիս . մերին , և զգեցու-  
ցանես . տղէտն , և ուսուցանես . զգերեալն և ա-  
զատես : Հայրենեացդ շրջանի մէջ տեսանես վան-  
քեր , տաճարներ , եկեղեցիք , ո՞հ , ընկած և խո-  
նարհած՝ կանգնես , վերանորոգես : Դպրոց , ճե-  
մարան բանալով հայրենեացդ որդիք կրթես , դաս-  
տիւարակես , որք իրեւ . հրեշտակի խմասացեալք  
զքեզ ստորին հայրենիքէս 'ի վերին հայրենիք տա-  
նեն հանգուցանեն մաքուր ազօթիւք և բարեխօ-  
սութեամբ . անդ , ուր ժողովք սրբոցն են 'ի խա-  
ղաղութեան . անդ , ուր քեզմէ առաջ հանգեան  
մեր առաքինի պապեր , Դրիգորիսեանք . Աերաէ-  
սեանք , Ղեւոնդեանք Սահակ , և Մեսրոպ , Վար-  
դան և Վահան :



## Յ Օ Դ Ո Ւ Ա Ռ Ա Վ Բ .

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ .

1. Հայրենասիրութեան գաղտափար՝ մատն Արար-  
ջին այնշափ խոր տպաւորեր է մեր սրտի մէջ, մինչ զի  
կար և հնարք մարդկային զայն մեր սրտի խորեր-  
էն հետաջինջ առնել կարող չեն երբեք : Հայրե-  
նասիրութիւն՝ հայրասիրութեան գաղտափարի հետ  
մի առնշական սերտ միտթիւն և գաղտնիք մի ունի,  
զոր հնար է փոփոխակի իրարու տեղ գործածել.  
այսինքն հայրենասէրն՝ հայրասէր կոչել . և հայ-  
րասէրն՝ հայրենասէր անուանել : Հայրենասէրն  
վաեմ գաղտափարով մի միշտ խորհրդածէ, թէ ահ-  
շուշտ ինքն մի առաքինի հօրէ, և պարկեշտ մօրէ-  
ծնանելով իւր աղդատոհմին և հայրենեաց հարա-  
զատ որդի կոչուածէ . (խօսքն այնպիսեաց հա-  
մար չէ . որոց ոչ հայր, և ոչ մայր յայտնի է) 'ի  
հայրասիրութենէ 'ի հայրենասիրութիւն վսեմացած՝  
հաւասառեաւ գիտէ թէ ինքն ունի բազում հեռա-  
ւոր և մերձաւոր հայրեր և մայրեր . Ազգի ամենազ  
անհատներ եղբայր, քոյր, աղդակից, արենակից  
և բարեկամ ճանաչէ . հայրենասէրն միշտ իւր յի-  
շատակաց մէջ կենդանի պահէ իւր եկեղեցւոյ անձ-  
նագիր քահանայապետաց, եկեղեցաշէն հայրապե-  
տաց, հանճարեղ վարդապետաց, ղդճնամիտ քա-  
հանայից պայծառ անուներ և փառաւոր գործ-  
քեր : Հայրենասիրի սրտի մէջ առաջին տեղ բռնած  
են Հայաստանի թագաւորք, նահատակիք, իշխանք  
և դիւցազունք, որք 'ի սէր հայրենեաց, և 'ի փրր-  
կութիւն Հայաստանի, մատուցին զարիւն իւրեանց :

Հայրենասիրի մոքէն և սրտէն չհեռանար երբէք  
իւր ազգի այն դպրութեան ճշմարիտ մատեան ,  
որ կենդանի բարբառով, յիշէ և ազգ առնէ իրեն  
թէ՝ ինքն անշուշտ նոյն առաքինի և քաջազտն  
սերունդէն սերած և շառաւ իղած է։ Հայրենասէրն  
ինքնին համոզուած է թէ՝ երկրի այլ և այլ ազգաց  
հրտագոյններ , և բախտին արկածներ չեն կարող իւր  
ազգատոհմի պատմութիւն և յիշատակ մոքէն հե-  
ռացնել երբէք . զի թէ յեղակարծ բռնութիւն մի  
զհայրենասէրն հայրենեաց գրկէն արտահայտէ ,  
նու առաջ՝ ի, յօտարութեան կրկին եռանդմամբ, յի-  
շէ , թէ՝ իւր ազգատոհմն ունի ազգութիւն , հայ-  
րենիք , կրօնք . ունէր և ունի երկիր , լեռներ ,  
դաշտք , հովիտք , անտառք , ծովք , գետք :  
Անդ՝ ՚ի, յուշ իւր ածէ թէ երբեմն ունէինք առան-  
ձին առն նահապետական , աթոռ և ապարանք  
թադաւորական , դաւազան իշխանութեան և զօ-  
րութիւն :

2. Յիսուս ; որ ամենայն օրինաց և մարդարէից  
լրումն է , ո՞հ , թէ ինչպէս մարդկային անկեալ  
ընութիւն նորոգելու , և յառաջին փառան բարձ-  
րացնելու մեծ խորհուրդ հայրենասիրութեան օրի-  
նօք սկսաւ տնօրինել . «Ելի ՚ի հօրէ , և եկի յաշ-  
խարհ» ասելով իւր բռն վերին հայրենիքէն ՚ի  
ստորին հայրենիք՝ ՚ի Պաղեստին խնարհին նշա-  
նակեց : Յիսուս երբ յերկիր իջաւ , նորա վրայ  
ոչ միայն աստուածային ծայրադպն կատարելու-  
թիւն երեւեցաւ , այլ և մարդկային սեռի ամբողջ  
կատարելութիւն բովանդակեցաւ . նու ահա ՚ի ստո-  
տորին հայրենիք մարդկանց դասակարգութեան

մէջ կատարեալ, և համօրէն մարդկանց օրինակ մինելոյ աղադաւ, իւր մարմնառութեան սկզբն մարդկութեան ամենէն գերիվերոյ նահապետական, թադաւորական, մարդարէական, և քահանայական կատարեալ և երեւելի աղդատոհմն ընտրեց . ինչպէս որ Մատթէոսի, և Ղուկասու առաջին և երկրորդ գլուց մէջ կպատճենի, այն աղդատոհմն որ՝ Ադամէն մինչեւ նոյ, Նոյէն մինչեւ Արրահամ. Արրահամէն մինչեւ Դաւիթ, Դաւթէն մինչեւ Զօրաբարէլ, Զօրաբարելէն մինչեւ Յովոէփ և Մարիամ'կոյս սքանչելից յաջորդութեամբ սերեց այն Յիսուսի աղդատոհմն էր, այն նուիրագործեալ սուրբ երկիր . որ արդարոց և սրբոց յիշատակօք հոչակեալ էր, այն երկիր, որ զկաթն և զմեզր բղինէր, այն Յիսուսի հայրենիքն էր :

Նա ՚ի թեթևեմ Հրէաստանի ՚ի քաղաք Դաւթի ծնաւ . որդի Դաւթի, որդի Արրահամու, որդի Յովունփայ, որդի Մարիամու կոչեցաւ : Յիսուսիւր անձին օրինակով եցոյց համօրէն մարդկութեան թէ՝ զմարդն մարդկութեան կատարեալ սահմանի մէջ գնելու, և հայրենասիրութեան մէջ հրահանգ ելու երեք պայման պահանջէ . այն է սուրբ և աղնուական աղդատոհմն մի ունենալ, արդարոց և քաջաց յիշատակօք հոչակեալ հայրենիք մի գանալ, և համօրէն մարդկանց բարերարութիւն առնելու գործ նախ հայրենիքն ոկսել :

3. Յիսուսի տնտեսութեան մէջ, Հայրենասիրութեան վսիմէն գեղեցիկ յառաջնթացութիւն նշարելովն ավշիմ, Աստուած՝ որ հաճեցաւ մարդկային սեռ կրթել, աղնուացնել և բարձրացնել, մեծ և

սննառ. խոնարհութիւն յանձն առնառ . ծնննի Հրե-  
ստուանին մէջ, քարողէ, աւետարանէ Հրէաստանին  
մէջ, իւր եղբարց, ազգականաց . Արրահամու և  
Դաւթի զաւակաց բանայ իւր երկնային շնորհաց  
դանձ և հարստութիւն, 'ի Գալիլեայ բնակի, Գա-  
լիլիացի կոչուի . Գալիլիայէն աշակերտ ընտրէ . ո-  
գորմութեան, գթութեան, մարդասիրութեան և  
ազգականութեան պէս պէս խնամոց բազմապատիկ  
պարզեւներ շնորհէ Խարայէրի որդւոց, իւր սիրելի  
ազգին : Պատուիրէ աշակերտաց չմոտանել և քա-  
րողել 'ի քաղաքս Սամարացւոց և հեթանոսաց,  
մինչեւ որ' նախ Խարայէրի տան կորուսեալ ոչխար-  
ներ գտնուին, այսինքն կրթուին և գաստիարկուին:  
Հրամայէ, երբէք թակորայ որդւոց հաց՝ չարկա-  
նել շնացող հեթանոսաց, մինչեւ յագենան իւր հա-  
մազգային եղբարք և մանկունք Աւետարանի քա-  
րողութեան կենարար հացէն : — Մի ափշիր բնաւ  
հայենասէր հոգի, այլ ինձ հաւատայ՝ թէ ՀԱՅՐԵՆԱ-  
ՍԻՐՈՒԹԻՒՆ մի գերբնական առաքինութեան անշէջ  
բորբոքումն է՝ զօր Յիսուս երկինքէն յերկիր բերա-  
սաելով . « Հուր եկի արկանել յերկիր »: Ո՞վ առա-  
ւել մարդասէր էր քան զՅիսուս, նա մօրդասիրու-  
թիւն հայրենիքէն ոկսեց, եթէ Յիսուս իւր շնոր-  
հաց պարտեւ նախ իւր ազգակցաց բարեկամաց և  
հայրենակցաց լիուի չմասակարարէր, ազգ և ա-  
զինք հեռաւորաց և ժողովուրդք հեթանոսաց ի՞նչ-  
պէս և ե՞րեւ իրեն գործոց և բանից հաւատային ;  
Բայց Յիսուսի հայրենասիրութիւն խկզրանէ աշ-  
խարհի մինչեւ իւր սքանչելի ծնունդ՝ և ծննդենէն  
մինչեւ 'ի խաչ, գերազոյն վառօք առաւել վայ-

լեցաւ . իւր սէր խաչի աղօթքէն ուսիր և հիացիր ,  
որ աղաղակէր «Հայր թող դոցա , այսինքն իմ հա-  
մազդի եղբարցո՝ զի ոչ դիտեն զինչ գործեն» :

Նա իւր աղգականաց ծայրագոյն ապերախտու-  
թեան գէմ , փոխարինեաց ծայրագոյն ներողամը-  
տութիւն , որով երկինք հիացաւ , և երկիր սար-  
սեցաւ — :

Կ . Արի՛ եկ մեծուոր հայրենակիցդ իմ , արի՛ ,  
զու որ այսօքան Հայրենասիրութեան արահետ պո-  
զոտային մէջ մանալու սէր յայսնեցիր , սրտիդ  
զգացման գօտին գերբնական եռանդով մի ամրա-  
պընդէ , որ սկսիմ քեզմէ հարցանել ինչպէս երբեմն  
Փինիկեցի նաւավարք փախտական մարդարէին  
հարցուցին իժամու ալեկոծութեան թէ՝ «պատմեա  
մեզ . . . վասն է՞ր են չարիքու այս մեծ ի վերայ  
մեր : Ուստի գա՞ս , կամ՞յո՞ երթաս , յորմէ աշխար-  
հէ ես , կամ՞յորմէ ժողովրդենէ» : Այն տագնա-  
պալից վարկենին ընդ էր նաւավարք սոյն մանրա-  
կրկիտ հարցումն ու զզեցին Յովսանու , ոչ ապա-  
քէն վիճակն իսկ յայսնեց թէ Յովսանու այն մեծ-  
յանցաւորութեան աղագու էր այն մեծ ալեկոծու-  
թիւն : Թող տուէք ո՞վ նաւավարք . զի նաւաստիք  
զՅովսան առանց ակնիժարթի ՚ի ծով ընկզմեն . —  
Բայց ո՞չ , կուզեմք իմանալ թէ՝ այս մեծ յանցաւոր  
ո՞ր աղգէն և ո՞ր ժողովրդենէն է . աեսնանք թէ  
երկիր ունի՞ , հայրենիք ունի՞ , Աստուած ունի՞ ,  
զԱստուած էր սիրէ՞ , պաշտէ . իւր մեզաց պատիմն  
է , որ էր կրէ , թէ աղգին , աշխարհին և հայրե-  
նեաց պատիմն է որ իւր վրայ ծանրացաւ : Բայց  
ահա խոստովանի մարդարէն թէ՝ ինքն արդարեւ

Խարայելացի է, զջէր Աստուած Երկնից կը պաշտէ, և այն պատահած մեծ չարիք՝ միմիայն իւր անձին առանձին մեղաց համարէ, և ո՛չ թէ ազգին կամ ժողովրդեան և կամ հայրենեաց պատիմն է որ զինքըն պատժէ :

Այլ արդ՝ եթէ յաջողութեանդ մէջ, և յաւէտ եւս ձախորդութեանդ մէջ՝ օտարազգի մէ զքէն հարցանէ «ով մարդ, դու յորմէ ազգէ, յորմէ աշխարհէ և յո՞րմէ ժողովրդենէ ես» արդ եօք եռանդուն պարծանօք մի պիտի խռատվանէ՞ս թէ Հայկաց սերունդէն, Հայոց ազգէն և Հայաստան աշխարհէն եմ, զջէր Աստուած Երկնից պաշտեմ; Գրիգորի, Ներսէսի և Սահակայ հաւատով եմ; Այս՝ ճշմարիտ հայրենասիրի խռատվանութիւն այսէ, հայրենասիրի խղճի ուխտ և դաւանութիւն այսէ, երբ հայրենեաց նախատինք ազգին ամսոթ լինելէ խորշի, երբ իրեն սուրբ նախահարց Աստուած պաշտել սիրէ; Վայ անոր, որ կուրանայ Հայկայ, Հայաստանի և Գրիգորի Սստուծոյ սուրբ անուն թէ՝ ի յաջողութեան, թէ՝ ի ձախորդութեան, նա հայ չէ, նա հայրենասէր չէ, նա մարդ չէ, վամնզի ճշմարիտ հայրենասէրն ինչ օտար ազգի, ինչ հեռաւոր աշխարհի, ինչ դիպուածական բախտի որ հանդ խոլի, միշտ հայուանուն խռատվանի. Եթէ տիեզերաց սարսուռք զինքն պաշարեն, եթէ ծովու անդունդներ զինքն ընկունեն, դարձեալ նա համարձակ աղաղակէ. — «ազգաւ Հայ եմ, հայրենօք Հայաստանցի եմ; Հայկայ, Աքամայ Տիգրանայ սերունդն եմ; Հայ թէ, թերեւս մեր հայրենիքն հեռացած

մեր գաղթական եղբարք ինձ պատասխանեն թէ՝  
մեր ծննդեան և անգեան երկիր մեզ հայրենիք է  
դարձեր, զար իրբեւ մեր բաժին սիրենք և մեծա-  
րենք, իսկ Հայաստան իրբեւ հայրենիք՝ ի Հայաս-  
տան բնակեալ եղբարք թող սիրեն և մեծարեն  
իրբեւ երկիր ծննդեան և անգեան Հայոց . չէ,  
մերձաւոր իմ. չէ, հայրենասէք հայն այդպէս թե-  
րակատար սիրտ չունի . այդպէս թերահաւատ յոյս  
չունի, նա եթէ խարայէլի հայրենասիրաց պէս Ե-  
ղիպտոսի տարագրութեան մէջ մնանի, իւր աղդ և  
իւր նախահարց գերեզման չմոռանար . եթէ Բա-  
բելոնի գերութեան մէջ ծնանի՝ խարայէլի աղատու-  
թեան համար մոռածէ, ազօթէ, Աւետեաց եր-  
կիր չի մոռնար, զտաճարն Սոլոմոնի մնձկանօք կը-  
յիշէ, և Երուսաղէմ քաղաքի սուրբ Յիշտակաց  
վրայ գուրգուրայ գոչելով թէ մոռացաց գքեզ Ե-  
րուսաղէմ, մոռասցի զիս աչք իմ. . . եթէ Յով-  
սէփայ պէս Փարաւոնին երկրորդ, և Դանիէլի պէս  
Կիւրոսի Դարեհի և Նարոգոդոնոսորի խորհրդական  
լինի, սակայն ոչ իւր նախահարց Արքահամո. Խա-  
հակայ և Յակոբայ սակորներ մոռանայ, և ոչ իս-  
րայէլի երկիր դառնալու յոյսէն երբէք յուսահատի.  
Հայկայ հարազատ արիւն կրող հայրենասէրն, այն  
երջանիկ սուրբ մանկանց պէս, սակոյ, արծաթի,  
փառաց, պատոյ, մեծութեան և իշխանութեան  
հրապուրիչ չաստուածոց երբէք երկիրազագութիւն  
չմատուցանէր, այն պատիր սառուերներէ չխարուիր,  
համարձակ կաղաղակէ «արքայ յաւիտեան կաց,  
մեք զտիս քո (կամաց) ոչ պաշտեմք և պատկերի  
ուկոյ զոր կանգնեցեր (ի կործանումն մեղ) երկիր

ոչ պագանեմք , այլ է մեր Աստուած յերկինս զօր մեք պաշտեմք . » Է մեր ազդ , ժողովուրդ և հայրենիք զոր մեք սիրեմք : Զայս եւ առաւելքան զայս աստ համարձակ , որ ժառանգես անուն հայրենասիրի , դործք զիւցազնի և յիշատակ անմահի . մի՛ թերահաւատիր , մի՛ երկնչիր , էանց բարելոնական բանութեան խաւար . եղբայրութեան և հաւասարութեան լոյս ծաւալեցաւ , բորբոքեալ հնոցաց սաստկութիւն՝ լուսաւորութեան հրաշալի ցօղով խապառ չիջաւ :

6. ԱՇ , մերձաւոր խմ , հայրենասիրութեան դաս քեզ և ազգին աւանդելու պաշտօն խիստ նուրբ և փափուկ է : Ես որչափ զգամ , դրեմ և խօսիմ , դու եւս պարտիս ինձ չափ կամ առաւելքան զիս զգալ , զրել և խօսիլ . վասնզի չայ ես , վասն զի մարդ ես : Ուստի , երթք սրամիդ անհուն եռանդներ և մոտացդ անսահման խորհուրդներ չեմ ըռնարարեր . ահա՛ հայրենասիրութեան անեզր ասպարէզ , ընթացիր՝ որչափ կարես , արշաւէ՛ որչափ կամիս , որէտք է որ ինձ հետ խոստավանիս և համոզուիս թէ՛ Հայրենասիրունիւն և նորա բուն խկութիւն ո՛չ ընսափր և դողմորիկ բառերով , ո՛չ նուրբ և վսեմ դաշտափարով , ո՛չ սուր և թափանցիկ հանճարով կրնայ բացատրուիլ այնպիսի աղինս սիրա կրողներու , որք անդստին կոտղայութեան իրենց մայրական սուրբ կաթին հետ հայրենասիրութեան ծուծ տուր և սուրբ ճաշակէն ճաշտիեր են : Հայրենասիրի դաշտափարներ , խորհուրդներ ոյնչափ առատացեր , վրաեմացեր , աղնուացեր են , զոր մարդ կային հան-

ճարդ և դիտութիւն զայն բացատրելու բաւակառ-  
նութիւն չունի. վասն զի՞ միայն հայրենասէրն է որ  
իբրեւ այր կատարեալ, իւր աղդութիւն ճանաչէ,  
իւր իսկ անձէն սկսելով և իւր բուն արմատոյն  
վրայ ուղիղ խորհրդածելով թէ Հայկ նահապետէն  
մինչեւ իւր անձին գոյութիւն և ծնունդ, յաղդէ  
յաղդ, որդիք հարց յաջորդերով աղդայնութեան  
բարունակի վրայ ինքն եւս իբրեւ ուռ մի հաս-  
տառառն կայ, և թէ Հայկին՝ մինչեւ ինքն ոչ հե-  
ռաւորութիւն կայ և ոչ օտարութիւն. այլ մեր-  
ձաւորութիւն և աղդակցութիւն, յորմէ զդայ և  
հաւատայ թէ ինքն արդարեւ նահապետաց պատ-  
կերի իսկութիւն կրէ իւր անձին մէջ, նոցա տռա-  
քինութիւն իւր սրտի մէջ, նոցա արիւն իւր երակ-  
ներուն մէջ, նոցա քաջութիւն իւր բազկաց մէջ, նո-  
ցա հանճար և իսասառութիւն իւր ուղեղին մէջ. Այս-  
պիսի վսեմ մոտածութեամբ հայրենասկրութիւն միշտ  
մնունդ առնու, աճի մեր սրտին մէջ, մեր զդացման  
և եռանդին մէջ. մանաւանդ երդ մեր նախնեաց և  
նախահարց քաղցր յիշատակներ մեր միտք բերուին,  
նոցա կենդանի պատմութիւն ստէպ ընթեռնումք,  
ախորժալուր լսելեօք լսեմք, սրտի մոտօք ըմբռնեմք:

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ .

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

1 Նախահարց պատմութիւն, կենդանի պատմու-  
թիւն մնուանեցի: Այս', պատմութիւն մի, որ  
մեր նախնեաց կենդանութեան ժամանակի կեն-  
դանի գործքեր պատմէ. նոցա մահկանացու մար-

մին ունենալ մեղ երբեմն մոռացնէ : Պատմութիւնն  
մի , որ մեր նախնի քաջազնոց գերեզմանի անջինջ  
արձանադիրն է և անմահութեան տիեզերալուր  
բարբառ . պատմութիւնն մի , որ մեր ճակատ փա-  
ռաց և պարծանաց գրոշմով գրոշմէ՝ և մեր սրան  
վրայ անեղծանելի երախտագիտութեան և հայ-  
րենասիրութեան կնիք տպաւորէ : Այս , այլ եւ  
այլ աղքաց և ազանց պատմութիւնք և ճոխա-  
պանծ գիտութիւնք մեր միաք և գաղափար ըն-  
դարձակին , սարածեն , բայց մեր բնիկ աղքային  
պատմութիւն , մեր հոգին նորոգէ , մեր սիրու տ-  
րիացնէ , մեր զգացումն աղնուացնէ , մեր բոլոր  
էութիւն և գոյութիւն 'ի մեռելութեան՝ 'ի նորոգ  
կենդանութիւն վերակենցաղէ : Արտաքին պատ-  
մութիւնք և գիտութիւնք մեր ուսումնէ կատարե-  
լագործեն , իսկ մեր ներքին պատմութիւն՝ զմեզ  
մարդկութեան կատարեալ սահմանի մէջ ամիսովե-  
լով նախնեաց կատարեալ առաքինութեան հետե-  
ռող և հայրենասիրութեան ժառանգաւոր կացու-  
ցանէ : Հետեւապէս մեր Հայերէն , ով որ Հայոց  
պատմութիւնն չէ կարդացեր և չկարդար , ոչ կատար-  
եալ Հայ է , ոչ կատարեալ մարդ , և ոչ կատար-  
եալ առաքինի . մեկ խօսքով ամէն աղք , ամէն  
մարդ՝ իւր մէկ աղդակից մերձաւորէն աւելի շուտ  
կատարելութեան , առաքինութեան օրինակ կատ-  
նու՝ քան թէ հաղար հեռաւոր և օտար կատար-  
եալներէ :

2. Աղքային պատմութիւն իրը եւ յաղթութեան  
և պարծանաց ընդարձակ դաշտ մի նկատելով՝ ու-  
շիմ խորհրդով հարադար հայեցուածքով մի միւտ

՚ի նա , ուր խանդավառ հայրենասիրութեամբ պիտի տեսմաս զմեր քաջ նախահայրն դիւցազն Հայկ՝ թէ ի՞նչպէս իւր զօրավիրդ քաջերով նելայ բուռն արշաւանաց դիմադրաւ հանդիսանայ , անդ ձայն հայրենասակը Նահապետին դոդ թէ՝ ՚ի ճակատ մարտին հրաւիրէ զքեզ , բուռն տենչանօք ընկերանալ յօժարիս քաջին . նա երբ երեթեւեան հարուածով մի ահադին հսկայն յերկիր կործանէ , անդ յաղթութեան վերջին կատարած տեսմալովդ՝ իրրեւ արենակից հարազատ ցնծութեան աղաղակ արձակես , երբ մեծ Նահապետն յաղթութեան ասպարիզէն ետ դառնայ յիւր բնադաւառն , սրտիդ զգացմանը ներքին դիտակցութեանդ այնպէս թելադրեն , որպէս թէ՝ քո խակ հուժկու բազուկներ զբանակալ վիթխարին դիախաւաւալ յերկիր կործանեցին . այսպիսի զգացմանցդ մէջ արդարեւ յայտնի լինի , թէ Հայկայ հարազատ արիւն կըես երակներուդ մէջ :

3. Մտացդ աչք միւս երես դաշտին դարձուցած ժամանակին , տեսմաս զմեր Արամ Նահապետն , տէր և իշխան Հայոց աշխարհին՝ որ իրրեւ զինակուռ զօրապետ մի , իւր ահխարհանոց նըմոյդի վրայ նստած , խանդավառ հայրենասիրութիւն ՚ի սրտին և սուր ՚ի ձեռքին , հրամանահան լինի հանուր արեւելակողմ աշխարհին , աղդ աց և աղանց , թէ՝ ահա՛ Արամ արի արանց հայրն պատուէր հրամանի տայ ամենեցունցդ , զհայեցի բարբառն և զգպրութիւն միայն ՚ի դործ արկանել և հանրածաւալ ուսուցանել : Սոյն հարազատի , մերձաւորի , սիրելոյ համեղախոս պատուէր և սուր

Հրաման , երբ ականջիդ թմոլուիներ սաստիկ հարկանեն և սրտիդ խորեր թունդ հանեն , անդ իրեւ Արամայ հարազատ որդի , հօր հրամանին հընազանդելով ուխտես զհայեցի բարրառ . և զդըդրութիւն կենդանի պահել յաւխտեան :

Ահա' պատմութիւն զքեզ նահապետին յանդիման կացուցանէ , հայրենասիրութիւն՝ սորա համեղ քաղցրալուր բարրառ քեզ լսել տայ : Այս ճոխ ճարտարաբան թագաւորն քեզմէ զհայեցի բարրառ . և զդըդրութիւն լսելով ո՛րչափ զարմացմածր ուրախանաց , թէ ինչպէս իւր հարազատ որդիք , այնչափ դարաւոր ժամանակաց հետէ , դեռ իւր հայրենի լեզուն անարատ և կենդանի պահեն մինչեւ ցայտօր ժամանակի : Ուստի՝ իրբեւ նահապետ , օրհնէ , սիրէ և յարդէ այն ամէն Հայեր՝ որք սիրեն , յարդեն և խօսեն զհայերէն :

4. Հայրենասէր անշուշտ պիտի կրէ Հայկայ արիւն իւր երակներուն մէջ . Արամայ լեզուն՝ իւր ըերնին մէջ . Արայի համեստ գեղեցկութիւն իւր սրտին մէջ : Պարկեշտութեան , համեստութեան և ողջախոհութեան դաս խնդրե՞ս , կարդա' Արայի պատմութիւն , տես թէ ինչպէս այն Ասորեստանի պագչոտ թագուհին Շամիրամ Արայի անստգիւռ և անդուգափափ գեղեցկութիւն լսելով՝ արփացաւ , որ Ասորեստանի հարուստ թագաւորութիւն առ ուստ գեղեցիկ նահապետին դրաւ գնելով՝ չանաց նորա համեստ գեղեցկութիւն գողանալ . բայց կաթուն այն , նահապետին մարմնոյ գեղեցկութեան ապշած և հիացած՝ չըկրցաւ Արայի սրտի խորութեան և բարձրութեան չափն իմանալ :

Կորիք քած , Արայ իւր գեղեցկութիւն , իւր հայրենեաց , ընտանեաց և ամուսնոյն պահած է , զայն օտարին վաճառել ամբարշտութիւն է :

Ո՞հ Արայ այսպէս ժուժկալ է , Արայ պատերազմի , Արայ մեռանի և գեղեցկութեան մէջ անմահ մնայ : Արայ իւր մարմնոյ գեղեցկութիւն անմահ առաքինութեան զոհէ . Արայ իւր գեղեցկութեան մէջ տղեզութիւն չխառներ , Արայ Հայկայ հարազատ սուրբ արեան մէջ , պիղծ արիւն չըխառնակեր . Արայ՝ համեստութեան , պարկեշտութեան նախահայր . Արայ հայրենասիրութեան չքնաղադիւտ տիպարն : Արայ կտակ թող տուաւ իւրգեղանի սերնդոց , երբ իւր վերջի շունչ աւանդեց՝ որ երբէք իւրեանց գեղեցկութիւն և համեստութիւն օտարին չվաճառեն , և միշտ պարկեշտութիւն սիրեն . ուստի Արայ օրհնէ այն ամէն Հայեր՝ որ հայրենիք վասն պարկեշտութեան սիրեն , և պարկեշտութիւն վասն հայրենեաց :

5. Հայրենասէր , իւր ծննդեան և ծագման լուկիորէն մինչեւ 'ի կատարած աշխարհի կենդանի է՝ իւր եղակի առաքինութեանց մէջ . հայրենասիրի երինաւոր և երկրաւոր կեանք և կենդանութիւն , մահուան առաջին կէտէն սկիզբն կառնու , յարտեւելով գարուց 'ի գարս : Հայրենասիրի քաջավայլ մեծագործութեան լիշտակը՝ հայրենի ապագայ սերնդոց մէջ անեղծ և անարատ պիտի պահուի յազգէ յազգ . հոգւոց վեհութիւն , բարուց աղնուութիւն , պատմութեանց էջերու մէջ իրեւանդամնդեայ արձանի վրայ դրոշմեալ մնայ միշտ անեղծ անեղի . հայրենասիրի հոդին երկինք՝ Առ

տուծոյ ձեռքին մէջ՝ և յերկրի՝ Հայկայ որդւոց սրտի  
մէջ կենդանի է. նորա անուն ամենից մոտաց մէջ՝  
նորա հայրենասիրութիւն ամենից շրթանց մէջ։  
Այս, ո՞չ երազ, ո՞չ կարծիք և ո՞չ երեւակայու-  
թեան ծնունդ է. այլ այն կենդանի և հարավստ  
արիւն է, որ յարաժամ աննշմարելի թագուն հը-  
րաշխէք մի՛ մեր զբայուն սրտի թելեր թթմբացնէ,  
այսպէս մոտածել, զբալ և հաւատալ։

6. Մ'զ նախանձելի առաքինութիւն, քո պայ-  
ծառ գեղեցկութիւն նոքա միայն ծանեան, որք  
ստուգիւ դիացան և հայրենեաց համար մեռան։  
Այլ որ քո աննման վսեմափայլութենէն զորկ է,  
թող չպարծի իւր հարուստ փարթամութեան վը-  
րայ, թող չպարծենայ իւր նանիր պատիր և սա-  
զարթայից ճոխութեան վրայ։ Նա անպատուղ թը-  
զենին է նորա կեռանք՝ ստուերի, նորա փառք՝  
խոտի, նորա զուարթութիւն ծաղկի նմանելով  
անցանէ, թօթափի և ցամաքի վաղվաղակի, նորա  
անուն դերեզմանի մէջ թաղուելով երբէք չպիտի  
կարդացուի։ Նորա յիշատակ երկրի որդունք ան-  
դամ չպիտի կարդան. վամն զի նա իւր համար  
ծնաւ, իւր համատար կեցաւ, իւր համար մեռաւ և  
կորեաւ յիշատակ նորա աղաղակաւ։ « Յտարք կե-  
րիցեն զվաստակ նորա։ » Հայրենատեայն թէ հա-  
րուստ լինի և թէ աղքատ, ո՞հ չունի երբէք  
մասն ժառանգութեան հայրենեաց մէջ, ոչ երկիր  
ոչ եկեղեցի, ոչ վանք, ոչ սուրբ, ոչ հայրապետ,  
ոչ թագաւոր, ոչ իշխան, ոչ ժողովուրդ, ոչ աղդ,  
ոչ աղղական, ոչ հայր, ոչ մայր, ոչ եղբայր։  
աղդայնութիւն տոհմականութիւն նորա համալ

շէ , նա գող թէ աւազէն բուսաւ՝ կամ քարէն  
ծնաւ :

7. Հայրենիք Աստուծոյ աղարակն է . անձնիւր  
Հայ հրամանակատար ծառոյ կոչուած է սոյն  
աղարակին մէջ . Տէր իւրաքանչիւր ըստ կարգի  
քանքար աւանդած է շահելու , ուստի եթէ Հա-  
յութեան և հայրենեացդ հաւատարիմ ես , քա-  
ջացի՛ր սւանդն բազմապատկելու . զի Տէր քո  
արիւթիւնդ պսակէ , զքեզ աղնիւ , բարի և հա-  
ւատարիմ ծառայ կոչէ , որպէս զի ՚ի վերայ տանն  
քաղաքաց զքեզ հրամանատար հաստատէ : Միթէ  
չփիտե՞ս թէ հայրենակից եղբարքդ կարօտ են  
հայրենասիրութեան քանքարիդ , գիտութեան  
տաղանդիդ , հանճարագիւտ արուեստիդ : Հայ-  
րենեացդ աղարակ պաշտպանելու համար՝ որ է  
Աստուծոյ իսկ աղարակ , պարտիս նուիրել արիւու-  
թիւնդ հանդերձ ամենայն անձնանուիրութեամբդ :  
Զի ամենայն ինչ որ ունիս յԱստուծոյ հօրէդ , և  
հայրենիքէդ ընդունած ունիս . մի՛ , աղաչեմ մի՛  
ծրարեր անդժութեան , անտարբերութեան և  
ծուլութեան վարշամակիդ մէջ , արխասիրտ փու-  
թա ՚անութեամբ արկ ՚ի սեղանաւորս՝ իհայրենակից  
և աղգակից յեղբայրս քո , հաւատա՛ թէ , միոյն  
փոխարէն բիւրազատիկ վարձք խոստացած է ,  
բայց եթէ խնայեն՝ յընչիցդ , ՚ի ձրիցդ և յատկու-  
թեանցդ մասն և բաժին չհանել Աստուծոյ աղա-  
րակին , գիտացիր թէ Տէր բարերար տան Հայկայ  
քեզ միայնոյ պարդեւած չէ այն ամէն բարութիւն-  
ուստի զօր ունիս և զօր ծրարես ՚ի վարշամակիդ ,  
իրրեւ ծառայ չար և վատ Աստուծոյ աղարակէն

արտաքս մերժուիս և իրեւե անգութ՝ ձեռօք և  
ոտիւք կապելով՝ ի խաւարն արտաքին առաքիս.  
զի զոր ոչ արարեր միում՝ ի վոքրկանցս յայսցանէ  
եղբարց քոց, ոչ Քրիստոսի և ոչ նորա աղարակին  
արարեր:

8. Հայրենասէրք խորին իմն խորհրդով խոր-  
եանց ընակած աշխարհի անուն հայէնէ+ կնքեցին,  
բաց ի ամանէ այլ ի՞նչ դեղեցիկ անուն կարող էին  
յարմարել ընագաւառ աշխարհին. գերագոյն էին  
գերագոյն հանճար և իմաստովիւն ծանոց թէ՝  
Հայրենիք մի աստուածաշէն գերդաստան է, որոյ  
ընակիչք մի սերունդէ ծներ՝ յառաջ եկեր և անա-  
րատ ընտանովիւն մի կազմակերպելով, հայրե-  
նեաց ծոցին մէջ ծրարուեր, հայրենակից և եղ-  
բայրակից կոչուեր են իրարու: Աեր ազգայնո-  
վիւն միայն այսպէս կազմակերպութիւն ընդու-  
նած չէ, այլ աես թէ ինչպէս վարուք, բարուք,  
սովորութեամբ, աւանդութեամբ, դաստիարա-  
կութեամբ, յաճախ միշտ յարաբերութեամբ ըն-  
տանեցած են իրարու և ճանչցուած են իրարմէ:  
Հայրենասէր հոգին ընտանեկան սուրբ աչօք հայի  
ազդի ամէն անհատից վրայ, եղբայրական սուրբ  
սիրով իմասմակալ լինի ամենուն, դժութեամբ և  
ողորմութեամբ հայրական և մայրական անարատ  
սրտով մնուցանէ և դարմանէ ազդի որրեր, այրի-  
ներ և աղքատներ: Անձնիւր Հայ պարտի ունե-  
նալ ընտանեկան մի սուրբ միաբանութիւն, հաւա-  
սարութիւն և ծմբարտութիւն հայրենեաց մէջ.  
պարտի ունենալ ընտանեկան սուրբ աճումն, դար-  
դացումն, ուսումն և դաստիարակութիւն, ազ-

գայնութեան մէջ . սիրելու է ընտանեկան փառք ,  
սբատիւ և մեծութիւն ազգային միութեան մէջ .  
սիրելու է ընտանեկան սրբութիւն , պարկեշտու-  
թիւն և ողջախոհութիւն սուրբ ամուսնութեան  
մէջ . սիրելու է ընտանեկան անմեղ զուարժու-  
թիւն , քաղցր աեսակցութիւն կենցաղական  
և քաղաքական կեանքի մէջ . հեռի ամէն տեսակ  
վայրենի և գաղանամիտ խորհուրդներէ և արր-  
փանքներէ : Սիրելու է ընտանեկան հնազանդու-  
թիւն , համբերութիւն և խաղաղութիւն առ անին  
և եկեղեցւոյ մէջ , իրեւ առաքինի որդիք և սուրբ  
ընտանիք մի մեր քաջազուն նահապետաց Յարե-  
թի , Թորոգոմայ , Հայկայ և Արամայ : Ահա  
այսպէս , սիրելի է ինձ տեսանել զտունն Հայկայ  
հայրենասիրութեամբ ճոխացեալ և պանծացեալ ,  
իրեւ զտուն Աստուծոյ , որ յամենայն սրտէ ճա-  
նաչէ , յամենայն զօրութենէ հաւատայ , յամենայն  
մտաց սիրէ , քարոզէ զերրակ Միութիւն . Յիտուսի  
Քրիստոնի քաղցր ձայնին լսէ , և Երրակ Միութեան  
խը յարակայ հնազանդութիւն ուխտէ : Յարէ ,  
երբ Հայաստանի որդիք այսպէս և այսքան նոեհ  
քաջամանիութեանց մէջ տեսնելու աւուրն արժա-  
նանայի : Իրեւ զմարդարէն կայի ազաղակէի թէ  
«Ահա՝ տուն Հայկայ եղեւ իրեւ զտուն Աստուծոյ ,  
և որդիք Հայկայ՝ գրեցան որդիք Աստուծոյ :

9. Ո՛վ Հայրենասէր Արամեանք . առաքելոյն  
զեարոսի խօսքեր կ'ուզզեմ ձեզ . Իամթ . Բ. 9. «Այլ  
դուք ազգ էք ընտիր , թագաւորութիւն , քահանա-  
յութիւն , ազգ սուրբ , ժողովուրդ սեփհական , որ-  
պէս զի զձեր առաքինութիւն նուիրիցէք այնու

որ զձեղ 'ի խաւարէ կոչեաց յիւր սքանչելի լոյն .  
 . . . : Ի լոյս հայրենասափրութեան , 'ի լոյս աղգա-  
 սիրութեան , 'ի լոյս եղբայրսիրութեան , 'ի լոյս  
 մարդասիրութեան և 'ի լոյս Աստուածսիրութեան:  
 Այս է ճշմարիտ հոգին քրիստոնէութեան , այս է  
 որ զձեղ աղգ ընտօիր , թագաւորութիւն , քահա-  
 նայութիւն , աղգ սուրբ , և Փողովուրդ սեփհա-  
 կան անուանել տայ առաջի Աստուծոյ և առաջի  
 մարդկան : Պօղոսի խօսքեր կ'ուղղեմ ձեղ , որ  
 դՔրիստոսի հաւատացեալն հաւատոյ ընտանիս  
 անուանէ . իսկ զազգն Խարայէլի իւր ընտանիս ան-  
 ուանէ . և զի Պօղոս ասէ թէ « Որ ընտանեացն և  
 մանաւանդ իւրոցն՝ խնամն ոչ ունիցի , 'ի հաւա-  
 տոցն ուրացեալ է և չար եւս քան զանհակցեալ  
 Ավազակեմ թէ՝ արգարեւ անդժութիւն՝ անհաւա-  
 տութենէ աւելի չար է . քեզ հետ հաւատամ , զի  
 թէ անհաւատն ընտանեաց աղգին խնամակալ լինի ,  
 իւր զժափափրութեան փոխարէն իբրեւ կուռնէլիոս  
 հարիւրապետն հաւատոյ չնորհաց արժանանայ .  
 իսկ անդութ հաւատացեալն , հաւատոյ ճշմարիտ  
 բայէն պիտի զրկուի իբրեւ արծաթամէր Յուղա :

Բայց գորովասիրտ հայրենասակըն , միշտ մերձ է  
 Աստուածութեան լուսաշողշող վառարանին , յորմէ  
 միշտ լոյս , միշտ խմաստութիւն , միշտ զօրութիւն ,  
 միշտ փառք , միշտ պատիւ և մեծութիւն ընդունի  
 'ի նմանէ : Արդ որդեակ , եթէ զմէն մի աղգ այլն  
 անհաւա սիրելոյ սեփհական պարտաւորութիւնդ  
 ճանաչես , զհայրենիքդ եւանդավառ սիրով սիրեա ,  
 զի հոգւոյդ հասորք և որտիդ սիրելիք ամէնքն

( 28 )

եւս Հայրենեացդ ծոցին մէջ համահաւաքուած են  
արդէն . կղերականք , աշխարհականք , ծերք , ե-  
րիտասարդք , աղքատք , հարուստք , քաղաքացին  
և շինական , տղէտն և խմաստան , արք և կանայք ,  
կուսանք և մանկունք , որք են ընտանիս հաւատոյ՝  
որք են ընտանիս ազգութեան . սոքա մարդասի-  
րութեան քում սպանեն , գլութեան քում կարօ-  
տին , և իրր երախտագէտ որդիք և ընտանիք քո՞  
օրհնեն զքեզ սիրեն զքեզ և չնորհակալլինին զքէն :

—————♦—————

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԱՇԽԱՐՀ ՄՆՆԴԵԱՆ  
ԵԽ ՄՆՆԴԵԱՆ ՀԱՅՈՑ

ՅՈՒՂԱԾ Ա.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ

1. Ո՞հ , սիրուն և քաղցրիկ Հայրենիք , ես բնաւ  
չեմյօժարեր քո դրախտավլյոր զրիցդ երկարու-  
թին , լայնութիւն աշխարհագրական ճարտարու-  
թեամբ չափել և նշանակել , որ օսոր մշակաց մէջ՝  
լարաբաժն անկար , այ ո՞հ , այ ո՞հ . ես նա-  
հագետական սուրբ երկրիդ մէջ առաջին քայ-  
լափոխով՝ ուրիշ հազուագիւտ բան մի որոնելու ,  
գանալու միտք չունիմ ; տենչչամբ որտի յուղի ըն-  
կած կաշխատիմ անդադար մի եռանդուն Հայրե-  
նասէր դ տնալու . իմ որոնած անձերէն ո՞հ եթէ  
Հայաստանի մէն մի քաղաքաց , աւանից , գիւղո-

թէից մէջ դոնէ մի անձն և եթ գտնայի, ինքզինքս  
երջանիկ և բարելոյս համարէի . ապա եթէ իմ  
յոյսերէս վրիպիմ ու չգտնամ, ախ ճեպիմ, փու-  
թամ, մադաղաթեայ մատեանք, հնութեանց  
թանդարանք, նախնեաց սուրբ գերեզմանք՝  
բանալ ու կրկտել, նոյն պաշտելի հնութեանց  
մէջ անշուշտ պիտի գտնամ ազգի կենաց ծաղիկ-  
ներ, յուսոյ և սիրոյ արեւներ, հայրենեաց պար-  
ծանքներ և աղատոթեան խարիսխներ, անյադ-  
տենչանօք կարդամ Հայաստանի հնապատում  
պատմութիւն, անթարժ և սրատես աչօք հայիմ  
մեր նախնի քաջաց հնութեանց թանդարաններ և  
շրթամբքս համբուրեմ հայրենասիրաց այն չորացեալ  
ոսկորներ՝ որք իւրեանց սուրբ արեան կամնաչագեղ  
դալարութիւն նուիրեցին ազգի կենաց ուժու-  
թարմ և կենդանի պահելու . որք հայրենեաց ա-  
պագայինն համար և Հայաստան աշխարհի վրկու-  
թեան համար յօժարակամ մեռան, 'Է բանուն իւրեանց  
կընդունացն, Ելքն է իւրաքանչիւն և իւրանեցն է  
գուստ անհարժն հընդունակոց » . Ծորունակ :

2. ԱՇ Հայաստան, Հայաստան, Հայաստան,  
նուիրական երկիր, դրախտավայր երկիր, եղե-  
մարտղիս երկիր, ահա՛ թափառիմ, ահա՛ դե-  
գերիմ, ահա տքնիմ, կընթանամ, հայիմ տ-  
մէն ուրեք . ո՛հ ցանկալի և ըղձալի բան մի չեմ  
տեսնար . . . : Ո՛հ հորիզոնդ լցո է, բայց երկիրդ  
խաւար . ասողդ պայծառ է՝ աշխարհդ միդամած  
ուր դիմեցի՝ աւերակներ տեսայ . ուր վաղեցի՝  
լաց, կոծ, և աղաղակ տեսայ . ուր արշաւեցի՝  
անդաւակութիւն տեսայ . ուր ճեպեցի՝ հայրենա-

սէր և ազգասէր չտեսայ . տեսայ զԱ՞յլ Հայութան  
այրիացեալ նստեր նսեմաստուեր անտառաց մէջ  
ձեռն ՚ի ծնօտի զբեկումն Հայաստանի ողբայր ,  
բայց յոյժ երանի էր ինձ , եթէ Աստուածն Հա-  
յաստանի , գՀրեշտակն Հայաստանի , իրրեւ զիզիս  
դիմացս հանելով՝ զիս յանդիմանէր թէ , լուռ լիր ,  
զի ահա պահեցի ինձ եօթն հազար այր , որ ոչ  
կրկնեցին ծունք Բահազու : ԱՇ , Ցէր Աստուած  
իմ ո՛հ , ես Բահազու կուռքէն երբեք երկիւզ չու-  
նիմ . այլ ժամանակիս աստուածացեալ ոսկիէն  
յոյժ երկնչիմ , այս' երկնչիմ , վասն զի ինչպէս ՚ի  
հնումն մատնիչ շահասէրք զմեր աննման Հայաս-  
տան անշունչ և անխօս չաստուծոյն վաճառեցին  
և զոհեցին . այժմ եւս զնոյն գործս գործեն , ազգի  
պատիւ , հայրենեաց շահ , եկեղեցւոյ օգուտ ,  
արծաթոյ մատնեն : ԱՇ . . . անիծեալ արմատ  
ուկւոյն , որոյ վասն համարձակին մէկ ազգ , մէկ  
երկիր , օտարին վաճառել . համարձակին հայ-  
րենեաց նուիրական իրաւունք զոհել և սպաննել ,  
որպէս զի միայն իրենք կենդանի մնան և վայելին .  
— եղկելի՝ ախշութիւն . . . .

3. Հայրենի աշխարհ՝ մի այնպէս բնական ներ-  
քին սերտ կապակցութիւն ունի մեր կեանքին  
հետ , որ գրեթէ մտերմական բնակակից , մննդա-  
կից ընկերն է մարդոյս , մայր , դայեակ և դաս-  
տիարակն է , հայրենիք լեզու չունի , բայց լուռ-  
թեան գաղանքով մի ուժդին աղաղակէ , աչք  
չունի՝ բայց քան դարձիւն սրատես է , սկրտ չունի՝  
զգայ , աղիք չունի՝ գորովի . նա երբ աեսնայ թէ  
օտարաշղինք իւր բնագաւառ երկիր կործանելու

զիմեն . լերինք հանդերձ հովիտներով , գետք հանդերձ առուակովք , անտառք հանդերձ մասցառվք , երիվարք հանդերձ ուղառվք անբարքառ ձայնիւ աղաղակեն և ասեն . եթէ հարազատ որդի էք հայրենի աշխարհիս , եթէ հաւատարիմ բնակիչք էք կողմանց այսոցիկ , զարթիք , ելքք , զպարգեւեալ ձեզ յԱստուծոյ աշխարհ և երկիր՝ մի՛ թողուք անկանիլ ի ձեռս օտարաց և կոփան լինել ուից թշնամեաց : Գիտես թէ՛ թռչունք երկնից արձադանք տան ույն ձայնին և ձկունք ծովու պատասխանեն զնոյն նոցին : Այսպիսի հառաջանք , հայրենասիրաց սրտի խորոյն ազդէ , և զդայուն թելերուն թռփին թռթռացնէ , որովք ՚ինախանձ հայրենի փառաց յառնեն , և ՚ի պաշտպանութիւն հայրենեաց փութան :

Կ . Խօսքիս բնական ապացոյց , անձնիւր Հայ իւր սրտի և զդայուն մէջ կրնայ գտնալ . Հայ մի , որ Հայաստան աշխարհի մէջ ծներ , մներ , զարդացեր և գաստիարակուեր է . Հայ մի , որ այսպիսի սրտի և զդայուն տէր է , երբ իւր հայրենի աշխարհէն յօտարութիւն երթալու ստիպուի , տրխութիւն զինքն պատէ , տեսք հայրենի աշխարհին եւս քան զեւս քաղցրանայ սրտին , զդայուն և աչքին . հայրենեաց ամէն առարկայք գիտես թէ թեզու ելած բողոքեն , ծառեր , բոյսեր և ծաղիկներ գիտես թէ արտասուեն . կատուներ , չներ , ձիեր և ոչխարներ քծնելով ազաշն դհայրենասէրն՝ որ հայրենի աշխարհէն չհեռանայ և չմոռնայ : Բայց դու , ընթերցող եղբայր , կուղես հայրենամեր եղիր՝ կամուլ , սակայն անգամ մի փորձի հա-

մար ել հեռացիր հայրենի աշխարհէդ , տես թէ՝  
ո՛րքան դժուարին է քեզ բաժնուիլ հօրէդ , մօ-  
քէդ , սիրուն եղբայրներէդ , այլ եւ մինչ անդամ  
հայրենակից օտարազգի ծանօթներէդ , և բարե-  
կամներէդ . հեռուն հեռանալ՝ դառնութիւն և  
տիրութիւն բերեն սրտիդ , արտասուք աչքե-  
րէդ բղսէ , զմէն մի բարեկամ դրկել համբու-  
րել փութաս . նոքա զքեզ ցաւօք և արտասուք  
համբուրեն . վասն զի հայրենասիրութեան սիրոյ  
խանդն՝ նոյն վայրկենին կրակ առած սաստկապէս  
բորբոքած՝ իւր թագստեան խորերէն արտաքս  
փայլատակեր է :

5. Երբ չուզելովդ միակ միայնակ հեռանաս  
հայրենեացդ և բնակիս յօտարութիւն , կարօտ ,  
իղձ , տենչ , փափաք , սէր , համակրութիւն ամէն  
մէկանց դարմէ սիրտդ և զդացումներդ . պատեն  
պաշարեն , եթէ ուզես , եթէ չուզես , եթէ կամիս՝  
եթէ չկամիս . թուի քեզ թէ՝ սիրտդ քեզմէ հա-  
նեն , հոգիդ քեզմէ հեռացնեն , մարմինդ յօտա-  
րութիւն մնայ , սիրտդ և հոգիդ հայրենիքդ երթալ ,  
որչափ զդացմանդ վրայ բռնանաս , սիրտդ և հո-  
գիդ ՚ի քեզ պահելու և ամիտիելու նկրախս , խա-  
զերով , զբաննքներով , արբեցութեամբ զդաց-  
մունքդ թմրեցնելու աճապարես , զուր և ունայն  
աշխատութիւն կրես , սիրտդ և հոգիդ զէպ ՚ի  
հայրենիքդ ձդտելէն և երթալէն չես կարօդ հետո  
ընկրկել : Վասն զի հայրենեայ առարկաներու նր-  
ման փոքր առարկայ մի աչքիդ , ականչիդ , ձեռ-  
քիդ և սրտիդ թելերու ծայրէն շօշափելուն պէս ,  
նոյն վայրկենին սիրտդ և հոգիդ հայրենեացդ մէջ

կը գտնաս և կը զարմանաս : Բոյսերու մէջ՝ ~~Աղօթականի թիւն~~ և աննշան խոտ մի , ծաղիկներու մէջ՝ տժդոյն ծաղիկ մի տեսնելով՝ որ Հայաստանի խոտին և ծաղին կը նմանին , սիրտդ և հողիդ առնելով՝ հայրենեացդ այն խոտին և ծաղիկն դաշտեր և լեռներ կը ատենեն . հայրենեաց գեղջակ բառ և բարբառ մի՝ Հայաստանի սրբառուչ երդ մի ականջիդ ջղեր շօշափելուն պէս , ինքզինքդ սրբով՝ հայրենեացդ բնակիչներու մէջ կը դանաս : Ո՞հ եթէ միտքդ արդելում՝ երեւակայութիւնդ երթայ . եթէ երեւակայութիւնդ արդելում՝ գիշերային անուրջքդ երթան : Երբ ննջես , սիրտդ և հողիդ արթուն են , երբ ննջես , սիրտդ և հողիդ որ հայրենեաց կարօտով և տենչով լիցուած են՝ հոն կը յափշտականին , հոն դիմեն , հոն ամէն բան տեսնան , ամէն բան լսեն , ամէն բան փայելեն , ամէն տեսարաններու մէջ շրջին , ամէն ծանօթից և անծանօթից , մեռելոց և կենդանեաց հետ խօսին . բայց աւազ և ավանա որ երազ են , և այս երազներ պանդխտին գիշերուան երջանկութիւնք , ցարեկուանն թշուառութիւնք և հեծութիւնք են :

6. Մովիէս կաղանկատուացի , Անդովիայ որդւոյ Բարեկայ Սիւնեաց իշխանին համար սրբառմէ թէ՝ « Բարեկայ փափաքեալ ՚ի հող հայրենի , դառնայ յաշխարհ իւր . զի որպէս քաղցր են ծնողք , նոյն պէս և գտառու » : Արդ՝ ո՞ր դգայուն սիրտ և հողի հայրենասէր Բարեկայ իշխանին պէս , չփափաքիր հայրենի հողայն , չդառնար հայրենի աշխարհ . միթէ մանկութեան պատանեկութեան և երիտասարդութեան օրեր , որ հայրենասիրի երջանիկ օրերն

Եկն, ով նորա խայտալից ուրախութեան և ցնծաւէտ  
բերկութեան օրերն էին, նորա յիշատակութեան  
մէջ բուռն կերպիւ չե՞ն արթննար. այո՛. հառա-  
շանք՝ ի սրտէն, աղազակ բերնէն և արտասուք աշ-  
քէն կը հանեն, ո՞հ անձն իւր պանդոխտ հառաջ-  
մամբ գոչէ. ա՞հ, ո՞ւրեւ իմ մանկութեան երջա-  
նիկ օրեր՝ յարում ես ձիաւորեալ դաշտ երթայի,  
դաշտ՝ որ անմահարոյր ծաղիկներով և քաջաց յի-  
շատակներով պանծալի էր, աղեղն իյուսս բարձ-  
րային լերանց վրայ որսի երթայի, լերինք որ կեն-  
սատու օդով և անմահական ջրով վահմացած ու-  
րաբձրացած էին, նոր հարսի և փեսայի պէս զար-  
դարտած, անտառաց, հալտաց և բուրատտանաց  
մէջ կը ճէմիի. բուրաստանք որ եղեմարուխ քա-  
ռավտակ դետերով առողուած և դրախտացած  
էին: Ես հայրենեաց մէջ թագաւոր չէի՝ թագաւ-  
որի կը նրանին, իշխան չէի, իշխանի պէս հրա-  
մայէի, հարուստ չէի, հարուստի պէս անկարօտ  
չէի, քաջ չէի, բայց քաջաց պէս վեհանձն էի. որ-  
պէս Հայաստանի առածն ասէ, (առողուածն է՞՞  
բոյնին և առէն է. +որ իւր ուղարկուէ) :

7. Բուղանդ պատմագիր, մեր Արշակունի Ար-  
տաշիր թագաւորին համար աւանդէ թէ՝ Շապհոյ  
սուտ խոստանց և երդմանց պարզմութեամբ  
հաւատալով Պարսկաստան գնաց, Շապուհ ստելով  
իւր երդմանց՝ չէր ուզեր զԱրտաշիրն արձակել  
ի Հայաստան, բայց ետքէն Արտաշիրի թախանձանաց  
զիշմաներով ուզեց արձակել. սակայն արձակման մո-  
սին երբ քուրմերէն խորհուրդ եհարց, Շապհոյ այս-  
պէս պատասխանեցին խորագէտ քուրմեր թէ՝ «Ար-

տաշիր Պարսից մէջ տկար է և իւր ազատութեան համար կաղապէ, բայց իւր բնիկ աշխարհ դառնալուն պէս, առիւծի զօրութիւն զգենու, ապստամբի և պատերազմի։ Ուստի Շատրւուհ քրմաց խորհուրդներէն հրապուրեալ՝ Հայաստանէն բաւական հող և ջուր բերելով իւր թագաւորական վրանին մէկ կողմէն տարածէ և ջուր վրան կցանէ . Շապուհ Արտաշիրի ձեռքին բռնելով վրանի ներքեւ երրեւ խօսակցելու և ճեմելու կերպ, աւազ, երր հոն Արտաշիրի ոտք Պարսից հողի վրայ ճեմէր, նա իրրեւ գերի, իրրեւ ստրուկ, իրրեւ ազաջաւոր պաշտէր, խնդրէր թագաւորքէն Պարսից, որ զինքն արձակէ իւր հայրենի աշխարհ։ բայց, իճեմելն՝ երր անրազդ Արտաշիրի ոտք Հայաստանի ընիկ հողի վրայ համեմէր, նա անդ իրրեւ առիւծ մանչէր և գոչէր, իրրեւ անպարտելի թագաւոր մի ստատէր և յանդիմանէր զՇապուհ, վեհութեամբ սպասնայր և առէր (- և ե՞ւ Դ-ուսահ, ո՞ր զի՞ որքիւլերակն, հաւըլերէ մնալու հայրենեաց սահման՝ ի՞մ բնիկ հողին վրայ սուխ հաստատել, անքբանաց քիչէք ովտոր առնենք ժեղսէ, բոլը Պորխոսան հիմույտուի դեռէ ժողովք, սարէմ . . . . մ՛հ, անդ հայրենի հողն և ջուրն ներքին մի հրաշալի բնազդմամբ Արտաշիրի մասաց, սրտին և հողւոյն ազդ առնենին, թէ ինքն արդարեւ հզօր թագաւոր մի է իւր հայրենեաց վրայ. իսկ ծառայ և տկար՝ օտարի հողի վրայ, ինքն յաղթող և աներկիւղ է իւր հողի վրայ, իսկ պարտեալ և ահարեկ օտարի հողի վրայ։

8. Եղիշէ և Պաղար պատմիչք, Մամիկոնեան վարդանի և նորա քաջասիրութ նիդայակից նախա-

քարայց, հայրենեւաց ծոցին մէջ քաջութեան, և Յազկերտի առեանի մէջ՝ տկարութեան մասին դրեն . Վարդան խոր ընկերակցօք ի Պարսկաստան կ պալատ և յատեան Յազկերտափ հրատիրի . անդքաջք, արիք և անպարտերիք Հայաստան աշխարհի, նուաստանան, տկարանան, երկնցին և կ հաւատաց երկմոխին, առ ահի արեգական և հրոյ ծունդ կրկնին, բայց յորժամ' կ հայրենի հող գարձ առնեն, վեհութեամի կ միտս գան. վսեմութեամբ սրասապնդին, արութեամբ ճակատյօրինեն, առիւծար խիզախեն, ասրուշանս քանդեն, կրակն սպանեն, մադեր մոդավեաներ գանակոծ հալածեն, մոդերեն, պարսիկներեն պղծեալ Հայաստանի օդ. ջուր և հողն մաքրեն, սրբեն և կարսմիր արեան սուրբ կաթիլներով զհայրենի եկեղեցին վարդածազիկ պատկաղարդեն : Վասն զի հայրենի հողին վրայ՝ մահն անմահութիւնէ . իսկ օտար հողի վրայ՝ կեանքն մահ է . հայրենի աշխարհին մէջ հիւանդըն առողջէ . տկարն զօրաւոր է . յիմարն՝ իմաստուն է . իսկ օտար աշխարհի մէջ առաղջն հիւանդէ . զօրաւորն տկար է , և իմաստաւն յիմար է :

9. Դարձեալ Դաղար պատմէ, թէ՛ Մամիկոնեան վահան Պարսից դուռն երթալով քաջութիւն և հայրենի հաւատք իմիւասին մառանայ և ուրանայ. իսկ երբ խոր հայրենի սուրբ հողն վերադարձ առնէ , խոր նախահարց հաւատաց մարդաբիսն դտանէ Հայաստան աշխարհի մէջ . այն զոր կորոյս Պարթեւաց երկրի մէջ . կրկնին արութեամիւ, քաջութեամբ զօրանայ հայրենի ծոցին մէջ . անհաշտ պատերազմ հրատարակէ Պարսից դէմ, գիւցաղնարար ճակատյօ-

րինէ՝ մարտ մղէ անթիւ զօրաց դէմ. քրիստոնէութեան, կրօնից աղասութեան և հայոց անարդեալ պատիւ բարձրացնելու. համար՝ երեսուն տարի փոքրիկ գնդով մի մենամարտի արեաց ահադին զօրութեան դէմ: Արեաց ամբարտաւանութիւնն հուսկուրեմն խոնարհի վահանաց հայրենասիրութեան առջեւ. աղասութեան դաշնադիր և խաղաղութեան յետկար ստորագրէ և տայ վահանաց, որով աղասութիւն և խաղաղութիւն հայրենեաց հաստատի:

10. Նոյնպէս վահանաց. Գտղթնացւոյն համար պատմեն ճառընտիրք մեր, թէ երբ նա աւազ ՚ի տղայ հասակի գերի վարեցաւ ՚ի Բարելոն՝ անդ ուստ դիր և կրօն Հաղարացոց, ՚ի դարդահալ հասակին՝ հայրենի աշխարհի յիշատակներ զարթուցին նորա միտք, սիրու և հոգին. ուստի խնդրելով խնդրեց ամիրագետէն զինքն ՚ի Հայաստան աշխարհիւր հայրենի հող արձակել, ասելով «Այսուեցե՞՛ ո՞ ուստանէ ըստանիւն առերածոյն երբէին ի՞նչ հայրենեաց»: Ահ, վահան Հայաստան եկաւ, հայրենեաց աւերակներ տեսաւ և նորա վերայ լացաւ. հայրենեաց հող սիրեց. հայրենեաց հաւատք լսեց. հայրենեաց գիրկ մեանիլ ուզեց. հայրենեաց գերեզման թաղուիլ ուխտեց. հայրենեաց յիշատակ և հաւատք զլահան ՚ի դաս անմարմին հրեշտակաց դասեց: վահան այլ եւս ոչ ՚ի հրոյ, ոչ ՚ի սրոյ, ոչ ՚ի տանիանաց երկետ. վասն զի կորսուած եր գերութեան պաղխոսութեան մէջ դանուեցաւ հայրենեաց մէջ. մեռած էր օտարութեան մէջ կենդանացաւ. Հայաստանի մէջ:

4. Հայրենի աշխարհի հող, մարդոյ նիւթական կենաց ծնունդ, մնունդ տալով բարոյական կեանքի վրայ զօրսւթիւն, ուժգնութիւն և բարոյականութիւն ազդէ, ներգործէ . մարդ մօր արդանդէն աշխարհ գալով հայրենեաց կենսատու օդ ծծել և ջուրն խմել կախի, մօր ստինքէն կտրուելով երկրին բարիք և բերք վայելէ, որով մեր արիւն զօրանայ, մանկութիւն առոյդանայ, ջիղեր, ոսկորներ կազդուրին, ամրապնդին, ամրող մարմար կազմուածք կատարելութեան հասակին համնի . ինչպէս մայր՝ մեր երախայութեան տաճող, մնուցանողն . նոյնպէս հայրենեաց հող, ջուր, օդ մեր մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան դայեակ, դաստիարակ, և մնուցանողն է . Արդ՝ ինչպէս բուակամնք տեղափոխութեամբ իւրեանց բնական յատկութիւն, ձեւ, մնունդ, աճումն, զօրութիւն երբեմն կայլափոխեն, տկարանան կամ իսպառ ոչնչանան . նոյն դունակ երբ մարդ իւր բնակավայր հայրենի հողէն հեռանայ օտար աստեղաց ներքեւ, նորա ներքին սննդական զօրութիւն, աճման առոյդութիւն և բարոյական կատարելութիւնք կայլափոխին, նուաստանան և տկարանան, ընթերցող եղբայր, մաքիս միջին աղէկ հասկցիր : Հայ և հայու ճշմարիտ դաւակ՝ երբ օտար երկրի, օտար հողի վրայ տեղափոխուի, օտար հաց ուտէ, օտար ջուր խմէ, օտար օդ ծծէ, օտարամոլ գոյներով կայլագունի, իւր բոլոր բարոյական բնաձիր

բարք , վարք , յատկութիւն , սովորութիւն մոռնալով կորսնցնելով , օաար ազգաց լեզուով խօսիր առար ազգաց վարուց բարուց և սովորութեանց հետեւի , ինչպէս զարդիս շատ տեղեր կը տեսնուի :

2. Ազգային պատմութիւն և մեր արդի մանրախոյզ դիտողութիւնք , աւազ մեզ թաղուն ճշշմարտութիւն մի յայտառնեն , որոյ վրայ կը ցաւիմք մեք և կը ցաւին ամէն հայրենասէրք . կը տեսնամք մենք՝ որ մեր հայաստանի բարեխտուրն կիմայիէն հեռացեալ հայք , որք խումբ խումբ մինչեւ 'ի Հնդկաստան , մինչեւ 'ի Լեհաստան , 'ի Յունաստան 'ի Պաղեստին և յեզիդաստացիրուցան պանդխտեցան . զրկուեցան մայրենի հողէն , հայրենի աշխարհէն , չուեսին այլ եւս Հայաստանի քաղցր արեւ , պայծառ լուսին , արծաթափայլ աստղունք . չըմկեցին այն եղեմարուխ ջրէն , չձձեցին այն վճիռ և պարզ օդէն , չկերին այն մաքուր և անխառն հացէն . ուստի աճողական զօրութենէն դատրեցան . նուազեցան : Նոոմիի պատմութիւն խօսքիս ապացոյցն է , որ սուրբ դրոց վկայութիւն է : Նոոմի Մովաբացւոց երկիր պանդխտի , երկու սիրուն և գեղեցիկ որդիք երիտասարդութեան հասակին մահու գերանդիին զոհ երթան Նոոմիի սիրա դառնանայ , դիմաց գոյն և գեղեցկութիւն թարշամի , անժառանգ և անորդի իւր հայրենի աշխարհ վերադառնայ , ազգ ակիցներ և ծանօթներ ուրախակցութեան գալու ժամանակին՝ Նոոմի լայր և ասէր , «մի կոչէք զիս գեղեցիկ , զի որդիք իմ և գեղեցկութիւն իմ կորուսի 'ի պանտխտութեան» : Այսպէս

Հայաստանին հեռացած հայեր, թէ և անձին աւպահովութիւն, նիւժական հարատութիւն դատան, բայց բնական աճելութենէ նուազեցան. դեղեցկութենէ և զաւակաբերութենէ զրկեցան. օտար հող, օտար ջուր, օտար ազգ, օտար սովորութիւն, օտար մոլուխիւն, օտար անժուժկալութիւն, օտար անպարկեցութիւն մեր ժողովրդոց բարոյական և փիղիդական զօրութիւն սպառեցին. և նոյն աճելութեան կենաց արմատ թունաւորեցին :

3. Պատմութիւն աւանդէ մեզ թէ՝ թէմուր—լէնկ անադորոյն բռնաւորն վասպուրական երկրի հայոց ժողավորդ բերդէն դահավիթելով՝ ի սուր սուսերի մաշելով սպաննեց, սպառեց. մինչ զի այն ընդարձակ աշխարհի և այն բազմաթիւ ժողովրդոց մէջէն յիմար անունով հայ կին մի հազիւ թէ ողջ մեաց և ապրեցաւ. սակայն ի սակաւ միջոցի, այն օրհնեալ երկրի մէջ՝ հայոց ժողովուրդ կրկին անումն առաւ, ծաղկեցաւ և բազմամարդացաւ, ինչպէս կ'առենաս այժմիկ. Արդ՝ ով չգիտեր, թէ Հայաստան աշխարհ բազմամարդութեան առաջին խանձարուրնէ, ով չգիտեր թէ, ամբողջ մարդկութեան առաջին նախահարք Հայաստանի հողին վրայ բնակելով՝ ծնան, մնան, աճեցան, զարդացան, զօրացան, բազմացան, ընդ տմնայն երկիր տարածեցան. ծաւալեցան իրեւու զաստեզս երկնից և իրեւու աւազ առափն ծովու. Աղամ և կին երկուք միայն բնակեցան յանդիման դրախտին իմէջ Հայաստանի. բայց մինչեւ ցնոյ անբաւ բազմութեամբ աճեցան: Նոյ

ութն հոգով բնակեցաւ Այրարատ , սակաւ միջոցի մէջ անհամար թռուունս , թռոնեայս ունեցաւ , մինչ զի Հայաստանի ընդարձակութիւն անձուկ և նեղ երեւեցաւ , ուստի ելին և ընդ չորս կողմ աշխարհի ծաւալեցան :

4. Մարդ երբ իւր բնիկ հայրենեաց մէջ ծնանի , և զարդանայ . մի վեհ և աղնուական կերպարանք , զդայուն և կենդանի սիրտ , սուր և ուշիմ միտք , վառ եւ պայծառ երեւակայութիւն , առաքինութեան բազձանք , բարեգործութեան բնական միտումն , մարդասիրութեան զգացումն , եղբայրսիրութեան դութ , հայրենասիրութեան խնամք կունենայ իւր բովանդակ անձին վրայ :

Քանդի անդ 'ի բնադտուառի իւրում աեսանէց զծնողս , զեզրայրս , զքորս , զազդականս , զբարեկամս , զգբացիս , զքազաքացիս և զգիւզացիս , որք առ հասարսկ իւր քաջագործութեանց սպասող հանդիսատեսներ են , և իրեն մէն մի առաքինութեանց ծաղիկներու պահապան հրեշտակներ են , և մոլութեանց կշտամբիչ վարդապետներ . անդ մեր սիրելիք , ծանօթք , բարի օրինակով և զգուշացուցիչ խրատովք , քաջալերեն և խրատեն զմեզ 'ի մոլեկան ախտից խորչել և առաքինութեանց հետամոնել . Մեք դիտեմք՝ թէ մեր պակասութիւն և յանցանք կը արտմեցնեն մեր սիրելի ազդականներ . ուստի սասարիկ զղուշանամք թախծութիւն և տրտմութիւն չողատճառել նոցա սրտին . մեք դիտեմք թէ՝ նոքա մեր մէն մի յառաջադ իմութեան և առաքինութեան վրայ սաստիկ բերկրին և ուրախանան , ուստի միշտ փութամք նոցա սիրտ ու-

բախտթեամբ և բերկութեամբ զուարժացնելը  
կախորժիմք միշտ գովեռոտից և չորհակալեաց ձայ-  
ներ լսել՝ ՚ի նոցանէ , բաղձամք բովանդակ աղբա-  
յիներէ սիրուիլ իրեւ հարազատ որդի սիրելի ։  
բղձամք , որ ամէն մարդ մեր բարի համբաւ խօսի-  
քնուանեաց , տանց , գիւղից , աւանից քաղաքաց ,  
և համօրէն հայկաղանց մէջ . և ահա այս ամէն  
բարի յօժարութիւնք բնապէս զմեզ կմղեն առա-  
քինութեանց հետեւել՝ և ՚ի մոլութեանց խորշիլ  
քանզի երբէք չեմք սիրեր և չեմք ախորժել կեզտ  
անուն և վաստ համբաւ ունենալ աղգայնոց մէջ ,  
կղգամքը որ եթէ համօրէն աղդ զմեզ մեր մոլո-  
թեանց համար արհամարհէ , երեսէ ձգէ ։ բարո-  
յապէս մեռած կը համարուինք :

5. Հայրենեաց մէջ՝ մարդս իւր վրայ բնապէս  
քաջութիւն և զօրութիւն զգայ , վասն զի ՚ի ներ-  
քուստ հրաշալի իմն բնազդմամբ գուշակէ թէ՝  
իւր բոլոր աղգականաց , բարեկամաց և հայրե-  
նակցաց զօրութիւն և ուժ իւր ներքին և արտա-  
քին կարողութեանց հետ հաւաքապէս միացեր են ,  
թէ ինքն շարժելոյ միջոցին միայն չէ , թէ ինքն  
գործելոյ միջոցին անօդնական չէ , զի ձայն ան-  
դամ մի արձակելոյ լինի , շատեր կլսեն , եթէ թըշ-  
նամին վանելոյ համար ոտքի վրայ կանգնի , շատեր  
զէնք առնուն , եթէ ինքն զէն ՚ի ձեռին արշաւէ՝  
շատեր հայրենեաց թշնամոյն վրայ յարձակեն .  
եթէ յարձակի՛ իւր քաջ օղնականեր թշնամին  
յերկիր կործանեն . եթէ ինքն միայնակ անձ մի  
թշնամիներէն հարկանէ , իւր զօրաւիդ քաջեր  
զհարիւրս , զհաղարս հաղածեն և զփոշին խածիլ

տան : Պիտի դարմանամք արդեօ՞ք երբ տեսնամք  
թէ՝ հայրենեաց անասուններէն ձիանք քաջաց  
օդնեն , ոչխարք կաթ և կողի ընծայեն , մեղուք  
մեղը և քաղցրութիւն պարգեւեն , եղն , գոմեշն  
և էշն պատերազմի պաշար բերեն : Հայրենեաց  
դաշտք՝ ցորեան և արշաւանաց ընդարձակութիւն  
տան . լերինք և բրուրք՝ բերդ և աշտարակ դաշ-  
նան , ձորք և հովիտք՝ ասպնջականութեան հրա-  
ւէր տան . անտառք և անդաստանք հովանի լինե-  
լով գէնք մատուցանեն , քարինք ուռւմք կըն-  
տակ , աւազք՝ վառօթ դասնան , գետք և աղ-  
րիւրք զովացուցանեն և քաջալերեն , ծովք և  
լճակք առ հասարակ խրախուսեն և «կեցցե՞ն քաջք  
մեր» աղաղակեն . արեգակն , լուսին և աստեղքն  
օրհնեն :

## ՅՈՒՌԻԱԾ Դ.

ԱՇԽԱՐՀ ՍՆԵԴԵԱՆ ՀԱՅՈՑ

1. ԱՇ , միթէ Հայն հայրենեաց հողի քաղց-  
րութիւն և սիրելութիւն չգիտե՞ր , եթէ հայք  
մոռնան , անզգայ լինին , չգիտնան , սակայն հայ-  
րենեաց անասունք և թռչունք շատ աղէկ գիտեն .  
միտ բերենք մեր Հայաստանի սիրուն թռչնիկներ  
ծիծռան , սարեակ , արագիլ , արտուաիկ , ոսխա-  
կըն , կռունկ , և այլ թռչունք՝ որք ՚ի ձմերան ե-  
ղանակին երթան ի հարաւային տաք կողմեր պա-  
տըսպարան գտնալու , բայց դարուն բայցելուն  
պէս՝ երամովին դարձ առնեն իւրեանց մայրենի

բոյն դանալու և բնակելու . իւրաքանչիւր 'ի նոցա-  
 նէ անմոռաց յիշմամբ խոկ և խոկ դատանէ զիւր տե-  
 ղին , ծիծառն զիւր տուն , սարեակն զիւր բոյն ,  
 արագիմ զիւր գիւղն , արտուատիկն զիւր ընակն  
 և ծովիկն . սոխակն զիւր թուփն և զվարդենիքն .  
 թռչտին , թեւածավին , կղկղան , գուրդուրան ,  
 գորովին զաւիրեալ բոյներ նորեն նորոգեն . սո-  
 վորական օդն ծծեն , նորավետուր զարդարին ,  
 ծագո հանեն , աճին , դօրանան և բազմանան :  
 Հայաստանի ծառոց վրայ՝ ծաղկանց վրայ շրջին ,  
 անդերէն , անդաստաներէն , մարդադետիներէն  
 ձագուց համար կերակուր գանան և կերակրեն :  
 Ա. Ա. Բնձ հաղարից աւա՛զ , որ կուեմում թէ հայ-  
 րենեաց թռչունք արագ արագ գարձ առնեն  
 'ի Հայաստան , բայց մեր սիրելի հայոց ժողովուրդք՝  
 որք բաբելոնական բոնաշունչ ցրտութենէ վայրիկ  
 մի հարաւային և արեւմոնեան տաք կողմեր՝ իր-  
 բութէ շունչ առնելու ցիրացան եղան , բայց ե-  
 ղուկ որ շատ գարունք եկան անցան , երրէք հայք  
 հայրենեաց թռչուց պէս իւրեանց բնիկ հայրենեաց  
 բոյն չվերագարձան , ձիւնք հաղեցան , սառնամանիքն  
 անցան , հայ ժողովուրդ իւր բնագաւառ . հողի վրայ  
 ոտք չդրաւ , իւր Աստուածաշէն , Հայկայշէն Լու-  
 սաւորչաչէն , և գեղեցկատեսիլ բոյն 'ի յուշ չըերաւ  
 և անդրէն 'ի նոյն չվերագարձաւ , և չընակեցաւ .  
 Երանի՛ ձեզ , հաղար երանի , թռչունք Հայաստանի  
 որ աշուն երթաք և գարուն գառնաք , վայ մեզ ,  
 հաղար վայ , որ մեք անդամ հեռանալով այլ եւս  
 չեմք ուղեր վերագառնալ . ձեր հայրենասիրութիւն  
 զմեղ յանդխնանէ , մեք պատասխան չունիմք տալու ,

Զ. ԱՇ, ոչ Հայաստանի հիմ զաւակունք, աշ-  
րի և քաջ զաւակունք . Հայրենասէր զաւակունք,  
Հայաստանի թռչնոց պէս և այլ աւելի իրենց բնա-  
դաւառ Երկիր զաւանալ և բնակիլ սիրեին : Նիդա-  
կակից քաջ ընկերք վարդանանց և գեւոնդեանց,  
նախարարք Հայոց աշխարհին, որք Յաղիերտի  
բոնութեան հանդիպելով Բարելօնի անձուկ բան-  
աերու մէջ, ինն ամ և վեց ամիս ընդ Երկար տա-  
ռագեցան և Նիրմութենէն դժոնդակ օդոյն, հիւ-  
ծեցան և մաշեցան . բայց անդէն իւրեանց քաղցր  
Հայրենիք չմոռացան, ուխտիւք ինդրէին, սրտիւք  
ցանկային վերադառնալ ՚ի գոզն Հայրենի : ՚ի Բա-  
րելօն հաստատ բնակութիւն հաստատելու համար  
Յաղիերտ շատ պատիւ, մեծ իշխանութիւն, բա-  
զում հարստութիւն, ընդարձակ Երկիր խոստա-  
ցաւ տալ նախարարացն Հոյոց . բայց Հայրենասէր  
նախարարք, կամովին ընտրեցին անձուկ բանափ  
մէջ մեռանիլ իրեւ կալանաւոր, քան թէ Հայրե-  
նիքին հեռու օտար աշխարհի մէջ օտարի փա-  
ռօք . օտարի մեծութեամբ կենդանի մնալ . Երբ  
նախարարք անքակալելի ուխտիւք ուխտած էին,  
կամ մահ, կամ ՚ի Հայրենիս վերադարձ . բանտ և  
կապանք քաղցրանայր, իրենց Երկար ժամանակ-  
ներ կը համառօտէին, թշնամիք բարեկամ դառ-  
նային, բռնաւոր զիջանէր, նոյս հաստատամասու-  
թիւն և Հայրենասիրութիւն գովէր և վերադարձի  
հրաման չնորհէր : Մեր առաքինի նախարարք,  
համբերող նահատակք, Երկլուային հրեշտակք, Երկ-  
նային թռչունք ելին ի հեռաստանէ՝ Ելին ի Հա-  
յաստան, աեօին զսիրելիս և ուրախացան, Հայ-

ըենասիրութեան և համբերութեան պտուղն ընդերկար վայելեցին :

Յ. Եթէ մէկ իւր անձին և ընկերին վրայ խորհի, թէ՝ հայրենիքէն հեռանալով բազդի տիրացաւ, հեշտին և խաղաղ կեանք վարելու վիճակին վիճակեցաւ, իշխանութեան, փառաց և պատու հասաւ, բայց եթէ հեռացեալն չայ է և իրրեւ հայ լրջօրէն խորհի, իսկոյն զգայ և հառաջմամբ սրտի գոյէ, թէ արդարեւ հայրենի աշխարհէն հեռու հայորդւոյ համար բազդ չկայ, հեշտին և խաղաղ կեանք չկայ, իշխանութիւն, փառք և պատիւ չկայ. օտար աշխարհի մէջ հայու համար ուրախութիւն, հարստութիւն չկայ. հայու համար հայրենասիրութիւն և ազդութիւն չկայ: Զի օտար աշխարհի ամէն պերճանք և գեղօնք՝ հայրենեացդ պարզ նահապետական կենաց հետ համեմատես, հայրենեացդ պարզութիւն՝ օտարի պերճութենէ և գեղեցկութենէ գերազանց կը դանաս . հայրենասիրի համար՝ հայրենեաց հայ և ջուր օտարի մեղրէն անուշ է. մազեղէն զգեստ՝ օտարի կերպաներէն օգտակար է, բայտ առածին, «հայրենեաց էսուշ շան զըտորէ լուրջն լսւ է»: Օտար աշխարհի մէջ թէ վեհապետի պատիւ ունիս, եթէ իմաստութեամբ խորհիս, ծառայ ես. եթէ զօրաւոր կարծուիս, տկար ես, եթէ աղաս կարծուիս գերի ես: Առակին անառակին որ յաւետարանին՝ քեզ ապացոյց, խնդրեց առաւ բաժին՝ ի հօրէն, հեռացաւ իւր սուրբ ընտանիքէն և հայրենիքէն, այն սուրբ հայրենիքէն՝ որուն մէջ թագաւոր էր և որդի թագաւորի, իսկ յօտարութեան՝ ծառայ և ծառայ ծառայիցն .

Հայրենեաց մէջ նստեալ ՚ի կառս և յերիվարս ,  
խոկ անդ մերկ , յետի և արածող խողից . հայրեն-  
եաց մէջ հայափից , խոկ օտար աշխարհի մէջ քաղյ-  
եալ և սովամահ . բեր աչքիդ սունեւ Ազաթանգ-  
ղէսս , որուն մէջ կը տեսնաս՝ թէ ինչպէս մեր հրա-  
կայազօր արքայն Տրդատ Յունաստանի մէջ իբրեւ  
ժառայ , իբրեւ սոսկական զինուոր մի կազանդըխ-  
տէր , խոկ ՚ի ծոց հայրենեաց վերադարձեալ , Տէր  
և իշխան Հայաստանի , ահաւոր թագաւորաց և  
պետութեանց լինէր : Եղբայր , խօսքիս հաւատա-  
վերադարձի՞ր ի Հայաստան , մատանին , ծիրանին  
պատրաստէ քեզ , քո երէց եղբայրքդ ուրախու-  
թեամբ քեզ ընդունելով երգեն երգս ուրախու-  
թեան . Հայաստան անրառ ցնծութեան ձայնիւ-  
գուէ , Շայ որդի իւ հեռեալ եր և եւոց , հորունեալ եր  
և գոյու :

4. Կենդանաբանութիւն՝ կենդանեաց մասին .  
պատմութիւնք մարդկանց մասին դրեն թէ , ինչ-  
պէս խրաքանչիւր կենդանիք խրեանց ծնած և  
մնած երկիր կափրեն , նոյնպէս խրաքանչիւր մար-  
դիկ խրեանց ծնած և մնած հայրենիք սիրեն :  
Ցիրերիս կայսրն Հռովմայեցւոց , զմեր Արդար թա-  
գաւորն երրեմն ՚ի Հռովմհայրէ , Արդարի աղ-  
նուութիւն տեսնալով իմաստութիւն ընելով և հան-  
ճարոյն վրայ զարմանալով չուզեր խր խորհր-  
դարանէն , պալատէն և Հռովմայեցւոց աշխարհէն ,  
այնպիսի հաղուագիւտ անձ մի հեռացնել , զայս  
բան զիմնալով Արդար , բաղմիցս ազերս մատո-  
ցանէ առ կայսրն , արձակել զինքն ՚ի հայրենի  
աշխարհ իւր , զոր անձկայրեաց և կաթողին սիրով

կակրէր . սակայն ամէն ջան ի գործ դնելով երբ  
 տեսաւ թէ հնար չկոյ կայսերէն վերադարձի հրա-  
 ման ընդունել . բնական և գործնական պէտքով  
 մի կամեցաւ հաճել զմիտ կայսերն՝ դոր Արդարու-  
 նուրը հանճար և եթ կարող էր խորհել և հնարել  
 Արդար օր մի որսի երժալով քանի տեսակ վայրի  
 կենդանիներ ողջ ողջ ձեռք բերելէն զինի , իւրա-  
 քանչիւր կենդանեաց բոյներէն բառ պլոտելոյ հար-  
 կին բաւական հող առնելով Հոռովմէրը բերէ , և երբ  
 ըստ սովորութեան կայսրն կրկէսի հանդէս զննելու  
 կերթայ , Արդար կենդանեաց երամակ կրկէս բե-  
 րելով մէն մի կենդանեաց բոյներէն վերցացած  
 հողեր , որոշ որոշ կրկէսին հրապարակ ասու անդ  
 կլեցունէ . որսացած վայրի կենդանիք յանկարծ  
 կը թողու հրապարակին մէջ . 'ի զարմանս Հռով-  
 մայեցւոց և կայսեր , իւրաքանչիւր կենդանիք եր-  
 թան նատին իւրեանց բոյներէն առած բնիկ հողերու  
 վրայ : Անդ Տիրերիս Արդարի իմաստութեան և հան-  
 ճարի վրայ զարմացած հիացմանի հարցունէ . « Անշ-  
 ինուն ու ու ու պատուաւիսն այլ » . — Տուր ինձ հրաման  
 ասէ , զի երթայց ՚ի բնադաւառն իմ և նստայց ՚ի  
 վերայ հայրենի հողոյ իմոյ՝ որ է ինձ միայն ըզձակի  
 և ցանկալի » : — « դնա՛ աւագ այրդ , դնա՛ խնաս-  
 տուն և հանճարեղ թագաւոր . դնա՛ , երանի ժո-  
 ղովուրեան և երկրի քում , յորում դու բնակեցեր .  
 երանի հողոյն՝ որում դու իշխեցեր , դնա՛ ով  
 հայրենասէր , դնա՛ ի հայրենիս քո , դնա՛ , զի տե-  
 սի թէ անաստնին անդամ սիրեն զընիկ հողն  
 իւրեանց և դու առաւել եւս պարտիս սիրել՝ դոր  
 սիրեցեր և սիրեցես » :

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՆՈՂԻՔ ԵՒ ՈՐԴԻՔԻ ԱԶԴԱԿԱՆԻ ԵՒ ԲԱՐԵԿԱԾՔ

## ՅՕԴՈՒԱՆ Ա.

ԵՆՈՂԻՔ ԵՒ ՈՐԴԻՔԻ

4. Ծնողք Աստուծոյ նախախնամութեան տիւ-  
պար , արարչագործութեան հրաշաղան գաղանիք,  
անբաւ բարերարութեան նորա պրագործեալ խոր-  
հուրդ . մեր ծնողաց մին հայր կոչի . զԱստուծոյ  
խակական էութիւն վասն բարերարութեան հայր  
անու անեմք , այն որ զմեզ ծնաւ յարդանդէ մայր  
կոչեմք , զԱստուած վասն անսպառ զթութեան  
մայր անուանեմք : Աստուած միանդամ և եթ հայր  
մի և մայր մի ստեղծագործելով յանդ դնիմ ասել ,  
թէ այլ եւս զմարդն արարչագործելէ հրաժարեցաւ ,  
վասնի Աստուած խը արարչագործ ձեռօք և ան-  
տուտ հրամանաւ . երկու մարմին ՚ի մի միութիւն  
զուգեաց , զոր ամրարիշտ մարդկանց ձեռօք չկարէ  
բաժնել . Աստուած ասաց , աճեցէք և բազմացա-  
րուք , որով ստեղծագործելց հրաման ծնողաց  
տուաւ : Աստուած սահմանեց , որ մարդ այն պար-  
կեշտ միութենէն աշխարհ գայ . Աստուած հրամա-  
յեց , որ այն միութեան մէջ սրբութիւն , պարկեշտ  
տութիւն և հաւատարմութիւն պահուի . եթէ ծր-  
նողք օձային հրապոյրներէ իրենց միութեան մէջ՝  
անմիութիւն , և իրենց սրբութեան մէջ՝ անսրբու-  
թիւն բերեն , մահն է իւրեանց պատիժ . եթէ հաւա-  
տարիմ մեսն խրեանց արարչին՝ կեանքն է իւրեանց

բաժին . անմահութիւն և մշտնմնաւորութիւն իւրեանց վառք և պարծանք :

2. Ծնողք , թէ հարք և թէ մարք . ընդ միշտ պատրաստ , ընդ միշտ համարձակ լինելու են ասել իւրեանց զաւակաց , թէ մեք երկնեցաք և ծնաք գքեզ . նոյնպէս զաւակիք , առանց ինչ երկմոռութեան , առանց ինչ այլայրութեան համարձակալդէս մատնանիշ ցոյց տալու են ամենայն մարդկանց , թէ ահա՛ հայր իմ : և թէ ահա՛ մայր իմ : Զաւակ մի՛ որ համարձակ և պարծանօք չէ կարող իւր հարազատ հայր և մայր ցոյց տալ աշխարհի , նա ապամկանութեան և անսրբութեան ծնունդ է , նա ամօմդոյ և պատկառանց որդի է , նա որց հայր յայսնի չէ , և մայրըն առանց սուրբ ամուսնութեան զինքն ծնանէ , Աստուծոյ հրամանին հակառակ աշխարհ եկած՝ մարդկութեան դասակարգէն վիճած մի է , նա չէ ձեռնահաս Աստուծոյ պատուեր կատարել . Աստուծած ասաց , «Պատուեա՛ զհայր քո և զմայրո . նա հայր չունի որ պատուէ , նա մայր ունի և մայր չէ , վամողի մայր առանց սուրբ ամուսնութեան մայր չէ . նոյնպէս հայր առանց սուրբ ամուսնութեան հայր չէ :

3. Աստուծած հարազատ զաւակաց կօրինադրէ պատուել զհայրն և զմայրն , բայց է՞ր վասն ըստ պատուիրեց սիրել զհայրն և զմայրն , զի որդւոյն բնական է սիրել զհայրն և զմայրն , և թէ չսիրէ , բնական որդի չէ , և թէ չսիրէ , հարազատ որդի չէ , վասնզի բնական և հարազատ զաւակ ընդ միշտ զիւր ծնողն սիրէ , ինչպէս հարազատ ծնողք ընդ միշտ սիրեն զհարազատ զաւակս : Ծնողաց բնական խանդ ըստոն բերմամբ ստիպէ սիրել զոր-

դիս իւրեանց , որդւոց բնական եռանդն ՚ի ներքուստ մզէ զիրենք սիրել զնողս և այս սէր՝ Արարջին մասն ՚ի սկզբանէ անափ ՚ի սիրոս հարց և որդւոց հաստատեր , նուիրադորձեր է : Բայց այլ է սէր և այլ է յարգ անք , մեծարանք և պատիւ ընծայել ծնողաց , որդին եթէ ՚ի մանկութենէ չունի յարդել , մեծարել և պատուել զհայր և զմայր , չկարէ նաև յարդել , մեծարել և պատուել զվաստուած դհայրն ամենեցուն , զոր առաւել քան դհայր իւր և զմայր իւր միշտ սիրել և պատուել պարտական է :

4. Անաստան կենդանիք , մարդոց պէս ծնողական և որդիական յարատեւ . և փոխադարձ սէր և գութ չունին առ միմիեանս սակաւ ժամանակի մէջ նոցա բնական սէր և գութ սկակասի , ոչ ծնողն ախորմէ զիւր կորիւն ճանաչել , և ոչ կորիւն զիւր մայրն , բայց արարշատիոտ մարդոյո՞ւ սքանչելի և անթարդմանելի է սէրն , զի ծնողք մեր , որչափ խորին ծերութեան մերձենան . նոցա սէրն առաւել սասականայ մեր վրայ . բուռն գորովով սկսեն գուրդուրալ զաւակաց վրայ , ցուոլ ծերութեան անուռանեն , զաւակաց փոքր ինչ բացակայութիւն մեծամեծ վշտեր բերեն ծերունի ծնողաց սրաին . զնոյն փոխադարձ սէրն և գութ հարազատ զաւակունք ունին առ ծերունի ծնողս իւրեանց . մեծ զդուշութեամբ զդուշանան չվշտացնել նոցա սիրտ . միշտ կատկածեն երկիւզիւ պաշարուած՝ թէ մի գուցէ անգութ մահ , իւր հայր , իւր մայր , իւր տան ծեր , իւր գերդաստանին նահապեա , իւրմէ յանկարծ յափշտակէ տանէ , հարազատ որդին ,

միշտ ցանկայ հօր և մօր օրհնութիւն ընդունել Յա-  
կոր նահապեա իւր խորին ծերութեան մէջ սիրէր  
զՅովսէփ և առաւել սիրէր. խակ Յովսէփ իւր իշխա-  
նական բարձրութեան մէջ սիրէր զիւր բազմաժա-  
մանակեայ ծերունի հայրն և խաղառ սիրէր : Տօ-  
րիա սիրէ , պատուէ և հնագանդի հօր և մօր .  
խակ Տօրիայի հայր և մայր որդեսիրութեան բռուն  
գորովէն ստիպեալ եթէ սակաւիկ մի եւս նորա  
երես չխեւնեն , մահէ իւրեանց բաժին , գերեզ-  
մանէ իւրեանց խաղաղութիւն :

5: Մարդո՞ եթէ անդամ մի լրջութեամբ իւր  
վրայ մտածէ , թէ որչափ անհամրերելի վշտովք  
երկնած և ծնած են զինքն . թէ ինչպէս ինն ամիս իւր  
ծնողաց զգուշութեան ներքեւ՝ իրբեւ փափուկ դիւ-  
րաբեկ անօիժ մի պատապարութիւն և կենդանու-  
թիւն գտեր և աշխարհ եկեր է՝ ահաւոր և սոս-  
կալի երկունքներով . ո՞վ կարէ մօր տառապանաց  
նկարագիր յառաջ բերել , սոսկում և արհաւիրք  
ձգել մարդոց սիրու : Ամէն օր աեսանեմք թէ  
ծնողք նորածին մանկան գեռաբոյս օրերու մէջ ,  
ոչ կեանք և ոչ կենաց քաղցրութիւն ունին , ի-  
րենց կեանք իրենցմէ յափշտակեր մանկան կեան-  
քի վրայ գրեր են , դառն տառապանք , աննինչ  
հոգածութիւն եղած է իւրեանց բաժին բաժակի ,  
թէ մանուկն հիւանդանայ սարսափին , եթէ լիծ  
մի տեսան՝ հառաջեն և կոկծին , եթէ լոյ՝ վըշ-  
տանան և տարակուսին , ոչ ցորէկ զուարճութիւն  
և ոչ գիշեր հանդիսա ունին : Որդին աշխարհ և  
աշխարհի ամէն բանէ առաջ իւր ծնողաց կերպա-  
րանք տեսանէ և ճանաչէ , նոցա փափուկ դողար

և գորովալիր բարբառն լսէ , նոցա քաղցր ժպիտ նշմարէ և ժպտի . մօր քաղցր ստեանց կաթով մնանի զարդանայ , ծնողաց բաղկի մէջ դրւարթաւ նայ , զօրանայ , ծնողաց բերանէն ուսանի դիւր անուան նշանակութիւն , ծնողաց լեզուի և շրմանց օժանդակութեամբ սկսանի մանուկն արտասանել Աստուծոյ սքանչելի սուրբ անուն , ծնողաց ձեռք մանկան բաղուկներ ՚ի վեր ամբառնան օրհնել և փառաւորել զՀայրն լուսոյ և ՚ի նմանէ չնորհք և խմաստութիւն խնդրել :

6. Հայա այրոյէս տեսի ես , որդեսէր դատերք Հայկայ , որք իւրեանց հարազատ մանկան օրօրոցի շուրջ նստած՝ երբ իւրեանց սուրբ ստինք մանեկանց բերան դրած , տիեզնէին քաղցր և աւաչ ձայնիւ . Երդ հայրենի , երդ հայրենասիրի , երդ դիւցազնի երդէին յունկս մանկանց և ասէին , «օր օր մանուկ հայրազուն , օր օր մանուկ զուարթուն , մօր կաթի պէս քո սիրուն , սիրեա զորդիս հայկազուն : Օր օր ճրագ ծնողացդ , օր օր արեւ հայրենեացդ . Ծնկեր տամմ զքեզ վարդանայ , Օրհնէ զքեզ աշն Լուսաւորչայ» : Օրօրոցն է հայրենասէր մանկան ճեմարան , վարժապետն է հայրենասէր մօր բերան , այս ճեմարանիս մէջ ընդունած դասն , քան զամենայն զիտութիւն աշխարհի է գերադաս , հազար վարժապետ , հազար տարի , օր հազար անդամ եթէ սիրոյ դաս աւանդէ իւր տղային , մօր և հօր մի դասն աւելի է քան զՀազար վարժապետի , որ հազար դասն խօսի ՚ի մէջ մի օրին

7. Մարդ իւր մանկութեան օրով ծնողաց դարնան ծաղիկն է և հայրենեաց սոխակն , պատանե-

կութեան օրով գեղատեսիլ արմաւենիէ և հայրեն-  
եաց հրեշտակ, երիտասարդութեան օրով ծնողաց  
ցուով ծերութեան է և հայրենեաց աննկուն պա-  
հապան : Որդիական սիրոյ ստհման՝ ծնողական  
սիրոյ ստհմանի պէս ընդարձակիէ յոյժ, որդիական  
սէր, ծնողաց կենդանութենէն անցանէ մինչեւ  
ի գերեզման և անդր քան դդերեզման մարմին  
դիազարդեն, արձան կանգնեն, խաչ վեմ օծա-  
նեն, կենսադրութիւն յօրինեն, պատկեր նկարեն  
Ռոր ազնուասուն զաւակ լի հառաջանօք իւր ննջեց-  
եալ ծնողաց անուն չի յիշատակեր ։ պարձանօք  
նոցա ձիրքեր և մէն մի առաքինութիւնք չպատ-  
մեր . — ԱՇ չգիտես թէ, լուսահոգի հայրս և  
մայրս ի՞նչ աննման առաքինիք էին, ի՞նչ բարի,  
ի՞նչ արթուն, ի՞նչ ժրաշան, ի՞նչ տնարար, ի՞նչ  
բարեպաշտ, ի՞նչ որդեսէր և Աստուածանէր մարդ-  
էին . ա՛խ լոյս լինի նոցա գերեզման, օրհնեալ  
լիցի նոցա յիշատակ : Երբ հարազատ որդին,  
այսպէս վասահութեամբ իւր ծնողաց վարք իր-  
եւ առաքինեաց վարս հոչչակէ ամենեցուն, թէ և  
չունենան այնչափ լաւագոյն վարս, ահա այս ա-  
մէն ցուցանեն, ապացուցանեն թէ՝ որդիական սէր  
զաւակաց մատաց և որաի մէջ անմահ է, և թէ ծնո-  
ղաց մահուանէն դինի, առաւել ազդու և գերբ-  
նական ներդործութիւն ազդեն հարազատ զաւա-  
կաց ներքին դդ ացմանց վերայ :

## Ա Զ Գ Ա Խ Ա Ն Ք .

1. Հայրենասէքն միշտ ուշադիր լինել պարտին եւր երկու կերպ ցեղական աղդականութեան վրայ յորոց մինն իւր շրջանին մէջ խիստ ամփոփէ , իսկ միւսն խիստ ընդարձակի : Անփոփէ է մեր արեան մերձաւորութեան շրջան . երբ որ մեր պատու պատին , և նորա պատին սկսերով՝ մինչեւ 'յ՛ մեղ երկառաւան ճիւղահամարով ի՞նտմք և վասն խիստ արեան մերձաւորութեան՝ ընդ իրեարս չեմք խնամանար , մեծին Ներսեսի կանոնագրութեանցն անսալով . բայց ընդարձակն՝ սկսանի Աղամայնախօրէն , Հայկայտ Արամայ և Տիգրանայ մեր բնիկ նահապեաներէն , հասանի առ մեղ՝ և մեղմէ յաջորդաբար յաղզէ յաղզ յարառեւէ 'ի յատիսեանո :

2. Արդ՝ կուզես մերձաւոր պատիրէդ , կուզես հեռաւոր պապերէդ , այն է՝ Տիգրանէն , Արտևէն և Հայքէն սկսէ աղդահամար առնել և մոտածել . Արդեօք կհամարձակի՞ս ասել , թէ երրէք աղդակից չունիմ աշխարհի մէջ , արենակից չունիմ Հայաստանի մէջ . աղդական չունիմ՝ տանս մէջ , երբ որ հարազատ հօրէ և մօրէ սերելով աշխարհ եկած ես , արդա եօք կարո՞ղ ես արփանակից աղդականերդ չփրել . ո՞չ - ահա նոյն իսկ արիւն և արեան մերձաւորութիւն , Ներքին բնադրմամբ դրաւեն զսիրով և երբիկամունքդ՝ կամայ և ակամայ սիրել . և միշտ սիրել ստիպեն . զի ուր որ վախչիս , աղդականացդ սէր ետեւէդ դայ . ուր հեռանաս՝ արենակցացդ սէր զքեղ գանոյ . եթէ երրեմն մոռնաս մէկ աղդակա-

Նիդ պատկեր , մի օտարազգի մարդոյ վրայ տեսնաւ լով յանկարծ դոչես , թէ ահա՝ սա մարդ՝ իմ՝ այս ինչ ազգականիս նմանէ . եթէ մէկ այլ մարդ՝ աղդականիդ , շարժմունք և խօսաց ձեւն ունի , խոկայն ասես թէ , այս մարդ ազգականիս վարմունքն ունի . ահա այս ամէն՝ ի սիրոյ ազգակցացդ յառաջ դան , ընդ որս դու զարմանաս :

3. Նահապետական ուկեղինիկ դարու մէջ . երբ մարդոց արիւն զօրաւորէր և անխառն . երբ մարդոց սիրտ խաղաղ էր և հոգին անդորր , երբ մարդոց սէր սուրբ էր և անարատ , շատ արեան մերձաւոր ազգականք՝ մէկ աշխարհի՝ մէկ դիւզի՝ և մէկ տան մէջ իրբեւ մի բնաանիք բնակէին : Նոյ՝ երկրորդ հայր աշխարհին՝ իւր որդւովք և թռուամբք , և թռուանց թռուամբք Հայաստան աշխարհի Արարատեան նահանգի , Նախիջեւան աւանի մէջ բնակէր ընդ երկար ժամանակս : Հայկ մեր նախահայրն՝ իւր որդւովք թռուամբք և երեք հարիւր ընդոծին զարմօք բնակէր ՚ի Հարք դաւառի : Յակոբ նահապետ եօթանաստն և հինգ ընտածնովք բնակէր ՚ի խռոան : Ծնտանութեան սէր , ազգականութեան սէր և արեան մերձաւորութեան սաստիկ սէր , իրբեւ սիրայօդ . կաու մի՝ զայն նահապետական գերդաստանս անմերկնելի սիրով շաղկապած էր ընդիրարս , բնաւ չէր թռողուր որ բաժանուէին իրարմէ , Եւ ահա մինչեւ ցայսօր Տարմնոյ , Մոփաց և Վասպուրական աշխարհաց մէջ , գեռ կան քանի մի հազուագիւտ նահապետական գերդաստանք , որոց մէջ քառասուն , վախթուն և մինչեւ եօթանաստն հոգիք ՚ի միում տան բնակին խաղաղութեամբ և սիրով :

կ. Բայց աւազը երկաթի դարտու . յորում երբ մարդոց արխան տկարացաւ և խառնեցաւ, երբ մարդոց էիրու խռովեցաւ և հողին վրդովեցաւ, երբ մարդոց սէրն անորրացաւ և արատեցաւ, արեան մերձաւոր աղդակիցք որտով և հոդւավի իրարմէ ուղաղեցան . տառներէն բաժանեցան և վասն աղահութեան իրարու թշնամի դարձան . ինչուէս որ այժմ տեսնամք, զի ո՛չ սէր աղդականաց մնաց, ո՛չ ինամք ընտանեաց մնաց, ո՛չ գութէ սիրելեաց մնաց, ո՛չ պարկեշառութիւն և ոչ սրբութիւն մնաց . Հայր որդւոց դէմ, որդին հօր դէմ, աղդակից աղդականի դէմ վէճ և թշնամութիւն յարուցին Տոնս, այդիս, անդաստանս, մասն մասն կարեցին, բաժնեցին, օապի աչօք իրարու հոյեցան և վատացան, տկարացան, աղքատացան և օտարին ծաւոց եղան :

5. Երջանիկ համարիմ այն ազգեր, և առաւել երջանիկ՝ որոց համբոյն անհատական անձինք ՚ի պարկեշտ ամուսնութենէ շառաւիղած, ընտիր աղդակիցութիւն, ընափր աղնուաղդութիւն ընտիր միաբանութիւն հաստատեր են իրենց մէջ . Մէկ ընաւ թող չղարմանայ ԱԷնէացւոց կայսրութեան այսափ յարատեւ հաստատութեան վրայ . ԱԷնէացւոց ազգ որդւոց հարազատութիւն և հնազանդութիւն միշտ սրբազնն, միշտ նուիրական և միշտ պատուական համարտծ են. Այնէացւոց որդիք հանդերձ կռապաշտութեամք՝ գիտեն պատուել զհայր, և զմայր . գիտեն սիրել զազդականն, Աենէացւոց կայսրն միշտ հնազանդէ իւր շաստաւածոյն. իշխանք միշտ հնազանդին թագաւորին. հարք միշտ հնազանդ են իշխանաց. որդիք միշտ հնազանդ են հարց, և

ամենեքեան 'ի միասին հնագամնդ են խրեանց աղպային օրինաց, ընդ որս և ընդ որովք կաղմին իբրեւ 'ի մի տուն, 'ի մի գերդաստան, 'ի մի ազգակցութիւն և 'ի մի միաբանութիւն, 'ի մի դօրութիւն, 'ի մի իշխանութիւն և 'ի մի թագաւորութիւն :

6 Սրբազն պատմութիւն՝ համայնչայն աղդաց և աղաւց աւանդական և գրաւոր պատմութեանց վկայէ, և սառագէ թէ՝ խառնակ անկողինք և շուարտութիւնք, աղդաց և ժողովրդոց նիւթական կենաց արմատն թիւնաւորեն . զնասեն, սպառեն և սպանանեն : Տես պատմութեանց մէջ, թէ ինչպէս վաւաշուտութեան ժանտախտն, հզօր աղդաց զօրութիւն սպառեց . քաջ զօրապետաց կորովի բազուկներ կաշկանդեց . յաղթող թագաւորաց փայլուն թագեր յերկիր կարծանեց : Խարայէլ երբ Բազարամայ սուտ մարդարէի թելատրութիւնից շուայտութեան մէջ զեխեցաւ, տկարացաւ, պարտեցաւ, նոյնայէս ամենայն շուայտութեան հետեւող աղդեր ընկան և կործանեցան : Կարդա՛, Յունաց, Հռովմայեցւոց, հին և նոր աղդաց պատմութիւն, և աես այժմեան աղդաց կացութիւն և գրութիւն : Տես անպարտելի և կորովի Առմիտանի բազուկներ, թէ ինչպէս շուայտութ Տալիլայ կնաջ մի ձեռօք կապուեր, կաշիանդուեր է : Տես, թէ ինչպէս յաղթող Հոգեօփեռնէսի դլուխ շուայտութեան և արքեցութեան պահուն կտրուած՝ և մազախի մէջ տրած են . տե՛ս, թէ ի՞նչպէս կին մի մեծին Արտաշէսի երես ապատակ հանելով՝ ոսկեղին թագն ի գլխէն կործանէր և 'ի գլուխ իւր դնէր : Լա՛ց մեր Արտաշէր թագաւորի վրայ, որ շուայտութեան

Հետեւելով մեղիացաւ , թուլացաւ , այժոռէն ընկաւ , Պարսից մասնուեցաւ , յԱնուշ բերդն կալանաւորեցաւ և խոր քաղցր կերանքէն և արեւէն զրբկուեցաւ : — Ասոնք օրինակ են ամենուն եթէ իմուտ առնուն :

7. Մասիր անդամը պարկեշտ տանց մէջ , ողարկեշտ տոհմային ցեղից մէջ . տես՝ թէ ինչպէս շուտով ածին , շուտով բազմանան . հարստանան և զօրանան . քննէ ու տես թէ ինչպէս պարկեշտ և չափաւոր ծնողք քաղմածին են , և որդիք առոյդաշխոյժ և զօրաւոր . խոկ անսպարկեշտ ծնողք , սակաւածին են և որդիք թերակասարք , վոխտ , անուժ և անկերպարան : Շատ գերդաստանք , շատ տոհմային ցեղք և աղդք՝ երբ չուսյառովեամբ և արրեցնովեամբ կեանք վարեցին , սերականով թեան արմատէն չորացան և աշխարհի երեսէն ցեղքք ցեղականօք , զարմօք զաւակօք և աղդակեցօք չնշուեցան և անյայտացան . մանաւանդ այն տաներ և ցեղեր , որ արեան մերձաւոր աղդակցաց հետ՝ անխափիր խառամացան , կամ խառնակեցան : Աղդաց պատմովինք , ամէն օրեայ փորձ , հմուտ փիփտոփալից և ներհուն բժշկաց քննութիւնք և վլոյյովթիւնք , տպացոյց են գրուածոց : Այս պորականի աւանդական անդիր պատմութիւն առէ , թէ կուսակրօն արեդամի , ամումնացեալ քահանայիտ մի տուն իջեւանեցաւ , քառասոն տոյդ և գեղեցիկ երիտասարդ՝ եկին կրօնաւորի սուրբ աջ համբուրեցին . վարդապետ հարցուց քահանային թէ՝ «սոքա ո՞վ են» , ասաց քահանային , թէ ամէնք սոքա ծառայիդ որդիքն են . պարզամիտ

արեգայն յոյժ բարկացաւ .քահանայի վրայ տաելով  
«մեղաւոր , անարժան , մարդ ես որ այսչափ զա-  
ւակ ունեցած ես » և այսպէս երբ բարկացած և  
գայթակած՝ արեգայն քահանայի տանէն իրեւու-  
մեղաւորի տանէ փախչիլ կուզեր , և լճի(\*) եղերք  
հասաւ . քահանայն ետեւէն համելավ աղաչեց ,  
որ իւր խստառվանութիւն լսէ . երբ քահանայն խօ-  
սիլ սկսաւ , լճի միջի բարձրաճիչ աղաղակօղ դոր-  
տեր լւեցին . «մեղայ տատածոյ հայր սուրբ . յի-  
սուն տարի է ամուսնանալս , քառասուն անդամ  
անկողին գնացի , Աստաւած քառասուն որդի տը-  
ուաւ» : Արեգայն զարմացաւ , վառք տուաւ Աս-  
տուծոյ և օքնեց զքահանայն ասելով թէ՝ «դու  
սուրբ ես քան զլութարափ և քան զլուապատփ ճըգ-  
նաւորն . ես քեզ մեղայ , ո՛վ սուրբ քահանայ .  
ինձ թողութիւն արա . . . . »

9. Օրհնեալ են վասպուրական երկրի պարկեշ-  
տասէր մարդիկ . ծերք և պառաւունք , և ծնողք,  
որք ստէպ ստէպ սոյն ամին նման շատ անգիր և  
դրաւոր պատմութիւնք աւանդին իրենց դեռա-  
ծին զաւակաց , մօտաւոր և հեռաւոր ազդակցաց:  
Հա՞րք , մարք , պարկեշտ մարդիկ , ծերք և սր-  
ռաւոր , դուք էք հայրենեաց պարկեշտ վարժա-  
պետք , անվեղար վարդապետք , վարքով պատ-  
մադիրք . փորձով վիլիմափայք . խրառեցէք , ա-  
ղաշեմ խրառեցէք զմաննկունս հայոց , զկուսանս

(\*) Եին վարագայ լերանցամէջ դեղատեսիլ և բարձր  
դիրքի մէջ լճացած է , անուն տաճկերէն «Փէ շիշ կէ օլիւ»  
կուրի այսինքն քահանայի լիճ , ջուր բարեհամ է և ամսան  
վանայ այդեստան ոռոգէ :

հայոց , զպատանիս . զօրիորդս հայոց , վերիստասարդս զհարսունս որ պարկեշտ մնան , որ ծլին և ծաղկին , պարկեշտ մնան՝ որ աճին և դորանան , պարկերշտ մնան՝ որ զազգակիցս սուրբ սիրով սիրեն . պարկեշտ մնան , որ զազգ սիրեն , հայրենիք սիրեն , պարկեշտ մնան՝ որ երկար առջրին և ծերանան , պարկեշտ մնան որ փառք և պարծանիք լինին հայրենեաց :

40. Ես ձեր սուրբ և պարկեշտ խրատ սիրեմ , դուք աղգակից և հայրենակիցներ իմ էք . ձեր խրատ՝ հօր խրատէ , ձեր խրատ՝ Աստուծոյ պատգամ է , ձեր խրատին լուզ՝ Աստուծոյ ձայնին լուէ , և Աստուծոյ հրաման կատարէ : Ո՞վ աղգակիցք իմ . ո՞վ հայոց զաւակունք ։ Հարցեքք ոյսուն դուք ցհարս ձեր և ասսացեն ձեզ , ցծերս ձեր և պատմեսցեն ձեզ որք և խրատ ասն մեղ ասեն «լուարուք ինձ որդեակիք իմ՝ զի պարկեշտս բարբառիմ և բաշխեմ զիսօսս իմ որդւոց մարդկան» :

### ՅՕԴՈՒԱԾՈՒՅԻՆ

#### ԲԱՐԵԿԱՄՄԱԳ

1. Աշխարհի ամեն տեսակ աղդերէ , և մարդկանց մէջէն՝ ամեն տեսակ մարդկանէ , եթէ ուղեմք՝ կարող եմք մեղ բարեկամ ստանալ , որք գուցէ ճարտարութեամբ մեր սիրու որսալով իրենց մասնաւոր շահու համար , առ ժամանակ մի կընան մեղ հետ բարեկամնալ , և մեք գուցէ պարզմութեամբ առ ժամանակ մի հաւատամք նոցա բարեկամութեան , բայց ոյն շահասեր դա-

քուս մէջ , անշահասէր բարեկամ , անկեղծ և ան-  
նենդ բարեկամ , օտար աշխարհաց մէջ , օտար ազգաց  
մէջ դանալ , ՚ի կարգո հրաշից է համարեալ :

2. Բայց տեսնեմք զՅիսուս , որ բարեկամւ-  
թեան անուն օտարաց և հեռաւորաց չուռառ .  
այլ իւր մերձաւոր ազգակցաց . իւր հայրենակից  
տշակերտաց՝ և զիւր ազգի հանրութիւն բարեկամ  
կոչեց : «Դուք բարեկամ եք եւ , զե սամենայն որ ինչ ըստ  
՚ի Հոգե ի հայ , աւանաց յեղ» : Քոն զայս մեծ ուր ուստ  
նէ , զե ուստ զայն իւր ՚ի վերայ բարեկամոց իւրոց : Ճըշ-  
մարիտ հայրենասիրի մոտածութիւն եւս այսպէս է .  
զի ազգի ամրաղի սերունդ՝ թէ արենակից մերձա-  
ւորք , թէ ազգակից հեռաւորք , ի՞նչ ազգի և  
ի՞նչ աշխարհի մէջ որ գտնուին , իւր մտերիմ և  
հառատարիմ բարեկամ համարուած են , վասնդի  
հայրենասէրն՝ իւր իմանալի և զդալի ամէն տեսակ  
բարիք և պարզեւք ազգին համարէ , և ազգին  
իրեն . այնչափ սիրէ զիւր ազգն՝ մինչ զի զիւր  
անձն և արիւն ի վերաց բարեկամաց գնել չինա-  
յեր երրէք . Հայրենասէրն մեզաւորաց պէս մի  
միայն իւր սիրելին չսիրեր , այլ նաեւ սիրէ այն  
արենակից ազգ այինս՝ որք զիտմամի վեսս և թըշ-  
նամանք մի հասցունեն իրեն և զզջան : Հայրենա-  
սէր թշնամի չունի , հայրենասիրի թշնամին՝ հայ-  
րենեաց թշնամին է . թէ օտար ազգի մինի , թէ  
ընտանի , թէ հեռաւոր լինի և թէ մերձաւոր միշտ  
թշնամի է իրեն , վասնդի ինքն կարող է իւր թըշ-  
նամեցն ներել , բայց հայրենեաց թշնամեցն նե-  
րելց իրաւոնք չունի , վասնդի ինքն հայրենեաց  
իրաւոնքն պաշտպանելց իրաւոնքն ունի , բայց

Հայրենեաց իրաւունք թշնամոյն զոհելց իրաւունք  
չունի :

3. Մեր նախնիք , Ասորոց . Պարսից . Յունաց  
կետ երբեմն երբեմն բարեկամացան , բայց վո-  
խանուկ նոցա բարեկամութենէն օդուտ քաղելու ,  
մեծամեծ վնասուց հանդիպեցան . օտորք մեր  
բարեկամութիւնն միշտ դիսցան խրեանց օդախն  
գործածել , մենք չդիսցանք : Վասնդի մեր ներքին  
բարեկամութեան և սիրոյ կապ խզուած էր . նա-  
խարարք նախարարաց դէմ , ժողովուրդք ք նախա-  
րարաց դէմ , և նախարարք թագաւորի դէմ թը-  
նամութեամբ և առելութեամբ վարուէին՝ և ոչ  
թէ բարեկամութեամբ : Երբ այսպէս ընտանեաց  
և ազգակցաց ներքին սէր , միութիւն և բարեկա-  
մութիւն սպասի , արտաքուստ օտարներէն բա-  
րեկամութիւն մուրալ յետին թշուառութիւն և  
յետին կործանումն է :

4. Ե'կ , անդամ մի մոտձէ , երբ քո ընտանին ,  
քո արենակիցդ , քո աղջդ քեզ թշնամի է , ո՞վ քեզ  
ձրի սէր , ձրի բարեկամութիւն չնորհէ . զի մին-  
չեւ քո շահդ օտարին չզսհես մինչեւ հայրենեացդ  
մասնիչ շինիս , մինչեւ անձդ օտարին բարյապէս  
կամ նիւթապէս վաճառերով գրաւ չդնես , օտա-  
րէն երբէք բարեկամութիւն մի՛ սպասեր , եթէ  
սպասես սիսալիս , զի այդ կերպ բարեկամութիւն :  
բարեկամութիւն չէ , այլ բարակոյ թշնամութիւն ,  
թշուառութիւն , կորսուս և մահ : Վասակ թը-  
նամին և մասնիչ հայրենեաց , դաւաճան և դա-  
ճիճ ազգին . երբ Վարդանայ բարեկամութիւն  
մերժեց . երբ իւր աղքակցաց արենակիցաց սէրն

ուրացաւ կ շահ և ի վառս անձին , ամէն բան  
դրաւ դրաւ . օտար աշխարհէ , օտար աղդէ , օտար  
թաղաւորէ բարեկամովին մուրալց . ուրացաւ  
հաւատոք , ուրացաւ զԱւատուած , ուրացաւ զտղգ ,  
մասնեց հայրենիք , գնեց Յաղիերափ սուտ բարե-  
կամովին՝ որ աղէտ մեծ բերաւ . Հայոց աշխար-  
հին , և մահ ի վերայ մասնչին : Այսպէս երիցս  
թշուառական Մերաւժան , թող տուտ ընտանեաց  
բարեկամովին , բարեկամուացաւ Պարտիին , աւեր  
բերաւ Հայոց աշխարհին , հոռ , հայծու և հրաշէն իրեն  
դաղաթին : Վեստ Սարգիս Յունաց հետ բարեկամ  
մնալց համար՝ մասնեց դդաղիին . վաճառեց  
զԱնին : — Անիծեալ լիցի այսովիսի բարեկամո-  
թին . . . . երիցս անիծեալ . . . :

5. Ես խելամնեցի և աեսայ , թէ իմ աղդակե-  
ցաց և աղդին հարանեաց վրայ , օտարաղդին  
չխնդար , այլ ես , ուրեմն ես բարեկամ եմ աղդին .  
աեսայ թէ իմ մեռելիս վրայ օտարաղդին չիւար ,  
այլ իմ աղդակեցս և աղդս . ուրեմն իմ աղդակեցս  
և աղդն է իմ բարեկամ . աղդ իմ լեզուս դիաէ և  
ես աղդին . ուրեմն աղդն է իմ ծանօթն և ես աղ-  
դին : Տեսանեմ թէ երբ ես նեղութեան , տառա-  
պանաց և հիւանդովին մէջ անկանիմ , հայրս ,  
մայրս , աղդականս , բարեկամն և աղդս նախ ա-  
ռաջ ինձ օդնութեան կանչեմ . ա՛հ հայր , ա՛հ  
մայր , ո՛վ բարեկամք ինձ հասէք . ուրեմն սորա-  
են իմ սրտակից բարեկամք՝ և ոչ օտարք : Բայց  
երբ բարեկամք և մերձաւորք մեզ չօդնեն . Առ-  
տուժմէ օդնութիւն ինդքիմք ասելով , քննորդէն  
ինչ է ցեսանէ ելեաց՝ ոչ օբար վերինս և զերին :

6. Ամէն Հայ անուն կրօդ մեղ բարեկամէ է, և  
մեք ամէն Հայ անուն կրողին բարեկամն ենք. բայց  
Հայ կայ, որ անուն միայն ունի Հայու, անուն  
միայն ունի բարեկամի. այլ գործքով և ընթաց-  
քով Հայ չէ. անուն բարեկամի ունի գործ թշնա-  
մոյ, այսպիսեաց անուն է սուս բարեկամ, սուս եղբայր  
և ընտանի բնադի: Հայրենասէրն երբէք չի գալ արիր  
բարի օրինակով բարի խրառով զայնդիօի սուս բա-  
րեկամն ողջութեան վրայ բերել. Եթէ չողջուն՝  
իբրեւ ակն և իբրեւ ձեռն գայթաղղոցոցիչ հա-  
տանի և ՚ի բաց ընկենու ազգի ամրոցնութեան մայ-  
մինէն: Վասն զի ամէն մարդ, ամէն Հայ և ամէն  
հայրենասէր գիտէ, թէ սուս բարեկամ, սուս եղբայր  
և ընտանի բնադի վրաս մեծ է թէ ազգին՝ թէ Հայրեն-  
եաց և թէ ընտանեաց: Խնչովէս որ ընտանի բարե-  
կամնց ուր մեծ է, օգնութիւն զօրաւոր է, բարե-  
կամնութիւն բարեօք լի է, նոյնպէս ընդհակառակն  
ընտանի թշնամեաց, սուս բարեկամնց ատելութիւն  
մեծ է, թշնամութիւն զօրաւոր է և ամէն տեսակ  
շարեօք լի է. յօրմէ վրկեցիք Տէր Աստուած զազդս  
մեր համայն:

## ԳԼՈՒԽ ԶԱՐՅԱՐԴ

#### Ա.ԶԳ. - Ա.ԶԳ.ԱՅՆԱԻԹԻՒՆԵ ԵՒ ՔՐՈՒԹՎՈՒԹԵ

ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ

U.S.A.

4. Ի մոյ նախահօրէ սերեալ որդիք, երբ մէկ  
աշխարհի մէջ աճին, զօրանան, տիրեն և բնակին,  
մի կազմեն խռեանց նահապետին սնու-

նով, ինչպէս Հայքս, որ մեր Հայկ նախահօքէն ծագում առնելով, ազդաց դասակարդի մէջ, ազդութեան կերպարանք առաւ Հայէն անունով: Ազդ անուն հաւաքապէս իւր մէջ պարունակէ իւրաքանչիւր ազդային անհատք, դքաղաքոցին, գիւղացին, կըթեալն, անկիրմն, խմաստունն և ռամիկն, իշխան և իշխանազունս, թագաւորն և թագաւորազունս, արք, կանայք, ծերք, տղայք, աղքատք և մեծատունք, սոքա ամենք ազդ են և ազդակից արենակից միմեանց: Այս է ուժունեան՝ որ մէկ նախահաւէ, մէկ գերդաստանէ ծագում և աճում առնելով օտարախորդ ազդաց խառնուրդէն անխառն մնացին և իրաւամբ ու ու ու կոչեցան, որք միմեանց ընտանիք են, որք միմեանց ազդակից են, որք բնական սիրով սիրեն զմիմեանս, որք սրտով և սոգւով միացեալ են իրարու հետ, որք համահաւաքեալ հոյրեննեաց Ա. ծոցին մէջ՝ անմեկնելի սիրով սիրեն զմիմեանս, քաղաքավարեն և առաքինանս իրեւ հարազատ որդիք իւրեանց հարց գերդաստանին: Ասսուած՝ սիրոյ մէջ առաքինացած և զօրացած ազդաց անուն՝ սահմանեաց այսպէս, տուն Սեմայ, տուն Եղի, տուն Յարեթի, տուն Թորգոմայ, տուն Հայկայ, տուն Արամայ ևայլն:

2. Ա.ԶԳ. անունէն նուիրական անուն մի չկայ ազգութեան մէջ, ու մեր սիրու, մեր հոգին է, ու մեր աչք, մեր բովանդակ մարմին է, մեր հոգեկան և մարմնական ամեն բարիք, թէ խմաստութիւն թէ հանճար, թէ մեծութիւն, թէ իշխանութիւն, թէ հարստութիւն՝ մեր չէ, ազդին է: Այս ամէն և յաւէտ քան զայս, երբ յօժարեմք ազդին նուիրել.

անոր չեմք նուիրեր՝ այլ մեղ. զի այն ամենայն է չէ  
որ մերն է, աղդին է, և այն ամենայն որ աղդին  
է՝ մերն է. այս է հայրենասիրի մոտածութիւն պար-  
ծանք, փառաւորութիւն և պատկ:

3. Աղդութեան մէջ վիճակի հաւասարութիւն  
պահել գժուարին է, զի մէկն հարուստ է, միւսն  
աղքատ, մէկն ուժաւոր է, միւսն անուժ. բայց սէր  
և հայրենասիրութիւն, հաւասարութիւն և եղբայ-  
րութիւն պահէ ամենուն մէջ. սէրն՝ աղքատն մեծա-  
ստուն առնէ. և տկարն զօրացուցանէ «զի սէրն մի-  
այն զիւըն ոչ խնդրէ այլ և ընկերին», սէր մոտածել  
տայ հայրենասիրին թէ աղդութեան մարմնոյ մէջ,  
երբէք անպիտան անդամ մի չկայ. մէկն դլուխ է,  
մէկն սիրտ, մէկն ձեռք է, միւսն ոտք և մաղն ան-  
դամ որ աւելորդ համարուած է, մարմնոյ ամբող-  
ջութեան մասն է, և առանց մազի մարդոյ մարմնն  
մորմին չէ, այսպէս աղդի ամբողջուցիչ անդամոց  
և անհատից մէջ աւելորդ. մէկ չկայ, թէ և կարի  
կրտսերագունից ոք իցէ :

4. Բայց անպիտան միայն այն է, որ ինքոյնք  
նեխութեան և փոտութեան ենթակայ առնելով աղ-  
դութեան մարմին թիւնառել և սպանանել ջանայ.  
իրեւ իմաստուն բժիշկ՝ զայս անդամ բժշկել կամ  
կորել պարտ է, զի մի դամենայն մարմին սպանա-  
նիցէ: Դասն զի աղդի կենաց դաւաճան՝ ոչ աշխար-  
հիս դաւաստանի՝ և ոչ գերադոյն դատաւորի ատե-  
նին մէջ կարէ արդարանալ և փրկիլ, զի եթէ Աստ-  
ուած Մովսէսին հրամնաց՝ որ եթէ մէկ դիտութեամբ  
եղբօր՝ այսինքն իւր աղդակցին արիսն հեղու, հրա-  
մոյեսցէ և ինքն զի հեղցի և արիսն նորա. ապա

ելթէ մէկ գիտութեամբ աղդի արիւն ջանայ հեղուլ ,  
զի՞նչ սոսկալի պատիժ տնօրինել հարկ է նմա . զի  
որ ընդ դէմ աղդին մեղանչէ , ընդ դէմ Աստուծոյ  
մեղանչէ : Վասակ մեղանչեց աղդի կենաց դէմ ,  
աղդ խնայեց նորա կենաց : Բայց Աստուծօք ոչ նորա  
մարմեռոյն խնայեց և ոչ նորա հոդւոյն ողորմեցաւ :  
Զի մինչգեռ ընդ երանելի դեւոնդեանս ՚ի կապանս  
էր , ասէ , (առողիունեցաւ առնայն անդամներ նորայ ,  
որդուններուններ ընդ ուշ և ընդ բերուններու . . . , ու  
չուսաւ խոսունընուններ է բերուն նորա . Եռուն էրեւ վէլ ,  
և գարշէցաւ էրեւ զի՞ւ :

5. Աղդի մէջ աղդութիւն , աղդութեան մէջ հաւ-  
ւասարութիւն պահող աղդի իմաստատերքն են ,  
աղդի իմաստուն օրէնք և գաստիարակութիւն է .  
իմաստունց բաղմութիւն աղդի նիւթական և բարո-  
յական կենաց անքուն պահապան և հայրենասիրու-  
թիւն ծաւալելոյ մշտալոյ ճրագ են . փորձաւու ծերք  
աղդութեան գերդաստանին , հաստատութեան սիւն  
և ամրութեան խարիսխ են . երիտասարդք հայրեն-  
եաց պարծանք և յոյս զօրութեան են , որդեսէր  
կանայք և պարկեշտ տիկինայք անմթառամ ծաղիկ են  
չայսատանի , և պասկ ուրախութեան աղդի . ծերք  
երկրագործք և արհեստագէտք հայրենեաց անդաս-  
տանին և ագարակին մշտաբուխ վտակիք և յորդահոս  
գետք են . ճոխ և ճարտար վաճառականք հայրեն-  
եաց հարստութեան գանձապահ և ըշտեմարանք  
են : Երբ քաղաքացին զգիւզացին յարդէ , գիւ-  
զացին զքաղաքացին մեծարէ՝ սիրոյ հաւատարու-  
թիւն է . Երբ կրթեալն միշտ իւր կրթութեանց  
մէջ աղնուանայ , անկիրթն կրթեալին իմաստու-

թեան անսայ՝ սիրոյ հաւասարութիւնէ, երբ մեծաւ-  
տուն գթոտ աչօք աղքատի վրայ հայի, և աղ-  
քատն մեծատան դռնէն անկարելից շդառնայ՝  
սիրոյ հաւասարութիւնէ, երբ աղդի ամէն ան-  
հատ, որ աստիճանի և որ վիճակի որ վիճակած-  
վնի, իւր պարտք անթերի կատարե՛ սիրոյ հաւա-  
սարութիւն է, ազգ և աղդութիւն կոչուածն այս է,  
տուն՝ գերդաստան՝ ընտանիք և Հայկեան որդիք  
ասելին եւս այս է :

6. Հայրենասերն՝ աղդութեան շրջանակի մեջ մե-  
ծամեծ պարտք ունի կատարելոյ, զօրս մի ըստ միու-  
նի թուելն անկարելի է . վոքրերն ես յիշեմ, մե-  
ծեր թողտամ հայրենասիրին մոտածել: Աղդութիւն  
և աղդասիրութիւն պահանջնն որ՝ սուտն և սոտու-  
թիւն, նենդաւորն և նենդութիւն, խորդախն և  
խարդախութիւն, խորամանկութիւն՝ իւր ճիւղերովն և արմատներովն աղդի մշշն բնա-  
վնի լինին: Աղդասիրութիւն պահանջէ, զրկողն զրկո-  
զութեան հետ, անիրան անիրաւութեան հետ,  
սպանողն սպաննութեան հետ ի միջոյ խաղառ հե-  
ռացնել: Աղդասիրութեան պարտքն պահանջէ միջու-  
ղթալ, միշտ ողորմիլ, միշտ բարերարել, միշտ սի-  
րել, աղդասիրութեան պարտք պահանջէ՝ որ անձն  
իւր աղդային անհատք միշտ աղդի պատւոյն փա-  
ռաց և մեծութեան նախանձավնդիր հանդիսանան  
և միշտ Հայկայ՝ Սրամայ որդի կոչուին. աղդասիրու-  
թեան պարտք պահանջէ միշտ աղդի նախատանաց,  
անարդանաց և անսպասութեան նախանձախնդիր և  
վրէժինդիր լինել քաջութեամբ և արդարութեամբ:  
Ահա սյա մասին մեղ օրինակ վահան Մամիկոնեան,

որ թէ բանիւ և թէ դործով Պարսից նիվար գօրապետին առաջ ցոյց տուաւ ազգի պատւոյն նախանաձախնդրութիւն՝ քաջութեամբ և արդարութեամբ։ Վահան երբ հաշտութեան համար՝ աղատ զօրապետաց օրինօք փողս հնչեցուցանելով մոտաւ նիվարի պալքատ։ Նիխոր Վահանի քաջութենէն սարսափելով հազիւ կրցաւ հարցանել թէ. (ի՞նչպէս պարսից աղատ զօրապետաց պէս համարձակեցար առ իս գալ)։ Պատասխան վահանի — Էն յանձնէ նու՞ ո՞ս այդ հարցուք։ Նիխոր հարցանէ դարձեալ թէ. (ի՞նչպէս այսպահ երկար միջոց Արեաց ահեղ զօրութեան դէմ ճակատ մղեցիր սակաւաթիւ զօրօք)։ պատասխան վահանի, — ըստ որո՞ւ նույսո՞ւն Եւ ոստաց թէ (վատէ ասորին, և քան զԱսորին վատէ Հայն) այն վար իւսուին և նոր իւսուին քէմ 30 տարի հայութ հղոցի իւսու սուսու շրուտ, և այսուե շրուտ և սոսուց Արեաց ադէ՛տ, ին ՀԱՅ ազ վար չե և ուն զԱսորին և ուն զՊարսէն։ Այսպէս Վահան կարկեց կաշկանդեց Պարսից լւզուն որ երբէք չհամարձակին հայոց տալ չոր անուն։

7. Ով կարէ մեղագրել գԴագիկ Բագրատոնին՝ որ նոր և ասարօրինակ կերպով վրէժինդիր եղաւ Արամեան անուան, թունաց մետրապօլտի տուած անարդանաց անուն խիստ սուկափի էր, վասնդի խրշան անուն Արեան դրած էր ՚ի նախատինս հայութեան և նոյն շան բերանով և ատամօվ պատճեց զայն, ցոյց տալով թէ՝ Արեան շուն չէ, առիւծէ. զի երբ նորա վեհանձնութիւն վիրաւորես, իւր բոլոր ուժ և զօրութիւն առ ինքն բովանդակելով վրէժինդիր լինի։ Դաւիթ գԳողիաթն շուն կոչեց, որ շան նման խրայէն անարդէր, վոքը էր և մա-

նուեկ, բայց աղքին փառաց և պատռոյն նախառնձն-  
այնչափ վառեց բորբոքեց Դաւթի սիրտն, որ իրբե-  
առիւծ դոչելով դիմեց ի վերայ այլազգւոյն, կործա-  
նեց, սպանեց և կտրեց այն դլուխ և լեզուն՝ որ այլ  
եւս չհայհոյէ զիսրայէլի՛ տուն։ Ո՞հ, այն աչք որ Հա-  
յու աչք է, հայու թշուառութիւն և խղճութիւն չու-  
զեր տեսնալ, այն ականջ որ հայու ականջ է, հա-  
յու անարդանք և նախատինք չուզեր լսել. ա՞հ այն  
ականջոր աղգութեան նախատինք լսելով լրէ՝ մար-  
դոյց ականջ չէ, հայու ականջ չէ. այլ ականջ է այն,  
որ ոչ լսէ, և աչք է, որ ոչ տեսանէ :

## Յ Օ Դ Ա Խ Ա Ծ Բ .

## Ա Զ Գ Ա Յ Ն Ա Խ Թ Ի Ի Կ Ի Ն

Տ. Ակսենք աղգայնութեան խնդիր պարզել. որ  
մթութեան քօղի տակ ծածկուած չմնայ. խնդիր մի՛  
որ հայրենասիրի ստէսլ մտածութեան նիւթին է և  
խորին տեսութեան առարկայն. խնդիր մի՛ որ սոսկ  
պատմական և ըստ երեւոյթին փոքրէ. բայց աղ-  
գի աղնուաղդութեան սրատուականութիւն և մե-  
ծութիւն՝ աշխարհի յանդիման կացուցանէ : Պատ-  
մութիւն աւանդէ մեզ թէ, ենք աղգ Հայկ նահա-  
սլետէն սկսելով՝ անխառն աղգութեան կաղմակեր-  
պութիւն մի ունեցաւ մինչեւ ՚ի վաղարշակ. բայց  
սա աշխարհաւ Պարսիկ և աղգաւ Արշակունի. երբ  
մեծին Արշակայ հրամանաւ հայոց աշխարհին վրայ  
թագաւորեց, Պարթեւաց աղգէն և աշխարհէն շատ  
մարդիկ բերաւ ՚ի Հայաստան ։ Վաղարշակ Հայոց  
մեծութիւն, Հայոց աղնութիւն տեսնելով մոռա-

յաւ Պարթեւաց լեզուն. իրեւ աղդութեան մասն Հանդերձ իւր բազմաթիւ պարթեւներով միացաւ աղդութեան բոլորին հետ, և մեղ հետ աղդայնութեան հիմունք հաստատեց, այսպէս աղդ մի երր օտար աղդերէն եկամուտ հատուածներ իւր մէջ ընդունէ և միայնէ՝ պարզ աղդութիւն մի չուեր՝ այլ աղդայնութիւն:

2. Արամնահապետէն, մեծ Տիգրանէն սկսելով մինչեւ Տրդատ, մինչեւ Արտաշէս, զանազան աշխարհներէ. զանազան աղդերէ, հատուածներ գալով մեր աղդին հետ միացան. միայն 40,000 հոգի Հրէից աղդէն Տիգրանի ժամանակ բերելով 'ի Հայութեան Հայութեան մէջ խառնուեցան : Արծրունիք, Մամկոնիք, Մանդադունիդ, Գնունիք, Բագրատունիք, և Արշակունիք, որ յետոյ թագաւորութեանց նախարարութեանց կարգ անցան, որ և եկամուտներէն երեւելիք՝ հռչակաւորք և քաջազդունք էին: Սոքա ըստ որում մեր աղդութեան թւոյն համեմատութեամբ խիստ նուազունք էին . մեր Հայկազանց բազմութեան մէջ ընկղմեցան, ինչպէս գետեր ծովերու ջուրց բազմութեան մէջ ընկղմելով խառնուին. բայց 'ի Բագրատունիաց (որ կարծուին Յուգայի և Դաւիթ մարդարէի ցեղէն լինել): Ամէն եկաւոր հատուածք սիրով և յօժարութեամբ ընդունեցին մեր աղդի լեզուն, սովորութիւն, աւանդութիւն, դաստիարակութիւն և պաշտամունքն, ինաւալնից մէջ յառաջնիւթացէ քան զասդասիրութեան մէջ,

3. Մեր աղդ, որ 'ի բնէ օտարասիրութեան մէջ յառաջնիւթացէ քան զասդասիրութեան մէջ,

օռարներ այնչափ սիրեց , այնչափ մեծարեց , այնա-  
չափ պատուեց , որ նախարարութեանց կարդէն  
մինչեւ թագաւորական դահ բարձրացոյց : Հայկա-  
զանց ցեղէն զինի , թագաւորութեան յաջորդու-  
թիւն սեփականացաւ . Արշակունեաց և բագրա-  
տունեաց ցեղին , իսկ սպարապետութեան և զօրա-  
վաբութեան յաջորդութիւն՝ սեփականացաւ . Մա-  
միկոնեաց ցեղին , որ ամենէն զօրաւոր , ամենէն քաջ  
և ամենէն հաւատարիմէր Հայոց ազդին , Հայոս-  
ան աշխարհին . Արշակունեաց տէրութեան և Երի-  
նէց Շահուարապէտուն . Մամիկոնէից մէջ նշանաւոր են  
Մուշեղ Վասակը , և Դարդան քաջնահատակն և եր-  
կու Վահանք և այլն :

4. Օտարազգիք և այլազգիք , որք եկան ՚ի մեզ  
յարեցան , թէ իրենց մէջ և թէ մեր մէջ պահեցին  
իրենց նախնական քաջութիւն , ուշիմութիւն և  
հաւատարութիւն : Բագրատունի Ամբատ առաջին  
որչափ քաջութեամբ և ուշիմութեամբ յաջողեցաւ  
Արշակունեաց սասանեալ թագաւորութիւն վե-  
րականգնել , ինչ հաւատարմանթեամբ և խնամով  
պահեց մանուկն Արտաշէս , և ինչ ուշիմութեամբ  
բերաւ ՚ի Հայաստան և թագաւորեցոյց վոխանակ  
երուանդի : Օտայ նախարար՝ որ էր իցեղէն Ամա-  
տունի , ինչ զգուշութեամբ և խնամով պահեց զԾըր-  
դատ , զխոսրովիդուխտ՝ և Արտաւազտ Մանդա-  
կունին՝ Անակայ սուրէն Ասանեան հարուածէն  
աղատեց զԾըրդատ , կեսարիոյ մէջ կրթեց գաստիա-  
րակեց , և երբ Տըրդատի արքայութիւն յաջողեցաւ  
Հայաստանի մէջ . Օտայ արքայական պալատ պահ-  
պանելու հաղարապետութեան հաւատարիմ պաշ-

տօնէ վարեց մինչեւ ցմահ, իսկ Արտաւազդ սպա-  
րապետութեան պաշտօն կատարեց արիութեամբ  
և հաւատարմութեամբ, Սոքա մեր ազգատոհմէն  
չէին, Հայկայ սիրոնդէն չէին, բայց մեր աղ-  
դայնութեան վառաց և պատոյն աւելի նախան-  
ձախնդիր, աւելի հաւատարիմ էին, սոքա մեր  
աղդայնութեան պատուական և ընաշխարհիկ ան-  
համեր և անդամներ էին :

5. Աղդաշէն հայրենասոէրք մեր, միշտ փոյթ կտ-  
լան ոչ միայն աշխարհակալութեամբ դատհմանո  
հայրենեաց ընդարձակել, այլ և միշտ ջանացին  
աղդութիւն բաղնագատկել և աղդայնութեան  
սահմանս եւս ընդարձակել, Այսպէս հայկազն Ա-  
րամք և Տիգրան Պարմեւազն, Վաղարշակ և Արտա-  
շէս մեծն փութացան ոչ միայն աշխարհակալութեան  
եռանդով Հայաստանի սահման ընդարձակել, այլ  
թէ որչափ հնարէր աշխատեցան աղդայնութեան  
թիւն ընդարձակել, Պարսից, Մարաց, Ասորց, Ա-  
լանաց, Վրաց, Աղուանից, Պոնտացւոց, Կապադով-  
կիացւոց, Սաղինացւոց աշխարհներէն և աղդերէն  
շատեր լեզուով և աղդութեամբ միացուցին մեր աղ-  
դայնութեան հետ, մինչ զի մեր աղդայնութեան  
թիւն հասանէր մինչեւ (36,000,000) երեսուն և  
վեց միլիոն :

6. Քրիստոնէութեան երրորդ գարուն, երբ սրբ-  
ութիւն Գրիգորի քարոզութեամբ, և մեծին Տրդատի  
բարեզզաշտութեամբ և քաջութեամբ Հայաստանաշ-  
խարհ լուսաւորեցաւ, Պարթեւաց, Վրաց, Աղուա-  
նից, Ասորց աղդերէն շատեր Դրիգորի քարոզու-  
թիւն լսելով հաւատացին ՚ի Քրիստոս և միացան ընդ-

մեղ աղդաւ և կրօնիւք և Երբ մարդասէր և աշխարհ  
հաշէն թագաւորք իշխէին, Երբ իրաւունք, արդա-  
րութիւն և ճշմարտութիւն թագաւորէր Հայաստանիւ  
մէջ, ազգ և աղմնդ հոն դիմէին, հանդիսա վայելել  
և Հայ անուան ներքեւ անդաստան գտնալ, բայց Երբ  
մարդատեաց և աշխարհաւեր թագաւորք տերեցին.  
Երբ իրաւունք՝ արդարութիւն և ճշմարտութիւն Հա-  
յաստանին հալածեցաւ. մեր ազգայնոց շատեր մեզմէ  
հեռանալով դիմեցին ուրիշ աշխարհաց, ուրիշ աղ-  
դաց անուան ներքեւ պատսպարան գտնալ ինչպէս  
որ այժմեան փառձերէն տեսաք և տեսանեմք :

7. Մինչեւ ցայս վայր հայրենասերի սիրոն ու-  
րաս տեսայ և հոգին դուարթ. զի տեսաւ նա, թէ  
իւր ազգայնութիւն ո՛րչափ մեծացաւ, բազմացաւ  
և ասպածեցաւ, բայց աւա՛զ, այժմ պիտի տեսնայ  
թէ մեր ազգայնութեան մէջին որչափ հատուածք եւ-  
լին և օտար ազգաց մէջ խառնեցան, Եղիշէն Վար-  
դանանց նահատակութեան պատմիչ ամաչեց դրել  
բայց եւ չի պիտոր ամաչեմ բացատրել թէ ինչպէս  
Հայաստան աշխարհի կէս, զօրաց կէս, քահանայից  
կէս, և նախարարաց կէս Վարդանայ կողմն էին և  
քրիստոնեայ: Նոյնպէս աշխարհի կէս, զօրաց կէս,  
քահանայից կէս և նախարարաց կէս՝ վասակայ կողմն  
էին, որք նորա հետ հաւատն ուրանալով Պարսիկ  
եղան և Պարսից մէջ խառնուեցան: Նոյնպէս Մեհ-  
րուժան Հայաստանի մէկ չորրորդ մասն, ի Պարսից  
գեն յեղաշրջեց և կորստեան մասնեց: Աւա՛զ, Երբ  
մեր թագաւորութիւն նուաստացաւ և իշխան աշ-  
խարհին հարկատու եղաւ. Երբ մեր եկեղեցին  
լորիթնացաւ ՚ի բեմիսասացութենէ, զըկեցաւ ՚ի քաջ

Հովուէն և ի հովուակիցէն, Աղուանք և վիրք մեղմէ բաժանեցան և հեռացան. երբ Պարսկի պուր յետզ հետէ մեր վրայ չողաց . երբ Յոնաց կրօնաբոլութիւն հետզետէ ճարակ դուռ. երբ Հագարացւոյ լուծ ծանրացաւ . աղդութեան ահաւոր հիմունք խախտեցաւ , շատեր Պարսից Յոնաց և Հագարացւոյ օրէնքն ընդունեցին և մեր աղդայնութեան յիշատակէն ջնջեցան . երբ ձինկիդ խան, Լանկ-թէմուր, Շահապաս և այլ աշխարհաւեր բոնակարք ի Հայաստան արշաւեցին . մեր աղդայնութեան թիւ 36,000,000 էն՝ վեց միլիոնի իջաւ . երբ Ռւնկիթուք Հայաստան մտան, աղդն երկուքի բաժնեցին . երբ Ամերիկացիք եկին, աղդ երեքի բաժնեցին .

## ՅՈՒՐԻԱԾ Դ.

ՃՐԱԽՆՈՒԹ

4. Հայրենասէրն՝ ինքզինքն և խր սերունդ իր թեւ աղդ, իրքեւ աղդութիւն, և իրքեւ աղդայնութիւն նկատելէն զկնի, այժմ գայ զինքն և խր աղդատոհմի իրքեւ ժողովուրդ նկատել, և ժողովրդեան անուամբ աւելի մօտէն ինքզինքն ճանաչեր Քաղաքական տեսաւթեամբ և աւելորդ նշանակութեամբ այն ամէն աղդ, յեզուք և կրօնք, որք մէկ վեհապետի ափառապետած սահմանաց մէջ ընտակեն, և մէկ վեհապետի հրամանին անսան, պետակարարնոյն վեհապետին կամ նորա մայրաքաղաքին, կամ Երկրին ժողովուրդ անուանեն, ինչպէս առեն թուրքից ժողովուրդ, Անդղիոյ ժողովուրդք, Գաղղիոյ ժողովուրդ և այլն : Բայց կրօնական տեսութեան և մա-

նաւանդ թէ կրօնական տեսչութեան և տնաեսու-  
թեան մէջ, առելի հարադրաւ և բացորոշ նշանակու-  
թիւն ունի Հազարայ անուն : Երբ ասեմք Մով-  
սէսի ժողովուրդ, իմանամք թէ ամբողջ ազդ մի  
Մովսէսի առաջնորդութեամբ, Մովսէսի միջնորդու-  
թեամբ, Մովսէսի օրինաց գասահարակութեամբ,  
Աստուածազաշտութեան մէջ բաերպաշտելով նախ  
Աստութոյ և ապա Մովսէսի ժողովուրդ անուանե-  
ցան, ինչպէս որ Երրայեցիքն էին : Երբ Քրիստոսի  
Ժողովուրդ ասեմք, Քրիստոսի առետարանի լուսով  
ըռաւառեալ, ամբողջ քրիստոնէից ժողովուրդն ի-  
մանամք : Քրիստոս գլուխ է այս ժողովուրդեան, և  
ժողովուրդ անդամ է գլխայն Քրիստոսի : Քրիստոս  
ժողովուրդն և ժողովրդապեան է այն ժողովրդին, և  
ժողովուրդն՝ ժողովեալ գառինք, ոչխարք և խաչինք  
են երկնաւոր հոգուապեափն : Մեզք այն փառասէր  
եպիսկոպոսաց, և արիսն ժողովրդեան ՚ի գլուխ  
նոցա, որք վիճակաց տիրելոյ փառասիրութեամբ  
մօլեալ՝ Քրիստոսի եկեղեցւոյ միութիւն, Քրիստոսի  
Ժողովրդեան միութիւն բաժանեցին . Գառնեան, Առա-  
զսեան և Կերպայան ժողովուրդ կոչեցին դհաւատաց-  
եալոն, փոխանակ Քրիստոսի ժողովուրդ կոչելոյ,  
փոխանակ ասելոյ, Լատինաց եկեղեցւոյ Քրիստոսի  
ժողովուրդ : Յունաց եկեղեցւոյ Քրիստոսի ժողո-  
վուրդ, ասացին Պապական ժողովուրդ, Յունաց  
ժողովուրդ և այլն : Այս խնդիրը երկար պարզաբա-  
նութեան կարօտի . ուսամի եկեղեցական պատմու-  
թիւն թող տալով անցնինք մեր Հայկական Քրիս-  
տոսի ժողովրդին վրայ խօսելու :

Զ. Թաղեաս, Բարթողմէս, Թովմաս և Ամինն

առաքեալք՝ ի Հայաստան քարոզեցին, Հայոց աղջն՝  
Քրիստոսի Եկեղեցի և Քրիստոսի ժողովուրդ կազ-  
մեցին ։ Պարզ եւազն Գրիգոր Պէտքաստան անբողջ  
լուսաւորեց, Քրիստոսի դիմոցն անդամներ յօդեց,  
Քրիստոսի սուրբ փարախին մէջ զոշխարս ժողովեց,  
Քրիստոսի Եկեղեցւոյն սեփհական ժողովուրդ  
պատրաստեց. ուստի մենք ասեմք Լուսաւորչայ  
Եկեղեցին, Լուսաւորչայ ժողովուրդ՝ Խմանամք Լու-  
սաւորչն հիմնաւորեալ Քրիստոսի առաքելական  
սուրբ Եկեղեցին. Լուսաւորչն Քրիստոսի լուսով  
լուսաւորեալ հայոց աղջն, և Լուսաւորչն մլրբա-  
նալ ժողովուրդք. Ա՞ն ժողովուրդ, Սիկերերանի  
ոսկի և հրեղէն լեզուն զմեր Լուսաւորիչն դովեց,  
մեր Երզնկացի Յովհաննէս վարդապետի սուրբ գրիչ  
և ճարտասան բերան զայն ներբողեց. ժողովուրդ,  
Լուսաւորիչ Քրիստոսի լոյսն է, Քրիստոս ինքն ըստ  
էր, Քրիստոս ինքն տանց, եռէն ըստ աշխարհն, երբ  
մեք զԼուսաւորիչն սիրեմք, զՔրիստոսն սիրեմք,  
Քրիստոսի լոյսն սիրեմք. որ ըստուր առնել ըմեռն  
հորդ որ բալցն և յաշխարհ :

Յ. Ա՞ն ժողովուրդ, Սիրեմք մեք Հայաստանեաց  
սուրբ Եկեղեցին, Լուսաւորչայ Քրիստոսի սուրբ Եկե-  
ղեցին Նդեմէն չօրս գետ բղիփ և ոռոգէ զՀայաս-  
տան, Քրիստոսէն խորհրդարար չօրս առաքեալք  
խրկուեցան և քարոզեցին ՚ի Հայաստան : Սիրեմք  
զՀայաստանն, զի Արդար հրաւիրեց զՅիսուս ՚ի Հա-  
յաստան. Յիսուս փոխանակ իրեն խրկեց զթա-  
դէոս և զԳրիգոր ՚ի Հայաստան. Յիսուս սիրեց աղ-  
դըն և Եկեղեցին Հայոց :

Ճաղովուրդ Հայոց, դու նմանես Յովհէվ

գեղեցկին , գու վոքը ես և սակաւաթիւ , բայց  
սիրելի ես յաշո ՀՕՌ քո նոհապետք Յիսուսի , վասն  
զի պարզես , սիրուն ես , գեղեցիկ ես , և եղբայրդ-  
անրիծ սիրով սիրես , բայց քու եղբայրք նոտ-  
խանձու և ասող են , միշտ քեզ խորխորատ փորեն  
և կործանել կամին : Հայոց ժողովուրդ , քո հաւա-  
տոյ պատմուճան ըուսաւորէ և ծագկենիար . դու  
պարզ հոգւով ազօթես , մարդարէանաս և մեծա-  
մեծ երազներ տեսնաս . այլ եղբարք քո չարամիտ  
են և զպատմուճան քո ՚ի քեն հանել ջանան , զքեզ  
սպանանել կամին : Մի վհասարի ժողովուրդ դու ,  
ժող եղբարք նախանձին և քեզ խորխորատ պատ-  
րաստեն , թող քեզ խորայէլացւոյն վաճառեն , թող  
եղիսկտոսի բանտերուն մատնեն . փոյթ չէ , նա-  
խախնամութեան անքուն աչք քեզ վրայ հսկէ ,  
քո կենաց և քո ընթացից վրայ պահապան է , քո  
երազներդ պիտի կատարուին , եղբայրք առ քեզ  
դիմեն օգնութիւն խնդրելու , և դու վեհանձնարար  
ներես անոնց և օգնես :

5. Ո՞վ արեւելեան ոլերճ աշխարհ , ո՞վ արեւել-  
եան մաքուր և սուրբ եկեղեցի , և դու ո՞վ արեւել-  
եան ընտիր աղդ , ո՞չ ո՞չ , դու այդ չափ կըսուեր չես  
՚ի մէջ եղբարցդ , դու անդ բանիկ ես ՚ի մէջ աղքաց և  
եկեղեցեաց , զի քո անդ բանիկ նախահայրն Հային  
է . քո անդ բանիկ հաւատացեան Արդար թագաւ-  
որն է . քո անդ բանիկ նահատակ Ամանդուխտ կուսն  
է . քու անդ բանիկ աւազան Եփրատ գետնէ , քո  
անդ բանիկ եկեղեցին յԱւրհայ , յԱշտիշատ և ՚ի  
վաղարշապատ սուրբ եջմիածին է , որոյ ճարտա-  
րապետն Յիսուսէ :

Ե. Ով եկեղեցի հայոց , դու մեծին Գրիգորի ,  
Ներսէսի , Սահակայ և Մետուղայ ժամանակ երեսուն  
և մեց միլիոն ժողովուրդ ունէիր . Ազուանից , Վրաց ,  
Ասորաց և Արէնաց ժողովուրդ քեզի տեսուչ և հո-  
վիւ խեղբեցին և ընդանեցին , դու Պարսիկս , Արե-  
ւորդիս լուսաւորեցեր . դու +Հայութէունիւն յԱրե-  
ւելք . 'ի Հիւսիս և 'ի Հարաւ քարողեցեր և ծա-  
ւալեցեր և երեսուն միլիոն ժողովուրդ Քրիստոսի  
Եկեղեցւոյն նուիրեցեր : Ո՞հ , քեզ վկայեն Հայառ-  
ամանի մասուռք և միրիմք , ուր նահատակաց սուրբ  
ոսկերք ամփոփեցին . վկայեն արձանք , խաչվէմք  
որոյ վրայ գրեցան մարտիրոսաց անուտնք . վկայ են  
Հայաստանի մերինք բաւուք որոյ վրայ թափեցան  
հաւատացեալ ժողովրդոց արիւնք . վկայեն ծովք ,  
լիճք , գետք և վտակք որոց մէջ խառնեցան սրբոց  
անմեղ արիւնք : Վկայ է Հայաստանի սուրբ երկիր ,  
որ անմեղաց արխմն իւր մէջն ընդունեց իրեւ Ա-  
րէլի արխմն :

7. Երանի քեզ Հայոց ժողովուրդ . զի դու նա-  
հապետաց և թաղաւորաց զարմէն ես . դու ո՛վ մնա-  
ցորդ ժողովուրդ , անբողջ նահատակաց մարտի-  
րոսաց և սրբոց որդի ես . քո սուրբ նախմիք քրիս-  
տոնէութեան համար չարչարուեցան և նահատա-  
կեցան , վասն զի բարբառոս և կռապարիշտ աղդք  
զքեզ աշապատած էն , վասն զի եղբարքդ զքեզ  
միայն թողուցին , դու միայն արեւելքի մէջ եղար  
հիմն Եկեղեցւոց պարծանք քրիստոնէութեան . վա-  
հան հաւատոյ և Քրիստոսի բարի նահատակ : Ազդ-  
է ազինք քրիստոնէից . ժողովուրդ ամենայն Եկե-  
ղեցեաց պարտական են զքեզ սիրել , մեծարել և

պատուել քոյ նահատակովմիւն . ինչպէս Նիկոյ  
երեք հարիւր տասն և ութ հայրապետք զԱրիս-  
տակէս որդին որբոյն Գրիգորի պատուեցին , սիրե-  
ցին և մեծ արեցին , իրրեւ որդի նահատակի , իրրեւ  
որդի սքանչելոդորձի : Այլ աւազ , տեսանեմք զի  
Քրիստոսի նահատակ ժողովորդ մի , ունանք (ոչ  
բարի քրիստոնեացք) ՚ի վաղուց անտի փախանակ սի-  
րոյ մատնեն . վիխանակ օդնելց՝ հալածեն . փո-  
խանակ պատուելց և մեծ արելց՝ անպատճեն և  
անարգեն . այլ թէ զինչ պատասխանի ունին տալ  
ահաւոր տաենին և տոկալի դատաւորին , շգիտեմք .  
Տէր աեսցէ և այց արասցէ :

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ՈՒԽՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ . ՀՈՅՐԱՊԵՏ . ՏԵՍԱՀՉ .  
ՎՈՐԴԱՊԵՏ . ՔՈՀՈՆՈՅՅ .

### ՅՈՒՂՈՒԱՆ Ա .

ՀՈՅՐԱՊԵՏ .

1. Հայոց հայրապետութիւն Քրիստոսի Եկե-  
ղեցւոյն մէջ , և Հայրապետաց ժողովութասիրութիւն՝  
Հայոստանեալոյց Եկեղեցւոյ մէջ Հայոստանեալոյց կա-  
թու զիկէ Եկեղեցին միշտ դառնէ դուրին մեր Յի-  
սու ո Քրիստոս գլուխ ամենային քահանայապետու-  
թեանց և գլուխ ամենային Եկեղեցեաց . որ ՚ի յեր-  
կինս նառեալ ընդ անձէ մեծութեան Աստուծոյ ՚ի  
բարձունս , յաւիտեամ քանա՞յ ըստ կարդի Մելքի-  
սեղեկի , մշտնչենաւոր տէր և իշխան հոգւոց և մարմ-  
նոց , կենդանեաց և մեռելոց , աստ և ՚ի հանդեր-

ձելումն . Քրիստոս որ իւր հարսնացեալ սուրբ եւ կեղեցին սիրեց , իւր անձն նորա համար մատնեց և պատարագեց . «զի կացուցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի , Պօղոս Առաք :

2. Քրիստոսի փառաւոր եկեղեցւոյ մէջ , Հայաստանեայց սուրբ Հայրապետք միշտ խոնարհ և հեզ հոգւովնորա մեծ քահանայապետութեան պաշտօնեայք կոչնցան և արքայութեան նորա հազարապետք . ՚ի Քրիստոսէ ընդունած քահանայութեան մէջ , միշտ պահեցին ուղղութիւն , արդարութիւն և ճշմարտութիւն՝ առանց ինչ մնափառութեան . Քրիստոսի ժողովրդեան ծառայ . Եկեղեցւոյն սպասաւոր . Քրիստոսի այգու ոյն ծառ . հօտին Էւշտառծ . գերդաստանին առաջ անուանեցան : Ոյնակաց տիրելոց շաշխատեցան , այլ օրինակ հօտին Քրիստոսի՝ զանձինս ընծայեցին :

3. Միտքս Հայոց Հայրապետութեան վրայ ներբող յօրինել չէ , այլ Հայրենասիրի մոտաց և սրտին ներկայել մեր եկեղեցւոյ ժողովրդասէր հովինք և եկեղեցաշնու հայրապետք . այո՛ Հայրապետք՝ որոց նման սրիշ ազգաց մէջ խիստ հաղուագիւտ են . երբ Հայրենասէրն Արտաշատու խոր վիրապն երթայ , և գիտակորեալ ՚ի վիրապն տեսնայ Լուսաւորիչն՝ որ ՚ի խաւարի անդ լուսաւոր մտօք և բագկատարած՝ հայտատանի վոկութեան համար ազերս մատուցանէ . միթէ իրրեւ երախտապարտ որդինորա սուրբ աջն չի՞ համբուրեր . երբ տեսնայ զԴրիգոր որ վիրապէն ելեր՝ մայր Արտաքի եղերք զջրդատ և զհամօրէն զօրս հայոց բժիշէ ՚ի զիւարախ սաստիցն , արդեօք ոյն հայրապետի սեւացեալ մարմին չի՞ համբուրեր .

երբ տեսնայ թէ Գրիգոր Եվլուատ դետին մէջ քառասուն բխւը հայ մէկ աւուր մէջ միլրտէ, արդեօք նորա գարշապար չի համբուրեր: Այո՛ Հայրենասէրն երբ տեսանէ թէ՝ ձեռք Կրիգորի հայաստանի մէջն Արամաղդայ, Ափրոդիտեայ, Անահիտայ, Վահաղնի, Աստղիան պատկերներ կործանէ և փշրէ, տեղն Քրիստոսի նշան կանգնէ՝ չի համբուրեր նորա տուրը մասունք: Երբ տեսանէ թէ Լուսաւորիչ կուտուներ քանդեց և տեղ Քրիստոսի եկեղեցւոյ կամար բառձրացոյց և խորան հաստատեց. այս՝ նորա վաստակաւոր ձեռքն համբուրէ և օրհնութիւն խնդրէ՝ ՚ի նմանէ: Հայրենասէրն երբ տեսնայ, թէ Գրիգոր կուտանդիանոս մեծ թագաւորէն և յերեք հարիւր տասն և ուժ հայրապետաց ՚ի Նիկիոյ սուրբ ժողովն հրաւիրուելով առ խոնարհութեան չերժմար, կօիրէ արդարեւ պյաղէս հեղ և խոնարհ հայրապետ մի, որ ՚ի մարդկանէ փառաւորիլ չուղեր: Լուսաւորիչ իրբեւ Քրիստոս չարչարանաց համբերեց, իրբեւ առաջարեալ քարոզեց, աւետարանեց, լուսաւորեց և միլրտեց զհայս: Լուսաւորիչ իրբեւ վարժապետ՝ աշակերտեց և դաստիարակեց զորդիս քրիմաց և քրմապետաց. իրբեւ հայրապետ ՚ի նոցանէ չորս հարիւր եպիսկոպոս ձեռնադրեց Հայաստանի 400 գաւառաց համար Լուսաւորիչ իրբեւ մատենադիր զՅաճախապատում հոգելից մատեան մատենադրեց և կտակ աւանդեց զայն հայաստանեայց որդւոյ: Արդ ով որ զԼուսաւորիչն սիրէ, նորա կտակն նոյն գրքի մէջ թող կարգայ ու կատարէ, այսինքն նա միշտ հայ ապրի, Լուսաւորչայ հաւատովն ապրի, Լուսաւորչայ հաւատովն մեռնի:

4. Արդեակ, եթէ հայրենասէք ես, կամ հայրենասէք իմ կամիս լինել, կարդա գրիդորի որդւոց և թռւանց պատմութիւն, ա՞չ ոքանշելի պատմութիւն, միթէ կարող ես զայն առանց մորմոքանաց, առանց արտասուաց կարդալ: Սուրբն Արքատակէս ըստ Եղիայի և Յովհաննես յանապատի բնակի, Լուսաւորչի առար աջովն կաթուղիկոս ձեռնազրի, Նի՛փոյ հարց մէջ իրբեւ նախապատի, հոյրապետ քաղի: Հօր առաքինութմանց և վարուց հետեւի Սուրբն Վրթանէս հայտապետ ձեռնազրի, և Ալշխանաց հայոց վատն արդարութեան՝ հալածի և վաղճանեալ թաղի ՚ի թարգան: Յուսիկ իր հօր Վրթանէսին յաջորդ Նց, դիման սաստեց, յանզիւմնեց, զշար Յուլիանոսի պատկեր ունակոս փշրեց, և ինքն Տիրանի հրամանաւ բրածեծ եղաւ և վկայուի մահուամբ հայրենի աւանդաթեանց վրայ մեռաւ: Յիսուս սիրեց Յակովոյ որդիք, Լուսուորիչ իւր որդւովք և թռուամբք սիրեցին զորդիս Հայկոյ, Յիսուս չարչարեցաւ յեզրարց և աղդականաց ՚ի Հրէաստան: Առքա եւս չարչարեցան յեզրարց, յազդականաց և իրարեկամաց ՚ի Հայաստան Յիսուս մեռաւ ՚ի վերոյ աղդին, սոքա եւս մեռան վասն ազգին և հայրենեաց.

5. Մեծն Կերպէս որ ՚ի ևննկութենէ վերին իւմաստութեամբ ևներ քին գիտութեամբ վարժեցաւ ՚ի ևեսարիս, ամուսնական կենաց մէջ երեք տարի միայն իրբեւ ողջախոհ տատրակ անապատի առաքինացաւ (\*), զինւորական կարդի մէջ Արշակունի

(\*) Զի երեք տարիէն ետքշ նորա կին վախճանեցաւ, որ էր Մամիկոնեան նախարարի Սանդուխտ անուն գուսար

թաղուորաց հաւտուարիմ զինակիր երաւ, երբ ժո-  
ղովուրդ հանդերձ թագաւորօք և նախարարօք  
զներսէս յամնու Հայրապետա թեսն հրաւիրեց՝ իր  
կենոյ ջնրդ տարին, նաև առ յոյժ խոնարհու թեսն  
հաստիքարեցու . բայց թագաւորն երբ առ նորա  
դօսիկն արծակեց, և Եպիսկոպոս նորա սեւ ագան-  
գուր մաղեր խողեց, ականանես պատմին ասէ,  
թէ՛ ժողովուրդն առ հասարակ լացաւ, զիյցի  
գեղեցի՛, վայելու և պարփեւահասակ էր . Ահ  
Ներսէս սուր տուաւ, Քրիստոսի խանե առաւ,  
Ներսէս ծիրանին հանաւ, սեւ մաղեղէն հագաւ,  
մաղեր տուաւ, սուրբ օծումն ընդունեց . Ներսէս  
երկնաւոր թագաւորին զինակիր և նորա բանա-  
կին զօրապետ վոխարկեցաւ :

6. Երբ Ներսէս Յիսուսի խաչ իրրեւ լուծ քաղ-  
ցըր իւր պարանոցի վրայ առաւ, իրրեւ ժիր մշակ  
կած ողիկէ եկեղեցւոյ անդաստան արդասաւորեց,  
եղանեցին հաղար տարւոյ չափ ասպելց արժանի էր  
Ակեղեցւոյ համար, աւազ որ տան տարի միայն  
ասպեցու Հայոց հայրապետութեան մէջ բայց մէն-  
մի տարւոյ մէջ հաղար տարւոյ չափ ասպեցաւ,  
տան տարւոյ մէջ շուրջ վանք հիմնարկեց, որբա-  
նոց, աղբատանոց, հրեանդանոց, անպելանոց,  
հիւրանոց հաստատեց . Սքանչելի վութ աշանու-  
թիւն, հիմնալի մեծագործութիւն, անօրինակ ժո-  
ղովրդասիրու թիւն և ցանկալի հայրենասիրու թիւն  
Ներսէսի կենդ անութեան, Հայտատանի տնանկք, աղ-  
քատք և մուրտղք ՚ի դրանու մեծամեծաց չէն թա-  
փառեր վասն զի Ներսէս կենդանի էր + Ներսէս ա-  
մենից հաց էր, ամենից հանգերձ էր և կեշակուք.

ամենից օթեւան էր, ամենից հսյու էր և մայր՝ Ներս  
սէս հայր հարանց էր, Ներսէս հայր հայրենեաց էր:

7. Ներսէսի ձայն Աստուծոյ ձայնին պէս ազգեա-  
ցիկ էր, զի մինչդեռ Երիտասարդ որդիք իւրեանց  
ծերացեալ հարք անդժաբար 'ի տանց արտաքսէին,  
որբոց, այրեաց աղքատաց վրայ դութ և ողորմ' չէ-  
ին ածեր՝ հեղահամբոյր և հայրական ձայն Ներսէսի  
խոտացեալ սրտեր ամոքէր, ազգասիրական խանդ,  
հայրենասիրական դորով, ամենից հոգւոյ և մտաց  
մէջ տպաւորէր : Ներսէս Երկու անդամ Արշակուն-  
եաց ժագաւորութիւն 'ի կործաննմանէ վերականգ-  
նեց, քահանայապետութիւն և եկեղեցին, թա-  
գաւորութիւն և ժողովուրդ Ներսէսի ներհուն  
Հանճարով կառավարուէր : Ներսէս Արտածային  
օրինաց մէջ առաքեալ և մարդարէ, զինուրական  
և քաղաքական կարգաց մէջ՝ օրէնսդիր և դատա-  
ւոր էր . Ներսէս ազգ և թագաւորութիւն մի կար-  
գադրելց և կառավարելց չափ իմաստութիւն ու-  
ներ : Ներսէս դիտէր և հաւասարի էր՝ զի եթէ պե-  
տութիւն հայոց միշտ կանդուն մնայ Յիշուսի տւե-  
արան՝ ընդ ամենայն աշխարհս ծագէ իծագ ծա-  
ւալէր . եկեղեցին պայծառազարդ վայելչանայր,  
վանօրայք դիտութեամբ և աստուածապաշտու-  
թեամբ ծագկէին, ուստի եկեղեցւոյ հայրեննեաց և  
պետութեան սիրոյն, կեանք աշխատութիւն, աք-  
սար չէր խնայէր, Ներսէս մեռնիլ կուզեր, որուէս  
զի Հայաստան կենդանանայ :

8. Ել 'ի վերայ բարձու լերինն նպատայ, հայ-  
րենասէրդ Հայաստանի, անդ տես զՆերսէսն քո  
որ նման Մովսէսի բազկատարած ազօթէ, Հայոց

զօրաց և զօրապետաց քաջութիւն և յաղթութիւն  
մաղթէ . զօրագրուխն հաւասոյ Յիսուս 'ի լսել ձայ-  
նին Ներսէսի՝ խակոյն զօրանայ բազուկ զօրաց հայոց,  
յաղթէ Ամաղէկն Պարսիկ , չքանայ ուխտադրումն  
'ի ձեռն Սմբատայ սպարապետի , որ ի գլուխ անիծե-  
լոյն նոր իմն պսակ եղեալ ասէր , է եւուր եւը բա-  
լլերունքն . Բաք իսպէլ և բաքուրել 'է վերոյ Հոյոց քուշէ  
իւ առողջ Բաքը առողջ , ինչ պատուլ և էլլունունիւն 'է աւո-  
քանէ ներս Բաքուրել լնել Բաքուրոցն հայոց առող հարէ 'է վե-  
րոյ է ի այժմ դնել ինչ Բաք 'է վերուն +ոյ ապա հրացեալ  
շամիւուր պսակաձեւ գնէ 'ի գլուխ Մերօւժանայ .

9. Ա՛վ Աստուած մեծ և սքանչելագործ , ո՞ւր  
է Սահակ պարթեն որդին մեծին Ներսէսի . ո՞ւր է  
պարծանքն եկեղեցւոյ և փառք ժողովրդեան քառմ  
Հայաստանի . ո՞ւր չնաշխարհիկ հայրենասէրն և մայր  
որդեղորով որդւոց Հայաստանի . ո՞ւր է նա՝ որ բեկ-  
եալ սրտիւ աղաղտակեսցէ վասն Արտաշէսի : « Ենձ քառ  
լիցի մասնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար և ոչ պա-  
տել զրեկեալն կամ զհիւանդացեալն , այլ գահավէժ  
առնել » Զի թէ եր հաւատացեալ թագաւորի ա-  
ռամի , փութայի և ոչ յապազէի , յուսալով զկանգ-  
նումն գլորելոյն , այլ հեթանոսացն յառաւել կոր-  
ծանումն ոչ առնում յանձն , ըստ այնո՞թէ մի մատ-  
ներ գաղանաց դանձն խոստովանող քեզ . քանզի  
դրոշմեալ է աւազաննաւն . թէ պէտև անսուակ է  
պունիկ է , այլ քրիստոնեայ է , զիճացեալ է մարմնով ,  
այլ ոչ անհաւատ հոգւով , զեխ է վարուք , այլ ոչ կրտ-  
կապաշտ , տկար է 'ի կանայս , այլ ոչ ծառայէ տա-  
րեց : Եւ զիա՞րդ լինիցի այդ փոխանակել զիմախ-  
տացեալ ոչխար ընդ տռող գաղանի , որոյ առող-

չութիւն է մեզ պատռհաս խորե : Բայց աւագ զի  
 նախարարք կամաւ կու բացեր , նախանձով լեցուեր ,  
 յիմարութեամբ պաշարուեր , մարդարէի ձայնին  
 շանսալով . զԱրտաշէս մատնեն , հայրենիք մատ-  
 նեն . զՀայաստան գերի տռնեն և ի սուգ համա-  
 կեն հայրապետին սիրա : Աւոր է Սահմանայ կըրապի-  
 սիրա և քածաբան լեզուն՝ որ Արեաց աշխարհին մէջ  
 Հայոց թագաւորութիւն պաշտպանէ , կրտկա-  
 պաշտ թագաւորաց բռնութիւն յանոց խմանէ : Պա-  
 հայն առեմ ողանծալին՝ որ իմաստոց կաճառովք  
 Հայաստան ճոխացոյց , Սահմակ՝ որ Ասորոց , Պար-  
 սից և Յունաց լեզուն խօսէր և թարգմանէր և սարք  
 դրոց թարգմանութեամբ զեկեղեցին Հայաստան-  
 եայց պատկաղարդէր . Սահմակ այն անձնագիր հո-  
 վիւն էր՝ որ երբ ապերախտ նախարարք զայն աթո-  
 ռէն զրկեցին , նա ողբա ի վերայ Արշակունեաց  
 կործանման առնէր , և ոչ կարէր մխիթարիլ , և  
 երբ նախարարք զշալով խնդրեցին կրկին բազմել  
 յաթուն հայրապետութեան , նա պատասխանէր  
 թէ և վերոյ ուշուրուուժ ժողովրդեան ու իսկ հոգի ընկե-  
 նուցի զիս : որ է վերոյ բեկեան ժողովրդեան ինոյ և է վերոյ  
 էորդանան նոտառութանեան Արշակունեաց ողբացից և իսկեցից :  
 Սահմակ երկու անգամ թագաւորութիւն կան գնեց :  
 նոքա կործանեցին . բայց Սահմակ նոր իմն թա-  
 գաւորութեան հիմն գրաւ ի Հայաստան՝ զոր շիա-  
 րացին կործանել յիմարք և օտարք . յեղհեղուկ իշ-  
 խանութեան աեզ՝ փոխանակեց բարոյական իշխա-  
 նութիւն , բարոյական իմաստուիրութիւն , կենա-  
 գանի դպրութիւն , կենդանի լեզու՝ զոր մինչեւ  
 զայսօր ժամանակի խօսիմք ,

11. ԶՀայրենասէրն հրատիրեմ առ Դ. Սահակի  
հայրապետն որ զնաց ընդդէմ Տաճկաց՝ դ. Խարիկ-  
վար առ, համբաւրէ սուրբ աջն սրբալանխ. Ներմ  
սիրով համբաւրեա նորա մատունք, որ Հայաստա-  
նի թիւրաւարներ ազատեց մահուան ճիրաներէն,  
ջի երբ Այս լերան բնակիչք, Խութեց եւ Սամնե-  
ցիք տաճկաց 40,000 դօրք մէկէն կոտորեցին ան-  
տառաց մէջ, Մուհամետ զօրապետ տաճկաց՝ ցաս-  
մանիք մեծաւ և անթիւ զօրօք պատրաստուեցաւ  
արշատիւ գէպի Հայաստան՝ հայեր բնաջինջ առնել  
և Հայաստան կործանել: Սահակ սոյն ահաւոր  
սպառնալիք բնիւթ փութաց Ասոքեստան ներկայ  
լինիւ դօրապետին, անձն և արիւն տալով գնել զհա-

յաստանի որդիքս . Ո՞հ , երանելին ճանապարհի տառապանքն եւ սաստիկ հոգածութենէն Ասորեստանի մէջ մերձ ի մահ հիւանդանայ , և լսելով զօրապետին մերձենալի , վասն սիրոյ աղդին և հայրենեաց զօրանայ , անկողինի մէջ նատելով թուղթ մի դրէ առ զօրապետն , և պատուիրէ որ վախճանելէն զինի թուղթ իւր ձեռաց մէջ զնեն , որպէս զի ինքնի իւր ձեռոք տայ զօրապետին . այս է համառօտ իմաստ նամակին , Ենէ ողբիս և ժառչողբեռն ինոյէն , Ասորեստանու ողբին որուան օքնութիւն՝ ուս վրայ կոտրու . Ին ենին անուս առնեն ինորութիւն՝ Տէր ու սըրութիւնն իորութիւն . սըրութ սէրու Եւ սըր հետանայ , Երկը ըրութ էլուսէ յետո դաստիայ . և այս . . . : Զօրապետն զայս բան լսելով անձամբ տո վաղճանեալ հայրապետն դիմէ , և ըստ սովորութեան ձեռոք դէպի դլուի տանելով , ուշա հնա ալքուէ սովորական ողջոյն տայ , նմանապէս ԱՀ Հայրապետն իբրեւ կենդանի՝ ողջոյն ընդունելով նամակին իւր ձեռամբ զօրապետին կարկառէ . զօրապետն զարմացմամբ նամակ առնելով կարգայ և սքանչանայ և ահեղ բարկութենէն զիջանելով պատասխանէ . ինորէր ու իսուաբեռլէ պատուահն այլ Ասոր պատշաճ և հանգերձ զօրոք յետ ընդ կրունկ դառն նալու դեղեալ սքանչելին պատմէ Ամիրապետին . Յովհաննէս կաթողիկոս պատմաբան Հայրապետիս պատմութիւն այսպէս վերջարանէ , ուժուելութիւնն առ պատուահն արաք Ասորութ ուս պինդանութիւնն մէր : Ահ Հայրենասէրն հիւանդանայ , ձերանայ , վիրաւորի և մեռանի . բայց հայրենասիրութիւն ոչ հիւանդանայ , ոչ ծերանայ , ոչ վիրաւորի և ոչ մեռանի . զի ինչպէս արդարութիւն նոյնպէս հայրենասիրու-

թիւն անմահ և մշտենվենաւորէ . Աահակ մեռաս՝  
այլ նորա սիրտ , զգացումն , հոգին , բան և հայ-  
րենասիրութիւն կենդանի է առ մեղ և կենդանի  
մեալոց է յաւիահան :

12. Հայրապետութիւն հայոց և Հայրապետք,  
միշտ սոյն հոգւով զինեցան և վառեցան , եկեղեցոյ  
անտեսութեան մէջ միշտ հաւատարիմ , հովուու-  
թեան մէջ միշտ անձնատիր (բաց ի սակաւուց) ա-  
մենեցին չարչարեցան , ամենք հալածեցան , սմէն  
՚ի վերայ հայրենի օրինաց և աւանդութեանց և  
՚ի վերայ ժողովրդեան իրրեւ ծերունին Եղիազար  
մեռան : Հայոց հոգեւոր իշխանութիւն՝ մեր թա-  
գաւորաց աշխարհային իշխանութենէն աւելի վոեմ;  
աւելի զօրաւոր , աւելի օգտակար եղաւ Հայաստան  
աշխարհիս , որ խաչիւ , աւետարանաւ , Պարսից , Յու-  
նաց , Արարացոց , Թամթարաց հալածանաց դէմ զի-  
նեցաւ , եկեղեցին և ազգութիւն պաշտպանեց , մինչ-  
դեռ հզօր թագաւորաց և իշխանաց սուր և բա-  
զուկ տկարացան պաշտպանելու զազդ և զեկեղեցին :  
Հայրապետութիւն Հայոց հայրական իշխանութեամբ  
կառավարեց իւր Հայաստանի սիրելի որդիք . ոչ  
բանտ , ոչ կապանք , ոչ բռնութիւն , ոչ սուր , ոչ  
խարսյկ և ոչ սպանումն չկայ երբէք նորա հայրա-  
պետական իշխանութեան մէջ , այլ նա միշտ Քրիս-  
տոսի , Թափէոսի , Բարդուղիմէոսի և Գրիգորի նմա-  
նելով հեղ , խոնարհ , աղքատ , հիւրասէր , աղքա-  
տասէր , մարդասէր , ազգատէր և հայրենասէր եղաւ .  
ճշմարտութիւն իւր զէնքն էր , արդարութիւն իւր  
դանձն էր , վարդապետութիւն իւր մարդարիան էր ,  
հոգին Քրիստոսի նորա առաջնորդն էր . աւետարան

նորա արքոյութիւն էր, խաչ զի՞ն դիմուորութեան էր  
 13. Հայութաստեց որդիք Հայաստանի սիրեն զՀայութապետութիւն Հայոց, որ աղքատութեան մէջ հարուստ է, խնապհութեան մէջ բարձր, տիկարութեան մէջ՝ զօրաւոր, հոգեւոր սպառերազմի մէջ յաղթող որ ունի առնի և զանայն ինչ ունի, որ ունի և և զանայն չշրջադաշտ, որ ազգակ և և զանայն հեծոցածուն: Այդ անձիսիք իմ որդիք իք Հայաստանեայց եկեղեցւոյ սիրեցէք և սիրեցէք և բարձրացուցէք զՀայութապետութիւն Հայոց յիւր առաջին փառուն, որով և գու ք փառուաւորիք: զօրացուցէք զնորս իշխանական գտապան, որով և դուք զօրութիւն դդենուցուք: ի Ֆագաց ամենայն երկիր և կոյք ժողովեցարուք ընդ հոգանական աջոյնայն նորա: զի աջ Տեսուն ողահօգանեսցէ զնեզ, եկայք շուրջ բալորեցէք զամթուով նորա, զի զամթու իշխանութեան նորա ժառանդիցէք ըստ առ ռավնոցն: Եկայք ամենայն տուն Սրամայ, երթիցուք ի ըստ Տեսուն: Երթիցուք ի Հայաստան: անդ մեր Ա: Հայութապետոց ջանից, վաստակոց և քրատանց արգասիք անսնամք և զոյելիմք: Երթամք բոլորով սրտիւ սիրել զու զզափառ: Հաւատոյ դաւանութիւն նոցարանիցն անստերիւր վարդապետութեան, Հայրենի աւանդութեան, որըութեան և պարկեցութեան, զի և նորա զմեզ տեսնալ իբրեւ մայր որդւովք ըհրկրեացն: Երթամք զի Հայութապատ որդիք իք հարց մերոց կոչեսցուք, և նմանութիւն հօր կերպարանաց ի մեզ տպաւորեսցուք:

Ահ. Քահանայապետն Յիսուս առեր ցհրէայս թէ,  
Նվազուազէ+ և շահազէ+ բե հուր մէ+ և եւ է հոյը+ իմէ  
մէկ զմեղ մեր Ո. Հարց յաւզէն խոտքեցուցանել  
նկրտիցի , տամք նմա համարձակ պատասխանի  
թէ զի դիտավիք և ծանիչիք թէ մեր հարց ուր  
գտանութիւն և վարդապետութիւն ՚ի մեզէ . ու  
մեք նայա ուզութեան և որբութեան մէջն եմք .  
Ով Աստաւած հարցն մերոց Գրիգորի , Ներսէսի ,  
Սահակայ , «աղաչեմք զքեզ միաբան ու խոյիւք եկեց  
զեցւոյ , զի զնայորզ ժողովրդեան քո պահեցես  
՚ի խաղաղութեան , աղաչեմք զի խնայեցես բանա-  
ռոր հօտիքո՞ զոր ժողովեցեր առ քեզ զթութեամբ  
քով . . . աղաչեմք զի զհողի և զսիրա հարցն մերոց  
հայրապետոց դարձուցես առ ներկայ և ապագայ  
հայրապետս և հօմիւս հայրենաւանդ եկեղեցւոյ մե-  
րոյ , +ուրիշ նուզէցու+ մէ+ ուրիշ շնորհոյ ուրիշ և ու-  
ռասուցու+ մէրիշ ուրիշ շնորհ մէրոյ ուրիշ ուրիշ ուրիշ  
ուրիշ , եւրիշ , բորիշ և ուրիշ քումնո-  
րոյ խրայէիք , առոր մեզ տէր զհաւասա , զյոյս և զսէր  
հարցն մերոց , զի սիրեացուք զքեզ միայն և զժողո-  
վուրդս քով . . . 2

## ՅՕԴԱԿԱԾ Բ.

## ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՏԵՍՈՒԶ

4. Ո՛հ , սիրոս մարմնքի և ազիքս գալարի , երբ  
սկսոյ մեր եկեղեցւոյ Եպիսկոպոսաց և Տեսչաց վրայ  
խօսել : Աւազ հայրենասիրի սիրա կարո՞զ է զիւա-  
նալ՝ երբ կարդ այ Աղաթաթանդ եղուի պատմութիւն ,  
թէ ինչպէս Եպիսկոպոսապեան Գրիգոր չորս հարիւր

Եպիսկոպոս ձեռնադրելով՝ չորս հարիւր գաւառի  
վրայ, տակաւին 2-3 հարիւր Եպիսկոպոս եւս ձեռ-  
նադրելոյ պէտք զգայր, նոյնչափ գաւառաց վրայ:  
Կարդամ՝ Զենովի պատմագիր, որ աւանդէ թէ՝ Ա-  
Գրիգոր և Տրդատ հանգերձ նախարարօք առ Ե-  
պիսկոպոսոն Եղիազար և Տիմոթէոս դիր գրեցին  
այսպէս. Մասսանդ չէ բիուտ, Ենէ ամենայն բառապահ  
Եղիսաբետ ուսուց էն, և առանձայս, չէ նեղեւո ամանք առա-  
ռէւ առանձ Ենաւ էն ժաշված, բայց չէն էն ոյրուին  
առ մը հարիւր ժան բառապահ հոյոց . . . չէ դեռ անհանք  
երրիւ ՚է բարոց էն, և ոչ ՚է նոցանէ բառական ժանանա-  
յանին: Խակ Բառ զանդ մեծին Ներսէսի համար դրէ  
բառապահ զնուրէ պաշտօնելի Ենչպահ . . . յաժենայ բա-  
ռապահ իշուց պեսուն, Եղիսաբետ, որոց նիս նշանակէ Մես-  
քուբ հաշուր: Նոյնպէս Մատթէոս Ուրհայեցին պատմէ  
թէ, մինչեւ Փետրոս գետադարձի օրեր կային ի  
Հայաստան 500 Եպիսկոպոսօք փառաւորք և գաւա-  
ռատեսուչ ՚ի վերայ հինգ հարիւր թէմի հանապազ:

2 Այսափի Եպիսկոպոսաց բազմութիւն Հայաս-  
տան աշխարհի ընդարձակութեան հայարնակ գա-  
ւառաց բազմամարդ ու թեան, ճոխութեան և կրօ-  
նական յառաջադ իմութեան նշանակ էր: Մէն մի  
Եպիսկոպոս ունէր ընդ ձեռամբ՝ իւր գաւառի մէջ  
2-300 ժառանգաւոր կղերական, թէ քոր Եպիսկո-  
պոս, թէ վարդապետ և թէ քահանայ: Եթէ առ  
նուադն՝ հինգ հարիւր Եպիսկոպոսի հաշուով առ-  
նունք՝ Հայաստան յայնժամ ունէր 100.000 եկե-  
ղեցական, եթէ հազար Եպիսկոպոսի վրայ հաշուենք,  
որ աւելի հաւանական է 200.000 ի շափ կղեր ու  
նէր Հայաստան: Այլ աւագ ինձ աստանօք ՚ի թիւ

Հազարաց զի երբեմն յոյժ վերացեալ, բարձրացեալ  
և վառաւորեալ էաք, իսկ այժմ յոյժ խոնարհեալ  
անկեալ և անարդեալ, ո՞հ անհուն վշտովք՝ այժմ  
վարակէ սիրտ իմ, ո՞հ հայրենասէր, երբ տեսանեմք  
թէ հարան հովիւք և ցրուեցան ոչխարք հօտին,  
նուաղեցան և տկարացան, հովիւք մատնեցան,  
գերեցան, մեռան և պակասեցան խաշինք: Ահ,  
ո՞ւր են եղբարք, ո՞ւր են բաղմութիւնն այնչափ  
տեսուչ Եպիսկոպոսաց, այժմ ընդ ամենայն Հայութի  
Հայաստան ՅՈՒՆ աւելի Եպիսկոպոս չես կարող տես-  
նալ, ո՞ւր են այժմ նախնի հարց Եպիսկոպոսաց  
այնչափ թէմք, վիճակք, գաւառք, քաղաքք,  
աւանք և գիւղք, ո՞ւր նոցա անթիւ ժողովուրդք  
և անհամար բնակիչք, ո՞ւր են մեր հօտասէր հո-  
վիւքն և ուր են նոցա հովուասէր խաշինք, ո՞ւր հով-  
ուաց գութ, խնամք և հայրենասիրութիւն, և ուր  
են ժողովրդոց սէր, վատահութիւն և հեղարար  
լողութիւն:

3. Պէտք է մօտախան լինիմք եղբարք, թէ մէն մի  
Եպիսկոպոս մեր հայրենի աշխարհաց և գաւառաց  
աշխարակ հզօր և բերդ ամրութեան էին, ոչ միայն  
եկեղեցւոյ վէմ անկեան և պարիսպ հաստատութեան  
էին, այլ և թագաւորաց և իշխանաց մերաց խոր-  
հրդական, օգնական և խնամակալ էին: Աստուծոյ  
ժողովրդեան մէջ՝ իրեւ միամիտ աղաւնի քաղա-  
քավար էինի մարմնի, իսկ հեթանոսաց մէջ, առաջի  
թագաւորաց և գաւառաւորաց՝ իրրեւ զօն խորագէտ  
կենցազավարէին: Մտի՛ր հայրենասէր հոգի, մոտիր  
անգամ Աշտիշատու ժողովի մէջ, ուր պիտի տես-  
նաս զթովսէփ անձնադիր հովիւն Հայաստանի՝ որ

Հանդերձ 17 եպիսկոպոսք և երեք քահանայինք  
նստած, խորհի և գրէ, աես թէ ի՞նչ արիական  
հոգւով և աներիին զ համարձակութեամբ պատասա-  
խանի առնենքաղերուի իրկամ պատճենին Եարդա-  
եղիշեն և աես թէ ի՞նչպէս թագաւորի յիմարու-  
թիւն, արեւապաշտ մագաց տղիտութիւն, Պարու-  
կային մայրութիւն խորին իմաստասիրութեամբ և  
աստուածաբանութեամբ Հերքելէն և կշտամբելէն  
զ'նի՝ Քրիստոսի աւետարան և կրօն պաշտեն և  
քարոզեն: Եւ ըստ Փարագեցոյն նամակին սյսպէս  
վերջաբանեն: Այեւ հուսուրդ այս էն և յայս հուսուրդ ու  
ու իորէ զմէն խուելու, ու հրեցան, ու հարսին, ու շուրջ  
մ' հոսք, ու զոսք և ու ամենայն ինչ ևն պառան հորութիւն: . . .  
Ամենայն ինչ և սույցութիւն մէր 'ի նետու և նորմին մէր ու-  
տազի ու, ըստ իւմաց ուց արա ընդ մէն զին և խոհս, 'ի  
ուն պանջան և է մինչ յանցառանին, սոսք ու և պարանոց  
մէր, չեմ մէ լու ուն զառացին, որ յայսը վիայանեան վերա-  
շույցութիւն և շորմին խուենց երին . . . :

4. Հայոցս առաջին հոյ Եպիսկոպոս Ա. Ադամէն՝  
յաջորդ առաքելոյն թագ էի. Խոյրաբար թագաւո-  
րայն Հայոց մտերիութիւնական Արքարու, աես  
թէ ինչ անվեհեր արիւթեթեամբ, յանդիմանէ զ'նանէ  
որ իւր հօր Աստու ածպաշտութիւն 'ի բաց գնելով  
կռոց երկրագագութեան խօնարհած էր դդլու ին: .  
սա երբ ինդ բեց Եպիսկոպոսէն ըստ սպիրութեան  
խոյր մի շնուր իւր դիմոյն՝ պատասխանեց Ադամէ: .  
Բ' ու ուսուցեն յեւու է՛ խոյը քաքարնան՝ որ ոչ երիբուժանէ քիշե-  
տուէ: Այս ժաղավորդ չփրեր սյսպիսի Քրիստոսամէր  
հայրապետ, որ հայ չունախթեր սյսպիսի ճշմարիս  
և քաջ հովիւ: որ զանձն 'ի վերայ հօամին և զարիւն

՚ի վերայ Քրիստոսի դնե՛ , որ անարդէ և անայտուէ զգլուխ թագուորին , զի ոչ խօնարհի և պատռէ զգլուխն Քրիստոս :

5. Աահակ Խշտունեաց Եպիսկոպոս՝ Յովուէ փայ և Ղեւոնդ երեցին հետ հարցապարձի համար Յաղ կերափ առեան կոչեցին , ուր երբ Միհրներսէն հազարապետ՝ վասակայ տուած մնաներ ՚ի սրբոցն հարցանելով տեղեկութիւն խնդրէր : Սահակ ժամ դիսպոզ գտնալով սկսու վասակայ հասացած մնառք չարիք աղեաք և ոճիրք մի ըստմիջէ պատմել՝ թէ թնջպէս նա փառասիրութեան աղագաւ . և նենդութեամբ Հայաստան աշխարհի աւերման պատճառ եղաւ և յիրս արքունի մնասակար . և թէ յնչպէս գեղեցիկ ոճով համարձակեցաւ ուրացութիւն յանդիմանել և առեան թագուորին գէպի ի ճշմարտութիւն յորդորել . Տեսէ՞ ո՞ւ , էբեռ բ-ը ։ ՚է ունենաւուն անոն Ա-սունաց՝ ըստ անեց սոսանեամբ , մերէ Կըւենցաւ ամենոյն աւորդութեան դուռաւ . զի ենէ ու Ա-սունան իւր սաստ քուս , ո՞ւ ՞ ո՞ւ ի մահինացաստ ու ոստի ուրդոր քոցի . . . և ինչ այսպէս նոսի թէ՝ սաստ յաստի դա վել ինդուց (Արքեցացեալ յուրեկեցացունել վել) : Այւ ու դուռ և ու նո՞ւ՝ ո՞ւ զինէ յեւ քուցն եւ , ըստ ի մել ու իւր ավեանել : ի ժամ նահասակութեան երանելի Ղեւոնդ եանցոյ երբ դենչապոհ հարցաներ Սահակ երապիսկոպուէն , թէ՝ ուրդորեւ քուս սոսներ պէտին , Սահակ գահնապետի յիմարութիւն հեղնելով և յանդիմանելով որ զիրակն իրբեւ զԱստածած պաշտէր , պատասխանեց անվեհեր թէ , այս՛ ձեր իսկ ատրուշանիւ սպասաւորաց նախ հարցուցի կրակի վրայ՝ նոքա ուղիղ խոստովանեցան ձեր Աստաւ ծոյն

ունչութիւն . և արտասահ իսկ եռու զիբովին 'ի ըստ արէանել , և առօց այսպէս , ուստասած՝ որ վլրինս և վլրին ու արտէն , իսրէցն է ներւոյ երինէց , և առա շման է բոց որ յահեցի : Կորուսի և խիստ օրտառուչ է և այն պատասխան առ Դմենշապուհ (և ամենայն ընդունելութեան արժանի) զի երբ ողոքանոք և սպառնալեօք յորդորէր զսուրբան հնագանդել օրինաց մոգութեան և երկիրապատանել արեգական և հրոց . դարձեալ հեղնութեամբ ծաղրեցին դԴմենշապուհ և ասեն . բոշուած 'ի զերոց Ներոց որ 'ի յենջ նահարախիցո՞ւն 'ի բրեւ զեն ու ին արելուէ օքինաց Ներոց , մէտ որ օքինաց առաջեցիւտ եւն և զայլ յորդորէմէտ և առջուլուցէմէտ , զի՞ ըստ հասանիյն առաջ օքինաց յերոց :

6. Միանդամ պատմութիւն աչքիդ առաջ բեր , և տես թէ որչափ Եպիսկոպոսք սոյն օրինակ նահատակութեամբ նահատակեցան 'ի վերայ հայրենի աշխարհին մերոյ , զորոց ոչ է ասել այժմմիշատմիոնէն Պարսից հուր և սուր , Հագարացուայն սրտմութիւն և բարկութիւն , Թամթարաց արշաւանք և կոտորած և ամենայն խուժագուժ ազգաց զէն և աղեղն վատակեցան , փշրեցան և ամնկան . իսկ հարք մեր հայրապետք զօրացան բանիւք , արհամարհեցին զրանութիւնս , խորտակեցին զզօրութիւնս . խցին զրերանս առիւծոց , և եղեն յաղթողքի հոգեւոր պատերազմին . Այդ Քրիստոսանէր , Ժողովրդասէր և հայրենասէր հայրապետք , յիշատակ ձեր քաղցր է ինձ , անուն ձեր ըղձալի է ինձ , դործք օրինակ են ինձ , դուք իրեւ քարինք պատուականք թաւալեցաք ի հիմն եկեղեցւոյ Հայատանեայցս . բանն ձեր բարձրացոյց Սիօնի փառք , սէր ձեր շինեաց զեկեղեցին ,

Հաւատ ձեր զարդարեց զոտաճարս, ձեր յոյս պոռակեց զիսորանս, ձեր սուրբ արիւն ընդ ամբիծ արեան Յիսուսի խառնուելով փրկեց զժողովուրդն :

7. Ով հալածեալ եկեղեցի Հայոց . ուրախ լեր. մի՛ տրտմիր յուժու (այսպէս) է ուս ուս ի՞ւշ ունիւն ունիւն ունիւն . քո հաւատակից եկեղեցւոյ վարձկան հովիւներ և պետեր փոխանակ քեզ օգնութեան և միսիթարութեան հասնելոյ ի յամենայն դէպս, ոչ նուազ քան զՊարսիկն և զՀագարացին՝ հալածանս պէս պէս ի վերայ քոյարուցին. գիտէին թէ Հայոց եկեղեցին նահատակէ. և արեւելքի մէջ մինակ մնալով Քրիստոսի եկեղեցւոյ և ճմարտութեան վրայ նահատակի, բայց փոխանակ սիրոյ մատնէին, փոխանակ ժողովելոյ ցրաւ էին . փոխանակ զօրացուցանելոյ ոտընհարէին . փոխանակ օրհնելոյ անիծէին . փոխանակ գովելոյ բամբասէին . և զայս ամենայն առնէին վասն ատելութեան, և վասն փառասիրութեան : Բայց Հայոց եկեղեցին միշտ օրհնեց զիրենք, միշտ աղօթեց ի վերայ այնոցիկ՝ որք լիկէին և հարծէին զմեղ :

8. Եւ թէ ինչպէս . — ահա մեր ազգային պատմիք Յունաց հալածանաց նկարագիր մեր աշքին յանդիման կացուցանեն, այսպէս . Սեբաստիոյ Յունաց մետրապօլիտի մասին Ասողիկ գրէ թէ՝ «սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոց. զզիստոյ քահանայս Սեբաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանոք և ի բանտի չարչարեալ զտւադ երիցանց դՊարքիէլ սպանին»: Առաջին Ուրհայեցին ասէ թէ՝ «Թագաւորն Տուծիկ խորհեցաւ խորհուրդ չար և կամեցտ. բառնալ և խախտել զաթոռ հայրապե-

տութեան սրբոյն Գրիգորի ՚ի տանէն Հայոց . . . : Նոյնպէս Ալէքս կայսեր մասին պատմէ Վրայ ՚ի վերայ ազգիս յոյժ ատեցող երեւալ . սա դործեաց զգործ որ ոչ էր ըստ կամացն Աստուծոյ , և հրամայեաց երկրորդ մկրտութիւն առնել»:

9. Պապական ոգին, խաչակրաց ժամանակէն մինչեւ ի թիւ վրկչին 1327՝ բաւական չհամարեց մեր եկեղեցւոյ և եկեղեցականաց խաղաղութիւն և միւլթիւն վրդովել և իւր դաշտնի մեքենայութեանց Ռուբինեան ղետութիւն զոհ տալ . յիշեալ 1327 թւոյն յղեց ՚ի Հայաստան Յէսուս Եաներ՝ որոց դլուխն էր Հատին Բարդուղիմէոս Եպիսկոպոս , որ իւր ընկերակցօք իրեւ խորամանկ աղուէս սոզոսկելով՝ Հայաստանի մէջ վրդովեցին զաշխարհ , խռովեցին զժովովուրդն, երկրառակեցին Եպիսկոպոսաց, վարդապետաց և քահանայից դասքն . Քրիստոփի բնութեան սննուան վրայ խնդիր յարուցանելով՝ ծիսից արարողութեանց մէջ Հանացին նորածեւութիւն , Հատինականութիւն ներմուծել , ամէն կերպ խարդախութիւն և խարէութիւն ՚ի դործ դրին , մինչզի յանդգնեցան Հայոց բոլոր ձեռադիր մատենից մէջ Պետրոսի գլխաւորութեան համար բառ կամ իմաստ մի յաւելու՝ զորս հնասէր և բանասէր քննաւդատք ի յայտ բերին , և զեռ մինչեւ ցայսօր պապական ոգին երրէք դուլ և դադար առած չէ մեր եկեղեցւոյ և ազգի վրայ պէս պէս հալածանս յառուցանել իւր Հայոց Տէպէնոց ձեռօք : Արդ Պապ և իւրային քն Հայոց Նկատմամբ ի՞նչ տարբերութիւն և ինչ զանազանութիւն ունին Յաղկերտէն , Թալթար Խաներէն և այլ բռնաւոր հաղածիներէն , ոչ ապա-

քէն հեթանոսք յանդիտութեան գործելով՝ զմեզ  
հալածեցին . խակ Պատգ.ք, Յունաց եպիսկոպոս.ք, և  
արեաք գիտելով գործեցին զայն, որ հակառակ էր  
հոգւոյն Յիսուսի. զի լուսոյն խաւար ասացին, ճշմար-  
տին՝ սուտ, ուղղութեան՝ անուղիղ ևային :

40. Ի յետին ժամանակո երեւեցան նոր ի՛ն  
հալածիչք Հայաստանեաց եկեղեցւոյ. նոր առաք-  
եալ անուանեալքն՝ որ.ք ասկէ 25 տարի առաջ նոր  
աշխարհէն հին աշխարհ եկին, Հքէից, Հագարաց-  
ւոյ, և կռապաշտից քարոզելոյ անուամի, բայց  
յիշեալ աղդաց քարոզելոյ գժուարութիւն նկատե-  
լով, իրբեւ ելուզակ յարձակեցան Հայաստանեաց  
եկեղեցւոց վրայ, Յունաց . և Պապականաց պէս  
ջանացին աղդի սիրոյ և խազապութեան կապ խզել,  
եկեղեցւոյ միութիւն և ուղղութիւն խախտել,  
Քրիստոսի հոգին չունէին, Աւետարանի անունով  
եկին, բայց Աւետարանի հակառակ քարոզեցին,  
Սոքա ոչ մեր հայրն են, ոչ մեր հայրապետ, ոչ  
մեր եպիսկոպոսն են, ոչ մեր վարզապետք, և ոչ  
մեր քարոզիչք: Սոքա օտար են, երբէք նոցա ձայ-  
նին անուալց չեն, և ոչ ետեւէն երթալոյ: Սոքա են  
շար մշակը, վարձկան հովին.ք, ոչխարազդեաս  
գայլք, սոքա են սուտ եղբայր, սուտ առաքեալ,  
սուտ մարդարէ, յորոց պարտին Հայկայ որդիք .  
մեր հարազատ եկեղեցւոյ որդիք քատ ամենայնի  
զգուշանալ :

41. Բիւր գովեստից արժանաւոր են մեր Ս. ե-  
կեղեցւոյ Հայրապետք և Եպիսկոպոսք, որք ՚ի  
ծագմանէ քրիստոնէութեան մինչեւ ցայսօր երբէք  
հալածանս Հարուցին՝ թէ իրենց գրացի, թէ հե-

առաջ և թէ մերձաւոր քրիստոնեայ ազգաց վրայ։  
այլ միշտ հեղութեամբ, խոնարհութեամբ և սիրով  
վարուեցան նոցա հետ։ Մեր հայրապետք երբէք  
զէնք առած չեն նոցա վայրագ և մոլեգին հալա-  
ծանք և յարձակումն սանձահարել։ այլ սակաւք  
՚ի նոցանէ միայն բանիւ, վարդապետութեամբ և  
գրչաւ կշտամբած և յանդիմանած են նոցա անտի  
քրիստոնէական ընթացք, և պաշտպանած մեր եկե-  
ղեցւոյ ուղղութիւն, ճշմարտութիւն և իրաւունք,  
սրով և ես յետինս՝ հոգւովն Յիսուսի, սիրովն Քրիս-  
տոսի աղաչեմ, և մանսռանդ թէ պահանջեմ այն  
ամեն ներկայ և ապագայ քրիստոնեայ կոչուած  
հալածիներէն՝ որ դադարին զմեր Ազգ և եկեղե-  
ցին հալածելէ, վասնդի համարս տալոց են առաջի  
ատենին Քրիստոսի որ ասաց։ այսու ժանիշին շնչել,  
Եթէ իմ աշխերտ էր, եթէ ոչիշեր զժուեան»։ Եթէ  
Քրիստոսի օրինակէն չեն պատկառեր, կհրա-  
ւիրեմ զիրենք որ մեր սրբազն հայրապետաց օրի-  
նակին հետեւին, հեղութիւն, խոնարհութիւն,  
խաղաղութիւն, եղբայրութիւն, և նահատակու-  
թիւն ուսանին, փոխանակ ատելոյ՝ սիրեն, փոխա-  
նակ մասնելոյ՝ փրկեն և օգնեն, եթէ կարող են  
օգնել, զի այս է ընդունելի առաջի Աստուծոյ և  
մարդկամ։

12. Հայրենասէր հոգի, այսուհետեւ մնայ մեզ  
սիրել մեր իսկ արենակից հայրապետք՝ զի այս իսկ  
է բարոյական հայրենասիրութիւն, այս' սիրել, և  
աշակերտել նոցա անարատ քաղաքավարութեան,  
որ զմեզ յերկրէս յերկինս վերափոխեցին, այս' Հայ-  
րապետք սուրբք և ամբիծք և ընտրեալք յորովայ-

Նե որք զմեղ իւրեանց նուիրական արեամբ փրկեցին 'ի հրոյ , 'ի ջրոյ , 'ի սրոյ , 'ի հալածանաց , և և 'ի հանգ իստոն յաւիտենից առաջնորդ եցին : Արդահա էանց ձմեռն հալածանաց , և ծաղեցաւ արշարոյս ազատութեան , եկայք արք և կանայք , ծերք և տղայք , աշխարհականք և կղերականք , պաշտպանեցէք ազատութիւն եկեղեցւոյ , որ է ազատութիւն հայրենեաց : Ո՛հ , աղերսեմ , մի մոռանայք զքաղցրութիւն , զմարդասիրութիւն , և զորդեսիրութիւն երանելի Հայուապետաց մերոց , որք 'ի սուրբ տաճարաց , 'ի վկայարանաց 'ի դամբարանաց ձայն ողոքանաց առ ձեզ արձակեալ՝ աղազակեն և ասեն , «որք որդիք էք և գառինք , որք սիրելիքդէք և անձկալիքդ մեր , մի մոռանայք զմեղ իսպառ , մի ցրէք զուխտս մեր , և մի 'ի բացէ առնեք զկսուտածային վարդապետութիւնս մեր 'ի ձենչ , զի եթէ բիւր քաստիարակս ունիցիք 'ի Քրիստոս Յիսուս , այլ մեք աւազանաւ ձնաք զձեզ , մեք տուաք ձեզ զիւշն օրհնութեան օժման և կնիք + է + ո + ն + է + ն + ա . կաթն Աստուածապաշտութեան , շնորհն վարդապետութեան , ուսումն առաքինի վարուց և սրբութեան , զամենայն ինչ , զոր ուսաք 'ի Քրիստոսէ անհախանձարար ձեզ աւանդ եցաք : Հաստատուն կացէք 'ի սէր մեր , զյիշատակս մեր անմոռաց պահեցէք 'ի միտս և 'ի սիրտս ձեր , դուք զին էք անապական արեան Յիսուսի , և մեք արեամբ չափնահատակեալ 'ի վերայ անուան նորա , միացաք ընդ նմա»:

43. Եղբարք , ահա ես այսպէս կամիմ ուսանիլ և ուսուցանել ձեզ , եթէ մեք չլիւնմք և չսիրեմք

կՀայրապետան մեր , զպաշտօնեայս մեր , զփարդառապետան և զեզրարան մեր , զընկերս մեր , զկերակարիչան մեր . շկարեմք 'ի յօտարաց սէր և յարդանք ինչ պահանջել . ո՞չ գիտես , զի յաճախութիւնք որդիական սիրոյ մերոյ յարդորեն զօտարանն սիրել զՀայրապետան մեր , զի եթէ մեք չհետեւիմք հետոց հաղոցն մերոց սրբոց , և ասեցօղ լինիցիմք : օտարք եւս առաւել ատեն զմեզ և արհամարհեն զնոսա . հաւաստի լեր եղբայր , զի ոչ նու առանց նաւապետի , ոչ պարտէզ առանց պարտիզպանի , ո՞չ եկեղեցին առանց տեռչի , և ոչ ժողովուրդ առանց հայրապետի կարէ ողղել , մշակել , և դաստիարակել . ուստի որչափ կայ եկեղեցին և ժողովուրդք , պիտոյ են մեզ Տեսուչք և Հայրապետք զի առաջնորդեսցուք և դաստիարակեսցուք 'ի վարչ կը ըստու և յԱստուած պաշտութիւնս :

## ՅՈՒՌԻԱՆ Դ :

ՎԱՐԴԱՊԵՏՔ ԵՒ ՔՈՀԱՆԱՅՔ ԵՒ ԱՅԼՔ .

1. Հայրապետք , Եպիսկոպոսք , Պարդապետք և Քահանայք առ հասարակ համարիմ քարինք պատուական թաւալեալք 'ի հիմն եկեղեցւոյ մերոյ , սոքա իրրեւ վէմ կենդանի շաղախեալ արեամք և քրտամք՝ միայան 'ի կենդանի վէմն Քրիստոս , և շինեցան տաճար հոգեւոր , սոքա վարդապետական բանիւ յերկրէ յերկինս բարձրացուցին զմայր Սիօն դասերօքն իւրովք . սոքա ջահ լուսոյ , զամպար հաւաստոյ երեւեցան Հայաստանեայց եկե-

զեցւոյ, սոքա սիրով և հոգւով միացան ընդ Քրիստոսու, և զմեղ ՚ի վերին հարսնարանն հրաւիրեցին . ընդ ամբիծ երկնաւոր վիեսային Քրիստոսի՝ մտանել ՚ի յառադասան լուսեցէն :

Զ. Գոմիեմ զգըւխ և աւարտ վարդապետաց և քահանայից զսուրբ զեւոնդ երեցն որոյ բանք (ասէ, Ղաղար Փարավեցի) նման քաղցրութեան մեղու բղիւթին ՚ի բերանոյ արդարոյն, որ էր լսողաց ցնծութիւն, և ախորժաբար զնա ծանուցանէր վերին աղդեցութեան լուսաճաճանչ պայծառութիւն ՚ի նման ներքին մարդոյն, և տեսութիւն հրեշտականման երեսացն կերպարանիւ : Եթէ զարմասցիս ՚ի գեղ երեսացն և ՚ի համեզութիւն բանից արբոցն, զարմացիր ընդ մտաց և ընդ սրաի կորովութիւն սորաւ զիյորժամ մագպետն հանդերձ մուգօք և զօրօք Պարսից յառուք կիւրակէի մատին ՚ի գիւղաքաղաքն յլնոգ, փորձ փորձելց ազագաւ, նախ զդրունս եկեղեցւոյ քակել . « յայնժամ Ա, զեւոնդ հանդերձ ուխախ եկեղեցւոյ ելընդ դէմ նորաւ և ընդ դէմ զօրաց նորին, և էած տագնապմեծ ՚ի վերայ նորաւ, յորմէ մագպետն զարհութեալ խօսէր ընդ զօրա իւր և ասէր « զի թէ մանզէն մարդիկ այսովէս զօրացան, Եթէ յանկարծ զինւորս ընդ ինքեանց միաբանեցան, ո՞ կարէ կայ տուածի դայտաց յանդուգն յարձակմանն . մարդ իկ՝ որք ո՛չ ՚ի կապանաց զմնդիտին, և ո՛չ ՚ի տանջանաց երկնչին, և ո՛չ ՚ի ստոցուածոց պատկառին, և որ յետին չար է քան զամբենայն չարիս, զմահ քան զկեանս ընտրեն, ո՞ է, որ կարէ դայտաց դիմակաց լինիլ : Ելցուք այսօր ընդ քեզ եզրայր ՚ի դաշտն

Եաւարշան, ո՞հ ի դաշտն Եաւարշան, անդ տեսցուք  
 Ղեւոնդ երեցն զհայրն պատուական, լուիցուք  
 զհրաշալիբ բարբառ նորա . որով քաջալերեր զզօրս  
 և զզօրագլուխս Հայոց գնդին, խրախուսէր չզան-  
 գիտել ի մահուանէ, այլ վասն եկեղեցւոյ և հայ-  
 րենեաց պատերազմիլ քաջութեամբ և մեռանիլ  
 աներկիւլ. Ղեւոնդ որ ի բանակ պատերազմին պա-  
 տարադէ, և ի յաւարտ՝ ամենայն զօրաց զօրապե-  
 տաց հաղորդ տալով օրհնէ զամենեսին հոգեւոր  
 օրհնութեամբ, որով առ հասարակ արփացեալք և  
 զօրացեալք սկսան ի մի բերան ի բազում ուրա-  
 խութենէն աղաղակել և ասել, « Հաւասարէնց մա-  
 րդ մահան ուրբաց, և հեղուն որդուն մերց ընդ ուրա-  
 խութենց մարդիրաց, համեցէ Աւասարէնց ընդ ուրբաց մա-  
 րդ ուրց զիւեւեցն իւր ի յեւս հեղունց»: Մին, բանն  
 զոր խօսեցաւ Ղեւոնդ հոգի էր՝ զոր լուան զօրքն  
 հայոց, և հոգիացան ի հոգեւոր պատերազմին և  
 եղեն իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց և հեղին  
 զարիւն իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ: Ասէ  
 Դաղար թէ՝ յորժամ հաւատացեալքն ի խուժաս-  
 տան զմարմինս նահատակեալ որրոց Ղեւոնդ եանց  
 ի գիշերի որոնեալ ո՛չ դտանէին՝ « Եւ յանուր՝ անդ  
 լուսակայլ որդուն և նորուն ի վերայ մարդինց Ղեւոնդ յա-  
 յորդ ունաւի լուսակայլ ունդին, մինչւ յոյունն ուն-  
 աւ նոյն և պայտ մարդն», Լոյս էր հոգին Ղեւոնդ-  
 եայ, լոյս ծաղեցաւ և ի մարմինս նորա, լոյս ծա-  
 ւալեցաւ և ի մարմինս ընկերաց նորա, և լուսով  
 երեսաց սոցա տեսաք մեք զըոյն Քրիստոս, ուստի  
 ասէ Եաւական վասն սրբոցս: « Պայնուացաւ ուշի  
 եկեղեցւ լուսակայլ ունդն» . . . :

3. Հայրենասէր հոգի , հրաւիրեմ զքեղ առ եւրամն թարդմանիչ վարդապետաց մերոց , որք ունկեղինիկ դարագլուխ կանգնեցին մեղ , որք զհայրենասիրութեան պողոտայն ընդարձակեցին առաջի մեր , որք իբրեւ արեգակն և իբրեւ անաղօտ լոյս փայլեցան 'ի Հայաստան աշխարհ . որք 'ի սէր հայրեննեաց' յաշխարհէ յաշխարհ , 'ի քաղաքէ 'ի քաղաք ընթացան , վաստակեցան , տառապեցան , զմեղը գիտութեան , իմաստութեան և հանճարոյ 'ի բերան առեալ իբրեւ ժրաջան մեզու բերին 'ի Հայս , որովք մանկանցու Հայաստանի քիմք և ճաշակք քաղցրացան , Բիւր գովեատից , և անբառ սիրոյ արժանի հարք , զձեղ սիրելոյ վասն՝ զսիրոտ մեր նուիրեմք , զձեղ յիշելոյ՝ զմիտոս մեր , զձեղ փառաւորելոյ՝ զբերանս մեր , զի հայր էք հայրեննեաց , և վարդապետ էք օրինաց :

4. Ով մեծու Մեսրովիք , հրաշալի տառից գտող և Ա. դրոց թարդմանութիւն ծաւալող . Հայրենասէր սիրոտ քո դդաց , թէ՝ որդիք Հայաստանի Յունաց և Ասորոց անհարազատ տառիւք և անհարմար վերծանութեամբ վարեալ՝ յարաժամ վարանին և վաստակին յոյժ , 'ի խնդիր ելեր գիւտի , գտեր զտենչալին , գտեր զլեզուն Հայկայ , գտեր զտուն Թորդոմայ , գտեր զլզզն Արամայ , գտեր զեկեզեցին թագէի , բարդուզիմէի և Դրիգորի : Եթէ չվաստակէիր և գտանէիր , տաղաքէն կորուսեալ էաք զամենայն և զրովանդակին , զտառն գտեր զամենայն ինչ գտեր , փառաւորեցեր և բարձրացուցեր և լուսաւորեցեր , վասն որոյ երգէ ևկեզեցի վասն քո . «Նմանեալ Մովսես ունենաւ բերելու չէր

Նոշ ՚ի Հայուսութեան, ուշաբն որով լսաւածութեցն ոչի որդաց  
թուրքական Լոյն :

5. Զշտի առցուք հայրենասիրութանն մեծի քեր-  
թողահօրն Մավաէսի , սիրեսցուք և գովեսցուք  
դհանճարնարա , հանճար որ հետազօտեր զհնապա-  
տում մատեանա նախնեաց և ասկա ինչ գտանէր .  
հանճար , որ աւշադիր լինէր հին զրուցաց և նախնի  
աւանդութեանց , և ճշմարիսն յառաջ բերէր , հան-  
ճար , որ ՚ի գիւանս թագաւորաց , ՚ի նշխարս մա-  
գաղաթից , ի յարձանադիրոքարանց դիմեալ և գե-  
գերեալ զգաւումութիւն գիւցաղանց յերեւան հա-  
նէր , հանճար լայն , ընդարձակ և վաստակաւոր ,  
որ ՚ի խորոց մժութեան զվեպս Հոյկաղանց պետու-  
թեան ՚ի ըցս վերածէր , և ընդ փոշիս երկրի ծած-  
կեալ և կորուսեալ պատմութիւն Արշակունեաց  
գտեալ մեղ վերընծայէր : Եթէ չփայլէր հանճար  
խորենացայն , նահապետք , թագաւորք , և գիւցա-  
զունք մեր , և ամենայն գործք արութեան և համ-  
բաւք քաջալթեանց մերայնոց , ընդ վլատակս երկրի  
զօղեալ , և ընդ անկէտ ժամանակս սահեալ և սուզ-  
եալ անհետ լինէին յաշաց մերոց իսպառ . բայց նա  
զամենայն հնարս գիտութեան և հանճարոյ ՚ի վոր  
արկեալ և ՚ի ծերութեան խրում երիտասարդաց-  
եալ եղիս և գրեաց զպատմութիւն Հայոց ՚ի ինդրոց  
Սահակ ասպետի Բագրատունոց , առ որ ուզզեալ  
զրանս իւր՝ գրէր ընդ բազում բանս և զայս ինչ  
և բուշամ քոշնե որութեան և ՚ի Նըռում աշխարհն քոշնեցոն :

6. Զքեզ օրհնեն զուարթունք երկնից ով Ե-  
զիշէ , զքեզ գովեն մարտիրասաց գասք ով հայր  
եզիշէ , գու իսկ անդէն հանդիպեալ ՚ի տեղի պա-

աերազմին աեսեր զամենայն տչօք քովք և գրեցեք  
զնահատակութիւն Հայաստան աշխարհին, դմորտի-  
րոսութիւն երանելի Դեւոնդեանց և Վարդանանց,  
դու Հայոց աշխարհի սոխակին ես, դու վարդ վարդա-  
նին սիրամնոնդ սիրելին ես, յորժամշասիս, շրո-  
թունք քո մեզը կաթեցուցանեն, յորժամ դրեռ,  
մարդարիտ տաղես, յորժամ երդեռ՝ սիրու և հոգին  
Հայոց 'ի Շաւարշան տանես, 'ի Շաւարշան ուր վար-  
դանանք քաջացան, պատերազմեցան, և նահատա-  
կեցան, 'ի սէր եկեղեցւոյ 'ի սէր Ազգին և 'ի սէր  
Հայրենեաց' հեղին զպատուական Ա. արին իւր-  
եանց, Մատունք քո ո՛վ հայր զօրաւոր են քան  
զբանակս Արեայ, եղեգեայ գրիշտ հասու է՝ քան  
զսուրն Պարսից, զի մինչ կարծերն թէ՝ յազթեաց  
Հայոց բայց 'ի մատանց և 'ի գրչէ քումիշ յազթե-  
ցաւ և դատապարտեցաւ, քան թէ յազթեաց, դու  
մասցեր վասն առաքինեաց «Մէն և մէն Առանց-  
քան շնուրոյն մշտակին երիբուորս և այնուն անիբիւ-  
ռան շնորհի էր շնորհին վրա հրեշտակոյ » : Եւ  
դու իսկ գրեցեր վասն վատայ «Որոց սէիւն նուլց-  
եւ և յերանուր առաջնուննին, յոյշ ընդ անուն անիւն-  
է բնունին նորմայ, յամեայն հազար շոքին և յամեայն բանէ  
իւսում և յամեայն էրաց ուսուց, երաշուգետ և յամեայն էրանա-  
կարում և յամեայն էրանառ յառաջրին 'ի բանառն էրում :  
Դու զՀայոց աշխարհի առաքինի ամիկնանց զորբա-  
սէր կենցաղ 'ի մեզ աւանդեցեր : Եթէ ըւէր և ոչ  
մատենադրէր Եղիշէն, Եկեղեցին նոհաննայր, հայ-  
րենեաց պարձանք անհետ լինէր, և անուն քրիս-  
տոնէութեան 'ի Հայաստան աշխարհէո հեռանայր,  
գրիչն Եղիշէի հայրենասիրութիւն էր, արին վար-

դանայ մելան էր նմա . արիւն և գրիչ մի փրկեցին զՀայաստան և պատկեցին զիշեցեցին :

7. Եղնիկ կողընացի անկեղծ և անեղծ աւանդապահ դպրութեան և լեզուի Հայոց , և եղծիչ ազանդաց Տ-Ղ-Շ-Ն-Ա-Զ գենից և սին կարծեաց Յունաց վիլիսովայից , և գու հայրենասէ՛ր , յորժամ ընթեռնուս զիշեցիկն , տեսանես զնորա նրբին սրամտութիւն , ներհուն իմաստափրութիւն , բնական աստուածաբնութիւն , տենչաս զնորա լեզուն գրել և խօսիր , վասնզի նա առաջին աշակերտ գոլով Սահակայ և Մեսրովայ , զլեզուն և զգալրութիւն նախնեաց մեզ աւանդեաց ամենայն հաւատարմութեամբ . ուստի եթէ չմատենադրելը Եղնիկ , դպրութիւն , ո՛հ և լեզուն նախնեաց մերոց առ մեզոչ հասանէր՝ այն անթերի կատարելութեամբ , զոր ունի Եղնիկ :

8. Պարծանք են վարդապետաց մերոց Դաւիթ անյաղթ և Մամբրէ վերծանող եղբայր նորա . որք 'ի յԱթէնս զճարտասանն և զիմաստոնն Յունաց ընկերանեցին , և 'ի Բիւզանդիոն զաստուածաբանն յաղթեցին , զբազում բանս հանճարոյ և զառակս իմաստոնց մեզ աւանդեցին , անուն գովալթեան թողին 'ի մէջ Հայաստանի , և պատիւ 'ի մէջ իմաստոնց՝ Յունաստանի :

9. Երկու արեգակունք էին 'ի Հայաստան Սահակ և Մեսրովք , որք ունէին 31 աշակերտս իրեւ աստեղք լուսատուք շուրջ վարդակամբ բոլորեալք , սոքա ամենեքեան թարգմանիչք , սոքա ամենեքեան վարդապետք , և ուսուցիչք , սոքա ամենեքեան ծնողք , վարժապետք և հարք որդոցս Հայաստանի , սոքա ամենեքեան միշտ փոյթեռանդն

էին յուսուցանել , և 'ի վարդապետել , ոռքա հաս-  
տառեցին 'ի Հայաստան զգպրեվանս 'ի վանօ-  
րայս , զվարժոցս յամենայն գաւառս , սոքա ծա-  
ւալեցին զլոյս գիտութեան 'ի մէջ իշխանաց՝ ազա-  
տաց և ռամկաց . ո՞վ նման սոցա զհաւատոյ ուղ-  
զութիւն , զվարուց սրբութիւն աւանդեաց 'ի դաս  
Քահանայից և Վարդապետաց , սոքա յամենայն  
ժամ որոնէին և խնդրեին զաշակերտս , զի ուսուցա-  
նիցին և դաստիարակեցնեն , և յորժամ ոչ գտանէ-  
ին , սուգ առնէին 'ի վերայ տղիտութեան Ազգին  
և իրրեւ խորենացին սաստէին և յանդիմանէին զան-  
ուսութեանաէր բարս իշխանաց և Ազգին , եթէ ոք 'ի  
կղերաց ցանկայ Հայրենասէր յինել , ընարեսցէ իւր  
առաջնորդ զերանելիս , զի նմանեացի վարուց նոցա ,  
և փոխեացի 'ի հանդիսան յաւիտենից :

40. Ի Հայաստան աշխարհէ , և 'ի ժողովրդենէ  
մերմէ ոչ երբէք պակասեցան վարդապետք և Քա-  
հանայք . որք կամ առաւել կամ նուազ հետեւողք  
եղին լուսեղէն ճանապարհաց հարցն մերոց թարգ-  
մանչացն , զի ոմն աստուածարմանական , ոմն վար-  
դապետական , ոմն իմաստափրական , ոմն բար-  
յական , և ոմն պատմական գիտութեամբ և բազ-  
մաթիւ հեղինակութեամբ զարդարեցին և ճոխա-  
ցուցին զնատենադարանս Հայաստանի , մինչ զի յետ  
այնչափ արշաւանաց , քանդմանց և աւերմանց Հա-  
յաստանի և յետ այնչափ յափշտակութեանց մա-  
տենից , տակաւին թողին մեղ այնչափ ընտիր ընտիր  
մատենից երկասիրութիւնք , որովք միսիթարիմք և  
պարծիմք այսօր , 'ի մէջ բազմաց միայն զերդս շա-  
րականաց յիշեցից , ներշնչմամբ յօրինեալք 'ի նախ-

նեաց , որք զսիրս և զհոգի համօրէն աղջիս ՚ի յԱստուածական տութիւն առաջնորդեն ՚ի յամենայն ժամու :

11. Զպետն վարժապետաց զԴրիգ-որ Նարեկացի՝ առ քեզ յանդիման կոցոցից , որ զմեկնութիւն երէ եւբաշ , ՚ի ձեռին , զդիրս աղօթից ՚ի սրտին , զանուշ մեղը ՚ի լեզուին , ուսուցանէ զքեզ Աղջասիրարար վասն ամենայն հասակի աղօթել և վառն աղատաց և ռամիաց , ձիավարժից , և ոտակականաց արանց և կանանց , եկեղեցականաց և կրօնաւորաց , և ամենայն ժողովրդականաց : Որոց ամենեցուն զսիրս և զհոգի իրրեւ զխունի անուշ ՚ի բուրփառ Առառածային հրց եղեալ նուիրէ ամենասուրբ երրորդութեան , և շարժեալ ՚ի ոստուկ աղջասիրութենէն ՚ի Տետրոնէ խնդրելով առէ ։ Ենէ բանալիւնք նորուցայ ։ Հայութեալ բուժութար , ինէ ենէ անէնէստ՝ Քը ըստէլու :

12. Ի Յայսմաւորս մեր ողատմի վասն Գրիգորի Տաթեւացւոյ , թէ՝ զամս 35 զգօտին ՚ի միջացն ո՛չ արձակեաց և ո՛չ ժամանեաց ՚ի վախիուկ անկողինս ՚ի քուն մտանել , զի հանդերձ աշակերտոք իւրովք շրջէր և քարոզէր ընդ ամենայն քազաքս , աւանս և գեօզս Հայաստանի , զցոյդ և զցորեկ քրոնավաստակ ժրութեամբ վարժապետէր , ուսուցանէր զաշակերտեալն ըստ Տետրոն «Ամինչեւ անդամ չժամանել նոյս և հայ անդամ ուտել , մեկնէր զբովանդակ զհին և զնոր կտակարան , զրով բանիւ և վարդապետութեամբ տայր պատսախանի Յունաց և Լատինաց որք հակառակ կամացն Քրիտասի զրագարակին զԱղդ և զԵկեղեցին մեր , Ա-

գրոց վկայութեամբ և ողջամիտ խմաստասիրութեամբ սուստ ցուցաներ դրամբառօղմ մեր և ափեաբերան կարկեր զլեզուս նոցա , վասնորոյ կարի իւրաւամբ Աղդ և եկեղեցին մեր զհաթեւացին Գրիւգոր երկրորդ Լուսաւորիչ անուանեաց և ընդ տօնելի սրբազն հայրապետուն դասակարդեաց , վասն զի նա 'ի տղիտացեալ ժամանակին եղակի պաշտաման հանդիսացաւ հայրենի աւանդութեանց մեր բաց և քաջախոյեան ընդդէմ հակառակորդաց մերոց որոյ յիշատակ օրհնութեամբ եղիցի և եղիցի . . . ահա մինչեւ ցայտօր ժամանակի բազմաթիւ բանք և մատեանք իւր վկայ են ծայրալիր հայրենասիրութեամն նորա :

13. Ի պատմութեանց և 'ի գրոց մերոց յամուանէ ճամաչեմք զբազում Վարդապետու և Քահանայա և Սարկաւագունս և դպիրս , որք լստ Գրիգորի նախանձեալ զնախանձ Ցեաւոն Ամենակալի և եռանոդիւ հայրենասիրութեամն վարեալ ընդ ժամանակս ժամանակս ետուն պատախանի օսար և սուտ մարդարկեց , որք մարդարէանային 'ի վերայ մեր չարիս , և խօսէին զառտ ըզձութիւնս , բազում են անուանք սոցա , բազում են բանք և մատեանք նոցա . գորս թողում հայրենասիրին ընթեռնութ զամենային և 'ի միտ առնուլ զբանս և զբանս նոցա « զի նե չը եւ Շ ըստ Հովհեմ նե աշուրհա ուներ բառեիսն ունելու ենե չքեաւ և այն » :

14. « Արդ մեք որ այսափ զբազմութիւն վկայ յիցն սրբոց մերոց շուրջ դմեօք մածեալ ունիմք , զմեզս կարեւորս , զանփութութիւն դհեզդութիւն , զքուն և զհանդիսա մարմնեց յանձանց մերոց 'ի բաց

թօթափեսցուք, քաջութեամբ ընթացուք՝ ի ողութերազմն որ առաջիկայ մեզ, զի համարս տալոց եմք առաջի հովուապետին Քրիստոսի վասն ժողովրդեան . զորս արածել հրամայեաց ի վայրի տալարուոջ և ի ջուրո հանգստեան : Ոչ ահա խաշինք հօտին Քրիստոսի ի ժամու և ի տարածամուտան զկաթն և զարն վասն յոյժ սիրելոյն զմեզ , զի հովինք ոչ զանձինս արածեն այլ զհօտնս Նմանող լիցուք հարցն մերոց առաքինեաց և հայրենասիրաց, որք նմանեալ Յիսուսի զանձինս եղին ի վերայ ոչխարացն, կենօք և մահու վաստակեալ սիրեցուք . զիսաշինս հօտապետին մերոյ ի բանս, ի վարս, ի վարդապետութիւնս, ի տեաչութիւնս և ի վերակացութիւնս և ի հակմունս, արեամի չափնահատակիցուք ի վերայ հայրենաւանդ սուրբ եկեղեցւոյ մերոյ, զի յերեւիլ հօտապետին ընդունիցիմք զանթաւամ փառաց պսակն . զոր պատրաստեալ է սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Տէրն մեր Յիսուս Քրիստոս, առաջին Քահանայապետն, Հովիւն Առաջնորդն, և զարդարպետն հոգւոց մերոց և ամենայն հաւատացելոց . որում վառք յաւխտեանս, Ամեն :

## ԳԼՈՒԽ ԱԵՑՑԲՐՈՐԴԴ

ԿԲ0ՆՔ ԵԿԵԼԵՅԻ ԵՒ ՎԱՆՕՐԱՑՔ .

## ՅՕԴՈՒԱԾ Ս.

ԿԲ0ՆՔ

1. Աստուած է հեղինակ կրօնի , և ոչ մարդ . կրկուէտ չնորհք , և անմիջական հորկաւորութիւն

կը թնի ՚ի միտս և ՚ի սիրտս մարդկան աղդող և  
տպաւորող նոյն անհուն իշակն է և ոչ մարդկային  
հնարք : Կրօնք ծայրագոյն բարւոյն լուսեղէն սիւ  
բակապն է, որ զբարձրեալն Աստուած դժմութեամբ  
առ մարդիկ խնարհեցուցանէ, և զմարդն չնորհօք  
և մարդասիրութեամբ առ ինքն բարձրացուցեալ միւ  
ասնական Երրորդութեան որդեգիրս առնէ : զՊատր  
ու էր կրօնի Ագամի ՚ի ստեղծանելն ընկալաւ յԱսր  
տուծոյ ՚ի դրախտին, որ ՚ի միտս և ՚ի սիրտս նաւ  
հապետաց տպաւորեալ և ոտղարերեալ մինչ զի  
զենուքք կենդանւոյն ՚ի յանմահութիւն փոխադրեաց  
Մարգէս ՚ի լերինն Սինէական ընկալաւ զպատուէր  
կրօնի ՚ի տախտակս քարեղէնս, զոր ուսոյց և քա  
րողեաց միայն որդւոյն խրայէլի, յորմէ խոստացեալ  
Մերիայ գալց էր յաշխարհ . իսկ ՚ի լրումն ժամու  
նակի էջ Միածին որդին յերկնից ՚ի յերկիր, որ էր  
՚ի ծոց հօր, նա պատմեաց մեզ զամենայն, ոչ որ  
ոյէս ՚ի դրախտին հակիրճ, և ոչ որոգէս ՚ի լերինն  
մթին, այլ զամենայն պարզ, ճշմարիտ, կատարեալ  
որդարացուցիչ, որրիչ, լիացուցիչ կենդանացուցիչ  
և վրիիչ Յիսուս քարողեաց յայտնապէս աշխարհի  
ուսոյց յայտնապէս հրեից և հեթանոսաց, Յիսուս  
ասոց « Զբան, առ եւ իւսեցայ ընդ նեռ իւսնաւ եւ յառերես  
հական + » և այս բան է Աւետարան, որ սկիզբն է և  
հիմն քրիստոնէական կրօնիս : Երբ՛ Ա, դ. 4. հմիւ  
« բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ  
Աստուած ընդ հարսն մեր Մարդարէիւք . իսկ ՚ի  
վախճան ժամանակիս հաճեցու խօսիլ ընդ մեզ  
որդւովին, որ և ժառանգ ամենայնի հաստատեաց  
դիմա» :

2. Յորժամ եւսուտ Անդրանիկին յաշխարհ նախ  
երկրպագին նմա ամենայն հրեշտակք նորա ասելով.  
Փոստ ՚է բարձրաց Աստուծոյ ՚ի ծննդեան նորա, զինի  
հրեշտակաց և նախ քան զամենայն մարդիկ երկր-  
պագին նմա և թագաւորք երկրի մերոյ «զի ահա  
Մողք արեւելից եկեալ հասին յերուսաղեմ, և ա-  
սեն, ուր ծնու արքայն Հրէից, զի տեսաք զատղ  
նորա յԱրեւելս և եկաք երկրպագանել նմա»: Մողք  
Մելքոն, Գասպար և Պալտասար էին ՚ի դաւառէն  
Մոկաց, Ազգաւ Հայ, մարդարէք, և դաւառապետք  
Հայաստանի, իմաստունք և ուսուցիչք աստուած-  
պաշտութեան, որք սքանչելի աստեղն առաջնոր-  
դութեամբ մոտին ՚ի յայրն ըեթլեհէմի, տեօին դնո-  
րածին զլմանուէլն ՚ի դիրկս կուսին, զարմացեալ  
երկրպագին, և մատուցին զընծայս խորհրդոյ, «և  
գարձան յաշխարհն խւրեանց» ՚ի Հայստան ՚ի դա-  
ւառն Մոկաց, ուր և դերեզմանք նոցա տեսանի  
մինչեւ ցայօր,

3. Երանի աչաց ձերոց, ով Աստուածասէր Մողք  
արեւելեան աշխարհիս, չգիտեմ, արդեօք սր-  
տեռանդն Աստուածասիրութիւն է՞ր որ զձեզ ձրդ-  
եաց և տարաւ առ Յիսուս, թէ նոյն Աստուածային  
սիրոյ ճառագայթն էր, որ զձեզ առ ինքն ձգեաց  
մինչեւ տարաւ ՚ի յայրն ըեթլեհէմի Մանուկն այն,  
զոր տեսիք աչօք, և զոր համբուրեցիք բերանօք,  
նա ասաց. «Ու ո՞ւ չարէ քալ առ իս, ե՞նէ ո՞ւ հոյրն ի՞մ յը-  
քեացէ զնո առ իս» և կամ թէ «ու ո՞ւ չիրէ զնոյք, ե՞նէ  
ո՞ւ ո՞ւ է, և ո՞ւ ո՞ւ էն իսիցէ յայտնել...» Մաթ. յիշ. դլ 27:  
Ով քրիստոսասէր հայրենակիցքդ իմ, դուք յառաջ-  
քան զՅովհաննէս Մկրտիչ, և նախ քան զառաք-

եալսն ակսայք քարոզել զԱստուածութիւն Յիսուսի  
՚ի մէջ Հրէաստանի : Զձեզ մարդարէ ասեմ: Մար-  
դարէք զգալուստն Յիսուսի միայն գուշակեցին,  
բայց զայն և հանուն պատել ՚ի եռաչարութ և եռել ՚է-  
ժութ չուեսին: Առաքեալ ասեմ, Առաքեալք զնա  
տեսին, և քարոզեցին, բայց մինչ էր նա կաթնա-  
սուն ՚ի գիրկս կուսին, զնա օծեալ թագաւոր, և  
Աստուած համբաւել չղօրեցին, դուք նախ քան  
զլիիմէօն զՅիսուս ՚ի սիրու ձեր ընկալայք, և մի  
հոգւով, խնդութեամբ դարձաք ՚ի Հայաստան :

4. Արդ՝ Մոդք, որք մինչ ոչ էին տեսեալ զՅի-  
սուս, հաւատացին և համարձակ քարոզեցին զնա  
՚ի մէջ Հրէաստանի . ապա յորժամ աչօք տեսին  
զանտեմն ՚ի սերովքէից, յորժամ համբուրեցին զան-  
շօշտփեցին, յորժամ երկրպագին ոքանչելոյն և ոքան-  
չացան . արդեօք որպիսի եռանդավառ հոգւով  
քարոզեցին զանտեն նորա ՚ի մէջ Հայաստանի. հոչակ  
հարին և ասեն, թէ՝ արդարեւ տեսաք զԱրքայն  
Հրէից, տեսաք զՈծեալն, տեսաք կԱստուածն մեր  
մարմնով ՚ի գիրկս կուսին: Զի մինչ զաւուզ նորա  
յարեւելս տեսին, ո՛չ ժուժկալեցին ընդ երկարաձիդ  
ճանտպարհն ընթանալ և քարոզել յազգս հեռա-  
ւորաց, ապա յորժամ դարձան առ բնիկ ազդ իւր-  
եանց, առ ազդն Հայոց, կարող էին թագուցանել  
զնառագայթն Աստուածութեան և զկերպարան Հօր.  
որ լոյս ծագեցաւ նստելոցն ՚ի խաւարի :

5. Ի Հնախօսութեան իւրում Հ. Ղուկաս ին-  
չիձեան զհաւատալն Արդարու ոքանչելեացն և Աստ-  
ուածութեան Յիսուսի, զորմէ լուեալ և ոչ տեսեալ  
հաւատաց, ՚ի քարոզութեանց Մոդուցն համարի

արդիւնաւորեալ, ապացոյցս այս չունի բնաւ տեղի  
 տարակուսամնաց, զի Մոդք որք 'ի յազգի մերում  
 ունէին զպատիւ խմասնոց և վարեին զպաշտան ու-  
 սուցաներց ժողովրդեան զինքնութիւն ճշմարտին  
 Ասառւծոյ՝ տեսանելով զարեդակն արդարութեան  
 ծագեալ յաջմարհ<sup>5</sup> արդարեւ որդւոց Հայտատանի  
 ուսուցին երկրագագանել հօր հոգւով և ճշմարտու-  
 թեամբ. զայս լուեալ և սովոր լուսաւորեալ Ար-  
 դարու՝ խնդրէր տեսանել զբիսուս: Եւ զի 'ի բազ-  
 մաց եւս լուեալ և ստոգեալ զվարս և զբաշա թի-  
 սուսի, հաւատաց և ասէ թէ արդարեւ նա է ճշմա-  
 րիս որդի Աստուծոյ կենդանւոյ (զոր քարոզեցին  
 յառաջադպյն Մոդքն: Ազա գրէ թուղթ հրահե-  
 րանաց, և 'ի ձեռն հաւատարմին իւրոյ Անանէի հա-  
 յարագետի, յղէ առ Յիսուս «թէ լուեալ իմ զան  
 հրաշիցն և ոքանչելեացս, զօրս առնես, և հաւա-  
 տայի, թէ՝ զու կո կո որդի Ասառւծոյ. և զի լուսց,  
 թէ՝ Հրեայք հարածեն զըեզ քաղաք մի ունիմ,  
 փոքր և գեղեցիկ ինձ և քեզ բաւական. եկ բնաւ  
 կեսոցուք 'ի միասին և այլն: ըստ Յովհաննու, գեւ-  
 ականք Արդարու յաւուր Մաղկազարդի մասնեն յե-  
 րուսադէմ, և միջնորդութեամբ առաքելոցն Անդ-  
 րէի և Փիլիպպոսի մասուցանեն զթուղթն առ Յի-  
 սուս. զոր ընթերցեալ ազազակեաց և ասէ՝ «Այժմ  
 իւառուօրեցաւ որդի մարդոյ» և հրամայե թուվմայի  
 առնել պատասխանի թղթոյն Արդարու օրինակ զայս  
 և Առ առաւեցայ հարուբել զիւմ Հօր Է՞ոյ, և յորժամ հարուբեցէց  
 զամանակն, վերացոյց առ Հայք . . . և առաւեցէց առ Քեզ զի  
 առ յաշակիբարց իւսի բժշկել և ըստաստրել Շէնը յորեւ:  
 6: Երանի քեզ Արդար, որ նախքան զամենային

թագաւորաւ երկրի , հաւասարացեր թիստւսի , Երանի՛  
քեզ Հայաստան՝ որ ծեր և իմաստուն թագաւորին  
քո դԱստուածորդին հրաւիրեաց ՚ի քաղաքն իւր ։  
Յիսուս ընկալաւ ղճրաւէրն քո, սիրեաց զաշխարհն  
քո , առաքեաց առ քեզ պարէն , պատիւնն , պահէն  
հորդաբէն , զբանն , պատարագնն , և զնուազն ՚ի ձեռն  
նախակին Լուսաւորչին մերոյ թագէի : Առեր և ըն-  
կալար , բժշկեցար մարմնով . Լուսաւորիցար հոգ-  
ւով . Անդ բանիկ եզեր՝ ի թագաւորս , Աւագ Այր  
արգարեւ . ՚ի մէջ արանց կատարելոց : Գլուխ թա-  
գաւորին մերոյ խօնարհեցաւ Քրիստոսի թագաւոր-  
ին , դրոխաք Հայոց երկրագագեցին Քրիստոսի թա-  
գաւորին և հաւասարացին նման :

7. Ոչ շատացաւ . Աբգար հաւատալ և մլրտիլ  
յանուն ամենասուրբ Երրորդութեան . այլ վու թա-  
ցաւ վարել վնոր իմն պաշտօն առաքելական . զի  
գրեաց կրկնակի թուղթու առ Տիբերիս կայսոն  
Հռովմացեցոց . թուղթ մի առ Արտաշէս թագաւ-  
որին Փարսից , և թուղթ մի եւս առ Ներսէն թա-  
գաւորին Ասորեստանեաց . բազում կրօնաւէր բա-  
նիւք յորդորեաց զթագաւորնն ՚ի բաց կալ ՚ի մնու-  
եացն , և հաւատալ յաստուածութեան Յիսուսի .  
զեղեցիկ յանդ զնութեանք խնդրեաց ՚ի թագաւո-  
րացն , զի արքունի հրովարտանկաւ խրեսնց հրա-  
մանահան լիցին ընդ ամենայն աշխարհու պետու-  
թեան խրեսնց՝ համարձակ ընդունել զթրիստոս ,  
հաւատալ և պաշտել զնու իրբեւ ճշմարիս որդի  
Աստութոյ :

8. ՚ի պտամութենէ աղդաց իմանամք , թէ՝ ո՞ւր  
և քարողեցաւ աւետարան Քրիստոսի ընդ ամենայն

աշխարհ։ և զեւ զի նախ ժողովուրդք հաւասացին առաջուածութեան Յիսուսի ։ ապա ուր ուրեմն թագաւորք և իշխանք հետեւեցան զինի ։ բայց ՚ի միջի մերում՝ ոչ եղեւ այսպէս ։ այլ նախ թագաւորք հաւասացին առաջ և ժողովուրդք մեր հետեւեցան զինի ։ ոչ ապաքէն յաստուածապաշտ Հայկ նահաւագետէ մերմէ սկսեալ Հայք ՚ի դարս յորդի զգացափարն աներեւոյթ էին պահէին ՚ի մօնի զգուշաւոր աւանդութեամբ ։ ոչ ապաքէն գիտունքը մեր ։ մնդք անուանեալքն ։ ուսուցանեին և վարդապետէին ՚ի Հայոց զգալուսու Մեսիային ։ զոր ՚ի մարդկարէ ական տառից անսոի առեալ պահէին ՚ի դիրու իւրեանց մինչեւ ՚ի ծագումն անճառելոյ Բանին ։ Եւ զի պատրաստ էին թագաւորուք և իշխանք մեր ընդունել զբանն կենաց ։ վասնորոյ վաղարշակ թագաւորեալ ՚ի վերայ Հայոց բազոք բառնայ զՀայաւաննեայցա առ եղբայր իւր Արշակն թէ «ո՛չ զմեհեր նից պաշտամունս ։ և ոչ զատաւթոյ վայելլութիւնն ինչ աերանեմ յերկրի ասու» ։ Հայք ոչ զիւռոս արարին ։ և ոչ կռոց երկրապատին ։ այլ Արշակունիք ոմանք զիեւու մատգեղանց ՚ի Պարթեւաց վասն ինք եանց բերին ՚ի Հայս ։ իսկ զայտիկերս դիցն ՚ի Յաւնաստանէ բերին իրեւ աւանք իրեւ զարդ յորժամ Յունայ և Հռովմայեցւոց յաղթեցին թագաւորք մեր ։

9. Բաղումք ՚ի թագաւորաց մերաց իրբեւ զՑրդաւու ։ և իրեւ վռամբապուհ փութաջան էին ՚ի ծաւալել զՀաւասան Աստուծոյ ՚ի յազդս և ՚ի լեզուս բաղումն ։ ՚ի Բագրատունի թագաւորաց Աըմբատաք և Աշոտք ։ իսկ թագաւորք և իշխանք Ռու-

բենեանք առ չասարտել նախանձայոյդ էին օրինաց  
և կրօնիցն Աստուծոյ ։ Աւստի եկեղեցին մեր ոչ  
մոռանայ դյիշատակ սոցա . և նմանեաց սոցին ,  
և վահ բորբոքութ նորուարաց և Աստուծութիւնը ( իշխանաց  
չըրաց և չորբաւրաց նոյն աղօթու առնելով համա-  
պաղօր : « Առ ձեզ են բանք իմ՝ ով իշխանք Հա-  
յատանի . զի ուսանիվիք պրարեալաշտութիւնն ,  
պատուածսիրութիւն և զլրօնասիրութիւն նախնի  
թագաւորաց մերօց և իշխանաց , բիւր բարեաց  
և երանութեանց արծանաւոր է իշխանն , որ իրրեւ  
արքայն Արդար , Տրդառ և Վռամշապուհ , իրրեւ  
պայշազատ վարպան և Վահան փութայ ինչ մի եր-  
բէք չմնայել վասն հաւատոյն Քրիստոսի , ոչ արծաթէ ,  
ոչ ուկի , ոչ իմաստութիւն , ոչ հանճար , ոչ կեանք  
և ոչ մահ . այլ զամենայն տայ , զի դիրիստոս ըն-  
կալցի և զկեանն յաւիտենականա ժառանգեաց .  
զամենայն տայ , զի զեկեղեցին զնեացէ և զազդն  
փրկեացէ : Հաւտացեալն միայն կարէ սիրել զամե-  
նայն ազգայինս իրրեւ անդամ միոյ զիսոյն Քրիս-  
տոսի , զի հաւատն որ առաջնորդէ 'ի վեր քան  
զբնութիւն մարդոյ գործել զբարիս և հաճոյ լինել  
Աստուծոյ . նա է , որ առուցանէ , թէ « ձնեան 'ի  
ժարմայ հարգն է . և ձնեան 'ի հոգայ հոգի է » . նա ուսու-  
ցանէ թէ հաւատովք մի եմք ՚ի Յիսուս Քրիստոս ,  
և թէ անդամ եմք անդամոց նորա , և ոսկը յակե-  
րաց նորա , նա է , որ առուցանէ զարուս ընդու-  
նել և սիրել իրրեւ զեզրարս , և զէգս և մանկա-  
մարդո իրրեւ զքորս , և այս սէր հիմն է հաւա-  
տոյ , որ շինէ ՚ի վերայ հիմն առաքելոց և մար-  
դարէից : Ո՛չ մարդ առանց դատման և բանի , բա-

նական կենդանի է , ոչ ազդ և ժաղովուրդ առանց  
պաշտաման ճշմարիտ հաւատոյ ազդ և ժողովուրդ  
է . և ո՛չ հաւատոք առանց յայսնեալ ճշմարտու-  
թեանց հարկաւոր և փրկարար հաւատք է . և ո՛չ  
բարոյական դաստիարակութիւն առանց Քրիստոսի  
հոգւոյն ճշմարիտ բարոյական է . և ո՛չ առանց բա-  
րյական դաստիարակութեան եղբայրութիւն , հա-  
ւատորութիւն և ազգայնութիւն պահել հնարին է :  
Զի կարող են ազդք երկրի առանց թագաւորի , ա-  
ռանց իշխանի , առանց հարատութեանց զինքնու-  
թիւն , և զամբողջութիւն իրեանց պահել , որպէս  
պահեցաք մեք և պահեմք : Բայց առանց հաւատոյ  
և կրօնի , առանց սիրոցն Քրիստոսի , առանց օրի-  
նացն Առաւծոյ անհնար է պահել զանքակ միու-  
թիւն ազգային ամբողջաւթեան , վասն զի պետու-  
թիւնք և իշխանութիւնք աշխարհիս փոփոխին ,  
անկանին և կործանին , բայց Առաւուած անփոփոխ  
է , կայ և մնայ յու իտեանո : Ա՞վ կարէ տպ իտանալ ,  
թէ՝ հանուր պետութեանց աշխարհի զօրութիւն և  
իմաստութիւն ՚ի մի վայր համահաւաքեալ վայր-  
կեան մի գդէմ ունել կարեն խուն մի զօրութեան  
և իմաստութեան Առաւծոյ . ո՛չ ո.ք. զի գիտէ ամե-  
նայն մարդ թէ նա զանեն ամենայն իշխանաց ՚ի-  
շորին ունելով շարժէ զիթագաւորութիւնն և խուզի  
զաղդս . որք ո՛չ անուն օրինաց և ճշմարտութեանց  
նորա . ոչ նա և չեր պերաց և թոքուուր նոքուուրոց .  
որ միայն ունի ըսնահանութիւն բնուիւն ՚է լուս յանձուոյց . . .  
որ զիտրհուրդս իշխանաց գիտէ , զիկրոս թագա-  
ւորաց քննէ և ասէ . «Ի յասոյդ յէլեան որդիք նորդ-  
իան , զի ու քո քրիստոնէն ՚է նոսութեան :

11. Բարձութե թաղաւորութեան ՚ի տանէս թութեանոյ , յար աղջու , ցաւս և կակիծո առ բերեն ՚ի սիրոս հայրենասիրացն . բայց եթէ զպարդեւ ձրի չնորհացն Աստուծոյ ո՛չ եր տուեալ քրիստոսասէր հարցն մերոց , ընդհանուր աղէտիցա և տուանձն վշտաց մերոց դարման և մխիթարութիւն , յումին արդեօք գտանել կարող եար , եթէ ո՛չ ՚ի յառատոծոյ որ հայկանէ և բժիկէ . որյարուցանէ զաղքատս յերկրէ և բարձր առնէ զտառապեալն յաղընեաց . . . . Հաւատն զսիրու մեր և զհոգի Ավերտառեալ յաստեացս կապէ ընդ ոէր և ընդ որբութիւն Աստուծոյ անրաժմանելի մխաւորութեամբ , նա ուսուցանէ ճանաչել , հաւատալ և սիրել զԱստուծ յամենայն զօրութենէ , նա ուսուցանէ թէ յորժամբ յամենայն մասաց ժառացեմ ջետան , թաղաւոր իշխանն և պետ ոչ ոպակասի մեր . « զի յորու և Աստուծուն ՚ի ժարուհի յարաւանել ունիս Աբրահաման նասուցանել զնոսա ընդ իշխանս ժողովրդեան իւրոց և զաթառ փառաց ժառանդ եցուցանել նոյսու , որպէս առաց ցղաւիթ ունե պահեցն որդիւ + + զըրենս իւ յառիքեռն յառիք ու , ենե ու պահեացն որդիւ + + զըրենս իւ . նորից բառացնուա զանցիւան նոյսու . . . :

12. Եթէ առանց հաւատոյ և առանց կրօնաւ կան զգացմանց ՚ի յասպարիդի աղդասիրութեան յառաջազէմ նկրտելոյ փորձ փորձիցեմք ընդուանյն է աշխատութիւն մեր . զի անկայուն պարծանք և համբաւք հայրենասիրութեան մերոյ ՚ի յէջս մատենից ՚ի յերկուս տողս միայն ամիսովին : և անուանք մեր կարդասցին ՚ի ցուրա մարմարիսն յիրմաց իրեւ զանուն հեթանոս հայրենասիրաց ,

և անուանք մեր մոռացին յետ ժամանակոց զի մատեանք ՚ի ժանեւաց ժամանակին մաշին հնանան և անհետանան, մարմարինք փշրին, փոշիանան և ՚ի յօդս ցնդին . բայց յորժամ հաւատոյ զգացմամբ վասն Քրիստոսի, վասն Աստուծոյ զինորիմք. և վասն որբոյ Եկեղեցւոյ և տղդին ՚ի Հայրենասիրութեան անդ միշտ ՚ի յառաջադէմնն նկրախմք, զլիշտակ մեր Եկեղեցին ընդ սիրելիսն անուան Աստուծոյ, կատարէ ՚ի յերկրի, անեղծ և անթառամ վառայ պատակ պատրաստի մեղ ՚ի յերկինս, զի անուանք մեր իրբեւ անուանք քաջ և անմահ Նահատակաց մերոց Վարդանանց գրին ՚ի գալրութիւն կենաց . յորում անջինչ պահին անուանք մեր և ամենայն գործք մեր նկարեալ ՚ի կենդանի վէմն Քրիստոս, որ պահէ զաւանդն մինչեւ ՚ի յարութիւն արդարոց . ուստի ասէ Պօղոս Շնորհուած ընդ Քրիստոսէ, չև իւնչ յեր ծանձիւուն իւ Քրիստոսէ յԱստուծ :

13. Հայրենասէրն սիրէ դհաւատն զոր հարքն մեր ընկալան յԱստուծոյ և սիրեցին . ընկալան ՚ի Քրիստոսէ, և հաւատացին . ընկալան ՚ի յԱռաքեցոց և հետեւեցան. ընկալան ՚ի մոդուց և հաճեցան. ընկալան ՚ի յԱրդարէ և պահեցին. ընկալան ՚ի սրբոյն Գրիգորէ և մլլուտեցան և ընդ ամենայն աշխարհ քարոզեցին, ՚ի Գրիգորէ . « ո՞ր զնուունէ Հաւատացուն ՚ի յանձն եռու և երբէտ ներծու ու ու ՚ի միջ նուռառոցն բնուին ՚ի Քրիստոսն վասն ճշմարիտ և Ա. հաւատացոս . հաւատու, որ ՚ի Յ. Փ. Հայրապետաց Նիկոյ սահմանեցաւ և ՚ի սրբոց հարյուն մերոց դաւանեցաւ. Արդ պաշտեցուք զհաւանն Աստուծոյ չնորհեցաւ մեղ. սիրեա-

շուք զհաւատնի, որ չարչարանօք և արեամբ անթիւ նահատակաց մերոց նուիրագործեալ աւանդեցաւ մեղ պինդ կալցուք զգաւանութիւն անշարժ յաւսպին, որպէս պինդ կարան հարք մեր մինչեւ ցայսօր. զմաղ մի և զնշանախեց մի ՚ի յաւանդութեանց Ա. հարցն մերոց փոփոխել կամ կորուսանել խիղճ է մեղ. գուցէ խածանիցէ զմեղ օձն անապատիւ Այլ որպէս լուաք և տեսաք ՚ի հարց անտի, զոր ուսաք և հաւատացաք, զնոյն անթերի լրականութեամբ պահեալ՝ աւանդեցոյուք որդոց մերոց յազգէ յազգ. զի այս խոկ է ճշմարիտ աստուածակրութիւն, կրօնասիրութիւն և հայրենասիրութիւն :

14. Հայրենասէրն դիտէ թէ հաւատն Գրիգորի է անքակտելի շաղկապ միտթեան աղդիս . ուստի ո՛չ զձայն օտարաց լոէ և ո՛չ զհետ օտարաց երթոյ, այլ փախչի ՚ի նոցանէ, որք ո՛չ են ճշմարիտ հովին Քրիստոսի, այլ գայլք յափշտակողք . զի ոչ ժողովեն ընդ հարսն մեր զմեղ ՚ի գտոիթն Քրիստոսի, այլ ցրտեն զմեղ ՚ի միմեանց, գողանան և յափշտակեն : Հայրենասէրն դիտէ թէ հաւատոյ հերձուածն և կրօնական բաժանումն զլխովին կործանումն և մահ է ազգային միութեան «չ ամենոցն ուն, +ուն+ իսմ նուքուրունիւն բայանեալ յանցն իւր հանէ, ուստի փութոյ միշտ ժողովել զրաժանեալ զեզրարան ՚ի մի սէր կրօնի, ՚ի մի հաւատ Քրիստոսի, ՚ի մի դաւ անութիւն սրբոյն Գրիգորի Երանի՛ աւուրն այնմիկ յորում բաժանեալ եզրարք մեր միահաղոյն ժողովեալ միանային ընդ մեղ միով հոգւով և միով հայրենասիրութեամբ . զի բաժանումն միշտ չար է . զիւուը ըաժանումն է, անդ ոչ

ուէր կրօնի , ո՞չ ուզգութիւն հաւատոյ , և ոչ հայր  
ըենասիրութիւն ինչ տեսանի . այլ միշտ հերձուած  
միշտ հեռ , միշտ նախանձ , միշտ ատելութիւն ,  
միշտ հակառակութիւն , և միշտ բազմազէտ վնասք  
հօդուոյ և մարմնոյ . զորս 'ի փարձոյ իսկ տեսաք  
'ի ժամանակիու այսմիկ :

15. Ազգամ պյաօր զօտարամկութիւն պարզա-  
մուաց մերոց որք 'ի խորամանկութենէ ՚ի շահասի-  
րութենէ չար մշակացն , սուտ եղբարցն պատրեալք  
վրիսպեցան ՚ի սուրբ հաւատոյու . արհամարեցին զօ-  
րէնս հարց և նախնեաց իւրեանց , անարդեցին  
զհայրենի կրօնս , ուրացան զեկեղեցին Հայաս-  
տանեաց , հայհայեն զադոս և դաւանդութիւնս , առ  
ոսն կոխեն զամենայն նուիրականութիւն ազգա-  
տոհմի իւրեանց , որպէսզի հաճոյ և եթ երեւես  
ցին յաչս օտարաց և աշխարհամիրաց , որք ի մէնջ  
ելին և ՚ի մէնջ չեն : Ուստի տղաշեմ զձեզ եղբարք  
՚ի սէր արեան նահատակաց մերոց փախերուոք՝  
փախելուոք ՚ի նոցանէ , և դարձարուոք առ մոյրն  
ձեր , ՚ի սուրբ կաթուղիկէ և առաքելական եկեղե-  
ցին Հայաստանեաց :

## ՅՈՒՂԻԱԾ Բ :

ԵԿԵՂԵՑԻ :

1. Նախնիք մեր հաւատացին թէ գոյ յազմական  
Եկեղեցի ՚ի յերկինս . որ երանեալ հոգիք սրբոց  
ընդ հրեշտակու դաստիորեալ հրճուին , զնային շուրջ  
զայժոռովին Աստուածութեան ՚ի յանդրաւ ուրախու-  
թիւնս . զի իւրեւ զհադիս անդրանիկաց հրեշտակաց

գրելոց 'ի յերկինս , հոգիք արդարոց՝ կատարելոց  
փխաղը եւալք 'ի յերկը 'ի յերկինս . հոգիք , որ  
'ի յերկը 'ի ոէք և չարչարանս միացան ընդ Քրիս-  
տոսի , և 'ի յերկինս 'ի յօթեւանս Հօրն լուսոյ 'ի  
փառս և 'ի պատիս պատկեցան 'ի նմանէ ։ ոչ ու-  
շառնաց նոր իշրու վալ 'ի յերեւն , իշրու նոր հաշրտ  
եղն 'ի յերեւն :

2. Նախիք մեր մկրտեալք 'ի մահն Քրիստոսի ,  
զինուորեալք խաչին Յիսուսի . բարուն զորեւուն  
պատերաշնան 'ի յերկը 'ի անհայ (իւրեանց) կոտ-  
րեցն (արփոթեամբ) 'ի մէջ զինուորեալ եկեղեցւոյ .  
զի ինքեանք իսկ եին կենդանի և իմանալի տաճար  
Աստուծոյ կենդանոյ , և հոգի Աստուծոյ էր ընա-  
կեալ 'ի նոսա . զի յորժամ աղօթէին մոռք ընդ եր-  
կինս պանային , յորժամ երգէին հոգւով ընդ հրեշ-  
տակս նուազէին . յորժամ 'ի մատուռ մկրտիրոսաց ,  
յեկեղեցի որբոց , 'ի տաճար Աստուծոյ մոանէին ,  
իրեւ առաջի աթոռուոյ չնորհացն Աստուծոյ յանդի .  
ման կային և համարձակութեամբ ինդրէին 'ի նմանէ :

3. Զինի նահատակութեան վարդանանց՝ մնաց-  
եալ նախարարք և ժողովուրդք Հայաստան աշխար-  
հիս 'ի խիստ հալածանաց թշնամեաց եկեղեցւոյ  
նեղեալ առանձնացան 'ի լերինս պաշտել զյոսուած .  
Եղիշէ . «Թուն այնունեալու լուրջունէն զի զու և զուն-  
ւ զուգորակն . . . : Հասեալ առնէին զումուրս անուղուրի , և  
զունէն բուզում վերանց : Հաս համարէին շնորշունքոր բնա-  
կունիւն . . . առուղունքունքունքունք 'ի առուղունքունքունք . . . : Ա-զ-  
բոցունքունք քունէնունք յերաժունիուն զի զունքունք . . . : Ա-զ-  
բոցունքունք : Ա-զ-բոցունք յերաժունիուն եւ եինպեսէ եւ . նոյն

Եկեղեց քահանայ . Խորդին է արքաւունդուր Ա. մեռն , և հոգի +  
նորա պատութեա ընդուանելի : Ոչ ոք 'ի յաստուածաբանից  
մինչեւ ցայսօր կարաց այսպիսի ճշդրաւագոյն բանիւ  
սահմանել զհոգին և դյատկութիւն զինուորեալ ե-  
կեղեցւոյն . քան զոր սահմանեաց երանելին Եղիշէ .  
զոր և Ես քրիստոսամբ հոգւոց բաւական համար-  
եալ սկսայց խօսիլ 'ի վերայ նիւթական եկեղեցւոյ,  
որք բարեպաշտութեամբ զինուորեալ եկեղեցւոյ  
հիմնեցան և զարդարեցան :

4. Արդարեւ եթէ ամենոյն անձն կենդանի հա-  
ւատով , ցյեալ յուսով առաւելեալ սիրով յանձն  
իւր եկեղեցի , նոյն ինքն հոգւով և ճշմարտութեամբ  
քահանայ , մարմին անարատութեամբ և որբու-  
թեամբ սեղան Աստուծոյ , և հոգին հեղութեամբ  
և համբերութեամբ ընդունելի պատարագ չլինիցի  
առաջի Աստուծոյ , ոչ կարէ զտաճար որբութեանն Աս-  
տուծոյ , և զեկեղեցի ժողովրդեան Քրիստոսի հիմ-  
նարկել 'ի յերկրի : Զի Արդար , Տրդատ և ամենայն  
բարեպաշտ իշխանը և ժադարք մեր նախ յան-  
ձնուս իւրեանց տաճար և բնակարան եղեն միանաւ-  
կան Ս. ԵՄՐՈՒՌՈՒԹԵԱՆ , ապա զբազում եկեղե-  
ցիս հիմնարկեցին , և նուիրեցին անուան Աստուծոյ ,  
բայց չարն Յուղիանոս վրիպեալ 'ի հաւատոյն 'ի յո-  
տոյն 'ի սիրոյն , որ առ Աստուած . եղեւ աման չա-  
րին , և քակեաց զբազում եկեղեցիս և զտաճարս  
Աստուծոյ :

5. Սէր հայրենեաց նախնեաց մերոց տեսանի  
'ի շինումն եկեղեցեաց , և 'ի պայծառութիւն տա-  
ճարացն՝ զի ժողովուրդք մեր հոգւով և սրտիւ  
հապեալ եին ընդ Ս. եկեղեցիս , զորս ինքեանք

շինեցին 'ի նշանակ մեծի բարեպաշտութեան իւր-  
եանց : Զգահ և զգաւազան իշխանական , զապա-  
րանս , զգաստակերտս , զբրդունս և զքաղաքս մե-  
ծամեծս մոռացեալ և կորուսեալ՝ զշինութիւն և  
զպայժառութիւն եկեղեցեաց միայն խնդրէին . զի  
միմիթարութիւն հոգւոյ և քաջալերութիւն սրտի  
'ի խորանի անդ սրբութեան միայն գտանէին : Եր-  
կու հարիւր երեքտասան նահատակը , զորս եկե-  
ղեցին տօնախմբէ 'ի թիւս 1036 վկայիցն . յորժամ  
զիմի մեծի պատերազմին . անօրէն Պարսիկք նեն-  
դութեամբ խարեալ իջուցին դնոսա ՚ի յամբոցէ  
թակ անուն իշխանին . և ձեռնարկին նահատակել  
դնոսա . բայ եղիշէի «Առաջարկեցին ամենեւեան և ասին .  
Քանի անունն ոչեն Տեր Առաքուած մէր , մինչ ուեւ շնուն են Եկե-  
ղեցինք , և անուն ՏԱՇԱՐԻ վիայից , և մոբան Ա. անու-  
նեւուցայ առաջինուցեւը , արքանի արք պետ կովանու երի-  
նաւորէ : Հաստատեցի բան Տեր ընդ բան առջ նահատակուցն ,  
և խանեացի արքան Տեր ընդ անեւու վիճակուցեւըն : և հաճեացի  
Տեր ընդ Եւնուցին էւր : Մեծ է սէր և անձուկ ձեր  
առ եկեղեցին ով երանեալ նահատակը մեր , 'ի  
բոլոր սրտէ հաւասացիք թէ Աստուածն Հայաստանի  
զարիւն ձեր իբրեւ զպատարագն Արելի , Նոյի , և  
Արքահամու ընկալեալ և զազօթս և զաղաշանս  
ձեր իբրեւ զհօս անուշ հոտոտեալ՝ զեկեղեցին շէն  
և պայժառ պահեաց մինչեւ ցայսօր : Հայրենասե-  
րն հաւասայ թէ եկեղեցին Հայաստանեայց , թա-  
գէսափ , Բարդուղիմէսափ , Գրիգորի , որդւոց և  
թոռանց նորա . Դեւոնդեանց , Վարդանանց , Ռա-  
կեանց , Սուդիասեանց , Ատուեանց և այլ բիւրա-  
ւոր նահատակաց արեամբ և աղօթիւք հաստատե-

ցաւ , վայելչացաւ , և փառաւորեցաւ : Զինուորակ եալ եկեղեցին տեսեալ զարիւն մարտիրոսաց՝ իրբեւ դքաջ նահատակ արխացաւ . ՚ի հոգ եւոր պատերազմին . քակեաց զմէհեանս , շինեաց զեկեղեցիս՝ կործանեաց զրտգինս , կանգնեաց զեղանս , և ինքն պատարագեցաւ . ՚ի վերաց փոխանակ Քրիստոսի :

5. ՚ի Հայրենեացս տարադ իր եղեալ նախարարք . ՚ի բանակն Բարելոնի զամն ինն յայժանձուկ լինէին առ եկեղեցիս իւրեանց . զորս ինքնանք ձնուոք իւրեանց շինեցին . ուստի յորժամ զիսոսառ վանող վլայն Աբրահամ՝ աշակերտ որբոց Ղետնեցեանց հաւանեցուցին դառնալ . ՚ի Հայաստան : Խօսէին ըստ Եղիշէի այսպէս « Քանչով յայտ անվացեալ են , ու միայն ըստ Համեաց կարգութիւննեան . այլ ուստի ուստի ուստի շամուշ զիւլուն մեր , և շամուշիւն Պաշտամեայն մեր . շար ՚են կորչեալ հաստոքեցած : Խակ վասն հասանելոց Աբրահամու ՚ի Հայաստան՝ զարմանալի խորհուրդս իմն ՚ի մէջ բերեալ ասէին : « Նուստ ելեւէն ուունէն իբրեւ ամ և իսպուշտեալ զինուոր , նույս զինուորան + ուունէն . նույս և լիլոյս զննացեալ բերիրն . նույս և ուուն Առաջը ուույնուցեալ նույնուշտ լինէ . . . : Հայեցեալ Աստուծոյ ընդ եկեղեցակը անձուկ որտից նախարարաց մերոց և լուեալ աղօմից նոցտ՝ եհան զնոսա ՚ի բանտէ տառապանաց . և երեր յերկիր բարի ՚ի բնակութիւն իւրեանց , զինստէին հարք մեր առգետա Բարելացւոց , և իրբեւ դդերեալ Հըեայս լայն և ասէին . նէ Հոռոցոց զիւլելունէ Հայուորան եացց , հոռոցէ զիւլ և այս իւ Լոյն :

6. Ժողովուրդ Հայաստան աշխարհիս գոլով

միշտ աստուածասէր և Եկեղեցասէր զմահ անձանց  
առաւել ընտրէին քան ՚ի տեսութենէ Հայրենի Ե-  
կեղեցեացն հեռանալ. զի, յորժամ բռնութիւն ինչ  
տարադիր առնելը զնոսա ՚ի ցանկայի Հայրենեաց,  
դային, ժողովէին Եկեղեցիս իրիւ զձագս ընդ-  
թեւօք հաւուց, լսյին մարմնքէին, գքարինս համ-  
բուրէին, և ոչ երբէք յանձն առնուին հեռանալ  
՚ի գրկացն Ս. Եկեղեցեաց : Շահ Արաս վերջին կոր-  
ծանիչն Հոյաստանի, յորժամ զմեծ մասն մի աշ-  
խարհիս գերի վարեալ ՚ի Պարս՝ բնակեցոյց զնոսա  
՚ի յառագան ՚ի ձուզայ և այլ կողմանս Պարսից,  
«Այնու դիսաւորութեամբ (ասէ Առաքել պատ-  
մագիր), զի տւերեսոյէ զաշխարհա Հայոց և շնուսցէ  
զերկիլն Պարսից . . . և հանապաղ խորհէր, թէ  
որպիսի հնարեսցէ վասն աղդին Հայոց, զի մի  
դարձցին յաշխարհն իւրեանց . . . վասն զի ժողո-  
վուրդք Հայոց, որ յաշխարհին Հայոց ծնեալք էին,  
յոյժ բազձային գնալ յաշխարհն Հայոց : Վասն այ-  
սորիկ ծպտեալ կերպարանօք մուեալ ՚ի տունս Հա-  
յոց՝ ծանեաւ դիմափագ սրտից ժողովրդեան, որք  
առ հասարակ ցանկային վասն սիրոյ Եկեղեցեաց,  
վանօրէից, և գերեզմանաց նախնեաց իւրեանց  
դառնալ ՚ի Հայաստան : Աւստի հրամայէ քակել  
զի, Եղմիածին, զնոլ և քարինս բերել ՚ի ձուզայ,  
ցանուն Լջմիածնի շինել զեկեղեցի մի անդ, որ-  
պէս զի սիրաք ժողովրդոց այնու որսացեալք, և  
ինոր Եկեղեցին հարեալք՝ ՚ի դիսաւորութենէ վե-  
րագարձին յետու կասեսցին . զի թէպէտ Շահ Ա-  
րաս վասն խնդրանաց յոյժ աղաշանաց իշխա-  
նացն Հայոց ոչ քակեաց զեկեղեցին Լջմիածնի :

բայց զքարինս հնդետասան ՚ի սեղանոյ և Ռ. տեղեցեաց անտի տարեալ ՚ի ձուղայ դնէ ՚ի յեկեղեցին խօճենց , և հրամայէ կոչել զանուն եկեղեցւոյն էջմիածին : Զայսցանէ երկարո գրելով Առաքել ասէ , անձամբ իսկ հանդիպեցայ ՚ի ձուղայ , տեսի զքարինս ՚ի համար արկի և դրեցի :

7. Ո՞հ , ՚ի յանձկութենէ սրտիս մաշեալ հիւծիմ . յորժամ ՚ի յուշ ածեմ զշինութենէ բազմապայծառ բիւրաւոր Եկեղեցեացն . որք ՚ի բարեպաշտ նախնեաց մերոց հիմնեալ հաստատեցան ՚ի քաղաքս , ՚ի մայրաքաղաքս , ՚ի գեօդս , ՚ի յաւանս , ՚ի յանապատս և ՚ի լերինս . աւաշ Հիքոյս , զի այժմ միայն տեսանեմք զքանդումն , զաւերումն և զխոնարհումն բիւրաւոր Եկեղեցեաց և Տաճարաց մերոց : Ողբա՛մ զքեղ Անի՝ մայրաքաղաքդ Բադրատունեաց , ո՛զբամ զհաղար և մի Եկեղեցիսդ . ողբա՛մ զկիսակործան զմեծ կաթուզիկէդ . զոր երկու ամօք յառաջ տեսի և ողբացի յոյժ : ՚ի քաղաքն Խլաթ մտի , զութն հարիւր Եկեղեցեացն և ոչ զմին կանգուն տեսի . ՚ի Մանազկերտ քաղաքն հասի զերեքհարիւր Եկեղեցեաց զհետան անդամ ո՛չ կարացի նըշմարել . ո՞հ , որպէս գրէ Լաստիվերացին , զժողովուրդն նախ թշնամիք սրախողխող արարին և ապա զեկեղեցիս մեր քանդեալ կործանեցին : Թողում յիշատակել զբաղմաժիւ Եկեղեցիս Արարատեան , Վասովուրական , բարձր Հայոց և Մարտիրոսաց քաղաքին , յորս էին բիւրաւոր Եկեղեցիք , և հաղարաւոր վանօրայք :

8. Ի ժամանակս Ներսէսի շինովի՝ Վարդ պատրիկ իշխան Ռշտունեաց շինեաց զհաղար և մի Եկեղ

զեցիս . որպէս աւանդեն պատմիչք : Յովհաննէս եպիսկոպոս Շահնաւթոնեան՝ ՚ի ստորագրութեան իւրում յերես 210 դրէ այսպէս . «Մարիամ թագուհի ընկալաւ պատուէր յառնէ իւրմէ ՚ի Գալուռն Վասակայ ՚ի վախճանի նորուն տալ կառուցանել զեկեղեցի թուով քառասուն » : Այն Մարիամ թագուհին յետ շինելոյ դայլ եկեղեցիս՝ յամի Տետոն 880 երթայ ՚ի կղզին Սեւանայ , և հիմնարկեալ շինէ անդ Տաճարն երկոտասան Առաքելոց ՚ի լրումն կտակի առն իւրոյ բարեկաշտի : Այն օրինակ թագաւորք , իշխանք և ժողովուրդք մեր ընդ ամենայն դաւառս Հայաստանի , թէ՝ ո՞րքան եկեղեցիս հիմնեցին , և թէ՝ ո՞րչափ ծանրագին սպասք և կալուածք նուիրեցին եկեղեցեաց և վանօրէից . արժան է ընթեռանու զհին զարձանագրութիւնս և զյիշատակարանս նախնեաց , ՚ի պատմութեան Ստեփանոսի Օրպելեան , ՚ի ստորագրութիւնս Յովհաննէս եպիսկոպոսի Շահնաւթոնեան , և յայլ պատմութիւնս և յարձանագրութիւնս , զորս յորժամ ընթեռնու . հայրենամբն , զարմանայ ընդ մեծ բարեպաշտութիւն նախնեաց մերոց մեծաւ զարմանալեօք :

Զ. Ի սերոտ միու թենէ և ՚ի բարեկաշտութենէ ժողովրդոց մերոց շինեցան եկեղեցիք և պայծառացան . զայց յորժամ հոգին միութեան և բարեպաշտութեան ՚ի միջոց տեղի ետ , տիրեաց ազգի մերում անզուգութիւն և անսիրելութիւն , ձեռք նեղչաց մերոց ծանրացան ՚ի վերայ մեր , հանին հեռացուցին զմեղ ՚ի մայրենի դրկացն և ՚ի սուրբ եկեղեցեաց մերոց . Աղատ եկեղեցականք ՚ի ստրկութիւն մատնեցան , և եկեղեցիք կործանեցան Տէր

ետ՝ ի կործանումն ըստաճարն Ոռղոմնի . զի ոլիղծք  
և անթըլիստք սրտիւք մոտանէին 'ի նա , և պղծէին  
զտաճարն Աստուծոյ . զնոյն դատաստան արար Տէր  
ընդ բաղում Եկեղեցիս մեր , յորս մտեալ անխորաս  
ժողովուրդք հայհոյեին զանուն Աստուծոյ . զի ըստ  
Խօրայելի « շրմամք միայն պատու էին զՑէր , ոյլ  
սրտիւք հեռացեալ մեկուսի էին 'ի նմանէ : Աստ  
ուած ոչ երբէք բարկանոյ 'ի վերայ քարի և փայտի  
այլ 'ի վերայ ժողովրդեան , որ 'ի սրբութենէ նորա  
հեռացեալք՝ անկանին 'ի մեզս մեծամեծո :

10. Զինի առման և աւերման Անուոյ՝ քառ սառն  
հաղար երգ ժողովուրդ գաղթեալ 'ի կողմանս Լէ-  
հաստանի , շինեցին անդ զբաղում Եկեղեցիս ըստնմա-  
նութեան Եկեղեցեացն Անուոյ , ոյլ զի անդստին 'ի  
ներքո անդ չոնէին զհոդի հայրենասիրութեան  
և առարինութեան , ուստի ոչ կարացին ընդ միւստ  
պահել զհայրենիտանդութիւնս և զդաւունութիւնս  
Հայուսունեաց Եկեղեցաց : 'ի յօտարասիրութենէ մոլեալ  
մուացան զլեզուն և յատկութիւն աղգին , զի որ-  
պէս անձամք հեռի եղեն 'ի Հայրենեաց , նոյնպէս  
սրտիւք 'ի յեկեղեցական կարդաց : Անուանք իշ-  
խանաց և ժողովրդոց մերսց այժմ 'ի դրունս Եկե-  
ղեցեացն գրոշմեալ տեսանին , բայց յիշասակք նոյս  
ջնջեալք են 'ի յազդաստհմէ մերմէ :

11. Բնդ ամենայն երեսս երկրի , ուր հասին ոտք  
դաղթական Հայոցս , 'ի սահմանս օտարաց հիմնար-  
կեցին զբաղում Եկեղեցիս՝ առ 'ի անկորուսս պա-  
հել 'ի նմա զեռանդն աղգային , դհաւան հայրենի ,  
բաղումք՝ յորս եր կենդանի հոդին հայրենասիրու-  
թեան , կարացին անկորուսս պահել զուղղութիւն

եկեղեցւոյ մերոյ և դանուն աղքութեան , բայց եղեն բազումք եւս , որք ոչ թէ ՚ի բռնութենէ նեղշացն հարկեալ . այլ վասն հեշտասիրութեան կամաւ հեռացան ՚ի ցանկալի Հայրենեաց , կամաւ անձնաւուր եղեն օտարայց , և օտարայցան ՚ի սուրբ դրկացն Եկեղեցւոյ : Այլ են ՚ի գաղթականաց բազումք , որք ՚ի յօտարութեան անդ յիշեցին զԵկեղեցիս և զՃաճարս նախնեաց . և ՚ի հայրենասիրութենէ շարժեալք՝ զհողով ծանրագին նուերս առաքեցին ՚ի Հայաստան՝ առ ՚ի կանդուն և հաստատուն պահել զմացեալ Եկեղեցիս , որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի . . . .

12. Եթէ ոչ լինէին հարք մեր այնչափ Եկեղեցաշն և Եկեղեցանէր , ոչ էր մնացեալ մեզ զաւակ Հայկայ և Արամայ , Եթէ Ա. հարքն մեր ոչ էին թողեալ յԵկեղեցի մեր զերդս շարականաց . վաղուեսն կօրուեալ Էաք զհոգի և զեռանդն Աստուածապաշտեան : Լուր զվեմութիւն և պարզութիւն աղօթից նախնեաց մերաց . ո՞հ , թէ որպիսի Աստուածապայելուչք և զմայելիք են , և թէ որպէս զսիրա և զհոգի մեր ՚ի յաստեացս լինառեալ՝ յիմաննայի խորտնս անմահից ամբառնան : Եթէ մաեալ քո յԵկեղեցին առեր զճաշակ քաղցրութեան երգոց , վասահ եղեց ՚ի քեզ . զի ուխտես յանխուան անրաժմանելի մնալ ՚ի սէր Ա. Եկեղեցւոյ քո . որպէս ուխտեցին հարք քո : Յորժամ պատահիցի քեզ ընդուրաս երիրի անցանել և մաեալ քո յԵկեղեցի ոյլասերից , յորում երբէք չեարես լոել զքաղցրութիւն զվամութիւն և պարզութիւն Հայրենի Եկեղեցւոյ քո . յայնժամ ՚ի խորօց որտի քոչես . ո՞վ պանծալի

Եկեղեցիդ. Հայոց ո՞վ սքանչելի աւանդութիւն, Հայրենի Եկեղեցւոյս, սիրելի ես ինձ, միշտ սիրելի կեանք ես հոգւոյս, զօրութիւն մտացս, բերկրութիւն սրախս, և ցնծութիւն ամենայն աւուրց կենաց իմոց . . . :

13. Եկեղեցին մեր միշտ պարծեսցի 'ի յազատութիւն և 'ի պարզութիւն իւր, զի ոչ երբէք եղ զփականս ընդդէմ' ընթերցման Ս. գրոց, և Աստուածային գիտութեանց չեղեւ մենավաճառ, այլ զամենայն մատեանս, զորս եկեղեցականք մեր ընթերցան, զնոյնս 'ի սկզբանէ հետէ առ հասարակ ժողովրդականք մեր ընթերցան և երկրագդին Աստուծոյ հոգւովի և ճշմարտութեամբ : Աչ բռնութիւնն ո՛չ հաւատաքննութիւն և ո՛չ խարոյէ տեղի գտաւ յեկեղեցին Հայաստանեայց . զի 'ի մասին Աստուածային գիտութեան, քահանայն իրբեւ զժողովուրդն էր, և ժողովուրդն իրբեւ զքահանայն Ուստի յոյժ խարեցան բողոքական քարոզիչք՝ Եկեղեցւոյն Հռովմայնաննիլ կարծելով զմեր եկեղեցւոյ ազատ դրութիւն . 'ի զուր բամբասեցին զմեր, և մեղան ընդդէմ' յայտնի ճշմարտութեան :

14. Գրիդոր մադիստրոս վարժ և հմուտ էր 'ի ինդիրս վարդապետականս և յաստուածաբանականս, 'ի մանկութենէ գիտէր զի. գիրս 'ի վերայ եկեղեցական կարդաց և կանոնաց վիճէր ընդ բազում վարդապետս և եպիսկոպոսս, տայր պատասխանի Յունաց և Արաբացւոց Ս. գրոց վկայութեամբ, մեկնէր զգիրս, գրէր զբազում ճառս և ներրոզս . զագիկ Բագրատունեաց վերջին թագաւոր 'ի մէջ թիւզանդիոն քաղաքի 'ի վերայ աստուածաբանական

ինդրոց ընդ աստուածաբանս Յունաց 'ի վեցն մըս-  
եալ՝ յաղթահարէր զամենեսեանս, և 'ի զարմանս ա-  
ծէր զմիսս նոցա, Սոյնպէս 'ի յաշխարհիկ կարդէ  
դիտունք և իմաստունք բաղումքէին յաշխարհի մե-  
րում. որք զառաքելահիմն զեկեղեցին մեր պաշտ-  
պաննեցին ընդդէմ Յունաց և Պարսից: Ահա քաջ  
նահատակին վարդան, թոռն և աշակերտն մեծին  
Ամակայ Փարթեւի հրաշալի աստուածաբանու-  
թեամբ քաջալերէ և խրախուսէ զզօրս իւր 'ի յԱ-  
տենաբանութեան իւրում այսպէս: «Ի բաղում պա-  
տերազմունս մտեալ է իմ; և ձեր ընդ իս. է ուրեք,  
զի քաջապէս յաղթեցաք թշնամնոյն. և այն ըստ  
կարգին: Մեծ է վկայութիւն Ղեւոնդ երիցու, որ  
'ի յատենաբանութեան իւրում վկայեաց թէ ամե-  
նայն զօրք և զօրապետք Հայոց հմուտ էին կտա-  
կարանացն Աստուծոյ. «Եւ այլ չ'ու երիբունից  
ունի չեր առջնանաբանութեանը, չ' առ չ' ունի առջնան եւ  
և հմուտ էւ Ա. կոտերանացն»: Ի օրդ յեղանակ Եղիշէի:

45. Որպէս 'ի ժամանակս առաքելոց 'ի յեկե-  
ղեցող ոչ էր խտիր ընդ հասակ և ընդ աստիճանս  
մարդկանց, այլ ամենայն հասակի և սեռի հաւա-  
սարութիւն պահիւր բարեպաշտութեամբ և եր-  
կիւղածութեամբ, զնոյն հաւասարութիւն պահէ  
առաքելական Եկեղեցի մեր մինչեւ ցայսօր. զի  
ծերք և տղայք, գիտունն և անդէտն, աղքատն և  
հարուստն, տէրն և ծառայն 'ի տաճարի սրբու-  
թեան Վրիստոսի միաբան կան յաղօթս առ պար-  
զեւատուն ամենեցուն. առ Հայր, առ Որդին, և  
առ Ա. Հոգին ճշմարտութեան և խնդրեն 'ի նմանէ  
զողորմութիւն և զթողութիւն: Այլ երանի թէ որ-

պէս ժողովուրդք մեր 'ի յեկեղեցւով պահեն զհաւ  
ւասարութիւն, վեղայրութիւն և զմխութիւն, զնոյն  
ամենայն ուրեք, և յամենայն ժամանակի պահեին՝  
անարատ վարուք քաղաքավարեալք 'ի մարմնի . զի  
զի՞նչ օդուտ է ունել յեկեղեցւով մխութիւն . իսկ  
արտաքյ անմիաբանութիւն . 'ի ներքս եղբայրու-  
թիւն, արտաքս ատելութիւն . 'ի ներքս սրբու-  
թիւն, արտաքս անարբութիւն, 'ի ներքս աղօթք,  
և արտաքս հայոցութիւն . 'ի ներքս բարեպաշ-  
տութիւն, և արտաքս ամբարշտութիւն . 'ի ներքս  
Եկեղեցւոյ պարկեցտութիւն, և արտաքս Եկեղեցւոյ  
անառակութիւն: Այդպամենայն խորհուրդս և գործո  
րարիս, զօր ունիմք 'ի մեջ Եկեղեցւոյ և սիրեմք 'ի  
Ս. որտէ և յանեկեղծաւոր հաւատոցն զնոյնս անփո-  
փոխ պարտիմք ունել յամենայն ուրեք և սիրել,  
զի այս է ընդունելի առաջի Աստուծոյ, զի ընդ ամե-  
նայն տեղիս է աէրութիւն նորա:

16. Հարքն մեր շինեցին զեկեղեցիս, զի զժո-  
զովուրդն 'ի նմա համահաւաքեալ կրթեցեն 'ի  
յերկիխ զ և պատուիրանո ջեառն. ըստ այնու «Հուշ  
կ ոռոն ու և երիբորից 'ի գոճար սառը ու երիւնիւն չուն»:  
'ի յեկեղեցւոյ ուսանիմք զկասպ եղբայրակրութեան  
անխղելի պահել պատուիրանան Յիսուսի, թէ  
«Այսու ծանիցեն զնել թէ իմ աշակերտք էք,  
եթէ սիրիցէք զիմեանս: 'ի յեկեղեցւոյ ուսանիմք  
զանձն 'ի վերայ բարեկամաց զնել «Մեծ քան զոյն  
սէր ոչ ոք ունի, զի դիցէ զանձն 'ի վերայ բարե-  
կամաց իւրոց: Յեկեղեցւոյ ուսանիմք 'ի բաց թօ-  
թափել յանձնաց մերոց զամենայն զըէն, զնախանձ  
և զատելութիւն, ըստ Առակողին խրատու թէ,

«ի բաց արա 'ի քէն. ո'րդեակ դքէն , զսրտմառութիւն , զբարկութիւն զնախանձ և մեծամասութիւն : Բայ հրեշտակաց » 'ի յեկեղեցւոյ ուսանիմք զբաղմապատիկ խմասառութիւն Աստուծոյ» , զի Ս. եկեղեցին է մայր , գայեակ և դաստիարակ , ուսուցիչ , սաստիչ և յանդիմնիչ , ներուղ , միսիթարոլ , մաքրիչ և արդարացոցիչ : Միրոք վշտահարք 'ի տաճարի ջեառն դասանեն զմիսիթարութիւն բանիւն Աստուծոյ , որ բերանեով մարդարեկց պատուիրէ քահանայից թէ և միսիթարեցէք , միսիթարեցէք զժողովարդ իմ , առէ Տէր , քահանայրդ խօսեցորոք 'ի սիրա ժողովրդեան . . . » : Մեղծօք ծանրաբեռնեալք և տաժանեալք 'ի խորանի անդ դան 'ի խոստովանութիւն և յաղաշխարութիւն բանիւն Յիսուսի , Աէ 'եկայք առ իու ամենայն ծանրաբեռնինք և եռ հանգուցից զձեղ . խոկ արդարք 'ի տաճարի իրրեւ զլուսային զչողին ճշմարտութեան 'ի սիրա և 'ի միտու և կոյժակն շնորհաց 'ի շոթունը առեալ 'ի յաղօվթելն մարդարէանան , և Տէր խոնարհի յաղաշանս արգարոց և բնակի 'ի նոսա ըստ Պօղոսի թէ « Գնացից 'ի նոսա , և բնակեցայց 'ի նոսա , և եղեց նոցա Աստուծած , և նոքա Եղիցին իմ ժողովուրդ .ք» : 'ի մէջ եկեղեցւոյ իրրեւ յանդիւման երեասայն Աստուծոյ ամեւարտաւանք հայելով 'ի տկարութիւն խրեանց՝ խոնարհին . խոկ հեղք և խոնարհք սրտիւք՝ հայելով 'ի մեծ վայելչութիւն փառացն Աստուծոյ՝ բարձրանան . անդ վարթամք և մեծաստենք թողեալ զադահութիւն՝ դդանձա խրեանց բանան աղքատաց . խոկ տնակիք և աղքատ տրովք ողորմածաց գտեալ զմիսիթարութիւն՝

փառաւորեն զԱստուած : Զի անդ «ամենայն լեռինք և բլուրք խոնարհեցին, և եղիցին առապարք՝ ի հարթու ճանապարհաց» :

18. Արդ եթէ ՚ի սոյն բարեպաշտական միտու մոտեր յեկեղեցին « վարձք քո բազում են յերկինս . զի զԱստուած և զեղուայր . զհայրենիք և զազդութիւն ՚ի միասին սիրեցեր : (՚ի յամենայն ուրեք) պարտ է մեզ յամենայն ժամ կալ յազօթս և մի ձանձրանալը հրաման է և ջեառն մոտանել ՚ի սենեակ վակել գդրունս և կալ յազօթս ՚ի ծածուկ , և ընդունել ՚ի հօրէ զվարձս յայտնապէս , բայց առաւել բարուք է մեզ ՚ի մէջ տաճարի Աստուծոյ ընդ բազմութիւն ժողովրդեան Աստուծոյ առանց փարիսեցական ամբարտաւանութեան՝ կալ յազօթս . զի ասէ « տեսցեն զգործս ձեր բարիս և վառաւուրեցեն զչայր ձեր որյերկինս է , ՚ի բազմութեան ժողովելոց իջանէ յերկինից որդին Աստուծոյ « զի ուր ժողովեալ են յանուն իմ(ասէ) երկու կամ երեք . անդ եմ և ես ՚ի մէջ նոցա » : Խակ յորժամ հապարք և բիւրք ժողովեալք են յանուն նորա , Հայր Որդի և Հոգին Ս. բազում հրեշտակօք իջանեն ՚ի նոսա աներեւութապէս որք ՚ի սէր և ՚ի շինութիւն եղբարց մտանեն ՚ի յեկեղեցի : Զի հիմն եկեղեցւոյն Քրիստոսի ՚ի վերայ սիրոյ և միութեան հաւատացելոց հաստատեալ կայ , զի ուր չիք սէր և միութիւն , անդ չիք ո՛չ նիւթական , ո՛չ դինուորեալ և ոչ յաղթական եկեղեցի : Պասնդի ՚ի յերկինս , ուր անդրանկաց հրեշտակաց և երանեալ հոգւոց յաղթական եկեղեցին է , անդ միշտ սէր համատարած միշտ ուր անսպառ թագաւորեալ է . նոյնպէս ՚ի զին

ւորեալ եկեղեցին , ուր 'ի հաւատս միացեալ են  
ժողովուրդք սէր և միութիւն միշտ թագաւորելոց  
է . իսկ 'ի նութական եկեղեցին , ուր տաճար և  
տեղի համահաւաքեալ հաւատացելոց է , միշտ սէր  
և միութիւն թագաւորեսցէ յաւիտեան :

—————

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

## Վ Ա Ն Ո Ր Ա Յ Ք

1. Յիսուս և աշակերտք իւր զանուն ժողովատե-  
ղոյն իւրեանց կոչեցին օթեւանք կամվանք . «վար-  
դապետն ասէ , ո՞ւր են օթեւանքն իմ , ուր աշա-  
կերտոք հանդերձ ուտիցեմ զջատիկն» : Եւ ելին ,  
ուր վԱնք նոցա իսկ էին , Պետրոս և Անդրեաս... ,  
վերնատունն խորհրդոյ էր օթեւանք և վանք Յի-  
սուսի և մետասանից . ուր Յիսուս յետ ուտելոց  
ընդ աշակերտն զհին գառն օրինակին , ինքն ճըշ-  
մարիտ գառն Աստուծոյ՝ զմարմին և զարին իւր  
ետ մեզ փոխան հնոյն տաելով «Առե՛ք կերե՛ք ,  
այս է մարմին իմ , արբե՛ք 'ի սմանէ , այս է արիւն  
իմ . . . » : Յիսուս բազում անգամ նախ քան զչար-  
չարանս , և բազում անգամ յետ չարչարանաց և  
յարութեան եղիտ անդ զաշակերտս իւր , և յետ  
համբարձման աւուրս տամն անդ 'ի վանս վերնա-  
տան սպասէին գալստեան Հոգւոյն Աստուծոյ , անդ  
զինի յիսներորդի յարութեան ընկալան Առաքեալք  
զչողին սուրբ . արրեցան անմահական բաժակաւ ,  
և հրաւիրեցին զերկիրս 'ի յերկինս : Վասն այսորիկ  
յորժամ առեմք վանք և վանօրույք . իմանամք զայն

սուն , օժեւան , ժողովարան , խորհրդարան օրբերոցն Աստուծոյ . զի սուրբք անդ ժողովին և բնակին , անդ ուսանին և ընդունին դշտին դիսութեան և խմաստոթեան . անդ մտեալ 'ի խորհուրդք' խորհրդակից մնին խորոցն Աստուծոյ և պատրաստին 'ի քարտղութիւն բանին կենաց , որպէս Առաքեալքն 'ի Ա. վերնատան :

2. Խոկ մենաստանք և կրօնաստանք հաստատեցան 'ի նշանակ առանձնութեան Յիառասի , որ 'ի չոգւոյն սրբոյ վարեալ յանապատ' քառամնօրեայ պահօք և աղօթիւք յաղթեաց հնարիցն վորձողին՝ յօրինակ այնոցիկ « որոց ոչ է մարտ ընդ մարմնոյ և արեան , այլ ընդ Խշանութիւնո և ընդ պետաթիւս խաւարիս այսորիկ ընդ այս չարութեան թխուս բազում անդամ երթայր 'ի լեառն միայն և հաներ դդիշերն ամենայն յաղօթմն Աստուծոյ . զայս ուսան առաքեալք 'ի նմանէ և ուսուցին աշխարհի . ընդ ամենայն երկիր ուր հասին , շինեցին զեկեզեցիս , հիմնարկեցին վանօրայս և միայնարանս , հաստատեցին 'ի նոսա միանձունո և կուսանս Ահա ձեռք նախկին Լուսաւորչացն մերոց թագեսոի և Բարդուղիմէոսի 'ի Հայրաստան երկրի հիմնարկին բազում վանօրեից մենաստանաց և կրօնաստանաց . Բարդուղիմէոս 'ի գաւուախն Անձեւոցեաց հաստատեաց վիմնաստան կուսանաց , շինեաց 'ի նմայանուն սրբուհւոյ Աստուածածնի եկեղեցի մի , եղ 'ի նմա զհրաշատիզ պատկերն Տիրամօր կուսին 'ի պաշտպանութիւն կուսանաց և 'ի պահպանութիւն աշխարհին : Զի դրէ Խորենացին թէ « մերձ 'ի Տիրիքս գետ զկանդնեալ պատկերն Անսահտայ կործան-

եաց և 'ի տեղի նորա զեկեղեցին հիմնարկեաց, որը  
անուանեաց Ա. Աստուածածին, եղ 'ի նմա դժբաշողի  
պատկերն : «Եւ շինեալ առ նովաւ յամուր և զգու-  
շուր տեղով զմենարան Հթդիմիջ վԱնք կոչեցեալ.  
Ժաղովեաց անդր զկուսանս, և զսորը կանայս,  
որոց զբոխ կացոյց զՄարիամ զքոյր Յուսիկ իշխա-  
նին, և երկրորդ նորա զԱննայ դքոյր Արմդդանայ,  
և երրորդ նորին զՄարիժոյ զքոյր Մաքովորի :  
Յայսմանէ խակ յայտնի եղեւ թէ մաքրափայլ կու-  
սակրօնութիւն ՚ի յԱռաքելոց անտի եմուտ և հաս-  
տառեցաւ. 'ի Հայաստան, որով առաքինացան բա-  
զում կուսանք ՚ի զ ստերացն Հոյոց. և զանձինս իւր-  
եանց իրրեւ զորով անարատ նու իրեցին ՚ի սեղան  
փառացն Քրիստոսի : Դուստր Անաւորուկ արքա-  
յին Հոյոց Ա. Սանդոխու լուեալ քարոզութեան  
թագէի առաքելոյն՝ արհամարհեաց զկուսանս, սիր-  
եաց զՄիտու, անարդեաց զմնցաւոր զկեանս աշ-  
խարհի, ընարեաց զկուսական և զմարտիրուական  
անեղծ և անժառամ պոտին, ՚ի Հայաստան աշխար-  
հէս նախընծայ պատարագ և ողջակէղ որրանուէր  
ընծայեցու. Հօր ՚իյերկինս : Կոյն կուսութեամբ  
մայր եղեւ կուսանացն Հոյոց . գուստր արքային  
մերոյ, դուստր եղեւ երկնաւոր թագաւորին :  
Բազում միայնարանս, վանս, և տաճարո հիմնեաց  
սուրբն թագէ ՚ի Հայաստան, որք մինչեւ ցոյսօր  
՚ի նմանէ շինեալ և հաստատեալ յիշասակին :

3. Կուսաստանք, մենաստանք, և վանորայք  
բազմացան և ծագկեցան ՚ի ձեռն Գրիգորի, և 'ի  
ձեռն Տրդատայ բարեղաշտի . Ա. Լուսուորին մեր  
յառաջ քան զքահանայութիւն՝ զկին իւր զՄա-

քիսամ յղեաց 'ի վանս կուսանաց և զԱրիստակէա  
զորդի իւր եղ 'ի վանս միանձանց , և ինքն զանձն  
բազմաց օրինակ տուեալ՝ բազում անգամ ա-  
ռանձնանայր 'ի լերինն Սեպուհ , 'ի յայրն Մանեայ,  
և յայլ լերինն 'ի յանապատս և 'ի վանս կալ առան-  
ձին յազօթս . ըստ որում ասէ Ադաթանգեղոս .  
«Եւ ինքն ընդ ժամանակս Ժամանակս յանապատ  
լերինն ելանէր , որ ինքեամբ իոկ և իւրով անձամբ  
օրինակ ցուցանէր , առեալ զոմանս ունանս յաշա-  
կերտացն իւրաքանչիւր մենաստանաց . . . : «Սեր-  
եաց (ասէ) Լուսաւորիչն զանապատտկան զկեանս .  
որպէս զի ամենայնիւ պսակեսցի առաքելականաւ ,  
հայրապետականաւ և միաւորականաւ առաւել ըն-  
տանեցուցանէլ մարդն ընդ Աստուծոյ» : Գրի և Յայս-  
մաւորս թէ . «Շինեաց երաննելին Գրիդոր զբազում  
վանօրայս , կուսանոցս և հիւրանոցս» :

4. Թիւք վանօրէից , կուսաստանաց և մենաս-  
տանաց առաւել բազմացան 'ի ձեռն մեծին Ներ-  
սեսի . կարդք կղերականաց և վանսականաց 'ի նոր  
բարեկարգութիւնս վերամբարձան . որպէս աւանդէ  
մեզ Մեսրոպ պատմիչն , թէ՝ «Յառաջ քան զձեռ-  
նագրութիւն Ներսիսի վանսականք , և եպիսկոպոսք  
և միանձնականք 'ի քաղաքս և 'ի գիւղս ընակէին ,  
զոր ո՛չ հաւանեալ մեծին Ներսիսի . . . Տայր հրա-  
ման շինել Եպիսկոպոսանոցս և Եղբայրանոցս (մե-  
նաստան) մեծամեծս և փոքրունս երկու հազար և  
քառասուն . . . և բաշխեաց յեղբայրանոցս դիւղս  
և գաստակերտս 'ի միսիթարութիւն նոցա» :

5. Բատ այսմ յետագայ հայրապետք , վարդա-  
պետք , թագաւորք և իշխանք՝ մի զինի միոյ ոիւ-

բովն Յիսուսի վառեալ շինեցին ընդ ամենայն կողմանս աշխարհին Հայոց զվահնս մեծ ամեծս և փռքունս . որոց թիւք նախոլին և յետագոյ սրատմիչք հասուցանեն մինչեւ ի 10 — 20 հազար , և 'ի նստինակեալ հրեշտակակրօն միանձանց կրօնաւորաց , կուսանաց վանական վարդապետաց ի60—70 հազար Միայն 'ի վառպուրական ընդէւպերա ծովուն թվաւ նեաց թուէին վանս 900 . զորս յիշատակին Յայումաւորք և Յորպելեան պատմիչն : Խակ յաւարս Աշոտոյ ողբորմածի 'ի վանս Հազրատաց և Ամնահնի բնակեին կրօնաւորք թուուզ 500 , զորս այսպէս յիշատակէ Առողիկ պատմագիր . «Այլ քան զոսաւառաւել դումն 'ի ճգնողական կեանս յաւորս արքային Աշոտաց ողբորմածի , կրկին մենաստանք Հազրատ և Սանտհնին 'ի 500 կրօնաւորաց բնակեալ յայնեւամ' :

6. Թաղաւորք և նախարարք մեր հետ հիմնարկելոյ զվանօրայս 'ի սեփական ժառանգութենէ իւրեանց՝ զրազումաւանս , դիւզու և դաստակերաս նուիրեին մենաստանաց 'ի կալռւածս . զի Ադամթանգեզս վասն Տրդատաց գրէ այսպէս «Յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ կարդեաց չորս չորս հոգոս երդոց յամենայն ագարակ տեղիս . խակ յաւանս եօմն եօմն հոգոս երդոց 'ի ծառայութիւն սպասաւորութեան քահանապյութեան՝ նուէրք ոլլուզոց » : Բայ այսմ ամենայն յետագալ թաղաւորք և իշխանք կրօնասիրութեան և և եկեղեցաշխնութեան նախնեաց հետեւեալ զաւանս , զդիւզո , զդաստամկերսու , զդաշոսո , զարտորայս , զայզիս զիլրպակս « զրազում խաչինս և զյուլով դարդու ունկնդէնս և

արծաթեղէնս նուիրեցին ՚ի վանս և ՚ի վանտկանս .  
զի հաստատուն և անշարժ պահեցեն զի նախնեաց  
հիմնարկեալ վանօրոյս ՚ի ոռայծառութեան և ՚ի բա-  
րեղարդութեան , որովք յիշեցին անուանք կեն-  
դանեաց և ննջեցելոց իւրեանց ՚ի մազթանս կրօ-  
նտորաց և վանտկանաց . որպէս տեսանի ՚ի կտա-  
կադիրու և ՚ի յարձանագրութիւնս . որք առ դրունս  
և առ որմն առաջ կան քանդակեալք : Զի թէ-  
պէտ ՚ի բազմաթիւ վանօրէից նախնեաց մերոց , սա-  
կաւ մնացորդք ունին այժմ թեմս , աւանս , գիւղ ,  
անդաստանս և այդիս . և նուազեալ վանականք ժո-  
ղովին ամի ամի զալողի , ցորեան՝ ՚ի տեղի տասա-  
նորդի . ոչխար , մտտաղ , հոդերամին , քառամնից . ՚ի  
տեղի նուիրաց . այլ առաջ զի ՚ի վանօրէից ՚ի հազա-  
րաց զմին . ՚ի վանտկանաց ՚ի հինգ հազարացն՝ զմին  
հազիւ թէ ունինմք այսօր ՚ի ձեռնին . և զայնս եւո ընդ-  
լով ծառայութեան և ընդ հարկաւ անկեալս . . . :

7. Նախնիք մեր ՚ի վերոյ գեղեցկադիր յարմա-  
րութեանց եղին զհիմնւնս վանօրէից . կիրթ ճաշակաց  
և ախորժակաց զհետ եղեալ՝ ՚ի մէջ բարձրաբերձ  
լերանցն Հայաստանի . ՚ի վայելչազարդ բլուրս ա-  
նապատի , ՚ի ջրաւէտ և ՚ի ծազկաւէտ ձորձորս հով-  
տաց , ՚ի ջրջահայեաց դաշտս բուրաստանաց . որոց  
օդն առողջաբար էր , ջուրն բարեհամ և սառնորակ-  
երկիրն ընդարձակ և արգաւանդ . լերինք անտա-  
ռախիտք և ծաղկազարդք . ՚ի նոյն դրախտալայր  
տեղինն հաստատեցին զշինուածս ամենայն վանօ-  
րէից . ո՛հ յորժամ առք հայրենասիրիդ ելանէ յայց  
Հայաստանի և ցանկայ ժողովել զշուշանս ՚ի հով-  
տաց . ելլէ յաւուրս դարնայնոյ , զրջեսցի զվանո-

րէիւ.քն հայրենի . անդ տեսցէ զգբախտն վասիկութեան , անդ տեսցէ զփակեալ պարակէզն Սողոմօնի , անդ տեսցէ զքառակտակ ազգիւրն Եգեմայ , անդ տեսցէ զմեծամեծս նախնեաց . և ՚ի կուրծս իւր զըսցէ զիշատակ հայրենասիրութեան նոցա . յոյնժամ անդ ինքն եւս վառեսցի ՚ի խանդ հայրենասիրութեան նոցա :

8. Առ նախնեօք ՚ի բազում վանօրայս մեր , թէ՝ ո՞րպիսի և ո՞րչափ կարդս կանոնս և օրէնս խստամշրերս հաստաեցան ՚ի մարզս միանձանց և վանականաց . ո՞հ , չկարեմ աստանօր պատմել թէ ընդդարս և ընդժամանակս ո՞րպիսի հրեշտակակրօն միանձունք , ականաւոր մատենագիրք , ներհուն իմաստաէրք և քարոզիչք ծաղկեցան և փայլեցան : Եւ թէ ո՞րչափ և ո՞րքան մաքրասուն կուսանք . ճգնաւորք և կրօնաւորք առաքինացան՝ չբաւեմ զեռսա յանուանէ յիշատակել : Զմատենսագրութիւնս և զպատմութիւնս նախնեաց ընթերցեալ՝ քաջիսկ տեղեկանալ կարես որչափութեան նոցա և առաքինի վարուց նոցա : Ի բազմոց զսակաւոն յիշեցից՝ առեալ ՚ի պատմութենէ Ստեփաննոսի Յըսկելեան . զվանսն թանահատի , վազասնի , երեցվանի , Շատեաց , Խստակրօնից և Քարակոմի . սոքա ամենեքեան կոչէին անհանգստից վանք . յորում բնակեալ խստակրօնիցն ՚ի դասս երկուս բաժանեալ՝ զգչերապաշտօն վարիտխակի մինչ ընդ առաւօտ երդովք հոգեւորովք և սազմոնելով ՚ի դլուխ հանէին , ուստի մշտապաշտօնք կոչեցան : Ակիզին այսմիկ կարգ ասդաշտութեան ՚ի Սահակայ Պարթեւէ հաստատեցաւ ՚ի վանօրայս մեր՝ դորս պատմէ յօռ-

րենացին . «Սա (այսինքն Առաջակ) ամենայն տռաւքիւնութեանց հարցն նմանեալ՝ աղօթիյն մաստմբ առաւելեաց . քանզի ստացաւ աշակերտա 60 ըստ նմանութեան մայրաքաղաքացն Ապուգելից . արք կրօնաւորք . . . որովք մշտնչենուոր պաշտմամբ կառարէր գկանոնս :

9. Կային 'ի հնումն 'ի վանօրայս մեր ուսումնարանք յառանդ առանդ աւորաց , յորոց գետք իմաստութեան , և աղրիւրք դիտութեան քղիւէին հանապազօք՝ և ծաւալէին 'ի միտս և 'ի սիրտս հանուր հաւատացելոց , զի այն ընտիր ընտիր հայրապետք , եպիսկոպոսք , վարդապետք և քահանայք իրեւ քառակտուկ աղրիւրք եղեւմոյ 'ի վանական վարժոցաց ելանէին և շրջէին ընդ ամենայն քաղաքն Հայաստանի , ուսուցանէին , վարդապետէին զրան կենաց , իրրեւ հայր հովուէին զհայաստանեայս : և ինամակալ լինէին որբոց և ոյրեաց : Աւստի գրէ Ասողիկ , թէ՛ Մաշտոց կաթողիկոս շինեաց վանս և անուանեաց Առաքեալ . ուր առէ , «Ժողովեցան եղբարոց բազմութիւնք՝ կանոնադ բութեամբ սահմանաւորոյն Բարսղի , միակրօնք 'ի տան Աստածոյ եղեալ ստանալով զրազմութիւն զրտոց սրբոց , զի լուսաւոր եղիցին աչք հոգւոց 'ի տեսութիւն ճանապարհին ջեւառն ըստ անստերիւր ու զեւորութեանց : Քարձեալ նոյն պատմիչ Յայամ ժամանակի (ի 10րդ դար) շինեցաւ Նարեկ յիշտունեաց դաւառին նոյն կարդադրութեամբ՝ բազմազարդ պաշտօնապայծառ երդ եցողոք և գրական գիտողոք : Արդիք ազատաց , իշխանաց և նախարարաց գիմէին 'իդպրոց վանօրէից . և 'ի վարդապետ վարդապետաց անտի ուսու-

նէին զուսումն Ա. քրոց և զգիտութիւն արտաքին ի-  
մասասիրաց. անդ՚ի հոգեւոր արանց ընդունէին ըդ-  
հոգին Աստուածափութեան և հայրենասիրութեան.

40. Վանօրայք առ հասարակ՝ քաղաք ապա-  
տանի էին անապաւէն տարակուսելոց. ուր ձերք,  
հիւանդք, աղքատք, որբք, այրիք և ովատաժէաք  
դիմեալ՝ դարման և օգնութիւն գտեալ միսիթ արէին  
՚ի սիրու, և բերկրէին ՚ի հոգի, ի ժամանակս հա-  
լածանաց, վանօրայք բերդ ամբութեան, և աշտա-  
րակ հզօր էին ընդդէմ երեսաց թշնամնոյն. զի ժո-  
ղովուրդք մեր բազում անդամնանեօք հանդ երձ  
՚ի վանն ապաստանեալ՝ ՚ի ձեռանէ դերչայն զիր-  
ծանէին. զի մինչեւ ցայսօր տակաւին գտան բա-  
զումք ՚ի վանականաց՝ և ՚ի վանօրէից, որք նեղե-  
լոց և հալածելոց աեզի տակաստանի եղեալ՝ վան-  
ձինս և զհոգիս բազմաց փրկեցին ի գերութենէ Պար-  
սից և այլոց . . . . Այսպիսի աղէտայի զխպուածոց  
հարք մեր և մեք խակ ականատես վկայ եմք. յառաջ  
քան զամն 48՝ իշխովն Երեւանայ Հասան Խան, յոր-  
ժամ ասպասաւէր զկողմամբք.ք վաղարշակերտի (Ա-  
րաշկերտի), կէսք ՚ի ժողովրդոց մերոց աճապեր-  
եալ տագաւինեցան ՚ի վանն Ա. Յովհաննա. (Խաչքի-  
լիոէ). խոկ կիսոցն գերի անկեալ ՚ի ձեռա Խանին՝  
որ հրամայէր խրոցն՝ վարել գնուաս ՚ի Պարս, բայց  
Խաչառուք վարդապետ՝ առաջնորդն նոյն վանից,  
Խորախոյս տուեալ ժողովրդեան՝ առնու ընդ իւր  
զակաւս ՚ի քաջայն, և զիսցաղնաբար յարձակի ՚ի  
բազմութիւ զօրմն Պարսից. ցրուեալ հայածէ զնոսա  
և զգերիս թափեալ ՚ի ձեռաց նոյն՝ զարձուցանէ ՚ի  
վանս և վախճանի ՚ի թիւ 1824. և ամփոփեն զմուրմին

Նորա 'ի վանս կոփայ. որոյ տապանագիրն է այս .  
•Այս է տապանն Խաչատութին, քաջաքարող վար-  
դապետին և 'ի վանից իւչքիլիսային : Սիմեօն վար-  
դապետ վանահայր նոյն վանից իրրեւ ականառես.  
գրեաց զքաջութիւն հայրենասէր Խաչատուր վար-  
դապետիս : Սիմեօն վարդապետ՝ սպանաւ. 'ի Մա-  
րաց 1860, բայց սպանողք նորա ցայսօր ոչ ընկալան  
զպատիժ պատուհասին :

11. ԱՇ, Եթէ ցարդ բովանդակ վանօրայք մեր  
սոյն օրինակ 'ի շինութեան և. 'ի հաստատութեան  
մնային , եթէ վանականք մինչեւ ցայսօր յարատե-  
ւէին 'ի նախնեաց բարեկարդութիւնս . և եթէ  
ժողովուրդն ըստ մոտաց նախնեաց հայէր 'ի վանս  
և. 'ի վանականն՝ Հայաստան կրկին գտեալ էր զիւր  
զառաշին ցանկալի բարեկարդութիւն , և զգօրու-  
թիւն . բայց չէ պարտ վհատիլ հայրենասիրին , զի  
գեռ ըստ բաւականին ունիմք 'ի ձեռին զիսնս և  
զվանօրայս , որք միայն ձեռնտութեան հայրե-  
նասիրաց կարօտին : Եւրոպացի ճանապարհորդք  
որ վասն ընդարձակ սահմանաց վանօրէից մերոց  
գրեցին, վկայեցին, թէ՝ սեփհական գաշտավայրք և  
երկիրք վանօրէից Հայոց՝ բաւական են զժողովուրդ  
մի կերակրելց և այն . բայց աւազ, զի այժմ աչօք  
իսկ տեսաք, թէ բազումք 'ի կալուածոց վանօրէիցն՝  
յափշտակին 'ի յօտարաց, է որ բռնութեամբ, է որ  
հնարիւք , և է որ դողութեամբ : Արդ փութաս-  
ցին որդիք Հայոց զաւանդան նախնեաց պինդ ու-  
ռնել 'ի ձեռին . կենօք և մահու պաշտպան կալ  
ժառանդութեանց նոցա , զի նա որ հայրենասէր է,  
միշտ մորմոքի ընդ աւեր և ընդ յափշտակութիւն

կալուածոց հարցն և բերկրի ընդ շինութիւն և ընդպայծառութիւն նոցաւ Ռւսով՝ փութայ իրեւ հարազատ որդիք՝ զմաղ մի անդամ ՚ի կալուածոցն չկորուսանել՝ ապա թէ ոչ . . . :

12. Նախնիք՝ թէ առ. ինչ միտս հաստատեցին զվանօրայս , հասեալ ՚ի բարի նպատակն իւրեանց , վայելեցին զի ու լին , զի վանօրայք պահեցին գքրիստոսական կրօն ՚ի Հայաստան , իրրեւ պահապան հրեշտակ . վանօրայք պահեցին զժողովուրդն ՚ի ծոց հայրենեաց իրրեւ ցանկ և պարիսպ այգւոյն հայրենեաց , վանօրայք պահեցին յորդիս Հայկայ զգիր , զգպրութիւն և զեղզուն իրրեւ վարժիչ և ուսուցիչ հայրենի աւանդութեանց , զի սիրու և հոգին նախնեաց , ընդ վանս և ընդ սրբավայր տաճարս այնչափ անրաժման սիրով միացեալ էր՝ մինչ զի ՚ի ժամանակս սոսկայի հալածանաց առաւել յօժարէին հայք զմահ ճաշակել , քանի թէ ՚ի հայրենաշէն վանացն բաժանիլ Սենեքերիմթադաւորն Արծրունի՝ նեղեալ ՚ի կատաղի յարշաւանաց Նետողաց , ակատնայ կամօք տայ ցլասիլ կայսրն զլասապուրական զհայրենի աշխարհն իւր . և զիտիսարէն ընդունի ՚ի նմանէ զերկիիրն Սերաստեամ՝ 40,000 զօրոք , և 400,000 բնակչօք ելանէ ՚ի վասպուրականէն , և երթայ ՚ի Սերաստիա : Սակայն զվանօրայս վասպուրականի , զորս իրրեւ զսիրու և զհորդի հայրենեաց սիրէր , ոչ տայ զնոսա վասկի , այլ զսեփհական զգիւզս զադարակս իւր կատակաւ թողու վանօրէից . և պատուէր տայ որդւոց իւրոց՝ զիյետ վաղճանին՝ զմարմին իւր տարեալ հանգուոցեն ՚ի վարագ՝ ՚ի մայր մենաստանացն վասպուրականի . ուստի ՚ի

վաղճանել արքային, Դաւիթ և Գորկէն զմարմին  
հօրն իւրեանց տարեալ 'ի Վարագ Հանդուցին 'ի  
որահ իւրակերտ եկեղեցւոյն առ քնարանօք կե-  
նակցի իւրոյ Խօշխօշ տիկնոջ : Մարմինք Մամիկո-  
նէից , Քաջին Մուշեղայ , Դայը Վահանի , և որդւոյ  
իւրոյ Մմբատայ , և մժուանն Վահանայ , և նոյնաքս  
մարմին Վարդ Պատրիք իշխանին Ծառանեաց հան-  
գուցեալ կան 'ի վանս Գլակայ : 'ի վանս Հուռմասի .  
(այն է Խօշայ) հանդուցեալ կան պատուական մար-  
մինք Բագրատունի թագաւորաց և իշխանաց Յու-  
ժամ' Հայրենասէլն այց Ելանէ Ա. շիրմայն առանց  
աղի արտասառաց ո՞հ չկարէ հայել 'ի մահարձանու-  
նոցա , և ոռանց ազեկուոր հառաջանաց չկարէ բն-  
թեռնուլ զտապանագիրս նոցա : Այսոքէս դոգ թէ՝  
համօրէն թագաւորաց և իշխանաց մարմինք հան-  
գուցեալ են 'ի վանտօրայս Հայաստանի : Զի ոմանք  
'ի քրիստոնասէր թագաւորաց և յիշխանաց մերոց  
առ կենդանութեամբ իղձ մեալ բարեպաշտութեամբ  
կնքել զառօրեայ կենցաղս խթանց , բայց յորժամ'  
վասն աշխարհային դրազմանց զիղձս իւրեանց չկա-  
րէին 'ի կատար ածել ուխտինք իննդքէին , և կոտ-  
կաւ հաստատէին . զի յետ վաղճանի մարմինք իւր-  
եանց ամփոփեացին 'ի վանս՝ հազորի ակլից դտանել  
ուկերաց որբոյն :

13. Տրդատ արքայ յետ այնչափ յաղթութեանց՝  
մեծագործութեանց ուսեալ 'ի վարուց սրբայն Լու-  
սաւորչի , ճգնողական վարուց վափառգեալ առանձ-  
նանայ 'ի լըրինա զորմէ պատմէ կիրակոս թէ՝ որի-  
նակ ետ և յորդոր նուեւ . Տրդատ թագաւորն որ  
սիրեաց զվարս միայնաւորութեան որպէս զսուրբն

Գրիգոր : Այսուհետեւ ընդ ժամանակս ժամանակա  
անյայտ լինէր 'ի զօրաց իւրոց, քառասնօթեայ ժամա-  
նակս ձգեալ լինէր պահօք և աղօթիւք ։ Ազան  
Արծրունի՝ որդի վասակայ իշխանին Արծրունեաց,  
և վարժապետ Փարփիցոյն Դագարու, որ վասն  
վարսեց վարժապետին իւրօյ ասէ . « Մինչդեռ 'ի  
տիս մանկութեամն էր, թողեալ զամենայն վայելու-  
թիւն կենցաղոյ չոքան յանաղատ, և կեցեալ ընդ  
արս ընտիրս և խմառուն՝ ստացաւ զվարս հրեշ-  
տակայինն : Ո՛չ երբէք 'ի կեանո իւրում բնարեաց  
զժամ՝ աղօթից, այլ զախ և զդիշեր նմա ժամ՝ աղօ-  
թից էր : Եւ այսպիսի կենցաղավարութեամբ կտ-  
առքեալ զբնմթացս իւր՝ հանգեաւ 'ի Քրիստոս և ե-  
ղաւ 'ի մատրան միում՝ յաւան Հաղամակերտ՝ յաշ-  
խարհին Արծրունեաց :

Ա. Ձինի հիմնարկութեանց և հաստատութեանց  
վանօրեից ուխտագնացութեան սովորութիւն եմաւտ  
'ի ժողովուրդս մեր, զիյորժամ՝ սուրբն Գրիգոր  
զվահեւվանեան, զիխանեան կուռանն և զպատկերն  
Անահատայ գիշամօրն՝ կործանեաց 'ի տեղեացն Դլա-  
կայ վանից, 'ի Յաշմիշատայ, 'ի Երեքզն և 'ի Բագ-  
րեւանդ՝ գաւառաց, 'ի գեղեցկատես վայրն Զի-  
ասնեանց՝ զմատրան մի շնուաց յանուն Յովհաննու  
Մկրտչի, և զնշխարս մեծ մարդարէին և Աթանա-  
գինեայ հայրապետին ամփոփեաց 'ի նա . և դի-  
նաւանդ տօն վարդավալաթի և Նաւասարդի զոր կա-  
տարէին հայք աշխարհախումբ ուխտաւորօք յօդօս  
տոս Անարայց 'ի անդի հինաւանդ տօնից՝ սահման-  
եաց սուրբն Գրիգոր կատարել զտօն այլակերպու-  
թեան Քրիստոսի . և չ ունչ ունչ վարդուարն և Անա-

Առաքելը իւսոյն զյիշատակը Յովհաննու մկրտչին և  
 Աթանաղինեայ Հայրապետին : Ուստի սովորու-  
 թիւն եղեւ , զի ամի ամի ՚ի տօնի այրակեր-  
 պութեան՝ Հայրապետն Հայատանի հանդերձ Ե-  
 պիսկոպոսք , վարդ ապետոք և քահանայիւք , հան-  
 դերձ թագաւորաւ , և բիւրաւոր ժողովրդովք աշ-  
 խարհախումք ժողով գումարեալ ՚ի մատրան պրոյն  
 Յովհաննու . ՚ի վանս Գլակայ , կատարէին զմեծ տօն  
 այլակերպութեան յաւուր Վարդավառի . և երբեմն  
 ՚ի Յաշտիշատ , ՚ի Բագրեւանդ . և ՚ի Յերէգն , այն-  
 պէս աշխարհախումք տօնէին զտօն Եկեղեցւոյ և  
 զտօն Աշխարհամատրան , որ ՚ի Յաշտիշատ : Ս. Գրի-  
 գոր հանդերձ Տրդատաւ , Արհամակէս , Վրժմանէս ,  
 մեծն Ներսէս , Սահակ պարթեւ . թէ քանիցս զտօն  
 նաւակատեաց աշխարհախումք կատարեցին ՚ի տե-  
 ղին , արժան է ընթեռնուլ զպատմութիւնս Ազա-  
 թանգեղոսի , Խորենացւոյն , և Բիւզանդայ : Նախ-  
 նի հայրապետաց , թագաւորաց , և ժողովրդոյ հե-  
 տեւողք եղեն հետագայ Հայրապետք և ժողովորդք .  
 որք ՚ի տօնի այլակերպութեան ՚ի վանս Գլակայ ,  
 նոյնպէս ՚ի տօնի այլ սրբոց՝ ՚ի յայլ վանօրայս և յե-  
 կեղեցիս ժողովեալ բաղմնութեամբ կատարէին զտօն ,  
 ժողովուրդք՝ որք խուռն Երթային ՚ի տօն , կոչեցան  
 ուխտաւորք . ուստի ՚ի հարց անուի աւանդեցաւ  
 մեզ՝ ուխտի ազագաւ ժողովել ՚ի վանօրայս յաւուրո  
 տօնախամբութեան սրբոցն , որք գտանին ՚ի վաննան  
 Արդ յորդամ ընթեռնուս զջօնացյցն , թէ՝ տօն է  
 Եկեղեցւոյ , տօն է Խաչի , տօն է Աստուածածնի .  
 և տօն Յովհաննու կարապետի և այն , ծանի՛ր , զի  
 Կանակեալ տօնք , առանց բաղմնութեան Եկեղեցա-

կանաց և ժողովրդոց ո՞չ կատարին : Տօնախմբութիւն անուանեցին . զի ժողովուրդն իսկեսցի վասն տօնին . կատարեսցի տօնախմբութիւն Տիրական աւուրն , որ է նոյն իսկ տօն :

16. Ուխտադնացութեան և տօնախմբութեան աւանդութիւն՝ գիտիցես թէ ո՞րշափ և ո՞րովիափ հայրենախմբութեան դործ և նպատակ ՚ի լինքեանս ամփոփեն . ո՞չ երանի թէ կղերականք և ժողովրդականք դադունեաց նոյցա խելտառուտ լեալ՝ ՚ի յօդուտ ազգի և հայրենեաց ՚ի վար արկանէին . ո՞չ ապաքէն ընդ թծով ծառայութեան և ՚ի հոգս աշխարհի ճնշեալ և ծանրաբեռնեալ ժողովուրդն ՚ի տաճարս և ՚ի վանօրայս ժողովեալ՝ նշին զշունչ ազստ և ծծեն զողն առողջարար . համբուրեն զմիսիթարութիւն հոգւոյ և սրտի , տեսանեն զհայրենակից եղբարս , և ընդ նոսս ուրախանան , անդ դյիշատակ նախնեաց , զսէր հայրենեաց ՚ի յուշ բերեալ առ ատանան և արփանան : Մի՛ իրբեւ վեհերոս դայիթակղեւցիս ընդ այն թէ յաւուրս մեր ուխտաւորք ախտաւորութեան , և զեղխութեան ազագաւ ելանեն ՚ի վանս և ՚ի տօնս , և թէ վանականք և ժողովուրդք հեռացեալ մեկուսի են ՚ի բարենպատակ սրբութենէն նախնեաց : Բայց եթէ առաջնորդք վանաց իրբեւ հարք հայրենեաց , արք առաքինութեան իցեն , հեշտիւ զդէմունելիարեն վեղձմանց . որք յանփութութենէ տեսչացն մոխն ՚ի ներքս , արթուն դետն՝ հայրենասէր տեսուչն եթէ կամի՝ կարէ զշողին բարեպաշտութեան և հայրենասիրութեան ՚ի սիրտա և կելոց ժողովելոցն արծարծել , զդնացս անմոտաց կշտամբել և ուղղել՝ որք ուտելոյ և ըմպելոյ սակս զնան ՚ի տօն :

17. Հայեաց հայրենասէր հօգի . թէ զիա՞րդ յամենայն ժամ իղձ լինիմ 'ի սրտէ՝ վասն բարեկարդութեան , վանօրէից և խնդրեմ միշտ 'ի հայրենասիրաց , զի զհայեացս իւրեանց դարձուցեն 'ի վանս և ի մենաստանսնախնեաց . որք կտակաւ աւանդեցին մեզ՝ զի 'ի շինութեան և 'ի բարեկարդութեան պահեսցուք զնոսաւ , փութացիր զժառանդութիւն հարցդ . հասուցանել 'ի նուիրական նպատակն նոցաւ , բայց աւազ աշաց իմոց աստանոր , զի այժմիկ աչօք իսկ տեսաք և տեսանեմք զիործանումն և զաւերումն զեղեցկաշէն և պանծալի վանօրէից մերոց . որք առ ՚ի չգոյէ արժանաւոր հարց վանահարց , այլու աւագակաց եղեն , որչու ազուէսաւը . որք խամրեցին զգեզ այդւոյն , և քակեցին զուրբ ցանկ նորա . փոխանակ ըմպելց զուզիս գիտութեան Աստուծոյ , ընդ առաւօսս և ընդ երեկոյս զհետ եղեն գինուոյ , ո՛հ , վանօրայք՝ որք երրեմն էին ընակարան և ժողովարան սրբոց , այժմ եղեն ընակարան և ժոշովարան խաշանց և անասնոց , որք երրեմն էին մարդիչք և ուսուցիչք Հայտասան աշխարհի . այժմ եղեն առիթ բամբասանաց ազգի և աշխարհի :

18. Կղերք եկեղեցւոյ հանդերձ ժողովրդովք , ձեռն արկցեն 'ի բարեկարդել զվանօրայս . որպէս արժանն է բարեկարդել նախ կղերիկոսք եկեղեցւոց առցեն զուսումն գիտութեան 'ի գպրոցաց վանօրէից , ըստ նախնեաց աւանդութեան , ասու լիցին տեսուչ և հովիւ ժողովրդեան : Զի նախ պարտ է զգլուխն և զախս մեր լուսաորիէ առա զուս և ձեռս մերք . լուր զբանն Յիսուսի որ ասէ ։ Ճ՛ր հարժայ ան եւ ենե ան ու առաջ եւ ակնայն հարժադ լուսուր:

Եղան, Ենէ ո՞ւ ո իսուր է, ու քայլ արդիուր իսուրն ե-  
ղան։ Ոչ ապաքէն կղերք գլուխ և ակն են մարմ-  
նոյ ժողովրդ եան, ոչ ապաքէն եթէ ոռքա տղի-  
տացին, ամենայն ժողովուդն ՚ի խաւարի է :

## ԳԼՈՒԽ Լ.

ՆԱՀԱՊԵՏՔ · ԹԱԴԱՏԱՐՔ ԵՒ ԻՇԽԱԿՆՔ

## ՅՕԴՈՒՄ Ա.

ՆԱՀԱՊԵՏՔ

1. Մովսէսի Արարածոց գիրք, հանուր մարդ-  
կութեան աեռինահապետաց պատմութիւն և դա-  
սակարդ խիստ գեղեցիկ և պարզ ոճիւ մեզ ա-  
ւանդէ։ Աղամ ասառուածառտեղծ և առաջնասուեղծ  
մարդն, առաջին նախահայրն նահապետաց, մար-  
դարեից, թադաւորաց և իշխանաց, սկիզբն և հայրն  
ՀԱՅՈՒԹԻՄ ՄԱՐԴԱՐԻԹԵԱՆ։ Ադամոր ՚ի մէջ դրախ-  
տին՝ քան զամենայն մարդիկ գերիշերոյ երջա-  
նիկ և գերազանց փառաւոր, խէլ արաւաքոյ դրախ-  
տին ապերջանիկ քան զամենայն մարդիկ, Աղամէն  
մինչեւ ց'նոյ տան նահապետաց անուանք Ղուկաս  
եւս իւր երրորդ գլխայ մէջ յիշէ, որք են։ Աղամ,  
Սէմ, Ենովս, Կայնան, Մաղաղիէլ, Յարեղ, Ե-  
նովք, Մաթուսաղայ, Պամէք, և Նոյ։ Մովսէս  
նախահարց պատմութիւն հակիրճ բանիւ կաւանդէ,  
Աղամայ և Եւայի ստեղծումն և ուրախութիւն,  
արտաքսումն և ուրտումութիւն։ Աբելի արդարու-

թիւն և պատարագ, Արելի անմեզ սպանումն, Առառուծոյ վլէժինդրութիւն, և կայենի Երեր, Ենովսայ յոյս, Մաժուսաղային երկարակեցութիւն . Ենովքայ ՚ի միջյ մարդկանց փոխիլն ՚ի յերկինս, Նոյի կատարելութիւն, սրբութիւն և արդարութիւն : Նոյն ժամանակի մարդկանց վարուց աղականիլն, Աստուծոյ ցասումն և սորջանայն ՚ի վերայ յանցուցելոց, շինումն տապանին, (՚ի սահմանս Հայաստանի) մոսանել Նոյի և որդւոցն ՚ի տապան, ապականել ջրհեղեղաւ ամենայն Երկրի, գատարելն տապանին ՚ի դլուխ լերինն Արարատայ ՚ի Մասիս Եղանել Նոյեանց ՚ի տապանէն, ընակել ՚ի Նախիջեւան, և մասուցանել չոնք բանապահութեան Աստուծոյ ՚ի ստորան Մասեաց լերին, և հստուել տեառն Աստուծոյ զպատարագն ՚ի հոտ անուշից ՚ի լեռնէն Մասեաց, և դնել անդ ուխտ յուխտենական ընդ Նոյ և ընդ որդիս նորա :

2. Խոկ Նոյ Երկրորդ Հայր աշխարհի որ յետ Ադամայ, զի ունէր զերիս որդիս, զվեմ, զբամ, զՅարեթ : Եւ զի Յարեթ էր անդրանիկ յօրդինն Նոյի . և առաջին նահապետ Ասքանաղնեանս տօհմի : Աստուած հրամայեաց Նոյի և որդւոց նորա, անել բաղմանալ և տիրել Երկրի. Աստուած սահմանեաց զի արդարն Նոյ օրհնեացէ զՅարեթ զԵրեց զօրդի իւր «ընդարձակեցէ տէր Յարեթի և ընակեցուցէ զնա ՚ի տան Սեմայ : Որհնութիւնն արդարոյն իրաղէս կատարուեցաւ ի Յարեթականս . վասն զի Յարեթի սերոնդ յոյժ տռաւել բաղմապատիկ թուով աճեցաւ՝ և ոչ թէ միայն ընակեցաւ . ՚ի տան Սեմոյ, ոյն է ՚ի սահմանս բաժնին Սեմայ, որ էր

Կ ուսհմանս Աստրոց և Եբրայեցւոց, այլ թէ ելլց զամենայն կողմանս աշխարհի, և զի Յարեթեամք առաւել րոյժ բազմութեամբ կանխեցին հաւատալ Յիսուսի որ էր ՚ի ցեղէն Սեմայ, և բնակեցան հաւատով ՚ի տաճարն Սեմեանց, մինչդեռ որդիք Սեմայ, որք էին Եբրայեցիք չուանեայ խարազանաւ արտօնքան ՚ի տանէն Սեմայ, այն է ՚ի տաճարէն Աստուծոյ յաւուր Ծաղկազարդի, յորում աւուր հաւատարիմ ծառայք Արգարու Անհաէ և այլք զնամակ նորա Յիսուսի տալով՝ ընդ աշակերտո նորա մոտին ՚ի տաճարն Աստուծոյ, և Երկրպագին ՚ի տօնի անդ, որպէս վկայէ Յովհաննէս ՚ի յաւետարանի խրում:

3. Ըստ թարգմանութեան Եօթանասնից՝ Յարեթի անդրանկան Նոյի, Եղեն որդիք ութն: Գամեր, Մադոք, Մադայի, Թօփէլ, Մոսոք, Թիրաս, Յաւան, և Եղիսաւ Դամեր անդրանիկ որդին Յարեթի ձնաւ Թիրաս և Թիրաս ձնաւ զթորդում; Պատրանազն, և ըդՀոփիսաւ թորդում անդրանիկ Դամերայ ձնաւ զՀԱՅի, յորմէ ձնաւ ազգո Հայոց Խոր: Վարդանն հնախօս և Օրպելեան պատմիչ ասեն, թէ Եղեն և Հայիայ Եօթն Եղրարք, Քարթլոս, Բարդ, Մովլան, Դեկայ, Հերար, Կոմիլաս, և Եգրէս: Սոքա ամենեքեան ձնան, աճեցան և բազմացան յառաջ քան զաշտարակաշնութիւն :

4. Յարեթ՝ մեր առաջին նահապետէն՝ մինչեւ ՚ի Պարոյր մեր առաջին պատկաւոր թագաւոր, թուով և չըրս նահապետունիմք. Յարեթազարմ և Հայկացն նահապետք, որք 260 տարի նահապետական և տանուտերական իշխանութեամբ իրեն հայրիշխան

խնամեցին զգողիս Հայաստանի. սոյն երջանիկ դար,  
զոր ոսկեղինիկ դար անուանեցին մեր ընտիր մատե-  
նագրըք, այս ոսկեղինիկ դար, յորում արտոյ  
դորովով թագառ որէին նահապետք, քան թէ մաքով  
և խորագիտութեամբ, Ահ, սիրելի նահապետք,  
ահ սիրելի դար, սիրելի կենցաղավարութիւն, աղդի  
և հայրենեաց երջանիկ և սուրբ ժամանակ : Ամե-  
նայն աղդաց մատենագիրք ներբողեցին դոյս դար  
սոկեղէն, որ մարդոց անմեղութեան և երջանիկու-  
թեան դարուն էր, և այս սքանչելի դարուն շն դար  
շարունակ Հայաստանի որդւոյ իւր երջանիկութիւն  
շնորհեց . դարուն՝ յորում դեռ չուայտութեան և  
զեխողութեան խորշակ մարդոց անմեղութեան ծաղկի  
վրայ շնչած չէր, դեռ կեղծաւորութեան մարդախա-  
րութեան, նենգութեան և ստեղութեան արատոն  
մարդոյոց սրտի գեղեցիկ արմատն չէր խածառեր և  
միրաւորեր, դեռ ամբարտաւանութեան, աղահու-  
թեան, արծաթամիրութեան և սպանութեան թոյն  
մարդոց սիրտ և հոգին չէր մահացուցեր, Մարդիկ  
մատեան չունեին, զի իրենց բարի վարք և դործք  
մատենագրաց նիւթ էին . մարդիկ օրինադիրք և  
օրէնք չունեին, զի ինքեանք իսկ էին անձանց իւր-  
եանց օրէնք, բարոյագէտափ պէտք չունեին, վասն զի  
իրենք էին բարոյականութեան հեղինակ, դառ-  
տիարակի պէտք չունեին, վասն զի ընութեան օ-  
րինաց սահմանէն դուրս չեն ելեր :

5. Թերեւո զարմանայ հայրենասէլն թէ է՞ր  
վասն նահապետաց՝ անուն, դործք և ժամանակ հա-  
մառօտիւ յիշատակել ողեցի, արդարեւ յօժարե-  
ցայ յիշեցնել հայրենասիրին թէ ինքն այն դերե-

Հանիկ նահապետաց որդին է , և ինքն եւս կարէ  
նահապետ լինել իւր տան , իւր գերդաստանին և  
իւր ազգաստահմին Յօժարեցայ ասել հայրենասիրին  
թէ Հայաստան աշխարհ իրբեւ մի նահապետական  
տուն համարուած էր այն ոսկեղէն գարուն , յարեթ ա-  
ղարմ նահապետք հայր էին սոյն տան , և հայկազն  
ժողովուրդք՝ որդիք նոյն մեծաստարած գերդա-  
տանին : Ուստի եթէ մէկ մեր հայ եղբայրներէն  
նահապետաց հայրական սիրտ և հօդին ունենալով  
մտածէ , թէ պէտք է որ ինքն եւս նահապետ լինէ  
Հայաստան աշխարհին և Հայոց ազգին , իսկ և իսկ  
սիրտի զգայ իւր սրտի մէջ , թէ ամբողջ Հայոց ժողո-  
վուրդ իւր որդիք և զաւակունք են , և այնուհետեւ  
գորովանօք խորհրդածէ պիտի , թէ որպէս գիշայ  
հայրի վերայ որդուց իւրօց , այնպէս պէտք է որ ինքն  
եւս դժոյ ամենից վրայ , որք Հոյ անուն կրեն :  
Ամեն առեմձեղ՝ այսպիսի սիրտ և հօդի կրող Հայն ,  
հայր է Հայրենեաց , նահապետ է ազգին . երկաթի  
դարուս ծնաւնդ չէ , այլ այն ոսկեղար դարուն , ո-  
րոյ մէջ այն մեծանուն նահապետք առաքինացան ,  
և նահապետ կոչուեցան :

6. Թողէք զիս որ վայրիկ մի զձեղ ՚ի գարն նա-  
հապետաց հրափրեմ , թողէք զիս որ զձեղ հրափ-  
րեմ ՚ի Հայաստան նոր ուխտ դնել Աստուծոյ հետ ,  
ուր՝ Նոյ ուխտ դրաւ զԱստուած յափուեան սի-  
րելոյ : Թողէք զիս , որ ձեր ականջ բանամ , օրհ-  
նեալ Յարեթ Նահապետի ձայն ձեղ լսելի առնե-  
լոյ , որ ահա Մասեաց սուրբ սարէն կաղաղակէ .  
«Դարցէք , դարցէք ՚ի տուն իմ , յամենայն ծա-  
գաց երկրի ժողովեցարուք ՚ի պարզեւաց երկիրն

իմ, դոր Տէր օրէնութեամբ Նոյի պարզեւեաց ինձ  
 և որդւոց իմնց, դարցէք և ժառանգեցէք զլեառն  
 սրբութեան, մի լինիք ժուլասիրտք, և վատախոր-  
 հուրդք, մի լինիք մոռացողք և ատեցող Հայրենի  
 ժառանգութեանն, գուցէ օատրք ժառանգեցեն և  
 կերիցեն զվատակս ձեր, Հայկ ՚ի լեռնէն Ներ-  
 րովթի խրախոյս բառնայ, թէ ընտրեցէք ձեղ յա-  
 մենայն ժամ ծառայ լինիլ Աստուծոյ քան թէ մարդ-  
 կան. մի լինիք ծառայք բելայ, դոր ես լայնալիճ ա-  
 ղեղամը խմով սպանի . և շնորհեցի ձեղ ազատու-  
 թիւն . կորիցէ թէլ և բռնութիւն իւր, կեցցէ Հայկ  
 և աղատութիւն իւր, թագաւորեսցէ Աստուածպաշ-  
 տութիւն հօր մերում Հայկայ ՚ի վերայ մեր, «զի քան  
 զամենայն ինչ զօրաւոր է Աստուածպաշտութիւն» :  
 Արամ ՚ի ծաղկաւէտ լերանց Արագածի Հայրենասի-  
 րաց հրաւէր կարդայ, զԱստուածատուր լեզուն Ա-  
 դամայ խօսիլ այր ընդ եղրօր և այր ընդ ընկերի  
 իւրոյ, զի Աստուած սոյն լեզուաւ խօսեցաւ Ադամոյ,  
 Նոյոյ, Ասքանազեայ, Թորգումայ և Հայկ նահապե-  
 տաց հետ. և Նահապետք սոյն այս լեզուաւ զաղերս  
 իւրեանց միշտ մատուցին առ. Աստուած : «Հայրե-  
 նասէր Արամեանք, զի՞ կայք ՚ի քոն ընկզմեալ,  
 բացէք զաշտ ձեր հոգեկան . տեսէք զօր ձա-  
 մանեալ» : Հայրենասէր Արամեանք, լեզուն՝ Արամոյ  
 լեզուն, սիրտ՝ Արամոյ սիրտ կրեցէք ՚ի ձեղ : Թո-  
 զէք որ Խորենացի Հայր՝ Հայրենասիրութիւն պատմէ  
 ձեղ . դլ. 43: «Առ այս ոչիշտուաէր և հայրենասէր եղեւ  
 որոյն ցուցանէ նոյն պատմաբէր (Արքիբաս) և համբէր  
 շմբառնեն ՚ի վերայ հայրենեացն, ուն նե ուստանել ուրբէն  
 շուրջաշնորհ իսկեւը զանհանուն Հայրենիւն, և հարազարէց ուս»

Նո՞ւ Նորս Դիքել աբանց Դուշոց դարձեալ խօրե . Ա . 12 . «Ա-  
րամայ բազում գործք քաջութեան պատմեն մար-  
տիւք նահատակութեան և ընդարձակեալ զսահմանս  
Հայոց յամենայն կողմանց զոր Յովհաննէս կաթո-  
ղիկոս իրրեւ մեկնելով յաւելու օքնդարձեալ ասէ  
հարստահարութեամբ զսահմանս Հայոց ընդ չորս  
ոլորտս երկրի , զեռքար մար ՚ի ցից բարձրացուց-  
եալ , զի յերկնից ուսցի զհայելէն » :

7. Գումարք նահապետաց լայնախորհուրդք , աշ-  
խարհաշէնք , սակաւապէտք , ժուժկալք , երկայ-  
նակեացք և բազմածնունդք էին : Նոյ ՚ի Մասեաց  
լեռնէն ՚ի վայր իջանելով զնախիլեւան աեղին , իւր  
բնակութիւն հաստատելով անուանեց զայն նախի-  
ջեւան , Նոյ ուռ արկանելով այգի տնեց , և այգւոյ  
անուն արկ ուռի անուանեց . Նոյ յետ ջրհեղեղին 350  
տարի եւս ապրելով տեսաւ զմեր Հայկ նահապետն  
և օրհնեաց վնա և զորդիս նորա , Յարէթ ՚ի Հա-  
յաստան բնակելով շինեաց զսանս և զդիւզ . և  
ահա Հայաստանի յարբերդ , և յարերդ . քանի մը գե-  
զեր նորա անունով մնացին առ մեզ մինչեւ ցայսօր :  
Հայկ զհարք դաւառն , զհայկաշէն դաստակերտն,  
զբղնունեան , զխորխոռունեան , և զլՄանաւաղեան  
սահմաններ շինութեամբ զարդ արեց , զորս որդւոց  
և թոռանց իւրոց ՚ի ժառանգութիւն բնակութեան  
չնորհեց : Սոյնակէս Արտաշատայ մէջ գեղեցիկ դաս-  
տակերտ մի եւս շինելով իւր թոռան կաղմանի  
տուառ , որ էր որդի Արմենակայ որդւոյ Հայկայ :  
Արմենակ որդին Հայկայ առ ոսս Արագած լերան  
շինութեամբ զարդ արերէն զինի , Սոսեաց կամ Ոօ-  
սանուէր անուաննեալ անտառ տնկեց . և բովան-

դակ լերան անուն Արագած կոչեց, այսինքն Արմենակագործ կամ Արմենակայ ագած տեղ: Արմենակայ եղբայր Մանաւաղ ՚ի Հարք դաւառ Մանաւաղակերտ քաղաքն շնեց, որ մինչեւ ցայսօր կոչեցաւ Մանձկերտ:

8. Արմենակայ որդին Արմայիս արարատեան դաշտի մէջ իրասխ գետի եղերք բլրակի մի վրայ, Արմատիր անուանի քաղաք շնեց կոփուածոյ քարերով, որ եղաւ բնակարան առաջին Հայ նահապետաց. և արքունիք հայկաղեան թագաւորաց: Արմայիսայ որդին շատակեր Շարայ շնեց զնիքակաւան, և անդ բնակեցաւ իւր բազմածնունդ զաւակօք և զարմօք, որոց համար ասէին հինք «Ե՞կ + Շուրոյ ո՞ւրիշն է, Ե՞ր վըտիոյ աբոքու վն»: Արմայիսայ որդին Ամասիա ուներ երեք որդի, գեղամ գեղեցիկ, ֆառոսին արի, և Յոլակ կոյտառ, Ամասիա սոյն երկու որդւոց բնակարան շնելոց համար՝ զնաց ՚ի Մասեաց ուն՝ առ եղերս աղբերաց, մեծ ծախքով երկու տան շնեց, որք իրարմէ մէկ աւուր ճանապարհ հեռաի էին, և որոց գերք կիյնար մէկ Մասեաց ստորտին արեւելեան, և միւսն արեւմտեան կողմն, Յետ այսորիկ Ամասիա արարատեան մեծ սարի անուն անուանեց Մասիս: Ամասիայ որդին Գեղամ երթալով գէտ ՚ի հիւսիսային արեւելք Սեւան ծովուն եղերք շնեց բնդարձակ աւան մի, և անուանեց զայն գեղարքունիք, և ծովի իւր անունով կոչեց Գեղամայ ծով: Գեղամայ որդին Հարսմայ կոփուածոյ քարովք Արմատիր քաղաքի շուրջ պարապեց և մեծագործ արքունիք մի հաստատելով ընդ արտաքս քաղաքին, յոյժ ընդարձակեց զիւր իշխանութիւն:

9. Գեղամայ որդին Արամ, և սորա որդին Արայ  
գեղեցիկն ոչ միայն գքաղաքս և զաւանս շինեցին  
և զարդարեցին, այլ խրեանց իշխանութիւն կով-  
կաս լեռնէն մինչեւ Տորոսի սարեր. և մինչեւ ՚ի  
սահմանս կեսարիոյ ընդարձակեցին : Արամայ հա-  
զարապետ Մշակ անուն՝ Նորին հրամանաւ դիեսա-  
րիա շինելով Մաժակ անուանեց, որ ապա կեսա-  
րու հրամանաւ նորոգուելով կեսարիա կոչուեցաւ  
Արշակոս համառօտելով նահապետաց աշխարհա-  
շինութիւն, իսկ նոցա մեծամեծ հրաշակերտաց վրայ  
թողում հայրենասիրին խրոմի մուածել, աքնիլ և  
՚ի խորս ազգային պատմութեանց և հնութեանց  
դատանել. զի թէ պէտ նախնեաց մեծամեծ դործք  
խիստ համառօտ գրուածով մի առ մեղ համին  
բայց մէն մի մարդոց, թէ՝ քաղաքաց, թէ լերանց  
և թէ այլ տեղեաց յատուկ անուներ, և մինչ զի  
ո՛չ միայն նշանառոր բառեր. այլ թէ երբեմն աննը-  
շան բառերն եւս հետազօտեմք, որ տեսնամք թէ  
ամբողջ պատմութիւն մի ամփոփեն խրեանց մէջ ։

10. Նահապետք առ հասարակ սակառապէտ .  
կերակրոց և անկողնոց ժուժկալ լինելով երկարա-  
կեաց և բաղմածնունդ էին, զի մեր բնիկ նահապե-  
տաց շտրքի մէջ մի միայն Շարայլ շատակերութիւն  
յիշուած է . որ թուի թէ մարմնոյ կազմուածքն  
ստիպուած էր ուտել շատ. բայց և այնպէս դարձ-  
եալ նահապետաց սեղամեխ վրայ բազմախորսիկ կե-  
րակրոց տեսակը չկային : Մեր այսքան նահապե-  
տաց վարուց մէջ շուշայտութեան ախտ երբէք տի-  
բած չէր - ընդհանրապէս միակին էին և պարկեշ-  
տութեան սիրող, ինչպէս էին նոյ, Յարէթ և Անք .

ԱՌՀԱՎԱՐԵՆ Արայ միակնութեան սաւրը ուխտին վրայ  
հաստատ մնալով նահատակեցաւ . դի մերժել մերժեց  
դուրփական առաջարկութիւն Շամիրամայ Ասորոյ :  
Փորձով ստուգուած է , թէ բղջախոհ և անժուժկալ  
արք թէ կանայք սակաւածին , և սակաւակեց են ,  
իսկ պարկեշտք և ժուժկալք բազմածին և երկայնակե-  
եց լինին յօդոււտ ազգի աշխարհի և մարդկութեան :

11. Աղամայ մինչեւ ցեղ 10 երկայնակեց  
մարդոց անուն յիշեցինք . որոց մէջէն Մամթուսազայն  
ապրեցաւ մինչեւ 969 տարի , բայց միժէն նոյն ժա-  
մանակի մարդիկ առ հաստրակ այնչափ երկար ապ-  
րեցան , ոչ . այլ միայն նոքա ապրեցան , որք պար-  
կեշտացան ի մէջ անպարկեշտից . և ժուժկալեցին  
՚ի մէջ անժուժկալից , իսկ անժուժկալք ոչ ընդեր-  
կար ապրեցան և ոչ սուրբ կոչեցան : Սուրբ գիրք  
վկայէ , թէ Աստուած զինի ջրհեղեղին կարճեց  
մարդկանց կեանք , բայց դարձեալ կարճեց զիեանս  
անժուժկալից և ոչ թէ ժուժկալից . վասն զի ահա  
տեսնեմք , թէ նոյի յաջորդող նահապետք ապ-  
րեցան 200. 300. և մինչեւ 400 տարի նոյն ժուժ-  
կալութեան օրինօք : Զի ըստ եօթանամնից Հայկ  
նահապետն մեր ապրեցաւ մինչեւ 400 տարի . և  
հետեւապէս Հայկայ յաջորդող նահապետք եւս  
ապրեցան ընդ երկար :

12. Բայց դու հայրենասէր՝ մինչդեռ զարմացեր  
կեցեր ես նահապետաց երկարակեցութեան վրայ ,  
ես այլ իմն նոր նահապետ քեզ ցուցից . 1862, Յու-  
լիս 10, Մշոյ մէջ մարդ մի տեսայ անուն Մարդար որ  
երկու հարիւր յիսուն տարւոյ չափ ապրած էր , ոսյն  
մարդ ընակէր ՚ի տաղ Մատնիկ կոչուած գիւղ , որ

Մշոյ աւանի հարսաւային ջորո լերանց մէջն է, Մարդար  
 վերջին ծերութեան հասած էր . ՚ի մարդարէն  
 եռ ինքս ճիշտ տեղեկութիւն առնելոյ համար  
 հրատիրեցի զինքն ՚ի մուշ, հինգ ժամու հանապարհ  
 հետի եկաւ . տեսայ զինքն, հարցուցի իրմէ, և  
 իրեն վարուց համառօտ նկարագրութիւն առնելով  
 համեմատեցի հին նահապետաց վարուց հետ և  
 տեսայ, որ նահապետական պարզ և ժուժկալ  
 կեանքէն երբէք յաջ և յահետակ խոտորած չէր,  
 Մարդար խնդասիտ և զուարթադէմէր, երեք ան-  
 դամ ատամներ փոխած էր, վերջի անդամի ակրա-  
 ներ կակուղ էին. մօրուք գեռ ալեխառն էր, մարմին  
 խիստ ճզայից և մորթն կապուտադոյն : Մարդար  
 ՚ի մանկութենէ դրախտավայրը լերանց մէջ հովու-  
 թիւն ըրած էր, ոչ ծխախտի, ոչ ընչատեզի սովո-  
 րութիւն ունէր . և ոչ գինի և օդի խմած էր, 150  
 տարւոյ լինելով տմուանացած էր, և մեր տեսած ա-  
 տեն 75 տարւոյ ծերունի զաւակ մի ունէր, սա իւ-  
 ղով կաթով պանիբով և բանջարով շատացած էր :  
 Զայս ամեն Մարդարէն և նորա ծանօթներէն ստու-  
 դելով խիստ ուրախացայ . երեք օր զինքն քովս  
 պահելով խրկեցի ՚ի Մառնիկ : Հայաստանի գա-  
 ւառաց մէջ քանիցո որ երկայնակեաց մարդոց պա-  
 տահեցայ՝ հարցանելով տեղեկայայ, թէ սոքա եւս  
 Մարդարի նման երբէք գինի, օդի, քթախոտ և  
 ծխախտու չէին գործած եր և որ աւելին է ցանկա-  
 կան բուռն կրից անձնատուր չէին եզած, այլ միշտ  
 ժուժկայ, միշտ համբերող, միշտ հեզ, և աշխա-  
 տասէր էին . Աըդ եթէ կամիս հայրենասէր լինել.  
 բաւական չէ, նահապետաց սերունդէն սէրած լի-

նել, այլ պէտք է որ նահապետաց յատկութիւն քեզ  
սեփհականես, որպէս զի դու եւս լինիս նահապետ  
քո գերդաստանին, և հետեւապէս քո ազգին :

## ՅՈՒՂԻԱԾ Բ :

Թ.Ա.ԳԱԼԻՈՒՔ

1. Հայաստանի թագաւորաց թուահամար Հայրենասիրին համառօտիւ յիշատակել ուղեցի, որպէս զի գիտնայ, թէ՝ մինչդեռ այժմեան մեծամեծ ազգ.ք թագաւոր չունեին երկրի վրայ, Հայք շատ թագաւոր ունեցան Հայաստանի վրայ : Ա. Պարոյր առաջին պատկաւոր թագաւորէն մինչեւ ցվահէ 17 թագաւոր.ք 'ի զարմէն Հայկայ թագաւորեցին 'ի Հայաստան : Բ. Սիսեալ 'ի Վաղարշակայ մինչեւ Արտաշիր որդին Վռամշապհոյ 28 թագաւոր.ք 'ի զարմէն Արշակունեաց թագաւորեցին 'ի Հայաստան : Գ. Առաջին մեծ Աշոտէն, որ էր որդի Սմբատայ խոստովանողին, մինչեւ ցԴապիկ որդի Աշոտոյ քաջի՝ Բագրատունի թագաւոր.ք 9 'ի ցեղէն Բագրատատունեաց : Նոյնպէս 'ի կարս և ի Դուին Բագրատունի թագաւոր.ք 4 : Դ. ի Գագկայ, որ էր որդի Դերենկայ, մինչեւ յԱնենեքերիմ Յովհաննէս Արծրունի անհարազատ թագաւոր.ք 'ի Վասպուրական 5 : Նոյնպէս Աշոտ, Գաւիթ, Գագիկ, և Ատոմ 4 թագաւոր.ք Արծրունի.ք թագաւորեալք 'ի Սերաստիան Ե. Ռուբէն մեծէն մինչեւ ցԼեւոն Զ. Լուսինեան թագաւոր.ք 23 'ի զարմէն Բագրատունեաց և Ռուբէն :

Խանց թագաւորեալք 'ի կիլիկիա : Ընդ ամենայն  
թագաւորք 90 :

2. Մեր այսափթագաւորաց գործք արութիւնք  
և յիշատակք, ազգային պատմութիւնք մեզ միըստ  
միոչ աւանդեն, այլ աւազ, զիպատմութիւն թագաւորաց  
ուրաց ունիմք, բայց թագաւորու ոչ, թագ դաւազան  
աթոռ ստէպ յիշատակուին 'ի գիրս . բայց աւազ  
զի ոչ թագ մնաց և ոչ դաւազան և ոչ աթոռ :  
Պետութիւն Հայաստանի չորս անդամ՝ տեղի տուաւ  
և 'ի բարձրութենէն խանարհեցաւ . բայց չորս ան-  
դամ եւս 'ի խանարհութենէն բարձրացաւ . և յոսից  
վրայ կանգնելով պաշտպանեց Հայրենեաց թագ, դա-  
ւազան և աթոռ : Աստուծոյ արդարութիւն երբ  
Հայաստանի ժողովուրդ սիրեց, շատ քաջայազմ թա-  
գաւորս և անձնադիր հովհաս կացոյց իւր սիրելի  
հօտին վրայ, որպէսզի իշխանական դաւազանաւ  
զսիրելին օտար գայլերէ, օտար գողերէ, և 'ի բուռն  
յարձակմանէ թշնամեաց զերծ և անսատան պա-  
հեսցէ : Բայց երբ ժողովուրդն անհնազանդ, ան-  
խրատ, խատապարանոց և անմիաբան ճանապարհ  
մի ընտրեց իրեն, որ իրեն առաջնորդէր դէպ 'ի կո-  
րուստ . Աստուծոյ արդարութիւն թագաւորաց դիմէն  
թագ, և հօվուաց ձեռքէն դաւազան առաւ, քա-  
կեց Հայաստանի այգւոյն ցանկ, կործանեց աշտա-  
րակ, սիրելի այդին թող տուաւ տուանց պահա-  
պանի, առանց ցանկի, և տուանց աշտարակի, ու ասի  
առիւծք, արջք, դայլք, և խորամանկ ազուէսք,  
և այլ շար գաղանք անապատի մի զինի միայ մտան  
այդին, զմատազատունին սրով կատորեցին, և զիս-  
զողն առ ոսու ճմիեցին . զի տէր այդւոյն մինչ սպա-

սէր խաղողոյ , այն է խաղաղութեան , այդին երեր՝  
փուշ , այն է խոռվութիւն և աղաղակ :

3. Մեր 90 թագաւորաց խիստ մեծագոյն մասն  
ոչ բարբարոս էին և ոչ բռնաւոր . այլ իրրեւ նա-  
հապետ հայաստան աշխարհի , իրրեւ հայր հայ-  
րենեաց գերդաստանին , և իրրեւ նախադահ հա-  
սարակագետական ժողովրդեան վարեին զիշխա-  
նութիւնս իւրեանց , խորենացին , 23 դլիէն մին-  
չեւ 30 գլուխ կարգա՛ . որ գրէ վասն երուանդ-  
եան Տիգրանի այսպէս ծիւ ամենեցունց որ իւրովքն  
էին ժամանակօք նախանձելի , և յետնոցո ըղձա-  
լի՝ ինքն և ժամանակ իւր : Զի՞՞ ոք ՚ի ճշմարիտ  
արանց և որոց ՚ի բարս արութեան և խոհականու-  
թեան սիրելութիւն կայցէ , սորս յիշատակօքն ոչ  
զուարճաւոյի , և յորդորեացի այսպիսի լինիլ այր :  
Արանց կացեալ գլուխ , արութիւն ցուցեալ՝ զադա-  
մեր բարձրացոյց և զընդ լծովս կացեալ՝ լծագիրս  
բազմաց և հարկապտհանջս կացոյց : Միթերս ուկոյ  
և արծախոյ և քարանց պատուականաց և զգես-  
տուց պէս ովէս գունոց և անգուածոց , արանց  
հասակաց և միանդամայն և կանանց բազմացոյց....  
Հետեւակամարտքն ՚ի վերայ ուաց ծիոց բերեալք  
և պարաւորքն առ հասարակ դիպաղեզունք , և  
այն , որոց ՚ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն  
միայն և որ ՚ի նոցայցն պահպանակաց զինուց փայլ-  
մունք և շողիւնք զթշնամիս արտահալածել... զորմէ  
ասէին ՚ի հինան մեր , որք բամբուամի երդէին լինել  
սման և ՚ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր , մեծ  
իմաստ և պերճարան յամենայն որ ինչ մարդկու-  
թեանս պիտանի . . . : Արդարադաս և հաւասա-

բասէր կշիռս ունելով յամենայնի՝ զամենայն ուրուք զիենցաղ մոտացն լծակաւ կշռէր, ո՛չ ընդ լաւագոյնս խնդայր . և ոչ զնուազունս արհամարհէր . այլ ամենեցուն հասարակաց հնարէր զիմնամացն իւրոց 'ի վերայ զգեստ : (ե.յաւելու 'ի բանս իւր քերթուղահայրն թէ) «վասնորոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան , Հայկ , Արամ , և Տիգրան » :

4. Ա.յժմ թող տալով հայրենասիրին որ մեծին վաղարշակայ և այլ Արշակունի թագաւորաց գործք արութիւնը և հայրենասիրութիւնք մտադիւր կարդայ նտիմնեաց մատենագրութեան մէջ : Մեք իր բերեւ օրինակ բազում Արշակունի թագաւորաց՝ Բ. Արտաշէսի շինարար , հայրենասիր և ժողովրդասէր գործք և վարք Խորենացիէն առնելով համառօտեմք , Արտաշէս քաղաքական կարդաց ըստ ամենայնի մտադիր մինելով՝ Հայսատան աշխարհս զանազան կարդօք և ուղղութեամբ բարեկարգեաց . այլ և այլ ազգաց ժիր երկրագործք ժողովեաց Հայսատանի դաշտաց հովտաց և լեռանց մէջ , նշանս կանգնելով երկրի սահմանք բաժանեաց , և թէ Արտաշէսի ժամանակ (ասէ) չմնաց անմիշակ թիղմի երկիր : Գետոց վերայ կամուրջ , ծովուց վերայ նաւս ձգեաց «Որով (ասէ) փոյժ և ջան գործելոյ եմուտ 'ի մարդիկ աշխարհին . . . . : Մինչեւ շմեալ ումեք դատարկ և ոչ տեղոյ խմիք անդործ . ո՛չ 'ի լեռնայնս և ոչ 'ի դաշտայինս : Կրթութեանց զանազան դպրոցք բացաւ , բազում աղատական արհեստից ուսումնարանն հաստատեաց : Ասորոց գրով և Պարսկաց լեզուով ժամանակագրութեան , աստեղադիտութեան , թուոց և չափաբերութեանց օդտաւէտ

դիտութիւնս ծաւալեաց 'ի մէջ ընդհանուր աղջիս ։  
Որովք քան զամենայն թագաւորս սիրելի եղեւ յաշա  
ազգին 'ի կենդանութեան իւրում։ Ռւստի 'ի մահ-  
ուան՝ դհանդէս թաղման սորա ժողովուրդն յոյժ  
սքանչելի և եզերական կերպին յօրինեաց։ Ամե-  
նեքեան սուդ դգեցան, արք, և կանայք, ծերք  
և տղայք, իշխանք և ռամիկք «Եւ 'ի թաղելն (ասէ)  
բազումք շուրջ զգերեզմանաւ նորա մատնեցին զան-  
ձինս 'ի կամաւոր մահունս 'ի սէր և 'ի պատիւ մե-  
ռելոյն։ Վասնզի լեալ էր նա ամենեցուն սիրելի և  
բաղմաց եւս իրրեւ պաշակի, վասն բազումք դոր-  
ծոց իւրոյ զոր արար, թագաւորեալ ամս և Ա։ Ա-  
պիսի հայրենասէր անդիւտ թագաւորի վերայ Հոք+  
Քը զանազան գովասանական զերդս յօրինեցին և  
երգեցին։ Զորոյ զսակաւսն աւանդէ մեզ Գրի-  
գոր մագիստրոսն, թէ «Բազձայր (Արտաշէս) մզոյ  
միրկեալ ծխոյ շամանդաղեալ առ հասարակ շի-  
նից և քաղաքաց։ (Վասնզի Արտաշէս (ասէ) ա-  
սէր 'ի մեռանեն իւրում)։ «Ա սայր ինձ զժուխն  
ծխանի, և զառաւոտն նուասարդի, դվագելն եւ-  
զանց և զփագելն եղներուաց, (և ժողովուրդն իրը  
պատասխանելով) Մեք փող հարուաք և թմզկէ  
հարկանէաք. որպէս օրէն է թագաւորաց»։

5. Բագրատունի Հոյրենասէր ընտիր թագաւ-  
որաց կարդէն յիշեմք առաջին և մեծ թագաւորնէ  
Աշոտ. որ իւր կորովի քաջութեամբ և մեծիմաստ  
համճարով յաշա մերագնէից սիրելի։ և արտաքննցն  
ցանկալի։ Աշոտ ասկէ 985 տարի տուակ բոլոր աղ-  
ջի հաճութեամբ նախարարաց և իշխանաց հաւա-  
նութեամբ Բագրատունեաց ցեղէն ընտրեցաւ Ա-

թագաւոր կի վերայ Հայոցս, և պատուեցաւ կի կոյ-  
սերաց Յունաց և յամիրապետաց Արտրացւոց, Աշոտ  
միշտ եղաւ հայրենասէր միշտ աշխարհաշէն, և իմաս-  
տութիւն հայրենեաց մէջ ժաւալող, Աշոտ քաղա-  
քական կարգօք զմեծ և փոքր Հայաստան բարե-  
կարգեց, և իւր եղակի կրօնասիրութեամբ եկեղե-  
ցին պայծառացոց: Խնչպէս յիշէ Ասողիկ պատմիչն:  
«Եր (Աշոտ) այր քաղցր և հեղ, և անարատ և  
անբամբառ կեանս կեցեալ, և ոչ անօրինեալ ար-  
տաքոյ օրինաց ընութեամնն և հաճոյ էր Ասուուծոյ  
յամենայն վարս անբիծս»: Իսկ Յովհաննէս կա-  
թողիկոս Աշոտոյ ներքին և արտաքին բարեմաս-  
նութիւնք ներբազելէն զինի, նորա իմաստութիւն  
և ժողովրդասիրութիւն վայէլլանկէս դովելով ասէ  
«Եւ վայելլացեալ գեղեցկութեան ալեօք, մեծի-  
մաստ և քաղցրաբան, և առ կերակուրս խրախնա-  
նաց ոչ խանդացեալ նորա ընդ. լաւագոյնան և ոչ  
արհամարհեալ զնուաստագոյննն, այլ հասարակաց  
կի վերայ տարածանէր զգեստ խնամոյ իւրոց և  
լժակօք իմն կշուր, նախ զիւր և առա զամենե-  
ցուն կենցաղս. միանգամայն իսկ ասել, եթէ որ  
ինչ մարդկութեանս էր պիտանի՝ ոչ ինչ կասեցու-  
ցանէր: Իսկ մեր Հայրենակից Թովմա Արծրունի  
պատմիչ, որ ժամանակակից է Աշոտոյ. հիացեալ ընդ  
հանձար նորա ասէ: «Բարձրատգոյն և հանձարեղա-  
դոյն էր քան զբնու Հայաստանեայս, և զբնդհա-  
նուր կացեալս իներքոյ երկինից»:

6. Համառօտութեան զհետ երթալով չուզեցի  
Հայկաղանց, Արշակունեաց, Բագրատունեաց, և  
Ռուբենեանց համօրէն թագաւորաց գործք և արու-

թիւնք բովանդակել՝ ի գիրս , այլ թողի հայրենան սիրին կարդալ ստէպ զգիրս թագաւորացն Հայոց Ռուբենեանք որք շառաւիղեցան դարձեալ ՚ի ցեղէն Բագրատունեաց , և 26 արք երեւելիք և պատուականք մի զինի միոյ հանճարով , քաջութեամբ և հայրենասիրութեամբ իրրեւ իշխան , իրեւ պարոն , իրրեւ թագաւոր թագաւորեցին ՚ի կիլիկիա : Ամենեքեան արք զօրութեան , և բազում գովեստից արժանաւոր : Ռուբենեանք այն դարու մէջ զօրացան , իշխեցին և թագաւորեցին , մինչ դեռ Ասորոց , Հրէից , Մարտաց , Փիւնիկեցւոց հին թագաւորութեանց հիմունք և նշխարք միանդամայն անհետացած էին : Այն դարու մէջ սկսան հայկական արեւան ուժգնութիւն աշխարհի ցոյց տալ . երբ որ Թամարաց , Հագարացւոց , Եղիպտացւոց ըրունութեան բազուկ զտիեղերս սասանեցւցանէր : Ռուբենեանք ՚ի սէր ազգին և հայրենեաց շատ անգամ քաջութեամբ զօրաւոր աղդաց գէմ պատերազմ մշեցին և յաջողեցան . և եթէ Ռուբենեանք Հոռոմայ Փատւասէր Պապից սուտ յոյսերէն շաբուէին , ոչ իրենց իշխանութիւն տկարանայր , ոչ վերջին Լուսինեան Լեւոն գերի վարուէր յեղիպտոս , և ոչ ՚ի Փարփա 1395 թուին պանդխառութեան մէջ մեռնելով օտար հողի վրայ կթաղուէր որ 4000 տարւոյ թագաւորաց վերջին յոյսի մնացորդն էր :

7. ՚ի կարգէ 93 թագաւորաց չորք միայն եղեն անպիտանք . նախ երկրորդ Խոսրով թուն մեծին Խոսրովի , և որդին քաջն Տրդատայ . Բ. Խոսրով որ ոչ իւր հաւոյն մեծութեան . և ոչ իւր հօր քաջութեան Հետեւելով անփոյթ եղեւ ՚ի խնամելոյ

զՀայրենիս . մեղկացաւ , թուշացաւ և նուաստացոյց  
զպետութիւն Հայոց . ուստի պարսաւ և նախատինք  
միայն եթող զինի իւր : Երկրորդն է անմիտ և ան-  
խորհուրդ Տիրան , որ բրածեծ առնելով սպան  
զմեծն Ցուսիկ . և խաւարեցոյց զլուսաւոր արեւն  
Հայաստանի . ուստի ինքն եւս 'ի պատիժ անձին իւր-  
բոյ զրկեցաւ 'ի աեստթենէ լուսաւոր աշացն 'ի  
ձեռն Պարոից արքային : Երրորդն է ուխտագրուժ  
Պակն , վարուք և բարուք ապականեալն , որ թու-  
նալից բաժակաւ երարձ դքաղյոր արեւն մեծին Ներ  
սիսի և խաւար էած 'ի վերայ Հայաստան աշխարհի  
Չորրորդն է Արտաշիր տղայամիտն , որ նախ գերի  
լինելով ախտից իւրոց . ապա 'ի ձեռն անխորհուրդ-  
նախարարաց մերոց , իրբեւ անդարձ գերի մի մատ-  
նեցաւ 'ի ձեռու անագործին Պարսից , և մեռաւ 'ի  
գերութեան :

8. Հարկ եղեւ յիշել թէ՝ թագաւորք մեր իրբեւ  
Հայր իշխանով 'ի վերայ Հայոց , գող թէ անսահման  
ազատութիւն նորհեր էին նախարարաց զոր թերեւս  
այլ ազդ թագաւորք չէին նորհած իրենց նախա-  
րարաց և ժողովրդոց : Այն ազատութիւն ոմանք  
'ի նախարարաց երբեմն չարաշար 'ի գործ դէելով  
թագաւորաց մահուան և անկման պատճառ լի-  
նէին : Իւրաքանչյուր նախարարք և նախարարու-  
թիւնք . ոչ թէ իրբեւ ակամայ կամ բռնի հնազան-  
դէին թագաւորաց մերոց , այլ բացարձակ ազատ  
կամօք , իրբեւ դաշնակից վոքքը իշխանութիւնք  
ընդ մեծ իշխանութիւնս . վասն զի իւրաքանչյուր  
նախարար ուներ ընդարձակ երկիր , բազմաթիւ  
զօրք և մեծ հարստութիւնս . ուստի եթէ օրիւ-

Նաց պատկառ կենալով աղաս կամօք չհնազանդէր թագաւորին, իսկոյն ապստամբութեան դրօշ բարձրանայր, ինչպէս որ Արկունեաց նախարարութիւնն Տրդատին դէմ և Արծրունի Գագիկ ընդ դէմ բագրատունեաց բարձրացուցին :

9. Թերեւո հայրենասէրն չէ մոռցեր մոլեխինդն, զոր վատաշուէր նախարարք արբուցին Տրդատայ, և բարձին զնորա պատուական կեանք, զոր քառասուն տարի Պարսիկք և Հիւսիսայինք, դայն յաղթող և Հսկայագօր թագաւորէն չկրցին բառնալ: Աչ ապաքէն անխորհուրդ նախարարք զԱրտաշիր Պարսից մատնեցին : Եթէ Արծրունեաց նախարարք Բագրատունեաց պետութեան դէմ չհակառակէին, Բագրատունիք՝ Արշակունեաց պետութենէն առաւել զօռաւոր լինէին : Եթէ քսու և մատնիչ վեստ Սարդիս մի՛ ՚ի շահ անձին խրոյ յաջողեցաւ, ոչ միւս այն խարել զԴագիկն զ. և մատնել՝ ՚ի ձեռս Յունաց այլ զչքնազաշէն Անին վաճառել թշնամեաց, և կործանել Բագրատունեաց իշխանութիւն և հայրենեաց հատատութիւնն Արգեօք եթէ մի քանի վեստ ընդիրեարս միանան ՚ի ըսրիս և ոչ ՚ի բարիս ամէն տաեմ, ոչ թողուն զքար ՚ի վերայ քարի որ ոչ քականցեն:

10. Աւա՛զ Պագիկ սուտ երդմանց Սարդսի հաւատալով երժայ առ կոստանդին Մոնտախոս . որ խիստ երդմամբ տպահովութիւն տուած էր ոչ ինչ չար առնել: Բայց վեստ Սարդիս մի քանի ազգ ատեաց իշխան խր կողմն որսալով Անուոյ 40 բանալին կայոեր խրկեց հանդերձ հետկարաւ, որով դԱնին և զՀայաստան կայսեր տայր: Գագիկ իմանալով դէմ կեցաւ չտալոյ և իս եմ ասէր թագաւոր, իմէ քա-

զաքն և աշխարհն . ես ոչ տամ քեզ և այլն , եւ աւուրս 30 այսպէս ընդ իմարանէր : Յետ այսորիկ կայորն ոչ եւ թոյլ գագկոյ գառնալ յիւր հայրենի աշխարհն : Ա. Ա. յամի տեսան 1040 զօրս բազում յըղեալ տիրեաց քաղաքին 'ի ձեռն Պառակամանոս զօր բավարի : Մատթէոս պատմիչ ասէ «զօյր կին կամէր գնել աշխարհին Հայոց փախանակ հզօր քաջին Գագկոյ» : Խակ քաղաքացիք , որք զառաջին ընդ դէմ դարձեալ Յունաց՝ կոտորեցին և հալած եցին . իբրեւ ստուգեալ ծանեան զնենդութիւննախարարացն և զոչ դառնալ թագաւորին խրեանց : Լային առ հասարակ ամենայն տուն Հայոց և տրարին ամենայն քաղաքն ժողով , ուր էին գերեզմանիք Հայոց . Ըստին և զաթոռ թագաւորութեան խրեանց : Եւ ազա հարկագրեալ Ետուն զլինի 'ի ձեռս Յունաց :

Ա. Ի յարեւելս Արեւն Հայոց 'ի Հայկէն և 'ի Մտսեաց բարձունքն ծագելով 4000 տարւոյ մէջ իւր շրջան կատարեց , երբեմն խիստ պայծառ . և երբեմն ազօտ ձառագոյթ արձակեց Հայստանի հորիղոնի վրայ , ապա խանարհելով 'ի յարեւմաւսու՝ 'ի ստորոտ Տորոս Եւրանցն կիրիկոյ , և յուսկ ուրեմն 'ի Փարիզ քաղաքն Գաղղիոյ 'ի մայր մոտու , անշուշտ Արեւելքն վերստին մի նորահրաշ պայծառ . ԼՈՒՍՈՎ ծագելոյ խորհրդով :

---

 Յ Օ Դ Ա Խ Ա Ծ Գ .

Խ Ծ Խ Ա Ն Ք

4. Արդիք Հայստանի երբ մարզուին , հրահանդուին և պատրաստ լինին ծառայել Հայրենաց . ովէտք է որ 'ի մետ առնուն և գիտնան թէ

աղդեօք իշխանական վիճակի՝ մէջ . թէ հնազանու  
 դոթեան վիճակի մէջ մնալով առաւել շահաւետ  
 կերպիւ ծառայել կարեն հայրենեաց : Եթէ իշխա-  
 նութեան վիճակի մէջ ցանկան իւրեանց նօրատակ  
 յառաջ տանել , թող երրեք թիսուսի պատուէր  
 մորք չհանեն , այն է «ո՞ իսէ՞ ՚ի նենջ մէն ընել , են-  
 չի առնեցան իշխան և առնեցան նախայ» : Թող քաջ ՚ի  
 միտ առնուն , թէ՝ Աստուած սկզբանէ աշխարհի  
 չետ իշխանութիւն մարդոյն՝ իշխել և իշխան լինել  
 ՚ի վերայ մարդոյն , այլ ասաց «էշենոց աժեռոյն հառը .  
 նոց երիբ , նունոց երինից , յգանց ձուլու . և աժեռոյն առջ  
 նոց ո՞ առջն ՚ի չեւո երիւ : Մարդի՛ որք ընդհան-  
 րապէս ՚ի պատկեր Աստուածոյ ստեղծան , առանձին  
 մի մարդոյ անկ չեր բնու այն աստուածանման  
 մարդոյն վրայ տիրել , իշխել բանարար . մարդիկ ,  
 որք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ հասարակաց ա-  
 րարչն հաւասար ստեղծան , աստուածպետական  
 կառավարութենէն , հասարակաց հօրէն միոյն պարտ  
 էին նախախնամիլ , երբ որ մարդկութեան սահմանի  
 մէջ իրբեւ մարդ մնային և իրբեւ մարդ ապրէին ,  
 զի եթէ այսպէս մնային , կամ Աստուածոյ անփիշա-  
 կան իշխանութեամի ինսամնէին , զոր խնդրէր  
 Սայի վասն խրայելի . «Ցեր հայր մը , ուր դաստիար  
 աչ , ուր էշենոց մը , և նա էշենոց մը » . իւ կամ հրեշ-  
 տառիաց միջնորդութեամբ ինսամնէին . որպէս ա-  
 սէր Դաւիթ «հրեշտակոց իշխան պատուիչեալ և վաճա՞՛ի  
 պահել զի՞ւ յամենայն հանապարհն առաջ : Աւստի որք սիրեն  
 իշխել մարդկանց , պարտին նախ առաջ ինութեամբ  
 Աստուածոյ և Հրեշտակի նմանել . և ապա մարդկանց  
 վերայ իշխել . զի այսպիսեաց իշխանութեան հա-

Վար առաց Պօղոս «Ոչ ուստեք քէ իշխանութիւն եթէ  
ո՛չ յԱստուծոյ . և որք կարգեալ են . յԱստուծոյ  
կարգեալ են :

2. Հայք քանի մի տեսակ անուն որոշեցին տալ  
Հայ իշխաղ . աւագ , աւագ այր , իշխան , նա-  
խարար , աղատ , պայտազատ , ստանիլ , բդեշին , կու-  
սակալ : Իսկ Պարսկաց և Յունաց մենէ առած ան-  
ուստանք են . Շահնշահ , Մարդպան : Կիւրապազատ  
Պատրիկ , Մագիստրոս և այլն : Ինչ անուն կուղեւ  
տալ իշխանին , տուր . զի անուն չէ , որ իշխան իշխա-  
նական անուան արժանի առնէ . այլ իշխանի մե-  
ծանձնութիւն , մեծագործութիւն և հայրենասի-  
րութիւն է , որ իշխանի անուն վառօք և պատուով  
պասիէ : Իշխան ժողովրդեան ծերն է . ազգին հայ-  
ըլն է , հայրենեաց աւագ այրն է : Իշխան պէտք է  
որ լինի Մայսեսի պէս աստուածատես և աստուա-  
ծախօս . Սամուելի պէս արդար և անաշառ . Զօրա-  
րաբարելի պէս շինող , Յուդայ Մակարէի պէս քաջ ,  
Վարդանի պէս անձնուեր . Գայլ Վահանի պէս խո-  
րադէտ , Սողոմնի չափ իմաստուն , Գանիելի չափ  
հանճարեղ , Յովսեփայ չափ հեռատես , Մուրիմքէի  
չափ ազգասեր , Վահան Մամիկոնէի չափ հայրե-  
նասէր :

3. Ազգ առանց այսպիսի անզուդական իշխա-  
նաց չէ ազգ , զի այսպիսիք են հայրենեաց այգւոյն  
պարիսալ , քաղաքաց բերդ և աշտարակ , հայրենի  
սահմանաց քաղաք արտասահնի , զրկելոց և տա-  
ռապելոց որբոց և այրեաց հոյր : Բայց մարդն  
այն . որ արծաթով , որ վառասիրութեամբ , որ  
բռնութեամբ , որ խորէութեամբ բարձրանայ ՚ի

գահ ժողովրդեան . նա չէ իշխան , այլ շահամբէ այլ փառասէր , այլ բանաւոր , այլ խաթերաց և դասէին ժողովրդեան : զի նա է իշխան . որոյ վսեմ՝ վեհ , և մեծ գործք բւելեայն աղաղակեն . և աղդ և աղինք ընդ խոհեմութիւն , ընդ արխութիւն և ընդ խմասութիւն նորա զարմանան և ժողովրդք սրտի մոօք սիրեն , պատուեն և հնաղանդին նմա , որպէս հնաղանդին որդիք հարցն իւրեանց :

4. Պէտք է զիանալ թէ ամեն կարգ ժողովրդոց մէջ՝ հայրենասէր իշխան մեծ և առաջին գաստիարակն է աղդին , զի ամենայն աչք որ ՚ի ժողովրդեան են ՚ի յիշխանն հային և ամենայն ունկն որ ՚ի ժողովրդեան է , հայրենասէր իշխանի ձայնին լսէ . եթէ Հայաստան վարդանի պէս առաքինի իշխան մի չունենար , Հայոց իշխանութեան անկման ժամանակին չէր հնար 60,000 զօրք ՚ի պատերազմ գումարել ընդգէմ Պարսից , զի ամենից աչք ՚ի վարդան էր . Վարդանի անձնուելոր օրինակին հետեւեցան Հայք վարդանի ձայնին անսացին , որ իրեւ հրաման Աստուծոյ աղդեց ժողովրդեան սրտին , հաւաստի էին Հայք թէ վարդան վասն փառաց և մեծութեան չէր , որ պատրաստէր ՚ի պատերազմ , այլ վասն փառացն Աստուծոյ , և վասն նախանձայոյզ լինելոց հայրենի օրինաց և եկեղեցւոյ : Յայտ յանդիման տեսին Հայք , թէ Մամիկոնեան իշխան կամակար , յօժարութեամբ պատրաստ է զանձն դնել ՚ի վերայ հայրենեաց՝ լուան ՚ի բերանոյ նորա՝ որ առէր թէ պատերազմն այս , է պատերազմ Աստուծոյ և ոչ մաքդ կան : Եղիշէ Ե . յեղանակ : «Մէ՛ Նէ՛ Կայութեւ շահ-

Քիոթեցաւ ՚ի բազմութեան հելաւուցաւ , և ՚ի յանդէին սըստ  
առա ժանիացաւի զիկիան քորյացաւ : Զի ելլե սըստ  
Տէր յաշնութեան ՚ի յեւս մէր , պատիւցաւ զաքրանիւն նացա ,  
չի բույրացի իւզն ճշմրացաւիւն , և ելլե հասեւլ իւտ ժա-  
մանու իւնոց մէրց սարք մահաւիք պատերազմիւ , ընկայու-  
ինուունիւսի սրախ , բայց միայն յարաւիւնիւն աւշութեան՝ վա-  
րաւիւն ՚ի իւսանիւցաւ . . . : վաւուլ և զՏէր բույրաց ընտ-  
մեջ ունենաւիւ յատագործաւիւն : ՚ի մէր մարտ զբավար ,  
ոյւ շաբաթը լուսին ամիսոյն մարտիրաց : Երիւալ ընրանուու-  
թեան և նշանակ , զիկրանուունիւն մէր ՚ի մէջ մուլ մէրժե-  
ցաւ : ընդ նմէն և էրիւան փախեց ՚ի մարտ և ՚ի իւրաքանչիւ-  
թեցաւ և այս :

5. Եթէ իշխան ես , կամ իշխան լինիլ ցանկսս ,  
ա՛ռ քեզ օրինակ թիւրասիան Ամրատ իշխան : որ  
թագադիր էր Արշակունի թագաւորաց , որ Հայոց  
իշխանութիւն աւելի սիրեց քան զիւր առանձին իշ-  
խանութիւն , զի Հայոց թագին ժառանգն՝ զմանուկն  
Արտաշէս , որդին Ամնաարելոյ , աւելի սիրեց քան զին  
և զորդիս իւր , և ազատելով ՚ի սրոյն Երտանդայ  
տարատ առ արքայն Պարսից Դարեհ , ամենայն ինստ-  
մովք զդուշացաւ մանկան , կրթեց , զատիւարակեց  
զայն արքայամայել զիստ թեամն և քաջութեամն  
մէջ , և առա դարեհի օդնութեամբ և իւրայնոցն  
քաջութեամբ ՚ի Հայոց գահէն ՚ի բաց վանեց զան-  
հարազատ թագաւորն Երտանդ , և ՚ի տեղի նորա-  
հաստատեաց զժառանդ թագաւորութեամն Հայոց  
զԱրտաշէս :

6. Բայց որք առանց կամաց և ընտարութեամ-  
ժողովրդեան՝ կամին իշխել և ամրել ՚ի վերայ աղ-  
քին , մեզանչեն իրբեւ զվասակն որ առանց կա-

մայ ազդին ցանկայր իշխել 'ի վերայ Հայոց : Որոյ  
գասն գրէ եղիշէ և եղանակ : «Եւ այն որ կամելը  
թաղառոր լինել մատնութեամբ Հայոց աշխարհին ,  
և ոչ գերեզմանի նորա տեղի երեւեցաւ 'ի նմին ,  
քանզի իրեւ զշուն մեռաւ և իրեւ դէշ քարչե-  
ցաւ : Ա՛չ յիշեցաւ անուն նորա 'ի մէջ որրոց , և ո՛չ  
մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն  
յեկեղեցւո՞ն : Աշ ինչ եթող չարիս , զոր ոչ դոր-  
ծեաց 'ի կեանս խր . և ոչ ինչ մետածեծ  
չարեաց , որ ոչ անցին ընդ նա ՚ի մահուն նորա :  
Դրեցաւ (ասէ) յիշատակարանս այս վտան նորա տու  
՚ի կշտամբումն յանդիմանութեան մեղսոց նորա . զի  
ամենայն որ զայր ըստեալ դիտասցէ , նղովս զճեա  
արկցէ , և մի լիցի ցանկացօղ գործոց նորաւ :

7. Հզօր բազուկ Ամենակալին արագ խորստակէ  
զեղիսւր փառասէր իշխանաց և չոսոյ իմոյ խորե-  
բայից և սոբարտաւանից տիրել և իշխել 'ի վերայ  
իւրոյ սիրելի ժողովրդոց : Բայց եթէ ժողովուրդք  
տղ իւրութեան և անմիտութեան ճանապարհ մէջ ամէ  
բարշտին , թող տայ որ խորեբայք , կեզծաւորք ,  
կտշառառուք , վրիժագործք , դոդք և մնիրաւք  
տիրեն և իշխեն 'ի վերայ նոցա , որք զալլին խոր-  
տակեն և կորսանեան մատնեն : Խոստովմենեցան Ա-  
զարեանք 'ի մէջ հնոյին զեկո իւրեանց տոելով .  
«Ու է՞ է ժողովութեանի իշխան նորբերէ և առաջնորդ ...  
զի մեզաք մեր ընդ հարմն մեր . . . : Արդ զամենայն  
զոր ինչ արարեր և զոր ինչ ածեր 'ի վերայ մեր ար-  
դար գտառաստանաւ արարեր» :

8. Տէր երր տեսնոյ , թէ միայն իշխան է յան-  
ցաւոր՝ իշխան պատժէ . Սաւուղ պատժէ , դաւիճ-

Պացուցանել ՚ի տեղի նորա . Տէր երբ տեսնայ , թէ  
ժողովուրդ յանցաւոր է , խակ իշխան արդար , զժո-  
ղովուրդն պատմէ և ղիշխանն աղաստէ : Տէր երբ  
տեսնայ թէ իշխան և ժողովուրդն ՚ի միասին մեղան-  
չն , երկուք ՚ի միասին պատմէ , զի ինչպէս Սեգե-  
կիա գերի վարեցաւ , նպանպէս և ժողովուրդն գերի-  
վարեցաւ ՚ի Բարելոն , Սեգեկիա զբկեցաւ չթա-  
գաւորել ՚ի վերայ Խորայէլի . զրկեցաւ Խորայէլ այլ-  
եւս չունամնել զիտագաւոր ՚ի ցեղէն Յուղայի : Ահա  
այս է դատաստան Աստուծոյ ՚ի վերայ ժողովրդեան .  
որ դաւազան նորա ձեռքէն առնելով՝ թող տայ որ  
օտարք ՚ի վերայ նորա տիրեն , և դաւազանաւ եր-  
կամեաւ . զաղդն իրեւ զանօթ ըրտի վշրեն :

9. Վլիթաւի իրապետի ժամանակ երբ Սրաբացիք-  
հետղեաւէս սաք կոխած էին ՚ի Հայաստան , և տես-  
նելով . թէ՝ քանի որ Հայոց Նախարարական և իշ-  
խանական ցեղագետք և ժառանգք կան , չկարողա-  
նան պիտի տերել բովանդակ Հայաստանի . վասն զի  
թէ Ամրատ Բաղրատոնին , և թէ այլ Նախարարք  
ընդդէմ Հայդարացւոց պատերազմելով՝ մեծ ամեն  
ջարդ ու հարուած առցին : Առաջի Նախանուանի հրա-  
մայօղն՝ Գառիմ , այն է կասմ . հրամանաւ Մահմէտի  
զօրաւարին ՚ի թիւ 800 , օձային խորամանկութեամբ  
խարելով զմեր աշխարհի աղաստ մարդիկ և Նախա-  
րարք 400 հոգի , բաց ՚ի Ամրատայ , որ Փօթիի կողմ  
փախուստ առւած էր , փակեց Նախանուանի Հրամի  
կոշուած Ե՛կեղեցւոյ մէջ , իրրու թէ ՚ի նույանէ հա-  
ւատարմաւթեան երդումն առնելոյ . միամիտ նա-  
խարարք խարուելով զէնքեր յանձնեցին թշնամնոյն  
մասն Աստուծոյ տաճար ուխտի աղադաւ , անողոք

Հարդարացիք գաղանային սրտմոռթեամբ այնչափ ընտիր և պատուական մարդիկ այրեցին Եկեղեցւոյ մէջ . և սպանելոց և այրելոց մեացեալ ընտանիք դերեցին և քշեցին տարին 'ի Դամասկոս առ Ամիս բապեան : (Ղեւոնդ) «Այսպէս անժառանդ առ նէին զաշխարհս 'ի նախարարաց , յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս Հայոց , մատնէին իրեւ զոշխարս 'ի մէջ գայլոց և թշնամեաց անօրինակ չարեաց յարձակեալ 'ի վերայ՝ յանհուն աղետս վըտանդի զրնակիւս աշխարհիս . որոց տաղտիացեալ յանհանդիս նեղութեանցն՝ զհառաչանս և զաղազակ հեծութեանն բարձրացուցանէին յերկինսա : — «Այսպէս առ հասարակ սպառեցան բազմութիւն նախարարացն Հայոց 'ի դաւաճանողացն անողութից Բայց ոչ է երեմիա մերձ , որ զաղետս անցից ողբօք պատմեսցէ բողոքյն . . . . :

10. Եւ ահա այս 480 ամք են որ 'ի տանէն Հայոց բարձաւ իշխանական դաւաղան , բայց մեացորդ տոհմերէն շատք չունենալով պայտղատելոր յիշատակադիր՝ իրեւ աննշան տոհմ՝ խոռնուեցան աղդի մէջ և շատք իւրեանց աղատութիւն և քաջութիւն պահելոյ սակա՞ Մարաց և Ցածկաց մէջ խառնուելով՝ որոշեցան աղդային ցեղահամարէն : Այժմ Հայաստանի ժազավուրդ հին աւանդութենէն առած՝ անխստիր հարուատ մարդկանց շռայլէ իշխան անուն , բոյց շատեր ոչ յաջորդական ազնուութիւն և ոչ անձնական արժանաւորութիւն ունին իշխան կոչուելու , զի իշխան պէտք է որ ունենայ դատաստանի մէջ արդարութիւն , պատերազմի մէջ արիութիւն , կառավարութեան մէջ խոհեմութիւն , ազգի ըն-

տանեաց մէջ՝ ողջախոհութիւն. իշխան ունիցի հանճարն 'ի դլուխն, դժութիւն, յաղիսն, ազդասիրութիւն 'ի կուրծս, և հայրենասիրութիւն 'ի սիրան. բայց աւազը, որ սոցա հակառակին տեսանեմք այժմիկ: բարի և հայրենասէր իշխանք իրրեւ թեսուեալ պաղէք երկար ասլրին. յԱստուծոյ օրհնութիւն, ժողովրդենէն գովութիւն ընդունին և զերկիրն պարփեւաց ժառանգեն. իսկ ոչ բարի և հայրենատեաց իշխանք, իրրեւ կորիս, դատան և Արիլոն 'ի խորս անդնդոց սուզեալ սասանին :

## ԳԼՈՒԽ Բ.

ԱԵԶՈՒ · ԴՊՐՈՒԹԻՒՆ · ԵՒ ԳԻՒ

## ՅՕԴՈՒԱՄ Ա.

ԱԵԶՈՒ

4. Աստանօր արասցուք բանս դշնութենէ, զգեղեցկութենէ, և զվաեմութենէ լեզուիս. տացուքինքեան զիւր գիւրադարձ ճոխութեան ասպարէզն ճառել վասն իւր, ունին մասուցիք սունենայն աղինք 'ի բառս 'ի բարբառս և 'ի բանս լեզուիս Հայոց՝ որ իրրեւ զմեզր մեղուաց քաղցրանան 'ի ճաշակս ամենայն մարդկանց, հնչմունք, հոլովմանք և գասառութիւնք հայախօս լեզուիս իրրեւ երգս երաժշտականաց առատանան 'ի լսելիս ախորժելեայն :

2. Զշնութենէ լեզուիս բազումք 'ի մերոց ճարտարացն բազումանդամ պերճագոյնս և հմուտգոյնս

դրեցին և ցուցին մերազնէից և օտարազնէից, թէ  
լեզուն Հոյոց իրրեւ մոյր լեզու ՚ի յլղ.ամայ, ՚ի նո-  
յէ, ՚ի Յաբեթայ և ՚ի Հայկայ անտի աստ առ մեզ  
հասին : Ենդ այս ոչ երբէք երկմանցայ և ոչ աս-  
րակուսեցայ, այլ հաճեալ հաւանեցայ ընդ այս յոյժ,  
չին ինչ պիտոյ ինձ հեռաւոր վկայութիւնս հայ-  
թայթել ՚ի յայլասեր աղանց, որք զիւրեանց և կամ  
զլանդրիտ լեզուէ ասեն վինել հնագոյն քան զամե-  
նայն լեզուն, թէ և ՚ի նոյցանէ են բազումք որք ք-  
լերոյն խոստովանին գոյ հնագոյն քան զամենայն  
հնութիւնն լեզուաց . առ այս եթէ բարոյական և  
բնական վկայութիւնք չբաւեսցին . տակայն աեզա-  
կան անժխտելի ապացոյցք բաւեն բանափրաց, զի  
ահա Հոյատան դրախտավայր երկիր ինքնին լե-  
րամքք և դաշտովք բյուտք և ձորակօք, քաղա-  
քօք, աւանոք, գետովք և այդեստաննօք մնչաք  
և անխորդախ վիսյ են դհնութենէ լեզուիս :

3. Մովսէս ՚ի գիրս ծննդոց վկայէ դատարել  
տապանին ՚ի լետոն Աբարասեան, զի առ լերամբո  
խանիքցաւ գեղեցիկ գեղ երեսացն Աբայի . ուստի  
կոչեցաւ Աբարատ կամ Այրարատ : Այն է Աբայ ա-  
րատեցաւ : Ինեալ Նոյի ՚ի լեռնէն բնակեցաւ ՚ի նա-  
խինեւան . զոր մինչեւ ցայսօր ՚ի լեզու մեր կոչեմք  
զանուն տեղեւոյն այնորիկ նախիջեւան : Անդ առ ստո-  
րոտ լերինն (ասէ) անկեցաց Նոյ սցզի և արբեցաւ  
՚ի գինւոյ, և ահա մինչեւ ցայսօր կոչեցաւ այդին  
այն ՚ի լեզու մեր Ակոսի . այն է Նոյ արկ ուսի :  
Եւ այդին է կրծաստմն արկուոի բառին : «Ճնկեց  
(ասէ) ամէր Աստուած զգ-բախան յըդեմ ընդ արե-  
ւելու , գետ ելանէր յեղեմայ և ոռոգաննէր զամե-

նայն երեսս երկրի , որք եին Տիդրիս , Եփրատէս .  
Դեհնն և գիւսօն : Եղ տէր Աստուած զմարդն 'ի Դր-  
բախտի անդ . . . : Եւ ասելն թէ «Եւ Եհան արձա-  
կեադ դնա տէր Աստուած 'ի զրախտէ անտի փափա-  
կութեան դործել զերիիր , տասի առաւ . և Եհան  
զՊդամ և բնակեցւոյ յանդ ինան դրախտին փափա-  
կութեան » . պյուքի ցուցանելով ցուցանեն զտեղի  
զրախտին 'ի Հայաստան : Ջի որդէւ ստեղծումն  
արտոքումն և աճումն ծննդոյն Ադամոյ տեսանին  
'ի Հայաստան , նոյնպէս խոսել Ադամոյ որդւոց և թու-  
ռանց նորս բարբառով Հայոց 'ի Հայաստան : Քա-  
րոզելն Նոյի հակայիցն ամբարտուանից , շինումն տա-  
պանին և հանդ խառ տառպանին 'ի Հայաստան , խոսել  
Ցեառն Աստուծոյ և դնել ուխտ հաշտոթեան ընդ-  
Նոյի , ընդ որդիս նորա 'ի բարբառ . Հայոց 'ի Հա-  
յաստան :

Կ . Մովզէս Խորենացի , Ստեփաննոս Եղիսկո-  
պոս Արքեաց , Դրիգոր Մագիստրոս 'ի պատմմական  
յերկասիրութիւնն իւրեանց , Յովհանն Երդիկացին  
'ի մեջնութիւնն հին քերականութեան , ճշմարտու-  
թեամբ գրեն և ուսուցանենք քեզ զհնութիւն լեզ-  
ուիս : Խակ արդի մատենադիրք՝ Տէ՛ր Յովհանն Վա-  
նանդեցի , Տէ՛ր Մեսրոպ քահանաց 'ի յառաջաբանի  
քերականութեան իւրում : Հ . Ղոկաս ինձիձեան  
'ի գլուխ հնութեան լեզուիս և բնակչայ՝ բնակն ,  
բարոյակոն և աեզմական անժիսութի փաստիք գրեն  
և վկայեն թէ լիզոն Հայլոյ և Արամոյ : Եր լեզոն  
Հայոց և Ադամոյ : Բւտի եթէ ախորհես բանից  
ողորկագունից և պատշաճից , դացես և ընծերոցիս  
'ի գիրս վաստակաւոր արանցս , որք բազում զգու-

շառոր իմաստութեամբ զհնութենէ լեզուիս հառե-  
լով՝ մեզ աւանդեցին, զորս չէ անկ երկրորդել մեզ  
աստանօր: Այլ ես գրեցի սակաւուք, զի յամենայն  
սրտէ յօժարեսցիս զնախաստեղծ և զնախարարառառ-  
լեզու ազգիդ նախապատուել իրեւ նահապետն  
Հայկ: որ իրեւ առաջին առաջնորդ հայրենախ-  
րաց: յորժամ'ի Բաբելաշան խառնակութենէ անտի-  
դարձառնէր 'ի Հայաստան՝ մերժէր 'ի բերանոյ իւրմէ-  
զպատժապարտ բարրառն, և ոկտանէր հայրենախօս  
լեզուաւ վարել զրանս իւր: զորս լուեալ էր 'ի բե-  
րանոյ Նոյի, Յարեթի, Թորդոմոյ հարց իւրոց:

5. Եթէ գիտիցիս զյարդ հնութեան լեզուիս,  
մեծ ես և յոյժ ականաւոր: զի ազգք, յորս լոյն  
գիտութեան վաղ ծագեցաւ, զհետ եզեն գտանել  
զհնութիւնս: և զամենայն ինչ իւրեանց վաճա-  
ռեցին վանս ունելց զյուլովութիւնս հնութեանց  
'ի ներքս 'ի գանձարանի իւրեանց, ծանեան թէ հնու-  
թիւնք յայժ սիրելի են յաշս բանասիրաց, պատուե-  
լի յաշս արանց կատարելոց: այլ յաշս խոկոն և  
զգայուն հայրենախօսիրին զինչ թանկադին և պատ-  
ուական հնութիւն կարէ սիրեցեալ լինել, քան զա-  
տամախօս լեզուն: զոր 'ի հարց անտի ժողովեալ և  
հաւաքեալ ունիս 'ի գանձարանի մտաց քոց և 'ի լեզ-  
ուի: ահա եօթն հազարեան մայրենի լեզուն անդըս-  
տին 'ի մանկութենէ քումինէ իրեւ զաղ արփոյն թա-  
փանցիկ անցանէ ընդ լուսամուտ լսարանիդ, և  
արմատական վառք նորա կայթ ընդ կայթ բեկ-  
րեկմամբ շողշողայ 'ի վերաց լեզուիդ, և բարդ 'ի  
բարդ իմաստիւք խաղայ և զետեզի 'ի յոշս մօտացդ  
և իրեւ գանձ անկողոպտելի պահի 'ի սրտի քում:

Ամենայն նիւթական հնութիւնք արտաքոյ ևն մեզ՝  
իսկ իմանալի և զգալի հնութիւնք լեզուիս յարա-  
կից և ընկերակից են մտաց և հոգւոց մերոց .  
միշտ անբաժանելի են 'ի մէնջ . և մեք 'ի նմանէ :  
Բարե՛ . զի մէն մո բառ , բարբառ և բան հրաշալիք  
են հնութեանց որ ամենայն հրաշխիք պահեցան  
առ մեղ . զի ազդք հզօրագոյն կողուսին դշնու-  
թիւն լեզուի խրեանց , խալ հայք ուահեցին մինչեւ  
ցայսօր զլեզուն Հայկայ և Արամայ :

6. Զաշակ քազզրաւթեան հայախօս լեզուիդ .  
ուսուցին քեզ մատենագիրք ոսկեզէն դարու , Եզ-  
նիկ համեղաբան , Եղիշէն քազզրազրուցիւն , Մովսէս  
տրամախօսն , և Ղազար ճարտասանն , Սոհակայ և  
Մեսրովբայ մեղրածորան թարգմանութիւնք սուրբ  
գրոց , զորս ընթերցեալ քո 'ի հայ լեզու և 'ի բար-  
բառ , հիսոցեալ զարմացիս ընդ ուարդութիւն ,  
ընդ վսեմութիւն և ողորկութիւն արամախօս բար-  
բառոյդ : Յովհանն Երգնկացի առեալ 'ի Ստեղիան-  
նոսէ 'ի մեկնութիւն քերականութեան խրոյ զյատ-  
կութենէ զանազան լեզուաց ճառ է այսպէս «փափ-  
կախօս Հելլեն , սաստիկ Հոռոմայեցին , սորաւնա-  
կան Հոնին , աղաւազական Ասորին , պերճախօս Պար-  
սիկն , գեղագորդ Ալան , ծաղրական Քուրդն ,  
Խափարաձայն Եղիպատացին , ճըճուողական Հնդիկն ,  
Համեղական Հայն , այլ և համեմիչ , զի կարե զյո-  
ւովիցն առ ինքն ամփափել զհնչմանս :

7. ԶՊերճ և զվաեմ լեզուս կոչեցից Աստուածա-  
կան , հրեշտակական և դիցաղնական . մոտ 'ի  
տաճար սրբութեան Աստուածոյ , անդ լուիցես զերդո-  
տառու ածազդեցիկ շարականաց նուագեալ 'ի հո-

դերուխ վարդապետաց մերոց , որք իբրեւ իմաս  
նայի կայծակունս քրովբէականս մերձեալ՚ի շրթունս  
հոգւոյդ և մոտացդ՝ դքեզիրեւ դշտայիանն մօքրաւ  
զարդեն , մարդարէս և օրհնարանողը Աստուծոյ կա-  
ցուցանեն : ի ձայն օրհնութեան բարբառես զա-  
զօթս տէրունականս , երդես ընդ քահանայո և  
ընդ դպիրս , զձննդեան , դյարութեան , զնարտիրու-  
սացն , զչայրապետացն , զճդնաւորաց զիւսանաց .  
և զտապաշխարութեան զքրութէտկան սրբասացու-  
թինս , ընդ որս մօտք վերայեալ հուպ մերձենսա  
Ամենասուրբ եղրորթութեան : կալ՚ի ձեռին քում  
զբանս մաղթանաց հրեշտակալիան վարդապետին  
Գրիգորի նորեկացւոյ . ասելով՝ է Եւրոպ Եւրոպ  
ընդ Աստուծոյ , ել յիմնանայի լեռան Սինէական , և  
խօսեաց ընդ Աստուծոյ դէմյանդիման , և յորժամ  
՚ի ձայն հառաջանաց բուրգառաւ կամոցդ ճենճեր-  
եալ հոգւովդ ՚ի վեր անդ ելանիցես՝ ընդ 95 գլուխ  
մաղթանացն , տեսանես զերես Աստուծոյ , յորմէ  
լուսաւորին երեսք քո իբրեւ երեսք Մալակոփ :  
Յորժամ ընթեռնուս զնաւոն Յովհաննու Մանդա-  
կունոյ , զարձակ՚ և զատանաւոր բանս Ծնորհալւոյն ,  
զատենարանութիւնս Լոմիրօնացւոյն . զիսցեչտ-  
կան , զիսեմական . և զշրեշտակական ՚ի մեզ գըտ-  
ցես զբարբառն հայտիսօրս . որ ճոխառանձ յատ-  
կութեամբ իւրով անհամեմատ է ՚ի լեզուս աղդայ  
և աղանց :

8. Այլ աւազ դժխեմբախտին իմոյ հայրենեացս ,  
որ ՚ի բաղում հարուածս հալուած եալ , և իյոլով ար-  
կածս մահու և գերութեան անկեալ ընդ լծով ծա-  
ռայութեան տառապեալ , անողոք քանդմանց և

աւելրմանց հանդիպեալ , 'ի պերճութենէ վրառաց ,  
 'ի զուեմաղոյն բարձրութեանց խօնարեալ « իբրէ գլու  
 գ այրէ լուսաւ արարակնեամբ , » ու ու բանաց զբերան էոք . ոչ  
 ընդարձակէ զեղու իւր , ոչ բարձրացուցանէ զբար-  
 քառ իւր , ոչ պերճարանէ 'ի խօսիլն իւրում , ոչ  
 ողորկէ և վսեմացուցանէ զդիրս և զընթերցուածս  
 իւր : Զի մոռացեալ զպանժաղի հնաթիւն լիզուի  
 իւրոյ՝ զօտարօքն վարի անհարազատ լեզուօք՝ իրրեւ  
 խորդացեալ և հեռացեալ 'ի բուն մայրենի լիզուէ :  
 Զբաղումն տեսանեմք , են՝ որք վասն տրխոտ թեան ,  
 են , որք վասն ահին հեթանսաց , են , որք վասն  
 սասկ սնապարծութեան , և են , որք առ 'ի չորոյէ  
 հայրենասիրութեան՝ խօսին 'ի լիզուծս օտարաց ; ոչ  
 միայն ընդ օտարաղղիս և եթ , ոյլ ընդ աղդայինս  
 եւս , և զայս ոչ միայն արտաքոյ տանց ընդ հեռա-  
 ւորս , ոյլ սուսնին ընդ մերձաւորս եւս , որպէս թէ  
 չէր տուեալ նոյս 'ի վերուստ զեղոււ և բարբառ  
 հայրենի : Ա՛շ ապաքէն այսու օտարամբարութեամբ  
 աղաւաղի զեղեցի 'ի շինուած գորութեան լիզուի  
 մերոյ , և պերճագոյն վսեմութիւն նորա անկանի  
 'ի կործ ան , զի յորժամ արք խմաստոնք կամնու սայ-  
 թաքին 'ի լիզուս օտարաց , վարվազակի ռամիկն  
 իրրեւ յանդէսա ակամայ զ'նի սայթաքեալ՝ մոռա-  
 նայ զհայրենի լեզուն լուսափ բնակիչը նիւզանդի-  
 մակի իրրեւ արք խմաստոն պարսին նախ ըստ  
 նախարարաց և իշխանաց մերոյ հնոյ՝ սատանիկի և  
 արքունի լիզուաւ արարատեան աշխարհին ողջել  
 զիսօս իւրեանց : Ա՛շ ապաքէն լիզուն է թարգման  
 որտին և մոտաց . զի եթէ զիմարդ մանդ վախեացիս ,  
 փոփոխին միտք և խորհուրդք քո :

9. Բանասէրք մի դայթակղեսցին յիս կարծելով  
 թէ այսու ածեմ պարսաւանս ինչ ընդդէմ լեզուա-  
 գիտաց . Ես պարսուեմ զեզուակորոյս , և ոչ զեզ-  
 ուագէտու : Եւ լեզուագիտացն պարտէ նախ զնախ-  
 նեաց իւրոց զբովանդակ օրէնո լեզուի ուսանիլ , և  
 ապա զօտարացն ուսանիլ զեզու , զի որք նախ  
 զմայրենին չեն ուսեալ որպէս պարտն է . միշտ թերի  
 գտանին և 'ի լեզուս այլոց : Զքեռառնէ միջնոցն  
 Տիդրանոյ , զՄիհրդատէն ասեն գիտել և խօսել 'ի  
 Զկ լեզուս Արյնպէս ամենայն սրբազնն թարդմանիչք  
 մեր , նախնի թագաւորք , նախարարք և իշխանք  
 մեր ուսեալ էին և գիտէին զեզուս շրջակայ աղ-  
 դացն , Ասրոց , Պարսից , Յունաց , Վրաց և այլոցն-  
 բայց ըստ ամենայնի զբուշ և պատկառ կալով հնու-  
 թեսն լեզուի մերոյ , զբառ մի 'ի բառից նախնեաց  
 ոչ խոտան ինչ համարէին և ոչ կորուսանէին , զի  
 միշտ նախադաս զմայրենի լեզուն իւրեանց համա-  
 րէին , իսկ այլոցն իրբեւ երկրարդական : Թարդ-  
 մանիչք օժանդակութեամբ լեզուագիտութեան ճո-  
 խացուցին և փարթամացուցին զեզուն հայախօս :  
 Ծաս այսմ բանասէրք Ժամանակիս այսմիկ առաւել  
 եւս պարտին ո՛չ միայն ճոխացուցանել և փարթա-  
 մացուցանել զեզուն նախնեաց . այլ պարտին զա-  
 մենայն զօտարախորդ բառան , զներմուծեալ ոճն  
 և զդարձուածս բանից , որք ոչ յարմարին լեզուի և  
 ճաշակացն հայասեռ մանկանց 'ի բաց քերել : Սու-  
 փերքն հայրենեացս զգուշացին զանդէտու և զինա-  
 սակարս 'ի մատենից օտարաց , որք եղծիչ և ապա-  
 կանիչք են վարոց բարոց և կրօնից մերոց՝ չթարդ-  
 մանել 'ի լեզուս մեր . այլ ըստ հոգեկիր թարդ-

մանչայցն վոյլթ կայիցին զշտհաւէտն , զօդտակարն , և զբարեաց պատճառ . հայրենեաց մերոց զմատեանս թարդմանել 'ի բարբառու մեր :

10. Ի սոյն ամփոփին բավանդակ միտք մեր թէ Հայրենի աւանդական լեզուն մեր արմատ է Հայրենասիրութեան և սիրայօդ կապ միարանութեան աղդիս Արամեան . զի յորժամ ամենեքեան 'ի մի և 'ի նոյն լեզու խօսին ընդ միմեանս , զմի և նոյն խորհուրդ , զմի և նոյն սէր , զմի և դնոյն միարանութիւն պահեն առ միմեանս , և յաջողին 'ի խաղաղութեան , 'ի շնորթեան և 'ի զօրութեան . խոկյորժամ խորժ դուժ Սկիւթացի խօսին ; ատեն զիւմեանս , մատնեն զիսորհուրդու միմեանց , և քականեալ 'ի միարանութենե միմեանց՝ կործանին : Զի 'ի խառնակել լեզուացն միարանելոյն 'ի յաշտարակաշնութիւն , ոչ երբէք գտաւ 'ի նոսա սէր և միութիւն , որպէս եր յառաջն : Ծնն . Ժ.Ա . Գ.Լ . 1 . Եւ եր ամենայն երկիր լեզու մի , և բարբառ մի ամենեցուն . . . Ահա աղդ մի և լեզու մի ամենեցուն և զայդ սկասն գործել . և արդ ոչ ինչ պակասի 'ի նոցանէ . զամենայն զոր ինչ յօժարեցին գործել : Եւ ելմէ ըստ վկայութեան Աստուծոյ եղիցիս ազգ մի և լեզու մի , զամենայն զոր ինչ յօժարեցիս գործել առանց ամբարտաւանութեան յաջողեցի քեզ 'ի Տեառնէ : Ազաշեմ մի՛ երբէք մոռասցիս զիսոյրենի լեզուն քո . զի ելմէ մոռասցիս և եղբարք քո եւս ընդ մեզ մոռասցին : Դիտաչիր զի մոռանդ կորստեան ազդի քո մերձ են 'ի քեզ . զի 'ի փորձոց գաղթականայն Լեհաստանի տեսաք մեք , որք անդգուշութեամբ նախ զիեզուն փախեալ

ընդ նմին կորուսին զվարս զբարս Հայկական , և զկրօն և զաւանդութիւն լուսաւորչական : Ո՞չ ապաքէն հայրենասէրն ՚ի բնէ դիտէ թէ ՚ի բառս ՚ի բարբառս և ՚ի բանս հայրենի լեզուի , թագուն իմն խորհրդով պահին անդիր և դրաւոր յիշատակք աւանդութեանց նախնեաց մերոց , զի եթէ զբառ մի և եթ յապաւեոցես և կդրուսանիցես ՚ի դպրութենէ լեզուիգ , զաշխարհ մի և դյիշտատակ մի կորուսեր : Ուստի ամենայն զգուշութեամբ պարու է մեղ պահել ՚ի յամբողջութեան զեղամանխօս լեզոն մեր , զարմատ նորա ցօղով իմաստութեան դուարթացուցանել , զդեղ նորա ՚ի խառնալեզու տգեզութենէն արտաքս հանել և փայլեցուցանել :

44. Արդ յետ այսր ամենայնի յուշ լիցին քեզ բանք երանելցին Փօղոսի , որ առէ . «Եթէ զեզուս մարդկան և հրեշտակաց խոսիցիմ , և եթէ սէր ոչ ունիցիմ , ոչ ինչ եմ և ոչ ինչ օգտիմ : Եթէ զամենայն զբառս և զբանս նախնեացդ դիտիցես . և եթէ զամենայն լեզուս ազգաց խոսիցիս . եթէ զեղբայրն քո , զազդն քո , զհայրենիս քո ոչ սիրես , ոչ ինչ ես , և ոչ ինչ օգտիցիս .

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ ւ

## ԴՊՐՈՒԹԻՒՆ

45. Արարող դպրութեան այն է . որ ստեղծ զհոդի , զմիտս , զլունչ և զեզուս ամենայն մարդկան . ՚ի յանմեզութեան վիճակի չէր մարդն կարօտ դպրութեան . զի եօթնարիթեան ձրի շնորհօքն Աստուծոյ եր ըստ ներքին և արտաքին մարդոյն . ինքն յին-

քեան դողրութեան մասեան էր և դիլ յիշատակաց՝  
զի ոչ ՚ի մտաց նորա անկանէր բան մի . և ոչ ՚ի յու-  
շց նորա մոռացօնք լինէին գործք և խնամք նա-  
խախնամութեան և արարչագործութեան Աստու-  
ծոյ : Եւ մարդոյն զայս ամենայն առանց ինչ աշ-  
խատութեան գիտացեալ՝ գիտութեամբ առ ուսն  
եհար զգատառիրանն Աստուծոյ . որ արգել զնա չու-  
տել ՚ի ծառոյ անտի և եկեր . վասնորոյ հեռացան  
խորհուրդք խմաստութեանն ՚ի մտաց նորա , ժմա-  
փեցան յիշատակութիւնք ՚ի յուշոյ նորա . զի « Է-  
պատուի էր և ոչ իւղաց և այն » « հըսման եւս + բուժի+  
երեսց առեւ զնց » աշխատանիւեամբ գտանէլ որ ինչ առ  
սոս կայցէ գիտութիւն , և որ ինչ յերկինս է խմա-  
ստութիւն Աստուծոյ ոչ կարել քննել , զի վերացաւ  
՚ի նմանէ հոգին . որ ձրի չնորհեցաւ նմա :

2. Ուստի և իմ միաբանեալ ընդ առողջ բանա-  
սէրս նախնեաց մերոց տամ զգագրութեան նախա-  
պատութիւն առաջնաստեզգ մարդոյն . որ ՚ի յազդ-  
մանէ դթութեան Աստուծոյ արար դիր և դպրու-  
թեան յիշատակարան , և ՚ի նմա գրեաց զարարչա-  
գործութենէն Աստուծոյ , զիտաց և զանկման իւ-  
րոյ զգատամութիւն և ոչ որպէս որ յարեցէն : ու-  
թութեաց էւ-էւնց և Հը ճառացին զնո՞յն Աստուծոյ :  
Ի յիշատակէ և ՚ի յիշատակարանէն Ազամայ՝ ուսան  
Սէժ , Ենովս , Ենուիք . և Նոյ , որ նախ քան զուապան և  
յետ համայնաչինչ ջրհեղեղին գրեաց և աւանդեաց  
որդոց և թոռանց իւրօց : Ի Եցի անտի ուսան Յա-  
րեթ , Թօրդոմ , և Հայիկ նախահայցը աղդիս Արտմ-  
եան : Այսպիսեաւ առաջն անդամ առաջն դպրու-  
թեան ուսումն առաջն մարդոյն գրեցաւ և վարդա-

պետեցաւ ՚ի Հայաստան. ուր Նոյ որդիք և թռուռնք  
իւր զառաջին կալան զբնակութիւն. յորոց հետզետէ  
ծաւալեալ աւարածեցաւ. ՚ի Քաղգեացիս, ՚ի Փիւնիկե-  
ցիս, ՚ի Ասորիս, ՚ի յեզիրակասու ՚ի Պաղեստին, ՚ի յԱ-  
թէնս, և անտի ՚ի յաղպս ամենայն երկրի :

3. Գլորութիւնն նահապետաց էր ասեն ուսու-  
ցանել զմիութիւնն Աստուածութեան, պաշտել զնա-  
յանենայն մասաց : Վարդապետէինն զարարչառուու-  
թութենէն Աստուածոյ . զփառայն առաջին մարդոյն  
և զանկմանէն նորա ՚ի վառակենցաղ դրախտէ ան-  
տի զբանս զայտարիլ . ՚ի կճեայ քարեզէն սիւնս,  
և ՚ի տախտակիս պղնձիս փորագրեալ աւանդէին յե-  
տապ այից : Եւ որդիք Նոյի յետ ջրհեղեղին յաւե-  
լին ՚ի յարձանագիրս զանցս ջրհեղեղին զուպանին  
և զիւրեանցն , յորմէ առեն՝ սովորութիւնն կալան  
նախնի դիւցազունք զանցս անցելոց իւրեանց .  
և զքանչագործութեանցն փորագրել յերեսս ապա-  
ռաժ քարանց և լերանց (որպէս տեսանի յերեսս  
ըերդին Շամիրամոյ) և ՚ի ըեւեռագիրս հնառութեանց .  
ապա ՚ի քարանց և ՚ի տախտակաց անտի անցուցին  
զգպրութիւն ՚ի կեղեւս և ՚ի տերեւս ինչ ծառոց .  
և անտի ապա ՚ի թռուղիս մակաղաթեայս . որպէս  
տեսանեմք ՚ի մատեանս նախնեաց : Խակ ՚ի վերջ մե-  
տասանն երրորդ գարու (1198) ՚ի դիւտ բամպա-  
կեայ թղթի, զպրութիւնք ամենայն ազգաց անցին  
՚ի թռուղիս այս , յորում և ընդ որով ճախացաւ  
վերմացաւ զպրութիւն և աւարածեցաւ յոյժ յոյժ :

4. Յառաջ քան զքրիստոնէութիւն , ուսումն  
զպրութեան էր ՚ի ձեռս քրմաց , որոց զակատեալ  
զհետ մնապաշտութեան ընդ ազօտ առասպելեօք

ամփոփեցին զգիստութիւն դպրութեան . և զի չու-  
նեին զճշմարիտ դպրութիւն . ուստի չեղեւ նոցա  
փոյթ զուսումն դպրութեան ծառալել 'ի յուշն և  
'ի միտու ժողովրդեան : Ուստի ըստ Ադաթանգեզոսի  
պրոյն Դրիգորի գտեալ զմատեանս դպրութեան  
քրմաց ծածկեաց ընդ երկրաւ զի մի մեհենական  
քերթուածք և բանք քրմաց, որք աղարտիչք էին  
վարուց և բարուց մորդկան, զմիտու ընթերցողաց 'ի  
սիրոյն ճշմարտին Աստուծոյ հանեալ զինի սնապաշ-  
տութեան տանէին Բայց առեն թէ բազում գործք  
արութեան թագաւորաց մերոց էին գրեալք 'ի մա-  
տեանս , և աւանդական հնութիւնք խառն ընդ  
առասպելս եղեալք :

5. Լուսուորիչ վասն սիրոյն Քրիստոսի՝ Երարձ  
դպուտ դպրութիւն 'ի քրմացն և 'ի անդինորա զճը-  
մարիտ ուսումն դպրութեան աւետարանի Եմայք  
յորդիս քրմաց : Որդիք և թուունք Դրիգորի .  
ընդ որո Սահակ Մեսրովայ և աշակերտք սոցա զդի-  
տութիւն քրիստոնէական դպրութեան բազում  
ջանիւ վաստակեցան հանրածաւալ առնել յազդս  
մեր , բայց վասն անուսումնասէր բարս ուներց աղ-  
դին , մասց ուսումն դպրութեան միայն 'ի յեկեղե-  
ցականս , զի իշխանք և տանուտեարք Ժամանակին  
առէին զուսումն և զուսումնասէրս : Որպէս ողբայր  
Խորենացին 'ի վերայ դերեղմանին Սահակայ և  
Մեսրովայ ասկեցվ « Ո՞վ այսուհետեւ զմերս յար-  
դեցէ զուսումն . ո՞վ ուրախասացի ընդ յառաջադի-  
մութիւն աշակերտիս . . . » . Կշտամինէ Գերմեպատ-  
հայրն վանուառումնասէր բարս աղդին , զատիթ  
բարձմանն թագաւորութեան գնէ զադիտութիւն ,

և դանաիրելութիւն դպրութեան պատճառ նուառ զելոյ աղջին : Որոյ զհետ եկեալ աշակերտակից իւր Եղիշէ ասէ «Այս ամենայն չարիք եկեալ մոռնեն ՚ի մարդ յանուսումնութենէ , զի կոյր դրիփ ՚ի ճառ ուագայթից արեգական . և տգիտութիւն ՚ի կատարեալ կենաց , լու է կոյր աչօք քան թէ կոյր մաօք : Եթէ թագաւոր չունիցի վիմասութիւն առթուակից իւր . ոչ կարէ վայելուչ դոլ ՚ի վիճակի իւրում :

6. Ի ձեռադիր պատմութիւնն ինչ պատմի զխութենացոյն թէ՝ հալածեալ ՚ի տգիտաբարւոյ նախարարաց աղդիս ՚ի ձեւ աղքատի յանձանօթս շրջէր ՚ի գիւղօրայոյ Տարօնոյ և ուսուցաներ վարդիս աղքատաց ; և յետ երեսուն ամի հալածանաց՝ ՚ի ձերութեան իւրում եկն ՚ի յայտ , զի մինչ յայց ելաներ զիւտ կախուղիկոս Ցարօնոյ աշխարհին , և մինչ յաւուրս բարեկենդանի առներ ուրախութիւնն ընդ Ցիրասէր ժողովրդեան իւրում ՚ի գիւղ ինչ , անդծերոնիք յայտնեցին նմա զթերթօղահօրէն , թէ անձանօթ այլս այս գիտէ երդել զարմանայի երդս շարականաց , և մինչ ՚ի խնդրոյ Հայրանպետին երդէր երանելին վասն Հոգեւոր տեառն , ՚ի ձոյնէն և ՚ի գեղեցիկ դպրութենէն ծանեաւ հայրապետան . և գիրկոս արկեալ համբուրեաց զնա , և ձեռնալարեաց զնա եպիսկոպոս Բագրեւանդ գաւառին : Ի ժամանակին այնմիկ ՚ի նախարարս Հայոց Սահակ Բագրատունին միտյն դտաւ ուսումնասէր մեկենաս որ խնդրեաց ՚ի ձերունի Քերթողահօրէն զրել կարգաւ զդպրութիւն պատմութեան Հայոց : «Թուղթ առ Սահակ : « . . Զի եթէ որք

յառաջ քան զմել և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց. ոչ ընդ ձեռամբ անկեր լոց իւրեանց արդեօք գտելոց իմաստնոց դոյսպիտեցան հրամայեցին կարդել զյիշտուակս բանից. և ոչ արտաքուստ ուստեօք այսոցիկ ՚իներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից. և զքեզ այսպիսի այժմ եղետլ ծանեաք. ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան դքեզ նախագունիյն ճանաչիս վեհագոյն և բարձրագունից արժանաւոր դովութեանց. և յայսպիսիս պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս բանից : Ահա բանք երանել ոյն վկայեն ճշոիւ թէ՝ իշխանք ժամանակին այնմիկ ոչ միայն էին յոյժ ատեցող գիտութեան և դպրութեան, այլ ահընկէց լինէին սպանանել զդպիրս : Եթէ շատք ՚ի նախարարաց աղջիս իրեւ զՊահակ խնդրէին զդպրութիւն, այժմ բազում մատեանք դտանէին առ մեզ. բայց աւազ, զի արհամարհութիւն իշխանաց եղեւ առաջին պատճառ նուազութեան դպրութեան աղջիս :

7. Ներքին ատելութիւն դպրութեան, և արտաքին հալածանք բարբարոսաց տմիովեցին յակամայս զդպրութիւն ՚ի վանօրայս և յեկեղեցականաւ Մերոժան չոր իշխան, ոչ միայն ուրացաւ զհաւասն հայրենի, այլ գժոխամիտ նենդութեամբ յաւարի էառ դպտառական դպրութիւնս նախնեաց և այրեաց. թէմուր-լէնիկ զյոլովս ՚ի մատենից նախնեաց մերոց յաւարի առեալ տարաւ ՚ի Սմբակնդ, և իրեւ ՚ի յարդելանի վեմկեալ պահեաց զմառեանս մինչեւ ցայսօր : Աչ ուսկաւ այսպիսի աղէտս կողատեան դպրութեան մերոյ եհաս մեզ՝ ՚ի ձեռն

արշաւանաց Պարսից , Արաբացւոց , Ակիւթացնոց :  
որք թշնամի գոլով կրօնի , այրէին և կորուսանէին  
զամենայն մատեսնա դպրութեան մերոյ , որք ՚ի  
ձեռու նոցա անկանէին , վասնորոյ ճոխութիւնք և  
հարառութիւնք դպրութեան մերոյ անկան յաղքա-  
տութիւն , և դոդ թէ սքանչելուք իմն ապրեցան  
՚ի ձեռանէ գերչաց գեղեցիկ դպրութիւնք ինչ  
նախնեաց և հասին ՚ի ձեռան մեր . բայց աւազ , զի  
բազումք յընտիր ընտիր մտաենից և դպրութեանց  
անյայտացան և ծածկեցան ՚ի մէնջ : Աւազ մեծի  
դրկանացու , յորմէ զրկեցաք , յետ այնչափ զրկանացու :

8. Դպրութիւն իրքեւ որբազան և նորիրական  
արուեստ եկաց մնաց առ եկեղեցականու . որք ընդ-  
դարս և ընդ ժամանակս եզեն աշխատ զբան դպրու-  
թեան համատարած առնել ՚ի ժազովորդս Հայոց :  
Բայց ոչ յաջողեցան , զի բազումք յիշխանաց և ՚ի  
ռամկաց աշխարհիս աւելորդ անոլէտ համարէին  
զբան ուսման և արհամարհէին , կամ իրքեւ որբա-  
զան ինչ կղերաց միայն սեփական կարծելով՝  
ինքեանք բնաւին հեռոի եղեն ՚ի դիտութենէ և  
՚ի դպրութենէ . և ոչ սյառ միայն շատացեալ՝ կա-  
ցին մնացին , այլ ՚ի տէկտութենէ դդածեալ զհա-  
լածանս պէս պէս յարուցին ՚ի վերայ դիտնոց և  
հմտագունից . և մահացու ախտա այս ՚ի հարց անտի  
տակաւին տեւէ ցայսօր ժամանակի : Բայց կղերք  
մեր փութացին որչափ կար հնար եր հեղինա-  
կութեամի և թարդմանութեամի և ընդօրինակու-  
թեամի զմանօրայս զեկեղեցիս և զմատենադա-  
րանս ճոխացուցին հոգեշահ և օգտակար մատենիւք  
խքեանց : ընթերցի՛ք զիշատակարանս մագտ-

զաթեայ դպրութեանց , յորս լմթերցիւալ քո զուս  
նուն եռպիսկոպոսի , վարդապետի , քահանայի , և  
դպրին Մատո՛ Հնորհակալիս քրոնանց և մոտաց նոցա,  
զարմացի բբնդ գեղեցիկ դպրութիւն և դրչութիւն  
հարցդ , որք յառաջ քան զգիւտ մամից ինքեանք  
էին եփիչք մելանի , շինողք , կոկողք և յդիողք մա-  
գագաթեայ թղթի , գրիչք և ուկեզոյն երանդաց  
և ծաղկենկարսղք մատենից : Ի տեսանելն քո զայս  
ամենայն զարմացիս ընդ միտս քո դուխեցիս զհարս  
քո , և սիրեսցես զվաստակս նոցա :

9. Եւ գու եռանգուն Հայրենասէր՝ բուռն հար  
դգեղեցիկ դպրութենէս , դրեա' , դրեա' և մի ինաւ-  
յե՛ր , արկ 'ի ծառայալից յեղարս քո զտաղանդ  
դիսութեան քո , եթէ վարդապետ իցես , եթէ  
վարժապետ , եթէ տէր իցես . եթէ ծառայ յաւել  
և դրեա' զրան ինչ դպրութեան 'ի շիսութիւն եղ-  
բարցդ 'ի պայծառութիւն եկեղեցեցաց , 'ի փրկու-  
թիւն հայրենեաց քոց 'ի նորոգ սէթիւն և 'ի ճոխու-  
թիւն դպրութեան քո : Ի դրեն և յուսուցանելն  
քո յուշ արասիր աշակերտելոցդ , զի դպրութիւն  
ազգի իւրեանց նախապատի համարեսցին քան զտ-  
մենայն դպրութիւնս ազգաց և ազանց : Յորժամ  
հայիս ընդ ծայրադոյն ճոխութիւն դպրութեան այ-  
լոց ազգաց , մի զարմացիս ընդ այն , այլ զմատ-  
ած նիր թէ նորքս որչա՛մ չննիւ և աշխատութեամք  
հասին յայն կտտարելութիւն . զի եթէ միջամնուխ լիւ-  
ցիս յաշխատութիւն առաւել քան զնոտս հարստա-  
գոյն ճոխութեան հասպնիցես . զի էին 'ի նոսաւ  
ազգք որ ամօք ինչ յառաջ քան զքեզ յոյժ ազքաւ-  
տագոյն էին :

10. Զդպրութենէն ասացի , որ 'ի ներքս իւր փակէ , ո'չ միայն զԱստուածային , զքերականական , զճարտառանական , զտրտմարանական , զպաօմանական , զբարոյական , զանտեսական , զարուեստական գպրութիւնո , ոյլ զամենայն գպրութիւնո նախնի և արդի երեւելի արանց . որք վասն ուզդութեան մարդկան և վասն շինութեան աշխարհի դրեցան : Զի եղեն դպիրք՝ որք իւրեանց գեղեցիկ գպրութեամբ զազդ մի ովզոյն նորագեցին և փրկեցին , եւ զեն գպիրք՝ որք երկուոգ գրութեամբ զրունութիւն բոնաւորաց սանձեցին , եղեն՝ որք դպրութեամբ իւրեանց բարերար և բարեկամք մարդկան կոչեցան . եղեն՝ որք զխաւար տդիսաւթեան և կռամնոյւթեան աշխարհէ հալածեցին , և վասն այսպիսեաց աղաղակեցին եսայի , և Փօրոս և ասեն : Ուր իմաստուն , ուր դպիր և ուր քննիչ աշխարհիս այսմիկ և այլն : Վասն ոյսորիկ ցանկամ յարաժամ և փափաղիմ . զի ամենեքին , ծերք և աղայք երիտասարդք և կուսանք , արք և կանեայք լիցին դպիր արագագիր . վասն զի զդպիր մի աղքատ և ժրանան լաւ համարիմ քան զայն . որ ունիցի դաստակերտութեան մեծամեծու . զդրիչն դպրի առաւել զօրաւոր համարիմ : Քան զաղեզն և զերկալն հզօրաց . որ մահարեր են կենաց մարդկան . խոկ սա կեցուցիչ և դարմանիչ կենաց մարդկան : Ամենեքեան իրբեւ դըպիր աշակերտեալ արքայութեան Աստուծոյ 'ի գանձէ մտաց իւրեանց հանցեն զնոր և զհին . ամենեքեան եղիցին ուսեայք յԱստուծոյ , և ուսուցանիցեն զընկերս և զեզրարս իւրեանց 'ի նորոգումն եկեղեցեաց և 'ի շինութիւն հայրենեաց :

Գիր

1. Զգտիչ առաջին նշանական տառից դրոյն ասեն լինել Ադամոյ . որպէս և դպրութեանն Բառ որում Յուղայ տռաքեալ ի 14 համար բանից իւրաց 'ի վլայութիւն ածէ - զբան մարդարէութեան Ենոյքոյ , բասել ' Տարբերութեան Հարս և Եւնաւութեան յարաց լինել : Ի բանէ տառի յոյցամանէ 'ի յայտ դայ . զի եթէ մարդարէութիւնս այս չեր դրով կրոշեալ և պահեալ 'ի գարս և 'ի ժամանակս , անհնար էր աւանդութեամբ և եթ հասանիլ մինչեւ ցՅուղայ տռաքեան : Եւ զի որք ուստոցիչք էին ճշմարտութեան Բանին Աստուծոյ զհաւանական աւանդութիւնն ինչ ոչ երբէք 'ի միայն թիւն բերէին 'ի հասաւաել զրանս խրեանց : Զի յամենայն թուղթու աւեսարաննցոցն և առաքելոց բերեալ վկայութիւնք են 'ի ճշմարիտ գրելոցն մարդարէութեանց . տառի եթէ Յուղայ 'ի ճշմարիտ գրելոցն ոչ ածէր զվկայութիւն 'ի յԱռառաքելոց յանդիմանեալ լինէր :

2. Յողով բանառէրք ըստ այսու հաւասարի առնեն զլինելն Ադամոյ դտիչ առաջին դրոյն , խել այլք աւանդութեամբ ասեն հասեալք : Զամենայն զբանս հնոց և նորաց բանասիրաց 'ի մէջ բերել 'ի հասաւասութիւն ստուար մասենից պէտս ունիմք : Ուստի եթէ առաւել բանից ցանկաս , շատ լիցին հնախօսք Մադինատուի , Յովհաննու Երզնկացոյ . և Հ . Պուկասու Խնձինեան , որ 'ի յերրորդ համարի 'ի դլուխ դպրութեան ալլիւ դրեաց զհաւաստին

Արպէս ցուցաք ՚ի թօդուած զպբութեան, թէ Նոյի  
՚ի նահավետաց անտի ուսեալ, աւանդեաց որդւոց  
և թոռանց դդիր և դդողրութիւն : ի Քրիստիկան Եւ-  
սեբիայ . Ա. 32 . գատանի յիշատալութիւն ինչ մինե-  
լոյ դիր յառաջ քան զջրհեղեղն, սա ՚ի բանից բազ-  
մավիպէ Ազեքսանդրի բերէ հաստատութիւն . թէ  
շինող տապանին վասն զրհեղեղին հրամայէք ։ զա-  
մենայն զառաջինս և զիրջինս և զվերջինս մատե-  
նից փորել և դնելլյարեգ քաղաքին Սիսպարացւոց  
Ապա ՚ի 36 առէ, թէ յետ զրհեղեղին հրաման եկն  
ռերթալ և հանել ՚ի Սիսպարացւոց քաղաքէն, փո-  
րել և հանել զնատեանս, որ ծածկեալ կայցեն :

3. Հրէայք զի զնոյ ՚ի Մարդարէս կարգեն, ցու-  
ցանեն և զեօթն պատուիրանս նորա գրեալս . զոր  
մեկնեալ բացազրեաց Սելամնոս . յորոց վեցք էին  
պատուէրք տուեալք յԱդամայ յԱստուածուստ,  
իսկ եօթները որդն է նոյի յԱստուծոյ տուալ նմա-  
տեզեալ էր փոքր ՚իշատէ և բնութեան կենդանեաց  
Ասէ Հ. Դուկաս առեալ ՚ի բազում հնապատում  
մատենից, թէ Նոյ ուսեալ էր յառաջադոյն զբնա-  
բանական և զատեզարաշխական արուեստ, յորս  
յաւել յետ զրհեղեղին և զերկրագործութիւն՝ արն-  
կելով զայդի և սերմաննելով զսելման զանազանս .  
Զայստիկ ուսեալ որդւոց նոյի և բնակութիւն հաս-  
տատեալ ՚ի Հայաստան . ուսուցին յետագոյից .  
զի ըստ Խորենացւոյն Սեմ որդի նոյի . որ ՚ի Պար-  
սից Զրաւան կոչի, բնակեցաւ ՚ի Զարեւանդ գտա-  
ռին Հայաստանի . և ուսուց զսումն Աստուածուշ-  
տաւթեան զբժշկութեան և զուոյդ զատեզարաշ-  
խաւթեան, որ ՚ի յետագայից փոխեցաւ յաստեզա-

գիտութիւն . կամ յասաղահմայտթիւն (ըստ Պի-նոսի մատենագրի) :

4. Խնդիր է 'ի հայրենավաստակ ուսանողս թէ նոյ , որդիք իւր և որդիք որդւոց նորա որպիսի՞ իւշ տառիւ և նշանագրիւ աւանդէին յետագայից իւրեանց : Հնավէոլ մատեանք մեր հաւատորի առ-նեն մեզ , թէ Գանիէլեան նշանագիր տառք 'ի յաւուրց անոփի Նոյի մնացեալ էին առ մեզ . որովք նախնիք մեր ոչ սակաւ ժամանակս վարեցան նոքօք , բայց ապա վասն անուսումնառիր բարս ստանալոյ աղջիս՝ անոեա արարին զնոքօք , զի չունելով զեթնելին ձոյնաւոր տառս . կամ զլրկնակս տա-ռից . որ բերէր զրոյանդակ զբանս և զրառս լեւ-տի մերոց 'ի հեգելն զաթութայս այբուբենից Աւա-տի զրազաձայն նշանագիրս 'ի բաց արարեալ 'ի կի-րառութենէ . Յանաց և Ասորոց նշանագրովքն վա-րէին : Բայց Գանիէլեան կոչեցեալ նշանագիրք իր-բեւ Հնութիւնք նախնեաց պահեալ լինէին ինա-մով 'ի գանձարանս թագաւորաց մերոց : Խիւլինելն արքունեաց մերոց 'ի ձեռն Արշամայ 'ի Մծրին . և 'ի ձեռն Արգարու 'ի յԱւրհայ 'ի քազաքն Ասո-րեստանի . ընդ Հնութիւնս արքունեաց անցին և հին նշանագիրքն 'ի ձեռս իմաստնոց Ասորոց , յո-րոց եհաս 'ի ձեռս Գանիէլ եղիսկրապոսին Ասորոց . և ասոփի Մեսրովայտ առ մեզ :

5. Զի 'ի ժամանակս հայրենասէր թագաւորին մերոց Վռառիշապհոյ 'մեծ վարժապետք Հայոց Ա. Սա-հակ և Մեսրովոյ 'ի բաղում վորճո և 'ի մարզու ու-սուցութեան 'ի վերոց հասին թէ զՅունովքն և զՄ-տրովքն վարեալ զցանկալի գիտութիւնս չկարեն

տուանդել աշակերտերոյն . և զի որդիք Հայաստանի  
 զրկին ՚ի բաղռմ կտուարեալ հմտութենէ Աստուա-  
 ծային գրոց և արտաքին գիտութենէ իմաստոց :  
 Ուստի վասն գիւափ գրոյն ժաղավ արարեալ ամենայն  
 խմատնոց աշխարհին Հայոց . ընդ որոն եկն արքայն  
 վառամշապուհ գտան ել զին նշանագիրու Հայոց կամ  
 հնարել զնորս , բայց յետ բաղռմ բանից և գննու-  
 թեանց ոչ զին ինչ գտանել . և ոչ զնոր ինչ ստեղ-  
 ծանել կարացին : Ապա արքոյն յայտնեաց ժողո-  
 վոյն , թէ գտանին նշանիրք ինչ առ Դանիել եպիս-  
 կոպոս Ասորոց . Զի իմ (ասէ) ՚ի յԱսորեստանի եղ-  
 եալ լուայ ՚ի յԱրել քահանայէ ումեմնէ : Ուստի  
 առաքեցին առ Դանիել ՚ի տանէն արքայի դլահ-  
 րիճ անոն յագդէ Խանդունեաց թզիթովք թադա-  
 ւորին և եպիսկոպոսաց : Խակ նորա հասեալ անդր  
 մատցց զժուզիմ . ուստի ՚ի Դանիելէ զիեզենայս  
 նշանագրաց , և առեալ երեր առ թագաւորն : Խակ  
 Սահակայ և Մեսրոպմայ ընկալեալ ՚ի թագաւորէն  
 զամա երկուս աշխատ եղեն ուսուցանել նոքոք զա-  
 շակերտեալոն , և շահեցան ասէ սակաւ ինչ : Վասն  
 այսորիկ ապա սրբոյն Մեսրոպմայ անձամբ խակ գնա-  
 ցեալ առ Դանիել , զի մարդասոցի ուստինել ինչ ՚ի  
 նմանէ , և անտի գնաց առ Հռուփանոս և առ Ե-  
 պիփանոս , յորոյ օդանեցաւ և ոչ ինչ , ապա յետ  
 այսր ամենայնի գտանայ ՚ի Բալու և յաղօթս եղ-  
 եալ ապաստան՝ խնդրեաց ՚ի Տեառնէ ցուցանել ին-  
 քեան զյանկալին : Անդ ՚ի յափշտակել նորա մոռք  
 յաղօթմն՝ թաթ մի աջ ձեռին երեւեալ գրեաց ՚ի  
 վերաց վիմին զեօթնեկին ձայնաւոր տառան՝ Ա , Ե ,  
 Է , Ը , Ի , Ռ , Խ , (զորոց զձեւսն մինչեւ ցայսօր քանա-

դակեալ տեսանի ՚ի վէթք բայուայ) . ոչ միայն ՚ի վէմն այլ ՚ի կուրծս և ՚ի միտու Մեսրովայ գըոշմեալ տպաւորեցան ձեւք տառիյն և իմաստիցն . Անդ ՚ի տուշութենէ շնորհացն Աստուծոյ սկսաւ գրել և ուսուցանել աշակերտաց խորոց զէեգմունսսիւ զդոբափցն անվրէպ : Ասոզիկ զԴանիէլեան նշանագիրս համայց 27. և զեօթն ձայնաւորմն տայ Մեսրովայ . իսկ Վարդ զանց տառան տայ Դանիէլի . զոր նախնիք մեր անհոգութեամբ ՚ի բաց եղեալ էին , և համարի թէ Մեսրովայ 14 տառան գտեալ է . և յաւելու վարդան թէ յաւորս Լեւոն թագաւորի դտաս . ՚ի կիլիկիա զրամք հին թագաւորաց մերոց , յորում տեսին զհայկական հին տառան , զոր Հայք ՚ի հնումն ՚ի կիրարկանէին :

6. Եկեսցեն աշակերտք սրբոյն Մեսրովայ Քերթողն . Անյազմն , վերծանողն , կողբնացին , կորիւն , ձարտասանն առացցեն բան զնմոնէ , գովեսցեն զդիւտ նորա , հւչակեսցեն զհամբաւ գիտութեանն զիրթնացեալ լեզուն Ալամայ . զանակս արարեալ նշանագիրսնորա , զդողութիւնն նախնեաց , և զամենայն մատենագրութիւնս դիտնոց Հայաստան աշխարհի որք գիւտի և վաստակոց նորա փառս և պատի վերընծային յաւերժական գովեստիւք . տառ քն Մեսրովայ եղեն բեւեռք հրեցէն . որք զ'լրօնից որբը բութիւն անջինջ սեւեռեցին ՚ի կուրծս Հայկազանց : Հայրենայիստակ ձեռք մեծին Մեսրովայ ՚ի պարծանս և ՚ի սէք Հայրենեաց արարին զմեծամեծս , և Տէք մեծացոյց զետ իմոչ միայն ընդ . Հայրենասիրութիւն սրբոյս է զարմացեալ . այլ առաւել ընդմարդասիրութիւն նորա , զի ոչ ազդի իւրում և

եթ արար դիր . այլ և վաճե վրաց և Աղուանից  
ազդին եդիտ և ստեղծ դառան նշանադրաց , և  
ծագկեցոյց դդուրութիւն նոյն :

7. Եթէ 'ի խնդիր եցես 'ի տառան բովանդակ  
ազդաց երկրի , դոդիթէ 'ի բազմաց անտի և ոչ զմի  
դուգահաւասար դոյցես մերոցն կատարելութեան .  
զի մերքն զհեգմոնս տառից ամենայն աղջաց  
զգարձուածս բանից ամենայն աղանց . զհնչմունս,  
զհողովմունս , և զխոնարհմունս ամենայն լեզուաց  
երկրի , առանց ինչ կրծառելոյ , և առանց ինչ յա-  
մելուածոյ լի բայանդակ և անթերի ինքն ինքեամբ  
յառաջ բերեն 'ի զարմանս ամենայն բանասիրաց .  
զի եթէ դոյր հնար նախանձիլ ընդ ճօխութիւն և  
ընդ կատարելութիւն տառից մերոց , բաղումք  
յազդաց երկրի զմերսն 'ի կիր արկանէին 'ի դրա-  
բութիւնս խրեանց . զի այնչափ հեշտին են ուստ-  
նիլ և ուստցանել մանկանց մինչզի ամօք(\*) ինչ յա-  
ռաջ տեսի 'ի դպրոցական մանկունս Տարօնոյ և  
Սալնուորոյ . որք յԱլյուրենէ սկսեալ 'ի միջացի  
մոյ ամսոյ ոչ միայն զազմուն . և զհասարակ ըն-  
թերցմունս 'ի միտ առին , այլ և յեկեղեցւոջ 'ի մե-  
րայ Շաշոցի ընթերցան զդիրս Առաքելոց և Մար-  
գարէից :

8. Զեւք նշանադրացն Մերութիւնն էին երկա-  
թագիր . որ 'ի նախնեաց 'ի կիր արկան 'ի Դ . դարէ  
մինչեւ ց ԺԴ . դարն առանց ինչ փոփոխութեան .  
զորոյ զձեւան տեսանեմք ցայսօր 'ի յերկաթադիր

(\*) ի 1859 ամէ ոկտետ մինչեւ ցամին 1866 դէտ կայի  
'ի Սալնուոր և 'ի Տարօն :

Յառաւն նախնեաց . իսկ ՚ի ԺԴ . դարէ և այսոր ահա  
՚ի գործ արկանին բոլորագիր և նօար գիր ձեւքն  
տառից , որք առաւել հեշտին են ՚ի դրել ՚ի դրոշ-  
մել , և ՚ի վերծանել : Շնորհային այլ իմն գեղեցիկ  
յօրինէ ՚ի վերայ Մեսրովպեան ՅԵՆՀԱՆԱԳՐԱց ՚ի տա-  
ղացավորթ եան իրում : «Այն առաջն զեւ ուշ՝ ,  
հոնե յէ հասու քերտեց . . . . իսկ Անանիա Շիրակացին  
ասէ թէ մեն մի տառ Հոյիկական խոսի ՅԵՆՀԱՆԱ  
ճառու : Բայց ես ասեմ թէ տառք Մեսրովպեան  
բիւր բարութեանց և պարզեւաց պատճառ եղեն  
Արտմեան աղդիս . զի զազդ , զհայրենիս , և զեկե-  
ղեցին և զլեզուն նմա միայնոյ պարտական դոլ  
խոստովանիմք : Ուստի խրախոյ տամ հայրենա-  
սիրաց գիտել զյարդ տառիցն , ուսուցանելնոք ք  
զամենայն գիտութիւնս բարոյականս և չահաւէ տս-  
չարք մեր ունեին զնշանագիրս Պանիկելեան . այլ  
չգիտելով զյարդ ուսման կորուսեալ էին զտառն .  
զի թէ չգիտիցեմք և մեք զմեծ արժանիս տառիցն  
Մեսրովպայ . և յար պնդ իցիմք զհետ օտարացն , կո-  
րուսանեմք զքիրտ վաստակոց առն մեծի իրեւ ապե-  
րախաք : Վասն զի հայրենասէրն ո՛չ միայն պարտի ան-  
կորուսա պահել զգտեալն , այլ յարաժամ ուսու-  
ցանել զայնս ազգայնոց իւրոց . և եթէ հնար է հան-  
րածաւալ առնել զնոսա ընդ ամենայն ազգս երկրի :

9. Տես ապաքէն . զի անասունք , ձկունք , և  
թռչունք չեղեն ՚ի սկզբանէ ընդունակ ուսանելց  
զտառս և զդիրս , զի եթէ հնար ինչ լինէր նոցա  
գիտել ինչ , չէր երբէք հնար մեզ իշխել և տիրել  
՚ի վերայ նոցա . այլ զի զուրկ եղեն ՚ի բանէ , ուստի  
հասեալ է մեզ վիճակ տիրել ՚ի վերայ նոցա իմաս-

տութեամբ : Ըստ այսմ՝ մարդիկ՝ որք ոչ ունին  
զգիրս իբրեւ անասունս , լժակիրս , բեռնակիրս և  
գերիս որսացեալք լինին 'ի գիտնոց և յիմաստնոց  
աշխարհիս . զի ասէ իմաստունն « Ցգէան իմաստնոյն  
ծառայեցէ » . որպէս թէ ասիցէր անբան բանականին  
ծառայեցէ : Եթէ ընդ Յն աստիճան տառիցս 'ի վեր  
անդր ելանիցես . ահա 'ի յանբանականութենէ 'ի բա-  
նականութիւն վերաթեւեցեր , զի եթէ զ36 տառմն  
զինքը թիւս զայտոսիկ , որ զամենայն գիտութիւնս  
'ի յինքն բովանդակէ , արհամորհիս , 'ի բանակա-  
նութենէ 'ի յանբանութիւն իջեր :

10. Ո՛վ որդիք Արամեան՝ յուշ լիցին քեզ , եթէ  
չկամիս լժակիրս և բեռնակիրս լինել , ուսիր զճըշ-  
մարիտ գիրս և զճմարիտ ուսումն . զի ճշմարտու-  
թիւն ազատեցէ զքեզ , և դու ճշմարիտ ազատ  
լինիցիս : Ուսիր զայն 'ի մանկութենէ . զի Սողոմոնն  
երկոտասանամեայ մանուկ էր , յորժամ թագաւոր  
օծաւ 'ի վերայ ամենայն խրոյէլի . բազում ծերք  
կոյին 'ի մէջ երուսաղէմի . բազում կորովի երիտա-  
սարդք 'ի մէջ Յուդայի . բազում գեղմն պատանիք  
'ի մէջ խրայէլի , և զի հղբայր նորա Ամօք ե-  
րէց , և գեղով գեղեցիկ էր քան զնա . բայց 'ի հան-  
ճար և 'ի գիտութեան ոչ ոք գտաւ նման նման  
զի ասէ՝ « Մանուկ էի մտավարժ , ոդւոյ բարւոյ գի-  
պեցայ . . . » Յուշ լիցի քեզ Տաճարն Սողոմոնի . յո-  
րում նառեալ երկոտասանամեայ Յիսուս բանայր  
զգիրս , ընթեռնորը և մեկնէր զգիրս . վիճէր ընդ-  
դպիրս ընդ Փարիսեցիս և ընդ վարդապետս Հը-  
րէից . « Որք զարմացեալ էին ընդ բանս շնորհաց , որք  
ելանէին 'ի բերանոյ նորա » :

Ա. Եթէ հայր ես ուսո՞ղորդիս քո + Եթէ որդի  
ես , մի արհամարհեր զուսումն մանկութեան քո .  
Եթէ այր ոք զորդիս իւր զրկեսցէ ՚ի գիտութենէ ,  
ասիցէ թէ սիրեմ՝ զազգն և զհայրենիսն իմ , սուտ  
առնէ զճարառութիւն , «զի որ իւր չար է այլում  
ոչ կարէ բարիս առնել» : Եթէ հարք և մարք Հա-  
յոց զՃեռանէ մանկանց իւրեանց ոչ կայեալ՝ մուծա-  
նիցեն ՚ի վարժու գիտութեան Աստուածային դրոց ,  
ինքեանք տայցին վասն նոցա պատասխանի առաջի  
Աստուծոյ և առաջի հայրենեաց : Որք Տնաք զման-  
կունս , զդուշ լերուք անձանց , զի ոչ մեծ ինչ էք  
քան զՃեղի քահանայ , որոյ անփոյթ արարեալ ՚ի  
յուսուցաննել և խրատել զորդիս իւր . գերութեան  
ազդին և Ցապանակին , սպանման որդւոց իւրոց  
Ռփնայ և Փենեհեսի , և ցաւադին վախճանի իւրոց  
պատճառ եղեւ : Որք հարք էք և մարք , որք քորք  
էք և եղբարք , ազաշմ զՃեղ . զի նախ քան զա-  
մենայն հոդս աշխարհի , և քան զամենայն պատ-  
րանս մեծութեան փոյթ կալիքք զմիսս որդւոց ձե-  
րոց զարդարել դիմութեամբ Ա. Գլոց . և բարոյա-  
կան կրթութեամբ : (Պօղոս) «Զէ Համարոյ իշխանութեան ու-  
ժամանակը իւր է : Էսէ Աստուածութեան ու ամենայն  
ինչ օքուտիւր է : Ամենայն այր , Եթէ երիտասարդ-  
իցէ , և Եթէ ծեր . Եթէ ունիցի որդի , և Եթէ չու-  
նիցի , հայր է ամենայն տպայոց և պատճեկաց ազ-  
դիս , և իրրեւ հարազատ հայր պարտի հայրենա-  
սիրական եռանդիս ինսամել և գաստիարակել զոր-  
դիս և զբութերս Հայկայ , որով ոչ միայն հայր որդւ-  
ոց իւրեանց կոչեսցին . այլ հայր ազգի և պար-  
ծանք ժողովրդեան :

12. Ժամ՝ է յուշ տռնել որդւոցն Հայաստանի թէ  
որք ուսան ՚ի մանկութենէ եղեն մեծ և երեւելի  
յաղթի և յաշխարհի և որք ոչ ուսան ՚ի մանկութենէ,  
ոչ էին, ոչ եղեն և ոչ երեւեցան ՚ի միջի. Ժամ  
է, և զայս յուշ տռնել մորոց և գստերացն Հայաստանի և  
իբրեւ ընտանի Հայր խրատ պատուի-  
րանի տալ նոցա և տօել. զի մի իբրեւ յիմար դշո-  
տերան կայենի ՚ի յերդս ՚ի պատ ՚ի պաճուճանս կա-  
նացիս մոլեալք՝ անձանց և որդւոց իւրեանց կորըս-  
տեան լիցին պատճառք. Այլ հայեցարուք ՚ի քոյրն  
Մովսէսի ՚ի Մարիամ, որ ՚ի դէպ ժամանակի միայն  
դժմիւուին ՚ի ձեռին, և զերդս ՚ի բերան առեալ  
երգեաց. յորժամ ետես զիրկութիւն ազգի իւրոյ  
՚ի ձեռաց փորաւոնի և ՚ի խորոց ջուրցն կարմիր ծո-  
վոն. Անդ ՚ի գոհութիւն Տետոն երգեաց ասելով  
Ճիշնեցու Ճիշը : զի Քուուշ և Քուուշը և Ճայը : Զի  
եթէ չէր Մարիամու ուսեալ ՚ի մանկութենէ զզ իբրան,  
զիա՞րդ երդէր զերդս օրհնութեան Աստուծոյ: Դե-  
բորայ կին մարդարէ և զ ատաւոր ժողովրդեան տես-  
եալ զ յաղթութիւն Խրոյէլի ՚ի ձեռն Եփթայեաց  
երդեաց զերդս. «Ճիշը ճշշնէն ու ՚ի Սեհը, եւ ՚ի ասել  
Քուուշ Ճիշնեցունցն Երկումայ : Զայմայի, ընդ գործ  
իմաստութեան Յուգիթոյ. օրով զթշնամին հայրեն-  
եաց սպանեալ էտո գովութիւն ՚ի գստերացն խրա-  
յէլի, որ երդէին նմա : « ՚ու եւ պործոն աղջի և ցնձու-  
նին Երկումայ : Զի՞նչ երդս օրհնութեան և մեք  
տացուք Աստուծամօրն Մարիամու որ երեք ամայ  
լնձայեալ ՚ի տաճարն ուսաւ զամենոյն գիրս հայ-  
րենի գովութեան ՚ի քահանայից անտի : Ուստի ՚ի  
Յաւետիսն Գաբրիէլի . յորժամ լուաւ թէ որդին:

իւր փրկելոց է ղմողովուրզն խարսյէլի, երդեաց Առ-  
տուծոյ և ասէ : Սեհացուցէ այս էմ շիքը, և գնձացա-  
նոքի էմ յԱպուուց էր իւր էմ . . . : և Եղիսաբեթ ուսեալ  
՚ի մանկութեան յորժամ ետես եկեալ առ ինքն :  
զարիամն՝ որ յղացեալն էր ՚ի չոգւոյն սրբայ . երդ-  
եաց նմա և ասէ : «Ոքնեալ եւ դու է իւնայ» և ուն-  
եալ է որուու որովայս և ու ոյն »: Ո՞հ, երանի որդւոցն  
Հայաստանի . յորժամ տեսանիցեն զդատերսն Հայ-  
կայ այսպիսի գիտութեամբ իմաստութեամբ լցեալ  
ուրախանան հոգւով ընդյանողութս ազդին և տշրտ-  
մին ընդ ձախողակո . ինքեանք առ անին ուսու-  
ցանեն որդւոց իւրեանց զտառան Մեսրովպայ, և  
տառիւքն զրանս բարիս մինչեւ ցամն եօմները դրէ  
յորում յանձնեսցեն զորդիս իւրեանց անխարդախ  
ուսուցչաց, «Զի իբրեւ զարդի ծնեալ մանկունս փա-  
փաքիսցին անխարդախ կաթին, զի նովաւ աճեցին  
՚ի գիտութիւն» : Պետքոս կ :

ԳԼՈՒԽ թ.

ԽՄԱՍՏԱՍԵՐՔ ԵՒ ՄԱՏԵՆԱԴԻՐՔ . ԸՆԹԵՐՅԱՍԵՐՔ ԵՒ  
ՎԻՇԱՍԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԵՆԾՔ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ԽՄԱՍՏԱՍԵՐՔ ԵՒ ՄԱՏԵՆԱԴԻՐՔ

« Յոր կողմն աշխարհի յաճախեցան դպրոցք .  
յաճախեցին գիտութիւնք, յաճախեցին նաեւ իմաս-  
տասէրք և մատենագիրք . ՚ի հնումն առ իմաստա-  
սէր թագաւորոքն յոյժ ՚ի պատուի եին մասենս

զիրք, որք և սիրեցեալ էին յաչս ժողովրդեան քան  
զթազաւորսն : Արխատոտէլ ՚ի պատռի էր առ մեծն  
Աղեքսանդր և սիրելի յաչս ժողովրդեան Սթհնաց-  
ւոց : Մարգարէն Դանիէլ ՚ի պատռի էր առ կիւրոս,  
առ առաջին, և առ երկրորդ Դարեհ արքայսն  
Մարաց և Պարսից Թագաւորք՝ որք սիրողք և պատ-  
ռողք եղեն գիտութեանց և մատենադրութեանց  
անդստին ՚ի սկզբանէ Հետէ տեսանեմք արքայու-  
թիւն նոցա յանողեալ : Փարաւոն արքայն Եղիպ-  
տացւոց տեսեալ զիմաստութիւն և զհանձար Յով-  
ոեփայ՝ ոչ խոտան ինչ համարեաց զօտարութիւն  
նորա . և այն զի իրրեւ գերի վաճառեալ էր Եղիպ-  
տացւոց , որոց արքայն խակ տեսանէր թէ հանձար  
և իմաստութիւն այնչափ առատ զեղեալ են ՚ի միտս  
գերոյն . մինչ զի զմիտս և զիսորհուրդս ամենայն  
ազատացն Եղիպտացւոյն ՚ի հնազանդութիւն մը-  
տաց և ՚ի գերութիւն հանձարոյն իւրոյ վարէր .  
ուստի ետ հանձարեղ օտարականին աթոռ թադա-  
ւորական և գաւաղան իշխանութեան իշխել ՚ի վերայ  
Եղիպտացւոց . որով յաջողեցաւ արքայութիւն փա-  
րաւոնի յոյժ յոյժ :

2. Պաշոմէսս արքայն Եղիպտացւոց ֆեղատեղ  
փեայ . այն է եղբայրաէր . որյոյժ գրասէր և մա-  
տենասէր Եղեալ՝ կառոյց յԱւաղեքսանդրիա զհոյա-  
կապ մատենադարան զայն , յորում ետ համահաւա-  
քել զերկու հարիւր հազար մատեանս յամենայն  
ազգաց և լեզուաց երկրի : Աղայ լուեալ սորտ թէ  
՚ի միջոյ մատենից հանուր աշխարհիս ամենակատար  
և ըստ ամենայնի օգտակար տառուածային մատ-  
եանն է , առաքեալ թուղթս ինդրեաց յԵղիպտար

Քահանայապետէն Հրէից դրաբունիս եօթանասաւն։  
որոց առեալ զմատեան Ա. Հասին յեղիպտոս առ  
Պտղոմէոս, պատուեցան ՚ի նմանէ յոյժ և զի յաջո-  
ղակ էին ՚ի լեզուս ազգաց և կիրթ ՚ի մատե-  
նագրել և ՚ի թարգմանել. յաւուրս եօթանասուն  
թարգմանեցին զբովանդակ աստուածեղէն տառն  
՚ի յերրայեցոց անտի ՚ի Յոյն. և յոյժ մեծապարգեւ-  
փառօք վառաւորեալ՝ ՚ի թագաւորէն՝ դարձան յե-  
րուսաղէմ։

3. Իմ ընդ ճաշակ բարուց իմաստասէր արքա-  
յիս զարմացեալ է, գուցէ ընդ իս և բոլանդակ աշ-  
խարհ զարմացի. զի վասն թարգմանութեամբ ՚ի  
ձեռոս բերելոյ զլ. մատեան, զհարիւր հազար գե-  
րիս Հրէից, որք ՚ի գերոզաց վաճառեալ էին Եդիպ-  
տացոց ՚ի ծառայութիւն՝ արձակէր, ըստ իւրա-  
քանչիւր զիսայ գերեաց տայր զինս և զնէր՝ ծախեալ  
վասն նոցա զնօս տաղանդս ոսկոյ՝ առաքէր առ-  
քահանայապետն Եզիտաղար. նաեւ առ սա զրազում  
պարգեւս մեծամեծս, պատարագս և ընծայս վասն  
տաճարին Աստուծոյ յերուսաղէմ. ձոյլ ոսկի սեղան  
երկու նուիրանոցս արծաթի, և արծաթեղէնս 30:  
Որոց ՚ի շինութիւնն ծախեալ էր (ասէ) յիսուն կշու-  
տազանդս ոսկոյ յեռեալ մեծագին ակունս ՚ի նոսին  
իրբեւ հինդ հազար, որք հնդապատիկ զնովք  
առաւել անցին քան զդինս ոսկոյն։ Յաւել ՚ի սո-  
սին ՚ի պէտո զսհից և սպասոց Տաճարին հարիւր  
տազանդ արծաթոյ Եւյետ այսր ամենայնի առաք-  
եալ բազում պատարագս առ Եզիտաղար՝ ինդրեաց  
՚ի նմանէ, զի տացէ հրաման Բաբունեացն զնալ յե-  
գիպտոս ՚ի յայց թագաւորին։ Այս ամենայն եղեւ-

273 արօք յառաջ քան զծնունդն Յիսուսի և իւ թէ  
զիա՞րդ յաջողեցաւ արքայութիւն գրասէր թագա-  
ւորիս , գրեաց Աթենաս մատենագիր . թէ՝ Պտղո-  
մէոս ոչ միայն յիմաստասիրութեան յառաջեցաց քան  
զամենայն թագաւորս , այլ և յարտաքին ճոխութիւ-  
նըս , մինչեւ կարծիս 'ի մատ դնել թէ միշտ այսպէս  
ունիցի վայելել յաստի կեանս և և մնալ անմահ ,  
և պարծիլ իսկ թէ 'ի մահկանացուաց միջի ինքն  
միայն գտեալ իցէ զանմահութիւն : Պողոսմէոս շե-  
ղեւ անմահ մարմնով , բայց իմաստասէր և մատե-  
նասէր վարք և գործք նորացարդ մնացին անմահ :

4. Զհակառակն սոցին է տեսանել առ միւս փա-  
ռաւոն եղիսպտոսի . որ յոյժ ատեցող լեալ գիտնոց  
և մատենագրաց «խորհեցաւ սպանանել զ'ովվուէս» +  
Որոյ վասն ասէ Ս. Ստեփաննոս , Գործ . է. 22 : «Եւ  
վարժեցաւ Մովլուէս ամենայն իմաստութեամբ ե-  
գիտացւոյն և էր զօրաւոր բանիւք և դործովք  
խրովք . Մովլուէս , որ արարչութեան Աստուծոյ սքան-  
չելի դպիրն և մատենագիրն էր , վախեաւ 'ի յետա-  
մուտ Փարտունէն , որ փոխանակ 'ի պատուի ունելց  
զնա , սպանանել խորհեր : Եղից Բ. 15: «Եւ լուաւ  
Փարաւոն զբանն և ինդրէր սպանանել զ'ովվուէս .  
և փախեաւ Մովլուէս յերեսաց Փարաւոնի . Եւ բնակ-  
եաց յերկրին Մադիամու : Կատարած և անյաջողու-  
թիւն ուսումնատեաց Փարաւոնիս է տեսանել 'ի  
Տասն Հարուածո Եղիսպտոսի . 'ի ծովն կորմիր .  
«Ղի (ասէ) ընկղմեցաւ Փարաւոն կոռօք , երիվո-  
րօք և ընտիր սպառազինօք 'ի մէջ ծովոն . ծովն  
ծածկեաց զնոսա . . . և որդիք խորացէի դնացին  
ընդ ցամաք 'ի մէջ ծովուն :

Յ. Ետ իրաւուն Երեմիա ցլեգեկիա ելոնել առ  
արքայն Ասունեատանի , և խօսել ընդ նմա 'ի խա-  
զաղութիւն և ապահցուցանել զանձն՝ զաղբն և զր-  
րուսաղեցն , այլ նա տղիտաբար արհամարհեաց  
զիւրհուրդ նորա , սպառնացաւ նմա և առէ տոեղի  
տուր Մարդարէ . այլ եւս մի մարդարէանար 'ի  
վերայ մեր , ապա թէ ոչ մեռանիս 'ի ձեռաց իմաց  
և ապա ետ զըստարէն 'ի բանու Երեմիա Գլ . լէ :

Զ. «Եւս ոչ լուաւ նա և ծառայք իւր ժողովորդք  
Երկրին զբանս ջետան՝ զրի խօսեցաւ 'ի ձեռն Երե-  
միայ մարդարէի : 20 «Հրաման ետ արքոյ Սեգե-  
կիա և արկին 'ի տան բանտի . . . և նստաւ Երեմիա  
'ի սրահի բանտին : Անյաջողութիւն արքայութեան  
Սեգեկիայ է տեսանել 'ի յառումն և 'ի յաւերումն  
Երուսաղէմի , 'ի կործանումն Տաճարին , 'ի դերո-  
թիւն քահանայից և ժողովրդոցն 'ի Բարելոն , 'ի  
շղթայս և 'ի խաւարումն աշացն Սեգեկիայ , և յողոր-  
մելի մահ որդւոց իւրոց : Աւազ զայս ամենայն  
տեսեալ Մարդարէին , ուժգին հաւաշմաք գոչէր  
և առէր : «Ո՛ տայր զդլուխ իմ ջուրց : և զայս իմ  
աղրիւրս արտասուաց : զի նստեալ լայի զրեկումն  
ժողովրդեան , զաւերումն Երուսաղէմի , զկործա-  
նումն տաճարին , զմահ թափաւորին , զդերութիւն  
հարուին և վեսային , զկորուստ արտնյ զօրաւորաց  
զճիչ աղայոց և զկալան ծերոց : Եւ ոկիզբն ողաց  
իւրոց առնէր այսպէս . «Ա. 1: Զէ՞՞՞ շորու նորու-  
մբնացեալ ուշածն բոշուժուշն , և եւլա չբըեւ ին Դ այլէ  
լուու ուրուրունացն 'ի Թէ նենանուաց . իշխան այսորհին էլու  
հոբիւրուս :

Ե. Արշակ և Պատ ըստ այսմ ոչ Երրէք անսացին

խորհրդոց մեծիմաստ հայրապետին Ներսիսի , զի  
ատելին զիսորհրդատու ծերն , զիմաստուն դպիլն .  
Ռւստի սրբոյն Ներսիսի բազում անդամ՝ ի փորձ ե-  
մատու ՚ի խրատել և յուղղութիւն ածել զնոսա . բայց  
զանիմաստասէր բարս նոցա չկարացեալ ուղղել , ՚ի  
բազում աւուրս նատէր ՚ի սաւդ դառնութեան և  
արտամութեան ՚ի վերայ Արշակայ և Պապայ . և յոր-  
ժամ միւս անդամ փորձ փորձեաց ուղղել զՊապ և  
զթագաւորութիւն նորա , նա այնչափ արհամարհեաց  
գրիտութիւն մեծի առն , մինչ զի ժապրհեցաւ թու-  
նալից բաժակու բառնալ զարայծառ արեւն Ներսիսի  
՚ի Հայաստան աշխարհէս : Անցածող արքայութիւն  
Արշակայ և Պապայ տեսցես ՚ի պատմութեան խորե-  
նացւոյն : Թէ զիա՞րդ արհամարհելով զիմաստունս  
և զմատենադիրս՝ ինքեանք արհամարհ եղեն յաչս  
ամենեցուն և զրիեցան ՚ի թագաւորութենէն , զի  
Արշակ անկեալ ՚ի ձեռս Շապհոյ արքային Պարսից .  
և ՚ի յԱնուշ բերդն արդիւեալ մեռաւ անդէն : Խակ  
Պապայ անկեալ ՚ի ձեռս Ցերենափանոսի գորավարին  
Յունաց . օչու Եզիանելին Քաղաքաւ Երիւեւլուազը Եղին թէռ-  
ուսուն : Ըստ Երանէ անդամուն Երանէ Եջուլ Եջուլ , Եսքառոյեւ-  
ան Եջուլ : (և ըստ սմանց ամս 4):

7. Իմաստասէր և մատենագիր Մարկոս Աւրե-  
լիաս կարոն տենչայր և ասէք . «Երանի ժողովրդեան ,  
որոյ կամ թագաւորք իմաստասիրեն , և կամ իմաս-  
տասէրք թագաւորք իմաստասիրեն» : Սա զամենայն զդիտունս և  
զմատենադիրս իւրոյ աշխարհէն առ ինքն ժողովեալ՝  
կենցաղավարէր ընդ նոսա և խորհրդակցէր . զդր-  
դիս իւր առ ոսս իմաստնոց մարզէր և կրթէր , զա-  
մենայն իմաստունս և զարհեստաւորս աշխարհին

իւրոյ 'ի պատուի ուներ և բնքն գլուխ կացեալ առմենայնի . ամենեցուն առաջնորդէր 'ի դիտութիւն արհեստից , և յիմաստութիւն մատենից :

8. Գոն անուանեալ բազում իմաստունք և մատենագիրք , որք 'ի դգասատթիւն կամաց և 'ի յուղլութիւն մտաց մարդկան , 'ի պայծառութիւն եկեղեցւոյ , 'ի փրկութիւն կենաց մարդկան և հայրենեաց ո՛չ վաստակեցան , այլ խօսեցան զթիւրս և դրեցին զի՞լորութիւնս . դայսոսիկ ո՛չ առ իմաստունս ունիմ , և ոչ առ մատենադիրս : « Զի զանձինս առ իմաստունս ունիմն , յիմարեցան և այլն » ; Այլ զիմաստունս և զմատենադիրս զայնոսիկ ասացին և գովեցին , որք 'ի դարս և 'ի ժամանակս երեւեալք հանճարեղ խորհրդուիք խրատ խազաղութեան եղեն թտոգաւորութեանց աշխարհի , և բարձին զրոնութիւն և զլոռուողութիւն 'ի մռաց նոցա . Մտեալ Աստուածորդւոյն յաշխարհ՝ առէր մարդկութեանս . « Քննեցէք զգիրս , զի դուք համարիք նովաս ունել կեանս » : Սրտագէտն ըխուս զիսէր ; թէ՝ կեանք ամենայն մարդկան կախեալ կայ զգիտութենէ և զքննութենէ Ո . գրոց : Եւ հրեշտակն հրամայէր Յովհաննու 'ի յայտնութեան գրել զոր ետեսն , և զոր լուաւն . զի ընթերցցին մարդիկ և զգուշացին անձանց : Եւ Ետոյի առէ « Փառ հաբէն , և 'ի հեթանոս պարզեն զգուշանքն նորս » :

9. Նախ պարտ է պատուել և սիրել զմատենադիրս Աստուածեցն տառից , դշարոգարէս և զԱռաքեալս : Ապա զմատենադիրս եկեղեցւոյ քո ; զհայրապետս և զվարդապետս : Առակ . « Հար եռու երապոս հօք ու , և զի մերժել զքինս հօք ու , զի պատ

շնորհաց ընկույզն՝ 'ի գլուխ ու ։ և հանեսէ սովո՛ ՚ի պարտացք  
գումա։ Արժան է համբուրել զսիրտ հարցն մերոց ,  
որ բղխեցին մեղ զրան բարի , արժան է համբուրել  
զշրմունս նոցա , զի բարրառեցին մեղ զրան կենաց .  
արժան է համբուրել զմատունս նոցա , որ դրեցին և  
աւանդեցին մեղ զմատեանս իւրեանց . ազաշեմ մի  
զնոսա ընդ մեռեալ համարեցես , ահա գործ մա-  
տանց նոցա կենդանի են ՚ի մեղ . զի յորժամ զմա-  
տեանս նոյա հայրենասէր մոօք ընթեռնուցուս . ընդ  
քեղ են ՚ի նոտիլ ՚ի տան ՚ի գնալ ՚ի ճանապարհ . . .  
ընդ քեղ են ՚ի յեկեղեցւոջն ՚ի յաղօթելն ՚ի յեր-  
դելն և ՚ի յօրհնելն զլսառած . ընդ քեղ են ՚ի տղա-  
յութենէդ մինչեւ . ՚ի ծերտթիւն . ընդ քեղ են ՚ի  
պանդիստոթեան քում , և խրատեն զքեղ , զի մի մո-  
ռասցիս զցանկալին Հայաստան :

10. Արդ եթէ չկարիցես զիմատասէրս և զմա-  
տենագիրս առ քեղ ունել , կարես զմատեանս նոցա  
յարաժամ ՚ի ձեռին ունել ընթեռնուլ , և զրանս  
նոցա ՚ի մոտի պահել : Զբաղումն տեսանեմք , որք  
զմատենիւք զանց արարեալ կամաւ անդիտանան և  
են որ ծայրիւք մատին մերձենան ՚ի մատեանս , և  
հուաչկեն զինքեանց , թէ են մատենագիր՝ որք ըստ  
խորենացւոյն նախ քան աշակերտիլն վարդապետք  
լինիլ կամին : Այլ հայեացուք ՚ի մեծն Պօղոս որ ամե-  
նայն իմաստութեամին Աստուծոյ առ լցեալ և ճո-  
խայեալ և յետապաշէմէ մինչեւ . ՚ի Լիւրիկէ լցեալ  
զաւետարանն Քրիստոսի՝ սակայն ոչ անվոյիժ տո-  
նէր զմատեանս ընդ ինքեան շրջեցուցանել . ուստի  
դրէ առ Տիմոթէոս . թէ՝ «Յորժամ եկեայես առ իս ,  
մի մոռասցիս զմատեանս քերել »:

¶ 1. Ի միտ առցեն Հոյրենասէրք թէ առ ինչ  
միտո դրեցաք զայս . ՚ի միտ առցեն մեծատունք և  
փարթահար աղջիս և առատագարդեւ տրօք օդնեռ-  
ցեն մատենագրաց զի եթէ իմաստանք և մատե-  
նադիրք ՚ի կարօտութեան տառապիցին . հանճար  
և միտք նոյա ամյութեամբ գատապարտեալ՝ ոչ  
ծնանին բանս պիտանիս և օդտակարո վասն հայ-  
րենեաց : Զի եթէ ամենայն պետք իշխանք և փար-  
թահք մեր սիրէին զիմաստութիւն . բանիս և ար-  
դեահք օժանդակել փոթային ի նաւանց և մա-  
տենագրաց պետութիւննոյա ո՛չ անկանէք . և մա-  
տենագրանք Հոյաստան աշխարհիս լյեալ լինէին  
շահաւէտ մատենիւք : Ա.Ալ զի ՚ի բազմաց զայտաւան  
միայն տեսանեմք եղեալ մեկենասք մատենագրաց  
զորոց զազդասէր դորս չկարեմ թագուցանել աս-  
տանօր : Զի ՚ի խնդրոյ Վաղարշակոյ ՚ի բազում հնա-  
պատում զպրութեանց հաւաքեալ՝ Մարիբասի՝  
գրեաց զպատմութիւն Հոյկազմնց : Ի խնդրոյ Տըր-  
դատայ արքայի գրեաց Ագաթանդեղոս զպատմու-  
թիւն մեծին խոսրովոյ , սրբոյն Գրիգորի և նորին  
իսկ Տրդատայ : Ի խնդրոյ հաւատացելոց Հայոց՝  
գրեաց Ս. Գրիգոր զՅաճախապատում մատեան իւրի  
ի խնդրոյ Արքոյ գրեաց Զենոռ զպատմութիւն ժա-  
մանակի իւրոյ , ՚ի խնդրոյ Ասհակայ Բագրատունոյ  
գրեաց Խորենացին զպատմութիւն Հայոց , ՚ի խնդրոյ  
Դաւիթ Երիցո Մամիկոնէի գրեաց Եղիշէ զպատ-  
մութիւն Վարդանանց՝ Ղեւոնդեանց , առաքինի  
նախարարաց և տիկնաց նոյա : Ի խնդրոյ Վահա-  
նայ Մամիկոնէի գրեաց Ղազար Փարփեցին զպատ-  
մութիւն Վարդանայ մինչեւ ցնոյն ինքն Վահան :

ի խնդրոյ հարց միաձանց գրեաց նարեկացին զմատեան ողբերգութեան աղօթից իւրոց. դարձեալ սա 'ի խնդրոց Դաւիթ իշխանին արար զմեկնութիւն երդ երդոցն Սողոմնի : Եւ են այլ եւս մատեանք որ գրեցան 'ի խնդրոյ մատենապէր թագաւորաց և իշխանաց, զորոց չէ արժան այժմ միլստմիոջէ ասել: Եւ եթէ նախնիք մեր ամենեքեան յետ ունելոյ զարտարին ճոխութիւն և զջօրութիւն բաղկի, նաեւ ոիւրող լինէին իմաստութեանց և մատենադրութեանց. ունէին ցայժմոչ միայն զյուլավ մատեանս, այլ զբազում աշխարհս և զբազում արհեստու: Այլոր ունիցի ականջը լսելոյ լուիցէ . և 'ի միտ առցէ . թէ զինչէ տեսիլս մարդարէութեան , զոր մարդարէացայ 'ի վերայ Հայաստան աշխարհի :

## ՅՈՒՂԻԱԾ Բ.

ԸՆԹԵՐՑԱԱԽԵՐՔ ԵՒ ՎԻՊԱՍՆԻՔ

4. Յորժամ զմատեանս նախնեաց մերոց մանրակրկիտ ընթեռնուցումք, ընթերցասէրս և վիտասանս սակաւու դտանեզք , մանաւանդ. 'ի ժողովրդական դասս . որք առտել 'ի խաղս և յառասպելս սպարապէին քան թէ 'ի յրնթերցուածս դրոց . որք 'ի յարբեցութիւնս յօրանային , քան թէ 'ի ծանօթութիւնս հայրենաւանդ պատմութեանց : Ժողովուրդ՝ որ 'ի զրօսանս աշխարհի միայն պարապի և ոչ 'ի զրօսանս ընթերցանութեան և պատմութեան, անկանի 'ի մոռաւոր կարողութեանց , զրկի 'ի չերաներ-յեռանդմանէ սրտի , ինքնին սպանանէ զաշ-

խոյժ զդայմանց խորոց , և իբրեւ անազդի ոք ան-  
վոյթ լինի հոդալ դհայրենեացն։ Ուստի եթէ ոք ոչ  
լուեալ՝ ի հարց անտի և ոչ ընթերցեալ զսպատմռիթին  
նախնեացն իբրեւ յանձնապատան ասիցէ զանձնէ  
թէ իցէ Հայրենասէր . սուտ առնէ գծմարտութիւն,  
զի եթէ հարցանիցի , թէ յումիմ՝ ուսար զայդ վա-  
յելու ուսումն , մի թէ կարիցէ պատասխանել թէ  
առանց ինչ լսելոյ ընթերցման ես ինքնին ուսայ , ոչ

2. Տրդատ ՚ի տղայ հասակէն լուաւ յիշտաւազ-  
դայ Մանդակոնոյ (որ էր նորա մնուցիչ և դաստիա-  
րակ) թէ նա ինքն է որդի մեծին խոսրովու ար-  
քային Հայոց . անուստին վառեցան , բորբոքեցան  
միտք և սիրտ նորա ՚ի քաջութիւնս արութեան :  
Խոր . «պատմէ զնահատականութեանցն Տրդա-  
տայ , նախ ՚ի մանկութեանն յերիվար կամակար  
աշտանակեալ , և կորովի ձիավոր , և զզէնս շարժ-  
եալյաջողակարարս , և այլ պատերազմականս ու-  
սանիլ ախորժակա» . . . . Ոչ ապաքէն մեծն վարդան  
՚ի քաջալերել զզօրս իւր զպատմութիւն Մակաբա-  
յեցւոց յառաջ բերեալ ընթեռնոր առաջի զօրաց ,  
զաստուած սիրութիւն և դհայրենասիրութիւն Մա-  
տաթեայ քահանայի , և օրինակու Յուդայ Մակա-  
բէի , Շմաւոնի և Յովհաննու յորդորէր զզօրսն ա-  
րիանալ ՚ի հոգեւոր պատերազմին : Եզիչէ ։ Եւ ըստ  
պատերազմութեան իւրէն զաջայ որոնց զայստութեանս հանապատ  
երկրութեր առաջի նոց . ոչ և ինքն էսէ ուսկըն էր ՚ի բան-  
իսնէնէն էւրմէ Ա . Կուսիւրանաց : Զոր և ՚ի յեռն առեւուլ զաջ-  
այստութեան Մակաբեյոց ընթեռնոր ՚ի ըելիս ուժնեցուն և  
յարդուուր բանիստ զըս էրացն իշոյսունէր նոցս . որոյի-  
հարդուուցեալ իստեցուն ՚ի վրայ Աստուծուորուր ունիոց ընդ-

դեմ նորուային Անտէստայուց : Ձև նեղեց է նմին պառերազ  
մի խորը շառականք , առայս առան ուշանելուն եկաց  
մինչու շոյաց ժամանակ , ուժոյն յերերէ , ոյլ և անձանց  
յերեխն և ոյլ : Զոր լուծալ հ ս ոյ մերայ ՚ի բերանայ  
մեծին վարդանայ զնոյն նահատասկութիւն նահա-  
տակեցան ՚ի մերայ հոյտենի օրինաց և աւանդու-  
թեանց մերաց . ՚ի նմին մեծ պասերացնին կտտարե-  
ցան ափային մահուամբ , և անուն քաջ ութեան թու-  
զին մեղ ՚ի յերկրի . և յիշառան աւանդուաց ՚ի յերկինս

3 . Ազեքանդրի մեծի լուեալ յերիատոտելէ  
դդ իւցտղնային պատնամ մեջիւն Յերին լէսի մինչ տղայն  
էր , ՚ի նախանձ արութեան քաջին վառեցան սիրտ  
և երի ամունք նորա , եռ ՚ի մասի ՚ի քաջադործու-  
թիւնս ՚ի կշիռ դալ գիւղաղնին , ընդ սուզ ժամա-  
նակս ձչեաց զրազուկի խը ափեել ՚ի մերայ ամենայն  
աղդաց և աղանց երկրի , զերիս մասն աշխարհիս  
ընդ ձեռամբ նուանեալ . Սորա դիմեալ բարկու-  
թեամբ ՚ի մերայ Հրէից , և տեսեալ զատդտուս քա-  
հանարապեան որ դդ եստուք քահանայական գայր  
ընդ առաջ , ոչ մի սին զիջաւ ՚ի բարկութենէն . այլ  
և իջեալ յերիսարէն երկիր եպադ անուան Աստու-  
ծոյ որ գրեալ էր ՚ի ճակատ քահանայազետին , ընդ  
այս ապշեալ իշխանաց հարցին զգատնառէն , իսկ  
նա ասէ՝ Աստուած այսու զդեստի երեւեցաւ ինձ  
՚ի Մակեդոնիայ , և խոստացաւ օգնական լինել զօ-  
րաց խմոց յամենայն տեղիս : Եմուտ ՚ի տաճարն և  
մատոյց պատարագս Աստու ծոյ ըստ ծիսի Հրէից .  
Եւ անդ ՚ի գրացն Դանիէլի մարդարէի ստուգ եաց  
թէ՝ մի ոմն ՚ի Յունաց հանդերձեալ է քակել զիշ-  
խանութիւն Պարսից . ընդ բանս մարդարէին ուրախ

Աղեւ յոյժ . զի հաւատացեալ դիսաց , թէ՝ ՚ի ձեռն  
խր կատարին գուշակոմիւնք Դանիէլի :

4. Եթէ կարծիցես թէ բազում են վիպագիրք  
նախնեաց մերոց . զորս եթէ ընթեռնոցուս , չըտ-  
ւեն ժամանակք , ոչ այդպէս , զի յոյժ սակաւաթիւ-  
են . եթէ կամփս և սիրես զվասատիս նախնեաց քոց .  
՚ի սակաւ միջոցի կարես ընթեռնուր զրովանդակն :  
Հայր Միքայէլ Զամշեան ՚ի յառաջաբանի պատմու-  
թեան իւրոյ զիմապատեանո մեր մինչեւ . ԿՇ կամ ԿՑ  
ընդ . թիւ արկանէ , բայց են և այլ վիպամատեանք ,  
զորս հայր Միքայէլ չեղեւ ձեռնհաս գտանել և ՚ի  
թիւ արկանել . և գող թէ վաթմնիւ չափ ՚ի հա-  
մար արկանին , կէսք ՚ի մատենից հազիւ . հազ մին-  
չեւ ցայսօր ՚ի տիպ գրոշմեցան . իսկ կէսք տակաւին  
ման առանց տալագրութեան . յայսմանէ իսկ ՚ի յայս  
գոյ թէ ՚ի ժաղավրոյ մերոց եղեն բազումք ան-  
ընթերցասէրք և անվիպատէրք . զի եթէ իրեւ զհայ-  
րենասէրս և աղդասէրս դիտէն զյարդ ընթերցա-  
նութեան , և վիպասանութեան . յոլովք ՚ի մատե-  
նիցս , ՚ի ցեցս և ՚ի փոշիս երկրի մաշեալք ոչ ան-  
հետանային : Այլ զմէն մի մատեան ՚ի բազում ան-  
դամ . ՚ի տիպ գրոշմեալ լընդհանուր աղդս մեր  
սիրեալ ծաւալէին : Միաբան Ս. Լ. Ձմիաձնի Շահ-  
նազար կարագետ վարդ ասդես շարժեալ . ՚ի հայրե-  
նասիրութենէ , կամեցաւ զշարս պատմազ բաց նախ-  
նեաց կարդաւ . ՚ի ախոյ գրոշմել . բայց վաճա-  
կանիսահաս մահուան ՚ի վերոյ հստանելոյ , թերակա-  
տար մնացին ձեռնարկութիւնք նորա :

5. Ի հնաւմն ուսումն և ընթերցումն պատմու-  
թեան առ եկեղեցական հարս մեր միայն եղիս

Պայման իւր . իսկ առ աչս աշխարհիկ ժողովորոյ  
մերոց գրեթէ իրրեւ իմն աւելորդ համարեցան .  
որք յաւէտ եւս պէտո ո՞նչին զի՞պս նախնեաց  
իւրեանց ընթեռնուլ և զիենցաղս և զշտի հայրե-  
նաօիրութեան նոցա 'ի վիսպաց անտի 'ի միտ առ-  
նուլ և տեսանելթէ ոյք ոմանք էին , որք իմաստու-  
թեամբ զդօնացեալ և քաջութեամբ արփացեալ  
զաղդն բարձրացուցին , և զհայրենիս 'ի յանդորրու-  
պահելով հարստութեամբ ճոխացուցին . և ոյք էին  
որք իմարութեամբ վարակեալ և վասացեալ՝ զաղ-  
դն և զհայրենիս նուաստացուցին : Ա . Հարք մեր  
առաւելյօժարամիտ էին մատենադրել զի՞պս աղ-  
դիս քան 'ի ճառո վարդապետականս և 'ի ինոգիրս  
Աստուածաբանականս գեղերիլ , որպէս յայտ է 'ի  
մատենիյ նոցա . ծանեան նոքս թէ պատմութիւն  
է որ ինոգանի առնէ զաղդն՝ զեկեղեցին և զհայ-  
րենիս ուստի զայն զրեալ աւանդեցին ժողովորոյ :

6. Յանասէրք աղդաց երկրի 'ի փորձոյ անսփ  
ուսան , թէ նախ պարտ է 'ի վի՞պս աղդային զրարս  
և զվարս աղդին կրթել և մարզել , և ապա զի՞պս  
ամենայն աղդաց թարգմանել և տուլ 'ի գիտու-  
թիւն ժողոյոց և ուսանողաց , ուստի յայմանէ  
խոհեմոցեալ՝ ուսուցիչք մեր զպատմութիւն աղ-  
դիս իրրեւ յոյժ օդտակար դիտելիս հազիւ ուրեմն  
մուծին 'ի դպրոցս : Պատմութիւն շանմարան է  
ամենայն գիտութեանց , զի է ուրեք որ դրովանդակն  
և է որ զմասունս 'ի գիտութեանց ներքս իւր բո-  
վանդակէ . մանաւանդ զկենցաղտկանս , զքաղաքա-  
կանս , և զհայրենասիրականս : Ոչ ապաքնյոյժ կար-  
ճատեւ եղեն կեանք մարդոյ 'ի վերայ երկրի , իսկ

կեանք զիոզաց յոյժ երկարաւոււ , զի ՚ի նախալիլին  
Մարդոյն սկսեալ՝ դայ հասանէ առ մեղ , դորս եթէ  
մոտեիւր բնիթերցեալ ՚ի մերայ հասցուք թէ ՚ի  
սկզբանէ հետէ զինչ ինչ անցք անցին ընդ ազգս ,  
ընդ իշխանս , ընդ պետս . և ընդ ժողովուրդս աշ-  
խարհիս այսորիկ , և թէ զինչ եզեն բուն պատճառ  
բոգման աղջաց և պետութեանց և զինչ պատճառք  
անկման և կործանման նոյս , յորժամ զմէն մի  
մարդոյ ուրոյն , զիւրաքանչիւր աղջաց և լեզու աց  
ուրոյն , և զրովանդակ մարդկանց աշխարհիս միա-  
հաղոյն զիսորհուրդս , զրանս , և զարարս և զիմաս-  
տութիւն ՚ի գէպս անդ իրեւեւ ՚ի հայելւով տեսցուք  
բարոյական և մատառական կեանք մեր երկարին ,  
և թօւի մեղ ՚ի միսս մեր զմէնչ , թէ յառաջ քան  
զնախին մարդն ստեղծ եալ եմք յաշխարհի , և ընդ  
բնաւ մարդիկո կենցազս կենցազավարեալ . և յոր-  
ժամ ըստ այսմ՝ կենաց և իրաց մարդկան ոք զիորչ  
առնուցու , իրեւեւ բազմաժամանակեայ ծեր իմաս-  
տութեան ալեօք ծաղկեալ՝ բարուք անօրինէ զիեանս  
իւր և իւրայնոց . և իրեւեւ ներհուն և հանձարեղ  
խորհրդական այսուհետեւ բաւական և կարող  
լինի զանձն օրինակ հայրենասիրութեան ընծայել  
ամենեցուն , որք չուրջ բնակեալ են զնովաւ :

7. Զվէպս նախնեաց , զշրս գրով աւանդեցին  
մեղպատմիչք ընկնեռնուլ և համատարած առնել  
յաղդս մեր , չհամարիմ տակաւին գործ կատար-  
եալ հայրենասիրի , այլ իղձ և խնդիր է իմ ՚ի հայ-  
րենասիրաց , զիյետ զամենայն զիւպագիրս նախ-  
նեաց կարեւոր ծանօթութեամբ ՚ի տիպ դրոշմելոյ  
փութապին կղերք , և բանասէրք աղդիս զան-

ցեալ, և զներկայ գէպս ժամանակի իւրեանց դրոշ-  
մել 'ի վիպագիրս, 'ի յօդուտ ապագայից : Առաջ-  
նորդք դաւառաց՝ վանահարք և միաբանք ամենայն  
վանաց ունիցին զյիշասակարան, յորում դրոշմեալ  
պահեցցեն զանցս և զդիպուածս դաւափ և աշ-  
խարհի իւրեանց : Յամենայն քաղաքս և 'ի գիւղս  
բանասէրք և ուսանողք առ ձեռն ունիցին զմատ-  
եան մի յիշատակի և 'ի նմա դրեսցեն զամենայն  
աւուրց, շարաթոց, զամոց, և զապուց զանցս  
և զդիպուածս հանգերձ կարեւոր հանգամանօք,  
զի ահա այսէ գործ մեծի հայրենասիրութեան .  
և ամենայն ընթերցող և դրագէտ որ ոչ յօժարեացի  
առնել այսոլէս, թերի դտանի 'ի գործա ազգա-  
սիրութեան . և ամենայն որ վութայ ըստ դրելում  
առնել կատարեալ դտանի 'ի սէր հայրենեաց :

## Յ Օ Դ Ո Ւ Ս Ե Ր Դ Ա

## ԵԱՆԱՍՏԵՂՄՔ

1. «Պատմի թէ Աղեքսանդր մեծ հասեալ 'ի  
փախւդիա եմուտ յեղինն քաղաք Տրոյիոյ, տեսեալ  
անդ. զլ'յամանդ դեռ՝ յիշեաց զրան Հոմերոսի, որ  
զարմանալեօք դրեալ էր, թէ զիտրդ վաղեաց զնո-  
վու Արիլլէս, և զի լայնութիւն դեսայն չէր այն-  
չափ մեծ, որչափ երեւեցուցանէր բանաստեղծու-  
թիւն Հոմերոսի, ոչ զարմացաւ . բայց յետոյ 'ի տե-  
սանել զգերեզման Աքիւլեայ ասաց . «Երանի քեզ  
Աքիւլէս, զի ունիս քեզ քարոզ զՀոմերոս, որ այն-  
չափ մեծացոյց զգործս քո»: Մատեաւ յայնժամ առ-  
նա բանաստեղծութեան, և առէ . «կտու եւս դրեսցուք

մեք արքայ՝ զդործս քո՛ քան զո՞ր գըեաց Հոմերոս  
զԱրիւլիսյ»։ Ասէ ցնա Ազէքասանդր, «Բզձալի է ինձ  
՚ի Հոմերոսի պատմութեան թէրսիդէս դոլ ։ քան  
՚ի քումդ Արիւլիսը Զոյր բան ՚ի մէջ բերէ և Յով-  
հաննէս Երդնկացին, ՚ի մեկնութեան քերտկանու-  
թեան։ (Չամիչ հատ. Ա. Երես 123):

2. Զիք ՚ի դիր խմասութեան որդւոց մարդկան  
քաղցր և ախորժելի քան զրանասութզմթիւն, որ  
դիմքէ զմիսու խմասոնց, և ողոքէ զմիրսու ամենե-  
ցուն . սպաս լոյն են ճանապարհք և ընդարձակ առ-  
պարէդն, երագ են ոտք, և անարդել ընթացք .  
զի խոնդ բանասութզմին մերթ ընդ արեդական  
խօսի, մերթ ընդ լուսնոց ընկերանայ, մերթ ընդ-  
բոյլ աստեղաց երկնից ճեմի, մերթ ՚ի վեր քան  
զատեղու սլայեալ՝ ընդ հոյս հրեշտակաց խորհըր-  
դակցի, և մերթ հոդիացեալ և վերապացեալ իրրեւ  
երագալթեւ սերովրէ մասնէ ՚ի խորան փառացն Առ-  
տուծոյ, և փառաւորէ զանեղ կակն անմասոցց: Խանդ-  
նորա ՚ի յեղակարծութեան սուզի ՚ի խորս անդնդոց ծոս  
վու, ունին դնէ բարբառոյ ձկանց և իրսութէ զար-  
մանայ ընդ խորհուրդս խմասութեան նոցա, իր-  
բեւ զբոցափայլ կայծակս շանթից ընդ մասնէ ՚ի խորս  
դժոխոց և աւեսեալ զպարտութիւն զօրացն բելիա-  
բայ խաղ առնէ զնոքօք: Թեւս արծուոյ տռեալ  
խոյանայ ՚ի գագամթս բարձրարերձ լերանց, անդ-  
եգեալ զախտու իւր իշխել կարծէ համօրէն տիեզե-  
րաց . անդ զբոյլ գաւնազեղ ոլէսպէս ծագկանց  
առ ինքն ժողովեալ հրաման տայ նոցա իրբեւ զօ-  
րաց կորովեաց մարտնչել ընդ տղեզութիւն աշ-  
խարհի զինու զեղեցկութեան: Իջանէ ՚ի հովիառ

ծաղկաթիտ բլրոց . զիրան մուսայից անդ հարեալ զքնարն Արքէսով ՚ի ձեռն առեալ՝ այնչափ քաղցր գեղգեղէ , մինչդի ՚ի համեզ բարբառոյն զնայլեալ մարդկանց փոխին ՚ի յարձանն . իսկ անասնոց ՚ի յերդելք նորա զշնացեալ զիտոս մարդկան ստանան : Բանաստեղծն իրրեւ զսոխակին , որ թադուհին է բանաստեղծից . և Հայր Երդոց , մերթ վերաբաւորեալ խոտնի յերամաթունոց և այնչափ քաղցր սիրարանէ ՚ի դեղդեղդ մինչդի սիրոք դաղանաց ամոքին , բարք վայրենի մարդկանց ուղղին և բարեմիյն մարդիկ ուրախանան և հրճուին :

3. Թողիչ ճարտար է շրմունք բանաստեղծին . զի թէ խանդապատեալ ՚ի վերաց հայրենեաց սուլեսցէ , երդեսցէ և կամ արձակեացէ զրարբառ իւր , լերինք և ըլուրք հայրենեաց կայտոին , ջորք սահանաց ծովոց ՚ի վերինոս իւրեանց խայտան գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքու , աղրիւրք հրճուեալ օրհնեն զծէր , դաշտք բերկրեալ զուարժանանն ՚ի Տեառնէ : Քնար բանաստեղծին յոյժ աղդեցիկ է և հրաշալի . զի յորժամ դաշնականուագեցէ , դոդ թէ՝ մեռեալք ՚ի դերեղնանաց յառնեն , տկարք զօրութիւն դդենուն , քաջք խիզախնեն , կորովիք յաղթեն , թադաւորք տիեղերակալն , առերակք երկրի մերում շննին , դիւդք քաղաքանան , քաղաքք մոյրաքաղաքք լինին : Փող բանաստեղծին յոյժ զօրաւոր է , զամուրս թըշնամեաց կործանէ , և թշնամին առաջի իւր փախատտական առնէ : Զայն բանաստեղծին յոյժ համեզ է և խաղաղարար . յորժամ զձայն իւր լոելի առնէ հեռաւորաց և մերձաւորաց աղդի իւրոյ , անզու-

գութիւն՝ ի միջյ նոցա տեղի տայ. սէր՝ միութիւն  
և խաղաղութիւն հաստատի, տղեղ օտարամշղու-  
թիւն՝ ի մոտց Հայոց փախատական դնոյ և Հայ-  
քենասիրութիւն իբրեւ անշինչ կնիք տպաւորի ՚ի  
սիրու նոցան Զայս և առաւելքան զայտափկ զրանս  
բարիս ըղիսէ ՚ի սրտէ իւրմէ հայրենասէր բանաս-  
տեղծն, որ եթէ զարախականն երգեսցէ, խնդաս-  
ցէ Մասիս և ամենայն լերինք Հայաստանի ընդ-  
նմա, իսկ եթէ զորտմական առցէ դքնար, սուդ  
առցէ Մասիս և ամենայն լերինք ընդնմա:

4. Ի յաւուրց նահապետաց անտի եղեն յաշ-  
խարհի մերում բանաստեղծք բաղում, այսմ վկայ  
են վճիտ պարութիւնք օդոյն, ծաղկաւէտ լերինք  
և հոգիստք հայրենեաց, երգասէր բարք և բնութիւնք  
Հայկազնայ. զի այր շինական և քաղաքացի, պա-  
տանին, երիտասարդն և ծերն, կոյմն, հարմն՝ պա-  
ռաւան Հայաստանի դոդ թէ միշտ պատրաստ և դիւ-  
րազգաց են՝ ՚ի բանաստեղծել, արք զմնուն բանաս-  
տեղծից իւրեանց ՚ի բարբառ ռամկական անուա-  
նեն ուշու. իսկ կանայք զրանաստեղծս իւրեանց  
անուանեն (խարպաշէն, այն է բանաստեղծ), Բա-  
զում երգք բանաստեղծից մերոց հնոց չհասին առ-  
մեղ. զի ոչ դրեցան ՚ի գիրս. այլ առանգտ թեամբ  
սակաւք հասին, զըր այժմ անուանեն երգք, դովք  
ցուցք և այլն: Զի եթէ այր բանասէր շնչիցի ՚ի  
քաղաքս ՚ի դիւզո և ՚իսունս մամնաւորաց անդ ՚ի  
նոսա գացէ բան ինչ, երդ ինչ, դովք ինչ, և բա-  
նաստեղծական աւանդտթիւն ինչ: Զորս եթէ  
՚ի գիր գրոշմեսցէ, բաղում առաւար մատենից կա-  
րութին: Գոզման երդիչք երեւելի էին ՚ի հին բա-

նաստեղծո մեր , որք զԴիւցաղնական վէպո քաջոց  
 մերոց բամբառամբ երդէինու բաջք և զիւցաղունք  
 բազում եղեն յաղդի մերում , վասն այնորիկ բազում  
 բանք էին զնոցանէ 'ի բանաստեղծո գաղթան , բայց  
 զի բանք նոցա դիցամոլ առասպելեօք շաղախե-  
 ցան , ուստի պարկեշտ և քրիստոսասէր հոգին Քեր-  
 թողահօրն գոգ թէ զդուշացաւ զսովանդակն 'ի  
 զիր առնուլ , բայց 'ի սակառոց : Վարդգէս խնդրէ  
 զքոյր երուանդայ 'ի կնութիւն , խոկ սա զժուարի  
 տալ զքոյրն , ուստի վարդգէս զամննայն հնարա  
 հնարէ առնուլ զքոյրն արքայի , վասն որոյ առաս-  
 պելէին բանաստեղծք այսպէս Խոր զիրք Ա : Պէ-  
 կե : « Հասուած գնացեալ վարդգէս մանուկն 'ի  
 Ցուհաց դաւառէն , զբասազ զետով , եկեալ նըս-  
 տեալ զըրեզ ըլլով , զ'Յրտիմէզ քաղաքաւ , զբասազ  
 զետով . կուել կոփել զդուռն երուանդայ արքայի » :  
 Ահա սոյն համառօտ բան սկիզբն է պատմութեան  
 հարսանեաց վարդգէսի . և սյոչափ համառօտ բան  
 չհասանէր մինչեւ ցխորեննացին . ուստի թուի թէ  
 զկարի առասպելու ոչ արկանէր 'ի գրի : Յայց է սյլ  
 ինչ զարմանք , ընդ որս զարմանալ պարա է . զի  
 գեռ ցայրը ժամանակի սոյն բանաստեղծական  
 գէպք իրօք 'ի կիր արկանի 'ի վասպռական և  
 յայլ տեղիս , զի եթէ 'ի կողմանէ երիտասարդին  
 խնդրակք ելցեն 'ի տոնն արտունն խնդրել դիրու  
 նորա 'ի կնութիւն երիտասարդին , տծեն ընդ ին-  
 քեանս խնդրակք զիմն մի 'ի դիմաց խօսնառն՝ գուռ  
 տփուլ անուամբ : Այս է կոող կոփող զդուռն հարսին  
 հին առանդութեանց և մանաւանդ առասպելաց

ուստի բազում բանասեղծք զգուշութեամբ և հեռուատեսութեամբ ստեղծանել պարտին զբանս . զի բանասեղծութիւն երբեմն այնչափ խորագոյնս ազդէ ՚ի միաս և յերեւակայութիւնս ազդաց և ազանց . մինչ զի մարդիկ իրեւալ արբեալ պատրեալ և ձգեալ՝ երթան զհետ բանից նոցա ընդ դարս և ընդ ժամանակո բազում : Զի պատմի վասն Արտաւազդայ երկրորդի, թէ՝ սա ՚ի մանկական տիոց մինչեւ ցմահ վարեաց կեանս անողզայ՝ հակառակ ու զզութեան կենաց հօր իւրոյ Արտաշիսի . Աւստի զի կարտաւազդայ կարծիք կալան պառաւունք Հայոց, թէ կանոյք սերնդոյն Ամդահակայ հարեալ են զնա կախարդանօք . և ըմբռնեալ են վնա յախոս մզութեան . զի յերդս առասպելաց ասէին զնմանէ խոր . Ավիշապազունք գոզացան զմանուին Արտաւազդ . և գեւ վախանակ եղին» : Առասպելո սյս ՚ի յօրէ Արտաւազդայ մինչեւ ցայսօր արհաւիրա արեկալ ՚ի սիրսս կանանց Հայատանի՝ ուժգնապէս տիրէ ՚ի վերայ երեւակայութեան ծննդականաց, մինչ զի ՚ի յերկունս գոլովնոցա երկնչին թէ գուցէ գեւք գողացեն զմանուկս խրեանց և վախանակ գեւ դիյեն , Աւստի խաչ՝ աւետարան դնեն ՚ի մնարս ծննդականաց, խունկ ծխեն, աղօթս տանեն, զուրեսին որմաննս տան ծննդականին խաչ դնեն. եթէ զպատճառէն այսոցի՛ հարցյանիցես, առասպելա բանեն պառաւունք թէ . զի լուաք և տեսաք թէ գեւք եկեալ գողացան զմանուկս և սպանին զմայք նոցա . զան այսօրիկ զգուշանամք մանկան, մինչեւ մլրտեսցի, գրոշմեսցի և ազատեսցի ՚ի դիւաց :

6. Արտաւազդայ թագաւորեալ ամս երկու .

« Անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի՝ որսալ  
կինճո և խավոյիս զակամբ գինայ, ազմկեալ իմն  
՚ի ցնորից խելագարանոց, ընդ վայր յածելով երի-  
վարան, անկանի ՚ի խոր իմն մեծ, և խորասոյդ  
լեռալ անհետիւ։ Զամանէ երդիչք գողթան առաս-  
պելաբաննեն այսպէս. եթէ ՚ի մահուանն Արտաշիս  
բազում կոտրածք լինէին ըստ օրինի հեթանո-  
սայ, դժուարի առեն Արտաւազդք, առելով ցհայրն.  
Մինչ դու գնացեր, և վերիիրս ամենայն լնդ քեզ  
տարար, ևս աւերակացս որովէս թագաւորեմ։  
Վասնորոյ անիծեալ զնա Արտաշիս՝ ասաց այսպէս.  
Եթէ դու յորս հեծցիս յազառ ՚ի վեր ՚ի Մասիս,  
զբեղ կացին քաջք, տաշցին յաշառ ՚ի վեր ՚ի  
Մասիս, անդ կացցես, և զլցու ՚ի ուեցեան Զրու-  
ցեն զամանէ և պառառունք, եթէ արդելեալ կայ  
յայրի միաւմ կապեալ երկաթի շղթայիւք. և  
երկու շնչք հանապաղ կրծելով զզդմայն, ջնայ  
ելանել, և առնել վախճան աշխարհի. ոյլ ՚ի ձայնէ  
կռանարկութեան դարբնաց զրանան՝ ասեն,  
կապանքն : Վասնորոյ և առ մերավ խոկ ժամանա-  
կաւ՝ (ասէ) յաւար միաշաբաթւոջ երիցս կամ չո-  
րիցս բաղիսն զամն զի զօրասոցին, առեն շղթայք  
Արտաւազդայ։ Հետք առասպելիս ոչ միայն հա-  
սանէ առ խորենային, ոյլ անցեալ ընդ դարս և  
ընդ ժամանակս հասանէ առ մեզ։ Զի ՚ի քաղաքն  
վասպուրականի վան՝ տեսանեմք միեշեւ ցայսօր։  
զի դարինք յաւար միաշաբաթի երիցս կամ չո-  
րիցս հաւկանեն կռանա, զատին . զի իթէ զշատճա-  
ռէն հարցանիցես, պատասխաննեն թէ ՚ի հին ար-  
հետապետաց մեզ աւանդեցաւ այսպէս առնել։

7. Պատմութիւն խորասոյդ լինելոյն Արտաւագ-  
դայ . և շղթայից նորա այլափախ և զանակաւ իմն  
պատմի ՚ի պառաւանցն վասպուրականի . զի ասեն,  
թէ՝ հսկայաղուն ուն քաջ երիտասարդ անուն նորա  
Մհեր . (գուցէ մի՞ն զանուն չաստուածոյն Պարսից  
եղեալ են ՚ի վերայ Արտաւաղդայ) : Որ ունէր նժոյդ  
մի ամենի յըք . որ ՚ի հսկայալթենէն չկարէր մտա-  
նել ՚ի շեն . զի եթէ (ասեն) ոտք նժոյդի նորա  
հասանէր յերկից, կանդնաշափ միսիւր ՚ի հող երկրի,  
ուստի հանապաղ յածիւր ՚ի յապատագ և ՚ի վիճուտ  
տեղին . յաւուր միում երթայ յորս ՚ի լեռան Ալբու-  
փի . (գուցէ ակուի անուանէն առեալ են) որ  
հանդիպոյ է արեւելից բերդին վանայ, և աեւեալ  
զքարեայ մեծ գուռն այրին բայեալ . զոր մինչեւ  
ցայսօդ անուանէն Մհերի գուռն . հանդերձ երիվա-  
րան մասնէ անդ հանել սակի, ըստ որում աւան-  
դի թէ գանձք ուկոյ բազում գտանին յ սյրի անդ.  
՚ի խնամնոյն Աստուծոյ փա՛փ գուռն այրին, և  
քաջք կալեալ զՄհեր կապեցին երկաթի շղթայինք  
և զի առաստելեն պառաւունք թէ ՚ի գիշերի Համ-  
րակման երկինք վայր ինեալ՝ տոյ ողջոյն երկրի,  
և յողջունեն զմիմեանս, բանի գուռն Մհերի, և  
Մհեր գուն գործէ խորտակել դշլթայս, ելանել  
արտաքս և աւերել զաշխարհու . բայց շղթայք նո-  
րա ՚ի հանապաղորդ կռանահարութենէ գարրնաց  
ամբանան . ուստի չկարէ ելանել արտաքս, և նշան  
տան ռամկաց թէ յորթամ Մհեր ելանիցէ յայրէ ան-  
տի, կատարած աշխարհի հասանի . և Քրիստոս գայ  
՚ի գատաստան . և ոմանք եւս խաւն ընդ այսուիլ  
պատմեն թէ յորթամ քաջն Մհեր արձակեալ ՚ի կա-

սպանց անտի ելլիէ արտաքս , պատերազմեայի ընդ-թշնամիո , յաղթեսցէ և կանգնեսցէ զթադաւորութիւն Հայոց : Եւ ճդնին պառաւունք հաւասար առնել զպատմութիւն Մհերի , ուսուի բազում անդամ ասն թէ՝ մեք իսկ զնացեալ 'ի դուռն Մհերի ականջօք մերովք լուաք զիդինջումն երիվարինուրա . . . : Բանաստեղծական պատմութիւն Մհերի , այն է Արտաւազգայ , երկար պատմի , բայց մեք զհամառօտն եղեալ՝ թողաք այլոց ոչ միայն զրուվանդակ պատմութիւնս 'ի բերանց ծերոց և պառաւանց առնուլ և պահել 'ի դրի , և զի բազում այս պիսի աւանդական պատմութիւնք գոն 'ի Հայուտան . զրս եթէ հառաքեսցուք բազում վիպական ճշմարտութիւնք 'ի յայտ բերեն մեզ :

8. Առան հարսանեաց Արտաշիսի . և Սամենիան , որ պանծաշուք հանդիսիւ և յոյժ առատաձեռն կատարեցաւ 'ի Հայուտան , երդեցին Գոզթան բանաստեղծք մեր այսպէս : « Տեղ ուկի տեղայր 'ի վեռաւցութեան Արտաշիսի , Տեղայր մարդարիտ 'ի հարսնութեան Սամենիանն : Քանզի սովորութիւն իսկ եր թագաւորացն մերոց փեսայութեամբ 'ի դռւռն տաճարին հասանել դահեկանս ճապաղել իրեւ զիւղատեանն Հռովմայեցոց , սապէս և թագուհեացն յառաջաստանն՝ մարդարիտ » : Ել 'ի Հայուտան և տես զհաքսանիսն Հայոց , թէ զիա՞րդ այժմ զիւսայն զարդարեալ պսակ 'ի զլուխ և սուք ընդ մէջ նորս ածեալ՝ անուանեն թագաւորն՝ առ դրան եւ կեղեցրցն դրամա ճապաղէ , նոյնպէս թէ 'ի մտանել հարսին ընդ դրունս փեսային և թէ 'ի յառագաւառ

աին արկանեն 'ի գլուխ նորա ոսկի կամ մարդութիւն՝  
և ասեն բանս գովասանականս վասն թագաւորին  
և թաղաւոհոյն, որպէս ասէին Գովթան երդիչը  
վասն թաղաւորաց մերոց, թէ «Հեծաւ արի ար-  
քայն Արտաշէս 'ի սեաւն գեղեցիկ, և հանեալ  
զսկեօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս դար-  
ձուի որաթել ընդ գետն, և ձգեալ զսկեօղ շիկափոկ  
պարանն, ընկէց 'ի մէջք օրիորդին Ալանաց, արագ-  
հասացանելով 'ի բանակն Արտաշիալ: Զայս մեկնէ  
խորենացին «Որ և շշմարտութեամբ ունի այսպէս,  
քանդի պատուեալ էր առ Ալանս մորթ կարմիր,  
լաքայ շատ, և ոսկի բաղում՝ 'ի վարձանս տուեալ  
առնու զտիկն օրիորդն Ասթենիկ. այս է ոսկեօղ  
շիկափոկ պարանն: 'ի Տարօն գեռ աիրէ սովորու-  
թիւնս, տալ դրամ բաղում և այլ ընծայս հօր և  
մօր օրիորդին և ապա առնու զորիորդն, և ահա  
բանաստեղծական երգ նացա, որ եղեալ են 'ի բե-  
րան հարսին, զրովանդակ միաս կարմիր մորթին,  
լաքային և բաղում ոսկոյն յայտ առնէ: «Զմէրիկ  
խարեցին թօփ մը շիլով, Զհերիկ խարեցին կուռէ  
մը դինով, Զազրէր խարեցին Զուխտակ մը ճրզ-  
մալ, Զքռւրիկ խարեցին մատիկ մը հինով: Զգրամի  
հանդուրց արձակեցին: Զաղֆիկ մամոց ջոկեցին»  
մասր Հայկական երես 143. երգ հարսին:

9. Վահագն որդի Երուանդեան Ծիդրանի, այնչափ  
դիւցանական քաջութիւնս դործեաց 'ի յերկրի,  
մինչ զի զնա 'ի յերդս ոչ միայն Հերակլեաց հաւա-  
սարէին «այլ ասէին զնա և աստուածացնալ. և անդ  
յաշխարհին վրաց զսորա չափ հասակի կանդնեալ  
պատուեին զոհիւք»: Աւոտի բանաստեղծք մեր ընդ-

քաջութիւն դիցաղնիս զարմացեալ և յափշտառ  
 կեալ՝ մոռացան կոչել զնա ծնունդ. մարդոյ, զի վասն  
 ծննդեան վահագնի երկնեաց ասեն երկինք և եր-  
 կիր. երկնեաց և ծիրանի ծով. և ՚ի ծխայն և ՚ի  
 բոցոյն ծնաւ. խարտեաշ մոնուկ. «Երկնէր երկին և  
 երկիր, երկնէր և ծիրանի ծով. երդն ՚ի ծովան  
 ունէր զիարմէիկ եղեգնիկն. ընդ եղեգան փող  
 ծուխ ելանէր. ընդ եղեգան փող բոց ելանէր. և  
 ՚ի բոցոյն պատանեկիր վազէր. նա հուր հեր ունէր,  
 ապա թէ բոց ունէր մուլուս. և աշխանքն էին ա-  
 րեգակունք. Նախ քան զամա երկու հազար երեք  
 հարիւր ստեղծ Գողթան երդիչք մի զրանո զոյս.  
 բայց վասն համեզութեան գեղեցիութեան և վաե-  
 ժութեան երդեցին երդիչք մեր մինչեւ յաւուրա  
 քրիստոնէութեան. և մինչեւ ՚ի խորենացին. որ  
 այսնջօք բուեալ զայս հասուած միայն աւանդեաց  
 մեղ, թողեալ ՚ի բայց զայլ եւս հասուածո. «Զայս  
 երդելով ամսոյ բամբուամի, լուաք (ասէ) իսկ ա-  
 կանջօք մերովք. Յետ որոյ և ընդ վիշտապայ ասէին  
 յերդն կռուելնմա և յաղթել. Վում հանճար Հայ-  
 կալան բանաստեղծին այնչափ պայծառ երեւի ՚ի հըն  
 երդս վահագնի. որոյ հաւասար գժուարին է զաա-  
 նել այլ որեք. զի դեղեցիկ էր և ախորժելի.  
 ուստի պահեցաւ ընդ երկար ՚ի Հայոյ. Արդ՝ ինձ  
 քան զամենայն երդս սիւելի է այս՝ որ զսանդ և  
 զիսրով Հայոց վառէ և պատրաստէ ՚ի յԱստուած-  
 պաշտութիւն և ՚ի Հայրենասսիւթիւն. ուստի ըդ-  
 ձամ զի ամենայն ճարտար բանաստեղծ երդեցէ  
 ՚ի Հայ բարբառ և ուսուցէ սիրել զԱստուած և  
 զՀայրենիս,

10. Դվինաւոր տեսակք բանաստեղծութեան են  
աստուածաբանականք, գիւցաղնականք և պատմա-  
կանք : Սադման Գութիմի մարդորէին . Երդ . Եր-  
դոցն Ազոմմանին Նոյնպէս ամենայն Երդք շարակա-  
նոց, գանձարանոց, տաղարանաց . բանք Գրիգորի  
Նորեկացւոց . Յիսուս որդի Շնորհալոցն, և այլ ա-  
մենայն Երդք, գանձք Եկեղեցականք աստուածա-  
բանական են, ոչը Երդեմք եղանակաւ, Որոց վասն  
դրեաց Լամբրոնացին թէ «Ազդումն Երաժշտական  
եզանակին . . . Ընդսոտոցեալ զարթուցանէ զիմոս  
ամենեցուն առ ՚ի տենչումն Շնորհին . քանզի չիք  
ինչ որ զիտմա մեր յեզաւու՞չ, յուրախութիւն կամ ՚ի  
տրամութիւն . որպէս զերգոց ձայն, յորժամ որպէս  
պարան է լինիցի . վասն այտրիկ և Եկեղեցական  
աւանդութիւնն ընկալաւ զայնու: Գտանկին և այլ տա-  
ղաւայիմալ աստուածաբան բանք, որպէս է հազար  
տուն ոտանաւոր բանք Գրիգորի Մագիստրոսի :  
Տաղք Յովասափ թադաւորի, Արամ գիւք, Հրա-  
իրայ Երկրին Աւելաեաց, առքա ամենե քեան իրբեւ  
զիսյածայիւնս աստուածային հրոյ վառեն և բորբ-  
քեն զիիրաս, զիմոս և զհազիս մեր ՚ի որովրէական  
սրբասացութիւնս, ՚ի սէր և ՚ի ճշմարիս Երկրապա-  
դութիւնն Աստուածոց . ուստի քան զամենայն բանք  
բանաստեղծից սիրելիք գովիլիք և պանձալիք են  
մեղ, և Եղիշին միշտ և յուիաեան :

11. Ի հին գիւցաղնական բանից սակաւ ինչ մնա-  
ցին առ մեղ զոր ՚ի վեր անդր յիշեցաք, իսկ ՚ի նորս  
գովիլիք է գործ Հ. Արսենի ՚ի բանաստեղծութիւն  
Հոյի զիւցաղնի, գործ Յովուշիսյ Թաղիթեանց  
՚ի գիւցաղնական վէստ վարդգէսի Տուհաց տեառն:

թաց՝ ի գրաւորացս գտանին անդիր բազում դիւ-  
ցաղնական վէպք ՚ի պառառունս Հայսատանի և առ-  
շելը անուանեալ երդիչս . կան՝ որք սուլ պատմա-  
կանքն . և են՝ որք երդախառն պատմին . են՝ որ  
՚ի Հայ լեզու , և են՝ որք ի տաճիկի Յետին Գողթան  
երդիչը հայրենեաց եղեն անուանի Հայ աշուշ .  
որք վիպատանական և խրատական երդովք իւր-  
եանց բազում բարեաց պատճառք եղեն աշխարհի  
մերում . Զի որպէս պատմէ Թաղիթեանց թէ՝ յա-  
ւուրս բանակալութեանց յորժամ չկարէին վար-  
դապետք մուանել յեկեղեցիս և քարոզել , սոքա  
զնուագարան ՚ի ձեռին իբրեւ մուրացիկ մտանէին  
՚ի տունս Հայոց , հոգեւոր խրատական և հայրե-  
նասիրական երդովք միիթարէին զնիրտու Հայոց ,  
և յորդորէին համբերել վշտաց իբրեւ նահատակ  
և չեռանալ ՚ի հայրենի աշխարհէն , որպէս յայտ է  
՚ի յերգոց Շիռունկ ուստի գուկաս . . . Ավասո քել  
Հայոց խեղճ ժողովուրդ . և այն :

42. Ինորումն գովելի են հայրենասիրական բա-  
նասեղնութիւնք Հ . Ղեւոնդի Այիշանեան : Վնար  
հայկական հաւաքածւոյ երդարան Միանուարեանց ,  
յորում գտանին բովանակութիւնք բանից հին և  
նոր բանաստեղծից : Մազկեցան յաւորս մեր ՚ի նիւ-  
զոնդին , ՚ի Պետերբուրդ . ՚ի Տվիտու , ՚ի յԱղույն ,  
այն է Գողթն հին , ՚ի Վան , և յայլ քաղաքս Հա-  
յաստանի հայրենասէր բանաստեղծք . որք խան-  
դափառ սրութ յօհարեցին յօդինել երդու գեղեցիկս  
և պէսպէս ՚ի վերայ Հայսատանի , զորոց զվոյցելու չոն  
տուեալ մանկակին Հայոց ՚ի բերան՝ երդեն հանապաշ  
և ոգեւորեալ խրախուսին ՚ի սէր հայրենեաց : Այլ

Հեղեն բառականայսոքիկ . ուստի ժամ' է բանառ-  
տեղծից առնուլ զնոր քնարն հայրենի 'ի ձեռին եր-  
գել երգս նորս . մինչեւ արքեալք յիմարքութեամբ  
զգաստացին , հեռացեալ որդիք ժողովեսցին , բա-  
ժանեալք միասցին . կաշկանդ եալ սրունք գնաոցեն ,  
անուղղայք ուղղեսցին . ուստի որք ստեղծանել կա-  
մին , զիսենէշ , զիտին , և զշար բանս , որք ապա-  
կանիչ են վարոց 'ի բաց արարեալ՝ պարկեշտս պատ-  
շաճս , վսեմն և գեղեցիկս երդեսցին 'ի շինութիւն  
հայրենեաց և եղբարց :

## ԳԼՈՒԽ Ժ .

ԹԱՏԿՈՒԹԻՒՆ , ԶԻՐՔ . ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ .

## ՅՕԴՈՒՄ Ա .

ԹԱՏԿՈՒԹԻՒՆ

1. Հայրենասէրն գիտացէ դյատկութիւն աղդի  
իւրոյ , զի յատկութիւն աղդին է ներքին բնութիւն  
նորս . անձն իւր ազդային եթէ ոչ ջանայ ճանա-  
շել դյատկութիւն բովանդակ մարմնոյ իւրոյ և ան-  
դամացն՝ չկարէ ճանաչել զինքն , չկարէ օդտակար  
անդամ լինել ամրողութեան ազդային մարմնոյն .  
Պարզութիւն , հաւատարմութիւն , հիւրասիրութիւն ,  
առարասիրութիւն յատուկ է աղդիս , որք 'ի դա-  
րուց նահաղետաց անտի թագաւորեն 'ի բնութիւնս  
մեր . Զայս ծանեայ ոչ միայն 'ի պատմութենէ անտի  
նախնեաց , այլ 'ի փորձայ . զի 'ի Հայ ծնողաց ծնայ ,  
'ի Հայս աճեցայ և զարգացայ , ընդ Հայս կենցա-

զավարեցայ, և ամենայն ներքին և արտաքին խորհութեացոց բանից և գործոց նոցա իրադէկ եղէ : Հարք մեր գովելի յատկութեամբ.քս պահեցին զինքնութիւն իւրեանց և զազդութիւն . բայց բազում անդամն եւս տուժեցան և զսասեցան 'ի յրեանի և յարտաքին խորամանկ թշնամիաց : Աղէ՛ , ածէ՛.ք զմոտու , յորժամ 'ի պարզ ընկերականութիւն ազդիս խարդախս և խորամանկ անձին.ք մուտքատանեն , ոչ ապաքէն բազում ծանր զսասուց պատճառ.ք լինին , զի նման են կայծականց հրոյ , որ փոքր գոլով , յորժամ տնկանին յանտառու , այրեն տոչօրեն : Ուստի պարզասիրտ ժողովուրդ.ք մերյամենայն ժամու զգուշացին 'ի խորամանկ արանց , զորս եթէ հնարի է 'ի բաց վարել և չառնել հազորդութիւն ինչ ընդ նոսա : Ոչ ապաքէն զպատմութիւն նախնեացդ ընթերցեալ՝ տեսանես զպարզութիւն ազգիդ , անպարզութիւն և խորամանկութիւն օտարաց . հաւատարմութիւն ազգիդ , անհաւատարմութիւն օտարաց . օտարասիրութիւն մերոնց , և տաելութիւն օտարացն և զղջաս ընդ չափաղանց պարզմութիւն .քո :

2. Այս ասաց խմասունն «Ամենայն պարզամիտ օրհնեալ եղիցի 'ի ծեւառնէ» . այս՝ աղդային.ք իրեւ աննենգ և անխարդախս մանկունս 'ի մէջ ազգաց և ժողովրդոց իւրեանց պահեցեն զպարզութիւն իւրեանց : Ոչ թէ մաս.ք տղայ լինել ասեմ , այլ գիտեմ թէ հոդին միութեան և ընկերութեան ազգին է պարզութիւն և հաւատարմութիւն . զորս եթէ 'ի բաց բարձես 'ի միջոյ ազգային ընկերական մարմնոյն , միութեան և ամբողջութեան կազ

նորա խվի , և չարաշար ՚ի ծուէնս պատմովի : Յորժամ ետես Յիսուս թէ հոգին միամտութեան և պարզութեան ՚ի յաշակերտաց տեղի տալոց է , և մերձ էր ՚ի քայքայումն միտութիւն նոցա . «զի առաջին թէ ով ՚ի մէնջ մեծ լինիցի» . զգայի օրինակաւ խրառեաց զնոսա «առեալ մանուկ մի՝ կացոյց ՚ի մէջ նոցա և առէ . Եթէ ոչ դարձիիք և լինիջիք իրրեւ մանուկս զայս , ո՛չ կարէք մտանել յարքայութիւն երկնից» : Մեծամտութիւն և կասկածոտութիւն խռովեաց և ատադնապեաց զմիտս աշակերտաց . Յիսուս խոնարհութեան և պարզութեան օրինակաւ բժշկեաց զմիտս նոցա , և պահեաց զմիաբանութիւն նոցա : Աւստի և եռ հոգւովն Քրիստոսի դոչեմ . զի եթէ ոք կամիցի մեծ լինել ազգի խրում , միամտութեամբ և խոնարհութեամբ ծառայեսցէ ամենեցուն . ամենեքեամն միամտութեամբ ծառայեսցեն ինքեամն . Ժրութեամբ սպասարուեսցէ ամենեցուն . զի նոքա իրրեւ ժիր և արթուն ծառայ ծառայեսցեն ինքեամն :

3. Յորժամ ազգային , քաղաքական , անտեսական , ուսումնական , և այլ շահաւետ ընկերութիւնս հաստատել կամիս , դէտակն լինջիր առնուլ ՚ի նոսա արս հաւատարիմն , իմաստանս . իսկ եթէ շահասէր և անխորհուրդ անձինս անխստիր ժողովեսցես , հիմն ընկերութեանդ ոչ եղեր ՚ի վերայ վիմի , այլ ՚ի վերայ աւազոյ , որ ՚ի թեթեւ հողմոց նոցա վաղլազակի կործանի : Հայք զյատկութիւն խրեանց մի իրրեւ զքօղ ընդ զլսով արկեալ զուրկ դացին ՚ի շընահայեաց լինելց . այլ զայն իրրեւ հեռաաես դիտակ ընդ աշո եգեալ՝ հայեսցին յազդու հեռաւօրս .

և ծանիցեն թէ զինչ է յատկութիւն բնութեան  
նոցա : Օտարազգիք պարզ և հաւատարիմ չեղեն  
առ մեզ, այլ միշտ անպարզ և անհաւատարիմ Նախ-  
նիք մեր չհետազոտեալ զրջակայ ազդաց զներքին  
և զարտաքին յատկութիւնսն, բաղում անդամ մե-  
ծապէս մեսացան, զի թէ նախարարք մեր յառաջ  
քան զմեծ պատերազմն 'ի վերայ հասանէին, թէ  
պարսիկք միշտ խարօշ, միշտ խորամանկ, և միշտ  
անհաւատարիմ էին առ Հայս . պարզ միամտու-  
թեամբ ոչ զազվաղէին 'ի կոչն Յազկերտի. զի գրէ  
Եղիշէ, թէ «Յառաջադոյն դիսացեալ զմիտու բռնա-  
ւորին», բայց յետ գիտելոյ առ խորամանկն դիմել  
կրկին պարզմութեան էր գործ, և ոչ իմաստու-  
թեան . զի իրեւ այր խորապէտ որաբու էին ցրել  
զամենայն խորհուրդս չարութեան նորա, մինչ էին  
յաշխարհին իւրեանց միաբան, զի անդ գեռ զներ-  
քին միութիւն և զօրութիւն յիւրեանս ունեին :  
Զմիտու ուրացութեան վասակայ Աիւնեաց իշխանին  
դիտէին, բայց երիցս զմեսակարն հաւատոյ և  
հայրենեաց 'ի ձեռս բերեալ վոխան պատուհա-  
սելոյ՝ պարզմութեամբ իրեւ ներելով արձակեցին.  
որ ոչ ներելոյ, և ոչ արեւ տեսանելոյ էր արժանի:  
Եղիշէ «Իսկ նոտ նեղեա և հոտորեալ բէուեն զնենիս-  
նիւն ինդաստրունեան նորա, և նէ իսրենունեանը դառնաց  
անդրէն 'ի հին հոլորունիւն . ունին փոյի առնեին յեռն արիա-  
նել 'ի նու ըստ ուսուն յանցոնց :

4. Հայք բազմիցս սուտ երգմանց, կեղծ և խո-  
րամանկ խարէութեանց սոտիկանաց Արարացւոց  
դիորձն առնեալ, անզգոյշ պարզմութեամբ կրկին  
անկանէին 'ի ծուղականոցա : Բուզայ սոտիկան առ-

Նու Հրաման յԱմիրապետէն , զպատուական նախարարս Հայաստան աշխարհի բնաջնջ բառնալ 'ի միջյ . Աշոտ Արծրունի իրրեւ քաջ կենցաղագէտ իրազեկի ինինի չարամութեան ստիկանին , որ 'ի վերին երեսս կեղծաւորեալ առ ինքն կոչէր զԱշոտ և երդմամբ խոստանայր չառնել նման չար ինչ , բայց քաջակորունն Աշոտ որ մոտիկին էր արեամբ չափ ճակատել ընդդէմզօրաց ստիկանին , 'ի յանմիտ նախարարաց իւրոց և 'ի խորհրդակորոյս խորհրդականաց իւրոց բռնադատի իրրեւ պարզմիտ դիմել առ ստիկան , յորժամ այսպէս յակամայիցա բռնադատեցաւ երթալ . Բուզայի ստեալ դաշին իւրոյ՝ կալեալ կտալէ զԱշոտ և ընդ այլ նախարարս առաքէ 'ի Սամառայ՝ առ Ամիրապետն : Սակայն առաւել անմոռութեամբ զառածեալ դուրդէն եղրայր Աշոտի՝ ինքնին երթայ առ ստիկան , զի զիշանութիւն եղրօր իւրոյ 'ի ձեռոս բերցէ . որպէս թէ չէր նորա երբէք լուեալ և տեսեալ զանցս եղրօր և նախարարացն : Խակ Բուզայի պատիր սիրով ընկալեալ զնա , ապա 'ի դիմաց Ամիրապետին նամակ միցուցանէ նմա , որով իբրու թէ կոչէր զնա առ ինքն , կալեալ կապեաց և զնա : Ահա այսպէս յանմոռութենէ նախարարաց մասնեցաւ Աշոտ , իսկ յանմոռութենէ իւրմէ ինքն Գուրդէն : Այսպիսի ստութեամբ և խորամանկութեամբ ստիկանք զազատս և զազատորդիս աշխարհի մերոյ կալեալ զոմնաս աքսորեցին , զոմնաս սպանին , և զոմնա 'ի հաւատոյն հանին , որպէս յայտ է 'ի պատմութենէ Յովհաննու . կաթուզիկոսի :

Տ. Զի՞նչ ասացից զնենդութենէ , և զիարէու-

թենէ Յունաց, որք գոլով քրիստոնեայ, ուռա երդ-  
 մամբ և խոստմամբ կոչեցին զԴադիկ ՚ի է. Պօլիս,  
 և բունի հանին ՚ի ձեռաց նորա զթագաւորութիւն  
 և զմայրաքաղաքն Անի . ո՞հ, զի թէպէտ զադիկ իւ-  
 րով հեռատես խմասութեամբ, յաւուրս քառասուն  
 ընդդէմ եկաց խորհրդոյ անմիտ նախարարաց չդի-  
 մել առ Յոյնս : Բայց քսու և դաւաճան վեստ Սար-  
 դիս հանդերձ անխորհուրդ նախարարօք երդուեալ  
 հաւատարիմ մնալ թագաւորին և աշխարհին իւր-  
 եանց, հարկեցուցին զԴադիկ երթալ, բայց ապա  
 դրժեալ ուխտի իւրեանց զԽ բանալիս Անուոյ ՚ի  
 ձեռն վեստին յղեցին առ Կայսրն ։ Զնենդս, զոր  
 շրջակայ ազգ ք ընդ ժամանակս ժամնակս ներդե-  
 ցին մեղ և մնասեցին, չկարեմ մի ըստ միովէ ՚ի թիւ  
 և գիր արկանել: Արդ ՚ի պատերազմիլն Արայի ընդ  
 զօրս Շամիրամայ, վիրաւորեալ Արայի մեռանի ՚ի  
 պատերազմին, Հայք պատրաստին առնուլ զվրէժ  
 սիրելի նահապետին իւրեանց ՚ի տիկնովէն . բայց  
 սա խորամնկութեամբ պատրեալ զսլարզամիսա  
 Հայոց, յեսս ընկրիէ ՚ի պատերազմելոյ և ինքեան  
 հնազանդեցուցանէ: Խոր . օխոկ ՚ի գրգռել միւ-  
 սանդամ զօրացն Հայոց ՚ի մարտ պատերազմի ընդ  
 տիկնովն Շամիրամայ՝ քինախնդիր լինել մահուան  
 Արայի, առէ . Հրամայեցի աստոծոցն իւնաց լեզուլ  
 զվէրս նորա և կենդանացուցի . . . . . և այսպէս  
 համբաւեալ զնմանէ ՚ի վերայ երկրիս Հայոց . և  
 հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ  
 զխազմն: Զայս ամենայն գիտացեալ պարտէ յիշել  
 զբան Յիսուսի, «Եղերուք միամիտ իրրեւ Զադաւնի-  
 և խորագէտ իրրեւ զօձա» . այսինքն միամիտ առ

աղջոյինս և առ ընտանիս . իսկ խորագէտ առ  
ստարադդիս և առ հեռաւորս :

6. Ի պատմութենէ և 'ի փորձոյ զիտեմք զհիւ-  
րասէր և զօտարասէր յատկութիւն ազդիս . ընդ-  
որս զարմանալ պարտին հանուր ազդք երկրի .  
Հրէոյք . որ 'ի ժամանակս միջնոյն ծիգրանի 'ի ձեռն  
Աշտոնեաց Պարզավրան զօրապետի իրրեւ գերի  
եկին 'ի հայս , ընդունելութիւն մեծ գտեալ 'ի հայ-  
կազն և յԱրշակունի պետաց մերոց՝ կարգեցան 'ի  
մեծ նախարարութիւն . և ապա յետ Արշակունեաց  
իրրեւ թագաւոր տիրեցին 'ի վերայ Հայաստանի  
յամա 160 : Վազարշակ եկեալ 'ի Պարթեւայ՝ թա-  
գաւորէ 'ի վերայ Հայոց և ընդունելութիւն մեծ  
գտեալ 34 պարթեւազն թագաւորոք տիրեաց Հա-  
յոց յամա 580 , մինչեւ յԱրտաշիր վերջին : Մամ-  
դուն ճենազն եկեալ 'ի ճենաց յարեցաւ 'ի մեծն  
Տրդատ , և գործ հաւասարմութեան յուցեալ կար-  
գեցաւ 'ի մեծ նախարարութիւն Մամիկոնեան +  
Ագրամելքք և Սանասար որդիք Սենեքրիմայ  
արքային Ասորոց խօս տուեալ 'ի Հայս՝ ապաւինե-  
ցան 'ի Պարոյր պսակաւորն մեր . որ մարդասիրու-  
թեամբ ընկալեալ զնոսա կարգեաց 'ի մեծ նախա-  
րարութիւն աշխարհին Վասպուրականի , և Սասնոյ  
Ծոտ այսմ Մանդակունիք , Դմունիք և ոյլ բազումք  
'ի հեռաստանէ և յօտար ազդաց գալով 'ի Հայս  
'ի մէնջ պատուեցան , մեծացան և փառաւորեցան :  
Ահա այսոքիկ են յատկութիւնք հիւրասէր և օտա-  
րասէր ազդիս մերոյ , և այսպէս վարեցաք և վա-  
րեմք մինչեւ յայսօր : Յորժամ զմտառ ածեմք թէ  
Հայաստան եղեւ բուն բնակարան առաջին նահա-

պետաց , որոց մայր խանձարուր և օղբան եղեւ  
Հայաստան , յորմէ ամենայն ազգք երկրի ելին և  
յրուեցան ընդ ամենայն աշխարհ , սա յորժամ տե-  
սեալ թէ յի քենէ հեռացեալ որդիք գան , ՚ի  
գիրկո ընկալեալ սնուցանէ զնոսա իրրեւ որդեսէր  
մայր , զի տակաւին չերեւեցաւ յաշխարհի ազգ օ-  
տարասէր քան դջայս , որ չարկանէ խտիր ՚ի մէջ  
բուն բնակչաց , և օտար եկաւորաց :

7. Նահապետական հիւրափրութիւն և օտա-  
րասիրութիւն մեր գոդ թէ բաղմիցս ազետարեք  
եղեւ հայրենեաց . զի անդութք և վայրենիք ոմանք  
եկեալ յաշխարհ մեր՝ իրրեւ ընիկ ընկալեալ մեծա-  
րեցան . բայց յետոյ եղեն դահիճք Հայրենեաց , Անակ  
թելադրեալ յԱրտաշրէ Սասանեան դայ ՚ի Հայս  
հատուածի պատճառաւ . և իրրեւ ազգակից Ար-  
շակունեաց ընկալեալ լինի ՚ի մէծէն խորովայ , բայց  
ընդդէմ օտարասիրութեան իրրեւ դաւաճան սպա-  
նանէ զքաջայազմ արքայն մեր : Բայց է ուրեք , զի  
հիւրափրութիւն բարեաց պատճառ եղեւ հայրեն-  
եաց մերոց . որսկէս դենչապուհ հազարապետն  
Յաղկերտի յիշեցուցաներ սրբոց Գեւոնդեանց թէ  
«իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում ,  
վասնորոյ գութ և ոէր ոնիմ ընդ աշխարհն ձեր»:  
Ստուգիւ Հայք հիւրասէր բարոյիւք իւրեանց բա-  
զում անդամ ՚ի ոլէսպէս վասնդաց զերծան , զի  
իմ յածեալ ընդ բազում դաւաւս Հոյտաստանի ,  
տեսի զեղբարս մեր , որք լիաձեռն սեղան դնելով  
առաջի խատասիրտ բարբարոսաց , զիստասրտու-  
թիւն նոցա ՚ի մեղմութիւն և զլժնեայ բարս նոցա  
՚ի մարդասիրութիւն յեղաշրջեցին . ո՞հ զիւղական

Ժողովուրդն Հայաստանի. որ երկրագործ է, որ զցուրենի հացն առաջի հիւրոց և օտարացն դնէ . ինքն դարեղէն նկանակաւ շատանայ, դժորափիկն առաջի եկեղոցն դնէ և ինքն յամաք հացիւն գոհանայ . աւազ ինքն վաստակէ և օտարք ՚ի վաստակս նորամունեն : Են և գտանին խատախիրտ բարբարոսք որ զամենայն բարիտ տեսեալ գարձեալ ոչ զիջանին . այլ իրեւ վայրենի և կատաղի գաղան յարձակին ՚ի մերայ հիւրասէր և օտարասէր ժողովրոց, յափշտակեն, յաւարի առնեն, զողջախոհութիւն նոցա բռնի արատաւորեն, գերին և սպանանեն . այսպիսիք են ՚ի Մարաց և ՚ի Պարսից, որք յուղեալք և խրախուսեալք ՚ի յընթերցողաց իւրեանց, որք խրատ տան նոցա և ասեն . ամենայն ինչք, ստացուածք և կեանք նոցա ձեղ տուեալ է Աստուած ՚ի կերակուր . և եթէ ոչ զրկեք, նեղէք և սպանանէք վնոսա, ոչ կարէք մտանել յարքայութիւնն . զոր խոստացաւ ձեղ մարդ արէն ծեր . . . և այսպէս փոխանակ բարեաց շար հատուցանեն մեղ . . . :

8. Աբրահամ Հայր Երրայեցւոց ազգին ասի լինել հիւրասէր և օտարասէր, բայց ՚ի Հրէայս ոչ տեսանի բարք ինչ օտարասիրութեան, զի և Մովսէս պատուիրէր ընդունել օտարազդի զեկոն, որք ընդունին զօրէնս Աստուածոյ իւրեանց, բայց զի՞ն զի Եսայի աղաղակելով կամի չափ դնել օտարասիրութեան Հրէից ասելով ՚ըուռն հար Յակոբ մի տար զիառս քո այլում և մի զօդուտ քո աղդի օտարօտուոյց: Բայց եթէ ծնանէր մարդարէն ՚ի Հայաստան և ոչ ՚ի Հրէաստան, և տեսանէր զչափա-

զանց օտարասիրութիւն Հայոց , արդեօք որչափ  
բարձրանայն աշաղսկեր և ասէր , որդիք Յաքեթի ,  
որդիք Հայկայ բուռն հարէք , զդուշ լեռուք , մի  
տայք զիառս ձեր այլում և մի զօդուտ ձեր աղեթի  
օտարությ : Արդարեւ բազում անդամ զիառս և  
զօդուտն մեր մեք մեզէն թողաք օտարաց . և մեք  
առանց փառաց և օգտի մնացաք :

9. Բայց զի՞ է , զի մեք որ այսչափ զօաարս  
սիրեցաք , բազում անդամ տեսանեմք , զի զսուն  
ընտանիու մեր ատեմք , և արհամարհեմք : Խոր ,  
թէ ՚ի ժամանակ մեծին Ներախի , և յւ հիւրք ան-  
ծանօթք ոչ ընդունէին , և օտարք ոչ ժողովէին»  
այն է աղդային անծանօթք և օտարք : Ասողիկ  
պատմիչն ասէ ընալիչք Անի քաղաքին ծաղր և  
ծանակ արարին զ՞ովհաննէս վարդապետն Երզըն-  
կացի , զայրն առաքինի և հանճարաւորն : Ուստի  
մուտ գործեաց ՚ի մեղ . զի եթէ մեք այնչափ օտա-  
րասէր եղաք , ո՞չ ապաքէն պարտ էր մեղ բիւրից  
առաւել ընտանեսէր և ազգասէր լինել . ընդէր զհա-  
կառակօքն վարիմք , ո՞չ ահա քաղաքային զդիւզա-  
յին արհամարհէ իրեւ տղէտ և ռամիկ , իսկ զիւ-  
զացին արհամարհէ գքաղաքացին իրրեւ թուլամորթ  
և կնամարդի : Աւա՛զ՝ ընտանի ատելութիւնս այս  
՚ի կարի հին ժամանակաց արմատացեալ տեսանի ՚ի  
մեղ , զոր վաղարշակ փութաց ՚ի միջոյ ՚ի բաց բառ-  
նալ . զի գրէ խորենացին . «Հրաման տայ քաղա-  
քացեաց մարդկան արդոյ և պատուական լինել  
քան զդեղջկաց , և գեղջկաց պատուել գքաղաքա-  
ցիս որպէս զիշխանս , և քաղաքացեաց մի կարի  
առ գեղջկօքն պերճանալ , այլ եղբայրաբար վարիկ .

վասն բարեկարգութեան և ամնախանձու կենաց,  
որք են շինութեան խաղաղութեան և կենաց պատ-  
ճառք . և որ ինչ նման այսոցիկ : Յաւալի է ինձ  
ասել թէ հակառակ օտարասիրութեան դեռ . ՚ի  
բազում տեղիս հետք ընտանի ատելութեանս տի-  
րեն , որով իրեւ օտարական զմիմեանս ատեմք  
զօրհանապազ . զի եթէ պատահեցի քաղաքացոյ  
կամ գիւղացւոյ ուրուք ելանել ՚ի հայրենի աշխար-  
հէն և անկանել պանդխտութեամբ ՚ի Տփիսիս քա-  
ղաքն վրաստանի , Հայագիկի բնակիչք տեղայն փո-  
խանակ սիրելոյ և պատուելոյ զօտարական հայն,  
ատեն և արհամարհեն , ծաղը ծանակ առնելով  
գոչեն կա՛ կա՛ : Այսպէս բնակիչք Պօրայ դեկեալ  
օտարական եղբարսն անարդեն և անգոսեն , Եղու  
ինու կոչելով . զսոյն ախտո ատելութեան ախտա-  
նան բաղումք ՚ի քաղաքացեացն Հայաստանի , զի  
զգիւղացիս իւրեանց անպատուեն զկծեցոցիչ բա-  
նիւք , որովք յարաժամ անուցանեն ատելութիւնս  
ընդդէմ միմեանց : Արդ եթէ զօտարազգիս ծաղը  
առնէաք , չկարէաք թերեւո արդարանալ . ապա  
յորժամ զմիմեանս զրկեմք և արհամարհեմք , զի-  
ա՞րդ կարացուք արդարանալ առաջի մարդկան  
և Աստուծոյ , որ միայն զիրոյ պատուիրան եղ մեզ  
առաջի , և զատելութիւն վտարանդի արար :

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Բ .

Զիբք

4. Մէն մի ազգային պարտի դիտել և հետազօ-  
տել զներքին և զարտաքին բնատուք ձիրս համազ-  
գեացն , թէ՝ քանի՞ շնորհք և որպիսի յաջողութիւնք

առւեալ են նմա 'ի վերուստ . իրբեւ գիտող գաղա-  
նեաց մտանել 'ի խորս սրտից ազգայնոյն՝ հայել  
'ի սրամութիւն ուշոյ նորա և իմանալ զորքանու-  
թիւն հանճարոյ նորա և զգորովութիւն սրտի նորա  
Ազաքէն եթէ Հայն դիտացէ մշակել զինատուր  
ծիրս իւր՝ գերիվերոյ անցանէ քան զրազումիմա-  
տունս այլոց ազգաց . եթէ 'ի պատշաճ ժամանակի  
'ի կիր արկցէ զսրամութիւն իւր , 'ի զարմանս  
ածէ զմիտս իմաստնոց աշխարհի , և եթէ յաջողես-  
ցի զգործս ձեռաց իւրոց 'ի հրապարակ հանել ,  
ճարտարք ամենայն երկրի Շվամանսոյ երգեսցեն  
նմա :

2. ԶՀայն եթէ առաքես 'ի համալսարանս ի-  
մաստնոց , անոտի թագաւոր ճարտասանութեան  
ելանէ , և զկանառս իմաստնոց զարմացոյցնէ :  
Ենարիոս պատմիչ 'ի վարս փիլիսոփայից գրեաց թէ  
այր մի ծնեալ 'ի խորին Հայս , այն է 'ի մեծն Հայաս-  
տան՝ անուն Բռօկերէսխաս . որ կարգեցաւ գասատու  
ճարտասանութեան Աթենացւոց քաղաքին , և այն  
չափ հոչչակաւոր եղեւ այրն , մինչդի 'ի Հռովմիկանդ-  
նեցին նմա արձան , և ճարտասանութեան թագաւ-  
որ անուանելով՝ հռչակեցին զանուն նորա : Սոյն  
Պրոյերեսփոս կամ Պարոյը Հայկազն եղեւ վարժա-  
պետ Գրիգորի Աստուածաբանի , և բաղում ճար-  
տասանից և իմաստնոց :

3. ԶՀայն եթէ 'ի ճեմարանս մակացութեան  
առաքես , անոտի ելանէ իրբեւ զԴաւիթ անյաղթն՝  
որ սրամիտ ուշիմութեամբ վիճաբանեալ ընդ բա-  
զում բանասէր Յունայ՝ յաղթահարեր զնոսա և իր-  
բեւ անյաղթ փիլիսոփայ հռչակիւր 'ի նոցանէ :

կ. ԶՀայն եթէ ՚ի քաղաքագիտութեան զար-  
ժոցի վարժեսցես և կամ եթէ քաղաքական դէպ.ք  
օգնեսցեն ճարպիկութեան նորա , յանկարհ թադ-  
կապեալ ՚ի հրատարակ ելանէ , և գաւաղան ՚ի ձե-  
ռին զկայսերութիւն այլոց ազդաց կառավարէ .  
որպէս է տեսանել ՚ի պատմութիւն Այօրիկ կայսեր  
Յունաց , որ էը ազդաւ Հայ . և անուն նորա վար-  
դան : Նոյնպէս Մժէժ Գնունին . Արդաւազդ Հայ  
փեսայ Լեւոնի խուրացւոյ . Վարդան , Արշաւիր .  
Լեւոն Ե. Հայկազն , և գահակից նորին Ամբատ օր-  
դին կոստանդնի . Լեւոն Զ. իմաստասէր որդի  
վասի : Աղէքսանդր՝ Եղբայր Լեւոնի վեցերրորդի ,  
կոստանդին Պերփեռութէն որդին Լեւոնի . Վաշ-  
տակեան Ռամանոս Ա. Հայազդի՝ Աներ Պերփե-  
ռուժայ . Յովհաննէս Ա. Ջմշիկ , որ և կիւժան Հայ-  
կազն : Առքա ամենեքեան ՚ի զարմէն Հայկայ ուշի-  
մութեամբ քաղաքագիտութեամբ և քաջութեամբ  
յառաջ անցեալ քամն զբաղում՝ քաղաքագէտս այ-  
լոց ազդաց , զթագ կայսերութեան ՚ի դլուխ եղ-  
եալ իշխանցին ՚ի վերայ ամրոխից մարդկան , և բա-  
զում գործս երեւելիս ցուցին աշխարհի . Թողում  
աստանօր յիշատակել զանուն երեւելի պատրկաց ,  
իշխանաց և զօրագլխաց , որք դորով ուշիմ , հան-  
ճարեղ և յաջողակ ՚ի գործս պատերազմի , կար-  
դեցան ՚ի կայսերաց Յունաց ՚ի պատրկութիւն , յիշ-  
խանութիւն և ՚ի զօրասկետութիւն , և բնական  
ձրիւքն այնչափ փայլեցան ՚ի փայրս հեռաւորս և  
յաղինս օտարս . մինչդի անուն իմաստութեան՝ քա-  
ջութեան թողին ՚ի պատմութիւնս նոցա :

Ծ. ԶՀայն եթէ կրթեսցես ՚ի դինուորական մարդա ,

Քաջանայ՝ ի յասպարիզի քան զԱրիւլէս ։ Որպէս  
Տրդատ՝ ի Հռովմերեւելի լինէր, յարիական մրցման  
զի ունէր զբնաձիր կորով արութեան, և ի տղա-  
յութենէ մղէր զանձն ՚ի գործս քաջութեան ։ ու-  
ստ յաջողակ շարժել զզէնս ։ կորովութեամբ ՚ի ձի  
աշտանակել և վարել ։ ՚ի դժուարին իրա զինքն ա-  
խոյեան կանգնել ։ և յՈլոնալիական խաղոն՝ ՚ի ճա-  
կատս մրցման և պատերազմաց այնչափ յառաջա-  
դէմ դտաւ, մինչզի գերիվերոյ անցաւ քան զհամ-  
բաւ Հերքիւլեայ ։ Բատ այս ՚ի ներկայ դարս քա-  
ջութեամբ փայլեցան Հայկազն զօրապետք ՚ի պե-  
տութեան Ռուսաց ։ Գրիգոր Մատութեան (Մա-  
տոթով) վեց հազար զօրօք յաղթեաց 400,000 զօ-  
րացն Պարսից ՚ի գաշտին կամնճայու ։ Մովսէս Ար-  
դութեանց երկանարազուկ ահեղ քաջութեամբ  
յաղթեաց զլեռնական Զէրքէղ ժողովուրդն ընդ-  
իշխանութեամբ մեծին Ռուսաց ։ Բարսեղ Պէհպո-  
թեանց ՚ի պատերազմին արեւելեան ռակաւ զօրօք  
յաղթեաց զօրացն Հագարացւոց և էառ գրազաքն  
կարս ։ Նախ քան զան 150 քաջացաւ Դաւիթ Սիւն-  
եաց իշխան, Միխիթար զօրապետ սորա և աէր Աւե-  
տիք, որք ՚ի սէր Հայրենեաց ընդդէմ ահեղ զօրու-  
թեան թինամեաց պատերազմեցան ։ Մի՛ մոռա-  
նար ընթեռնուլլ քաջութիւն Հայրենասէր Աղասւոյն  
որ առանց զննուորական կը ժութեան եզեւ վերջին  
դիւցազն Հայաստանի ։

6. Հայն ունի վայելուչ գեղ կերպարանաց, նման  
է Արայի նահապետին, իրեւ պայազատ իշխան  
և նախարար վեհանձն է և ազնուակերպ, թիսա-  
հեր սեւ աչուի և խայտակն ։ Հայն յաղթաբազուկ

է և երկայնահասակ, որպէս էին Հայկ, Գեղամ, Տիգրան Երուանդեան, Երուանդ Արշակունին, Տըրուդատ և այլք բազումք, Որպէս է տեսանել այժմ՝ ի բնակիչը Արարատայ, Վասպուրականի, Տարօնոյ, բարձր Հայոց և Սեբաստիոյ։ Հայն ունի բնական ոյժ և կորով մարմնոյ, որպէս է տեսանել այժմ՝ ի գիւղական բնակիչը Հայաստանի։ որք ունին աշուր կազմուածս մարմնոյ, են պնդաճիզս և ամիսուսկրս։ որք առանց մարդից և կրթանաց՝ ի լըմբամարտս զգետնեն զիլիրթ ըմբիչս այլոց ազդաց։

7. Հայն ՚ի կերակուրս և յըմկելիս ոչ անցանէ ըստ չափ։ (և ոչ անցանելն նորա է նմա ներելի) զի որպէս երգեին հինք մեր վասն Երուանդեան Տիգրանայ, զնոյն է տեսանել այժմ՝ ի բազումք որդիս Հայկայ։ Խոր. «Խարտեաչս այս և աղերեկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան, Երեսօք գունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէան, առողջաբարձն և գեղեցկուսն, պարկեցան ՚ի կերակուրս և յըմկելիս և ՚ի խրախնանութիւնս օրինաւոր . . . ՚ի ցանկութիւնս մարմնոյն չափաւոր։ մեծիմաստն և պերճաբան, և յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի . . . . «Բայց զովեմ զքաջահատակն զիմ և զնիզսկաւորն և զամենեւին բոլոր անդամնվք համեմատն և ՚ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի, քանզի առոյդ ամենայնիւ ըստ իրեարս պատշաճեալ, և ուժով ոչ զոք իւր ունելով զոյդ։ ի նկարադիր պատկերէ ասափ ՚ի միտ առցէ հայրենասէրն, թէ՝ որպիսի՛ և որչա՛փ ներքին և արտաքին ձրիւք զարդարեաց Աստուած դորդիս Հայկայ։

8. Բնական ու շիմութիւն և հանճար Հայոց է տեսանել՝ ի ճարտարապետութիւն հին շինուածոց հոյակապ եկեղեցեաց, տաճարաց, կամարաց, դմբեթից, կամքջաց, և ՚ի գեղարուեասս և ՚ի քանդակա, որովք զմիսս Եւրոպացի ճանապարհորդաց ՚ի զարմանս ածեն։ Ցըդատ ճարտարապետ հրամանաւ Աշոտի ողորմածի շինեաց գկաթուղիկէն Անոյ ընդայլ եկեղեցիս նոյնոյ քաղաքին։ մինչեւ ցայսօր ՚ի կանգուն տեսանեմք զհաղարամեան շինուած ճարտարին։ Ա, Սոմիի. (այն է այասօֆի), ՚ի շարժէ վտանգեալ անհնար եղեւ։ Նորոգել այլոց ճարտարաց, Ռւսոտի կոչեցին զջրդատ՝ որ եկեալ այնպիսի իմաստութեամբ նորոգեայ զնեզքուածս որմացն, ընդ որս զարմացան ճարտարապետք արեւմուեան աշխարհին։ Իսկ այժմ՝ ՚ի ներկայ դարս Պալեան կարապետ ճարտարապետ հանգերձ նիկողայս ճարտարապետ որդուակն ՚ի թագաւորական շինուածս եցոյց զբաղում հանճար և իմաստութիւն ճարտարութեան, որոց գործք ճարտարութեան այժմ առաջի աշաց տեսանին, և յաւէտ քան զսոսս անցին զանցին պերճաշուրք Յակոբ և Սարդիս պէջը ՚ի ճարտարապետութիւնս, որը յեւ շինելոց զայլ և այլ հոյակապ շինուածս արքունի։ ՚ի չորս ամաց հետէ ՚ի հիմանց սկսան նորոգել (զչրայ եալի) կոչեցեալ ապարանն, ընդ որս զարմանան թագաւորք և ճարտարապետք Եւրոպացւոց աշխարհին։

9. Հայն ՚ի յԱստղիկ դատերէն Նոյի եղեւ յաջողակ ՚ի բժշկական արուեստս, զի աւանդեն պատմիչք թէ Սոտղիկ եղեւ առաջին դտիչ բժշկութեան։ որ ՚ի Հայտատան աշխարհի նախ սկիզբն արար ու-

տուցանել զարուեստս իւր : Աւասի Արտաշէս թ. Կ պատիւ բժշկապետաթեան առ բադին Աստղկան պարտէզ բուսոց գեղօրէից տնկեալ՝ պատուէ զար- աւեատ բժշկութեան : Զթիւրոկէ դեղթափն դտա- նէ Արհոգատ : զի ունէք մատեան բժշկութեան , և հմուտ էր արհեստին : Զդիւտ պատուաստի ծաղ- կին դտին բժշկք Հայաստանի , որ դանհամար մատադ մանկաւնո սեռի մարդկութեանո փրկեաց ՚ի մահուանէ և պահեաց ՚ի տպեզաթենէ : Աստ գովեցից զպաւաւ կանայս Հայաստանի : որք ար- ժանի գոտերք մօրն Աստղկան՝ առանց մատենի և տուսուցի հմուտ ևն բնական և բուսական դեղօ- քէից , որք գոյուի անարծաթ բժիշկ՝ յորդւոց յուրդի յաջորդաբար աւանդեն զբնաձիր արուեստս իւր- եանց . և են ՚ի նոցանէ , որք զանբուժելի ախաս բազմաց պատզ դեղօրէիւք , արմատովք , բուսովք և ծաղկօք բժշկեն , և զլարձու աշխատութեանն ոչ խնդրեն : Լեբինք հովիսաք և դաշտք Հայաստանի յի են և պատարան պատամերժ արմատովք և ծաղ- կօք , արք և կանայք ՚ի գիպուտծոց ՚ի պատահաբաց ինչ և ՚ի փորձառութեանց զգօնացեալք՝ ուշագիր լինին ՚ի յարմատս , և փոքր ՚ի շատէ տեղեկանան առողջարանական մկրասնց : ի ժամանակս մեր ընա- կան ձիրք Հայոց առաւել պայծառ միոյլեցաւ ՚ի բժշկական արուեստս . զի որդիք մօրն Աստղկան ՚ի զմերմանիս , ՚ի Գաղղիա , Ալմերիդա , Աւալիա , ՚ի Պոլիս , և ՚ի Ուունիա վարժեցան ՚ի յարուեստս բժշկութեան և գերիվերոց անցան քան զբազում համբաւառոք բժիշկս կւրոպացոց աշխարհին :

10. Հայք ընական ձրիւք իւրեանց սիրեն զվա-

ճառականութիւն, և հակամէտ են ՚ի սեղանաւորութիւն : Ի հնումն վաճառականք Հայոց ընդ ծովս ընդ դետու և ընդ ցամաքու երկրի առնէին վաճառականութիւն . ՚ի յԱրեւլու կոյժ՝ ՚ի Հինդս, ՚ի Պարս, ՚ի Բ սբելուն : Ի յԱրեւմուտու կոյս՝ ՚ի Յունաստան, և ՚ի յԵգիպտոսու Եւ ՚ի Հարաւ կոյս՝ ՚ի ՅԱսորիս և ՚ի Պաղեստին տանէին և բերէին զվաճառու : Աւոտի ոչ միայն ՚ի վէպս մեր, այլեւ ՚ի վէպս հին աղդաց գովեցան և հոչակեցան գործք և հանճար ճարտար վաճառականաց մերոց . որպէս ՚ի փորձ յայժմեան վաճառականաց մերոց խակ տեսանի, զի վաճառականք Պօլոց և Զ Իւռնոց երթան մինչ ՚ի յԱմերիկա, ՚ի Լոնտրա, ՚ի Փարիզ, Վանասպատիանք Ցիսիսոյ, Աֆոնիքսանի, և Ճուզայի երթան ՚ի Գերմանիա ՚ի Մոսքուա, ՚ի յՇերոպտ, խակ վաճառականք բուն Հայաստանի դնան ՚ի Պալս ՚ի Գամասկոս ՚ի Դափէժք . քաղաքն վաճառել և դնել Եւ զիյոց ոխո՛է թէ ամենայն քաշաքայն Հայաստանի տուր և առ ՚ի ձեռու Հայ վաճառականաց են, զարտ զգուշացուցանեմ շինել զնոս խրեանց ՚ի վաշխոս անիրառու, մանաւանդ զսեղանաւորս, որոց դործ է միշտ տոկոսիք շահել զբրամք . արդ բարի է նոյա թողուլ զայս և զհետ լինել արդոր վաճառականութեան :

11. Հայն ունելով զլեզուն Ադամոյ գիւրաւ տասնի զլեզուս բազում աղդաց, և լինի յաջողակ թարգման . որպէս տեսանի այժմ, զի ՚ի դրսնա զեսպանաց հզօր պետութեանց, զլիսաւոր թարգմանք ՚ի զարմէն Հայոց են :

12. Հայն ոնի և այլ բազում ներքին և արտաքին գովելի ձիրս, և զիք գիտութիւն և ար-

ուեստ ՚ի վերայ երկրի , յորում ձեռնամուխ լեռալ  
Հայոցուոյն ձեռնունայն արտաքս ելանիցէ . այլ  
յամենայնի գտաւ և դատանիցի միշտ ընդունակ յո-  
ջողակ և յաւալայէմ . վասնորոյ Հոյն մեծի սիրե-  
լութեան է արժանի , զի՞ հարուստ և անհամեմատ  
ունի ժիռ : Յորում տմենայն գանձք ի հաստութեան  
գիտութեան և յաջողութեան ծածեալ կան . առ  
զբրիչ գառափարութեան ՚ի ձեռին խորագոյնս  
բրելով ՚ի վեր հան զբան ձրի շնորհաց նորա , որ  
՚ի գանձարանի մուաց նորա թագուցեալ կայ , իր-  
բեւ դդպիր արքոյութեան հան ՚ի գանձարան է նո-  
րա զիկն և զնորն , առատութեամբ բաշխեա՛ կա-  
րօտեալ աղդայնոցդ , եղբարք քո ձրիւքս այսոքիւք  
վարթամասոցին և ուրախասոցին , իրբեւ որդին Յա-  
կորայ Յովսէփի իմաստութեամբ ժողովեան  
՚ի շտեմարանո Հայոց , զի՞ ՚ի սովու կերտերեսոց  
զեղբարս քո , իրբեւ Սոլոմոն բնիր զատկին Սովերոյ  
՚ի գանձարանո Հայոց . զի շինեսցին տաճարք հոգ-  
ւոյ և մարմնոյ քո : Արդ եթէ այր ոք ՚ի մէկն ու-  
նիցի զի՞ց շնորհաց , զի՞ց հանձարոյ , զի՞ց  
իմաստութեան , գիտութեան , որամութեան և  
յաջողութեան մի ծրարեսցէ ՚ի վարշամակի իւրում ,  
այլ հանցէ արտաքս և զիցէ ՚ի վերայ աշտանա-  
կի . զի տմենեքեան տեսանիյեն և վայելեսցեն .  
Յորժամ մտախոհ լինիցինք թէ գանձք բաշում կան  
թագուցեալ ՚ի յաւերայոք քաջսքաց մերոց , բայց  
եթէ զնոսա արտաքս շհանիցեմք . զի՞նչ օգուտ է  
մեղ . ՚ի ներքս երկրի բաշում շտեմարանք են ջրոց-  
քայց եթէ աշխատութեամբ զնոսա ՚ի վեր շհանի-  
ցեմք , չիք օգուտ մեղ ծարաւեացո : Անդք մեր

պարարտք են . բայց եթէ չմշակիցեմք , սովամնահ տան ջիմք :

13. Այս , այս ամենայն տուրք բարիք և պարդեւք կատարեալք ՚ի վերուստ են իշեալ տո . ՚ի Հորեն լուսոյ . և քեզ ձրի շնորհեալ ՚ Հայրենասէր , որպէս զի չունիցիս պատասխանի տալ Աստուծոյ թէ ընդ է՞ր այսպէս առանց ձրից արարեր զիս , ոչ այդպէս , զի ահա՛ պատաւական , վառաւոր , վեհանձն , ուժեղ , կորովի , գեղեցիկ , նրբամիտ , սրամիտ , ուժեղ , հանճարեղ , զգօն արար և պատրաստեաց զքեղ՝ յարգանդէ առաւել . քան զընկերս քո : Տէր զայս ամենայն ՚ի նշան մեծի սիրոյ իւրոց շնորհեաց քեզ , զի ծանիցեռ զանձն քո , սիրեացես պատուեացես և մեծարեացես զքեղ , մշակեացես և ՚ի կիր արկցես զձիրս քո : Բայց եթէ մոռաւցիս զմիծամեծօ Աստուծոյ , յանդիմանութեան ևս արժանի . զի նա առատապէս շնորհեաց քեղ , զի գումի երբէք խնայեացես շնորհել հայրենակից եղբարցըդ . ՚Զի որ ունիցի տացի և յաւելցի նման » զի եթէ տացես ՚ի ձրից քոյ եղբարցդ . յաւելցին քեզ ՚ի տայն քոմ . եթէ խնայես . բարձի ՚ի քէն՝ ՚ի սուպրադ :

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

## Ս Ա Ն Ա Ր Ա Խ Թ Ի Ւ Ն

14. Ուզգորութիւն չէ ինչ բնամին յատկութիւն կամ ձիրք առն միոյ կամ ազդի , այլ եկամուտ և պատցական . զի այր ոք ՚ի ազայութենէ , զոր ինչ ըսէ ՚ի խօսելոյ ծնազաց և շրջադայից զնոյն սովորի և ինքն խօսիլ , զոր ինչ տեսան և դորժել ծնազաց և

շրջադայից , զնոյն և մնքն սովորի գործել , եթէ զչար և եթէ զբարի : Սոյնարես ազգ մի կամ հետեւ և երդի մեծառնծաց և խմասանոց աշխարհի իւրոյ , իբրեւ զտղայ , զոր ինչ լի ՚ի նոցանէ , սովորի զնոյն խօսել , զոր ինչ տեսանէ գործել նոցա , սովորի և ինքն գործել , և եթէ ազգն քնդ իշխանութեամբ հզօր հզօր աղդացէ , ՚ի թափայ ներդորմիշ զօրութենէ նոցա երբեմն ակամայ մզի ՚ի յուրի սովորութիւնն նոցա :

2. Զիք ինչ տարակոյս թէ օգտակար և բարի սովորութիւնք միշտ ընդ առենայն տեղիս ՚ի բարեսէր մարդկանց գործեցան և գովեցան , իսկ չար սովորութիւնք ՚ի չարեաց յառաջ եկին և պարատ և եցան . զդուշացի՞ր անձին քում , և կացուսցես պահապանս ՚ի դրունս քաղաքաց քոց , զի մի յուրի և տգեզ սովորութիւնք համարձակ մռատ գործեալ ՚ի ներքու կործանեցեն ՚ի հիմանց դրնական և զբարի յատկութիւնն և զժիրս քու , զի չարն այն արագեալ զնէ զամառ իւր իբրեւ զբոնաւոր ՚ի ներքս քնաւ թեան մարդոյն և իշխու քոն բարի բնութեան աղդին այնմիկ Ռւսակ այր իւրաքանչիւր որպէս զդուշանայ անձին , Ռոյնապէս միշտ զդուշացի աղդին իւրոյ . զի մի հայրեննաւանդ բարի սովորութիւնք ՚ի մենջ արտաքս հանեալ ՚ի տեղի նորա յուրի սովորութիւնք եկեալ պաշարեցն զազդ և զժաղով վարդու մեր . զի դասնայ սովորութիւն երկրորդ բնութիւնն և տեղի գտեալ տիրէ յորդոց յորդի , յազդէ յազդ . որովէս ամէ առածն Հայաստանի . «ի չար նախնեաց՝ չար սովորութիւնն , որ իբրեւ ճարակ հրոյ և իբրեւ ոխատ փոխադրական մուեալ նախ-

'ի գերդաստանս' անտի 'ի քաղաքս' աստի 'ի գահառու , 'ի գաւառաց ճարակի 'ի բովանդակ աղջն զի եթէ չար է սովորութիւն , առնէ աւերածո բաղում , իսկ եթէ բարի է , առնէ շինութիւնս բաղումն :

3. Ամենայն գայելու և բարի սովորութեանց հետամուտ տեսանեմք զաղդս մեր 'ի բնէ անտի . իսկ վաս սովորութեանց միջու արհամարհող . ուստի ամենայն բարի սովորութիւնք նմա իբրեւ բնական 'ի բնութենէ են . իսկ չար սովորութիւնք խորիժ անքնական , և եկամուտ են : Արսէս Հայկ , նոյնակէս Հայք մինչեւ ցԱրամ նահապետ շոնէին սովորութիւն կոխել զսաւահանս օտար աղդայ , կողոպտել սպանանել զմարդիկ , և աշխարհակալել . բայց տեսեալթէ շրջակայ աղդք՝ որոց չկարացեալ սանձել դվաս սովորութիւն իւրեանց՝ յարձակին 'ի սահմանս Հոյոց , կողոպտեն , սպանանեն զմարդիկ և յաւարի առնեն զաշխարհս . նախ համբերութեամբ ջանացին համոզել զաղդս , զի մի զշար սովորութեանց զհետ զնալով նախահարձակի լիցին , բայց տեսեալթէ շիք հնար սիրով զգէմունել չար սովորութեանց նոցա . զօրաժողով եղեւ Արամ և զինու զօրութեամբ յարձակեցաւ 'ի վերայ սահմանակից աղդայ , սրով եհար ցրսեաց զզօրս նոցա , կործանեաց զրը նակալութիւն նոցա և տիրեաց 'ի վերայ քաղաքաց նոցա . և հրամայեաց , զի սովորութիւն կարցին զհայերէն խօսիլ :

4. Դիւթեւթեան և վհկութեան դաղափար հեռի էր 'ի մոտաց Հայոց . և սովորութիւն նորա բնաւին անծանօթ մինչեւ 'ի պագչուն Շամիրամ , որ ստու

թեամբ համբաւեաց թէ տաստածք իւր լեզեաը  
կենդանացուցին զյրայ. և անգնէ և նոր իմն պատ-  
կեր յանուն գիւաց, և մեծագէս զոհիւք պատուէ ու  
թայց Հայք ոչ հետեւեցան կատարիչտ սովորու-  
թեան Տիգնոջն . զի ոչ պատուեցին զոհիւք զպատ-  
կեր դիւաց. Նոյնագէս կախարդական սովորութիւն  
և գաղափար չեմուտ ՚ի Հայո մինչեւ ՚ի ժամանակո  
երաւանգեան Տիգրանայ՝ որ սովանեալ զՄար զԱժ-  
գահակ. զառաջին կին նորա զԱնուշ արկին հան-  
գերձ որդւովք և գառերովք բերեալ ընակեցոց  
՚ի յարեւելից կոյս Մասին լերին մինչեւ ՚ի սահմանս  
Գողթան . ընդ տուն Աժդահակայ եմուտ կախար-  
դուկան սովորութիւն ՚ի Հայո : Զի յետ այսորիէ  
տեսնեալ պառաւանց մերոց դչար սովորութիւն Ար-  
տաւաղդայ, առէին թէ կանայք Աժդահակայ հա-  
րեալ են զնա կախարդանոք ՚ի ցանկութիւն . Հայք  
մինչեւ ՚ի վազարշակ չունեին սովորութիւն զմեհ-  
եանս կրոց շինել և զզ իս իրեն զաստածս պաշ-  
տել, բայց սորտ եկեալ ՚ի Պարթեւաց աշխարհէն,  
երեր զիսուս, շինեաց զին հեանս, և հրապուրեաց  
զՀայս հետեւիլ չար սովորութեանն, որ իրցեւ մահ  
թագաւորեաց ՚ի վերոյ Հայոց մինչեւ . ՚ի մերն լու-  
սաւորիչ ոչ ծնեալ ՚ի նոյն պարթեւական մեզո-  
պարա աղդէն, քակեաց զմեհեանս, կործանեաց  
զկուսու , և հաղիւ հաղածական արար զկախար-  
դական սովորութիւն ՚ի միջյա Այլ հետք հմայելց  
և կախարդելոյ հասին մինչեւ ՚ի մեծն Ներսէս, ՚ի  
Սահակ և ՚ի Անորովիս . որք վաստակեցան իսպա-  
բառնալ ՚ի միջոյ զչարին չար սովորութիւն և բար-  
ձին : Այլ ՚ի մտանել և ՚ի տիրել Հադարացւոց ՚է

վերայ Հայուստանի ընդ նոսա կրկին մտին յաշխարհու  
մեր կախարդելոյ և հմայելոյ սովորութիւնք . զի  
թէպէտ Հայրապետք Եկեղեցւոյ մերոյ բազում ան-  
գամ կանոնիւք և Կողմինք խոսադայնս արդելին  
դար սովորութիւն . բայց տմոնք ի շահամոլ տղի-  
տաց դազտ գհետ եղին չար սովորութեանոյն ի յա-  
մօթ և ի նախառնուն անձանց իւրեանց ; Հարք մեր  
քան զուրացութիւն տուաւել քրէական համարեցին  
զմեղս կախարդութեան , զի ուրացեալ յոթամ  
դարձի , չհրամացեն կրկին մկրտիլ . խակ կախարդն  
յորժամ զդասցի . հրամացեն կրկին մկրտիլ :

5. Բազմաթիւութեան և կրամուզութեան հե-  
թանոսական և Հքրէական չար սովորութիւնք դար-  
ձեալ ի ժամանակէ մաստի վազարշակայ մոտին ՚ի  
Հայո : Ա. Լուսաւորիչ արդել զար սովորութիւն ,  
և Ցրդառ վերաբարու եղեւ չթողուլ ՚ի ներքք զհե-  
թանոսական սովորութիւնն . բայց ՚ի ծերութեան  
արքային համարձակեցան նախարարք առնուլ զկա-  
նայ , սրահել զհարճն : Ուստի բազում անդամ  
խրատ եւս արքայն նախարարաց . զի հեռասցին ՚ի  
հեթանոսական սովորութեանց , և ըստ կանոնի կու-  
սառուին ընթացին , այլ նոքա փոխանակ մասսաց  
և ողղելոյ դվարս իւրեանց , արրուցին նմա զգեղ  
մահու և բարձին զնայաշխարհէ , զի մի բարձցէ զար  
սովորութիւն նոցանէ : Մեծն Ներսէս բա-  
զում ջանիւ . և կանոնին հաղիւ . կարաց դդէմ տնել  
չարութեան . այլ մասսառ դաւեալ Արշակոյ սովան  
գինէլ զհօրեզքոր սրպիւ իւր , և էառ զփառանձեմ  
զկին նորա ՚ի կեռութիւն , զայնմանէ լուեալ Ներսիոր  
կատարեաց զիշակի , և զմուան եկեղեցւոյ փակեաց

ընդդիմ նորա : Զի կնաթողք, երեկնիկը, և չորս  
ճապահը արգիլեալ են փ Ա. ժողովոց, զի հակառակ  
գտանին օրինացն Քրիստոսի , և մեղամշեն ընդ-  
դիմ եկեղեցւոյ և Հայրենիաց :

Յ. Աւաղ, ահա յաւարս մեր ՚ի տեղիս տեղիս  
տեսանին անձինք անսարտոք և անօրէնք, թէ ՚ի Մա-  
րտուան, թէ ՚ի Պարսկաստան, և թէ ԵԵՐԻ առաջորդ  
թողեալ զբանկեալն, և առեւոն զանագակալս, թո-  
զու՞ զու անիմն, ութուուն զերկրորդն, կամ բնա-  
չածու սնացեալ՝ Հարճն պահեն իրեւ զեթեանոս,  
պարսէ կ կրերաց ։ Խշանաց բառնալ ՚ի միջյ զար  
սամորթիւնն, զի մի ըսդ հանուք ճարտակեոցի ՚ի յոր-  
դիս Հայկայ, Սի թէ ունանք ՚ի բնակչացն Եիւ զան-  
դիմնի չեղե՞ն առիշտ տախորթմեանցն, զի զանց  
արարեալ զեանմիւքն որ Հրամոյէր կոյս ընդ կուսի,  
և այրի ընդ այրուց, հետեւեցան օտար և չար սո-  
վորութեանց, զի առաջին և երկրորդ այրի մար-  
դիկ առին ինքեանց զերոյս ՚ի կանոյս, և եղե՞ն քոր  
գայթ ակզութեան բնակչացն Հայաստանի, որոց  
գտեալ համարձակութիւն՝ հետեւեցան չար սովորու-  
թեանն, Նախինն առաջնորդ չար սովորութեանց  
եղե՞ն և ինինն միշտ իշխունք և վարթմամք . որոք  
յուսացեալք ՚ի մեծութիւնի բնանց անցանեն յուս  
օրէնս, և բանան ինքեանց զնանապարհ բոյն և  
ընդարձակ և քարչեալ զադքասս և զատարակ  
ժողովարդս առնիւն զինի խրեանց, Ասդ եթէ ոք  
յիշխանաց ՚ի վարթմանց կամ բարքատանց ոչ սրա-  
հեցէ զօրենս և զբարի սովորութիւնն սախնեաց +  
նաշէ աստհած առեր կամ հայրենառեր . վասն զի  
հարքն մերբազում խորախորհաւրդ իմաստութեամք

Հաստատեցին ղօրէնս , զի մի՛ հրէական և հեթանոսական սովորութեանց ղհետ գնացուք , այլ սրբութեան Քրիստոնի , զի որ առէ զօրենս և դրարի սովորութիւնս հարցն , առէ զագդն , զեկեղեցին և զհայրենիս իւր և կործանէ զնոսա , որք առանց օրինաց և բաշի սովորութեանց չկարեն երբէք կալ և մայլ հաստատուն :

7. Այլ գժնդակ չար քան զամենայն սովորութիւնս եմւատ յաղդու մեր , վաշխառռութիւն և կաշառառութիւն , տարակուսում ասել թէ ՚ի յոր անաղորայն աղդէն եմւատ չար և գժնդակ ախտայս յաղդու մեր . իշխանք և փարթամք փախանակ ոնելոյ զդէմ չար սովորութեանցո , որ ՚ի Պարսից և ՚ի Հագարացոց , ինքեանք եւս հետեւեցան հետոց նոցա և յառաջադէմ եւս դտան : Ո՞հ ովզրմիմ քեզ տառապեալ և խախտեալ ժողովուրդ Հայոց ողի տոկոսիք վաշխառռուց առաւել ծանր և ահասոր են ՚ի պարանոցի քում քան զուրեն լէնկթեմուրի . մինեւ յե՛րը Աստուած ոչ երանէ քեզ յայց , մինչեւ յե՛րը ոչ աղատեցէ զքեզ ՚ի ձեռաց անդութ հայրենատեաց մարդկանց , ոչ զընտանիս և դրաչիս քու երաշխառոր , և զինչս քու ՚ի դրաւ առնունուտան զհարիւրն և յետ ամի միոյ երկու հարիւր պահանջեն , տան զհարդարն , և յետ ամի վերկուս և զինչս քու ՚ի քէն հանեն բռնութեամք : Թողեալ զհայրենիս և զընտանիս , բնակիս ընդ օտար տառեղօք , քրանաթոր աշխատութեամք տառապիս զյայդ և զյորեկ , զքիեալ ՚ի սիրելեաց և ՚ի բարեկամաց մեռանիս ՚ի հող օտար , և թաղիս իբրեւ պահուխտ ՚ի գերեզմանս օտարաց , բայց անաղորոյն

և անդութ լվաշխառուն դարձեալ ոչ ողորմի քեզ՝  
զորդիս և զբնտամնիս քո 'ի բանտ մատնէ և չար-  
շարէ . զոտն և զինչս քո 'ի վաճառ հանէ , և զոր-  
դիս քո փութով 'ի յօապրութիւն վարէ , զի լնիեր  
լիցի քեզ որդիս քո 'ի գերեղմանի քում . վաշխա-  
ռուք՝ որք ոչ երկնչին յԱստուծոյ և ոչ ամաչեն 'ի  
մարդկանէ , զի տինչափ վաշխս ՚ի վերայ վաշխի բար-  
դեն , մինչզի որդիք ծերանան կամ մեռանին և ոչ  
կարեն զզարտ հարց իւրեանց վհարել . բազում  
անդամ խնդրեն զ ըստ , խնդրեն դդերեղման , զի 'ի  
ձեռաց անողորմ դահճայն սովորեցին : Վաշխա-  
ռուդ դու մերժեաւ արարդ զդիւական սովորու-  
թիւնդ , զի բազոք զրկելոց եհաս յականջն Տետոն  
զօրութեանց . երկիր յԱստուծոյ , իրիւ իմի և  
քարրի մի խցեր զւնիս քո , ուսի՞ր 'ի Քրիստոնէ ,  
որ ասէ «որ խնդրէ 'ի քնն տուր և որ կամի փախ  
առնուլ մի՛ դարձուցաներ զերեսս քո , և թէ ,  
տուր փոխ այնո՞ւ ուսի ոչ ա'ն ունիցիք առնուլ ,  
եթէ աստուածասէր , աղդասէր և հայրենասէր ես ,  
այսէ պատուէլն Աստուծոյ առ քեզ . խոկ եթէ  
ոչ , ամէն առեմ քեզ . լսելոց ես 'ի յետնում առուրն  
զսոսկալին թէ «երթայք մինէն անիծեալք 'ի հուրն  
յաւիտենից . զի քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել  
և այլն , վայէ նոցա զի ոչ միտյն քաղցելոյն ոչ ե-  
տուն , այլ և 'ի ձեռանէ քաղցեայն զպատակին  
յափշտակեցին :

8. Առաւել սոսկային է կաշսուակերաց սովորու-  
թիւն քան զվաշխառուաց անդժութիւն . զի նա  
զտուեալն առաւել կամ կրկնակի պահանջէ , իսկ  
սա հնձէ անտի , ուր ոչ սերմանեաց , և բառնայ

անտի, ուր ոչ ինչ եղք։ Հայրենատեաց է իշխանը, յոր ժամ սիրե զկաշառ։ թշնամի է արդարութեան յորժամ վառն կառա կաշտուի թիւրէ զղատաստան։ Ի ծեաւնէ առեր իշխանութիւն, բնդէ՞ր ոչ տաս իշխաւոն այրուցն, և զրկելոյն, վերկտոին ծայրագոյն շարիս ՚ի համարին սիրես գործել, զայրին՝ զաերն իշխաւոնց զրկեր, իսկ ՚ի յանիրաւէ կաշառեալ՝ կրկն անիրաւիս, և համարձակութիւն տալով անիրաւին բիւրիցու անիրու կոչու, ՚ի յանիրաւութենէ և կաշառէ հարստացեալ յանդ գնիս զիւստուած և զմարդիկ միանդանայն խարել, զի՞ի ցոյցս մարդկան ողորմիս աղքատին, զքահանայս պատուես, զեկեղեցիս և զի զլուցու զինել խոստանաս, երլայնես զքղանցու քո, զի աւելի դատաստման ընդունիցիս, բայց Աստուած դիտէ զօիրա քո, դիտէ թէ ձեռք քո ՚ի են արեամբ, դիտէ թէ զոր ինչ տաս իբրեւ զդատարագն կայենի չէ ընդունելի, զի բողոք զրկելոց իբրեւ զարին Արենի արագ հասանեն յերինս և բողոքեն առաջի Անտուծոյ վասն քո, ուստի չկարես արդարանալ և մտանել առաջի Աստուծոյ, զի զրեալ է թէ Ռ' զոդք, և ո՛չ անիրաւք զարքայութիւն Աստուծոյ ո՛չ ժառանդեն, գուցէ մարդարէն կուայի յանդիմանեայէ զիշխանն մեր իբրեւ զիշխանն Հրեից, թէ Շիշխանք ձեր գոյ զակիցք են գործ, սիրեն զկաշառս, վրիժառուք և այլն։ Վայ նոցա, վայ նոցա :

9. իսկ զշար առվորսաթիւն ժամանակիս այսին ո՞վ կարէ ՚ի համար արկանմլ, որք դարձեալ ՚ի յատարաց Եկին մայն ՚ի ներքս, և զրադի բարի առվարտաթիւնս մեր հանին արտաքս . ել իբրեւ եզ-

ըսպասուէրն Մովսէս և շրջեաց շուրջ զբողովքն Լուսուորչի «Ամկաւ ՚ի սիրտնորա(ասէ)շրջելզեղբարբք իւրավք զ'ըդովքքն Խրապէլի ։ Հաւատալով թէ Առառուած ՚ի ձեռն նորա տալոց էր զիբուլիւն ժառ զօվրդեան իւրոց ։ ո՛հ մուեալ քո ՚ի Պարսկաստան, անդ տեսանես, զի որդիք Հայկայ ըստ սովորութեան Պարսկա շրջին իրբեւ զՊարսկմ, խօսին յստակ զՊարսկերէն, բայց զՀայերէն կիցկտաւու ։ Մո՛ւս ՚ի Վրաստան, ՚ի Տփիսիս, և աե՛ս զեղբարու քո, որ շրջին իրբեւ զՎիթս, խօսին զլեզու նոցա պարզ և յստակ, իսկ զՀայերէն աղճատեալ, գնա՞ ՚ի Մո՛ւսավալա թիս, տե՛ս զՀայս ։ որք ոչ միայն զլեզուն, այլ ստկանիլ մի եւս զՀայութիւն ՚ի մոտացնու արկաննեն ։ դարձ արա՞ ՚ի Պօլիս և տե՛ս զՀայս, թէ ո՞րտիսի սովորութեամբ նմանին Հայոցս ։ եթէ գնաս յԱրարիս, տեսանես թէ Հայք յաջողակ են ՚ի խօսիլ զարարերէն, իսկ զՀայերէն ոչ Առեղելու Հայաստանի ընդ Մարտ խառն ընակեալ Հայք՝ վարդ են ՚ի խօսիլ դքրդերէն, իսկ զՀայերէն խոպառ մառացեալ են ։ իսկ ընակիչք բուն Հայաստանի շկարեն դարձեալ մաքուր Հայերէն խօսիլ, զի ՚ի դրացի ազգաց և ՚ի մինի ընակելոցն առեալ են զբաւ ինչ, և խառնեալ ՚ի լեզու իւրեանց ։ որպէս յոյտ է ՚ի խօսուկցաւթենէ իւրեանց ։

10. Յաւ է Հայքենասիրին տեսանել թէ Հայք յետ փափոխելոյ զիեզուս իւրեանց, փոխեն և զնախնական բարի սովորութիւնս իւրեանց և հետեւելով չար սավորութեանց այլոց ազգաց ։ ընդ որու ընակեցան ։ և մինին իրբեւ վիթ ՚ի նոցանէ ։ Ռւսակ եթէ ոՀայս ՚ի չորս ամերոջ մասունս բաժանեսուք և ՚ի

մատանցն երեքն այլ և այլ աղդաց սովորութեանց  
զիետ գնացեալ՝ բարշյական միութեան և շինու-  
թեան հայրենեաց խանդարիչք եղեն , զի անհաւա-  
սարութենէ և աննմանութենէ միշտ ծնտւ և ծնանի  
երկպառակութիւն , ուստի պարտին Հայք բարի  
սովորութեանց նախնեաց իւրեանց զիետ երթալ ,  
և զօտարամուտա ՚ի բաց մերժել իրրեւ զվարա-  
կարս : Զէ հնար տսել ՚ի յօտարս չգտանին երթք  
բարի սովորութիւնք . չէ հնար տսել գարձեալ թէ  
խոտելի է բարեկիրթ աղդաց բարի սովորութիւնք  
բայց երանի թէ ՚ի նոցանէ զբարիս ընտրէաք և  
ժողովէաք ՚ի բարի ամսնս մեր . և զնսոտանան ՚ի  
բաց ընկենուաք : Այլ ընդ հակառակն ՚ի բաց մեր-  
ժեալ զբարին՝ զչարս առնումք և մուծանեմք ՚ի  
յողդս և ՚ի ժողովուրդս մեր . ուստի հայրենասէրք  
փոթասյին զնորամուտ չար սովորութիւնս իրրեւ  
զկռապաշտութիւն ինչ արտաքս վարել , զի մի օ-  
տարամուտ չար սովորութիւնք իրրեւ ախտ տարա-  
փոխիկ ճարակ դառալ՝ զմասազատանկս աղջիս մե-  
րոյ խլեսցեն յարմատոյ :

11. Թէ որպէս մուտ գտան չար սովորութիւնք  
՚ի մեզ՝ և թէ որպէս մումնեն համապարզր , ցուցից  
քեզ համառոտիւ : Առաջնորդ կամ իշխան քա-  
ղաքիդ ստախօսութեան ՚ի պատրէ զնարդիկ և  
խարէ , մարդիկ քաղաքին ոյնմիկ վաղվազակի սո-  
վորին համարձակ խօսիլ զսուտ և պատշմն զնար-  
դիկ . պետ քաղաքիդ է զեխս և գինեմալ , բաղումք  
ուսանին զեղսիկ համարձակ . կողմնակալ աշխարհիդ-  
է կաշառառու յափշտակող և աւազակ , համայն  
ծառայք և հպատակք նորա զնոյն չարիս դործեն

աներկիւղ . եթէ դլուխ պետութեան է տիմար ;  
այլք տիմարութիւն 'ի դործ արկանել համարին ի-  
մաստութիւն : Եթէ կանալք մեծամեծաց խենե-  
շբար պճնաշաղարդիլ սիրեն . կանայ ը քաղաքա-  
ցեաց զինենեշանաշն տմնթ ոչ համարին : Խակ ընդ-  
հակառ ակն եթէ ամենայն մասամբ բարի լինին մե-  
ծամեծ ք , զբարիս գործեն ժողովու դք երկրին : Արդ-  
եթէ պիտօք՝ իշխան ք՝ կառավարք և առաջնորդք  
մեր ուսցին ազդասեր և հայրենասեր լինել , ամե-  
նայն ժողովուրդք մեր սովորին ազդասէր լինել զի  
քան զամենայն սովորութիւնս գերիվերոյ է սովո-  
րութիւնս . զոր մեծամեծք և վոքունք պարտին  
սովորիլ և գործել , և զվատ սովորութիւնս 'ի բաց  
հաշածել . որք միշտ հակառակ են այսմ ազդօդուս  
սովութեանս :

## Դ Հ Ա Խ Ե Ժ Ա .

ԳԵՐԵԶՄԱՆՔ . ՈՅՆԵՐԻ . ԱՐՉԱՆՔ . ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆՔ  
ՅԻՇՈՏԱԿԻ . Ե՞՛ ԱԻԽՆՈՒԹԻՒՆՔ :

## Ց Օ Դ Ա Խ Ա Ծ Ա .

ԳԵՐԵԶՄԱՆՔ . ՈՅՆԵՐԻ Ե՞՛ ԱՐՉԱՆՔ :

1. և բարեպատեհ տւուրս 'ի վերայ գերեզմա-  
նայ դրեմ . շարած է , թիսուս 'ի գերեզմանն զակա-  
րու դայ . աստուած ային ձայնիւ դուելով բարե-  
կալին իւրայ դկենդանութիւն պարզեւէ , զդերեզ-  
ման սիրելոյն ունայն ժողով 'ի մարմելոյն : 1866 ամի  
'ի սոյն տւուր 'ի լեռնէն Սիօնի , 'ի քաղաքէն Երու-  
սաղէմի գնացեալ իմ 'ի բեթանիա ' թափուր տեսի

զդերելըմանն Դաղնարաւ : Այսօր կրկին իջեալ՝ ի ձորին  
Քեժաւեմանի ՚ի գերեզմանն Մարիտմու առառածածաւ  
մօրն ելեալ ՚ի լեւանն զազդովայ ՚ի գերեզման կենա  
ասառամբն՝ զթափաւը զդերեզմանս տեսի և եռանդ-  
մամբ համբաւեցիւ : Երեք թափաւը գերեզմանք և  
միայն յարութեանն երեք գարուց մարդկանց : Յե-  
պէս՝ զի յարցայ զդազար : Հաւասարիմ եղեւ աշ-  
խարհի , թէ՝ զմորմիսն ամենայն մեռելոց , որք  
յԱրամայ մինչեւ ցեայ կոչեցաց ՚ի գերեզմանն  
յուսընեցեանում : Խոճնիշխանն յարութեամբ իւրաք  
հաւասարիմ եղեւ , թէ՝ ՚ի յառարց Նոյի մինչեւ  
ցկարստուր առաջին՝ զհողացեալ մարմնս մարդ-  
կան նորոգեցէ ՚ի փառաւ : Եւ զի յարուց ՚ի գերեզ-  
մանն զիւսամիսն մարմին մօր իւրոյ և ՚ի փառս ան-  
հառս վերափոխեաց : Հաւասարիմ եղեւ աշխարհի ,  
թէ՝ յաւոր դաշտանտ իւրոյ մինչեւ ցիերջին գա-  
լուսո՞ զակերտ ամենայն մորդկանն ՚ի ձայն Աստու-  
ծոյ և ի խող յետին կոչելով ՚ի գերեզմանաց՝ նորո-  
գեցէ փառօք ՚ի փառաւ : « Զի ենուշե ժամանես : Ե-  
տքն չոչ ե , յորքամ հուեալ ըստեան յայն որդուն Ա-  
ռաջայ , և ենուշեն որդուն և այլն » :

2. Զքաղաքաւնն Երուսաղէմի տեսի զդերեզմանս  
մարդարէից « յորոց բաշտ նորին + որբաց յորեան , և յետ  
յաշտանեան նորս ճորին ՚ի ժողովն ուղարք եռերեւեան բաշտաց » :  
Զշերիմս արդարոց . զարս Հքեայք հոյակաս շին-  
ուածովիք զարդարէին և պատասէին . « Հորդ նոր ուու-  
չին զի՞որինը և դուր զարդուետ զիերին նոցա » . . . . ի  
ի գերայ ըերինն Ամոնի ՚ի ձեռու որդւոց Հագարայ  
տեսի զուսպան Դաւթի և Ազգամնի , զարս պատ-  
րեին մեծաւ պարտով : Առ ճանապարհաւ Բեթ-

Ընհեմի շիրիմ Հռաքելի մարն Յովսենիայ ողջախոհի :  
զոր ընդ Հրէայս ամենայն աղդք պատու էին : Ենոք  
հիւսիս քաղաքին ՚ի փորուածս վիմաց զգերեղմանս  
թագաւորացն Խորայէլի տեսի . յորոց Անգղիացիք  
զոսկերս թագաւորացն ամօք ինչ յառաջ իբրև  
զգանձս սրատուական համեսլ տարեալ էին՝ ողու-  
քանաց և արտաստաց Հրէից ոչ անսացեալ . որովք  
իմնդրէին ՚ի նոցանէ շտունել տարագիր զոսկերս  
նախնեաց Խորեանց : Ի յշրիքով զգերեղման Եղիտ  
մէի ուեսանել և պատուել յօժարեցայ, զի մեռեալն  
որ մերձեցաւ . ՚ի յոսկերս նորա . յարեաւ . ՚ի մեռելոց :

3. ԱՇ. մինչ էի յերուասղէմ զթագուհոյն Ար-  
դարու Հեղինեայ տիկինով զմեծաշէն գերեղման  
խնդրեցի տեսանել, և ոչ տեսի : Թալմուտ և Յովու-  
սեփսո դրեն զթագուհոյն մէրմէ : Իէ՛ զաշամա-  
նակ տաճարին ոսկեղէն դործեաց, և ՚ի առիւն, զոր  
Ագարոս գաշակեաց զրիւրաւոր աղքատա Հրէից և  
հաւատացելոց և այլ եւս աղդաց կերակրեաց .  
վասն որոյ բնակիչք Երուասղէմի առ յիշատակի Եր-  
րախտեացն տիկնով զնշանաւոր շիրիմն զայն կանդր-  
նեցին ՚ի վերայ ոսկերացն . որոյ նման ՚ի յնդէքտ  
սանդրիտ միայն գտանէր : Պաւանի Հեղինեայ տիկ-  
նուով ընտէշի շիրիմ հրաշակերտ, զի դուռն է դոր-  
ծեալ ՚ի նմա մարմարոնեայ + որպէս են և այլ կող-  
մանք շիրմին . այս դուռն ՚ի պայմանեալ տարւոյն  
և ՚ի ժաման . գաղոնի իմեշարժմամբ մեքենայի բանի.  
աղայ յետ սակաւոց վակի . զոր եթէ յայլում ժա-  
ման . դուռն դործեացես բանալ, յաւէտ խորտակել  
իարասցես քան թէ վակել :

4. Մի՛ զարմասցին ընդ այն , թէ՛ պիտօք հանենարկը ՚ի մարդկանէ ՚ի վերայ բարերարաց ազդէ , աշխարհի և մարդկութեան արձանա , բրդունս , կոթողս , խաչվէմս , գմբէթս , մատուռս , տաճարո կանգնելով զարդարեցին և պատուեցին , Եղիպատացիք զմարմինս մեռելոց գիտազարդէին և պահէին . Հռովմացեցիք զաճիւն ոսկերաց քաջաց յոյժ մեծարէին և պահէին ՚ի յոսկեղէն սափորս և այլն : Մի՛ թէ յիմարեցա՞ն խմաստունք զհոտեալ զապականացու մորմինս և զոսկերս պատուելով և զդանձս խրեանց սպառելով : Զի՞ է . զի Յովսէփ զմարմին հօր խրոյ գիտազարդեաց , յեզիպտոսէ հեռայուցեալ ՚ի գերեզման Արքահամու և Սահակայ թաղեաց . զի՞ է , զի Յովսէփ կտակառ պատուիրեաց , զի յելանելին եղբարց և ազդի խրոյ յեզիպտոսէ , զոսկերս խր հանեալ հանդուցեն առ ոսկերս հարցն : Եկ հայրենասէր գազանեացս խելամուտ լիցուք . — Հոգիք առաքինեաց յորժամ ցանկան եւ լանել ՚ի մարմայ աստի և լինել ընդ Քրիստոսի , պատասխենն զի ոսկերք և մարմինք խրեանց ՚ի յերկրի թաղեացին և լիցին ընդ ոսկերս առաքինի հարցն՝ որոց որոյնոցալի է անմահութեամբ : Որոգիք առաքինեաց պատուեն զոսկերս և զարդարեն զշիրիմս հարց խրեանց , զի մարդիկի դեխտ ՚ի յոսկերաց և ՚ի շիրմաց ուսցին առքինանալ աստ :

5. Ազդ զքաջ արանց , առաքինեաց , և բարերարաց զոսկերս պատուէ և զշիրիմս զարդարէ . զի զմիրտս հարց դարձուացէ յորդիս , և զհոգի ուզիզ նորոգեսցէ ՚ի փորինոցա , զի շիրիմք վաղճանելոցն յիշատակաց մատեան , անդամանդեաց գրիչ և

Հրաշավէպ քարող են կինդանեաց : Զի յորժամ  
 տեսանես առ ուս Մասեաց զգերեղման Նոյի և  
 Նոյեմիլարայ, անդ ոչ միայն անցք ջրհեղեղին և տա-  
 պանին ՚ի յուշ դան քեզ՝ այլ արդարութիւնք Նոյի  
 և որդւոց նորա ընդ առաջ ելանեն քեզ, և դու-  
 յիշատակաւս այսուիլ բերկրիս : Եթէ իբրեւ դհայ  
 տեսանես զգերեղման Հայկայ ՚ի Հարք գաւառի,  
 քաջաթեամբ նորա քաղալերիս . Եթէ տեսցես  
 դշիրիմն թագաւորայն Հայոց մոօք խելամուտ  
 լինիս արութեան նոցա և խրախուսիս . Եթէ տես-  
 ցես զգերեղման զօրաւորայ, զօրութիւնն զգենուս  
 6. Արդ զի՞նչ զմաւ ածիցես, յորժամ տեսցես  
 զգերեղման թագեի Առաքելոյն ՚ի յԱրտաղ դաւա-  
 ռի, ՚ի վանս թամբէի . զՅարդուղիմեայն ՚ի Զարե-  
 ւանդ. դաւառն Ազբա՛յու ՚ի վանս Բարդուղիմէոսի.  
 զՅուղմայն ՚ի դաւառն Ռշտունեաց ՚ի վանս Ա. Թու-  
 մայի : Զշիրի Ծավհաննու Մկրտչի ՚ի դաւառն Ցա-  
 րօնոյ ՚ի վանս Ա. Կարապետի : ԶՀռիփափմեանցն ,  
 և դյայիանեանցն ՚ի վաղարշապատ՝ ՚ի տաճարոիւր-  
 եանց : Զոսկերս Լուսաւորի, Արխատակէսի, Վրիթա-  
 նէսի և մեծին ՚ներախոի ՚ի յԱրեղն դաւառի ՚ի վանս  
 և ՚ի տաճարո իւրեանց : Զգարիթեւ մարմին Սահա-  
 կայ ՚ի յԱշտիշատ՝ ՚ի վոքք մատրան միում, զյես-  
 րովոյ ՚ի յՈշական : Զնշխարս Թարգմանշացն ՚ի  
 Ցարօն ՚ի վանս երկոտասան Առաքելոց : Զգերեղ-  
 ման Եղիշէի ՚ի վասպուրական ՚ի վանս չարահան  
 Ա. Նշանի . զՅարեկացոյն անդ ՚ի վանս իւր : Թո-  
 ղիշ և զայլ բաղմաթիւ սրբոց հայրապետաց, վար-  
 դապետաց, մարտիրոսաց, ճգնաւորաց և կուսանց  
 զգերեղման և զտեղիս ոսկերաց նոցա յիշատակել

Այլ դու յորժամ մերձ լինիս և աեսանես, զգերեզ  
մանա նախնեացդ և սրբոց քոյ, սիրտ, հոգի, տեսչ  
և վախագ քո ՚ի քէն եղանեն, և առ սուրբս և ա-  
ռաքինիս երթան, զքարինս և զնոզ դերեզմա-  
նացն համբութել վութաս, յորոց արդարութեան  
և սրբութեան անուշահոտոթիւն բուրէ, և զնո-  
զիդ ՚ի կայանս հոգւոց նոցա յափշտակէ :

7. Ե՞ր վասն Մարտինայ եպիսկոպոս զերկու  
հաշիւր հաղար սրբոց գմասունս ժողովեաց ՚ի քա-  
դաքն Մարտիրոսադ, Ե՞ր վասն քրիստոնատէր կոյ-  
սերք զրիւրաւոք մարտինս սրբոց թերին ՚ի Բի զմա-  
դինն - Զիներկալութեամբ մատանցն, և յաճախա-  
կի յիշտառէօքն սրբոցն արծարծեսցի եռանդն հա-  
ւատայելոյ ՚ի ուշըն քրիստոնի, և զի ախոյեանք  
եկեղեցւոյ իրին զվկայն արհամարհեսցեն զմահ  
և աշակերտեսցեն զամենայն հեթանօս : Սպարա-  
պեսն Բ. Շապուհ արքացին չկարացեալ ըմբանել  
զիւշակ, ձեռնտութեամբ նախարարաց առնու-  
ղամնորն Անի, և գերէ զամենայն դանձս արքունի  
որ ՚ի նմա, այլ և զանկերս թագաւորացն հանեալ  
բանայ ՚ի վերայ ուզուց և տանէ ՚ի Պարս : Խո-  
րենացին չիմացեալ զմիսո խորամանկ Պատիցն՝ ասէ-  
ուց դիտեմ թէ վասն նախատինս տանելոց Արշա-  
կայ, և թէ վասն հմայից ինչ հեթանոսականաց  
տարս, զանկերտն Բացայատ երեւի միտ Պարսկին,  
զի խորհեցաւ զանկերս քաջ և յազիժող թագաւոր-  
աց տարագիր առնել ՚ի Հայաստանէն, որպէս զի  
անուն և յիշտառէ քաջութեան յազիժութեան և  
թագաւորութեան շնչեսցէ ՚ի մոտաց Հայոց, զի մի այլ  
եւս յիշտառկառ նոցին զօրասցին, յազիժեսցեն, և

թագաւորեցեն : Ուստի յորժամբ լուաւ մեծն ներ-  
սէս թէ զօրավարն Պարսից զոսկերան թաղ աւ որացն  
Հայոց ՚ի Անւոյ հանեալ տարաւ . ՚ի Պուրա , արտևե-  
ցաւ սաստիկ , և յորդորեաց վնախալրարս խնդրել  
՚ի Շապհոյ՝ որոյ լուեալ ազաշանոցն նոցտիւադար-  
ցուցանէ զոսկերս , զորս «թագեցին ՚ի յաւան յԱղ-  
ցա , որ յոտին Արագած կոչեցեալ լեռինն» . . . :

8. Այս թէ Աստուածն՝ ՚ի բարձանդ ոչ հարցանի-  
ցէ ՚ի մէնջ թէ «Մարդարէեաց ուրդի մարդոյ , իցէ՝  
թէ կենդանի լինիցին ոոկերքդ այդոքին , զի ասա-  
ցին գոքա թէ հաստ յցս մեր և մեռաք» : —  
Յումամի յըրեւելից , ՚ի Աստուածից , ՚ի Հիւսիւայ  
և ՚ի Հարստոյ բոցավտու հողմանք հայրենաւ իրու-  
թեան միութեան , և իմաստութեան շնչեն ՚ի  
ցամաքեալ ոոկերս , յիզ , արին և մորթ րերեն  
՚ի վերայ նորա , շունչ կենդանութեան և զօրութեան  
ցողեն ՚ի վերայ նորա և ելեայք ՚ի գերեզմանաց  
կանդնին ՚ի վերայ ոտից , և գնան ՚ի վերայ բար-  
ձու լերին հիւսիոյ (՚ի Մասիս) , և ոռք նոցա մի  
վաստակեացին : Իսէր Հայրենեացդ մարդարէեաց ,  
զի եթէ զՀայրենասէր ոք խնդրես դայես ՚ի գե-  
րեզմանս . եթէ քաջ . յազիւող և առաքինի խնդ-  
րես , եթէ ՚ի գերեզմանս . եթէ աշխարհոշէն ,  
եկեղեցաշէն և իմաստունս , մուտ ՚ի գերեզմանս .  
Հարց կենդանիդ ՚ի գոցանէ զիսորհուրդո , որք իշ-  
րեւ խորհրդական ծեր և իբրեւ բարեդութ հայր  
ուսուցաննն քեզ աննախանձարար . մի ընդ մեռ-  
եալս համարեցես զդոսա , զի թէպէտ գոքա լոե-  
ցին , սակայն գործք արութեան և առաքինու-  
թեան նոցա աղաղակեն . զի ասէ «ես և մ' Աստուած

որրահամու խահակայ և Յակոբայ ։ զի Աստուած՝  
յէ Աստւած մեռելոց ։ այլ կենդանեաց ։ զի ամեռ  
նեքեան կենդանի են նմաւ ։

9. Հապտեր ՚ի ձեռին շնչեաց ընդ ամենայն քառ  
զաքսն Հայտառանի եթէ ՚ի կենդանիս դոյես զոք  
հայրենասէր ։ աղդ արասիցի ինձ ։ զի եկեղալ համ  
բուրեցից զձեռա և զուսնորա ։ այս համբուրեցից  
զի ո՛չ վտան անձին ինչ ։ այլ վասն հայրենեաց վաս  
տակեցան՝ անձինք այդպիսեաց ՚ի պատուի են ՚ի  
կենդանութեան և ՚ի մահուան իրեանց ։ Ներբողք  
նորհակալեաց շրատեն դոցա ։ խայլէմք ։ մատրունք  
և գմբէժք չեն փոխարէն անշափ երախտեաց նոցա  
գոքտ որդիք Աստուծոյ են և վարձք և գովութիւնք  
նոցա ՚ի ծեառնէ ։ արդարութիւն դոցա մյանջենաւոք  
և անմահ է ՚ի յանձեռագործ տաճարին Աստուծոյ ։  
Դոքա ըստ Եսոյեայ իրեւ մայր մի երկնեցին և  
ծնան աղդ մի ողջին ։ յիշատակ դոցա քաղցր է և  
բարի ։ կայցէ և մնասցէ յաղդէ յաղդ մինչեւ յա  
ւխտեան ։

10. Այլ եթէ ՚ի կենդանիս չդուեր զհոյրենա-  
սէրն ։ թողեալ զլապտերն ։ առ ՚ի ձեռին քոմ  
զլսունկ զբուրվառ զքահանսյն ։ երթիցուք ընդ քեզ  
զարնեալ ՚ի գերեզմանս ։ բայց եթէ չունիցիրք  
խունկ ծինելոց և քոհանայ հոդւոց տսելոյ ։ շիթ  
մի ջերմ արտաստաց համեալ յաշաց մերոց ցովես-  
ցուք զմահարձանու և զոսկերս տռաքինեացն ։ և  
ասացուք օրհնեալ էք գուք ։ և օրհնեալ են ոս-  
կերք և գերեզմանք ձեր ։ Այլ արիք գուք ։ ընդէ՛ք  
ննջէք ։ ուր են վառք և ժառանդութիւն ձեր ։  
զիառս ընդ ձեզ տարայք ։ իսկ անփառութիւն թո-

զի՞ր մեղ։ ազատութիւն ընդ ձեղ, իսկ ծառայութիւն մեղ, երանի ձեղ և վայ մեղ։

## ՅՈՒՂԱԾ Բ.

ՏՕՆՔ ԵՒ ՑԵՇԱՏԱԿԲԻ.

1. Տօն Նաւասարդի առաջին եղեւ 'ի Հայու։ զոր Նոյ իրրեւ քահանայապետ և մարդարէ որրեաց և աւանդեաց որդւոց իւրոց առնել զյիշատակ տօնիս ամ ըստ ամէ։ զի 'ի դիրու նմնադոց վրայեաց Մովմէու . Բ. 13. «Յամ առաջնորդ որ ոչ ոչ էր ամսոյն նասաւընց ջառը յերեսոց երիշն և երայ նոյ ոչը լուսուն պատահն։ շատ որոր։ և եան չի նասաւընց ըստը յերեսոց երիշն Զամ մի ողջ յն սասանեալքն և ահարելեալքն 'ի վերայ ահեղատառ ալեաց համատարած ծովուն՝ յորժամ առեսին զառաջին զցամաք երկրի, տօն ցնծութեան և ուրախութեան կատարեցին . բայց ո՞ կարէ զյնծաւէտ ուրախութենէն նոցա ճառել։ Մեծ էր ծովն և նաւն . մեծ էին նաւապետ և նաւաստիք, մեծ էին թեռինք նաւին։ Նոյ նաւապետ, որդիքն նաւաստիք և դարմանիչք կենդանեաց, կենդանիք էին բեռինք նաւին։ Մեծ նաւն եհաս 'ի ցամաք 'ի մեծի նաւարկութենէն . մեծ արար այսօր Նոյ գտոն Նաւասարդի, և ամենայն կենդանիք ուրախակից եղեն ընդ նմա։

2. Նոյ Նաւասարդ կոչեաց զանուն նորոյ սամայու . այն է նաւ սարտեաւ 'ի ջուրց և դադարեցաւ 'ի ցամաք, կամ նաւ աստ առ աւարտ։ Տօն Նաւասարդի կատարեցին Հայք յամենայն դաւառս Հայաստանի վասն յիշատակի ջրհեղեղին և ազատու-

թեան տաղանին. ուստի ժողովեալքն 'ի սօն սըրնը կէին ջուր 'ի վերայ միմեանց . և թռուցանէին զա զաւնիս 'ի յիշատակ ջրոյն և ազաւոյն , որ արձա կեալ 'ի տապանէն չիւղ ձիթենուցն 'ի բերան գարձաւ 'ի տապան : Բազմագ արեան աւանդութիւնս ոչ միոյն եհաս մինչեւ ցը . Դրիդորն . այլ և աեւէ մինչեւ ցայսօր ժամանակի . զի Նաւասարդ . որ կատարի այժմ 'ի տօնի վարդավառին . յորում աւուր տօնախամբէ Եկեղեցին զաօն Այլակերպութեան ըստ պատուիրելց պրոյ Լուսաւորչին . Հայք 'ի բազում ժաւառս օրոնին զջուր 'ի վերայ միմեանց : Ի տօնին ոյտմիկ 'ի վանօրայս և յեկեղեցիս . մանաւանդ 'ի Տարօն 'ի ժամանակն կողմանցն Հայտաստմի աշխարհաւ խումբ տօն կատարել Նաւասարդի , վարդավառի և Այլակերպութեան . զխաչինս բազում զոհեն 'ի յիշատակ պատարագին նոյի , որ զուրբան 'ի կենդաննեայ մատոյց յոզջակէղ Ցեառն . և Ցէր հոսուեցաւ 'ի հոսա անուշից :

Յ. Նախ քան զԼաւասաւորիչն , քուրմք և քրամաւ պետք թագաւորք նախարարք և ժողովուրդք ժողովեալ յոմենայն քաղաքաց հանդերձ զօրօք զօրագետք զաօն նաւասարդի 'ի յօդ" 11 կատարէին նաեւ . 'ի Բագրեւանդ իբրեւ զորբազմն և զքալաքական տօն ինչ առաջի բագնեաց , Բայց Լուսաւորիչն սրբեաց , և պատուիրեաց , զի կատարենոցեն զայն տռաջի ճշմարտին Աստուծոյ , և յիշատակեաս յեն զանուն Յովհաննու մկրտչին և Աթանազինեայ Եպիսկոպոսին . զորոց զնշխարս բերեալ 'ի կեռաւ թիւյ ամիսիսիեաց 'ի Տարօն 'ի վանս Սըս Ա . Կարա-

պեսով , և շինեաց ՚ի վերայ եկեղեցի , ՚այդպէս ՚ի  
մասնաւոյն ապրեալ ՚ի բագրեւանոց հանդ ցց ՚ի տես-  
զին , ուր ըլլրաւեաց զԾրդառու և զրիւրաւորու Հայոց  
և շինեաց վանս յանուն Յովհաննու մը բաշի : Մեծ  
էր յիշաւակ տօնիս ՚ի Հայու քան զիշատունք Զատո-  
կին ՚ի Հրեայս . զի Հրեայք տօնեին զջառին վասն  
յիշաւակի աղասովթեան ազդի խւրեանց ՚ի յազ իւզ-  
տառէ և ՚ի ջուրց կարմիր ծովոն . իսկ Հայք տօ-  
նէին զան աղասովթեան երկրորդ նախահարց և  
համօրէն կենդանեաց ՚ի ջուրցն հեղեղոց :

4. Հայք՝ յորում աշխարհի և դաւառի եղին  
դպագինս կոռոց, զտարեկան և զտմական տօն ինչ  
կատարէին առաջի նոյն : Պլասուրք՝ ի մեջենեաց  
էին ՚ի բագրեւանդ, այն է տան շտառաւոց և  
բագնեաց, ուր էին բագինք վահաղնի և Աման  
քրմագեափ և այն : Ի Յաշխիշաս, ոյն է զրաւա-  
չաս, զի զոհս բազումն մասուցանէին անդ կոռոց  
և Ցարօն՝ ի տեղին Գլակայ վանից զբագին  
սանեան և վահեգանեան կոռոց : Ի յիշելն զրադին  
Անահայոյ տի յնոջ տօնէին Հայք՝ ի 15 Նաւասար-  
դի, յորում համաշխարհական ժողով գումարեալ  
Տրդատոյ մասուց Անահայ մեծի տիինոջ զծաւ  
դիւր և զօստա ՚ի Հնորհակալութիւն . զի հաւատապր-  
թէ Անահայ ետ նմա զարութիւն ավանել զհայրեա-  
նիս իւր՝ ՚ի բանակալութիւն Աստմանեանց : Աստ հրա-  
մայեաց արքայն Գրիգորի, զի մասուցէ սաս հետ  
առնայն զիւութիւնուց Անահայ : Բայց Գրիգոր արք-  
համարհեալ զհամանան արքային և զիւու նորա-  
շմատոյց զօստան . ուստի Երկուապան Հարշարտա-  
նօք չարչարեցաւ, արկատ ՚ի վիրապն Արտաշմառ

և ելեալ ողջ 'ի վիրապէն , ողջացոյց զայտահարեալ Տրդատ և զօրս նորա , և նորին իսկ ձեռօթք զողջն բադինս կւոյն բնաջինջ արար 'ի Հոյաստանէ և խտիանեաց զնիմանոսական տօնսն :

Յ. Ի ձեռն Յիսուսի և Առաքելոց նորա բարձան հրէա'յան և հեթանոսական տօնք 'ի հաւատացելոց , և 'ի տեղի նոյա հաստատեցան տօնք Տէրոնաւկանք : Քահանայապեան Յիսուս հաստատեաց զտօն ընթրեայ , պատիրեաց աշակերտաց կատարել 'ի յաւագ հինգ շարաթի ասելով « այս ուստի առ ինչ յէլուսի » : Առաքեալք հաստատեցին զտօն Ծննդեան և Մկրտոթեան 'ի Յունվարի 6 . զուն քառամսօրեայ 'ի տաճարն . զտօն արմաւեենեաց Ծագկազարդին . զիշատակ աւագ ու բամիթի խաչելութեան , և զթաղման , զաւագ մեծի շարաթի աւուրն : Աւանդեցին Առաքեալք զտօն մեծահրաշ Յարութեան Յիսուսի կատարել առաջին միուշարաթին . զնոյն տօն Յարութեան յամենայն միաշարաթի կատարել 'ի յիշատակ համօրէն յարութեան ննջեցելոց : Տնն Համբարձման և Հոգեգալստեան աւագելաւանդք են , զի 'ի միում տեսնին զՏէր Յիսուս յանդիման աշաց իւրեանց գնալ յերկինս : Իսկ 'ի միւսում ընկալան զջոգին , և լցան Հոգեւովն սրբով : Զտօն ծննդեան Աստուածածին , Ծննդայման , Աւետման , Ննջման և Վերափոխման նորա հաստատեցին առաքեալք , նոյնպէս և զտօն մնընդգեան Յովհաննու մկրտչի : Տեան Եղայոյն Յակոբոս առաքեալ առաջին հայրապետ Երուսաղէմի կարգեաց զտօն Վերայման Ս . Խաչի , զի 'ի տարւոջն միանդամ 'ի տօնախմբելն հաւատացելոց՝ բարձ-

ի ամեւ ժողովրդեան և  
Նոյնպէս յաջորդք Առաքելոց սուբք հայրապետք  
կարգեցին և հաստատեցին զրադում տօնու ՚ի կա-  
թուղիկէ եկեղեցւոյ , որք ըստ առաքելական տօ-  
նից ընդունելիք սիրելիք և պատուելիք են մեզ .  
զիւաքելոց , զՄարգարեից , զՀոյրապետաց զՄար-  
տիրոսաց ; զԼարդապետաց , զՀՊնաւորաց , զՄու-  
սաննաց զոնս , չորրո պատուիրեցին տօնել ամ՝ ըստ  
առել և զյիշատակու և զիկայարանութիւնն սրբոցն  
ընթեռնուլ ՚ի լուր հաւատացելոց . Զյիշատակեալ  
տօնոն Ս. Հարք Նիկուց . Եփեսոսի , և Կ Պօլսոյ ժո-  
ղովոցն ընկալեալ հաւատաեցին և պատուիրեցին  
տօնել անխափան : Ըստ այսմ՝ հայրապետք եկեղեց-  
ւոյ ընդ գարու և ընդ ժամանակու արժանաւոր սրբ-  
ոցն և վիստիցն . որպէս ՚ի յայտմաւորս և ՚ի տօ-  
նացոյցն մեր անօսնի :

6. Առաջին նահատակերոյն ՚ի Հայաստան՝ ա-  
ռաջին տօնք առաջին լուսաւորչին թաղէոսի .  
Բարդուղիմէոսի , Սանդխոսոյ կուսին , Ադդէ ե-  
պիսկոպոսին , և յիշատակ Արդարու ժագտուորին  
կարգեցան և կատարեցան ՚ի յաջորդ հայրապետաց  
նախկին լուսաւորչացն մերոց մինչեւ ՚ի Ս. Գրիգոր-  
որ առաւել պայծառատցոց և հրամանաց կատա-  
րել : Ելեալ Գրիգորի ՚ի վիրապէն խնդրեաց զմար-  
մինս երանելի կոսանաց սրբոց Հռիփոփեանց և  
Գայիհանեացն , պատեաց զպատուական նշխարս նո-  
ցա , եղ ՚ի գերեզմանի , շինեաց ՚ի վերայնոցա վիտ-  
յարանս , և ՚ի գովեստս սրբոց կոսանացն երդ-  
եաց ամելով «Առաջարկ ՀՀ հՀՀ և Հայութեան լուս-  
ուարձն սրբոց և ՚ի առաջարկ հանգացնաւու լուսաւուն բայ-

ընկեն առնելու առ քեզ . . . : Տօն առաջին 'ի Գրիգորէ  
հաստատեալ 'ի Հայո' է տօն կուսանացս , զորս 'ի  
յերկու և յերեք շաբաթի առուր առաջին կիւրակիէի  
Յարութեան տօնէ եկեղեցին Հայաստանեաց մին-  
չեւ ցոյսօր ժամանակի . նախ քան զամենայն տօնս  
որբոցն , ի յաջորդոն Գրիգորի Տէր կամիսաս Հայ-  
րապետ շինէ 'ի վերայ կուսանաց տաճարս գեղեց-  
կաշէնս , և 'ի նաւակատիս տաճարացն երգէ երգս  
հրաշարանս ; « Անձնն նաև բնութագու միջան Քրիստոնէ ' Երիտա-  
սոր նահանգունէ և իւսունէ իւսուգունէ . և այն ըստ կարգին :

7. Զատօն կաթողիկէ եկեղեցւոյ սրբոյ Եջմիածնի  
կարգեայ Ս. Գրիգորյիլանելն 'ի Վիրապէն , զորտօնէ  
եկեղեցի յերկրորդ կիւրակիէի զինի Հոգւոյ Գա-  
լըստեան և զտօնն Շողակաթի սրբոյ Եջմիածնի , զոր  
կատարիմք 'ի շաբաթ օրն վերաբերման Աստուա-  
ծածնի , աւանդեցան 'ի սրբոյն Գրիգորէ մեծա-  
պայծառ . և աշխարհախումք կատարել . զիյելանելն  
նորա 'ի Վիրապէն , ետես զԵմիածնն որդին ինեալ  
յերկնից , որ ոսկի ուռամք հարկանէր զգետին 'ի շ  
միածնն 'ի հօրէ և լոյս փառաց ընդ նմա : Զայնք  
հնշեցին սանդարամետք անդնդոց » . . . : Զատօն  
կաթողիկէ եկեղեցւոյ կարգեաց տօնել . յառուր ,  
յորում ետես զտեսիլն . իսկ զԵպակաթին հաստա-  
տեաց կատարել . յորուր , յորում շինեաց 'ի տեղի  
տեսպետն զեկեղեցեցին Շողակաթի Եջմիածնի և 'ի նա-  
ւատկատիս Շողակաթին համախմբեաց զմտգառորն  
Տրդամ . զգօրանորա և զՀամօրէն հաւատացեալս Հա-  
յաստան աշխարհի առնել տօն մեծահանգ էս եկեղե-  
ցւոյ , որոյ վասն երգեաց գնացօղն ընդդէմ Տաճկաց  
Դ. Սահակ Հայրապետ Ամերախ լեր սուրբ եկեղեցի

շարական։ Գրիդոր սահմանեաց զտօն երկրորդ Ծաղկազմորդին, զի ՚ի վլիրապին լուսու ՚ի պաշտպան հրեշտակէն խրմէ թէ այն օր տօն մեծ է չորրորդ դասուն իւրոյ, որ ՚ի յերկինս։

8. Ա. Գրիդոր հաստատեաց զտօն առաջին մատրան կատարել ՚ի յԱշխարհամատարան կիւրակէն։ որ զինի Նոր կիւրակէին։ Զի ՚ի Կեսարիա ձեռանադրեալ Եպիսկոպոսապետ ՚ի Դեւոնդէ պատրիարքէ՝ գտանայ ՚ի Տարօն՝ ՚ի Յաշոփշատ, կործանէ զկուռուն, շինէ շատուան, կանդէ զսեզան տէրունեան, համախմբէ ընդ արքային զզրու, զնախաշարարս և զհամօրէն Հայաստանեայս, առնէ տօն հոգեւոր ցնծութեան, մասուցանէ շառաջն պատրաբէն ՚ի յառաջնաւշէն մատրանն։ Ի որբոյն Գրիդորէ ուսան յետագոյ հայրապետք, թագաւորք և նախարարք ՚ի տարուջն եօմնիցո աշխարհախումբ առնել և տօնել զտօն Աշխարհամատարան, որպէս պատմապրէ Ռուզանդ։ «Հասանէր Եպիսկոպոսապետան Արքանիէն ՚ի մեծ յառաջին ՚ի մայրն Եկեղեցեացն Հայոց, որ յերկին Տարօնոյ . . . Սա երթեալ կատարէր անդ ըստ հանապազ սովորութեան դժեառն . . . զպատարադն գոհութեան . . . քանզի ոյնսիէս իսկ սովոր էին Եպիսկոպոսապետք Հայոց հանդերձ թագդաւորօքն, նախարարօքն, և աշխարհախումբ բազմութեամբ պատուել զնոյն տեղիս . որ յառաջն էին տեղիք պատկերաց կռոյն . . . մննաւանդ յայն ՚ի դիմաւոր տեղին Եկեղեցի ժողովել ՚ի յիշատակ օրբոյն որ էին անդ, կատարել ամի աւի եօմն անդամ, բաղում սրբոց մարտիրոսաց մասունաժողովեալ էին անդ)։ որք զնոյն ունէին սովորու-

թիւն 'ի մեծի Մարդարէարան Յովհաննու՝ այն է մենաստան Մշոյ Ա. կարապետի : Մոյնալէս 'ի յԱռաքելարանս Ցեառն աշակերտացն . այն է մենաստան երկուստասան Առաքելոց 'ի Տարօն : Մոյնալէս 'ի Վլայարանս Մարտիբոսացն ամի ամի ժողովեալք զօր տօնեն յիշատակի նոյա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային : ի ժամանակակից պատմոգրէս առաք զվկայութիւն , որում համաձայն վկայէ նաեւ Ագաթանգեղա թէ տօնք սրբոց, բարեխօսութիւնք վլայից . և պատիւ մասանց նոյա հաստատեցաւ 'ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ :

9. Սահակայ Մեսրովզոյ պահելով զկարդ ջերունական առաքելաւանդ տօնից՝ հաստատեցին զյիշատակս տօնից սրբոյն Գրիգորի Հոչն 'է վէճուն , և եւն 'է վէճուն , տօն Արիստակէսի , վրժանէ՛ի , Յուսկան , Գրիգորիսի , Ներսիսի , Դանիէլի , և Խաղայ սարկաւադին նաեւ զայլ սրբոց տօնից զկարդն եղեւալ զՅօնայոյն մեղ ուղղեցոյ թողին : Խակ տօնք Սահակայ և Մեսրովզոյ , և թարգմանչայն սահմանեայ Գիւտ կալքովի լուս ԶՂեւոնդեանց և զլար , դանանց զյիշատակս Յօհան Մանդակունի հայրապետուն : Խակ Յովհան ի մաստանէր , Գրիգոր վլայտանէր , և Շնորհալի հայրապետք զվկայաբանութիւն օրշոյն թարգմանելով զլատորոյ զՅաւնաց և զչոռով մայեցոց սրբոց զո՞նս և զգատմութիւնս մուծին յԵկեղեցի և 'ի Տօնացոյցն մեր : Յետ անցանելոյ բազում ժամանակայ բայմեյիշատակ Ոխմէօն կամուզիկոս կրկին փոյթ կալու զՏօնացոյցն ուղղել և զՅօհան Որոտնեցի և զԳրիգոր Տաթեւացի դասել ընդ տօնելի սուրբսն : Բայց սակայն դժունին և այլ

յիշատակաց արժանի բազում սուրբք , որք ոչ կարող եցան ՚ի կարգս տօնելի սրբոց մինչեւ ցայսօր :

10. Ամենայն ուշադրութեան արժանի է գործ վկայասէր Հայրապետաց մերոց . որք գոլովի բայց Քրիստոսասէր և մարդասէր զտօնս և զյիշատակս սրբոցն առանց խարոթեան ազդի և աշխարհի մուծին յեկեղեցի մեր իրեւ առաջին խնամակալք առաքելական եկեղեցւոյ . վեհանձն և օտարասէր հոգին հայրապետաց մերոց երբէք չած զնոտաւ թէ օտարադի հովուաց փոյթ չէ երբէք զհամադային սուրբսն մեր տօնել ՚ի յեկեղեցիս իւրեանց . զի բայց ՚ի Ս. Լուսաւորչէն մերմէ . զայլ սրբոց մերոց զյիշատակս ո՛չ կատարեն յեկեղեցիս իւրեանց : ինձ այսպէս թռի թէ վկայասէրք մինչ զբաղեալ էին զհեռաւոր սուրբսն բերել յեկեղեցի մեր (ըստ առածին Հայուսունի նէ , հետագա պատրիարքուն մէնէ) զհամադային բազում սուրբսն մեր մոռացան դասել ՚ի կարդ տօնելի սրբոցն . զի եթէ եկեղեցալան և ազդային պատմութեանց մերոց հաւատասցուք . զբազումք ՚ի սրբոց մերոց տեսանեմք մնացեալ արտօքտ առանց յիշատակի և տօնի . վասնորոյ եթէ Ասորոց , Դիտայ , Յունայ և Հռովմայեցւոց հովիւք չէիս սիցեն զնեն պատիւ վկայասէր հովուաց մերոց և չունեացեն զուրբսն մեր և նախադպատուեցեն զորբասէր և զիշայասէր եկեղեցին մեր . կոյր են և կուրայ առաջնորդք , զի առաջնորդք մեր զբնտանի սուրբս թուշեալ զաարսն իրեւ ընտանիս ՚ի ներքս մուծին , զի զանձինս օրինակ այլոց հովուացն ընծայեցեն , բայց ՚ի զուր :

11. Ահա ճառընտիրք մեր և վէպիք ազդային

վասն վարտ ց սրբութեան Շմաւօն եպիսկոպոսի ,  
և վասն երկու հարիւր հաղար արեւելեան վկայից  
վկայենք որք ՚ի Պարս վասն Քրիստոսի որովք կա-  
տարեցան ՚ի Շատհուոյ մոնորէն արքայէն , բայց ոչ  
տօնտիսմբին յեկեղեցի մեր : Վարք և սրբութիւն  
է իւ տի , Յովհաննա Մանդակունոյ , Վահան , Կո-  
միտաս , և Ներսէս շինող Հայրապետաց հռչակեալ  
էն ՚ի պատմութեան , բայց ընդ տօնելի սորբս  
ոչ յիշատակին յեկեղեցով Խորոսի եպիսկոպոս Ան-  
ձեւացեաց , Ասրդիս Հնորհայի , Ախիթմար գօշ ,  
Արքաւոր , Յօհանն Երջնկայի պլուզ . Յօհանն ոստ-  
նակեր վարդապետք , ամենեքեան արք տուաքի-  
նիք , սրբառքք , և ճգնապետք , բայց ոչ տօնեցան  
՚ի մէնջ : ի ժմադառնան Վռամձապուհ , Աշոտ ո-  
գարմած , Ամրատ նահատակ ոչ տօնեցան ՚ի մէնջ :  
Առաքինի նախարարք , որք յետ նահատակութեան  
սրբոց վարդանանց չարշարանոք և համբերութեամբ  
ինեղ անի նահատակ եղեն ՚ի բանափն Բարելոնի  
վասն մնուան Տեառն , ոչ տօնեցան ՚ի մէնջ : Կտո-  
նոյնք երանելի նախարարաց , զարս Եղիշէ անարիւն  
Քիոռանդ և Հրեշտակաց նմանեցուցանէ , ոչ տօ-  
նեցան ՚ի մէնջ : ի Պարսից , ՚ի Սկիւթացոց և յԱ-  
րաբացոց , թէ որ չոտի նախարար , իշխան , այր ,  
իմն , ծեր , Երիտասարդ , կոյս և մանուկ նահատա-  
կեցան , պատմութիւն միայէ . բայց Եկեղեցին ոչ  
տօնտիսմբէ : Միքայէլ եպիսկոպոս Աղանեթեանց  
ըստնախամերոյ առժանի սրբոց զանուանո ՚ի բատուկ  
աներամի սիւմմ արդէն Հրատարակեալ է . զարոց  
դյիշատակո տօնից տակաւին ցայսօր չեմուտ ի Տօ-  
նացոյն մեր : Եթէ հովիւք Եկեղեցւոյ անփոյթ

վիցին զանուանս նոցա տոնել յիշատակութեան օր՝  
ժանի յեկեղեցւոյ : Դու ո՛ հայրենասէր փութացիր  
՚ի սենեակ և ՚ի տաճար սրախ քո տօնել և յիշատա-  
կել զնոսա ընդ տօնելի սուրբան . յորժամ տեսանեռ  
զգերեզմանս հայրենանուէր սրբոցդ քոց՝ ՚ի փոխարէն  
երախտեացն եթէ չկարես տաճար, մատուռն, գըմ-  
բէթ և խաչվէմ կանգնել ՚ի վերայ, աղօժեա առ-  
գերեզմանաւ նոցա հայցերով ՚ի Տեառնէ զխազա-  
զութիւն զիբկութիւն և զինութիւն հայրենեացդ :

12. Ոհ, ՚ի վաղճանէ Դրիգոցի Ցաթեւացւոյ մին-  
չեւ ցայսօր անցին ամք հետ, յորս անուանք տօնե-  
լի սրբոց շանցին ՚ի Տօնացոյց և յեկեղեցի մեր :  
Հոգեւոր Տէրն Հայատանի ընդ եպիսկոպոս և  
ընդ վարդապետ իւր միշտ վայթ յանձին կացի  
քննել զվարս և զսրբութիւնս վաղճաներոցն, եթէ  
գոցի ՚ի նոսա ոք . որոյ գործք և հաւատք վկայեն  
զսրբութենէն նորա, դասեսցեն ընդ սուրբս և ընդ  
սիրելիս անուան Աստուծոյ, և ամսն զի Եկեղեցին  
մեր հաւատայ ըստ Առաքելոյն թէ՝ հաւատացեալք  
միշտ անին ՚ի սրբութիւն Աստուծոյ, և արդարա-  
նան ձրի շնորհօքն Քրիստոսի, և թէ սրբութիւն  
չէ երբէք դադարեալ ՚ի յեկեղեցւոյն մերմէ, և  
մի դադարեսցի ՚ի յաւիտեան : Նախքան զամս 21  
վաղճանեցաւ Աստապատցի ճգնաւոր Գէորգ վարդա-  
պետ ՚ի Ամս անապատն, որոյ ճգնութեան և սրբու-  
թեան վկայք մինչեւ ցայսօր կենդանի են : Սպա-  
սէս նախ քան զամս 12 վաղճանեցաւ Պօլսեցի  
Ստեփան վարդապետ, այր սուրբ և արդելավան  
ճգնաւոր . զոր տեսաք իսկ աչօք մերովք և վկա-  
յեմք ճշմարտութեամբ, թէ ե՞ն արժանի դասիկ

Դի կարդա տօնելի ճգնաւորացն, զի վարք սոցա բառ  
զում մասսամբ, ք առաւել էին քան զեգիպտացւոցն,  
զի եթէ յաջողեսցի մեզ հրատարակել զվարս Գէորգ  
ճգնաւորիս, անտի ՚ի միտ առցեն բարեպաշտքն  
զհաւաստին, Միթէ չեհա՞ս ժամանակ, զջ. Ներսէս  
կաթողիկոս աշտարակեցին՝ պաշտպանն հայրեննեաց  
տօնել յեկեղեցիս, նոյնպէս զիաշատուր վարդա-  
պետն իւշքիլիսայու, զօրմէ ՚ի վեր անդը ՚ի գլուխ  
վանօրէից յիշեցաք: Ո՞հ, ՚ի միջոցի հետ ամի թէ  
որքան սուրբք առաքինացմն յաշխարհի մերում  
և նահատակեցան, բայց ոչ տօնեցան: Զի ՚ի ճառու  
սրբոց և նահատակաց գրեալէ: թէ Տանոսէն ու է  
չի իւս ՚ի գոակոց մարդկուոց, ուսոնց հանէց և ուսնընաց,  
ոյլու հունու նոցին քառոց: Եւ սիրողաց տօնից տերու-  
նականաց վարձք բազում են յերկինս: զի զուար-  
թնոց հրեշտակաց լինին պարակից և ուրախակից,  
որք են անդադար օրհնաբանողք Աստուծոյ:

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ Գ .

Ա Խ Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

4. Ի յաղօթելն քում՝ յորժամուղին երեսք քո  
ընդ Արեւելս, յիշեա զհայրենի աւանդութիւն քո,  
զի ասեն թէ ՚ի յեղեմավայր բուրաստանէն արտաքս  
անկերալ Ադամանց՝ բնակեցաւ ՚ի յարեւմուտ կոյս  
դրախտին, ըստ գրոյն թէ «Եհան Շնոս Տե՛ Աստուծ  
և բնակեցոց յանդէման դրութիւնն էստիւթիւն»: Անդ Ադամ  
և կին իւր անձկայրեաց որտիւ դարձուցեալ զերեսս  
հայէին ընդ դուռն և ընդ ճանապարհ դրախտին.  
որ յանդիպոյ անկանէր աշաց նոցա յարեւելից կու-  
ռէ, և առէիր, իցէ թէ յաւելցուք հայիլ և տեսա-

Նել զգայելըութիւն Տեառն Աստուծոյ և Դրախտին,  
և ոչ կարէին , զի Սէրովբէք շուրջանակաւ պահէին  
զմանապարհ ծառոյն կենաց և Դրախտին . ուստի  
անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց աղօթու և պա-  
զատանս մատուցանէին առ այն որ կարող էր կրկին  
արժանի առնել զնոսա տեսանել զվայելըութիւն  
Դրախտին : Ուստի Հարք մեր ամենելքեան որ բնա-  
կեցան յանդիման Դրախտին , ուսան յաղօթելն  
իւրեանց դարձուցանել զերեսա իւրեանց յԱրեւելա-  
թաղէոսի և Բարդուղիմէոսի եկեալ 'ի Հայաստան  
կրկին նուիրագործեցին զաւանդութիւնո , զի ոչ  
միայն պատուիրեցին ըստ նախնի աւանդութեան  
յերեսս ընդ Արեւելս աղօթել , այլ զտաճարս և  
զեկեղեցիս կանդնեցին յանդէպ Արեւելից . զորս  
տեսանեմք ցայսօր յայխարհի մերում . որբաղան ա-  
ւանդութեան Նախահարց և Առաքելոց մերոց հե-  
տեւողք են ամենայն հայրապետք և ժողովուրդ-  
մեր իրեւ հաւասարիմ աւանդապահնք :

Զ. կարի սրաանմիկ է աւանդութիւնս . զի ա-  
ւանդեն հարք մեր թէ 'ի շինել զջապանն ուրագք  
և սղոցք ձայն արձակէին թէ ահա դայ ջրհեղեղ ,  
փութացարուք 'ի տապան ապրեցուցանել զանձինս ,  
իսկ լողայն ծաղը արարեալ դգործս տապանին  
և զձայն ուրագին և սղոցին , անդոսնէին զարդարն  
Նոյ և ասէին այս այս յիմարեւողէ և չգիտէ , զինչ  
գործէ . չէ ասեն ծով 'ի միջի և ոչ հեղեղ 'ի վե-  
րաւստ . ուստի «Ուստէին և ըմպէին , կանայս առ-  
նէին և արանց լինէին , մինչեւ եմուտ Նոյ 'ի տա-  
պան և ոչ դիասցին և եկն ջրհեղեղ և կորոյս դառ-  
մենեսեան» : Զձայնատուք մայսն կոչնակի : զոր

Ժամանարին հարեւալ՝ կոչէ զժողովուրդն յեկեղեցի  
նախնիք մեր առեալ են յաւանագութենէ փոյտիցն  
Տաղանին, զի ասեն թէ աղոցին և ուրագին դիպեալ  
՚ի փոյտն՝ ձայն հանէր և կոչէր զմարդիկն՝ ՚ի Տաղան,  
այսովէս դիպեցուցեալ մեր զթակն՝ ՚ի կոշտակնի կո-  
չեմք զժողովադն՝ ՚ի յեկեղեցի որ ճշմարիտ օրինակ  
է տաղանին Նոյի ել ՚ի քաղաքս, ՚ի գիւղս, ՚ի  
վանս և յեկեղեցին և աւել թէ որպիսի ջերմ սիրով  
պահի աւանդութիւնու այս, զի առանց հարկա-  
նելոյ զիայտն ժամանարին ոչ ժողովին յեկեղեցի  
և ոչ աղօթեն, իսկ ՚ի լսել ձայնին՝ ամենենքեան  
փութան, ժողովին յեկեղեցի և աղօթեն՝ Նարե-  
կացին իրբեւ միրահար ձայնի փայտիս ՚ի ԴԼ, զր-  
ներբողէ զիայտն ժամանարին, որոյ սկիզբն է ։  
զիայտն զին բորնքուն մայն հարդառներ ։ որը եթէ  
ընթեռնուցուս, միրահարիս և դու ։ ի սոյն ձայ-  
նահարութենէն ասէ բարիանայ թելիքը, սարսին և  
սասանին դեւք Բայց այլազգիք բիւրիցս առաւել  
բարկանան սարսին և սասանին ՚ի ձայնահարութենէ  
փայտիս ։ Ուստի բռնանան խորտակել զիայտն,  
հարուածս և հալածանս յարուցանին ՚ի վերայ ջեր-  
մեռանդ ժողովրդոց, զօրոց եթէ պատմեցուք  
ստուար մատենից պէտու ոնիմք, Ցէր տեսոցէ և  
դատեսցէ ։

ի տօնի Այլակերպութեան ։ որ յաւուր վար-  
դավառի յորժամ պատարագիչ քահանայն եղանէ  
՚ի թափօթ, աւանդութիւնն է նախնեաց, զի սար-  
կաւագ կամ դպիրն զկոնք մի լցեալ ջրով ընթա-  
ցեալ առաջի ժամարարին՝ վարդեփունջ ծաղկօք  
պահէ ջութ ՚ի վերայ ժողովրդեան ։ յուշարար ա-

ւանդովթիւնս 'ի յաւուրց Նոյի և Հումանորչի եկէ-  
եալ հասած առ մեզ :

4. Զհանգէս Զրօրհնեաց, զոր յաւուր Յայտնու-  
թեան Ցեառն կատարեմք, առանդեցին Առաքեալք  
առնել յօրինակ մկրտութեան Յիսուսի 'ի Յորդա-  
նան. 'ի քաղաքն Հայաստանի, ուր գտանին գետք՝  
Ելանն առ ափն գետոյն եպիսկոպոսն քահանայք  
և ամենայն բազմութիւն ժողովրդոց, օրհնեն զջուր  
գետոյն, հայրապետն թափէ զմիւռոն սուրբ 'ի  
գետն, յօրինակ Հոգւոյն սրբոյ աղաւնակերպ իջ-  
մամք 'ի վերայ Յիսուսի, արկանէ զիսաչ մի 'ի Ջուր,  
յօրինակ մկրտութեան նորա 'ի Ջուրսն Յորդանա-  
նու. և այդ մի բարեպաշտօն 'ի ժողովրդենէն յա-  
ռաջ եկեալ իբրեւ Յովհաննէս մկրտիչն կարգի 'ի  
Հայրապետէն կնքահայր և հանէ զիսաչն 'ի Ջրոյն.  
յօրինակ Ելաննելոյն Յիսուսի 'ի Ջրոյն «Բանաւ երինէց  
և քու յանին Հօր նե դու և ուրիշ է սկըսէ քու լուսաբռնու» է  
իսկ ժողովրդեան լցեալ անպատումուրախտութեամբ  
զիմէ լուանալ Ջրով վերեսս. և համբուրել զի-  
ֆաչն : Դպիկր Եղանակին «ԱՌ զարհանուի Խորհուրդն  
այս մէջ յայտնեալ՝ որորին Աստուած 'ի Յորդանան եկեալ՝  
կունէց մէրդէլ 'ի ծառապէն իւրիշ առանցք կորողիտ շմբուն 'ի  
յանին . . . : Նոյնապէս երգեն «Աւոր յոյն հայրական յեր-  
ինէց իւնու հաճոյութու և այն» :

5. Մ'հ, յաւուրս շինութեան և միասաւորու-  
թեան Հայաստանի Հարք մեր յոյժ մեծահանդէս  
մասսուորութեամբ կատարեին զԶրօրհնէքն, զի յոր-  
ժամ լլ. Դրիգոր մերձ 'ի Բագաւանի զգեան Եփրամ  
օրհնեաց աւազան մկրտութեան արար զնա բար-  
դանանու, 'ի ժամ մկրտութեան Տրդառոյ, և ամե-

առաջն տան նսրտ ։ Նախարացն և 150,000 բազմութեան ժողովրդոց, սիւն լուսեղին կամարաձեւ ծագեցաւ 'ի վերայ Եփրատայ, և 'ի լուսոյն խաչ կազմեցաւ 'ի վերայ ջուրցն . որոյ պտոյտ առեալ շուրջ զմլլոտելովքն՝ արդելաւ 'ի յընթացից իւրոց 'ի յետ կոյս : Դրէ Հաստիվերտոցին ականատես և Ռւբհայեցին թէ 'ի թուականին 1022 յորժամ եհաս օր մկրտութեան Ցեառն , հրաման ետ հայրապետին Պետրոսի Վասիլ' ըստ աւանդութեան Հայոց կատարել դհանդէս Զրօրհնեացն 'ի գետն Պոնտոսի (Տրապիզոնի) : Անդ 'ի յօրհնել հայրապետին զջուրն «Եւ եղեւ (ասեն) սքանչելիք իմն 'ի ժամ օրհնութեան , զի 'ի Խաչակնքել հայրապետին զջուր գետոյն կենաց վայտիւն . զոր ընդ իւր ուներ, առ Ժամայն հանդարտեաց գետն յընթացից իւրոց վայրմի , և 'ի հեղու զտէրունական իւզն՝ ճառագայթք լուսոյ հատան 'ի ջուրց . զոր տեսին առ հասարակ ամեննեքեան : Ընդ որ կարի զարմացեալ Վասի կայսեր իւրովքն հանդերձ՝ մեծարեաց զհայրապետն , և ապա բազում պատուով արձակեաց զնա : Ըստ Ջրոյն Եփրատայ և գետոյն Պոնտոսի ամենայն գետք Հայաստանի օրհնեցան և սրբեցյան 'ի սրբոց հայրապետաց մերոց և սքանչելեօքս զնմանութիւն Յորդանանու յինքեանս բերին , բայց աւազ զի այժմ անթրիատք սրտիւք պղծեն զսուրբ և զմաքուր ջուրմն նոցա . . . :

Յ. Ի Փետրվարի ՃԳ . յերեկոյին 'ի կատարել զնախատօնակ Ցեառնընդառաջի . հուր լուցյանեմք յեկեղեցւոջ , և ասեմք զտաղն «Բէնէուս» քուսաց նու բուռու այսէք նիւու յընծայումն , կորուրելով նո զընիւս ժու

առաջնային քաղաքականությունը՝ կոստել կուսախնդիրիամու. Եյ յայրն Բեղլեհեմի՝ պահէ զաւուրս քառասուն ըստ օրինացն Մովսէսի, և ՚ի լրանայն՝ գդիշերայն Մարիամու. և Յովանեփայր առեալ զմանուկն Յիսուս՝ տանէին ՚ի Տաճարն յանդիման առնել Տեսառն. և զի հայր նորա և մայրէին աղքատք, նոյնպէս և բարեկամք նոցա, որք առ ՚ի չդոյէ խզոյ և մոմի, վառեցին զհուր և ընթացան զկնի Յիսուսի և ասէին յմիմեանս զճանապարհայն թէ Տէր ընդ առաջէ, և որք տանէին զՅիսուս, ձայն ետուն նոցա և ասեն Տէր ընդ այս է: Ուստի աւանդեցին նախնիք լուցանել զհուր ՚ի միշատակ քառասունօրեայ, ՚ի տաճարն : Բնակիչք Հայաստանի՝ որք միշտ հաւատարիմ աւանդապահք են, ՚ի տեղիս տեղիս զմուս և զյապաերս իւրեանց ՚ի հրոյն եկեղեցւոյ լուցեալ իբրեւ օրհնութիւն ինչ տանին ՚ի տունս իւրեանց, և լուցանեն զհուրն տանց իւրեանց. զի առ հասարակի բնակիչք քաղաքաց և զիւղիցն Հայաստանի յետ մտանելոյ արեգական՝ ելեալ ՚ի տանիս տանց իւրեանց՝ լուցանեն զհուրն, և հանդերձ ընտանեօք և որդւովք առնեն ուրախութիւնս մեծ, և եթէ իցէ ՚ի տան նոր հարսն և փեսայ, կալեալ զձեռանէ միմեանց շուրջ դան զհրովիս և քահանայն ասէ ձայնիւ զյարական «Աւետիւնն ուրբաթեան»: Ի բազեշ և ՚ի Մուշ տեսի զի այլազգիք տեղոյն հետեւելով աւանդութեան Հայոց՝ ելեալ ՚ի տանիս լուցանեն զհուրն Բայց այլազգիք վասպուրականի սարսելով վակեն գդրունս և զերդս տանց և մտանեն ՚ի ներքս, զի մի տեսցեն զըսյ հրոյն և վտանգեցին ՚ի պատուհանէ ինչ, Աւանդութիւնն եք ՚ի յերեկոյիս իւրա-

քանչիւրոց ունել 'ի ձախոյ ձեռէն դժոմմ մի . և յա՞  
ջոյ ձեռին զգմելին , և սպասել բանի աւետարանին  
որ ասէ «Ե- + Է- անյն անցյե սուր» զայս լուեալ 'ի  
բերանոյ քահանային խակ և խոկ կարէին դժոմմն ընդ  
մէջու խակ այժմ՝ փոխելով զհին աւանդութիւն նախ-  
նեաց 'ի տեղիս տեղիս փոխանակ լուցանելոյ զհուր,  
զերիս մասն միայն լուցանեն յեկեղեցւոջն :

7. Զգահնա առաջաւորաց ծովագահել աւան-  
դեցաւ 'ի սրբոյն Գրիգորէ . որոյ ելեալ 'ի վիրապէն  
պատուիրեաց այսահարերոցն զհինդ օրն անսուա-  
զութեամբ պահել զի բժշկեսցին . ուստի սովորեցան  
ոմանք մինչեւ ցայսօր զհինդ օրն ամբողջ ծովա-  
պահել , զօրս աեսաք աչօք մերովք 'ի կրօնաւորս  
Աստ և կոտուց անազատին , եւս 'ի ծերս և 'ի կուսանս  
գիւղորէից Հայոց : Ի կիւրակամուի բուն Բարեկեն-  
դանի զերես սեղանոյն ծածկեմք վարագուրաս ,  
յօրինակ արտաքսման Աղամայ 'ի Դրախտէն . վսեմ  
և սրտաշարժ է աւանդութիւնն , զի տխրագին ցաւս  
տպաւորէ 'ի սիրտս բարեպաշտից և ապաշխարո-  
ղաց , որք գոգ թէ զհաւասար կիրս տրտմութեան  
Նախահօրն կրեն 'ի սրտի , որ է սկիզբն ապաշխա-  
րութեան :

8. Ի Մաղկաղարդի , «Ի Ե ԿԸ աբհավնեաց , յառա-  
ւոտուն զոստու և արմաւենիս բերեալ 'ի ծառոց՝ ըստ  
ծերոցն և ըստ մանկանց Երբայեցւոյն 'ի ձեռին ու-  
նելով ելանեմք 'ի թափօր իբրեւ ընդ առաջ Քրիս-  
տոսի , և ծափաձայն ցնծութեամբ ուրախանամք  
յոյժ յոյժ : Ի դիրս կանոնաց Յովհաննու կաթողի-  
կոսին Հայոց 'ի կանոն իդ գրի այսպէս , « որպէս  
և 'ի գալստեանն աւուրին ուսում (սոսո) բառնալ :

և ճաճանակու շարժել զնանութիւն բերելով մանականցն Երբայեցւոյ ծափելոյն և ոստու մասաւցանեւը , զի և աշխարհիս մերոյ մարդկան և ամենայն Քրիստոնէից աւանդութեամբ կաղեալէ զնոյն ։ Մերք զճաճանակու տեսաք . և ՚ի աղայութեան ձեւ ուօք իսկ շարժեցաք ՚ի մէջ եկեղեցւոյ իսկ զծափաւ հարեն ամսոք բնակառաջ արդիլեալէր ՚ի յառաջնորդաց . իւյայսմ Երեկոյեան զթանբացէ քին կատար բեմք զիսորհրդաւոր զաւանդութիւն , որ զմիւսանագամ զամ զայստեան Քրիստոսի , և զկատարածի աւուրն բերէ զօրինակն . մուտ այսօր յեկեղեցին , և տես զջերմ սարաւորութիւն ՚ի սիրու քո , որ ՚ի սուրբ և մասմ արարողութենէօ տպաւորի :

9. Ի յաւագ Երեքարամթի աւուրն կատարեալ զյիշատակ Տան հաւանացն . ՚ի յերեկոյեան , յոր ժամ ընթեռնու զաւետարան տասն կուսանաց . ոդիք տասն ՚ի մանկանց եկեղեցւոյ զգեցեալ զշապիկս , և ունելով մամ ՚ի ձեռնին՝ պարագեալ կանգնին առաջի գրակալին մինչեւ ցտւարտ աւետարանին , ՚ի յօրինակ տասն կուսանաց գործ առնեալ շլաղուերս նէն ընդ առաջ քեսային , հէնդէ ՚ի նոցանէ իւսաւ պասն + նէն և ճիշդը յի ժարդ + ։ Ամօք ինչ յառաջի խուզմն յիմար իմաստուն դբեալ՝ բաժանէին տղայոց , որոյն թուզմն յիմար պատահիցէր + լուսարայն ապատակ մի հանէր յերեսն և ՚ի բաց վարէր :

10. Ի մեծի Աւագ հինգշարամթի ՚ի յերեկոյեան ժամուն տեսանեմք զիսորհրդաւոր հանդէս Ռորն բուային , յափշտակիմք մոտոք ՚ի վերնատուն ընդ առաջ Քրիստոսի , որ ափածեալ զդենջակ , սուեալ զիսնք մի , խոնարհեալ յոտս աշակերտաց , լուա-

նայ զուսո հողեղինաց, և ասէ եւթէ և Տեր և Հոգ  
ուսպետ լուսոց շուրջ յէր և բռու միւսոնց շուրջ և  
վ և առնասէ մ երա յեւ, որպէս և յէլ որոք և բռու  
միւսոնց առնէցէ»: Ուստի Հայրապետն կամ Եպիս-  
կոպոսն ըստ օրինակի Տեառն խոնարհեալ լուանայ  
զոտո կրտսերացն և փոքրունցն: Աւանդութիւն կա-  
լաւ եկեղեցին մեր ՚ի յիշատակ իւղոյն Մարիամու,  
որով էօծ զՃէրն, իւղ բաժանել լուացելոցն և ժո-  
զովրդոցն, որոց առեալ զիւղն՝ օծանեն զգլուխոն  
ասելով «օնք իւղ զէլուին է»: Ի Հայաստան ՚ի  
տեղիս տեղիս օծանեն զհինդ զգայարանս, և ո-  
մանք ՚ի յիւղոյն տարեալ ՚ի տունս՝ գնենյամանս  
իւղոյ իւրեանց, որպէս զի օրհնեսցի և առատասցի:  
Բայց ՚ի կանոնս մեր աւանդի թէ ամենայն Եպիս-  
կոպոսեց հրաման էր իւղ օրհնել և բաժանել:

14. Զաւագ ուրբաթու զոխրական դիշերն հըսկմամբ և ուժգին պաղատանօք հանեմք 'ի գլուխյաղօթմն Ասոււծոյ, զի օր չարչարանաց Տեւառն է Զպատկերն խաչելութեան 'ի վերայ սեղանոյն զմեծ մոմմի տապաֆի պատկերին, երկոտասան եւս փոքր մոմ, վեցն աստի յաջմէ, վեցն անտի 'ի ձախմէ մեծի մոմին լուցեալ՝ յօրինակ Յիսուսի և Երկոտասանիցն ։ Զմին 'ի մոմոյն սեւեմք յօրինակ Յուգայի մասնչի, և ասելով Այսու անհան, և զողբաձայն սաղմոս, կարդամք զմատնութեան, զչարչարանաց զվեց գլուխ աւետարանո, 'ի յաւարութրաքանչիւր գլխոց շիջուցանեմք զերկու մոմն, զմին աստի, և զմիւմն անտի մինչեւ ցմուանի միոյն, որ նշանակէ միայն մնալոյն Յիսուսի, իսկ շիջուցեալքն նշանակեն զփախուսոն Երկոտասանիցն, որք թողին

պթիսուս միայն և ինքեանք փախեան : Խոլ յորժամբ  
 երգեմք դժէր երկնից շարական , թաղուցանեմք  
 զմնացեալ մեծ մոմն , և մինչ վճարի Փռու ՚ի բու-  
 յուսն երբն . առաջ հանեմք արտաքս , այս է յիշա-  
 տակ խաւարման արեգական , և թաղման մարմնոյն  
 թիսունի , յորս ծէր սակաւ ինչ ծածկեցաւ , առա-  
 յարեաւ և իրրեւ արեւ ծագեցաւ աշխարհի : Ի Հա-  
 յաստան երկաթագործք և դարրինք զցայդն այսմ  
 աւուր խալառ դատարին ՚ի կուերց զերկաթն , դէ  
 ասեն թէ՛ յայսմ աւուր կուեցան և շինեցան բեւեռոք  
 խացին Քրիստոսի , զի որ կուէ զերկաթն , շինէ զնոր  
 բեւեռոս Քրիստոսի Յայսմ աւուր բազումք ուտեն  
 զուս զսիսոր և քացախ , որովք ասեն առաւել  
 կոկծի սիրտ Յուղայի մատնչի և այն : Ի տանե-  
 րորդ ժամու երեկոյեան ժողովեալ կատարեմք  
 զկարգ թաղման թիսուսի պարառեալ առաջի պատ-  
 կերի թաղման նորա , իրրեւ շուրջ զգերեզմանաւն  
 երգեմք նմա ՚Պարբեւառան անեցուն . որ ՚ի Աահա-  
 կայ պարթեւէ յօրինեցաւ ՚ի պատիւ թաղմանն  
 Տեառն : (Ի Պօլիս զգերեզման շինեաւ՝ ՚ի թափօր  
 հանեն , այս չէ աւանդութիւնն նախնեաց մերոց  
 այլ ՚ի Յունաց է ներմուծեալ) Այսօր ՚ի բազում  
 տեղիս Հայաստանի երթան ընտանեօք հանդերձ  
 ՚ի գերեզմանն ննջեցերց իւրեանց յիշեն զնոսա ա-  
 զօթիւք քահանայից , որոք աղքատաց , և խունկս  
 անուշ ծխեն ՚ի վերայ գերեզմանի նոցաւ Զի Յիսուս  
 յիշերով զմեռեալմն՝ ընդ մեռեալս համարեցաւ ,  
 ընդ մեռեալս թաղեցաւ , և մեռելոց հոտ անուշ  
 և բուրումն անմահութեան խնկեալ՝ Աստուածու-  
 թեամբ զրազումն ՚ի նոցանէ այսօր եհան ՚ի գերեզ-

մանաց : « Քո շատ մարդկան ննջեցնեց ոքնոց յարեան . և  
յիս յորութեան նորա մոխն'կ ժաղան սուբբ . և երեսեցան բոլո  
հաց : Ահա աւանդութիւնք , որք կի յանապական  
ազգերեն վարուցն Քրիստոսի բղյան , որք բազում  
հոգեշահ և յորդորական ճառից պէտս ունին :

42. Ի յԱւագ մեծի շարաթի երեկօյն . որ և ձրտ  
դալցոց ասի , 'ի հին աւանդութենէ առեալ զկար-  
մրաներկ հաւկիթս տանէին յեկեղեցին , և ցոյց  
տուեալ պատարագին տանէին 'ի տունս իւրեանց,  
և այնու լուծանէին զարահս իւրեանց : Նշանակէր  
զարիւնաներկ կարմրացեան Յիսուս . որ իրեւ  
զհաւն Մովսիսական օրինաց արեամբ թամաւեալ  
գնաց 'ի լեառն Գոզգութայ , այնչափ ներկեցաւ 'ի  
վերայ Խաչին մինչ ոչ գոյր նորա տեսիլ . և զի ա-  
րիւնաներկեալ մարմնով յարեամ . 'ի գերեզմանէն  
իրեւ զհնձանահար . Ռւստի հարցանէր զնա ե-  
սայի վասն է՞ր կարմեր են ձորձք քո իրեւ հնձա-  
նահարի լիոյ հնձանի կոխելց : — Հնձան հարի  
(ասէ) . և զամենայն հանգերձա խմ թամաւեցի :

43. Ի մեծի միաշարաթի Յարութեան Յիսուսի,  
յորժամ զյետին տուն Տէր երկնից շարականին եր-  
դեմք ասելով «Եւ գիրկս արկեալ միմեանց սիրով .  
և միարան ասանցուք Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց »  
ամեններեան համբուրեմք զմիմեանա ասելով . Չեւ  
և մշշ մշշ առերի + Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց » : Ամենայն  
ընդունելութեան է արժանի աւանդութիւնն ։ զի  
բովանդակ սէր և խնդութիւն բղյան 'ի նմանէ :  
այսպէս 'ի յԱռաքելոց աւանդեցաւ երթալ յայց 'ի  
տունս միմեանց , և աւետել թէ Քրիստոս յարեաւ  
'ի մեռելոց . զի կանայք իւղարերք տեսեալ գյու-

զուցեալն ՚ի մեռելոց զօհսուս , առին հրաման ՚ի  
 նմանէ երթաղ աւետիս տալ Առաքելոցն , թէ Քրիս-  
 տոս յարեւաւ . ՚ի մեռելոց , իսկ ՚ի Ծննդեան հրեշ-  
 տակը և հովիւք եառն աւետիս մարգիանց թէ  
 ծնաւ ձեզ օծեալն : Վասն պատրիկ պատուէր եզեւ-  
 քահանայից երթալ ՚ի տունս ամենայն ժաղովութոց  
 իւրեանց և աւետել զօհարութիւն Տեառն , զի Յի-  
 սուս յետ Յարութեան ասաց աշակերտաց Շնացէք  
 աւետեցէք , քարոզեցէք , և մկրտեցէք : Ի կա-  
 նոնադիրս մեր դրեալ է վասն քահանայից : «Եթէ  
 առանայ ՚ի Ծննդեան և Յարութիւն ու ուետորունեցէ ՚ի  
 պատահ ժողովրդոց , Եղիշէ նողիւնուն : Ահա այս է Ցոօրհ-  
 նէքն Քահանայից , զոր ոմանք ընկալեալ ամենայն  
 ուրախութեամբ՝ լոեն վաւետիսն Յարութեան և  
 ցնծան . իսկ ոմանց չդիտացեալ զրուն պատճառն  
 արտմին , տրտնջն և անդամնեն զքահանայս :

Առ ի տօնի Վերափոխման Աստուածածնի ա-  
 սանդեցաւ ՚ի հայրապետաց մերոց օրհնել զիսա-  
 զողն : Ի պատշաճի աւուր , յորում զանթառամ ծա-  
 զիկն , զծիռն օրհնութեան , և զողկոյզն ուրախու-  
 թեան զկոյզն Մարիամ տօնեմք և օրհնեմք զող-  
 կոյզն , յորմէ անարատ արիւն Յիսուսի ճմիցաւ ՚ի  
 խաչին՝ անոպաս յուրախութիւն արտմեցելոց , զի  
 ՚ի կողահոս անապական աղբերէն արրոյց աինզերաց:  
 Այսօր օրհնեմք զողկոյզն , զորոյ արիւն Յիսուս վո-  
 խանակ արեան իւրոյ ետ մեզ մսելով «Արքէք ՚ի  
 սմանէ այս է արիւն իմ ։ Խաչիւ աւետարանաւ և  
 աղօթիւք օրհնեմք և սրբեմք զիսազողն , զի մի իբրեւ  
 զմասակար ինչ՝ անիծից և արտմութեան պատճառ  
 լիցի հաւատացելոց , այլ օրհնութեան և ուրախու-

թեան, զի նոյ ՚ի Հայաստան անկեաց այգի, արբեցաւ ՚ի գինւոյ, տրամեցաւ և անէծ դբանան, ուստի օրհնեմք զի իրբեւ օրհնութիւն ինչ վայելեսցեն հաւատացեալքն, և մի՛ արբեսցին նովաւ իրբեւ դարբեալսն, և զանէծս հանցեն ՚ի բերանոյ խրեանց, որպէս լի հանապազօք ՚ի բերանոյ արբեցողաց ։ Թուի թէ Նոյ յայսմ միջոցի էարբ . զի ողկոյզք Հայաստանի յառաջ քան զտօն վերափոխման միշտ տհաս են, և հաղին ուրեմն հասունանան ՚ի տօնիտ Ամենայն գաւառք Հայաստանի ՚ի հին աւանդութեանց առեալ՝ ոչ երբէք ուտեն զիսաղողն յառաջ քան զտօն վերափոխման իրբեւ արգելեալ պտուղ ինչ . և յետ օրհնութեան ապա օկսանին ուտել :

15. Յաւուրյիշատակի քառասուն Մանկանց, որք ՚ի Սերաստիա ՚ի լճին սառուցելոյ կատարեցան, աւանդեցաւ ՚ի յիշատակ երանեալ վկայիցն զքառասուն կանթեզս վառել յեկեղեցին. և կամ զկոնք մի ընուլ ջրով զքառասուն մոմս լուցանել ՚ի միջյ կոնքոյն : Կարի սրտաճմիկ և շերմեռանդն է արարողութիւնս, յորժամ ՚ի յիշատակէ աստի ՚ի միտ առնումք թէ վկայք քառասունք միաբան վաճառիցն բրիստուի ժուժկալեալ համբերեցին ՚ի դժընդակ սառնամանիս լճին և չեւ եւս ընկալեալ զկատարումն զպսակս լուսեղէն ընկալան ՚ի պսակողէն Քրիստոսէ . Ներմեռանդք ՚ի տօնի քառասնից . քառասուն անդամ քառասուն ծունը կրկնեն առաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր :

16. Յուշ արարից քեզ զկարի մարդասէր զաւանդութիւն նախնեացդ քսց, զԱնդաստանէն ասեմ, զսրոյ դնմանն չունին ոյլ աղդք Քրիստոնէից:

Երես ընդ Արեւելու՝ օրհնեմք զՀայրապետութիւն  
 Հայոց նշանաւ սուրբ խաչի, և սուրբ Աւետարանաւ,  
 և աւուրն շնորհիւն՝ յանուն Հօր և Որդւոյ և Հոգ-  
 ոյն արբոյ: Երես ընդ Արեւմուտ՝ օրհնեմք զամե-  
 նայն թագաւորութիւնս քրիստոնէից: Երես ընդ  
 Հարաւ՝ օրհնեմք զամենայն ամուստանս և զամե-  
 նայն պտղաբերութիւնս, և զամենայն երկիր: Ե-  
 րես ընդ Հիւսիս՝ օրհնեմք զամենայն վանքս, ա-  
 նապատս, քաղաքս և գիւղս, և զամենայն բնա-  
 կեալ ժողովուրդն 'ի նոսա: Ապա կրկին դարձու-  
 ցեալ զերեսս ընդ Արեւելու՝ տամբք զօրհնութիւն  
 Հօր և Որդւոյ և Հոգուոյն արբոյ: Ահա սրբազն ա-  
 ռանդութիւնք Հայաստանեայց: յորս զիք ինչ թիւ-  
 րութիւն կամ ծոռութիւն, այլ ըստ ամենայնի պարզ  
 անարատ, բաղում բարեպաշտութեամբ հաստա-  
 տեալ և ընկալեալ: իբրեւ ճշմարիտ և բարեպաշտ  
 Հայ մի՛ պաշարեալ դայթակղեսցիս ընդ խարրալիչ  
 բանս օտարաց, որք 'ի չարամոռութենէ յուղեալք  
 միշտ սովորեն ոչ միայն զայսոսիկ զաւանդութիւնս  
 աւելորդս համարիլ, այլ մինչ զի զէական զիսոր-  
 հուրդս եկեղեցւոյ արհամարին իբրեւ նենդող,  
 խարոզ և յափշտակող մտաց պարզամտաց: Արհա-  
 մարհողն եթէ Հայազգի է, ընտանի թշնամի և  
 թերահաւատ է. իսկ եթէ օտարազգի է, արդէն  
 յարակայ թշնամի է, որ կամի ոչ միայն դիսորհուրդ  
 և զաւանդութիւնս մեր այպանել, այլ ջանայ զեկե-  
 ղեցին մեր 'ի հիմանց տապալել. յորոց միշտ զգու-  
 շանալ պարտիմք իբրեւ 'ի վնասակարաց հաւատոյ  
 խղճի և մոտաց Արդ եթէ Հայրենասէր ոք ես, պինդ  
 կալ զաւանդութիւնս, որք առանձին, իբր էական

Եյասուկք են եկեղեցւոյ քո : Ամսն աւանդուաթեանցո շատ լիցին քեզ օրինակք եօթն որդւոց Շամունէի , և ծերոյն Եղիազարոսի . որք յանձն առին ընդունել զմահ քաջ անուամբ , քան թէ մեզանչել ընդդէմ հայրենի աւանդութեանն :

## ԳԼՈՒԽ ԺԲ.

ԼԵՐԻՆՔ ՀՈՎԻՑՔ ԵՒ ԱՆՏԱՌՔ :

## ՅՈԴՈՒԱԾ Ա.

ԼԵՐԻՆՔ

1. Հասաք 'ի մայիս 6 , 'Եյօրն Համբարձման Տերառն \* օր լերանցն Հայաստանի . ո՞հ , այսօր սէր Համբարձման , և սէր ամենածաղիկ լերանցն հրաւիրէ զմեզ 'ի լերինս հայրեննեաց . թեւօք հայրենասիրութեան թռիր 'ի քաղաքս և գիւղս Հայաստանի , տես թէ զիա՞րդ . այսօր ծերն եւ պառան թողեալ զիւրեանց մոթ ընակսարանս իրբեւ երիտասարդ երթան 'ի լերառն . Մանուկ , պատանին , երիտասարդն 'ի մի պար . պարկեշտ օրիորդն և հարսն ընդ մարց խւրեանց 'ի մի պար թռչն խոյանան 'ի գագաթու լերանց , անդ տեսանեն զիրախ տըն ընդ ըոլոր գեղեցկութեամբն իջեալ 'ի վերայ լերանց : Զի հովն սամն 'ի վերայ սպասակ ձեանց վազելով քեզ անմահութիւն չնչէ , չուրն 'ի քամուածոյ ձեանց և 'ի յաղթերականց վազս առեալ քեզ

\* ի 1871 ամին , թօն Համբարձման կատարեցաւ 'ի Ապրիլ 6 :

զկենաց բաժակ մասաւուակէ . Անդ յերբ ընդ վերընդվայր և չուրջ հայիս , զմայլեալ տարակուսիս թէ բիւրազան ծաղկաց զօրն առնուս և զորն թողուս , անդ ցանկաս ծաղիկ իմնել . 'ի պարս և 'ի բոյլս ծաղկանց խառնիլ , ուսափ զգլուխ քո և զբովանդակ հանդերձն քո դոյն զգոյն ծաղկօք զարդարեալ նստիս . 'ի մէջ ծաղկանց իբրեւ ընկեր և սիրահար ծաղկանց , անդ զձայն սոխակին լուեալ 'ի խոր զմայլիննէ նիբհեր , և ծաղիկք ծած անմամք հովանի առնեն քեզ . զի քաղցր 'ի քուն լիցիս :

2. Զքեզ հանեալ 'ի վերայ լերանց բարձանց , ու թողից իջանել անտի , մինչեւ դտցես անդ զցանկալին քո , եթէ ջրալից , ծաղկաւէտ և հովուասուն տեղիս խնդրես , տես 'ի մէջ լերանց . եթէ զհոյլս կենդանեաց , զերամն հաւոց թռուացելոց խնդրես , տեսցես 'ի մէջ լերանց . եթէ մթերս ուկոյ և արծաթոյ , և այլ զանազան հանքաց ծանօթից և անծանօթից խնդրես . 'ի մէջ լերանց : Եթէ այր առկաւապէտ , ժուժկալ և երկարակեաց խնդրես , 'ի մէջ լերանց . եթէ առողջ , առոյգ , ժիր , առկուն և քաջ կեանս խնդրես , 'ի մէջ լերանց . եթէ անմերզութիւն և մաքրութիւն վարուց և բարուց խընդրես , 'ի մէջ լերանց : Եթէ ուղիղ հաւատ յոյս և սէր խնդրես , 'ի մէջ լերանց . եթէ բնական հանճար և ոչիմութիւն խնդրես , 'ի մէջ լերանց . եթէ սրտեայ զինաշարժ և ճարպիկ որսորդ խնդրես , զամենայն խոկ դտցես անդ . 'ի մէջ լերանց : Եթէ զդրախան Աղինայ խնդրես , տեսցես անդ . 'ի լերինս հայրենեացդ :

3. Ի բաց կուցէք իտալոցիք , Արարացիք , և

Ղինացիք, և այլք . ՚ի զուր մի աշխատիք զԴրախտն  
'ի հայրենի աշխարհէն մերմէ , և 'ի բարձանց բիւ-  
րակեան լերանց մերոց յափշտակել . ճարտարու-  
թեամբ լեղուի և դրչի ՚ի հայրենիս ձեր լեր լերեւա-  
կայտթիւնս ձեր կարողէք զնոր դրախտ ինչ ստեղ-  
ծել , բայց ոչ զիւրակեան լերինո , և ոչ զնորա եւ-  
գետմական քառավտակ ապրիւրն երբէք կարող է ք  
յափշտակել ՚ի նմանէ , զի յորժամ պարապատելով  
'ի մէջ ըիւրակեան լերանց ՚ի վեր անդր եղանիցես,  
տեսցես զի՞ովէս որ ՚ի դադամանէ լերան զշորս  
'ի դետոցն քեզ ցուցանէ , որք են Նփրատ , Ե-  
րասխ , Տիդրիս , Փիասի , այն է Հորոն . որք բզիւե-  
լով ՚ի նիւրակեան լերանց Եղեմայ՝ ուռոգանէին  
զիրախան Աղ ամայ , և Եւ քեզ եւնեւ Յետելոյ ուռոգա-  
նէւ զշորակն : Եւ առօհ բայսնէ ՚ի առ ոռոշւ

4. Ա հ ճիւնադադամէ լերինքն հայրենի միշտ  
մարդասէր և հիւրասէր են , երինամբարձ Մասիս,  
պարծանք պարծանաց Հայոց բարձր Մասիս զնոյ  
դրդիսնորա և զամենայն կենդանիս իրիւր զիւր  
'ի յինքն ընկալեալ ապրեցոյց . Մասիս սիւն եզեւ ,  
Տէր ՚ի վերայնորա զհաշտութեան կամալն հաստա-  
տեաց և դաշնադիրն ատօրադրեաց , այլ եւս ջրհեռ-  
զեղաւ շապականել զերկիր : Մասիս պատարադին  
Նոյի աօտու անեղէն սեղաննէ , մարդկութեան խան-  
ձարուրն և օրրան . ընդ շուրջ բարերար լերանս  
ոյտմիկ աճեցան մարդ իկ , բազմացան , և լիին զեր-  
կիր : Պառաւունք Հայաստանի յոյժ սիրեն զիշասիս ,  
հողագնդի կեզրն և Հայաստանի սիրտ անուաննն .  
ահ , օրհնեալ պառաւունք , դուք որչափ սիրէք  
զձեր ձերն Մասիս՝ արժանի է . դուք գիտէք թէ

Ներանիս մայր է Հայաստանի , իսկ Մասիս հայրն : Եւ-  
թիտասարդք առաւել պարս էին սփրել , ա՛հ , է՞ր  
մոռացան զնա : Կոյեանք պիրելով զՄասիսն՝ երբէք  
՚ի նմանէ չհեռացան , այլ զիւրեւանց գերեզման՝ ՚ի  
ստորոտս նորա փորելով զբարձունս լերանց յաւեր-  
ժական կոթող անուանեցին ինքեանց : Հայկ սա-  
կաւ ինչ ժամանակ գէպ ՚ի Բարելոն գնացեալ հե-  
ռացաւ , այլ փութով անտի դարձ արարեալ՝ եկն  
բնուկեցաւ ՚ի միջաբաժնի Մասիս և Բիւրակնեան  
լերանց՝ ՚ի Հարք դաւառ : Աւատի թէլ բունաւորն  
պատճամ յզեաց առ Նախահայրն մեր թէ «Բնա-  
կեցեր . առէ . ՚ի մէջ ցրութեան սառնամնեաց  
(այսինքն ՚ի վերայ լերանց բարձանց հիւսիսակող-  
ման) այլ չեռուցեալ մեզկեալ զյրաւթիւն սառաւ-  
ցեալ քո հպարտացեալ բարուցդ , և հնազանդեալ  
ինձ՝ կեաց ՚ի հանգարտութեան , ուր հանոյ է քեզ  
յերկրիտ խմում բնուկութեան : Իսկ դիւցազն Հայկ  
պատճառաւորացն Բերդյ խստութեամբ պատառիս-  
նեալ յետա գարձուցանէ . — Ին դիւտացեր անմիտ  
բռնաւոր , թէ հոյուտատոն և ձիւնեղէն լերինք ժա-  
ռանդաւթիւն իմ է . թսզուլ զայնասիկ և ՚ի նոցանէ  
հեռանալ բանցանք և ոճիր . զգիամցես զի սառն  
և ցուրտ լերինք իմ դքո շերմ և զմեդ գագամին՝ ՚ի  
ցերկիր թաւայելով , և ցուրտ դիւտի քամ գե-  
րեզման պատրաստելով՝ ՚ի Հարք դաւառի ՚ի սառ-  
նամնիս Ներբովթ վերան թաղելոց է . այլ դի-  
տասիր թէ ցուրտ լերինք ինձ բերդ են , և սառ-  
նամնիք ինձ պարփակ , իսկ քեզ մահ և կորուստ :

5. Եղիշէ զՅ նախարարս յականէ յանուանէ յի-  
շելով առէ վասն նոցա «Սակայն ամեննեքեան ըստ

մարտնոյ են նախարարադունք, իսկ ըստ հոգեւոր  
առաքինութեանն ամենեցեան երկնային քաղաքա-  
ցիք . . . Նիզակակիցք և մարտակիցք քաջ նահա-  
տակացն (Վարդանանց): Եւ ամենեքեան սոքա կա-  
մօք մասնեցան ՚ի սուրբ կապանս չարշարանաց :  
Այլ մեք առ այժմ ոչ ընդ այս եմք միայն զարմա-  
ցեալ, զի կամօք չոքան մոփն ՚ի փորձութիւնն ,  
այլ առաւել ընդ այն եմք ոքանչացեալ զի մարդիկ  
վասփուկ իրրեւ զնոսա ընդ արձակասուն բնակիչք  
ձիւնեղէն լերանց եղէն բնակիչք խորշակարեր դաշ-  
տաց: Որ զօրէն ազատ երէոց շրջէին ՚ի մէջ ծաղկա-  
բեր լերանց, ընկեցան ՚ի բոցակէղ աշխարհն Արեւե-  
լից կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք: Հաց նեղու-  
թեան և ջուր կարօտանաց, խաւարարդել՝ ՚ի տունէ  
և անլոյս ՚ի գիշերի, անվիրարկուք և անանկողինք,  
գաղանար գեմնախչտիք լինէին զինն ամ և զվեց  
ամիս: Յորժամ զսէր նախարարացս որ առ հայ-  
րենի աշխարհս մեր՝ ընթեռնումք, մեք եւս սիրահար  
ինիմք լերանց . երբ մեք իրրեւ բնակիչք ձիւնե-  
ղէն լերանց ՚ի Բարեւական աշխարհն երթայցեմք,  
ընդ եղիշէի զարմանամք, թէ՝ զիարդ՝ այնչափ մի-  
ջոց ժամանակի համերել կարտցին ՚ի մէջ տօժա-  
կէղ աշխարհին, թուէր նախարարաց թէ՝ ՚ի դրախ-  
տէն զրկեալ՝ դեհենին մատնեալ էին , բայց Տէր  
զհայրենասէր իղձո նոցա պսակեալ դարձոյց ՚ի Հա-  
յաստան . որք ՚ի վերայ լերանց դարձեալ սկսան  
իրրեւ ազատ երէս շրջիւ:

6. Հայոց ազատ նախարարք թէ որպէս ազատ  
շրջէին ՚ի մէջ հայրենի լերանց , ահա խորենացին  
ողատոմէ + Յաղկերսո դնապուհ զորդ ի իւր թագաւոր

կացուցանէ Հայոց : Նախարարք մեր ոչ տան Շապէ  
հոյ զպատիւ արքայի , սա ՚ի խրախնձանս , ՚ի խաղս ,  
՚ի խնջոյս և ՚ի զրուանս որսոց կամի գողանալ զմիտո  
նախարարացն , մինչ զի եթէ հնար է հանել զնո-  
սա ՚ի հաւատոցն . «սակայն (ասէ) ոչ կարաց հա-  
ճել զմիտո նախարարացն , ամենեցուն ատեցեալ  
զնա , և ոչ որքայօրէն մեծարէին զնա յորս կամ  
՚ի խաղու : «իբ երբեմն զհետ երամնիաց ցռուց  
յանդնագոյնս արշաւեալ ընդ խորտարորտոնն և  
՚ի վիմուտ տեղիս , յորմէ կասել սկսաւ Շապուհ :  
Խոկ Ատոմայ Մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ , Գնա  
գնա , ասառածորդիդ Պարսից , թէ այր իցես . —  
Դու երթիջիր , զի ՚ի քարինս դիւաց է շահատակել  
Քարձեալ յայլում ժամու դիսպեցաւ . ՚ի շամբո կինջո  
որսալ հրով , և Շապուհ ոչ համարձակեալ ՚ի թա-  
ւուն քաջարշաւ լինել , մինչեւ յըջապատէր (զնա)  
հուրն , և նորա զհայեցուծն յերկուս բաժանեալ  
այսր անդը բերեալ լիներ երփարաւն : Միւսան-  
դամ ասէ Ատոմ , ասառածորդիդ Պարսից , ահա  
չայր քո և ասառած , ընդէ՞ր զանդիտես : Խոկ  
Շապուհ ասէ . թողեալ զկատակերգ՝ յանցանել  
ընդ հուր դարձո զքեզ , որ և ես զկնի քո . . . .  
Յայնժամ այզանեաց զնա Ատոմ ասելով . Մի թէ  
և այդ քարինք իցեն՝ զի ես յառաջեցից , և արդ-  
եթէ զու զլյոկացիս կոչես դիւազգիս , ես զստ-  
անեանդ կոչեմ կնամարդիս : Եւ մորակեալ զե-  
րփարն իբրեւ ընդ հովիտս ծաղկանց անցանէր  
ընդ հուրն՝ զերծուցանելով զՇապուհ :

7. Քաջք Հայոց ՚ի լերինս իբրեւ ՚ի դաշտս , յա-  
ռապարս իբրեւ ՚ի յարթու ճանապարհաց ընթա-

նային , և 'ի վիմուտ տեղիս իրրեւ յառապարհզի ձբարշաւ լինէին : Ահա քեզ Տրդ.ատ որ մեծամեծ քաջութեամբ տիրելով Հայոտանի , յարձակեցաւ 'ի վերայ Պարսից տիրել և իշխել 'ի վերայ նոցա , և վասն կորովութեամ՝ յաջազակ զինաշորժութեամ , և երագոտն արշաւանաց նորա իրրեւ յոփակերպեալ առակ իմմ ասէին վասն նորա հարք մեր թէ ւիճըեւ շնէին Տը բառ՝ որ ոչ ուշը ու ուշեաց զինաշորժութեաց , և շահեցայ իսէ Շ ոչ ուշը էւրում շորջան ծովաց մերինք Պարսից առաջի երագութեամն ոտիցն Տըրդ.ատոյ թուէին իրրեւ զիթումը գետոց , իսկ նորա յորժամ վաղեալ անցանէր ընդ բաղում գետու թուէր հոյոց , զի եթէ ծովք պատահէին առաջի ոտից նորա ցամաքէին նոյնէնայոյն :

8. Ահ , ո՛ լերինք Հօյրենի , վաղեմի յիշատակք ձեր յոյժ քաղցր են , ո՞ւր են արտեմօք ազատ որեարք մեր՝ որք նոխ ձեմէին 'ի վերայ բարձանցու , արդ՝ եթէ դուք զմեր քաջսն իրրեւ զիլուսա.աղդն 'ի յոյրի կաղեալ եք շդմայինք , արձակեցէք առմեզ : Է՞ր վասն օդն և ջուր ձեր վնոյն քաջաղունու ոչ սեռցանեն , երբեք ջոր և օդն ձեր կաթն եք առիւծու , և ընակիչք բարձանց ձերոց կորին առիւծու . որք յորժամ մոնշէին , յափշտակողք փախատական երթային 'ի մէնչ : Աւա՛զ , զարդ խայլք մէնչեն և յափշտին զմեզ և զլուստակու մեր ուտեն առողջի աշաց մերոց : Գաղաթն Մասիսի ետես երբեմն , զի քաջք իւր զքաջաց վրէժ խրնդրէին 'ի յօտարաց : Թէ որպէս Սիմ' կամ Սասուն լերանց ընակիչք համակամ և համադունդ ժողովեցան իմնդրել զպրէժ բագարատոյ իշխանին , զոր

Ազգուսէթ Հադարացին նենդութեամիտ կալեալյութ-  
եալէր առ Ամիրապետն : Զինեցան դինու , բաղ-  
մութեամիր յարձտկեցան յանկարծակի , սպանին  
զԱպուսէթ ոստիկան չարաշար և դրազմաւթիւն զօ-  
րաց նորա ցրուեցին : Ամիստ արութեան , և արին  
քաջութեան տեւէ և ամիրէ 'ի լեռնական Հայու մին-  
չեւ ցայտօր . կէսք 'ի լեռնականաց անուանի Հայ ,  
և կրօնիւք Քրիստոնեայ և կէսք աւանդութեամբ  
Հայ , իսկ կրօնիւք անաւարբեր , կամ իրը մահմա-  
տական : Մեծագոյն մասն մի 'ի բնակչացն Խու-  
թայ , Բանաշխնայ և Սամոնյ Երեւին իրը Մարք , բայց  
չեն , վասն զի ինքեան դիտան զհայերէն , անուա-  
նին Պատրանցիք , և ինքեանք առեալյաւանդու-  
թենէ՝ վկայեն վասն ինքեանց թէ իցնն Բագրա-  
տունիք : Տաւնք սոցա հաշոյն 2000 հազար , սո-  
քա ոչ Քրիստոնեայ են , և ոչ մահմատական , զի  
ոչ մկրտին , և ոչ թլպատին . երթան յուխտատե-  
ղիս Հայոց և պատուեն , խաչ գրաշմեն 'ի վերայ  
խմբոյ իւրեանց , և համբուրեն զանն Եկեղեցակա-  
նաց Հայոց , վասն քաջութեան ազատ են 'ի տրոց  
Ըստ այսմ են Աթոռկանցի կոչեցեալքն 'ի յարեւմանեան  
Երինս Բաղիչոյ մերձ 'ի չերինս Խութեայ :

9. Ինակիչք Միրանց Կոբուտաց կոչին Ոօժկցիք  
կամ Ոօշքոթանցիք , որ է Հայ անուանս Ռշտու-  
նիք , արք քաջք և պատերազմնզք , բայց վասն իս-  
պառ մոռանալոյ զիրօն Քրիստոնէութեան և զա-  
նուն ազգութեան , և մանաւանդ սագրեալք 'ի  
կրօնականացն Հագարայ նեղեն և հալածեն զթիքս-  
տոնեայ Հայու Աւազ , առ ստորոտով Բիւրակնեան  
չերանց բնակին Ճիւղրանցի կոչեցեալքն , որք չո-

լով ՚ի ցեղէն Մամիկոնեանց , զանուն նախահաւոյն  
 իւրեանց ձենադին պահելով և պատուելով կոչե-  
 ցին զինքեանս ձիովրանցի , որք են տունք հինգ  
 հարիւր , արք քաջք և երեւելիք , թողեալ զիրօն  
 և զարեան մերձաւորութիւն Հայոց , նեղեն և հա-  
 լածեն զնոսա : Սոյն չափ թաւով տունք բնակին  
 ՚ի լերինս Հարք գաւառի բուն Մամկոնիք կոչեց-  
 եալքն . (որք և ասին Համսանցիք) սոքա ունին  
 աւանդութեամբ , և պարծանոք պատմեն մինչեւ  
 ցայսօր թէ ինքեան են բուն Մամկոնեանք : Զա-  
 լալցիք առ սոորսատով լերին Մասեաց , ՚ի կոգո-  
 վիտ , և լեռուն Ծագիէ (այն է Ալա տաղին) բնա-  
 կին : Ճիշուանցիք , Մամկոնիք , Զալալցիք ՚ի մից  
 հօրէ են սերեալիք , արք քաջք և պատերազմադք,  
 բնակին ՚ի հովաստոն լերինս Հայաստանի . այլ ա-  
 ւա՛զ , զի ՚ի սէր ազատութեան և քաջութեան թու-  
 զին զազգն և զիրօն : Այսպէս բազումք ՚ի քաջաց մե-  
 րոց որք ՚ի ծագկաւէտ լերինս բնակեցան . այժմ տե-  
 սանես , զի իբր խորթ բնակին առ մեղ , կամ իբրեւ  
 օտարք եկեալ տիրեն ՚ի վերայ մեր , որք երբեմն իբ-  
 րեւ հեղեղք ՚ի դադախանց լերանց իջեալ նեղեն ,  
 յափշտակին և վիրաւորեն զրուն զազգ մեր , որ  
 վասն անզուգութեան և անսիրելութեան ՚ի բազում  
 ձուէնս բաժանեալ ՚ի բարձրութենէ իւրմէ խոնար-  
 հեցաւ և ապշեցաւ : Ուստի իբրեւ աւետարանիչ  
 Ոիօնի ելեալ ՚ի վերայ լերանցն Հայաստանի , բարձ-  
 րացուցանեմ զբարբառ իմ , Պատմեմ զմեղս ժողո-  
 վորդեան իմոյ : որ ոչ գնաց ամքիծ , ոչ գործեաց  
 զարդարութիւն , խօսեցաւ լեղուաւ նենդաւորաւ  
 և չար աշուար ընկերի իւրում : Ուստի ոչ կարաց բնա-

կել 'ի լեառն սուրբ նորա : Ալրդ եթէ լինիցի ձեռ-  
ոօք սուրբ , ամբիծ սրտիւ , գործեսցէ զարդա-  
րութիւն . բարձրանայ նիւթապէս 'ի լերինս , բա-  
րոյապէս 'ի Աստուած , եւ նովաւ 'ի վերայ ազգաց-  
ջի թարդման օրինացն Աստուածոյ Մովսէս դրեաց .  
«արդարութիւն զազդ բարձրացուցանէ , իսկ մեղք  
նուաճեն» (այս է խոնարհեցուցանեն) :

40. Այլ ել գու բարձրացիր 'ի լերինս , տես 'ի  
վերայ Սուկաւէտ և ծագիւաւէտ լերանց քոց զլու-  
քասեանս , որք աղդական գոլով Սալթնկան մեծէ  
տիկնոջ եկին 'ի Ալանաց , աշակերտեցան Ա. Ուկեանց  
քահանայից , աշակերտացն Թագէսսի Առաքելոցն ,  
քարողեցին տիկնոջն և այնչափ սիրեցին դիմուս  
'ի վերայ լերին Հայոց , մինչ զի 'ի նմին Սուկաւէտ  
ուեզւոջ հեղին զարիւնս իւրեանց , որոց 'ի պատիւ  
երգէ եկեղեցին մեր . Սուսաննելու ու ունեցաւ հոր-  
ցանելով լուսաբէն , ու եւէ 'ի լուս Տեսան , հու ու հուցէ  
'ի ուղղաջն որբաննեան . . . : Ել և զու 'ի լերինս , ուսո՞  
աղդականաց քոց գիրիստոնէ ութիւն և զչայութիւն  
զի ընդ Ուկեանս և ընդ Սուքիասեանս պատկեսցիս  
'ի Քրիստոսէ : Եթէ ելցու 'ի Տարօն 'ի լեառն Քար-  
քեայ . 'ի յերեղն 'ի լեառն Մեպուհ 'ի յայրն Մանեաց  
զհայրն հոգւոց զԱ . Լուսաւորիչն որ բաղկատարած  
աղերս մատուցանէ առ Տէր վասն որդւոցն Հայաւ-  
ատանի . «Ասո նշանիւ ու զքրուցին , ու հերյուսուոց ուղնուու-  
բուուցին . յերինէց հայր Յայն աստուածային , իւէ՝ հայսուուծի-  
ուու հարուրէ ուցին : Ի պատիւ Ա . Հօրն պատուեցաւ Աե-  
պուհ սքանչելի երգովք , զոր երգեաց երզնկացին :  
Լերինս ամենայն այսու անեղեւ . ընդ հեծուոյնեաւ դուռ Աե-  
պուայ քերառունց լերինն : Ել 'ի լեառն Նպատ անդ տե-

ամնես զմեծն Ներսէս , որ բաղկատարած իրքեւ զլովաէն յաղթութիւն զօրացն Հայոց հայցէ 'ի Տեառնէ , Տէր որպէս 'ի Սինայէ Մովսէսի այնպէս 'ի Նպատայ Ներսէսի լուեալ , տայ զյաղթութիւն զօրացն Հայոց 'ի վերայ Պարսից :

## ՅՈՒՂԻԱՆ Բ .

## ՀՈՎԻՑՔ

1. Կամ եղեւ ինձ 'ի տամներորդում աւուր Մատյիսի գրել 'ի վերայ հովտաց . ահա ժամանակ համասփիւռ ծաղկանց , զի ուր և երթիցես ծաղիկք քեզ ընդ . առաջ ելեալ ծաղկաժպիս երանդոք ողջաւնեն զրիր ական քո , եթէ 'ի լերինս բարձրանաս ձիւն և ծաղիկ տեսանես . եթէ 'ի հովիտս խոնարհս , պուրակք բիւրազան ծաղկանց շուրջ զքեւ պար բոլորեալ խայտան և հրճուին . անհամար աստեղք 'ի գիշերի ընդ կապուտակ կամարօք ճաճանչիւք շողազան 'ի գէմս մեր . իսկ 'ի ծագել արեգական բոյլք բոցափայլ ծաղկանց ընդ խոտուետ և կանաչադպն վոյրս հովտաց ճաճանչս մանունս և շողազան ընդ . աչս մեր արձակեն . բա՛րէ , անդ քիմք քո լնանին բուրմարէ անուշահոտ ծաղկանց , որ դիրախտին վայելչութեան բերէ զնաշակն : Անդ ոչ կարացեալ ժուժկալել՝ զձեռն կարկառես 'ի պուրակս ծաղկանց , ժողովես 'ի նոցաննէ զգունակս դունակս և փունջն պէսպէսս կապեալ պասկս բոլորես 'ի գարնանասոէր գլուխ քո . Անդ սքանչացեալ հիանաս թէ զի՞արդ բնութեան Արարին առանց դարմանի և պարտիզպանի զերինս և զհովիտս Հայաստանի այն-

շամբ չքննտղ պատրաստեաց, մինչ զի թագաւորքը  
երկրի իրեւ զլողոմնն ցանկան զփառս վայրենի.  
շուշանաց հովտաց նորա դդենուլ և ոչ կարեն . կու-  
սանք ըղձան զկարմիր դոյն ուշերանց ունենաւ ծաղկին,  
որ եզակի զարդն է հովտացն Հայաստանի , 'ի յին-  
քեանս րերել և ոչ կարեն . երիտասարդք ըղձան  
դդենուլ զդեղ կարմիր վարդին , և ոչ կարեն . նո-  
րասէր հարունք ըղձան զհամասփիւռ և զնօնօփար  
ծիրանադոյն ծաղկանց զվայելութիւն զդենուլ , և  
ոչ կարեն . պարկեցո կանայք ըղձան անուշահոտ  
կապուտակ մանուշակի խոնարհ համեստութեամբ  
դարդարիլ , և ոչ կարեն . արք ցտնկան իրեւ ան-  
թառամ ծաղիկ ՚ի վարս բարիս և ՚ի դործս արո-  
թեան անթառամ մեռլ , և ոչ կարեն :

2. Ոչ միոյն քննարն Հայիական ՚ի բուռն հոյ-  
քենասիրութենէ բոնադատեամլ գովէ զլերինս և  
զհովիտս հոյրենեաց , այլ և Ստորաբան ստարադդի  
մատննադիլն դսվաբանէ դրարելելութիւն Հայաս-  
տան աշխարհի «Ամենաբարի երկիր Հայաստանեաց»  
կոչելով զնա . իսկ ՚ի զլ ժա . զհովիտս առաւել  
եւս գովելով ասէ , թէ՝ ՚ի Հայաստան բազում են  
հովիտք կարի իմ բարերերք » Եւ արդարեւ ան-  
տանք բազմոց գաւառաց աշխարհիս յայտ առնեն,  
թէ ՚ի Հայաստան բազում էին հովիտք , վասն օրոյ  
և բազում տեղիք բարերերք . զոր օրինակ ՚ի չոր-  
րորդ Հայս՝ է գաւառն Բալահովիտ . ՚ի Ցուրուբե-  
րան , Աղովիտ . ՚ի Մոկս , Արդաստովիտ . ՚ի Վաս-  
պուրական՝ Արճիշակովիտ՝ Կոդովիտ . Թող և զոր  
յու և չոր անուանեալ դաւառս , որք են բազումք,  
զոր օրինակ Սալոյ ձոր . Զերմաձոր և սյլն . յորս

առաստութիւն է բերոց : Ասա արժան էր դքանակա, զտեսակս բերոց և ծաղկանց հովտացն կարեւոր ծանօթութեամբ ստորագրել բայց զայս ամենայն թողաք հարենասէր բուսաբանին, զի անձամբ յայց ելեալ լերանց և հովտայնց հայրենի, տեսցէ ինքնին, քննեացէ . և տացէ ծանօթս ամեննեցուն :

3. Ոչ միայն զրերոց և զծաղկանց սուատութիւն տեսանես ՚ի հովտիս հայրենեացդ, այլ զվրանա եւ զաթոռս փառաց համազդի և օտարապդի թագաւորաց աեսանես անդ, զի գեղ ծաղկանցն, պարզութիւն, թեթեւութիւն օդոյն : Վճիտ և սառնորակ տեսակ ջրոյն ՚ի շքեղաշէն ապարանից հանեալ զմագաւորս բերէր և ընակեցուցանէր ՚ի հովիտս հայրենեացդ : Թագաւորք Արշակունեաց ՚ի հովիտս Մազկոյ լերանց, որպէս պատմէ Մազաքիս պատմիչ թագաւորաց : Խակ մերս Վազարշակ ՚ի հովատուն հովիտս Պարիսար լերանց պատրաստէ զամարանոց խր: Եթէ բերրի և ծաղկաւէտ լերինքն և հովիտք հայրենեաց դհեռաւորս առ ինքեանս ձգեալ բերեն, միթէ զսիրտ Հայորդւոյն զիարեն ձգել տանել առ ինքեանս, աւո՛զ, միթէ միրտ Հայոց ո՞չ երթան, այս երթան, և եթէ ո՞չ երթայ, հառաչէ և բայ : Այս երթայ ՚ի հովիտս և ընակի ՚ի ձորս Հայաստանի, յորս անուանիք են երասպահոր ՚ի յԱյրարատ, Անձաւաձոր՝ ՚ի գաւառն Անձեւացեաց, Մազկոցաձոր ՚ի նիրակ, Գեղեցկաձոր ՚ի Տուրուբերան :

4. Ի գեղեցկահովիտս Հայրաստանի տեսանէ հայրենասէրն ո՛չ միայն զյորովութիւն դարձանազան ծաղկանց, այլ առնու զճաշակ բարեհամ սննդարար բանջարեղինաց, աստ զսակառուցն յիշեցից զանուանս : Թօրթիկ, նորիկ, կանկառ, օղին, եղինձ սպիտակ բանձար և այլն, զորս թէ ՚ի պահոց և թէ յուտեաց ուտէ Հայրաստանցին եփելով: Փաղ, պողիկ, ժախ, երիմնակ, պառկ, մանտակ, կռտեմ, սեպօ, սոխուկ, սխտորուկ եղողջայ, զորս ՚ի յաղի չուրս եղեալ ուտեն՝ ՚ի զահոց իրբեւ մննդարար կերակուր, Հոտաւեշտ և համեմիչ խոտեղէնք: ՚ի հովիտս են, անուխ, անանուխ, առուանուխ, դախճ, ծոթրին և այլքն . զորոյ զկանաչս ընդ հացի և կերակուրոյ ուտեն, իսկ զորացուցեալս արկանեն՝ ՚ի կերակուրու և համեմեն: Եվթէ հմուտ ես արուեստի բժշկութեան, և բուսաբանութեան ել՝ ՚ի լերինս և ՚ի հովիտս Հայրաստանի, յորս դտանես զրազմապիտի առողջարար խոտս, բանջարս և ծաղիկս, և արմատս, որոց անուանք յատկութիւնք, ազգեցութիւնք, քեզ միայն մեան քննել և գիտել: Մարդածաղիկ, (լոշտրակ) որոյ արմատն ամենեւին նըմնի մարդոյ, բուսանի ՚ի լերինս և ՚ի հովիտս կարնոյ, Մշց, Բաղեցց և էջմիածնի, արմատ սորս է բազում ցաւոց և ախտից բուժիչ: Օշինդր որ զօր բայցուցանէ զստամնք, բուսանի ՚ի հովիտս Ցարօնոյ, վասպուրականի, և Սեբաստիոյ: Խաչնդեղ, կամ խաւարծիլ (ռավինդ) ընդ ամենայն լերինս և հովիտս Հայրաստանի գտանի, զդալար և թթվու արմատ սորս ուտեն՝ ՚ի Մայիսի: որ այնչափ ախտրժելի և առողջարարէ, մինչ զի ՚ի նոր բանստաեղ:



Ֆից մերոց կոչեցաւ ։ Առ վենոց , թէ «Աւետիս ձեզ» աւետիս , ահա դուքք զծառն կենաց» . (այսինքն զխաւարծիլն) արմատ սորա երից զբանաստեղծս ՚ի մահացու հիւանդութենէ ապաքինեալ է , զան սրոյ կոչէ զնա ծառ կենաց : Նարդոս որ իրբեւ զխոտ բուտանի , ծիրանագոյն ծաղիկ բերէ , անուշահոտ մեծագին օծանելի իւղ արտադրէ , ՚ի դեղօրայս մեծապիս ներգործէ , զդեղթափի բաղադրութիւն կազմէ : Ահա այսովէս ծաղկանց խոտոց և բանջարաց առատութիւն անթիւ են ՚ի Հայատան , յորոց ճարտար սրառաւեռնք և գիւղացիք դեղ կազմեալ զիէրս , զախոտ և զհիւանդութիւնս բռնժեն : Բժիշկք Եւրոպիոյ Եկեալ ՚ի հեռաստանէ շրջեցան ՚ի լերինս և ՚ի հովիսս մեր , գտին զրազում արմատս և բանջարս բժշկականս և տարան յաշխարհ իւրեանց :

Յ. Արդ՝ եմէ զժրաջան մեղուն Հայատանի առացես քեզ ուղղեցոյց և վարժապետ , նա ուսուցանէ քեզ , թէ որչա՞ի են տեսակք մեղրաբեր ծաղկանց , յորոց միաբանութիւն մեղոււաց զհիւթն ժաղսվեալ բերէ ՚ի փիթակն , և ասափ հանէ զպիթն առաջի քո . որ քաղցր է քան զամենայն ճաշակս : Հող , ջուրն և օդն Հայատանի է մեղրաբուխ . զի խոտք և ծաղիկք ոչ միայն ՚ի հողոյ և ՚ի ջրոյ ծծեն զհիւթն քաղցր , այլ և յօդպին ՚ի յինքետնս ձգեն զհիւթն մեղրաշատ . որպէս յայտ է ՚ի դաղպէ տացեալ մեղրէն , որ ՚ի յօդոյն իջանէ ՚ի վերայ կաղնի տերեւոց , որ իրբեւ զմեզր անուշ է և առողջարար : Զենոր զդաւառէն ջարօնոյ պատմելով ասէ «Երկիր խոտաբեր և մեղրաբուխ , և որպէս մանանայն ի-

Վաներ, յերկնից առ Հրեայմն, նոյնպէս և առաջ Կմերում երկրիս 'ի վերայ անտառացս իջանէ քաղցր առաւել քան զմեզը, որ կոչի գաղպէն» որ երբեմն այնչափ առատութեամբ իջանէ, մինչ զի զիտըն տասն գահեկանի վաճառեն Տարօնեցիք:

Եթէ կամիս զհովուական կենաց զփորձ և զճաշակն առնուլ, առ զյուպ հովութեան 'ի ձեռին, շրջեսցուք ընդ քեզ 'ի լերինս և 'ի հովիտա հայրենեաց 'ի տասն Մոյիսէ մինչեւ ցվերջ Հոկտեմբերի ամսոյ, խոնարհարար գի՞ր ուժոտ հովիւ և խայնադարման լինել, զի զբնիկ լերանց հովտաց և զձորոց բիւրաշահ արդասաւորութիւնսն տեսանել կարասցես, եթէ մեծամիտ փարթամութիւն արդերուն զլոն քո 'ի գեղեցկաշէն ապարանս, և 'ի հոյակապ քաղաքու իրբեւ 'ի պատրոզական շղթայս, միշեա զԱբրահամ գիտահակ, զՅակոբ. զՅովսէփ, և զԵրկուտասան նահապեասն. զՄովսէս զԴաւիթ և զամենայն մարդարէս, որք հովիւ էին խաշանց, որք մեծ և հարուստ էին առաջի Աստուծոյ և մարդ կան: Մի տարակուսեսցիս, զի հովուութիւն Հայաստանի հեշտ դիւրին և զուարնայի է քան զԵրկրին Աւետեաց, եթէ ունիցիս հարիւր կտուրս ոչխարաց, հովիտ մի 'ի հովտաց և լերանց քաւական է նմա, եթէ ունիցիս եզն, գոմէշ, կով, ձի, էշընը հարիւր, միայն գաւառն Շիրակոյ քաւական է նմա: Լրամեն խաշանց Հայաստանի առաստ է իրբեւ զլուր, խւզն մաքուր աղնիւ և բարեհամէ, կոդին և պանիրն բնտիր է: Եթէ հովիւն Մովսէս զիտաշինս աներոյ իւրոյ արածէր 'ի Հայաստան ոչ վասն երկրին Աւետեաց ասէր, երկիր որ բղիսէ զկալմն և

զմեղը , այլ վասն Հայաստանի ասէր , զի վասն պարարտութեան Հայաստանի այնչափ անթիւ են ոչխարք և խաշինք , մինչ զի ամի ամի վաճառաւ կանք Դամասկոսի եկեւալ գհարիւրաւոր հօտս առաջալ տանեն 'ի Դամասկոս 'ի Պազեստին և մինչեւ յեգիպտոս , նոյնակա իւզն և պանիրն երթայ 'ի Պազեստին . իսկ բորդն և մորթն 'ի յեւրոպայ , ահա երկիր որ լցուցանէ զպէաս այլոց և երկրին Աւետեաց , ուստի սաէ երկիրն որ բզիսէ զկաթն և զմեղըն :

7. Ամենայն լերինք , բլուրք , հովիաք , ձորք , տափք , դաշտք , հող ջուրն , և օդն Հայաստանի առ հասարակ սիրելի են և անձկալի . բիւր բարութեամբ լի են եղանակք գարնան , Ամառան և Աշնան , բայց եթէ 'ի նոսա Զմեռն երեւեսցի մեղտգեղ և անդործ , չէ մեծ ինչ , զի եթէ խելամուտ լիցուք , սա եւս ունի զգործ և զգեղ իւր Զի ձիւն և ձմեռն զգարշահոտոթիւն երկրին ծածկերով , զմաքուր օդն շնչել տայ Հայոց . ցուրան զարիւն նորոգէ և զիփսն զօրացուցանէ , առողջութեան և Երկարակեցութեան պատճառ լինի . ձիւն զերկիր և զարմատս բուսոց պարաբէ , ձիւն ժողովէ զիուրա 'ի շաեմարանս լերանց և հովտայ , և առատութեամբ բաշխէ աղբերաց և դեսոց , ձիւն 'ի հողմաց և 'ի մըրկաց խոյս տուեալ իշանէ 'ի լերանց , բնակի 'ի հովիտս և 'ի ձորձորս , և խանաւութեամբ իւրով ցողելով զարմատս՝ բիւրազան ծաղկանց վերընձիւզերց 'անթիւ խոտոց բանջարաց բողբոջմանց պատճառ լինի , ձմեռն վաստակող եզին և մշակին փոքրինչ հանդիսա շնորհէ , զի զնոսա 'ի գարուն , յամառն և յաշուն ժրաջոն արասցէ :

8. Ոմանք 'ի բանասիրաց Եւրոպացւոց երբեմն  
Երկրայեցան ընդ Երկարակեցութիւն նահապետաց,  
բայց եթէ ստուդիւ 'ի վերայ հասանէին, թէ նա-  
հապետք 'ի մէջ կենսաւէտ լերանց և հովտաց Հա-  
յաստանի բնակեցան և թէ զկենսատու օդ նորա  
շնչեցին, վաղ 'ի մոտաց նոցա անկանէր տարակոյսն։  
Ա.Ը.՝ եթէ ոք 'ի նոցանէ զբնական ապացոյցս խնդրէ  
'ի մէնջ, Ելցէ ինքնին անձամբ 'ի հովիտս Հայաս-  
տանի, վարեացէ զկեանս ողջախոհս և սակաւապէտո  
որպէս զնահապետոն. յայնժամ ինքնին խոստովա-  
նեսցի թէ արդարեւ ապրեցան նահապետք ընդ-  
Երկար։ Աստ արժան էր զամենայն ծաղկածին հով-  
տաց գդիրս և զգեզեցկութիւնս իրեւ զպատկեր ինչ  
յանդիման աչաց հայրենասիրին կացուցանել, այլ  
աւա՛զ, զի վասն աղքատութեան միշտ փութամ  
համառօտել զրան իմ. զմին յիշեցից, և զայլսն քեզ  
թողից, ի լեռնամէջ հովիտս վարադայ լերան տա-  
րայց զքեզլ զկիսակործան վերին վարագն տեսցես, և  
շուրջ նորտ զծաղիկս բիւրազան, վտան այսորիկ երգէ  
բանաստեղծն վասպուրականի թէ «ի մէջ լերանց  
կտուցեալ կառուցեալ վերին վարագ անուանեալ,  
զանազան ծաղկօք լցեալ, աննման և այլն։

## ՅՈՒԻԱԾ Դ.

## ԱՆՏԱՌԻ

1. Զիք տարակոյս թէ Աստուած զանտառս վասն  
պիտոյից և զուարճութեան մարդկան հաստատեաց  
'ի վերայ Երկրի։ Ասացին ոմանք 'ի բանասիրաց թէ  
մակերեւոյթ Երկրի ծածկեալ էր մեծամեծ անտա-

ուշօք , յորս ողջացեալ էին գաղանք մեծամեծք քայլց նախկին մարդիկը վասն ընդարձակելոյ զտեղիս երկրագործութեան , և վասն հալածելոյ գդաղանս հրով այրեցին զմեծամեծ անտառս . Ռւսափ ուր եղեւ առաջին բազմանալ մարդկան , ծաղկել երկրագործութեան և հալածել գաղանաց , անդ նախ սակաւացան անտառք : Արդ՝ մարդն նախ աճեցաւ և բազմացաւ 'ի Հայաստան , նախ անդ պատրաստեաց զտեղի երկրագործութեան և հալածեաց դդաղանս . վասն այսորիկ անտառք և գդաղանք սակաւ . երեւին 'ի նմա քան յայլ կողմանս աշխարհի , յորս կարի անագան բնակեցան մարդիկ , և անագան ձեռնարկին 'ի յերկրագործութիւն , և այլն :

2. Արդ՝ իմ 'ի հեռաւոր աշխարհս զբաղում մեծամեծ անտառս տեսեալ է , բայց ոչ կարացի զուարձանալ 'ի նոսա , որպէս զուարձանայի 'ի յանտառան Հայաստանի . տիսրութիւն պատեր պաշարէր զսիրտիմ , յորժամ յօտար անտառսն մոտանէի , իսկ յորժամ 'ի հայրենի անտառան շրջէի , ախորժ բերկրանք իմն ընդարձակէր զսիրտիմ և ես յոյժ զուարձանայի . զորքա պատճառն չդիտացի , արդեօք երկրին , հողոյն և բուսոյն օտար վլնեն էր , որ տիսրէր զիս , թէ 'ի նոյն երկրի շնչանելո էր : Ի յայս կիրոյիմ ճշմարտեալ տեսանէի առածն հայրենասիրին թէ «Լ— և հոյրենեաց իոնն ուն շաբարին վորոն» : Առանց կարծեաց հաւատալ պարտէ , թէ երկիր , անտառ և ամենայն ինչ , որ օտարին է և ոչ մեր , զմեզ չկարէ զուարձացուցանել երբէք . զի հայն օտարին զմեզ ոչ մնուցանէ , և ջուրն ոչ զովացուցանէ . զի ծագիկ օտարին զհոյս ոչ ունի , և բանջարն չէ առաջ-

Հարար . օտարին վեւուրն զմեղ ոչ զարդարէ . ս-  
տարին դէնք չօգնէ մեզ , այլ վիրաւորէ . օտարին  
հարստութիւն չփարթամացուցանէ զմեղ , այլ ազ-  
քատացուցանէ . օտարին յառաջադիմութիւն մեզ  
յետադիմութիւն է , եթէ մեզ միշտ յառաջ չմն-  
ցանիցեմք քան դնոսա : Ի յետին բան , օտարին ա-  
մենայն ուրախութիւն՝ տրտմութիւն է մեղ . օտա-  
րին ամենայն շահ՝ մեզ վնասակար է , վասն զի մար-  
դիկ աշխարհիս այսորիկ , մանաւանդ . ազդք և ա-  
զինք ժամանակիս այսմիկ սովորեցան և ոխտեցին  
զամենայն անհատական և ընդհանուր իրաւունս և  
զմարդասիրութիւնս զո՞նել անհատական և ազդա-  
յին շահուց իւրեանց . վայ է նոյս՝ որք հաւատան  
թէ դոյ մարդասէր օտարասէր և անշահատէր ազդ-  
ի վերայ երկրի քան զազդն Հայոց , որ ինձամուել  
պարտի թէ անտառք օտար աշխարհաց ՚ի յամա-  
րայնի ոչ զուապ մեր զովացուցանեն , ոչ ՚ի միտո-  
րերկանիք , ոչ ՚ի սիրու մեր ուրախութիւն , և ոչ  
յաշս մեր զուարճութիւն առ բերեն և ոչ ՚ի ձմե-  
րայնի զիերակաւր մեր եփեն և կամ զսենեակ մեր  
Ներմացուցանեն . վասն զի նորա ՚ի հայրենեաց մե-  
րոց հեռի են , և հայրենիք մեր ՚ի նոյսանէ :

3. Ի յանտառամն կիսանանու ովկակն զեզդեզէ .  
բայց ազն ձայն նորա ՚ի խեզիս իմ ոչ հասանէ և  
ոչ զովրա իմ զուարճուցանէ . անտառ ք եղիսդ-  
տոսի և երջանիկ Արարիս ուրմաւս բարեհամն բե-  
րեն , բայց եթէ եկեալ յաշխարհս մեր սակաւ ինչ  
համ տայէ բերանոյ , զբազում գումարս ործովից  
՚ի ծոցոյ հայրենու պր յափշտակեալ սունէ : Եւ բան-  
տառս Սնորդիոյ նառք մեծամեծք չինին . զի զհա-

Պըստութիւն երկրի մերոյ ՚ի մէնջ կորզեալ՝ յաշխարհ  
փւրեանց տարցեն . ՚ի յանտառս Գաղղիոյ և Բրու-  
օխոյ հրազէնք պատրաստին , զի զմեզ և զայլ մար-  
գիկ վիրաւորեսցեն և սպանցեն . ՚ի յանտառս Շուէ-  
տաց երկաթք ձուլին և պատրաստին . զի զոսկին  
և զարծաթյ յերկրէ մերմէ ժողովեալ յերկիր իւր-  
եանց գանձեսցեն . ՚ի յանտառս այլոց աշխարհաց  
և ազգաց աթոռք փայտեղէնք շինին և պատրաս-  
տին , զի զմեզ ՚ի յոսկեղէն աթոռույն խոնարհեցու-  
ցեալ ՚ի վերայ փայտեայ աթոռույն կամ ՚ի հող  
երկրի բաղմեցուսցեն . . . . Քաջ ՚ի միտ առցես թէ  
՚ի Հիւսիսային անտառան որջացեալ կայ արջն խո-  
րամանկ վասն զմեզ խարելոյ որսալոյ և զկորեկի  
արտն մեր ուտելոյ : Ի յԱրեւելեան անտառս Պար-  
թեւաց շրջին ոխակալ ուզտք , անողոք և յափրշ-  
տակիչ վագերք վասն վնասելոյ և պատառելոյ զմեզ  
՚ի Հարաւային անտառան դարանակալին օձք ինձք  
և առիւծք վասն վիրաւորելոյ պատառելոյ և ու-  
տելոյ զմեզ :

4. Բայց անտառք հայրենեաց հակառակ օտար  
ամենայն վնասակարութեանց՝ քեզ միշտ բարիս  
շահս և օգուտս ընծայեսցեն . զի եթէ զջուր խոն-  
դրես , ցուրտ ջրով զսիրտ քո զովացուցանեն : Եթէ  
զտօֆթ և զտագ կրես ՚ի ճանապարհի , հանդիսա-  
և հովանի լինին անձին քում . զի եթէ քաղցր ՚ի  
քուն լինիցիս , առափիւն տերեւոց իրրեւ երգս ե-  
րաժշտաց դքեզ ՚ի նինջս անուշս զուարթացուցա-  
նեն , եթէ զարթնուս առաւտեան սոխակըն քաղցր  
երգովք զքեզ ՚ի զմայլումն ածեն , եթէ իրրեւ Ար-  
շակունի երիտասարդ Գնէլն ՚ի յորս ելցես , որսս ա-

ուստի և պարարտու քեզ մատուցանեն : Եթէ ընդօտար թշնամիս պատերազմիսցիս իբրեւ դրերէ ամուր և իբրեւ աշտարակ հզօր զքեզ պաշտպանեն յերեսաց թշնամւոյն . յաղթութիւն քեզ տան , իսկ պարտութիւն թշնամւոյն : Եթէ իբրեւ զբովեաթան ՚ի պատերազմի քաջացեալ յաղթեսցես , և քազցնուցուս , ոչ միայն քեզ մեզը վայրի մատուցանեն , այլ յետ զընտանի մեզըն տալոյ՝ մատուցանեն քեզ զգազգէն որ իբրեւ զմանանայն իջանէ ՚ի վերայ խիտ տերեւոց անտառայն Հայաստանի : Եթէ միրգս գեղեցիկս և համեզս խնդրես , զաւրբն , զկազին , զընկոյզն , զնուշ , զմաշկամիբզն , զպիստակ , զգահըրշակ , նոյնպէս զինծորն և զտանձն , որք յատուկ պտուղ կոչեցան դրախտին Ադամայ՝ քեզ առատապէս ընծայեն :

5. Ազրդ՝ եթէ դու իբրեւ գնուց ժբաջան երկրագործ լիցիս , զչորոց , զվեցկի , և դութան լծերով երկիր հերկեսցես , անտառք հայրենի վասն շինութեան չըրոցի , վեցկոյ , դութանի և սայլի տան քեզ զհացենին , զթեզօշին , զկազնին , զուռենին , զընկուզենին , զփշատին , զի զգործիս քո անպակաս յարդարեսցես և զհայրենի երկիր քո մշակեսցես . Եթէ զիսրճիթս զիւզական , և եթէ ապարանս վարթամ քաղաքացոյ շինեսցես , ամենայն ծառք անտառի առ հասարակ քեզ օժանդակ լիցին , մայրին + կամախին , բարտին և այլն :

6. Աստ զումանս յանտառախիտ լեռանց և հովտացն Հայաստանի յիշեցից , կամիք կորդուաց և Տորոս լեռանց դրախտանման անտառովք զարդարեալ են , դտանին ՚ի նոսաւ ծառք պտղաբերք , և

գլխաւոր վայրու է 'ի նոսա կաղնին , զոր ՚ի պէտո  
վառելոյ , ածուխ շինելոյ , երկաթ հաղելոց ՚ի գործ  
արկանեն . Լերինք և հովիտք Ծագիշոյ և բա-  
սենոյ , զարդարեալ են նոճեայ ծառովք . լերինք  
որք անկանին ՚ի մէջ գտառացն Երկնկայի և Ծո-  
փաց աշխարհին . զոր այժմ կոչեն (Տէրսիմ) անտա-  
ռախիտ են զանազան ծառովք և յոյժ գեղեցկատեսիք  
երեւին . Լերինք Պանտոսի մինչեւ ցլերինս Բարերդոյ ,  
Ապերոյ , և Կարնոյ յոյժ անտառափիտ են . Լերինք  
Արենեաց , և Գեղարքունեաց անտառազարդ են և  
զուարճալի . Լերինք Բալուայ , Դերճանայ , Դեղուայ  
ունին անտառս . Լերինք Բիւրակնեան , յորս Էլ  
դրախտն Արինայ . լերինք Ալնոնորոյ . Տարօնոյ  
զարդարեալ են գեղատեսիք անտառովք .

7. Բայց ՚ի լերանցս Խորենացին տաէ՝ մինել ան-  
տառաց ՚ի գաշտն Արտատաայ , որոց հետք հաղիւ-  
նչմարին ցայսօր . տակայն ամենայն գաշտօրսցք Հա-  
յատանի զանազան այգեռօք , անդաստանօք և բո-  
րտատանօք զարդարեալ գոլով ՚ի հեռառոտանէ ե-  
րեւին իբրեւ թաւախօտ անտառս . ի յայդ եռտանս  
Հայտատանի բուսանին մեծամեծ ծառք սրտզա-  
րերք , զորս յայլում աշխարհի տեսանել դժուարին  
է , ծիրանի , խնծորի , տանծի , և ընկոյզի ծառք  
որք տեւեն յանն հարիւր , և քանն ոռնաչափ եւս  
հաստանան : Ահա ՚ի հաստարմատ պատզառու ծա-  
ռոյս յայսցանէ խմատտասլրեմք , թէ՝ լերինք , հո-  
վիտք և դաշտք Հայտատանի լի էին մեծամեծ ան-  
տառօք , այլ ՚ի բազմանալ անդ մարդկան , և ծաղ-  
կել անդ երկրադործութեան , անտառք սակաւա-  
ցան . զի դեռ մինչեւ ցայսօր տեսանեմք թէ բնա-

պիշտ, որք մերձ հն ՚ի յանտառաւ, այլրելով և կտրու-  
լով սպառեն զնոսաւ, և պատրաստեն զուեղիս սեր-  
մանելոյ: Ցիրողք Հայտառանի, և ազգն Արաց  
տանելով զմանաւոր խնամն ՚ի վերայ անտառաց  
տապար ՚ի ձեռքն միշտ հատանեն, զարմատս նոցա-  
յերկրէ հանեալ՝ ոյրեն վաճառեն և սպառեն:  
Խորթ զաւակք հայրենեաց. որք միշտ ամենայն կեն-  
ցաղօգուստ յառաջադիմութ նան արգելիչ և տապա-  
լիչք եզն, ոչ դադարին անման և զօրութեան-  
անտառուս միշտ տապալիչ լինելոյ, զի մտեալ ՚ի վառ-  
տակու և յաշխարհու մեր՝ զլերինս զշովիսու և զան-  
տառաց ձրի գտին: Աւարդ, սոքա. որք բանական  
ծառոց ոչ խնայեցին, և զօրհանապաղ զնոսաւ ՚ի  
յարմատոց քանցել և չորացուցանել տքնին. զի՞ արդ-  
անբան անտառաց խնայել խորհիցին: Տէր մերձ  
ընդ մերձ զուապարն ՚ի ձեռաց նոցա խլեսցէ և խոր-  
տակեցոցէ, և զբանաւոր և զանբան զանտառու և  
զմատաղատունկու ազատեսցէ, և տացէ վայելել մեզ  
՚ի յայդիս և ՚ի յանտառս մեր, որպէս յամն առաջինս:

~~~~~  
Դ Հ Ա Խ Խ ։ Ժ Բ ։

ԴԱՇՏՈՐԱՅՔ, ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. ԱՃԽԱՐՀԱՆԱԿ-  
ՔԻՒՆ. .

~~~~~  
Յ Օ Դ Ա Խ Ա Մ ։ Ա.

## ԴԱՇՏՈՐԱՅՔ. .

Վ. Քանելը որ Է Այիսի, Խնուսիկ ՆՔոյգը  
հայրենի և ամենայն օգաչու երիվարք Հայտառա-  
նի ընդ նոսա չժումել են կալ մնալ ՚ի շնոս, այլ գափէ

Հարկանեն , խիսնջեն , երասանակս խղեն , 'ի դաշտու  
ելանել խնդրեն 'ի ձիավարժ երիտասարդացն Հա-  
յոց : Փութա' ո՛ հայրենասէր ընդ գումարս երի-  
տասարդացն քաջութեամբ աշտանակել 'ի նիւս ե-  
րիվարացն , ելանել 'ի տես հայրենի տափից , դաշ-  
տաց , և լեռնադաշտակաց . բաց զաչս քո և տե-  
սանես անդ ոչ միայն զդրախտն փափկութեան  
բացեալ առաջի քո . այլ տեսարանքն զժամ հան-  
դիսի արարչագործութեանն Աստուծոյ 'ի յուշ բե-  
րեն քեզ , յորում ասէր Աստուած , բյանեցէ եր-  
կիր զրանճար խոտոյ և բիւրատեսակ խոտեղէնք  
բողբոշէին 'ի յերկրէ . ասէր ելցեն չորքոտանիք  
'ի վերայ երկրի և ամենայն անասունք երեւէին  
'ի վերայ երկրի : Անդ շրջիս 'ի դաշտս հայրենի  
իբրեւ 'ի մէջ Դրախտին , անդ տեսանես զտեսակս  
կենդանեաց , և իբրեւ զԱդամ յանուանէ կոչես  
զնոսա : Զիանդ տեսանես զհօտն և զհովիւն , զդառն  
և դառնարածն , զնախիրն և զնախորդն , զեզն  
և զեզնավարն , զխովն և զարօրն , զմաճն և զմա-  
ճական , զամորն և զամորլարն , զգոմէշն և զխօտաղն ,  
ուզոն և ուզոտապան . որք 'ի միասին խաղան , խայ-  
տան , արածեն , որոճան . հերկեն զերկիր , և  
երեւին սքանչելի յաչս մարդկան :

2. Եթէ 'ի բարերոյս 'ի հացաւէտ գաշտան նի-  
րակայ և Այրարատայ ելանել կամիս . ընտրեա քեզ  
առաջնորդ զֆարփեցին , որ ներբողէ զդաշտն Ա-  
րարատեան ասելով « Զայսպիսի զըզձակերտ գա-  
ւառ , զնաշխարհիկ , և ամենալի ըստ տուչութեան  
տմենախինամ արարչին Աստուծոյ զԱյրարատեան  
գաւառ , որ գլուխ աշխարհիս Հայոց , զգաւառն

համբաւատենչ , զդաւառն ամենալի որ բերէ յինքեան զօրինակ լիութեան ըստ բանի գրոյն զերկրին Եգիպտացւոց , և զԴրախտին Աստուծոյ Դարձեալ նա զհամեզահամ բոյսս բանջարաց , զպարարտ պտղաբերութիւն գաշտին նկարագրէ այսպէս « Զանուշահամ զմեզրահամ քաղցրութիւն բանջարացն , և զզանազանումն իւզարուցիս սերմանցն . իսկ ՚ի լանջակողմանս կամ ՚ի սարահարթ տեղիս՝ յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոյ՝ հանդերձ ինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալքս պարարտարոյսք , և պարարտարոտք , պարարտահամք , որոց թանձրախիտ աճմունք խոտոցն . . . սաստկաբուրումն անուշահոտ ծաղկանցն՝ որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհօտարած բացօթէկացն ընձեռելով առողջութիւն , զօրացուցանեն զգայութիւն խելացն և նորոգեն» . Սոյնպէս Խորենացին դովիզ զգաշտըն կարնոյ թէ « դաշտք ունին զժանձրութիւն խոտոց , և քաջարերութիւն սերմանաւոր պտղոց » : Պատմիչ վարուց սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետին ՚ի ճառընտիրս՝ Դրախտին նմանեցուցանէ զերկիրն Ոշտունեաց առերով , թէ՝ « Ասաց ոմն ՚ի պատմագրաց , եթէ նախ քան զանէծս սրբոյն Յակոբայ , նման էր երկիրն Ոշտունեաց գրախտին Ադինայ » :

3. Ոչ միայն մատենագիրք մեր հաւաստի առնեն մեզ թէ՝ դաշտք Հայաստանի ամենատեսակ բուսովք , արմունք լցեալ ուռճացեալ և բարձաւաճեալ են , այլ մեք մեզէն իսկ ականատես եղեալ վկայեմք թէ ամենայն տափք , դաշտք և լեռնա-

դաշտակիք հայրենեաց ընդունակ և բուսուցիչ են  
ամենատեսակ սերմանց՝ որք պիտոյանան 'ի անունդ  
մարդկան . չիք բնաւին դաշտ 'ի Հայաստան որ  
ոչ բերէ զցորեան , զգարի , զհաճար . և ցորեան  
հայաստանի զօրեղ մննդարար և համեղէ քան զա-  
մենայն ցորեանս այլ աշխարհաց : Անուանի դաշտք  
արմատարերք են՝ դաշտք վանանդայ , Շիրակայ և  
Այրարատայ , տափք և դաշտք վերին և ներքին  
Բասենոյ , դաշտք Հարք և Հացեկաց գաւառի , որ  
վասն առատ և ընթիր ցորենոյն հացեց Դրեխ-  
անուանէ , դաշտք և լեռնադաշտակիք թղնունեաց  
և Քաջքերունեաց , դաշտք Տարօնոյ , Քարքերդոյ ,  
Սերաստիոյ և Հայոց ձորոյ , տոքաւ ամենեքքեան-  
քաջարերք , որք տան ընդ միոյ քսան , ընդ միոյ  
երեսուն և ընդ միոյ քսաւասուն :

4. Ասաց հովիւ Մարգարէն « Հայ հուստուէ զիբո-  
ւարդոյ » ահա դաշտք առաջի քո , հերկեա՛ ժրու-  
թեամբ , սերմանեա՛ առատութեամբ , և հնձեսցես  
առաստոթեամբ : Հաստակեան յանձնուան և վեցես . և  
ու ունցես լուսինասինաւ : « Գինէ ուրուի ունեւ , Որի  
խաղողոյ և գինոյ անկեցաւ . 'ի Հայաստան 'ի Նոյէ ,  
ահա յայնմօրէ մինչեւ ցայսօր ամենայն լերինք  
բլուրք և դաշտք Հայաստանի լցեալ են որթովք  
խաղողոյ , և բերեն զգինին յոյժ առատս համեղս  
զօրեզս և ուրախարարս : Անուանի են այդիք և  
գինիք Այրարատայ , Սիւնեաց գողթան , վաս-  
պուրականի , Տարօնոյ , Քարքերդոյ և այլոց : Ահա  
այդիք և գինիք առաջի քո , եթէ ուրախ լինել  
կումիս սակու ինչ արք ըստ պատուիրանին Պօղոսի  
զի մի հիւանդ լիցիս , Բայց զգուշացիր , զի մի՛

մերկացցիս դհանդերձս քո իրբեւ գիրայ , և մի ելլէ  
՚ի բերանոյ քումի՞ անեծք և հայհոյութիւնք : Ար-  
դարն ականայ և անդխութեամբ արար . իսկ եթէ  
դու ոչ զգուշացցիս , կամաւ և գիտութեամբ մե-  
զանցես : Այլ որ հեռացեալլ ես ՚ի հայրենեացգ-  
յիշեա' , զի եղբարք քո բազում անգամ փոխանակ  
ջրոյ ընկեն զգինի՝ վասն առատ և գիւրադնի մի-  
նելոյ , իսկ դու զգուրեն ՚ի դնոյ առնուս , և զգինին  
յոյժ ծանրադնի ընկես :

5. «Իւշ շատրւ առնէ» առէ՝ բայց մի կարծիցես  
թէ միայն իւղն Հայաստանի զքեւզ զուարթ առնէ ,  
այլ առենայն ընդեղէնքնք և բանջարեղէնքնք իրբեւ  
զիւզ զուարթ առնեն զքեւզ , զի են զօրաւոր մնու-  
ցիչ և գարմանիչ , և այս յայտ է ՚ի բնակչացն Հա-  
յաստանի . որք զիես տարւոյն ընդեղինօք և բան-  
ջարեղինօք շատանան . բայց են զօրեզ առողջ և  
պարարտ . իսկ Հայ բնակիչք Բիւզանդիսնի և այլ  
օտար աշխարհաց , ուտեն զմիս , զիւզ օտար . ըմ-  
պին զգինի , զմուր օտար , և են տկար , վատա-  
ռողջ , և տղաղուն : Հայրենիք վասն բեղմնաւոր  
պարտրութեան չկարօտի բնաւ բերաց և արմունաց  
ոյլաց աշխարհաց , այլ բանայ զշատեմարտնս իմու-  
թեան իւրոյ և կերպակրէ զամենայն զրնիկ և դեկա-  
մուտ բնակիչս իւր : Բայց թէ երբէք եղեւ անու-  
սով սաստիկ , և լինիցի եւս . այն իսկ յայտ է ՚ի  
պատմութենէ և ՚ի փորձոյ . զի ոչ եթէ վասն ան-  
ըներաւթեան երկրին եղեւ ինչ . այլ վասն արկածից  
պատերազմաց և այլ արտաքոյ բնական պատա-  
հարաց , յորմէ խուսափել չկարին ամենայն բարե-  
բեր կողմանք աշխարհիս :

6. Արդ որ հեծեալդ ես՝ ի նժոյդ երիվարս՝ վայր  
մի կացեալ՝ ի մէջակէտո դաշտացն Հայաստանի,  
Հայեաց ընդ բոլորաձեւ հորիզոն դաշտացն. և տե՛ս  
թէ զի՞ արդ կապուտակ կամարն անբաւութեան  
Երկնից իբրեւ զբոլորշի դմբէթ երեւի ՚ի վերայ  
լերանց և բլրոց, որք իբրեւ շրջապարիսապ ցանկ  
շուրջ նշմարին առ շրջանակաւ վայելչատեսիլ դաշ-  
տացն : Անդ մինչ հիւցեալ ճեմս առնիցես ընդ կա-  
մարօքն երկնից, տեսանես զկարկաջասահ գետս,  
զվտակահոս աղբիւրս, որք ՚ի լերանց ժողովեալ՝ ի  
հովիտոս և ՚ի ձորձորս, խաղան ընդ երկայնութիւն  
և ընդ լայնութիւն դաշտացն, ոռող.անել զանդս,  
զայգիս, զանդաստանս և զպարտէզս դաշտավայ-  
րացն, առնեն զնոսա ուռթիս և պտղաբերս : Ո՛հ,  
գրիչ մեր չկարե երբէք նկարել զիսկական պատկեր  
գեղեցիութեան դաշտացս հայրենի, բայց ակն  
հայրենասիրին տեսանելով միայն զօրեսցէ նկարել  
՚ի միտս և ՚ի սիրտս իւր, այլ զի եթէ չտեսանիցէ,  
զի՞ արդ կարասցէ նկարել. ուրեմն հայենասէրք,  
որք բնակեալ են ՚ի տար աշխարհ, ելցեն անձամբ,  
տեսցեն ակամք, և հաւատասցեն ինքեամբք :

7. Արդ՝ եթէ հիւանդ ես, և առողջութիւն  
խնդրես, երթ ՚ի Հայաստան, և առողջասցիս վաղ-  
վաղակի, է՞ր վասն ոմանք ՚ի փարթամաց Հայոց  
խրախուսեալք ՚ի յօտարասէր բժշկաց, յանձն առ-  
նուն վասն օդավոխութեան և առողջութեան երա-  
թալ ՚ի յիւրոպայ, ո՛չ ապաքէն սակաւ.ք ՚ի նոյանէ  
հաղիւ գտանեն զառողջութիւն, զի ոմանք ՚ի նո-  
ցանէ մեռան և ոմանք յետ տութելոց բազում հա-  
րըսութեանց չգտին զառողջութիւնն, վասն զի

հող ջուր և օդն օտար էր : ԱՌ ճարտարամիտ էր  
 վասն խրատ տաս Հայորդւոյն երթալ ՚ի տար աշ-  
 խարհ, և ոչի Հայրենի աշխարհն, արդեօք քանի՛  
 արիւն քանի՛ սերունդ պարտ է Հայոց փոխել մին-  
 չու վարժեսցի կլիմային այնորիկ, քանի՛ մահաբեր  
 ցաւք և կորուստք տալոց է Հայն, մինչեւ վար-  
 ժեսցի օդոյն ջրոյն և հողոյն, որպէս յայտ է ՚ի  
 պատմութենէ դաղթականաց, յորոց բազումք մե-  
 ռանին, միթէ չգիտիցես թէ կազմութիւն մար-  
 մնոյ Հայորդւոյն ՚ի սկզբանէ հետէ ՚ի հողոյ, ՚ի  
 ջրոյ, և յօդոյ Հայաստանի կաղմակերպեալ է, միթէ  
 չգիտիցե՞ս թէ մարմին նորա կաթամբ մեղերը, իւ-  
 ղով պանրիւ և առողջարար բանջարեղինօք, և  
 ընդեղինօք հաստատեալ է : Ուստի զայն միտին  
 խնդրէ, զոր ՚ի հարց անտի ունի յերակունս իւր,  
 զհոյն, զնուր, զօդն զայն խնդրէ, որով հարք նորա  
 առողջ մնացին, երկար ապրեցան : Միթէ չգիտիցե՞ս  
 թէ հող, ջուր, և օդն առողջարար են քան զա-  
 յենայն դեղորայս : զոր մատուցանեն նմա բժիշկք  
 Եւրոպեանց : Միթէ գո՞ն ՚ի յարեւմուտս լերինք,  
 հովիտք, դաշտք ջուր և օդ առողջարար քան զա-  
 յաստանին, որ իրրեւ զմայր բնածին զքեզ ՚ի գիրկս  
 իւր ընկալեալ մնուցանէ և բժշկէ . ո՞չ ապաքէն ե-  
 մէ հնար լինէր համայն Եւրոպացիք վասն առող-  
 ջութեան և օդափոխութեան դիմէին ՚ի Հայաստան-  
 որպէս վկայեն բժիշկք Եւրոպացւոց որ ճանապար-  
 հորդեցին և ընակեցան ՚ի Հայաստան : Արդ՝ որպէս  
 հիւանդ՝ ՚ի տառապանս իւր միշտ զհայր, զմայր և  
 զաղգականս իւր կոչէ յօդնութիւն, և զգլուխ իւր  
 ՚ի գիրկս նոցա դնել ախորժէ . նոյնպէս դու յոր

Ֆամ հիւանդ լինիցիս , վափագեռջիր դառնալ ՚ի Հայրենիս քո , միմէ չտեսանե՞ս թէ ՚ի Հայաստանէն պանդխտեալքն յորժամ ծանր և երկար հիւանդութեան պատահիցեն , վաղվազակի դարձ առնեն ՚ի Հայրենիս և բժշկին . բայց եթէ անդէն մահուն հրաւէր դհոգիդ ՚ի սրբոց Հայրենիս հրաւիրեն . առորին Հայրենիք ոչ զլանայ տալ քեզ դերեզման առ քնարանս երջանիկ հարց քոյ առաքինեաց . որք ննջեցին ՚ի գաւիթմա եկեղեցեաց և վանօրեից :

8. Տես զէրեայս , որ թէպէտ յԱստուծոյ յաշաց ելին և ամենայն մարդկան ատելի եղեն , բայց զուլու Հայրենասիրութեան իւրեանց ոչ Երրէք մնուացան , զի ամենայն ակամայ հեռացեալքն իրբեւ զհայրենատերն Նենմի ուխտիւք ինդրեն գառնալ մեռանիլ և թաղիլ ՚ի ծոց Հայրենեաց , ուր նահագետք , թագաւորք : մարդարէք և քահանայք նոցա թաղեցան , և արդէն հանապաղօր տեսանեմք , զի Հրեայք ՚ի տար աշխարհաց հանդերձ ընտանեօք երթան ՚ի Սաղիմ վասն անդ մեռանելոյ և թաղելոյ : Սոքա այժմէն զհետ եղեն կաղմել զտիեղերական ընկերութիւն մի , որոյ նպատակն է ՚ի ծաղաց Երկիր համահաւաքել զամենայն Հրեայս ՚ի Հրեաստան : Սքանչելի ուխտ հայրենասիրութեան որյազթէ ամենայն գժուարութեանց , անցանէ անդք քան դգերեզման : Ո՛ Հայրենասէք Արամեանք , զուք՝ որք սիրելի էք յաշ Աստուծոյ և ամենայն մարդկան , ընդէ՞ք տարակացեալ և տարակուալ ոչ յանձն առնուք վաղվազակի դառնալ ՚ի Հայաստան՝ ո՞հ , ոչ ապաքէն ձեզ սպասեալ մեան ամենայն գաչաք դրախտամիոյրք : ոյշ

զիք և պարտէզգք պաղաբերք . այլ աւազ , զի վիխանակ տեսանելոց դժողովումն ժողովրդեան , առ նուազութեան սիրոյ հայրենեաց գունդադունդ ելանեն և հեռանան ՚ի մայրենի աշխարհաց :

9. Այլ օտարասելն ասէ ՚ի միաս իւր թէ՛ ըստ որում սիրեմ ես զմեծատունս աշխարհիս , սիրեմ տեսանել զմակեալ դաշտա Եւրոպացւոց . և բնակելով ՚ի ծաղկեալ քաղաքոյ նոյցա զուարձանալ անձամբ առանձին , արդ՝ զի՞ պիտոյ է ինձ երթալ ՚ի դրախտավայր դաշտմն հայրենիք , և տեսանել զտխուր վիճակս եղբարց և աղդականաց իմոց , որովհետեւ ոչ սովորեցայ երբէք զթալ , ինսամել սիրել , յօդնութիւն հատանել : Բայց եթէ լինէլ Հայաստան հարուստ , խիլ ես աղքատ , յօժարեի երթալ և առնուլ ՚ի հարաստութենէ անտի զրաժին իմ , եթէ նա ՚ի յառաջին պերճութեան իւրում լինէր , երթայի նախարար և թագաւոր լինել նմա , եթէ նա փառս , սպատիս , երկրագութիւնս տայր ինձ և խունկ եւս ծխէր , երթայի Աստուած լինել նմա : Արդ գիտելով թէ շունի Հայաստան զայս պիսի իրս ոքանելիս , ուստի յօժարիմ երթալ անդ , որ ոչ ճանաչեն զիս , երթամ առէ տալ զինչ իմ օտար փարթաւաց , որք երբէք ինձ ոչ կարօտին , երթամ ընկեր և եղբայր լինել այնոցիկ , որք ոխու եալ են յափտեան եղբայր չլինել օտարազգույն , երթայց ՚ի տար աշխարհ կերպայց , արբից , և անդ թողից զնշան ուրախութեան իմոց : Բայց սմաս առէ Աստուած , անմիտ , եթէ շունիս գութ և ինսամ երբայրախութեան , եթէ ապարանս զարդարեալս շնեսցես ՚ի վերայ օտար երկրի , մի ընակեսցիս ,

եթէ այդիս ցանկալիս տնկեսցես, զպտուղ նորա մի  
կերիցես, բայց եթէ սիրեացես զեղբարս քո, զադգ  
և զհայրենիս քո. տունս շինեացես 'ի հայրենիս քո  
և բնակեացիս, այդիս տնկեսցես, և զպտուղ նորա  
կերիցես: Եթէ այսպէս առնիցես օրհնութիւն Աս-  
տուծոյ եկեսցէ 'ի վերայ քո և դաշտք քո լցցին  
պարարտութեամբ ցորենոյ քո:

## Յ Օ Դ Ի Ա Ծ Բ.

ԵՐԿՐԱԳԱՐԾՈՒԹԻՒՆ

1. Այլ ամենայն արհեստք գոգ թէ մարդիկ  
հնարեցին 'ի վերայ երկրի, իսկ երկրագործութեան  
առաջին ուսուցիչ Արարչապետն է, զի յորժամ  
առաջին մարդն ստեղծաւ, առաջին պատուէր ըն-  
կալաւ յԱստուծոյ գործել զերկիր և պահել, ծնն  
դը բ, համ 16. «Եւ չն ՚է ուրիշուն քունքունեան չու-  
նել չն և ունել»: Բայց ոչ քրտանց և ոչ մեծի աշ-  
խատութեանց կարօտել երկրագործութիւնս այս,  
զի գեռ երկիր առանց ազականութեան և անի-  
ծից գոլով ինքնին բերէր զպտուղն: Բայց յետ  
յանցանացն անիծիւք ապականեաց զերկիր, եհան  
զնոսա արտաքս 'ի գրախտէն, և ասաց Աստուած  
մարդոյն «քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց  
քո» այն է մեծաւ աշխատութեամբ: Ենն դւ գ.  
25. համ: «Եհան ուրիշեց չն Տեր Աստուած ՚է ուրիշէ  
անոք քունքունեան գործել չերին, ասուու: Ի յԱ-  
զամայ ուսաւ կայէն երկրագործ լինել, զյետին  
արմտիս 'ի վաստակոց իւրոց մատոյց Աստուծոյ 'ի  
պատարագ, ուստի չեղեւ ընդունելի 'ի Տեառնէ:  
Արէլ ուսաւ հովիւ լինել, 'ի խաշանց իւրոց զդէրս

և զառաջինս մատոց ՚ի պատարագ Աստուծոյ ,  
որոյ ընկալեալ զնուէրս նորա հոսոտեցաւ ՚ի հոտ  
անուշից :

Զ. Ագամ , թօռունք և որդիք իւր բնակեցան  
յանդիման դրախտին ՚ի Հոյսատան , գործեցին զեր-  
կիր , սերմանեցին զերմանիս ՚ի Հայտատան , և կերին  
՚ի սերմանց երկրի , և ՚ի պատցոյ ծառոց երկրի մերոյ ,  
զի աւանդեն մեկնիչը Ս. գրոց թէ նահապետք ոչ  
երբէք կերին զմիս անանոց , այլ ընդեղինօք և  
մրգօք շատացեալ ապրեցան ընդ երկար , բայց  
յետ ջրհեղեղին առեալ մարդկան հրաման ուտել  
զմիս , որով կարճեցան կեանք մարդկան : Նոյ  
այս արդար ՚ի նահապետաց անտի ուստι երկ-  
բագրիծ լինել . Ենին , թէ , 20 : Եւ սկսու Նոյ՝ այս  
հողագործ զերկիր գործել , և տնկեաց այդին ,  
Յօրմէ յայտնի երեւի թէ Նոյ զցորեան , զդարի ,  
և զոյլ ամենայն սերմանելի ընդեղինս սերմանեաց  
առ ստորստով լերին Մասեայ ՚ի գաշտն Այրարո-  
եան . ՚ի մերձակայ յանտառաց գտեալ զուռ որ-  
թոյն տնկեաց ՚ի յԱկոռի այդւոջ իւրում : Միթէ  
հարցանել կամի՞ս թէ Նոյ որով գործեօք գոր-  
ծէր զերկիր . — Ապաքէն յայտ է ՚ի Ս. գրոց թէ  
թորել կանխագոյն գտեալ էր զգարբնութիւն ,  
որով զպարզ գործիս երկրագործութեան շինեցին  
մարդիկ նախքան զնոյ , որ ուսեալ ՚ի յառաջնոցն  
ոզոցով , որագով և այլովքն շինեաց զտապան .  
Բըզով , բահով տնկեաց այդի . իսկ գութանի , չո-  
րացի և վեցկոյ խոփովք վարեաց զերկիր . և սեր-  
մանեաց զսերմանիս :

4. Մեզ չէ ողարտ երբէք թողուլ զանսուտ վկա-

յութիւն ը. յրոց, և զհետ սիդել կեղծ և առաօս-  
պել պատմութեանց սցըրց աղդաց. վասն զի Վիր-  
գիլիոս զՀերմէս աստուածուհին դնէ գտիչ երկրա-  
գործութեան, կարծելովլ թէ գտեալքն 'ի Նոյէ կո-  
րուսեալ էին, խոկ սա զերստին նորոգեաց. Եղիպ-  
տացիք Օսիրիս համարին գտիչ սոյն արհեստի. խկ  
այլք զայլ ոմանս ցուցին, զի տեսեալ թէ երկրա-  
գործութիւն յոյս ինչ մասն աշխարհի առաւել ծաղ-  
կեցաւ, կարծեցին թէ չաստուածք երկրին այնորիկ  
գտին զարհեստն: Այլ սուրբ գիրն զճշմարիտն ա-  
ռանդէ մեղթէ զիա՛րդ առաջին երկրագործ եղեւ Ա-  
դամեռ որդիք իւր, երկրորդն եղեւ նոյ և սերունդք  
իւր, որք զառաջին գործեցին զերկիրն Հայաս-  
տանի, և ծաղկեցոցին զարհեստն 'ի նմա, յորոց  
ուսեալ մարդկան ցրուեցան յոյլ և այլ կողմանս  
աշխարհի և ծաղկեցոցին զիենցազօդուտ արհեստն:  
Նախնական սերմանիք նախնի երկրագործաց էին  
ցորեան, գարին, հաճար, ոլոռն, ոսպն, ոռքա  
յասուկն և բնական բերք են գաշտացն Հայաստանի,  
որք առանց հերկերդ սերմանելոյ և մշակելոյ բռ-  
սանին 'ի վայրի տեղիս իրբեւ զվայրենիս:

4. Ի նահասպետաց անտի մինչեւ ցայսօր չիք աղդ-  
հեստամատ երկրագործութեան 'ի վերաց երկրի,  
որպէս զազգս մեր. զի Հայք 'ի հարց անտի առաւել  
սիրեն բնակիլ 'ի դիւզօրայս և լինել երկրագործ,  
քան բնակիլ 'ի բազմամբովս քաղաքս: Զի ոչ մի-  
այն գիւղացիք և քաղաքացիք մեր սիրեն զերկրա-  
գործութիւն, այլ մինչ զի թագաւոր մեր սի-  
րէին զերկրագործութիւն: զի. Արտաշիսէ ասէ  
խօրենացին, թէ՝ «Եւս ամենայն առաքինութեանց

և գործոց ուղղոթեան Արտաշէսի՝ հրամացէ զսահ-  
մանս գիւղից գիւղից և ադարակաց որոշել . . բայց  
տափի ժամանակս Արտաշէսի ո՛չ գտանել երկիր ան-  
գործ յաշխարհին Հայոց, ոչ լեռնային, և ոչ գաշ-  
տային յաղտագոշինոթեան Երկրին: Յորժամպետք,  
ճոփք, և իշխանք իրրեւ զԱրտաշէս սիրեն զերկ-  
բագործս և զարհեստո նոցա, բանիւ և արդեամբ  
քաջալերեն զարարս նոցա . արդարեւ յայնժամ ո՛չ  
գտանի երկիր անդործ յաշխարհի մերում, որպէս  
յաւուրս Արտաշէսի: Բայց յորժամ պետք և առա-  
գագոյնք արհամարհեն զերկրագործն, ընդ ծանր  
տոկոսօք վաշխօք և հարկօք նեղեն զնահապետա-  
կան ժողովուրդն, տկարանան մարդիկ, խափանին  
արհեստք, և գաշտորայք խոպանացեալ վուշ և  
տառասկ բուսոցանեն մեզ՝ փոխանակ հաց և  
պառող բերելոյ, որպէս տեսանեմք 'ի ժամանակին  
այսմիկ:

5. Գտանին 'ի բնակիչս քաղաքաց արք անա-  
գործնք, որք ոչ միայն տոկոսօք, վաշխօք և կա-  
շառառութեամբ նեղեն զդիւղացիս, այլ առեն,  
արհամարհեն, 'ի բանտ մատնեն, և բռնի զինչս  
նոցա յափշտակեն . ուստի այժմ փոխանակ ծաղ-  
կելոյ երկրագործութեան 'ի բազում որեք խափա-  
նեալ տեսանի: Այլ գու ո՛քաղաքացի ընդէ՞ր ար-  
համարհես զերկրագործ և զդիւղարնակ եղբայրն  
քո . եթէ պարծիս 'ի յարհեստո քո, սակայն երկ-  
բագործութեան արհեստնորա բարի և արդինա-  
որէ քան զամենայն արուեստո քո . եթէ 'ի զի-  
տութիւնդ պարծիս, դիտասնիր եթէ երկրագործն  
ոչ տացէ քեզ լհաց իւր, պարծանք քո ընդ ք'որ

թաղի ՚ի գերեզմանի : Երկրագործութիւն է առաջին աստուածուսոյց արհեստ ՚ի վերայ երկրի , եթէ չկարես ուսանել զարհեստ , բանիւ և արդեամբ քաջալերեա զայնոսիկ , որք ջանան ծաղկեցուցանել զարհեստ : Զինա իրբեւ հարազատ մեղու ՚ի բուն հողոյ առնու զվաստակի իւր . խիկ դու քաղաքացիդ իրբեւ . անհարազատ մեղու մոտանես ՚ի յարդար վաստակին նորա , ՚ի յառ և ՚ի տուր խարէութեամբ յափշտակես դրամն ՚ի ձեռուց նորա , և ՚ի հարստութեան քում պանծաս հանապազօր , բայց դարձեալ անդաստանք և շտեմարանք երկրագործին զքեզ իրբեւ ազքատ յանդիմանեն . զի եթէ փակեսցէ , ՚ի սովու մեռանիս . և գանձք անիրաւութեան քեզ ինչ ոչ օդնեսցեն : Նա եթէ զրամոզակն ՚ի յանդէ . և զարն ՚ի յոշխարէ չըերիցէ ՚ի վաճառ , իրբեւ մերկ մեռանելով առանց պատանաց թաղիս ՚ի գերեզմանի : Դու փակես զգրունս քո ընդդէմ օտարաց և հիւրոց . և աղքատք առ դուրա քո իրբեւ զղաղարոսն սպասեն փշրանաց սեղանոյդ , և չգտանեն . բայց դրունք նորա իրբեւ զգրունս երանելոյն Յորաց բաց է ամենեցուն : Աւստի երկրագործք իրբեւ զնահավեսս սիրելոյ , պատուելոյ , և մեծաքելոյ են արժանի , և ոչ անարգելոյ . զի որպէս ՚ի մարմին գործունեայ անդամ ձեռն է . նոյնպէս ՚ի յընկերական մարմին աղդութեան՝ ժրածվան և վատակաւոր անդամք երկրագործք են :

6. Արդ՝ հանճարեղ և մոացի հայրենասէրն դիւտէ պատուել զգիւղական եղբայլն , դիսէ խրախուսել և քաջալերել զերկրագործութեամբ հարստու և հանճարաւոր լիցի , երկոքումբք ձեռնուու լինի

հողագործ եղբօրն , զի իմաստութեամբ և արիա-  
 թեամբ գործելով զերկիր՝ բաւական լիցի ՚ի վեր-  
 ջն ծայր ծաղկեցուցանել զարհեստ : Դիտէ հայ-  
 րենաւէրն , զի եթէ քաջապէս ոչ մշակեսցի երկիրն ,  
 աղքատանայ գիւղացին . որով մուրացկան լեռը  
 քաղաքացւոյն՝ սովամահ մեռանի : Նա գիտէ թէ  
 մեծագոյն մասն եղբարց մերոց բնակին ՚ի գիւ-  
 ղօրայս , և են երկրագործք . նա ՚ի պատմութենէ  
 և ՚ի փորձոյ գիտէ , թէ երկրագործութիւն ՚ի նախ-  
 նեաց անտի սեփական և գլխաւոր արհեստ է Հա-  
 յոցս . որք թէ ՚ի բուն հայրենիս բնակեալքն , թէ  
 յայլ կողմանս աշխարհի գաղթեալքն՝ ամենայն  
 ուրեք վութով զհետ պնդեցան մշակել զերկիր  
 և արգասաւոր առնել : Ել և հեռացիր ՚ի քաղա-  
 քական ժխորանաց և գարձո զակն քո գթութեամբ  
 ՚ի վերայ գիւղաբնակ եղբարց քոց և տես թէ որ-  
 պէս սիրելի են նման միշտ նահապետական , հովուա-  
 կան և երկրագործական կեանք . մուտ ՚ի քաղաքա-  
 ՚ի գիւղս , ՚ի յայդիս , ՚ի յանդս և յանդաստանս նո-  
 ցաւ , եթէ որտղալից այդի , եթէ ատոքարեր անդս ,  
 եթէ բարւոք մշակեալ երկիր տեսանես , առանց  
 հարցանելոյ դիտասնիր թէ ձեռք . Հայոց մշակեցին  
 զայն : Բայց եթէ անդ զծաղկեալ անդս և անդաս-  
 տանս տեսցես , որք չեն ՚ի ձեռու Հայոց , այլ օտա-  
 րազգաց : Յայնժամ զի ոտասնիր թէ կամ ձեռումբ  
 Հայոց մշակեցան , կամ ՚ի ձեռաց Հայոց յափշտա-  
 կեցան , և յետագայ բնակիչք ՚ի նախնին բնակւաց  
 Հայոց ուսան այնպէս գործել զերկիր :

7. Հայք միշտ ճարպիկ և ժրաջան են ՚ի յերկրա-  
 գործութեան , վասնզի ամենայն գործիք երկրա-

դործականք թէ երկալթեղէնք թէ փայտեղէնք .  
 թէ կաշեղէնք ինքեանք պատրաստեն վասն ին-  
 քեանց : Օտարազգիք թիւրք և թիւրտք չդիտելով  
 զարհեառ Երկրագործութեան՝ Հայոց տան մշակել  
 զանդս , զայդիս և զանդաստանս իւրեանց , բայց  
 բաղումք ինոցանէ գոլով բռնտորք՝ բռնի աշխա-  
 տեցուցանեն զչայս , կամ 'ի փարձու կալեալ ապա  
 զլանան չուալ զվարձու . է ուրէք զի ոչ միայն զմար-  
 դիկ , այլ զեղինս և գդործիս նոցա բռնի հանեալ  
 'ի տանց և քարշեալ 'ի յանդաստանաց՝ տանին և  
 տան հերկել զերկիր իւրեանց , և 'ի ժամանակի  
 հնձոց եւս բռնի հնձել տան զհունձս իւրեանց :  
 Այս' օտարազգիք եւս դիսեն զոդուա երկրագոր-  
 ծութեան , բայց գոլով ծոյլ անձնասէր և վայրենի  
 չփրեն անձնամբ միօիլ 'ի դործս , որադք ոչ միոյն  
 ինին միշտ խափանարար դործոց ժբաջան երկրա-  
 գործաց , այլեւ դարանակալ լինին կենաց նոցա :

8. Ո՞հ , երանի թէ բռնաւորն 'ի կալէ և 'ի յնձանէ  
 Հայ երկրագործիր զգտութն միայն յափշտակէր ,  
 թէ երեւս ոյնքան ոչ վշատանայր նահապետական  
 սիրոտ քո , այլ զիա՞րդ կարես համբերել և տոկալ .  
 յորժամ զգութան , զվերկին , և զչորոցն ընեալ հեր-  
 կես զերկիր , յանկարծ իրրեւ անողոք գաճիճ 'ի վե-  
 րայ . քո յարձակի քիւրան անօրէն , զդոմեշչս , և  
 զեզինս յաւարի աւեալ յափշտակէ , տիգաւ և սրով  
 զսիրտ քո խոյէ և սպանանէ , զոչխարս քո 'ի դոմոց ,  
 'ի լերանց և գաշտոց գաղտնի կամ բռնի յափշտակ-  
 եալ զսիրտ քո անհնարին արտմութեամբ փարակէ :  
 Ի պաղաքեր այդիս քո մուեալ զոր բաղում խնամօք  
 մշակեցեր սատաքանց և ճզակատոր առնէ : Զդա-

Հարագեղ զանդու քո ստից կրիանք արարեալ առ  
նասնոց իւրոց ճարակատեղի առնէ : Զկարի ար-  
գասաւոր զանդու քո , որ հեռէ է ՚ի շինութենել ,  
առ ահի չկարես սերմանել , իսկ զմատաւորս յա-  
ճախ սերմանելով չկարես զատանապատիկն առնուլ  
՚ի նմանէ : զմից ամի զվաստակս քո հնձեալ զո-  
րայ կապելով դիզես ՚ի յանդի կամ ՚ի կալի . բայց  
անագորոյն բռնաւորն փոքր ինչ կոյծով զարդինս  
աշխատութեան քո հրոյ ճարակ տայ յանկարծակին  
Ուստի զցորեան սերմանեալ զդարեղէնն ուտես ,  
զդարեղէնն չգտեալ զհաճարն ուտես , և զայ  
չգտեալ զկորեկին ուտես . բայց սիրտ բռնաւորին  
ոչ դթայ ՚ի վերայ քո , և ոչ սզորմի օրդւոց քոց :  
Ահա արսպէս անոզորմ դատեն զքեզ , և զհայն ՚ի  
բերանոյ քումին յափշտակին , մինչդեռ դու ոչ  
միայն զադքատն , զպանդուխոն և զօտարականն  
կերակրես , այլ զժադարեաւորս , զքահանայս , զտզ-  
դայինս , և զօտարազդիս ստատարտութեամբ  
կերակրես :

9. Ոչ սակաւ քստմելի են արարք քաղաքացի-  
քարոյական տւազակաց , որք բազում իւիք անցա-  
նեն քան զեռնու բնակս : Զեզն և զսերմն երկաւ-  
գործին յափշտակեցին , և կամ պատահմամբ պա-  
կասեցիւ , ՚ի դարնան երթայ առ հարուստ քա-  
զաքացին և տոկոսիւք 500 դահեկան տունու վասն-  
գնելոյ զգումէ մի բայց նա մինչ ՚ի ժամանակս կա-  
լին պահանջէ զնել ՚ի վերայ 500 եւս տոկոս . եթէ  
երթիցէ առ վարձակալ քաղաքացին և առնու ՚ի  
նմանէ վասն սերման զքու մի զորեան , նա զքու  
մի եւս շահ դնէ ՚ի վերայ մինչեւ ՚ի ժամանակա-

կալին , և եթէ ցինիցի ձեռն երկրագործին բաւական հասուցանել ՚ի պայմանեալ ժամանակին , կը կին եւս տոկոս ՚ի վերայ տոկոսին յաւելու , մինչեւ իբրեւ զտղրուկ ծծեսցէ զարիմն երկրագործին և յափշտակեսցէ ՚ի ձեռաց նորա զարտօրայս և զայդիս ՚ի փոխարէն անիրաւ վաշխի իւրոյ . Արարք քառաքայի աւազակացս բաղում՝ անդամ՝ առաւել ծանր հարուածս տան երկրագործաց քան լիոնարմակաց , զի սորա սրատահարար վասահն , իսկ քառաքայի վաշխառուն հանապաղոր , առաջին՝ իբրեւ զկարկուտ և հեղեղ սաստկութեամբ իջեալ՝ ողոզէ գմանն մի ՚ի յանդոց և յանդաստանաց , իսկ երկրորդն իւրեւ տապահառո՞ն խորշակ զամենայն դդարար բոյս հողագործին ցամաքեցուցանէ : Ուստի յորմամբ լուիցես թէ սովորացարեալ է զշայաւ տան , և ալքատութիւն տառապեցուցանէ զհողագործու , յայնժամ գիտասնիր թէ լիոնային , և թէ քաղաքային աւազակք յափշտակեալ և գրաւեալ են զանդս և զեղինս երկրագործաց : Յորժամ՝ տեսանես թէ հակայ երխոտասարդք քիբրեւ թափտառական զկեանս իւրեանց ՚ի ողանդիտութեան մաշեն , գիտասնիր թէ ՚ի յանողոք աւազակաց հալածեալ են :

10. Արդ եթէ գումարտակք աւազակաց . համարձակէին կոխել զսահմանս եւրոպացոց : և բըռնանալ ՚ի վերայ երկրագործաց նոցա , միթէ հնարէ եր ծաղկիլ երկրագործութեան ՚ի կողմանս այնոցիկ . Բարձ ՚ի միջոյ զնոյիրս աւազակաց և անս թէ որպէս ՚ի սակառ միջոցի յառաջ զնացեալ երկրագործութեան , Հոյատան քան զիւրոպայ առաւել բերէ զպտուղ արդեանց : Ժամ է արդէն իւրաքանչիւր

Եղբօր ՚ի մի միարանութիւն սիրոյ յօդիլ և կարճել  
զրագուկս աւազակաց, ժամ է աղդ առնել պետու-  
թեան, թէ՝ աւազակը յարաժամ խափանիչը իի-  
նին երկրագործութեան, ուստի արտեստն փո-  
խանակ ծաղկելոյ՝ խափանի, և երկիր փոխանակ  
բերելց զպտուղն խռպանանայ, և դանձն արքունի  
նեղի: Հայաստան դուռի արդաւանո՞՝ զքառասուն  
միլիոն ժողովուրդ կերակրէր երբեմն առանց կո-  
րօտ մեալց բերոց ալրոց աշխարհի. զի երկրագոր-  
ծութիւն ծաղկեալ և առահավեալ եր, իսկ այժմ  
գոգ թէ խափանեալ և արհամարհեալ է:

11. Ամենայն ազգք երկրի գիտացին և գիտեն  
թէ սկիզբն ամենայն արուեստից և հարաստութեանց  
է երկրագործութիւն. ուստի ամենայն խնամով՝  
զհետ եղեն նախ ծաղկեցուցանել զայն, զի նոխու-  
թեամբ վարժամասցին. վասնորոյ ոչ միայն ազգն  
այլեւ. իւրաքանչիւր անհատ փոյթ յանձին կալցի  
հանճարով՝ դրամով և աշխատութեամբ խափանել  
զամենայն արդեւ երկրագործաց և ծաղկեցուցանել  
զարհեստն զայն, զի ասէ խմաստոնն, թէ՝ « Աւ  
գործէ զերէն առ հարէն, իսէ ոք նոզէ յամուբայնէ որդին ուսու-  
խառնուց է. և Հայր նորաւ ասէ « բայց +» լուն ու-  
շորութեամբ, պարբուդուցն քեզէիւնիւն + անողութիւն,  
հոգիուր բոշուր որապեսն շաբեան, ուշունցն և օրնեսցն  
շՏեր: Երկրագործ, որ գործէ զերկիր խմաստու-  
թեամբ շաեմարանք նորաւցցին լիութեամբ. Երկ-  
րագործութիւն ոչ միայն զմարդն ՚ի դողութենէ  
և յափշտակութենէ զերծու պահէ, այլ առնէ զնա  
առատասիրս և մարդասէրս. Երկրագործութիւն  
զմարդն առողջս և ուժեղս պահէ, և երկարակեացս

առնէ . իսկ քաղաքացին որ վարէ զկեանս մեղի և  
անգործ , լինի վատառողջ և կարճակեաց : Երկ-  
րադորձն նմանի ժբաջան մը ջման , որյամարտյանի  
ժողովէ զարդիւնս , իսկ քաղաքացին նման է ծոյլ  
թղչղի , որ յամարտյանի երդոց և զուարճութեանց  
պարապեալ՝ սովամահ կորրնչի ՚ի ձմերայնի :

42. Աստանոր պարտէր ինձ ՚ի վերայ բովանդակ  
արհեստի երկրագործութեան խօսիլ ընդարձակ ,  
բայց զայր թողաք վարժապետաց , և արհեստա-  
կան մատենից , յորոց ուսցին տմենայն երկրագործ ք  
լիովին : Թէեւ Հայք յամենայն գիտութեանց և  
արտեստից զնան մի առեւալ մուծին ՚ի դպրոցս ,  
բայց գեռ մինչեւ ցայսօր չբացին զդպրոցս երկրա-  
գործութեան և չմուծին զարհեստս ՚ի վարժոցս ,  
որ առաւել արդիւարար և շահաւէտ է համօրէն  
լրութեան աղդիս , որ միշտ հետամուտ եղեւ մշա-  
կել զհայրենի երկիր ինը , որյոյժ սիրելին և ցան-  
կալին է նմա , որոյ վասն ասէ բանաստեղծն օլման-  
կլստիք զիս Հայոց հողն ու ջուր մնուցել , ես այն  
հոգին ու ջուր սըրտով եմ սիրել , Հայրենեաց հա-  
րուստ է հոգ , ջուրն անուշ , բանց օտար վարդ-  
քաղցը է հայրենեաց փուշ :

## Յ Օ Դ Ո Ւ Ա Ծ . Գ .

## Ա Շ Խ Ա Ր Հ Ա Շ Խ Ա Ռ Ի Թ Ի Ի Ն

4. Հայրենասէրք . որք աշխարհի շինութեան ,  
բարեկարդութեան և խաղաղութեան զհետ գնա-  
ցին , աշխարհաշէնք անուանեցան . թադաւորք  
սրք զօրէնս , կարդա , ուղղութիւնս , սահմանս ,

կանանք հաստատեցին ՚ի շինութիւնը մարդկան՝  
 ՚ի բարոյական կարգի՝ աշխարհաշենք կոչեցան։  
 Վազարշակ, որ արտաքին և ներքին բարեմաս-  
 նութեամբ ճօխանայր, գործ թէ՛ ՚ի գառաջմ նիո-  
 թական և բարոյական աշխարհաշինութեան բարձ-  
 րացաւ, զի զառաջին սկիզբն արար բարեկարդել  
 զգլուխ իւր զառն, զգառայս, և զթադաւորու-  
 թիւն իւր, զի զբագարատ իշխան՝ որ յաղգէն Հրեխյ  
 թագադիր հաստատէ յորդոց յորդի՝ վտան հաւա-  
 տարիմ ծառոյութեան նորա . յիշեցուցիչ երկուս  
 կարգէ, զի թէ մոռացմամբ ընդդէմ իրաւանց և ար-  
 գարութեան գործել մտարերիցէ . յիշեցն նման  
 առնել իրաւունս և արգարութիւն : Նոյնպէս ՚ի հա-  
 ւատարիմ և ՚ի քաջ արանց կարգէ հանդերձապետ,  
 զինակիր, ախտատպետ, շտեմարանապետ, որա-  
 պետ, բաժակակիր, արծուեկիր, և զայլն քառ կար-  
 գին, զորս յականէ և յանուանէ յիշատակէ ՚ի դիրո  
 իւր խորենացին . որ ներբողէ զիշազարշակ առելով .  
 «Ո՞չ առաջեւ, + արէ, + էսունուն, նան ճարկն ու»

2. Վազարշակ եղ զդինուսուրական կարգու և մտըզս  
 ՚ի դիւցազուն որդիս Հայկազմնց . զզօրս իւր բա-  
 ժանեաց ՚ի յորս գունդո սկահապանել զըզրեսին կող-  
 մանս հայրենի աշխարհիս ՚ի յաշաւանաց շրջադայ  
 ազգաց . ՚ի կողմէն Հիւսիսի զրդեշխութիւն մի կար-  
 գեաց ՚ի զաւակէն Միհրդ ատայ ընդդէմ ազդաց լեռ-  
 նականաց . «Խոր . իսկ ընդդէմ լերինն կովկասայ  
 կողմեակալ Հիւսիսոյ. զմեծ և զհզօր ազգն, և նաւ-  
 հապետութեան մնուն կարգայ բդեշիս Գուգարան-  
 ցւոց, որ եր լեռալ ՚ի զաւակէն Միհրդատապյ Դա-  
 րեհի նախարարի» . զի ազդք Հիւսիսականք սովոր

Քին ստեղ յարձակիլ ՚ի Հայաստան . որպէս եին  
Լէզկիք . ի կողմն անուանիր և բաղմարիւր Արեւե-  
լեան հիւսիսի հաստատէ զկողմնակալութիւն պա-  
հել զաշխարհն ՚ի շինութեան և ՚ի խաղաղութեան .  
«Մեծ և անուանիր և բաղմարիւր դարեւելից հիւ-  
սիսոյ կողման կարգէ կողմնակալութիւն՝ զայր ա-  
նուանիր , և յամենայն գործ մոտաւորութեան և հան-  
ճարոյ և գործոյ պատերազմիր և խորհրդականու-  
թեան առաջին զԱռան : ի կողմն հարաւային  
զԱղճնեաց մեծ բգեշխութիւն հաստատէ . զի զհա-  
րաւային զտզդո , և զբնակիչս Տաւրոսական լեռանց  
՚ի հանդարատութեան և ՚ի խաղաղութեան պահեսցէ:  
«ՂԵարաշան ՚ի տանէ Աանստարայ հաստատէ բգեշխ  
մեծ և կուսակալ յարեւմոից հարաւոյ յեղերս սահ-  
մանայն Ասորեստանի առ ավին Տիգրիս գետոյ, գա-  
ւաւս պարգեւելով զԱրձն և որ շուրջ զնովա , և  
զլեառն Տաւրոս, ուր և Աիմ և զիզէսուրն ամենայն :  
ի կողմն արեւելից հաստատէ զկողմնակալութիւն և  
զօրավարութիւն , և տայ ՚ի ձեռոս Ախական և կադ-  
մեայն Հայագարօմ նահապետութեանց . «Եւ յԱրե-  
ւելից կողմանէ զեղերը Հայկական խօսից կողմնա-  
կալու բիւրաւորս զերկու ցեղից նահապետութեանց  
Ախական և կադմեայն : Խակ ՚ի կողմն արեւմոից հաս-  
տատեալ զկողմնակալութիւն և զօրավարութիւն»  
տայ ՚ի ձեռոս Տորք նահապետին Անդեղեայ : «Խակ  
խոժուագեղ . . . Տորք անուն կոչեցեալ , որ վան  
առաւել ժահադիմութեանն կոչէին անդեղեայ ,  
զիթխարի հաստակաւ և ուժով , հաստատէ կուստ-  
կալ արեւմոից» :

Ճ. Ահա Վաղարշակ իբրեւ իմաստուն ճարտա-

բապետ շուրջ զսահմանօքն Հայոսատանի քաջազարմ  
բգեշխօք , կուսակալօք , զօրավարօք և զօրօք ամ-  
րացուցեալ շուրջանակի պարապեաց զՀայառառան  
եայս իբրեւ զաշտարակ մի հզօր և իբրեւ զբերդ  
մի անմատոյց . որովք աշխարհի մերոյ շինութեան  
խաղաղութեան բարեկեցութեան առիթ եզեւ . զի  
յետ այսորիկ քաղաքք , աւանք և գիւղք , որք  
ի թշնամեաց օտէպ կործանէին , շինեցան . մար-  
դիկ և ինչքնոցա , որք 'ի գերութիւն և 'ի յավշտա-  
կութիւն անկանէին , ազատեցան . շինեցին տունս,  
անկեցին այդիս , սերմանեցին զսերմանիս , և կերին  
զվաստակ ձեռաց իւրեանց :

4. Վազարշակ իբրեւ զնրբամիտ կենցաղադէտ ,  
և իբրեւ զհեռատես քաղաքագէտ՝ կարդս և պա-  
տիւս եղ . 'ի նախարար Հայկաղարմից , որք ան-  
կարգութեամբ այր զարարէ ելանելով՝ յարձակէին  
'ի վերայ միմեանց . քանդէին , կործանէին դքաղաքա-  
զէնս և զսահմանս միմեանց , և աւարի հարկա-  
նէին զինչ և զստացուածս միմեանց , ուստի վա-  
զարշակ կարդս կենցաղականս և խաղաղականս եղ-  
եալ 'ի նոսա՝ արդարութեամբ որոշէ զսահմանս  
նոցա , պատուէք տուեալ զի շինեցեն և բարեկար-  
գեցեն զաշխարհս . Զիւրաքանչիւր նախարա-  
թեանց անուանս ՚ի ցեղեց և յաշխարհաց առեալ  
կոչէ զնոսա՝ Ծոփաց , Ապահունեաց , Մանաւա-  
զեանց , Բղնունեաց , Սլկունեաց , Մանդակունեաց ,  
կորդուաց , Անձեւացեաց նախարարութիւնս և այլն  
խոր . Շեշտէ վեցաշխանս որոշէ բորն եր շնորհեաց ուշուր-  
հէ , և նույնարդուին և նոցին նուիորարութիւնն և նուիո-  
րութիւնն հաստատեաց ուրա ունունիւն :

Յ. Բառ որում Աստմանօր՝ 'ի մասնաւորի զաշխարհ հաշինութենէն վաղարշակոյ և այլ երեւելի արանց է բանս, ուստի պարտիս ընթեռնուլ նախյի, դլուխըն, գ7, գ8, զ9րդ համարն, ուր զգործոց աշխարհաշէն նահանգեաւացն մերոց պատմեցաք, ապս դառնալ աստ 'ի կարդ բանիս, և լսել զգորւասիս Քերթաշահօրն որ 'ի վերսյ շինութեանցն վաղարշակոյ: «Այս գրաւագ մեծ և հաւաստի պատմութեամի լի, և արժանի բանից ողորկագունից և յօդուից, քանզի բաղում ինչ աստ կարդաց և յօրինուածոյ, ասաց, աղգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, և համայն սուել օրէն թաղաւորութեամն, և որ ինչ շուրջ զիւաշառութեամբ: Գարձեալ նա, «Հրաման ասյ, և գքաղաքն Շամիքամոյ նուղդել և յայլ բաղում տեղիս շինել քաղաք բաղմանախ, և շնա գիշաւորս և մարդախտուս: Նոյնագէս թուվման Արծրունի 'ի մասնաւորի գրուատ: զաշխարհաշէն գործութ, Արտայէսի, որ յետ շիներոյ վերդամետ քաղաքն, զեղեցիկ բուրաստամօք, այդեօք, պարտիզօք շքեզապէս զարդարեաց: Աստ եթէ զհամարէն Հայկաղմաց, Արշակունեաց, Բագրատունեաց և Արտինեաց թագաւորաց զձեռակերտ քաղաքն, զեղեցիկ բաղում բանից պէտունիքք, ուստի եթէ զիւրաքանչիւրոցն զարարս լրիւ իւրով իմանալ կամիս, ընթերցիք զվեպագիրս աղգային: Աւն թագուուր շինէ զկան քաղաքն, որ յանուն նորա կոչի մինչեւ ցայսօր Տիգրանակերտ: Արտաշէս Արշակունի շինեաց վԱրտաշաստ, Երուանդ Զն-

եաց զիրուանդ տշատ՝ Մեծն խոսրով շինեաց դԱ-  
տըրպատականն մեծ, որ կոչեցաւ Դավթիք: Աշուտ  
ողորմած Բագրատունի շինեաց զհուշակաւոր մայ-  
րաքաղաքն Անի: Լեռն Բ. Ռուբինեանց զարքու-  
նիս իւր փոխադրեալ 'ի Ախո, Նորոգեաց զայն, և  
արար մայրաքաղաք տէրութեան իւրոյ: Թողից  
աստանօր յիշատակել զինուածն նախարարաց և  
իշխանացն Հայոց, որք զբաղում քաղաքու աւանն  
գիւղու, և գաստակերտու շինեցին 'ի ժամանակա  
իշխանութեան իւրեանց:

Եկ աստ ո՛ Հայրենասէր, ընդ քեզ 'ի խոր-  
հուրդ իմաստութեան մոցուք, և տեսցուք թէ  
ուր են այժմ շինուածք նախնեաց մերոց: - Ո՛հ,  
բաղումք կործանեցան 'ի թշնամեաց և եղան իլր-  
եւ զհոզարլուրտ, և բաղումք տակաւին են 'ի շի-  
նութեան, որք կան 'ի ծառացութիւն օտարաց:  
Վարդապետք մեր իրաւամբ ասոցին թէ մարդն  
է բարոյական քաղաք, եթէ զհիմն բարոյականու-  
թեան խորագոյնս արկեր 'ի սիրտ մարդկան իրեւ  
'ի հիմունու նախնի շինութեան, վստահ լնը 'ի շին-  
ուածու քաղաքոցդ, ասդա եթէ անփոյթ առնիցես  
զինութենէ բարոյական քաղաքաց, և վութաս-  
ցիս իրեւ Արշակ շինել զԱրշակաւան, և առնիւ-  
ցիս զայն ապաստանարան անբարոյական մարդկան,  
զաղվաղակի տապալին և կործանին հիմունք քա-  
ղաքացդ, և իմրեւ երուառաղէմ ոչ թողցի քար 'ի  
վերայ քարի նորա, որ ոչ քակտեսցի, որպէս խօ-  
սեցաւ Տէր 'ի Մատթէոսեան Աւետարանի: Մե-  
ծութիւն քաղաքաց, բարձրութիւն և ամբութիւն  
պարսպաց, բաղմութիւն մարդկան ոչ կարեն պազ-

Հել զքաղաքն , որպէս կը հնութիւն եղեւ Տիգրանա-  
կերտ քաղաքն մեր , և այժմ փարիզ , որ ամբու-  
թեամբ , մեծութեամբ , և գեղեցկութեամբ թա-  
գուհի եր ամենայն մայրաքաղաքացն : Բայց կ  
սրաէ բնակչացն նորա անկեալ կործանեալ գոլով  
բարոյական շինուածք : ուստի արտաքին ամբու-  
թինք շինուածոց ոչ ինչ օդնեցին նմա : Պարկեց-  
տութիւն , հաւատարմութիւն , եր , միութիւն և քա-  
ջութիւն բնակչացն , առաւել ամուր և անտրիկ  
են քան զաշտարակս և զպարհսպս քաղաքացն .  
եօթն պարհսպքն երիքսի չկարացին օդնել բա-  
նանայւոց , որք շայտանթեամբ և զեխութեամբ  
մերկանային , անկան կործանեցան առաջի երա-  
յեցւոց . որք ի ձեռն Մովսէսի կրթեցան ի յօրէնս  
ի պատուիրանս , և յիրաւոնս Տեառն : Ամրու-  
թինք Անւոյ չկարացին օդնել Հայոց , զի ագահ  
և աիրանենգ վարք և բարք վեստ Արքսի բա-  
ւական եղեւ մատնել զմեծամեծ ամրութիւնս , որք  
բազում աշխատաթեամբ հաստատեալ էին : Յոր-  
ժամ սէրն Աստածոյ կը սրաէ բնակչացն տեղի  
տայցէ , յորժամ մութեան և խաղաղութեան Ա.  
Հօգին ի մասց և ի հոգւոյ նոցա վերասցի , յարժամ  
ժուժկալ բարոյք յանձնէ նոցա հեռացին , ով իշե-  
պահապան որ պահեացէ զքաղաքն , Դաւիթ գո-  
լուլ թագաւոր գիտեր , և ասէր , եթէ Տեր ոչ պահէ  
զքաղաքն , բնդունայն տքնին պահապանք նորաւ :

7. Մովսէսի զմոզմովուրդն Խրայէլի յեղիպտա-  
սէ համեալ ի յանապատն՝ ոչ փաթացաւ վասն նո-  
ցա շինել քաղաքս և կանգնել պարիապս և աշտա-  
րակս , այլ ի վայրենի անապատին բնդ վրանօք

բնակեցու ցեալ զնոսաւ փութացաւ Աստուածադիջ  
օրինօք և բարոյական պէսպէս վարդապետութեամբ  
մարզել զնոսաւ իրրեւ գքաղաքացին արտաքոյ ամե-  
նայն մայրաքաղաքացն . մերկեաց ՚ի նորանէ զա-  
մենայն զիեզու և զմեղկ անբարոյականութիւն , և  
արար զնոսաւ անկեցու , և քաջապինդ զինուորս եր-  
կնոյին զինուորսթեանց : Ուստի Խորացէլ որ ընդ  
ամս 430 ընդ ձեռօք Փարաւոնի ճնշեալ և չոր-  
չարեալ՝ իրրեւ տհարելի չիարել զի՞ն տռնուալ , քա-  
ջապէս զինուորեցու , և պատերազմեցաւ , և զեօ-  
թլին ազգու Քանահացւոց յաղթեաց՝ որք էին կո-  
րովիք , Հոկոյք և քաջաղիզն . սիրեաց ՚ի վերաց  
ամենայն ամսն ը բարաքաց նոցա , և բնակեցաւ ՚ի  
շենանոցա , զոր ոչ շինեցին ձեռօք իւր եկեր զպտու Դ  
այդեաց և տնդ աստանաց նոցա , զոր ոչ անկեաց  
ժառայ իւր : ի բան , ՚ի ձայն , ՚ի խորաս Մովսէսի  
միացաւ ժողովուրզն ՚ի սէրն Աստուծոյ և ՚ի սէր  
ընկերին , ուստի տեսեալ Յորդ անանու զանքակ  
միութիւն ժողովրդ եռնն Աստուծոյ՝ սարսկըով դար-  
ձաւ անդրէն , և միացելոցն սոփից տրտը ճանտ-  
պարհ որպէս ՚ի ցամաքի : Եթացեալ կուտակու-  
թիւնօք քարանց եօմն պարապայն Եղիքովի՝ սար-  
սկալ և սասանեալ ՚ի ձայնէ միութեան Խորացէլի ,  
զզրդ եալ ՚ի հիմնաց կործանեցաւ յերկիր , և խա-  
քայէլ անաշխատ տիրեաց քազտքին : Եթացեալ  
թանձրութիւն ջուրցն կարմիր ծովուն տեսեալ զրա-  
նակն Աստուծոյ՝ յայս կոյս և յայն կոյս կոցեալ որ-  
պէս զպարիսապ քարեայ՝ ճանապարհ արար տաժա-  
նեալ սոփից նոցա , որ կոխելով զկաւան՝ շինէր զքա-  
դաքսն Եղիքուացոց . ուստի Դաւիթ հրացեալ

բնդ այս հարցաներ թէ «Եւու ու ուեւը, և իւկեւը, և  
և ուս Յուրածուն» . զէ՞ ուսը ունտւեն»

9. Մատերուք առ իս որդի՛ք Հայկայ, որպէս որ-  
դիք Յակոբայ ՚ի ձայն Մավսեսի. «Լուր իւրուէ և Տէր Ա-  
ռաջաց ուն, Տէր ՚ի ե, և ուշեսցես ընայենայն այնեւ, յունայն  
շըրունենեւ և յամենայն ճառց ուց. ուշեսցես զընէւրն և էւրե-  
սնայն ուց. Ահա ես ՚ի սէրքու գամից այսօր զարթուցանել  
զքեղ յիշատակօքս, եռանդն հայրենասիրութեան,  
որ բորբոքեալն է յիս, ոչ թողու զիեզու իմ՝ ՚ի լուու-  
թեան, այլ միշտ կամի զհաճոյնն Աստուծոյ և զբարին  
ընկերին ուստացանելքեզ. արդ՝ մի իրրեւ զյուսա-  
բեկ արտամիցիս, և մի ատարակուսեալ զայրանայցիս  
ընդ վիշտու և ընդ նեղութիւնո քո, ընդ աւեր և  
ընդ կործանումն շինից և քաղաքաց քոց. Այլ եկայք  
միարան սիրեցէք զիւստուած, միարան սիրեցէք  
զմիմեանս, միարան սիրեցէք զեկեզեցին, զազդ և  
զհայրենիս. եթէ ՚ի շենս ես, և եթէ արտաքաց  
շինից, միշտ լի՛ր միարան. միութիւն լիցի հիմն  
պարագաց քոց, խաղաղութիւն քաղաք ամրու-  
թեան, եղայրսիրութիւն աշտարակ հզօր, ճշմոր-  
ատութիւն լիցի զէն քո, զութ և ողորմ լիցի վա-  
ճառ քո, օգնել վիկել և կեցուցանել լիցի վահան  
քո. սէր լիցի դրօշ արքայութեան քո, զախտու  
մահայուս մերժել լիցի պատերազմ քո. տիրելն  
՚ի վերայ կրից և ցանկութեանց լիցի յաղթութիւն  
քո, հայրենասիրութիւն լիցի վառք և պարծանք  
քո, Յայնժամ Տէր ինքնին եկեսցէ և անքուն ա-  
կամր պահեսցէ զքեզ, ինքնին եկեսցէ և պահա-  
պանս կացուցէ ՚ի վերայ պարագաց քոց, ինք-  
նին եկեսցէ շինեսցէ, զաշտարակս քո ամուլս, և

դրու՞նք քո պղնձիս , ինքնին եկեցէ և տացէ պատերազմը ընդ թշնամիս քո , ինքնին եկեցէ և վլրկեցէ զբեղ յամենայն նեղչաց քո :

## ԳԼՈՒԽ ԺԴ.

ՖԱՌԱՅԻՐ · ԱԽԱՆՔ ԵՒ ԳԻՒՂԻ

1. Եինութիւնք քաղաքաց աւանաց և գիւղից , զորս ընդ ժամանակս ժամանակս նահապետք , թագաւորք , նախարարք և ժողովուրդք մեր շինեցին , սկսանի ՚ի նոյն և դայ հասանէ մինչեւ ցվերջ թագաւորութեան Հայոց և այսր եւս , Ակիզրն և կեղրոն շինութեան քաղաքաց և աւանաց եզեւ ՚ի Հայաստան , որոյ հնադոյն շինուածք վկայեն զրնակչաց նորա , թէ չեղեն նոքա երբէք վայրենի , որպէս բնակիչք այսոց կողմանց . հնութիւնք շինուածոց մերոց ապացուցանեն , թէ Հայք ՚ի սկզբանէ հետէ ընդ նահապետական կենացն դիտէին նաեւ վարել զիեանս ընտանեկանս , ընկերականս և քաղաքականս . վասն զի շինութիւնք քաղաքացն Հայոց սկիզբն առնելով ՚ի Նախիջեւանայ , և ՚ի Հարքայ՝ բարում ամօք յառաջ շինեալ համարին քան զինուածո Բարելոնի , Ասղիմայ , թերայիդ այ և Հռովմայ :

2. Նախնիք մեր . որ այնչափ մեծամեծ շինուածովք քաղաքաց , աւանաց և դիւղից լցին զՀայաստան , արդեօք որչափ բաղմանեռն հարբատութեամբ ճոխացեալ էին . երկիրն բարերեր , մարդիկ ժրածան : վաստակն և շահն քաղաքացւոցն և զիւղացւոցն ոչ եւսներ արտաքս բան զՀայաս-

տան , այլ մետիր ՚ի դանձու և ՚ի շտեմարանս իւրա  
ժանց . իշխանութիւն երկրին հայրական , նահա-  
պետական և տանուտերական էր , որ երբէք չնե-  
ղէր զժողովուրդն ծանր հարկօք . տուն Յարէթի ,  
Հայկայ և Արամայ յաչու ամենայն ժողովրդոց սի-  
րելի և պատուելի էր , ժողովուրդք երկրին որդե-  
ական սիրով հնազանդէին տերանց իրրեւ հարց ,  
ուստի սէր և խաղաղութիւն թագաւորէր ՚ի քա-  
ղաքս և ՚ի գիւղս նոցա : Հայր իշխանք մեր մինչեւ  
ց Պարոյր՝ ոչ սիրեցին թագաւորի կամ բռնակալի  
անուամբ սոնքանալ , վասն զի հայր և նահապետ  
անուն յոյժ սիրելի և նու իրական էր յաչս իւրեանց .  
Խորամանկութիւն Ասորոյն հնարեաց դնել թագ  
՚ի գլուխ Պարոյր նահապետին , զի թագաւորական  
տիտղոսով բարձցէ ՚ի նմանէ զհայրական անուն :

3. Մարդիկ ՚ի տուրս ՚իյառս և ՚ի վաճառս ոչ  
նենդէին և ոչ խարէին զմիմեանս . քաղաքացին  
հոգայր զավաոյսն զիւղացւոյն , և փոխարէն ըն-  
դունէր ՚ի նմանէ զոյլսար , զցորեան և զիւղ . Ազ-  
քատն ՚ի գործս հարստաց աշխատէր իրրեւ ընկեր  
և օգնական նմա և հարուստն հայթայթէր զամե-  
նայն պիտոյս ընտանեաց ազքատին , Տանուտե-  
րանց շտեմարանք բաց էին կարօտելոց , և սեղանք  
նոցա պատրաստ առաջի ազքատաց և անանկաց :  
Երկիր՝ վարողին և սերմանողին էր , իմ և քո բա-  
ժանարար լեգեհոն դիւական չէր դտեալ մուտ ՚ի  
նոսա , վասն զի տակաւին շահասիրութիւն , ագա-  
հութիւն և պաշտօն անիրաւ մամնային չէր տիրո-  
եալ ՚ի վերայ բաղձանաց նոցա : Ուստի բնակիչք  
քաղաքաց և զիւղօրէից էին միմեանց հայր և ու-

քի , եզրայր և քոյր , ամենեքան արք ինսունուք  
և ազնուագութք , ուստի ամենեքեան իբրեւ յան-  
դէտս ընկերասէր , միաբանասէր , եզրայրասէր , և  
համայն ասել Հայրենասէր էին , դուցէ բառքս  
այսոքիկ էին անծանօթ ՚ի միտս և ՚ի բերանս հնոյն ,  
և միայն ծանօթ և կենդանի ՚ի սիրոս և ՚ի դործս  
նոցա , խակ նորոցս բառքն ծանօթ են , և կենդանի  
՚ի բերանս , խակ ՚ի սիրոս , և ՚ի դործս նոցա մեռ-  
եալ :

և թեւս աղաւնոյ առեալ թոփիր առ աննենդ  
հոգին հարց քոց , մերձեցիր առ սեամն քաղա-  
քաց նոցա , մուտ ՚ի հրապարակս և ՚ի ժողովս նոցա-  
ոչ եղիցի քեզ տեսանել անդ անձնասէր , վառա-  
սէր և շահասէր հոգի , որ զհայր յորդւոյ , զհայրն  
՚ի դստերէն , զկեսուրին ՚ի հարսնէն , զեզրայրն յեզ-  
րօրէն , ազդական յագդականէն , զքաղաքացին  
՚ի շնականէն , զհարուստն յադքատէն բաժանէ ,  
բայց եթէ այժմ մոցես ՚ի քաղաքս , ՚ի յաւանս ,  
և ՚ի գիւղս քո , ոչ միտյն զայսոսիկ տեսանելով  
տեսցես , այլ զաղետային քան զայսոսիկ տեսցես  
խուստութիւնս , անմիտաբանութիւնս , եզրայրատեցու-  
թիւնս , ազքատատեցութիւնս , որք առ զիւզացիս  
և առ քաղաքացիս առ հասարակ ճարակ գտեալ  
վասն անձնական գոյզն ինչ շահու , որոյ վասն կոր-  
ծանեն զտունս միմեանց , աւերաւկս գարձու ցանեն  
զգիւզու և զքաղաքս հայրենեաց , ուստի Յակոբոս  
առաքեալն կշուամբէ զայսպիսի շահասէրս առե-  
լով Առաքէ իւլու , Առաքէ հուսուսիւլունու , ՚ի յեւ , ա-  
ռաքուեն շոյքուէ շահիւլունու յեւոց , որւ շքազէւ են  
շահաքունու յեւ և այլ :

5. ԶԱՆԵՌԱՅԻՆԵ՝ ՔՈՒՄԾԵ՝ ԿԱԼԵԱԼ մուծից դքեզ ՚ի  
յաւերակ քաղաքն վասպուրականի՝ ՚ի բերկրի,  
՚ի յԱրձեշ, ՚ի յԱլտան՝ որոց դրունք անկեալ ուա-  
րիսպք կործ անեալ և բնակիչք հարած եալք, գնաս-  
ցուք ՚ի Տուրուբերան՝ ՚ի Տարօն, տեսցուք զիսլամի-  
ն զթձ քաղաքն: Ի Հարք՝ զՄանավիերուն Ի բարձր  
Հայք՝ զՄան: Ի Խոփաց աշխարհ՝ զՄեծկերտն:  
գնասցուք ՚ի համբաւատենչ գտանոն Այրարատ,  
տեսցուք զտւերակս Երուանդակերտի, Վաղար-  
շապատի, Գևոյ և Արտաշատու, որք Էին մայ-  
րաքաղաքք: Խակ այժմ աւտնք կոմ դիւզք կամ  
իսպառ աւերակիք, տեսցուք զվարշակերտն,  
որ այժմ ասի (Յօփրազդալէ): և է վաքրիկ գիւղ  
մի մոռացուք այց Ելանել աւերակացն Անուոյ,  
եթէ սակաւալթիւ բնակիչք աւերակացս լւեսցեն  
քարինքն աղաղակեն, թէ յորժամ հոգին միու-  
թեան և սիրոյ Ել ՚ի բնակչացս, անկան կործանե-  
ցան պարիսպք մեր: Շահասիրութիւն խախտեաց  
զհիմունս մեր, հուր նախանձու այրեաց զգեղեցիկ  
շինուածս մեր, ամբարտաւանութիւն խանարհեցոց  
զզարիսապս մեր, տղիտութիւն և մատնութիւն  
դերի արար զբնակիչս մեր, անմիարանութիւն  
՚ի սուր սուսերի մաշեաց զժողովուրդս մեր:

6. Հանեալ զքեզ ՚ի յաւերակացն հայրենի՝ տա-  
րայց ՚ի քաղաքս, ՚ի յաւանս և ՚ի գիւղս. անդ  
տեսցես զեղբարսքո, որք այժմ բնակին թէ ՚ի բուն  
հայրենիս և թէ արտաքսյ հայրենեացն. Աւազ,  
զի ուր տան տուն Հայք բնակեցան, փոխանակ  
սիրոյ ատեցին զմիմեանս և եղեն առիթք կորսո-  
եան միմեանց. անձեական շահն, կոյր փառա-

սիրութիւնը , անզուսպ նախամեծն արար դայս : Աբր-  
մատախիլ արար զմահացու զախոս . տհաւ տմենե-  
քեան սիրով յօդակապին ընդ միմեանս , և միո-  
թեամբ ձեռն տան շնութեան հայրենեաց : Արդ-  
յորժամ ոտք հայրենասիրիդ այց եղանէ քաղաք-  
քաց , ուանց և գիւղից , յօրս բնակին եզրարք  
քր , ուսո՞ զնոսա վախչիլ ՚ի մեսապարծութենէ , և  
՚ի հապարտութենէ իրբեւ ՚ի թունաւոր օձէ , և  
զհետ լինել հեզութեան և խոնարհութեան . ուսո՞  
զնոսա նախամեծիլ ՚ի վերայ բարեաց և յաջողու-  
թեանց եղաքարց : Ա.Ա. ուրախ լինել , զի հայրենա-  
սէրն զամենայն յաջողութիւն , հարստութիւն , և  
բարօրութիւն եզրարց անձին խրում համարի ,  
հայրենասէրն զինութիւն քաղաքաց և զգիւղից  
տեսեալ բերկրի ՚ի միսա և զուարճանաց : Խակ շա-  
հատէրն 、 հապարտն և նախամեծն զիսրծանութեն շի-  
նութեանցն խնդրէ , որպէսզի տուն իւր միայն  
շէն մնաացէ . խնդրէ տեսանել զամենեսեան իրեւ  
աղքասու ծառայր և զերիս զի բռնարար տիրեա-  
ցէ և իշխեցէ ՚ի վերայ նոցա . զմահ և զերուստ  
տմենեցուն կամի , զի ինքն միայն կենդանի մնաց-  
եալ վայելեցէ ՚ի բարութենէ ասաի : Աշ ապա-  
քէն կատաղի կիրք այսպիսեաց իրբեւ զհրարուխ  
բորբոքեալ . իրբեւ զգեստնաշարժ ՚ի ներքուս  
զզորդ տուեալ և խոռվեալ՝ տառանեցուցանէ զրնա-  
կիչո , կործանէ զքաղաքու և զամենայն չէն :

7. Պարսիկք և Յայնք զիմագաւորութիւն Աբ-  
շականեաց բառանեն յերկուս : Խոսրով ՚ի կողմանէ  
զարսից տիրէ ՚ի վերայ բամնի նոցա . խակ Արշակ  
տիրէ ՚ի վերայ բառնին Յոնաց , տպա Արշակոց

Հանեալ զգանձոս իւր ՚ի յամբոցէն Անւոյ տայ տանելը  
յաշխարհն ծովոց . Սուրէն , Վահան և Աշխագար  
նախարարք , որք յառաջն հաւատարիմքն էին Ար-  
շակայ , դարան մոտեալ ՚ի ճանապարհին՝ յափշտա-  
կեցին զգանձոն և տարան առ խորով վասն հաճոյ  
երեւելոյ յաշն նորա : Արշակայ իմացեալ զիբան բա-  
զում անդամ ինդրէ ՚ի Խոսրավայ առ ինքն դար-  
ձուցանել զգանձան , բայց պատախան ընդունի ՚ի  
նմանէ , թէ դաճք արքունիք ինքեան միայն պատ-  
կանէին : Վասն շահամոլ յափշտակութեանս դրդոի  
պատերազմ՝ ՚ի մէջ երկուց հարազատ ազգականաց  
առ եզերը ծովոն գեղամայ , զանդ կազմեալ սաստ-  
կագէս յարձակին ՚ի վերայ միմեանց , և անդ սն-  
պարտելի քաջը բազումք մեռանին յերկոցունց  
կողմանց : Յետ այսորիկ երկոցունց եզրարցն վա-  
ռեալ ՚ի նախանձ բարկութեան և վրէ ժիմդրութեան  
մերթ ընդ մերթ յարձակէին ՚ի բաժին և ՚ի սահ-  
մանս միմեանց , քանդ էին կործ անեին զքազաքս , դա-  
ւանս և դժիւզս և աւարի հարկանէին զբնիկ զադու  
և զժողովորդս իւրեանց :

8. Դադիկ Արծրունի նախարար վասպաւրականի  
գոլով քեառորդի Սմբատայ արքային Բագրատուն-  
եաց , նախանձու և շահամիկութեամբ մօլեալ խընդ-  
րէ ՚ի Սմբատայ արքայէն զեամիջեւան քազաքն ,  
ասելով թէ ըստ հայրենի ժառանդաւթեան այն  
քազաք ինձ բաժին անկանի , բայց ըստ որում  
Սմբատ զքազաքն նախ տուեալ էր ՚ի պարզեւ Արծ-  
րուն նախարարի Սիսակեմանց վասն հաւատարիմ  
ծառայութեան նորա , ուստի ոչ հաճեցաւ տալ  
նմա , այլ խաստացաւ Գագկայ , զի եթէ վոխանակ

Նախիջաւանայ իննդրեսցէ զայլ քաղաք, պատրաստէ 'ի տալն : Բայց Գագիկ իրբեւ չարանախանձ դեւ զայրացեալ և յամբարասաւանութենէ կուրացեալ, զօրէնս զիրաւունս և զարդարութիւնս աստուածայինս և զմարդկայինս առ ուն կոխեալ՝ խորհեցաւ մատնել զրնիկ տէր իւր, օտար գաղանաց զարենակից զքեռին իւր, 'ի կործանել զհայրենիս և զաշխահրս նորա : Ուստի մեծագին ընծայինք երթայ յԱմրագատական աշխարհն առ Յուառվոստիկան, գառն բանիւք բաղրաք բառնայ 'ի վերայ արքային Սմբատայ : Աստիքան, որ իրբեւ խորամնեկ ոչ ներքին երկագառակութեան Հայոց սպասէր, թագ եղ 'ի գլուխ Գագիկ, և թագաւոր կացոյց զնա 'ի վերայ Վասպուրականի, զի բաժանեալք 'ի միմեանց տկարասցին, և ընդ միմեանս հարեւալք կործանեացին :

9. Գառնայ Գագիկ 'ի Վասպուրական, զսիրաս բազում նախարարաց 'ի կողմն իւր որսացեալ՝ օդնութիւն ինդրէ յԱստիկանէն պատերազմիլ ընդ Սմբատայ : Ահա Գագիկ վասն միայ քաղաքի մատնէ զրովանդակ Հայաստան, մատնէ զիժագաւորութիւն Հայոց, մատնէ զազգական իւր . առաջնորդ Անի Յուափայ մատնել 'ի Հայաստան, օդնական լինի զօրաց նորա, ըմբոնել զՍմբատ, կործանել, աւերել, քանդել և այրել զքաղաքս և դգիւզ և լինի առիթ հեղման բաղրում անպարս արեանց, Արագէս պատմէ Յովհաննէս կաթողիկոս «Տեսեալ Աստիկանին թէ ոչ կարէ ունել զՍմբատ, առաւել եւս սրտմանեալ յարձակեցաւ 'ի վերայ քաղաքաց իշխանութեան նորա, և իրբեւ առխճ մւնչելով

կոխեաց և մանրեաց , զօրս միանգամ եղիս արտաքոյ և յաւեր գարձոյց զաշխարհն . և զայս ամսոն ողջոյն շրջեալ 'ի կողմն մի Հայաստանու . 'ի քանդումն դիւզից և աւանից՝ գարձաւ . 'ի Դուին , ոչ ինչ կարացեալ առնել ամսոր քաղաքաց , յորս վախուցեալ և թագուցեալ կային Հայք երկաքանչին բողմանց եւսու : Զայս ամսենայն քանդմանն և սպանութիւնս տեսեալ Յովհաննու կաժմողիկոսի բազում ծանրադին ընծայիւք երթայ առ Աստիկան առ . 'ի հայտեցոցանել զնտ ընդ Սմբատայ և ազատել զաշխարհն . 'ի յանզուգն յարձակմանէ նորս , բայց Յուսուփի կոլեալ զեաժմողիկոսն եղ . 'ի բանտի : Մինչ առ 'ի բանտախն եր , զատիկ դիմէ առ Աստիկան ինդրել օգնութիւն ընդ զէմ Սմբատայ , կաժմողիկոսն . 'ի միտս խոր սարասէր միջնորդութեամբ դադիայ արձակիլ 'ի կապանաց : Բայց զհակառակն տեսեալ առէ և Ես ակնկառոյց իմն 'ի գալուստ թագաւորին Գագկայ լինէի . զի թերեւս 'ի սադրերոյ նորս լուծումն ինձ 'ի կապարանէն լիցի , որպէս քրիստոնէական պարոնն պահանջէր , ոյլ ակնկալութեան ոչ հանգիպեալ այլ եւս չարաչար ըստ մեղաց իմոց կապեցայ : « Շահատէր , փառասէր և նախանձու խուարային կիրք՝ շացուցեալ և կորացուցեալ էին զայս Գագկայ , բայց երաց զայս իւր , յարթամ եւսկս թէ օձն խորամանկ յետ կործանելոյ զմեծ մասն աշխարհիս . խորհի կորուսնել զանձն Գագկայ և զաշխարհն նորս առաթուր կործանել , ապա յանձնասիրութենէ և 'ի շահատիրութենէ եկեալ 'ի միտս , զդացու . 'ի վերայ չարեացն և զազա զեկուցեալ Սմբատայ զմիտս իւր թէ կամի

միաբանել ընդ նմա առ ՚ի հաղածել զօտարականն  
՚ի Հայաստանէն, բայց ՚ի դուր . զի երկոցունց միա-  
բանութիւն այլ եւս շրաւէր վանել զթշնամին :

10. Ընդ ամսն երկոտասասն թէ առաջնորդական  
սպասոնիւ , և թէ իրբեւ ճանապարհորդ շրջեցայ  
ընդ մեծ և ընդ փաքք Հայաստան , անձամբ իսկ  
տեսի և փորձեցի , թէ գտանին այժմ ՚ի քաղաքու ,  
յաւանս , և ՚ի գիւղս Արծրունի Գաւդիկք , որք ան-  
ուանինի բրեւ զնս իշխան , նախարար և այլն : Այս-  
պիսիք ոչ երբէք խղճեն վասն անձնական շահու  
և նախանձու մասնել զազդն և զազդայինս , առ  
ոսն կոխել զմեծամեծ շահս հայրենեաց և աղջին  
վասն դպրզն ինչ շահու իւրեանց . մուտ ՚ի քաղաքու  
և ՚ի գիւղս , հարց ՚ի բարեսիրտ արանց , և տես  
թէ իցեն չարիք ինչ ՚ի քաղաքի , որում խորհրդով ,  
բանիւ կամ գործով հաղորդ չեղեւ մարդն այն ,  
որում լու եր թէ չեր ծնեալ իսկ : Օտարազդիք  
մտեալ ՚ի գիւղս ՚ի քաղաքու անարդեն հայհոյեն ,  
հարկանեն , կողոպտեն , գողանան , զի եթէ կարի  
թախանձանօք և իրբեւ մտերիմ հարցանիցես ցնու-  
սա , զպատասխան Պիղատոսին տան , և ասեն ,  
ազդ քո և քահանայապետք քո մասնեցին զնոսա  
մեզ : Արդ ամբութիւնք քաղաքաց և գիւղից մի  
թէ կարեն ընդդէմ կալ յանդուզն յարձակման ըն-  
տանի թշնամեացս . որք ՚ի ներքուստ կործանեն և  
մասնեն զքաղաքմն : Ուստի արտասուօք հանդերձ  
ազաշեմ զմի մի իւրաքանչիւր ազգայինս իրբեւ  
զհայրենասէրս հայել և տեսանել զքաղաքս , զգիւղս  
և զաւանս . զորս նախնի նահապետք , թագաւորք ,  
իշխանք և ժողովուրդք քաղում աշխատութեամբ

շինեցին և բարձրացուցին։ բայց մատունք շահաս-  
սիրաց վազվազակի կործանեցին։ Արդ՝ կարճեցէք  
գմատունս նոցա , առ ուն հարեք զշահս , զնա-  
խանձս և զամբարտաւանս թիւնս նոցա . զի ըստ  
Ռակերերանին . « Ուստի ըստի , ե՞ն ու յեւ Հետ և Տէր  
մարդարեին ասէ « Եղուստու ու , ՚ի ուն և իւրացել , և  
այս յիշեւ :

Ա, Այլ աւազ , զի ոչ դոյ ՚ի ժամանակիս այս-  
միկ ՚ի ձեռս Հայոց՝ ոչ քաղաք , ոչ աւան , և ոչ  
գիւղ , այլ գմն վանս , եկեղեցիս և դպրոցս միայն։  
Հայրենասէրք միշտ փոյթ կալան շինել զվանս զե-  
կեղեցիս և զդպրոցս , այլ փառասէրք և շահասէրք  
միշտ գուն գործեցին կործանել զնոսա , շահասէրք  
ուր գտին և տեսին զհարուստ վանս և եկեղեցիս,  
բարեպաշտութեան դիմակու մոին ՚ի ներքս , և  
զհարուստ թիւնս նոցա հանին արտաքս . փառա-  
սէրք տեսին , զի այլք զհետ եղեն շինել և բարե-  
կարդել զգպրոցս , ՚ի ներքուստ և արտաքուստ աշ-  
խատ և զեն խափանել զարարս նոցա . զի մի ճշմարիս  
համբաւ նոցա ծածկեացէ զուտ համբաւ իւրեանց ,  
և յորժամ չյաջողին ՚ի շար գործս և ՚ի խորհուրդս  
իւրեանց , սկսանին բարուրս յօդել , և բամբասել ,  
թէ հայր նորա զդրամ այս ինչ վանից կամ եկեղե-  
ցւոյ դրաւ առեալ զազու եկեր , ահա որդի նորա  
յայանի պնոյն վճարէ։ Զայս ասէ վանն այլոց ուռտ ,  
բայց մանն ինքեան ճշմարիս , զի ինքն հասաւ-  
առեալ է ՚ի միաս , զի եթէ դրամ վանից և եկեղեցւոյ  
՚ի ձեռս իւրեանց անկցի , անխիղն է ուտել զնոսա .  
բայց լուեցին լեզուք այսպիսեաց , կարծեսցին ձեռք  
քանդողացս , զի եթէ ձեռք հազարք շինեցին .

քանորիչ ձեռն մի միայն բաւական է քակել զշի-  
նուածո նոցա , բայց միշտ շինողք զօրհնութիւնս  
վայելեն , իսկ քակեղք զանեծս :

————— Հ Յ —————

## Դ Ա Ռ Ի Խ Թ Ժ Ե .

ՍՈՀՄԱՆՔ . ԲԵՐԴՔ . ԵՒ Ա.ՄԱԽԻՐՔ ԱՊԱՍԱՆՆՈՅ

Յ Օ Դ Ա Խ Ա Ծ Ա .

ՍՈՀՄԱՆՔ

1. Տեսի զհայրենասէր քաջուշիմ պատանի ոմնե .  
որ դքարտէցն աշխարհագրական առաջի առեսոյ  
պշուցեալ հայէր ընդ տափառակն Հայաստանի , և  
ախրամնոծ դիմօք հարցանէր զվարժապետն իւր ,  
թէ ուր են սահմանք քաջոցն Հայոց եւ թէ սոք  
դիւցազնոց մերոց մինչ ուր հասին , և երկայրէ  
սուր նոցա մինչեւ ուր տիրեաց արդեօք : — Այս  
պատասխանէր վարժապետն , քաջոհաւք մեր ընդ  
արեւելու կոյս մինչեւ յեզերս կասպիական ծովուն ,  
արշաւեալ զլոյտունս և զլոտրապատական աշխարհն  
հատին ընդարձակութեան իւրեանց սահման : Մնդ  
արեւմուսա արշաւեալ մինչեւ ՚ի ծովն Միջերկրա-  
կան զբիւթանիս , զՊամիկիլեա , զԴաղատիս , և  
զփոքքն Ասիս քաջութեան իւրեանց սահման չու-  
փեցին : Ընդ հիւսիս տարածեալ զիշխանաւթիւն իւր-  
եանց մինչեւ յԱլանս , վրաստանիս , և Ազուանից աշ-  
խարհին տիրեցին : Մնդ հարաւ՝ տիրելով բովանդակ  
Ասորեստանի՝ հասին մինչեւ ՚ի Պաղեստին , զԼիլի-  
կիս , զՄիջակեսու Ասորոց աշխարհակալութեան  
իւրեանց սահման սրաշեցին : Այլ առաջ զի սահ-

մանք քաջայ մերոց այսօր տեսանեմք միայն ՚ի  
քարտիզի . ՚ի պատմութեան , ՚ի ձեռս օտարաց +  
և ոչ ՚ի ձեռս Հայոց , զոյս լուեալ եղաց պատմնին  
յոյժ :

2. Արամ, Տիգրան առաջին և երկրորդն, մեծն Արտաշես թնդարձակեցին զահմանս Հայոց, իսկ քեռայրն Տիգրանայ Երկրորդի Միհրդատ տիրեալ Պռնտացւոց աշխարհին՝ դու պատերազմաւ Եհաս մինչեւ յիսուիսա, և սասանեցոց զշուովմէական իշխանութիւնն թողից զիմ առ միյիշատակեն զարշաւանս, ղղատերազմունս և զյաղթոթիւնս քաջ արանց, թագաւորաց և զօրապետաց մերոց, որք սրով, աղեղամբ, և բազկու իւրեանց չափեալ զահմանս տիրեցին բազում աշխարհաց, և քաղաքաց, տիրեցին բազում ազգաց և ամրուից մարդկան, որպէս խրատ ետ մեծն Արշակ Պարթեւաց եղբօր իւրամ վաղարշակայ. և ասէ սահմանի աւազոց վեճու իւրեանց, որչաք հարունէ, ոյնաք ունէ ու

3. ԱՇ, մի թէ չէ խելամաւ հայրենասէցն թէ  
քաջք զահմանս Հայոց ընդարձակեցին, իսկ ա-  
նարի վտաք թողին զահմանս, մատնեցին, զա-  
հառեցին օտարաց, քաջք անցին, գնացին, զգնին և  
զահմանս խրեանց իրը՝ ի գերեզմանի ամփոփեալ  
թագուցին, զի վատանուն թու բակիրտք չկարացեալ  
դինու զօրութեամբ պաշտպանել զահմանս քաջաց  
չեղեն որդիք քաջաց՝ այլ գերիք քաջաց։ Պատ-  
մութիւն ամենայն աշխարհականաց ուսուցանէ թէ  
բուլնդակ աշխարհ աահման է քաջաց, յորժամ ու-  
նել կամիցին, իսկ բովանդակ աշխարհ գերեզման է  
վատաց, յորժամ մեռանիլ ոչ կամիցին, գերեզմանը

և առկերք քաջաց մինչեւ ցայտօր զօրութիւն ,  
քաջութիւն և յաղթութիւն ազագակեն , իսկ վատք  
իրեւ կենդանի ՚ի մէջ կենդանեաց առանց պա-  
տերազմի զման և զգերեզման խնդրեն : Վասն  
քաջաց և վատք ՚ի գէպ դայ տատձն իմաստնոյն նէ՝  
լու և առաջ հռուլ + առ ինդան :

4. Թեսուարու ասէ , վայ մարդոցն , որ ընտկի  
՚ի վերայ երկրի , և չունի տփ մի հազ սեփհական  
՚ի վերայ երկրի , իսկ ես ասեմ , վայ ազգին , որ  
ընտկի ՚ի վերայ երկրի և չունի սեփհական հայրե-  
նիք ՚ի վերայ երկրի : Յորժամ ոք զտուն հօր իւրոյ  
վաճառիցէ . և իրբեւ զվարձաւոր ՚ի տունս այլոց  
ընտկիցէ . աէր տան յորում պահու խնդրիցէ բըռ-  
նութեամբ արտաքս վարել ՚ի տանէ իւրմէ զվար-  
ձաւորն , կարսզէ : Ի սկզբանէ ասաց Աստուած  
մարդոյն « Աչեցէ + , և բոշուրուն + , ցեւ վերէր և ու-  
րեցէր դժոյ » վասն սցսորիկ ասէ Գաւելիթ Երին + Երին  
Տեռան ւն և վերէր եւ որուաց հորդիւն . իսկ Մովսէ-  
սի տեսեալ զրած անումն ազգացն ասէ . « Ի ժ-  
ամանիկ՝ յարժամ բաժանեաց Բարձրեան շաղիս ունացն , որու-  
սիսեաց Նա շրտիւ Առանոյ : Լուսաց անհանու հելլուսոց  
ըստ իսուս հրեշտակաց Առանոյ : Նա եւս զերկիր որդ-  
ւոց մարգկան , նա բաժանեաց զազգս , և տարած-  
եաց զորդիս Ագամայ , նա բաժանեաց զահմանս  
ազգաց , և կացոյց զհրեշտակս պահապան ՚ի վերայ  
նոցա : Բայց սրակէս եղ ուխտ ընդ Գաւելիթ և ասէ  
Երի ասիս ընդուլց իւս , երտուոյ Գաւելի հառայէ իւս և այն  
ըստ իսրէին : Երիշ ՚ի համա զերու նորս , և ՚ի վերայ քերոց  
շաղ նորս : Հաստատեաց յարիտեան յարիտենից զըստան նորս  
և շաղան նորս որուս ըստուու երինից . Առ ԶՈՅ : Այս

պէս ուխտ եղեալ է ընդ ամենայն ազգու և թառ  
կաւորս երկրի և ասէ . և թու թագին որդիւն նորու պըրեւն  
է և յէրաւան էմ ու համեցին քեալ , ին զորդուրունիւնն  
է անորդնոցն , և զորդուրուն իմ ու գոհեցնոցն , նորից քառ  
աշխատա զանօքինաւիւնն նոր քանջանս զանիքաւաս  
նիւնն նոց » :

Յ. Զեւ եւս ծնեալ և երեւեալ կիւրսի ՚ի վե-  
րայ երկրի , նախ քան զամն չորս հարիւր , բերանով  
խօսյեայ խոստանայ Աստուած տալ նման զժադալո-  
ւորութիւն Պարսից և Մարաց : «Այսուեւ ուն Տէր զնեւու  
իւր շելլորս , զարոյ իուլոյ զարոյ յեւունի նորու հանզանդեւ-  
ցացանեւ չամենյն ողջու երէր ». զի գիտեր Տէր թէ  
կիւրս առնելոց է իրաւունս և արդ արութիւնս :  
Զի Տէր զամնձ կառավարութեան ազգաց , զամն-  
մանս թագաւորութեան աշխարհի ոչ տայ ՚ի ձեռա  
տղիտաց անիրաւաց , ոյլ իմասանոց և արդ արոց :  
Տէր զրազուկ զօրութեան իւրոյ , և պզօրս հրեշ-  
տակաց իւրոց հեռացուցեալ ՚ի տանեւն Սաւուզայ ,  
առաքէ ՚ի տուն Դաւթի առ . ՚ի օդնել նման և զօ-  
րացուցանել զտուն նորա : Բ. թգ . «Ճան Աստուածոյ  
երիւալի երիւայր և նասանչը , և բան Դաւթի երիւալ եր-  
իւայր և զրանոյր . և Տէր Աստուած եւ ընդ նման , զի  
Դաւթիթ առնէր իրաւունս և արդ արութիւնն , և  
խօստավան լինէր ասելով . «Բա եւ երիւնն , ու է եր-  
իւն , շշմարն լիւ եւրով բառ արուեր : Նորս եւ ամենոյն  
ունչուր երիւնն , և առու զարոյ և զամնու յեւու նորս սովոր-  
նու : Արդ՝ յորժամ առնիցես իրաւունս և զարդա-  
րութիւնս , և խօստավան լիցիս թէ նորա են տիե-  
զերք երկրի . երթալով երթալցես և զօրասցիս և  
Տէր եղիցի ընդ քեզ և ընդարձակեսցէ զրազուկ»

քո՞ի վերայ երկրի, տացէ զօտհմանս քո՞ի խաղաղութիւն, և պարտրտութեամբ ցորենոյ լցուցէ գքեզ:

6. Արդ՝ եթէ կամիս ընդարձակեալ զահմանաքո, նախ ընդարձակեալ զիիրտ, զհոգի և զմիսոս քո աստուածադպաշտութեան, եզրայրակրութեան, իմաստութեան, միութեան, արդարութեան և ճշմարտութեան սրբասահման անհուն ասպարիզաւ. զի եթէ ոք ՚ի յարանց և ՚ի յաղցաց երկրի ՚ի ներքին սահմանի խրում չունիցի զայսոսիկ առաքինութիւնս, չկարէ ունել ընդարձակ ասհմանս ՚ի վերայ երկրի, որպէս այց անրարոյական չունի տուն և սահման, զի եթէ ունիցի, կորուսանէ. նպնապէս անբարոյական աղդ չունի սահման ՚ի վերայ երկրի, զի եթէ ունիցի, կորուսանէ. Ե՞րբ տեսեր թէ տգէտ անսէր և անմիաբան ժողովուրդ-ք կարացին երբէք ժառանգել զատհմանս ՚ի վերայ երկրի, Պղտատնի զարմացեալ ՚ի վերայ կրթութեան թադաւորակն որդւոց Պարաից, ուստի զայն վասն դաստիարակութեան որդւոցն Յունաց իրեւ աղդու օրինակ իմն ՚ի մէջ բերէ: «Արդիքիք թագաւորացն Պարաից յեօթնամեաց հասակին հեռացուցեալ ՚ի վատիկութենէ կոնանց, ՚ի մէջ կիրթձիւ վարութեան՝ արագ զինաշարժութեան, և սահմանագործութեան վարժապետաց: Առաջն աւանդէր զգաց աստուած պաշտութեան: Երկրորդն աւսուցանէր խօսիլ զճշմարտութիւն, և գործել զարդարութիւն: Երրորդն սպասուիրէր չափ դնել բնածին կրթից, և իշխել ՚ի վերայ նորա, որպէս զի նորս ուսցի իշխել ՚ի վերայ անձին խրոյ, ապա բազ-

Թոթեան ամբոխից : Չորրորդն ուսուցանէր գքու-  
ջասրտութիւն և զմղել զպատերազմ։ Ընդունելի և  
ամենայն գովաթեան արժանի դաստիարակու-  
թիւնս այս տիրեաց և տեւեաց՝ ի տունս և յորդիս  
թագաւորաց և նախարարացն Պարախց , ուստի տե-  
ւական արդարասիրութիւն, տեւական քաջութիւն,  
տեւական թագաւորութիւն տեւեաց՝ ի յորդիս Պար-  
ախց : Ի սոյանէ՝ որք առաւել մարզեցան , առաւել  
զօրացան և ընդարձակեցին զսահմանս իւրեանց ,  
որք նուազ ուսան , տկարացան և կորուսին զսահ-  
մանս իւրեանց : Թուի ինձ թէ՝ 'ի թագաւորաց մե-  
րոց Վաղարշակ , Արտաշէս , մեծն խորով միպն  
մարզեալ այսպիսի կրթութեամբ.ք՝ ընդարձակեցին  
զսահմանս . իսկ այլոցն անփոյթ արարեալ՝ կորուսին  
զընդարձակութիւն երկրի իւրեանց :

7. Ի պատմութենէն Աղէքսանդրի կարես խելամտել թէ՝ նա՝ ի տղայ տիոց գերազանց քան զՊարսից ընկալաւ զկրթութիւնս խմաստութեան և քաջութեան . վասնորոյ յազթեաց Պարսից և տիրեաց ամենայն սահմանաց նոցա : Փիլիպպոս հայր Աղէքսանդրի՝ որ հարկատու էր Դարեհի Պարսից թագաւորին՝ տեսեալ յաւուր միտմ թէ որդին խը Աղէքսանդր ոչ որպէս տղայ . այլ իրբեւ այր ինքնին աշտանակեցաւ ՚ի վերայ ցլադլուխ երիվարին, յորոյ վերայ ոչ ոք ՚ի մարդկանէ կարէր աշտանակել . համբուրեաց զգլուխ որդւոյ խըրոյ և առէ « Խնդրէն քունաւ ըստ դունին դիստընիտ նոտարունիւն », զի ու բառէ պոնել լուսէն Մաքունիւն : Տեսեալ Աղէքսանդրի զոմին ՚ի զինուորաց իրոց՝ Աղէքսանդր անուն վեհերուտ և վաստավիլուտ, առէ յնա, « Ն բա իսէ ըստ

Հանդ է-իւն ի-ո՞ւ շ-էր : Խըստ ետ նմա Արխատուէլի  
հանդարտ ունել զանձն ՚ի պատերազմական տառ  
ժանմանց , մինչեւ հաստատեսցի , ասէ՝ զօրութիւն  
և ոյժ մարմնոյդ : Ետ պատասխանի Աղէքսանդր , ի  
իւր ունել ուրբ և շնորհուն : որո՞ւ դիպուլուիւն ու վուչ  
վուշոց երաց : Կալ քեզ օրինակ զջորդատ , որ ՚ի ման-  
կոթենէն ՚ի Յունաստան կրթեալ և դաստիարակեալ  
՚ի գիտութեան և ՚ի քաջութեան , իրբեւ անպարտելի  
ախոյեան ՚ի Յունաստանէ բազմութեամբ զօրաց  
գոյ յաշխարհս մեր և տիրէ ամենայն սահմանցն  
Հայաստանի , զորս Սասանեանք յափշտակեալ էին ՚ի  
ձեռաց Հայոց յետ մահուան խորովայ , զոր ՚ի ձեռն  
Անակայ դաւով ետ սպանենել Արտաշիր Յասանեան :

8. Վայրիկ մի թողեալ զվեպս հին ազգաց , նու-  
րոցն յիշատակօքն խորագէտ լիցուք . ժողովուրդ  
նորոյ աշխարհին Ամերիկոյ որ նախ քան զերիր գար  
վարէր զկեանս վայրենիս . անդիտանայր զմուռ  
ածել թէ զի՞նչ են հայրենիք և զի՞նչ սահմանք  
և ընդարձակութիւնք նոցա , վարդվազակի երաց  
զաշս խոք . յորժամ ոտք Սպանիացի , և Բրիտո-  
նացի ժողովրդոց եմոււտ ՚ի սահմանս նոցա : Կրօն  
Յիսուսի , արդարութիւն , ուզութիւն և բարոյական  
ճշմարտութիւնք ծաւալեցան ՚ի միտո և ՚ի սիրու  
նոցա . գաղափար սիրոյ՝ միտութեան և եղբայրու-  
թեան խորագոյնս տպաւորեցան ՚ի կուրծս նոցա .  
գաստիարակութեամբ զմիտո և զսիրտո խորեանց  
յանհունս ընդարձակեալ իմաստուն խորհրդով մի-  
տոցան զանքակ միարանութիւն , արդ ար և հանձա-  
րեզ օրինօք զկապ միտութեան խորեանց կքերով քա-  
ջութեամբ ընզ արձակեցին զսահմանս և սիրեցին

Կ վերայ աղդաց բաղմաց . ահա համբաւ միութեան և խմաստութեան և զօրութեան նորոյ աշխարհին , ահաբեկ առնէ այսօր զաշխարհակալ թաղաւորս հընոյ աշխարհին :

9. Բրուսիացիք ՚ի հնումն հիւսիսային քեւեռին ծանօթք . իսկ ՚ի շարս հին աղդաց և թաղաւորաց դոգ թէ անծանօթք . խմաստութեան , կըթոթեան և քաջութեան յոյժ հետամուելով՝ ոչ միայն զօրաւոր պետութիւն մի հաստատեցին ՚ի վերայ երկրի . այլ ՚ի յամի 1867 միով ոռու պատերազմաւ տիրեցին ամբողջ Գերմանիական դաշնակցութեան և եռապատիկ ընդարձակեցին զատհմանս իւրեանց : Եւ յամի 1870-71 անզարտելի քաջութեամբ դիմեալ ՚ի վերայ զօրեղ աղդին Գաղղիացւոց , յաղթեցին , ցրուեցին և գերեցին զզօրս նոյն . պաշարեցին , առին զամուր բերդու և գքազաքս նոյա . հասին պաշարեցին զփարիդ մայրաքաղաք նոյա , սովով և ոմբով նեղեալ առին զքազաքն և մովն ՚ի ներքն . հինգ միլեառ տուգանս եղեալ ՚ի վերայ զմամն մի սահմանայն հանեալ ՚ի ձերաց նոյա , զարձան յաղթանակաւ յաշխարհն իւրեանց :

10. Զուիցերի որ ունի 2.890.440 բնակիչս , և 15.284 քառակիուսի մղնն տարածութիւն , առ որ երրեմն ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց , զաղղիացւոց և Գերմանայցւոց տառապէր յօյժ , զոլով փոքր և աննշան ժողովուրդ , որ բնակէր ՚ի լեռնոտ և ՚ի ցրուային երկրի իւրում , որպէս բնակեցաւ նշանաւոր ազգն Հայոց ՚ի Հայաստան : Բայց խմաստութեան , կըթոթեան , արհետափից և քաջութեանց զհետ պնդեալ՝ զինքնուրոյն հասարակագետու-

Արևն հաստատել . որով իբրեւ անկախ յումեքէ  
զագդ և զժողովուրդն կառավարէր և ահա մինչեւ  
ցայսօր կառավարէ : Ի Զու իցերիա չիք ոք 'ի շարս  
ազգայնոց խրեանց այր անուս և անդորժ , զի իւ-  
րաքանչիւր ոք 'ի նոցանէ վասն կելոյ գիտէ զար-  
ուեսուս , և ուսեալ է 'ի մանկալմենէ զօրէնս ամե-  
նայն բարոյականութեան և զինուորութեան : Զի  
Զու իցերիացին 'ի տղայ տիոց իւ գլորոցի իբրեւ զիկրէ  
զինուորուուանի զզէնս շարժել պատերազմել և զհոյ-  
րենիս պաշտպանել . զի անդ ազգն ամբողջ իբրեւ  
անհատ մի համարեալ է և անհատ մի միանգամայն  
ազգ . ժողովուրդն է քաղաքացի և զինուոր . ո-  
րով միշտ զօրաւոր և անպարտելի է Զու իցերի :

ԱՅ. Արդ , գու օր իբրեւ Հայունամատել ոզրաս 'ի  
վերայ յափշտակեալ սահմանայն Հայաստանի , և  
մտախսն լինիու գտանել ընսաս . այժմիկ սաս աղ-  
դաց , պետաց , ժողովրդոց և Հասարակութեանց  
մարդք և արարք լիցին քեզ զդալի ազդու օրինակք ,  
բայց եթէ իբրեւ զհամոզեալ առյցես ինձ պատաս-  
խանի , թէ գեռ գոն անդէտ , անհարդ ազգք +  
պետք և ժողովուրդք 'ի վերայ երկրի . որք ու-  
նին առանձին իշխանութիւն և սահմանաց ընդար-  
ձակութիւն . առցետ լինեն խրատ և մօեալ 'իներքու  
քննեցես զրնական , զլրիժական , զլրօնական և զմի-  
արանութեան օրէնս նոցա . զի առանց այտոցիկ չէ  
հնար կալ մնալ կանգուն ազգաց , պետաց և ժողո-  
վրդոց 'ի վերայ երկրի . զի տգէտ , անուս և անմիա-  
րան երեւեալն եթէ կացեալ մնացեալ իցէ մինչեւ ցայ-  
սօր , յետ այսորիկ այլ եւս շիարէ մնալ յակաստանի .  
զի եթէ ոչ վտութացի նորոգել զհնութիւն իւր հար-

կաւոր կրթաւթեամբ, վաղվազակի անկանի և կործունի, որչափ մեծ և զօրաւոր լիցի. զի կրթեալն կանչնի և զօրանայ, որչափ փոքր և աննշան լիցի :

12. Զինացիք, ճարտարցիք դուռվ կռապաշտ՝ ունին առանձին թագաւորութիւն, բայց 'ի բարոյական, յընկերական և 'ի քաղաքական օրէնս մարդեալ դորով՝ ընդդէմ օրինաց իւրեանց չգործեն երբէք. զի բաց 'ի քրիստոնէութենէ՝ դամենայն բարյական և դիենցազական կրթութիւնս ունին և պահեն : իսկ ժողովուրդ Հնդկաց, Թաթարաց և Պարսից և պետք նոցա մերձեալ 'ի վիճ կործանման, կորուսին զզօրութիւն և դսահմանս իւրեանց . վասրնդի ազգք, որք արշաւեցին 'ի վերայ նոցա, 'ի քաղաքական, 'ի բարոյական և 'ի զինուորական կրթութիւնս գերազանցեալ էին քան զնոցա . իսկ սոքա 'ի կրթութենէն յանհունս հեռի գտան 'ի նոցանէ . ուստի յաղթեցան . և եղեն հարկատու Անդպիտց, և Ռուսաց :

13. Ասաց Պմն 'ի յիմաստնոց թէ «չէ իմ քնառ յուսահատեալ 'ի վերայ անկեալ ազգաց, զի ազգ տղ իտութեամբ և անկրթութեամբ անկանին, իսկ իմաստութեամբ և կրթութեամբ դարձեալ վերականգնին» : Բան իմաստնոց լիցի միշտ խորհելոյ առարկայ մուաց հայրենասիրաց, որոց փոյթ լիցի յամենայն սահմանս ուր բնակեալ են Հայք բանալ կրթարանս, մարզել 'ի նոսա զորդիս փարթամաց և ազքատաց 'ի միսասին, ընդարձակել զիստու նոցա իմաստութեան, աստուած պաշտութեան, Եղբայր սիրութեան, միութեան, արդարութեան և Ծմարտութեան օրինոք, և ամենայն բարոյական և քա-

զաքական մարդիւք , որովք ոչ միայն իրբեւ արի-  
ական խումբ մտանեն 'ի սահմանս ընդարձակու-  
թեան հայրենեաց՝ այլ յանհուն ընդարձակութիւն  
երկնից վերասլացեալք՝ հոգւով վայելեն զանհուն  
բարին Աստուած , որում փառք 'ի յանսահման յա-  
ւիաենից ամեն :

## ՅՈՒՂԻԱԾ Բ.

ԲԵՐԴԻ ԵՒ ԱՄԾՈՒՐԻ ԱՊԱՍԱՆԱԾ

1. Բերդք և ամրոցք բազմաթիւ էին 'ի Հայաս-  
տան , զի իւրաքանչիւր քաղաք , աւան , և գիւղ  
դրեթէ ուներ առանձին ամրոցս , և բերդս . որ-  
պէս յայտ է 'ի պատմութեանց և 'ի յառերակաց ,  
զորս տեսանեմք ցայսօր : Հայաստան գոլով երկիր  
լեռնային և քարուտ՝ դիւր մատուցանէր շինել զնո-  
սա : Ծնդարձակութիւն երկրին իրր բաժանեալ գո-  
լով 'ի վերայ նախարարութեանց , որք երբեմն թա-  
գաւորական իշխանութեամբ եւս պերճանային ,  
ուստի անձնիւր նախարար շինէր 'ի գաւառի իւ-  
րում բերդս և ամրոցս բազումս , զի նոքք զդէմ  
ունիցին թշնամեաց և պաշտպանեցեն զբնտանիս .  
փրկեացեն զազդ և զհայրենիո 'ի բուռն յարձակմանէ  
բարբարոսաց . որք սովորեցան ստէպէ խուժիլ 'ի ներ  
քըս , և աւարի առնել զերկիր : Բայց աւաղ զի նախա-  
րարք երբեմն յուսացեալք 'ի յամիս : թիւն երկրի  
և բերդից իւրեանց՝ գլուխ ամբառնային ընդդէմ  
բնիկ թագաւորին իւրեանց , և երբեմն խրոխտաց-  
եալք իրեւ անգէտ փառն ընչին ինչ պատճառաց  
նախարար ընդդէմ նախարի յառնէին 'ի մարտ 'ի  
կօրուստ անձանց , և յաւեր հայրենեաց :

2. Այսոյն ՚ի վասպորական, որ սեփհական կալուած էր Արծրունի նախարարութեան, դտամնիւր չորս հարիւր ամրութիւնք, յորս անռանի և անառիկ էին և են բերդն վանայ, և Անձեւացեաց (որ այժմ ասի Խոշապայ բերդ): Բերդն Հայկայ ՚ի Հայոց ձոր: Բերդն Ամկու ՚ի Գնունիս, Բերդն Գագկայ աւերակ ՚ի յիստան: Բերդք Բերդկոյ և Արծիշյոյ աւերակք: Չոայլ բերդ ՚ի Մողու, ուր ապատանեցաւ մեծն Վարդան: Ի Ցուրուրերան և ՚ի Ցարօն, որք սեփհականութիւն էին Մամիկոնեանց. Սալնոռնորոյ բերդ ՚ի Բազել: Մուշեղայ և Աստղկան բերդք ՚ի Մուշ: Ի Հարք և ՚ի Բզնունիս Մանազկերտոյ, Խլալժայ և Դատվանայ բերդք: Ի Ելիշնկայ անուանի ամուրն Անուոյ, որ ապաստանարան էր Արշակունի թագաւորաց, և դանձարան գանձոց նոցա: Ի Ծոփաց աշխարհին Քարքերդն Խարքերդոյ, Մեծ կերտոյ Բաղաց և Բալուայ բերդք: Ի Սիւնիս Շաղարերդանուանի և անառիկ, ՚ի Կարս, անառիկ ամուրն Կարուց, ուր Մմրատ նախարար զիւր և զայլ նախարարաց ընտանիս եղեալ՝ պաշտպանեաց ընդդմաշտանաց և յարձակման Ավշին սատիկանին: Անառիկ բերդն Մմրատայ ՚ի Բարերդ: Թողամասանոր մի առ մի յիշել զԱյրաբատեան մեծ աշխարհին զԻեղաքքունեաց հաղարաւոր ամրոցս և բերդս, զորս շինեցին և ամրացուցին Արշակունի թագաւորք, և նախարարք: Թողից զԵիրակ գտաւուի զամբացս, զորս Բագրատունի թագաւորք և նախարարք շինեցին: Թողից յիշել զմերդս, և զամբոցս վոռքը Հայոց և կիլիկիոյ, զորս Ռուբինեան իշխանք և թագաւորք ամրացուցին: Ծնդ ամեւ-

նայն Հայաստան, ընդ մեծ և ընդ փոքր, ընդ շեն  
և ընդ աւելը ըստ հաւանական կարծեաց գտանէ-  
ին բերդք և ամբոցք 40000 :

3. Ի ժամանակս արշաւանաց Պարսից, թաղթա-  
րաց, Յաւնաց և Արաբացոց ամրութիւնքս այսո-  
քիկ էին զօրութիւնք պատերազմովացն Հայոց, և  
անմատչելի ապաստանարան տառապակիր ժողո-  
վրդոց . ապա թէ ոչ, չէր երբէք հնար Հայոց  
տոկալ և դիմանալ այնչափ սաստիկ բռւռն և խոռոն  
յարձակմանց թշնամեաց և թողուլ զճետ և զանոն  
Հայկայ 'ի վերայ երկոփ : Բաց 'ի բերդորէիցս գտա-  
նին 'ի լերին Հայաստանի բազում կիրճք, քարան-  
ձաւք, խոխովք, բերդաձեւ սեպացեալ ժայռք, որք  
ոգնելին քաջաց մերաց իբրեւ զբերդս, խակ վախսատէից  
լինելին իբրեւ ապաստանարանս : Ի քարանձաւացս  
ևն, որք արհեստիւ փորեցան 'ի մէջ լերանց, թէ-  
պէտ պատմիչք մեր լոեցին զանուանս այրից և  
քարանձաւաց յիշատակել, բայց զրադումն տեսաք  
'ի մէջ լերանց : Ի Ռշտունիս է անմատչելի քարայ-  
րըն կրկնայարկ, 15 սենեակս փորեալ 'ի մէջ մի-  
մեանց, ուր ճդնեցաւ դրիգոր Նարեկացին, վասն-  
որոյ կոչեցաւ աղօթատեզի Նարեկացւոյն : Ի մէջ  
լերանց վարագայ է Ռւբրաթ այրն, ուր օժեցան  
Հոխիսիմեանք և ճգնեցան : Հանդէալ Ալոճիշոյ գտա-  
նի բնական քարանձաւ մի մեծ, ուր հովիսք Մարաց  
'ի ձմերան մակազեն զովսարս 5000 : Ի մէջ բերդին  
վանայ գտանին մեծամեծ քարայրք : Ի լերինս Երեզ  
գտաւառին է անմատչելի քարանձաւն՝ ուր Սուրեն,  
վահան և Աշխաղար յետ յափշտակելոյ զդանձս

Արշակայ ապատինեցան . Սամուել նախարար Մամիկոնեան՝ մոռերիմն Արշակայ , աշխատ եղեւ մտանել 'ի ներքս , և առնուլ զգանեն 'ի ձեռաց յափրշտակողաց , և ոչ կարաց . զի մանուկ մի կացեալ 'ի դուբս այրին բաւական էր արգելու մտողացն , ուստի հնարս հնարեալ՝ զգինեալ մարտիկս եղ 'ի յերկաթեայ արկեզս իջուցանելով զնոսա 'ի վերուստ 'ի դուսն այրին , բայց ոչ յաջողեցաւ . զի 'ի վերայ դրան այրին սեպացեալ էին ապառաժ քարինք , Թողից իշել զսուրերկրեայ ճանապարհս , որք 'ի բերդից 'ի քաղաքս , և 'ի քաղաքաց ելանէին 'ի բերդս . որպէս էր ստորերկրեայ ճանապարհն Անոյ քաղաքին և այլն :

4. Ո՛չ ապաքէն շինութիւնք այնչափ քաղաքաց , բերդորեից , ամրոցայ՝ մեծադործութեան , և քաջադործութեան նախնեաց մերոց եղեն վիւայք անբարբառք . ո՛չ ապաքէն հաղարամեայ ամրութիւնք ճշմարիտ ապացոյցք են պերճ իշխանութեան և անսպառ հարստութեան աղգիս . զի բերդորեք ոչ միայն պաշարօք և զօրօք ամրացեալ էին , այլ բաղմանեան գանձիւք նախարարաց և թադաւորաց լըցեալ էին . Զշափ հարստութեան Հայաստանի գիտացին հարկահանք Պարսից , թաթարաց , և Հադարացւոց , որք յետ այնչափ աւար հարկանելոյ , կողոպտելոյ , յափշտակելոյ և ծանր հարկօք զժողովուրդն նեղելոյ զարմացեալք՝ ցմիմեանս հարցանէին , թէ ուստի իցէ այսչափ հարստութիւն 'ի Հայս , որ ոչ սպասի երբէք : Զի գանձ միոյ նախարարի բաւէր զքաղաքս և զբերդս շինելոյ և նորոգելոյ , դանձ նախարարի միոյ բաւէր զ100,000 զօրաբա-

Նակ մի կտղմել և ճակասել ընդդեմ թշնամեաց ։  
 Ի ժամանակս անիշխանութեան մինչդեռ կիսով  
 շափ աղքատացեալէր աշխարհն, Մամիկոնեան վար-  
 դան բաւական եղեւ զպիտոյս 66000 զօրաց հոգալ  
 Եղիշէ և կամենայն պակասութիւն աղքատու-  
 թեան լոյր ։ Որոյ ոչ ինչ դոյր զօրականին, յանձ-  
 նէ և յընկերաց մատուցանէր, որոյ չէր զէն, զէն  
 պատրաստէր, և որոյ հանդերձ պիտոյ էր, հան-  
 դերձ զգեցուցանէր և որում երիվար, երիվար  
 տայր ։ Եւ առատ ոռնիօք ուրախ առնէր զամե-  
 նեսեան, և զուարթադին զինքն ցուցանէր ամե-  
 նեցուն ։ Արդ՝ եթէ սիրտ մէն մի նախարարի ՚ի  
 սկզբան նմանէր սրտին վարդանայ, եթէ ձեռք  
 նոցա լինէր առատարաշխ ըստ ձեռաց նորա, եթէ  
 ամենայն անձն անձնուէր լինէր իրրեւ անձն վար-  
 դանայ, բերդք և ամուրք ՚ի ձեռս մեր ամուր, և  
 անկործան մնային ցայսօր :

5. Զէ ինչ մեծ զամուրս և զբերդս շինել, այլ  
 տուաւել մեծ է զնոսա յար ՚ի յամրութեան պահել և  
 ՚ի ձեռս թշնամեաց չմատնել, վարդան զզօրս գո-  
 մարէր, զբերդս ամրացուցանէր . իսկ վասակ զզօ-  
 րըս Հայոց երկպառակէր ցրուէր և ՚ի հաւատոցն  
 հանէր, սուտ երդմամբ զմիամիտս ՚ի Հայոց ՚ի յամրո-  
 ցաց և ՚ի բերդից ՚ի վայր բերեալ՝ անողորմ և ծա-  
 րաւի սրոյ Պարսկին մատնէր . իրրեւ Յուդաս ար-  
 ծաթսիրութեամբ մոլեալ՝ ոչ ինչ խզնէր զազգ և  
 զհայրենիս վաճառել օտարին և զգանձս իւր հա-  
 րստացուցանել, զի գոլով մարզպան ՚ի կողմանէ  
 Պարսից՝ զարքունի տուրս կրկնազատիկ ժողովէր,  
 կիսով ոչ շատացեալ՝ ՚ի բաժնէն արքունի եւս գո-

դանայր, Այլ յորժամ վասն այսր ամենայնի, և վաս  
ամենայն չարեաց, զոր արար, անողօրմ դատաս-  
տանաւ գատեցաւ յատենի և ընկալաւ զվճիւ մո-  
հու ՚ի Յաղիերտէ. առէ Եղիշէ «Եւ այնպէս ստո-  
տիկ արկին զպարաերս հարկացն աշխարհին ՚ի վե-  
րայ տան նորա, որ մինչեւ զհարց, և զհաւուց,  
և զիւր արարս, և զզպոգս կանանց եւս եղ ՚ի վե-  
րայ, և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հաստուցանել  
զպարտան արքունի, Եւ յայն տեղի հասուցին մին-  
չեւ հարցանել նմա, եթէ կացցէ ինչ գանձ ՚ի գե-  
րեզման նախնեաց մերոց: Եւ եթէ գտեալ էր նորա,  
հաներ և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տու-  
գանս»: Ցես զԼարդան. որ զամենայն ինչս իւր  
վասն ազգին և հայրենեաց նուիրեալ՝ վկայական  
մահուամբ ՚ի վերայ եզրարց մեռանի: և ՚ի յա-  
մուրս յախտենական լերանց երկնից ընդ սուրբս  
Աստուծոյ թագ աւորէ. իսկ վասակ զազդ և զհայ-  
րենիս կոզոպաեալ՝ չկարէ ծրարել ՚ի յարկեզս տան  
իւրայ և վայելել: այլ զբանձս Պարսից միայն հար-  
տացուցեալ՝ զրկի յամենայն ընչից իւրոց, մեռանի  
անզզութեամբ և առաքի ՚ի հուր գեհենին:

6. Թերեւս զարմասցի հայրենասէրն, թէ զի-  
ա՞րդ 10,000 բերդք, այնչափ ամբութիւնք լերանց  
բարձանց չկարացին պաշոպանել զհայրենի աշխարհն  
ընդ զէմ թշնամեաց. զիա՞րդ երեսուն և վեց միլիոն  
ժողովուրդք, հինդ հարիւր վաթսուն նախարա-  
րութիւնք չեղեն բաւական զգէմ ունել ստեղ ար-  
շաւանացն: — Արդ եթէ ունիցիս զբերդս րիւրս  
զգանձ կիւրօսի և Աղէքսանդրի, եթէ չես ամրա-  
ցուցեալ լեզրարս, և զընկերս և զազդայինս քո

՚ի յանառիկ և յանմատչելի յամուրս հայրենասիրաւածեան , կործանին ամուրք քո . և սպառին դահձք քո . եթէ իցէ ոք ՚ի յամրոցի քում ափահ , անօրէն և մասնիշ իբրեւ զկասակն , մի՛ յուսար յամուրս քո , զի ՚ի ներքուստ մատնեալ ես . եթէ իցէ ՚ի ժողովուրդս քո անդուգութիւն և երկպառակութիւն , մի յուսար ՚ի դահձս և ՚ի բաղմաթիւնս քո : Զդիամիցե՞ս արգեսք թէ միութիւն տամն մարդոյ տռաւել ամուր է քան զբերդի միոյ . հարիւրոյ միաբանութիւն քան զհարիւր ամրոցս առաւել ամուր և ահընկէց է . հազարաց զուգութիւն քան զհազար ամրութիւնս անառիկ է . բանտկ մի հարիւր հազարաց առաւել յաղթող է քան զ10.000 բերդս : Հայեաց ՚ի վահան Ամամիկոնեան , որ իւրավք միուցեալ երեսուն ընկերօք երբեմն ընդդէմ չորս հազարաց , երբեմն ութն հազարաց . և մինչեւ ընկագէմ քսան հազարաց ճակատեցաւ , պատերազմեցաւ և իբրեւ անառիկ ամուր բերդ անստան մնաց ՚ի Ասսանեան ահագին զօրութենէն , և սասանեցոյց զզօրս և զօրավարս նոյա : Բանիցս այսոցիկ ականատեսք և փորձառուք լիցին վկայք , յորոց մինն եղիշէ զորով առէ . զի՞նդ ժակունան մասնաւուն և երինաւուն անուննայ , և Աստուծոյ օքնակունան անուննայ , այլ մաքունան առ որունս երեւէ , որում և ինչ էսէ քառա բաշտամ անդամ : Խակ ֆարզեցին երկրորդ զորով առէ . զի մաքանեւ (նուբարարաց) ուստանէին զԱստուծոյ օքնակունան յանձննա և յաշնորհն , և ՚ի ժակուն և ՚ի պատունան զդոս և զիստաս , և յանձննա և յաշնորհն :

7. Ազդք , որք խոժեցին մտին ՚ի Հայաստան , չունէին իբրեւ զմեկ ամուրս և բերդու բազում :

և ոչ քաջութիւն զօրաց . բայց քան զմեղ առաւել  
միացեալ և զօդեալ էին 'ի մի միաբանութիւն սի-  
րոյ , ուստի ամրութիւնք և քաջութիւնք անմիտ-  
բան զօրաց մերոց խոնարհեցան և անկան առաջի  
միաբանութեան նոցա : Արդ՝ եթէ զամուրս հայ-  
ըենեացդ խնդրես , միացիր , եթէ կամիս , զի բերդ .ք  
և ամուրք ծառայեսցեն քեզ , ծառայեաց Աստու-  
ծոյ իբրեւ զթեսու զօրավարն իսրայէլի , յայնժամ  
ոչ միայն ամուրք , այլ արեգակն և լուսին ծառա-  
յեսցեն և անսասցեն քեզ 'ի պատերազմին քո ընդ-  
թշնամիս քո . որպէս անսասցին Յեսուայ . որ հրա-  
մայեաց արեգական և լուսին ասելք.զ Ալազան ուն-  
դուն հանդեպ Գոբրունձի . և լուսին հանդեպ յորդն Եշովը  
մինչեւ Հոդունցի իւրուելու : Զանմիաբան և զմն-  
զլուխ ժողովուրդն մեր տեսեալ Խորենացւոյն լայր  
և ասէր , «վասն զի Մովսէս բարձեալ լինի և Յեսու  
ոչ յաջորդէ . . . Եղիայ համբարձու , և Եղիսէէ ոչ  
մնաց կրկին հոգւով օծանել զթէու : Այր մի յա-  
րանցս յայսցանէ ունել 'ի մէջ ժողովրդեան իբրեւ  
զգլուխ նորա . և 'ի ձայն նորա բոլորիլ 'ի շուրջ  
նորա ընդ թեւօք նորա , տռաւել անկասկած ա-  
պատանարան է , քան մտանել յահառիկ բերդու :  
Ուստի իբրեւ անդամ միացիր 'ի զլուխն և նա ընդ-  
քեզ . յայնժամ աշխարհ ամենայն զինի քո ընթանայ.  
և ամբութիւնք համայն աշխարհի քեզ արբանեկեն-  
զի եթէ 'ի մի միաբանութիւն սիրոյ ծուլեցես զադ-  
դքն քո . ամենայն բարձրութիւնք լերանց խոնարհին  
առաջի քո . «Եշ Եղին անուազն ու ունացն ու ունացն  
և առազորդն 'ի հարըն հանուազն և ունացն ու ունացն  
(ունացն +) զիքին-նիւն Աստուծուցն + . չէ Տէ՛ Եսուցաւ » :

## ՊԼՈՒԽ ՃԶ .

ԾՈՎՔ ԱԽՃՔ ԵՒ ԶՈՒՄՔ ՀԱՆՔԱՑԻՆ ԳԵՏՔ Վ.ՏԱԿԻՔ  
ԵՒ ԱԴՅԻԹԻՄՔ

## ՅՕԴՈՒԱՆ Ա .

ԾՈՎՔ ԱԽՃՔ ԵՒ ԶՈՒՄՔ ՀԱՆՔԱՑԻՆ

1. Հայաստանի իրքեւ զմեծ ցամաքակղզի մի անկանի ՚ի մէջ մեծ Ովկիանոսի . Միջերկրական , Սեւ և կասպից ծւփուց , և բարձրային դրիւքն պարծի իրքեւ կեդրոն մեծատարած Ասիական աշխարհին : Մեծաւթիւն Ովկիանու , ընդարձակ ծոցք , պարանոցք , հրուանդանք , կղզիք և թերակղզիք նորահեռի անկանին ՚ի Հայաստանէ . բայց սա ՚ի մեծի ցամաքային տարածութեան իւրում ունի ծովակա և լճակս գեղատեսիլս և զուարճալիս :

2. Ծովն վանայ , որ ՚ի հնումն կոչեր ծով Բըղնունեաց և Աղթամարայ , անկանի ՚ի մէջ վասպուրական մեծ աշխարհին : Ի ծով անդք տեսանին կղզիք չորք . առաջննն է կղզին Աղթամարայ . յորում է Գագկաչն հոյակապ Ս. Խաչ եկեղեցին , վանահայր վանիցս նստի անուամբ կաթողիկոսի . ունի քսանիւ չափ միարանս ՚ի կուսակրօն վարդապետաց և ՚ի սարկաւագաց : Երկրորդն է Հիմ անապատ կուեցեալ կղզին , յորում ՚ի ժ Բ րդ դարու տէր Զաքարիա կաթողիկոսն Աղթամարայ շինեաց զվայելուչ և զգեղեցիկ տաճարն սրբոյն գէորդայ : Վանահայր վանուցս է արդիւնական , և գիտնական վարժապետն իմ Տէր Յակոբ եպիսկոպոս թօվուղեանց , ունի միաբանս յիշուն ՚ի կուսակրօն վարդապետաց , ՚ի սարկաւագաց , ՚ի զորքաց և ՚ի մահ-

տեսեաց , որք 'ի ճպնողական վարս են անհամեռ  
մատք : ի վանս ծազկեցան քաջաքարով մատենա-  
դիրք և խստակրօն վարդապետք Երբորդն է կտուց  
կոչեցեալ կղզին , յորում կայ կառուցեալ գեղեց-  
կաշն տաճարն սրբոյն կարապետի : Վանահայր  
վանիցո է Յակոբ վարդապետ վարդապետեան ,  
ունի միաբանս քառասուն 'ի վարդապետաց 'ի դրա-  
րաց ըստ Արքուրք անսպասուին , ամենեքեան արք  
առաքինիք և խստակրօնք : Խոկ չորրորդ կղզին կոչե-  
ցաւ Առտէր . զի ըստ խնդրանաց Նարեկացւոյն ,  
անդ երեւցաւ նմա կոյսն Մարիամ ուներդ զթիտու  
'ի գիրկու խոր իրեւ զմանուկ , վանն մօրն և որդւոյն  
երգեաց զերդս «Առ է ժուկ է ժուն է ժուլուկիւ ժու-  
շանոյ » երկու փոյլանացայք որեքուն նուն , և սքան-  
չելեօք անցեալ ընդ ծովն՝ եհաս առ Տէրն , աստ  
շնեցաւ եկեղեցի , բայց այժմ է անքնակ :

3. Ծնդ արեւելս ծովոն է բերդն Շամիրամոյ ,  
և քաղաքն վան՝ ամրացեալ կղզին պարտօք ,  
հանդեպ արեւելեան բերդին են տարձեալ արուար-  
ձանք , և հռչակաւոր այգեստանք վանայ , ընդ ար-  
ձակ պողոտայք և վողոցք այգեստանեաց ուռենի  
և բարտի ծառաստանօք զարդարեալ են , ջուրք  
ականակիտ ազրերացն ընդ երկարութիւն պողո-  
տայիցն առ արմատօքն ծառոցն խաղացեալ ոռո-  
գանեն զայգեստանս : Ծնդ արեւելեան հարաւ ծռ-  
վուն տեսանի Արտամէտ տւանն , որ եղեւ ապաս-  
տանարան Բ. Արտաշենի 'ի փախատեան նորա , և  
սիրեցեալ 'ի նմանէ շինեցաւ քաղաք , Ծովեզերեայ  
գիրք , ծոխ և անուանի բուրաստանք և այդիք Ար-  
տամէտ աւանիս , որք ոռողանին 'ի մեծ առուակէն

Ետմիրամայ , չե հնար տեսանել ոչ ՚ի Հայաստանի  
և ոչ յայլում աշխարհի : Խնձորն , տանձն և կեռաս  
Արտամետու է անուանի և աննման : ի հարաւային  
եղերս ծովուն առ ստորոտով Արտօս լերան , է գագ-  
կաշէն քաղաքն Աստան . մերձ յայդեստանս է վանքը  
Չարահան Ա. Նշանի , ուր հանգուցեալ է պատ-  
ուական նշխարք պատմաբան Եղիշէի վարդապետի,  
որ յետ մեծի պատերազմին առանձնացեալ ՚ի լերին  
Արտօս՝ յօրինեաց ողբս ՚ի վերայ սիրելոյն իւրոյ  
վարդանայ : Անդ կնքեաց զկեանս իւր ՚ի խատամբեր  
ճղնութիւնս , և թագեցաւ առ ստորոտով Արտօս լե-  
րան : Տեսարանք՝ այդեստանք Աստանայ յոյժ ոքան-  
չիլի երեւին յաջ հայրենասիրաց . յորդ և սառ-  
նորակ ջուրն ՚ի բարձանց Արտօս կամ Առնիս լե-  
րանց իջանէ և ոռոգանէ զայդիս . օդ տեղոյն է միշտ  
տուող և կենսաւէտ : Ընդ արեւելեան հիւսիս ծո-  
վուս ՚ի Քաջբերունիս տեսանին աւերակը Բերկիի  
և Արձէշ քաղաքացն : Ընդ արեւմուտ ծովուս ՚ի  
Բզնունիս երեւին կիսաւեր քաղաքքն Արձկէ և  
Խղաթ , յորում էին 800 եկեղեցիք յաւուրս իշխա-  
նութեան Հայաստանի : Եւ առ եղերօքն ծովակիս  
յիշատակին 900 վանորայք , տասն քաղաքք , և  
երկու հաղար զիւղք : Այժմ ՚ի վերայ ծովակիս են  
նաւք տուազաստառորք 60 լնդ մեծ և ընդ փոքր  
որք ՚ի Քաջբերունեաց և ՚ի Բզնունեաց փոխագրեն  
զցորեան ՚ի վան . և ՚ի ծովեղերեայ անտառաց բե-  
րեն փայտ և ածուխ : Ամենայն նաւապետք և նա-  
ւաստիք են ՚ի գեղջէն Աւանուց : Ամանք ՚ի բնակ-  
չաց գիւղիս , ՚ի Յունիսի , ՚ի Յուլիս և յօդոստանի ,  
զաղի ջուրն ՚ի ծովին ամանօք հանեն յածուս բո-

բականոցի իւրեանց և ջուրն ՚ի ջերմութենէ արեւ  
դական գառնայ որպէս սպիտակ աղ, զոր իրրեւ  
դքառակաւսի աղիւս հանեալ՝ վաճառեն վաճառա-  
կանաց Պարսից և Մարաց : զբորակս զայս ՚ի գործ  
արկանեն՝ ՚ի լուացս շորեղինաց, և ՚ի շինել զօնառու-  
Աւանդեն գիւղացիքս, թէ՝ մեծին Ներսիսի մե-  
ծաւ սիրով հիւրասիրեալ՝ ՚ի հաւուց մերոց, ՚ի փո-  
խարէն շնորհակալութեան իւրայ՝ ուսոյց հաւուց մե-  
րոց զարհեատ բարակ շինելոյ, ուսափ բորակաչէնք  
միշտ տան զողորմիս հոգւոյն մեծի Հայրապետին:  
ի յԱպրիլի և ՚ի Մայիսի Տառեխս ձուկին ՚ի ծովէս ան-  
համար բաղմութեամբ ելանէ ՚ի գետա վասպուրա-  
կանի, մանաւանդ՝ ՚ի գետն Մարմետոյ, և Արճի-  
ցոյ, զորս ըմբոնեալ վաճառեն Պարսից և այլոց,  
որոց աղին շորացուցեալ՝ տանեն՝ ՚ի հեռաւոր տե-  
ղիս և վաճառեն : Այնչափ առատ ելանէ : մինչ զի  
զերկու հաղարն հինգ գահեկանի վաճառի :

4. Ի Գեղարքունիս է ծովն Գեղամայ, յորում  
է կղզին Սեւանաց . ՚ի սմա ՚ի թրդ գարու Մաշ-  
տոց կաթողիկոս շինեաց զեկեղեցի անուամբ եր-  
կոտասան Առաքելոց, ուր ապա «Ճաշիցան Եղանց  
բաղադրական իանուարբաննեմբ որբայն Բարսով», Գոկրան+ ՚է  
ուսն Աստուծոյ Եղանց Ասողիկ : ի Սեւան սուրբ անա-  
պատէս յաւաջ եկին իմաստուն և մեծանուն վար-  
դապետք, եալիսկոպոսք և կաթողիկոսք՝ Տէր Ստե-  
փաննոս Գ. Տէր Խաչիկ, Ա. և Տէր Մաշտոց, որք էին  
վանահարք վանիցս : ի սմա որպէս յառաջն, նոյն-  
պէս այժմ բնակին սրբակրօն միանձունք, որք ՚ի  
հանդէս ճգնութեան հաւասար դտանին ճգնաւո-  
րացն լուսոյ և կտուցայ: զի երեքին վանացս կարդ ք,

կանոնք, եղբայրութիւնք միով հաւասար կանոնիւ հաստատեցան 'ի նախնեաց, նախ ՚ի Անեւան, ապա 'ի Հիմ, ապա 'ի Կառուց : Զուր ծովակիս Սեւանայ է անուշ և ըմպելի, հայրենի գետն Հրազդան Ելանէ 'ի ծովիչո, անցանէ առ Երեւլանաւ, առողանէ զման մի Այրարատեան դաշտին, և օժանդակ լինի երասխայ : Ծնդ երկոտասան ամիսս աարւոյն, տեսակք երկոտասան համեղահամ ձկանց որսացեալք 'ի ծովակիչո՝ կերտակուր լինին այնոցիկ, որք շուրջ բնակեալ են զնովաւ : Ի կազմն արեւելեան ծովակիս է գանձասար, 'ի Հարաւ Գեղարքունիք, 'ի Հիւսիս կանդարք . 'ի Արեւմուտս Օշական, Կարբի, և Այրիվանք :

Յ. Ի Մովաց գաւառոին՝ 'ի մէջ հարաւային լեռանց Խարբերդոյ է Մովք կոչեցեալ լեռնամէջ ծովակն, յորում է փաքրիկ կղզին . ուր Դրիգոր կաթողիկոս որդի Ապիկատայ զկաթողիկոսարան իւր հաստատեաց, ի ծովակիչս Ելանեն ձկունք մանունք. շուրջ ծովակիս է Մովք գիւղն, և այլ գիւղք Հայոց : Ի Հէր և Զարեւանդ գաւառին է կապուտակ ծովն Արմեայ. որոյ ջուրն գոլով ազի, աղ արտադրէ, զոր այժմ Պարսիկ վաճառականք տարեալ 'ի մերձակայ և 'ի հեռաւոր տեղիս վաճառեն . Ծնդ արեւելս ծովակիս է զԱրեւանդ . Ծնդ արեւմուտս Որմի, Հէր, Զարեհաւան, լնդ հիւսիս Անձախաձոր :

Յ. Դիմաւոր լիճք 'ի Հայաստան են ազի լիճն Արճակոյ 'ի Վասպուրական . Քաղցր լիճն Նազկայ 'ի Տուրուրեան . լիճն Կարնոյ 'ի բարձր Հայք : Ի միշտակելոց գտանին 'ի Հայաստան այլ եւս ծովակք և լճակք տասն և շորս ընդ մեծ և ընդ փոքր :

ի ժամանակի միջնոյն Տիգրանայ Հայք տիրեցին ՚ի կասպիական ծովեն մինչեւ ՚ի Սեաւ ծովն, և զՊատոսն ծովեղերեայ որոշեցին կեդրոն կուսակալութեանն, ուր քեռայրն Տիգրանայ Միհրդատ նատա իբրեւ զկուսակալ, և տիրեալ բովանդակ ծովոն կաշեցաւ ՚ի Հռովմայեցւոց թագաւոր: ի գագամք բարձու լերինն Ախիանայ գտանի բաժակը բնացեալ, նոյնպէս ՚ի հրաբխէ ձեւացեալ են երեքին բաժակը ՚ի գլուխու լերանց Ներբովթայ, որոյ ջուրք են սառն և քաղցր, բայց եթէ ցեղերս ջոյն կացեալ զաւազն փորեցես, ելանէ ջուր կարի ներմ, յորում իբրեւ ՚ի ներմուկս մոտանեն մարդիկ:

7. ի Հայաստան գտանին բազմատեսակ հանքային ջուրք, մեզ ծանօթացեալ ներմուկք են կարնոյ ՚ի կարին, ի Հաշոեանս ներմուկք Լալազարայ և Պատքանայ: ի Բայրերունիս, ՚ի Տատիկ, ՚ի գաշան Մշոյ և Ապաղայի գտանին ջուրք հանքային և ներմուկք ի ձորն Սալնոյ ՚ի Բաղեշ գտանին տասնտեսակ հանքային ջուրք: նոյնպէս յայլ և այլ գաւառն գտանին ջուրք բազումք, զորսց զտեսակս հմուտ հանքարանից և երկրաբանից քննութեան թողցուք որոշել, և զօդտակարութենէ նոյն առ մարդիկս ՚ի դարման ախտից և ցաւոց նոցա՝ ներհուն բժշկաց թողցուք վկայել ստուգութեամբ:

7. Հարուստ է Հայաստան ազնիւ և մաքուր աղահանքօքն, զոր ունի ՚ի ծովակս, ՚ի լիճս, ՚ի յաղբիւրս և ՚ի լերինս խւր, անուանի են ՚ի նոսա, աղահանք Դարանաղեաց, Կարնոյ, Խնուսայ, Աերանաց և ձանկայ որ ՚ի նախնեաց և ՚ի սուլթանաց սեփական կալուած էր լիմ Ա, Անապատին,

յորմէ բռնակալք վաճայախչտակեցին, և զհըովարտակն արքունի առ ոչինչ համարեալ՝ բռնի յարքունիութեանցին: Արդ՝ թէ աստանօր յիշառակեալըն, և թէ այլ ամենայն աղահանք հայրենեաց մերոց, առատութեամբ իւրեանց ոչ միոյն բաւեն ամենայն բնակչայն Հայաստանի, այլ և բնակչաց օտար պետութեանց եւս բաւեն, եթէ ամենայն աղի ջուրք աղբերաց անկորուստ ՚ի յածուս ակնոցաց ժողովնոցին և պահեսցին, զի գոն բաղում ջուրք աղիք դեռ անծանօթք, իսկ ՚ի ծանօթացելոցն քառորդքն հազիւ թէ ՚ի յաղս փոխարկին և վաճառին:

8. Համազգային եղարք մեր զդիրս արուեստից, և հանքարանութեան իւրապացւոց ընթերցեալ հոգւով մտօք և սրտիւ ՚ի կողմն աշխարհին այնորիկ հակիլ և հայել սկսան, զի նորք զամենայն երկրային և զնորային հանքա քննեալ՝ զօդտակարութիւննոցա հարուստ մասնագրութեամբ ընդ ծագս աշխարհի տարած եցին, և հմտու յառաջադիմութեամբ վնշյլ լուսոյ արձակեալ, զհայեացս բաղմաց ՚ի կողմն իւրեանց ձգեցին, մինչդի մերքն իրրեւ արդեալ և հրազդութեալ՝ կարծեցին թէ ամենայն բարոյական և բնական բարութիւնք և դեղեցկութիւնք. զգու մատեանք նոցա առաջի առնեն մեզ, մի միայն ՚ի յաշխարհս նոցա դասնին, և ոչ եղբէք յաշխարհի մերում: Զի հանճար հայորդւոյն ընդ խաւարդել շղթայիւք հեծեծանաց հիւծեալ, տակումն չկարաց աղատարար դշողազուն նշոյլ դիտութեան իւրոյ ծագել ՚ի վերայ տարածութեան, բարութեան և գեղեցկութեան հայրենեաց իւրոց, առ ՚ի զմիսո, զմիրսո Հայոց ՚ի նա զբաւել և հայե-

ցուցանել։ Արդ՝ յորժամ համբաւ և ձոյն խնառութեան ՚ի Հայաստանէ ուժգին հնչեսցէ և կոչեսցէ, ոչ միայն ամենայն ունկն Հայոց, այլեւ ունկն ամենայն ազգաց ձայնի նորա լուիցէ։ Յորժամ զորյա աշադիմութեան, պէս պէս արուեստից և գիտութեանց ՚ի վերայ բարձանց Հայաստանի երեւեսցի, ամենայն աչք ՚ի նա հայեսցին, և ամենայն վաճառականք ընդ արեւելս աճապարհոցեն, յորժամ հանքարանք մեր զամենայն հանքաց զնութիւնն, և զօդուտն աշխարհի ցուցանիցեն, ՚ի յաղքատութենէ և ՚ի պանդխառութենէ ազատեսցին։ Եթէ տարակուսիցիս թէ ծովք և լիճք երկրի մերում դոլով փոքր, և չուներով հաղորդակցութիւն ընդ մեծ և ընդ փոքր Ովկիան, ընդ որս նաւուք չկարիցիմք առնել վաճառականութիւն։ — Ահա արքունի և երկաթուղի ճանապարհք շինին, ահա միշտ ապահովագոյն է ցամաքային ճանապարհն քանի զծովային։ Միշտ լաւագոյն է կառուղին և երկաթուղին քանի զշոգենաւուն, կամիմասել ըստ Արքատութիւնի թէ հաճեալ եմ աւորս հարիւր առնել զճանապարհ ՚ի ցամաքի քանի մի օր ՚ի վերայ ծովու, և ուր հնար է գնալ ցամաքաւ, երբէք չմտանել ՚ի նաւ։ Ուստի ուրախ լինել պարտ է քեզ զի հայրենիք քո ՚ի միրկաց և ՚ի վասնդաց մեծամեծ ծովուց զերծեալ է իբրեւ զնոյ։ Երանի՛ թէ ՚ի յաղքային, ՚ի ժողովրդական, ՚ի դաւառական, ՚ի քաղաքական և ՚ի բարոյական ծփմանց մրրկաց և ալէկոծութեանց յարաժամ զերծ գտանիցիս ոտառապեալ ժողովուրդ Հայոց։ որք միշտ առաել աղէտարեր են միութեան, յառաջադիմութեան,

և կառավարութեան հայրենեացդ քան զմբրիկո ,  
փոթորիկո և զայխ Ռվեկիանոսի :

## Յ Օ Դ Ա Խ Ա Ծ .

ԳԵՏՔ · Վ.ՏՈՒԿԻ · ԵՒ Ա.Դ.ՅԻՒՐԻՔ :

1. Եկեսցէ Հռավիայէլ հրեշտակն որ երբեմն Աղա-  
րիա Անանիա անուամբ և իրեւ ազգական ընկերա-  
ցաւ պատանեցին Տուրիթայ առաջնորդել նմա յիկ-  
րաստան Մարաց . որ էր 'ի բաժնի արեւելեան մասին  
Հայաստանի : Այս որ 'ի լուսնակն Տուրիայ զձեռն  
իւր 'ի գետն Տիգրիս , զօրացուցանէր զպատանին  
ըմբռնել զձուկն և հանել զսիրտ և զլեարդ նորա-  
տո . 'ի հալածել զդեւն 'ի Սառայէ , և 'ի լուսաւո-  
րել զաշն հօր նորա Տուրիթայ : Նոյն եկեսցէ ա-  
ռաջնորդեցէ ամենայն որդւոյ Հայրենասիրաց .  
յորժամ իրեւ որդի Հայրենասիրին այց ելանիցն  
Հայրենի աշխարհաց և գետոց , և խնդրեսցեն զկո-  
րուսեալ գրանի Հայրենի Ժառանդութեան իւրեանց ,  
զի ասէ «Եւ Տուբին շնորհարն ծնաբառնեան բնացէ և  
շորդուռնեան շնորհայն առար իւնաց իւնաց . և առը հանիւննեան  
բաշուն արտի ես եղբարց և առաջին իւնաց . ոչ շնորհն են յետի-  
ւնն Առուելունեւոց էնէնուն : Եւ եկին 'ի գետն Տկզաթ  
(Տիգրիս) և հանդեան առ ախամբն , և պատա-  
նեակն էջ լուսնալ յեղը գետոյն , և վաղեաց ձուկն  
մի 'ի գետոյ անտի , և կամէր կլանել զպատա-  
նեակն : Եւ հրեշտակն ասէ ցպատանեակն , բուռն  
հար , կալ զձուկդ : Եւ կալս պատանեակ զձուկնն  
և հան զնա 'ի ցամաք : Եւ ասէ ցնա հրեշտակն -  
րաց զփոր ձկանդ և հան զսիրտ և զլեարդդ և զլե-

զիդ . և դիր զգաւշութեամբ . եւ արար պատաշնետին որպէս ասաց ցնա հրեշտակն . . . . :

2. Երանի՛ ձեղլերինք Հայաստանի . զի 'ի ձէնջ բղխին քառավտակ ազրիւքք Եղեմայ . այն է Եփատէս , Տիդրիս , Գեհոն որ է Երասխ և ձորսիս . որք են ուրախութիւն և պարծանք քաղաքայն հայրենի . Երանի՛ ձեղ որդիք Հայոց , որք բնակիք քոշտութիւնը զարդ գգետովքս , և ըմալէք 'ի կենաքաշխ ջրոց նորա . Երանի՛ ձեղ հովիւք և Երկրագործք Հայոց , որք միշտ խաղայք , զգնայք և հասանէք ընդ բուն ակունս գետոցս և առնուք զճաշակ անմահութեան Դրախտին . դուք իբրեւ ականատես ուսուցիչք ուսուցինք թէ նախ Եփրատ բղխի 'ի Ծաղկուտան Երանց կարնոյ . սրոյստ առեալ անցանէ ընդ Բագրեւանդ և ընդ գաշտս Հարք և Ապահունեաց գաւառին , և միանայ ընդ օժանդակ վտակի իւրոյ . որ 'ի Բիւրակնեան բարձր Երանց իջեալ ընդ գաշտահովիսն խնուսոյ միանայ ընդ սա . որոց միարան մտեալ 'ի գաշտն Ցարծնոյ . և առեալ անոի ինքեանց օժանդակ դՄեղրագետն , որ 'ի սատրոտէ Գրկուռ լերան բղխի . և զվտակն Մեղտուայ , որ 'ի լերանց Ակարագետի իջանէ , ապա դնան 'ի ձապաղջուր , և ժողովն զճապաղեալ ջուրս դետոյն ձապաղջուր , որ 'ի հարաւային Երանց Բիւրակնեան իջանէ . խաղան 'ի Բայլահովիսն . և քերեալ զարեւելեան գաշտիւն Խարբերդոյ , մտանեն 'ի հովիտն Մեծկերտոյ 'ի գաւառն Խողնայ . ուր հիւրընկաղեն վերկոսին վրակս , որոց մինն 'իջանէ 'ի լերանցն Բալուայ և

---

\* Սա այժմ կոչի Զարսահամակինք դետ :

Եփրատ անուամբ անցեալ ընդ Պաղնատուն՝ խառնիք ընդ մեծն Եփրատն . իսկ միւսն իջանէ 'ի ձիւնապատ լերանցն Սեպհոյ և Պարանազեաց\* և Եփրատ անուամբ կամ ջուր Մնձուր գետոյ անուամբ խառնիք ընդ Եփրատ : Բաց 'ի սոցանէ մերս Եփրատէս և զայլ բաղզում ջուրս մեծամեծս վտակաց , ականուակիտ աղբերաց՝ ձեռանց և հեղեղաց համահաւաքեալ՝ հասանէ 'ի ոտհմանս Զմշկածակու . անդ առնու վմեծ վտակն իւր . որ կոչի դարձեալ Եփրատ . որոյ մի մասն 'ի յարեւմաւեան բարձր լերանցն թիւրակինեան իջանէ , իսկ միւսն 'ի խաչտիպոի լերանց կարինոյ բղիսի և անցեալ ընդ դաշտն կարինոյ խառնիք ընդ սա . որոյ վասն առէ Խորենացին «Ուր Եփրատայ մասինն ինչ բղիսն աղբիւրք ականց» : Ուրոյ իջեալ 'ի դաշտն Երգնկայ , և առնու դդոյլ դեմն , երթայ միանայ ընդ Եփրատ Որոյ երթեալ յանդիման Ասորեստանի՝ պատէ զՄիջադետքն , խառնիք ընդ Տիգրիս , գնայ 'ի Բարելմն . և 1780 մզոն ճանապարհ արարեալ մասնէ 'ի ծոցն Պարսից :

3. Բ. Երասխ . այն է գեհնն ո՞ր 'ի բարձանց հիւսիսային լերանցն նվարակինեան վտակ վտակ իջեալ միանայ . անցանէ 'ի դաւառէն թասենոյ , հատանէ առ վաղարշաւսն\*\* , առնու անդ ինքեան օժանդակ նախ դՄուրց դետն . երթայ մերձ 'ի Շիրակ , ժողովէ զջուրս Ահուրեան դետոյն . որ իջանէ 'ի հարաւային լերանցն վանանդոյ , և անցանէ ընդմէջ կարս քաղաքին , և քերելով արեւելեան ովարբագին Սնւոյ՝ խառնիք ընդ Երասխ . որ դայլագե-

\* Աս այժմ կոչի Միւնդիւր սույու :

\*\* Այժմ Քէ օփրիւ քէ օյիւ կոմի :

լար ընթացիւք խաղացեալ բնդ երկարութիւն Ա-  
րարատեան՝ ոռոգէ զմեծ մասն դաշտին։ Ի դաշտ  
անդր առնու դջուրան Սեւ գետոնյ. որ ՚ի Արագած  
լերանց իջանէ . անդ առ ինքն հրաւիրէ զջուրան  
Մեծամօր, Քասաղ, Գառնոյ և զչրազդան գետոց,  
անցանէ ընդ Սիւնիս, հասանէ յլրցախ, գկուրն առ-  
նու իւր ընթացակից . և առաջնորդ լեալ կուրին  
հասանէ ՚ի ծովն կասպից Յեղերս և յափունս Երաս-  
խայ շինեցան հին Նախիջեւան, Արմաւիր, Վաղար-  
շաւան, Երուանդաշատ, Արաւաշատ քաղաքք յոյժ  
ճոխք, փառաւորք, և թագաւորաբնակք : Երասխ  
իրեւ զմայր Հայաստանի ՚ի բարձանց բարձր Հայոց  
իջեալ այց ելանէ բարում քաղաքաց . և ուղղեալ  
զընթացս իւրանդիման Արեւելից՝ զբիւրաւոր բնա-  
կիչս գիւղականաց արբուցանէ եղեմարտողիս ջրովն  
իւրով . և առողանէ զդաշտու զմնդս, զայդիս Հա-  
յոց Ռւսակի գու յորժամ տեսանես զվատակս Երաս-  
խայ, ըմզես ՚ի ջրոյ նորա և անցանես ընդ նա .  
զայր մի կացեալ յափունս նորա, յիշեա զարտասուս  
նորա . և երգեա նմա զբովանդակն երգն նորա .  
«Մայր Արաւուս ակերտ այլամբաւ չընուած էմ, հին հին դա-  
րաց յիշուածէ ալոցս Թջը պարբռաւ էմ . . . .» Աւանդու-  
թիւն կայ ՚ի վասպուրական թէ . «Ու ըմուն պարուն  
Երասխայ, նու երբէ՛ հիւսնորոնայ, նու նիւ ու հիւսնորոն եր-  
նոյ, հիւսնորոն էսիյն ռուսնորոն» : Կայ այլաւցիկ վերք  
մի, որ յաճախս ելանէ յերեսս տղայոց . զոր վանե-  
ցիք երեթիկ անուանեն : Արդ՝ յորժամ այս պատա-  
հիցի, որնեալ գտանեն զայր մի, որ երկիցս անցեալ  
ընդ Երասխ գետն և ըմզեալ է ՚ի ջրոյ նորա, այրու  
այս պողպատն հարեալ ընդ դայլախազն՝ զկայժմն

թօվժափէ յերեսս երախային ընդ երեժիկո , զորմէ-  
տաեն պառաւունք թէ նոյն հետայն անհետանայ  
յերեսաց մանկանց : Ալդ՝ ըստ որում ծեր կանայք  
չայաստանի սիրելով զգեստն երախ համարին զնա  
սուրբ և եղեմաբուխ . ուստի 'ի կարծիս են , զի եթէ  
ոք ըմպէ զջուրն , ոչ հիւանդանայ . եթէ երթայ առ  
հիւանդն , հիւանդն խկոյն առողջանայ . իսկ վասն  
եփրատայ ասեն կանայք Տարօնոյ , «Եթէ մէկ խըն-  
դիրք ունի , երթայ առ Եփրատ , Եփրատ կուտայ  
նորա մուրատ» : Բանքս այսոքիկ յայտ առնեն թէ  
կանայք Հայոց , յոյժ սիրեն զԵփրատն , որ է մեղրա-  
դոյն , և զԵլրասիսն որ է երկնագոյն :

4. Գ. Տիգրիս , որոյ առաջին ակն բդիխի 'ի կան-  
դուար լերանց Անձեւացեաց դաւառին , իսկ միւս  
ակն նորա 'ի յԱգուառայ քարէն Հոգեաց վանից  
բղիւեալ , և մերձ առ հիմունս վանացս անցեալ՝ ըն-  
կերանայ Տիգրիսին , որոյ 25 մղոնաշափ ճանապարհ  
թագնաբար ընդ լերամբք կորդուաց ընթացեալ՝  
մերձ 'ի յաւան Շատախ իրրեւ վտակահոս աղրիւը  
յառաջ խաղացեալ՝ գնայ 'ի դաւառն Մոկաց , անդ  
ժողովէ զգետս , զվտակս , և զաղրիւրո 'ի լերանց  
կորդուաց , որք դարձեալ կոչին ակունք Տիգրիսի :  
Ի Մոկաց և 'ի կորդուաց հասանէ 'ի կործէք , առ-  
եալ զջուրմն Զաւ գետոյն Ոլափրանից , երթայ յզԱ-  
ձընիս և անդ միանայ ընդ մեծի վտակաց իւրոց ,  
որք 'ի Սիմ կոչեցեալ գօտեւոր լերանց Տարօնոյ  
չորիւք վտակօք իջեալ 'ի ձորձորս Մալնոձորոյ իրրեւ  
հարազատ ակունք Տիգրիսի՝ երթան միանան ընդ-  
նմա : Աստանօր յուշ լիցին քեզ , զի գօտիք Սիմ  
լերանս 'ի յարեւմսեան կողմանէ դաշտին Մշոյ մի-

ացեալ են ընդ շղթայս Բիւրակնեան լերանց , յորմէ բղիսեցան ակունք Եփրատայ , Գեհոնին , Երասխայ և Ճորոխի Արդ՝ ըստ որում ջուրք չորեքին վտակացս Բաղիշոյ՝ ՚ի Սիմ և ՚ի Բիւրակնեան լերանց բղիսեալ երթան ՚ի Տիգրիս , վասնորդյատուդապէս համարիմք զՏիգրիս բղիսեալ ՚ի Բիւրակնեան լերանցն : Ահա Տիգրիս այսպէս օժանդակօքն շատացեալ՝ կոչի Շամֆ , անցանէ ընդ ձախակողմն Տիգրանակերտի , ոլատէ զԱսորեստան , միանայ ընդ եղբօր իւրում Եփրատայ և զեղանի ՚ի ծոյն Պարսից :

Յ. Դ. Մովսէս ՚ի գիրս Արարածոց զանուն ձուրոխ գեատոյն մերոյ նշանակէ Փիտոն . բայց մասունագիրք մեր Ճորոխ անուանեն , զոր ստուդաբանեալ՝ Խակապէս նշանակէ ծոր ուխ . զի ծորելով իջառնէ ՚ի լերանց և ուղխօրէն վաղս առեալ ՚ի վայր՝ հասանէ ՚ի ծովի Պոնտոսի : Արդ ըստ որում Փիտոն կամ Փասխի ՚ի լեզու Երրայեցւոց աճել և զեղուլ նշանակէ , ուստի Մովսէս զրուն բառ մեր Ծորոխ ՚ի Փիտոն թարգմանեալէ . որ ընդ ծոր ուխոն մերոյ միաբանեալ՝ տայ զայս գեղեցիկ զիմաստ . այնէ , ծորելով աճել և ուղխօրէն զեղանիլ : Առաջին ակն Փիտոնի բղիսի ՚ի հիւսիսային լերանց Բիւրակնեան և Կարնոյ . իսկ միւնն ՚ի յարեւմուեան լերանցու բղիսեալ միանան ընդ միմեանո , անցանեն ՚ի միջոյ Բարերդ քաղաքին և առնուն զվարին խրեանց , որ ՚ի լերանց Մովսէրոյ իջանէ , անտի անցանեն ընդ Արդուին , և զեղանին ՚ի ծովի Պոնտոսիցւոց :

Յ. Ահա չորեքին զետք եղեմարուղիք , որոց վասն գրեաց Մովսէս ՚ի գիրս արարածոց . թէ «Պետքներ յշպեհայ ուսումնել ուղբան Կոյն , և անորի բաժանէ ՚ի

Նըստ առաջնորդ Անհանու միայն քիչունց ։ Նու եւ ոք պատեւ զամբեացն երբէւ Եղիշեաց անդ ուր ուին եւ . . . : Եւ անսու քերպուն Եղիշեաց գունակ Գունացն ։ Նու եւ որ ուստի զամբեացն Եղիշեն Եղիշեաց ։ Եւ քերպ Եղիշեաց Տէշէրէն . Նու եւ որ Երիսոյ յանդիմն Ասու բեսունէ : Եւ քերպ Արբութ Եղիշեացն : Ահա այսպէս քառավակակք Եղիշեաց բղյանեալ ՚ի Բիւրակնեան լիւ րանցն . որք անկանին ՚ի միջոցի բարձր Հայոց , և Հարք գաւառովն , Տարօնոյ և Տուրուբերան աշխարհաց . զի բարձր Հայք անկանի ընդ հիւսիսակողմ լերանցն Բիւրակնեան , Հարք ընդ արեւելքո , Տարօն ընդ հարաւ , Տուրուբերան ընդ արեւելքեան հարաւ , իսկ Քղի Բայրու և Երեկն ընդ արեւելքուստա Արգ՝ ահա աստ ՚ի միջոցի աշխարհացն , ՚ի զերայ բարձանց Բիւրակնեան լերանց , առ Եղերս կենսարութիւն քառավակակացն , « Տնիկաց Ապուռուն զորունակութ Երեւելք . և Երեւելք զարբոն զոր սովորութ » : Ի չորս առաջն բաժանին Եղիշեամբուզիւ վասակքն , Եփրատ նախ ընդ արեւելքուստ , ապա շեղեալ ընդ հարաւ , նոյնպէս Տիգրիս բաժանեալ յարեւմուստ ապա ընդ Եփրատայ անցանէ ընդ հարաւ , և գառնայ ընդ արեւելքեան հարաւ : Երասխ Երթայ ընդ հիւսիս և գառնայ ընդ արեւելքո : Ճորոխ ընթանայ ընդ արեւելքուստ և գառնայ ընդ հիւսիս : Ահա գետք , որք ոչ միայն զաստուածատունկ գարաստան և զջորեսին կողմանս Հայաստան աշխարհի ուսուաննն , այլ և կենսախաղաց Ջրովքն արրոցանեն զամենացն Հայաստաննեայ , որք անդստին ծնան , աճեցան , և բնակեցան յակունս , յափունս և յեղերս քառավակակաց : Սոքա դորով բարերարք Հայրենեաց , յետ մասուուակելոյ զնուրն առողջարար՝ զրադ-

մատեսակ, զհամեղահամ ձկունս եւս տան 'ի կերաւ-  
կուր սիրանունդ Ասքանաղեանս :

7. Բաց 'ի սոցանէ գտանին և այլ գետք 'ի մեծ  
և 'ի փոքր Հայաստան . անուանի է Տղմուտ անդ.  
'ի Շաւարշան, առ որ Վարդանանք քաջ կռ.ու ե-  
ցան և Նահատակեցան : Ի վասպուրական Աեւ  
գետն, Առեստու, Անգղայ, և Արճիշոյ գետք, որոց  
ջուրք բղխին 'ի Լերանց Վասպուրականի . և Թուխ  
գետն, Աղձնեաց, որոց ջուրք բղխին 'ի Լերանցն  
Գեղեցկաձորոյ, արբուցանեն գդաշտօրայս և զայ-  
դիս Վասպուրականի, և զեղանին 'ի ծովն վանայ:  
Անուանի է Ալիս գետն 'ի Սերաստիա . որոյ ջուրն է  
կարմիր, որ 'ի Պարխսար լերանց իջեալ, և քերեալ  
գկողմամբքն կեսարիոյ՝ մնանէ 'ի ծովն Սեաւ: Պար-  
տիմք աստանօր խոստովանիլ թէ հազարք հազա-  
րաց են գետակք և վտակք 'ի Հայաստան, և բիւրք  
բիւրոց են ականակիստ աղբիւրք, որք 'ի ձիւնա-  
պատ Լերանց, 'ի ծառախիտ անտառաց, 'ի խոնա-  
ւուտ հովտաց, 'ի խորախոր ձորձորաց նաեւ 'ի  
յապառաժ վիմաց յառաջ եկեալ բղխին սքանչե-  
լապէս :

8. Շատաջուր է Հայաստան, ջուրք գետոց, աղ-  
բերաց նորա վճիտ սառնորակ և բարեհամ են .  
Հայաստանեայք վասն անբաւ առաստոթեան գե-  
տոց աղբերաց վճուրն գնել և վաճառել ամօթ հա-  
մարին . Հայաստանեայք չունին ոլէտ ջրամպարս  
պատրաստելոյ, զի գետք և աղբիւրք յամենայն  
տեղեաց բղխեալք և յամենայն տեղիս ընթացեալք  
արբուցանեն զմարդիկ և զանաստն . ոյլ և զամե-  
նայն երկիր : Արդ՝ որք բնակեալլ էք ընդ օսապ

ասաեղօք և ըմպէք զպղտոր, զդառնահամ և ջերմ ջուրսն, յիշեցէք զեդեմաբուղիս վատակն Եղեմայ: Առ քեզ զթեւս ազաւնոյ, և զերագոթիւն արծոյ, հա՛ս յակունս և յափունս հայրենի դետոցդ, ա՛րբ 'ի կենսաբուղիս ջրոյ նորա և զուարթասցիս, որպէս ծառ որ անկեալ է 'ի գնացս ջուրց. զի եթէ տկար իցես, զօրասցիս, եթէ հիւանդ իցես, առողջասցիս, և եթէ ծերացեալ իցես, նորոգեսցի որպէս արծոյ մանկութիւն քո: Դաւիթ երբեմն իրբեւ զմիեղջերու փափազէր ըմպել 'ի ջրոյն Սիօնի, որ երբէք չհաւասարէր առատութեան և համեղութեան ջրոյն Հայաստանի, այլ դու իրբեւ զափրատենչ ջրոցն հայրենի յորժամ 'ի յօտար ավտոնս անկեալ՝ ըմպես զուրը օտար դետոց և աղբերաց, անդ յիշեսցես զեփրատ, զՏիգրիս, զերասխ, և զձորոխ: Յորժամ իրբեւ զտարագուեալ որդիմն Յակոբայ նըստիք առ դետս Բարելացոյ, անդ յիշեցէք զմայրն Հայաստան. եթէ օտարք ասացեն ձեղ թէ երդեցէք մեզ զօրհնութենէն Սիօնին Հայաստանի, ստացէք . «Զէ՞՞ Ե՞ Երբէսցուն զբանալիւն» Տեռոն յէշիք:

9. Արդ՝ Հայաստան իրբեւ մայր որդեկորոյս զգետըս և զաղբիւրս իրբեւ զկաթն սուրբ ստեանց իւրոց 'ի ձեռքին առեալ աղաչէ զհեռացեալն, և ասէ եկայք եզրօրորդեակիք իմ, արբեք, և արբեցարուք: Սուգ ունի Հայաստան, հեծէ հառաչէ և զետս արտասուաց իջուցանէ 'ի վերայ այնոցիկ, որք անկան 'ի վերայ օտար լերանց, և թաղեցան 'ի գերեզման նժդեհաց, որպէս ողբայր երբեմն Դաւիթ զմահ Սաւուզայ և սիլսելցն իւրոյ Յովանթանու .

որք վիրաւորեալք անկան ՚ի վերայ լերին գեղբառայ՝  
«Լերինք գեղբառայ, մի՛ իջցէ ՚ի ձեղ ցօղ . և մի՛ ե-  
կեսցէ ՚ի վերայ ձեր անձրեւ՝ անդաստանք պաղոց .  
զի անդ ապականնեցաւ ասպար զօրաւորաց . վա-  
հան Սաւուզայ ոչ օծաւ խզով Յարենէ վիրաւորաց,  
և ՚ի ճարպոյ զօրաւորաց ոչ գարձաւ աղեղն Յով-  
նաթանու ունայն յետս . և սուրն Սաւուզայ ոչ ամ-  
փոփեցաւ դատարկացեալ : Սաւուզ և Յովնաթան  
սիրելիք , և դեղեցիկք , և վայելուչք , չմեկնեալք  
՚ի կենդանութեան իւրեանց , և ոչ մեկնեցան ՚ի  
մտհուան իւրեանց . թեթեւագոյնք քան զարծուիս,  
զօրացան քան դառիւժունս . դստերք Խորայէլի  
լացէք ՚ի վերայ Սաւուզայ . լացէք ՚ի վերայ նորաս, որ  
զգեցուցանէր ձեղ կարմիրս հանդերձ զարդու ձերոյ  
Զիա՞րդ անկան զօրաւորք ՚ի մէջ պատերազմի ,  
Յովնաթան ՚ի վերայ բարձանց քոց վիրաւոր : Յաւ-  
է ինձ ՚ի վերայ քո եղբայր իմ Յովնաթան , գե-  
ղեցկացար ինձ յոյժ . զարմանալի եղեւ սէր քո ինձ  
քան զէք կանանց : Զիա՞րդ անկան զօրաւորք , և  
կորեան անօթք պատերազմականք» Բ. Թ :

40. Արդ՝ զստերք Հայկայ իրեւ զԴաւիթ և զԵ-  
րեմիանն զՊուրան ՚ի դետոց և յաղբերաց Հայա-  
տանի ՚ի դլուխա և յաւ ձեր առեալ՝ լացէք զզօրա-  
ւորս ձեր , որք անկան իրեւ զՍաւուզ և զՅովնա-  
թան վիրաւորք ՚ի վերայ օտար լերանց , լերինք  
Պարսից , լերինք Հադարայ , լերինք Յունաց , և  
լերինք Հիւսիսոյ , մի իջցէ ՚ի վերայ ձեր ցօղ , և մի  
եկեսցէ ՚ի վերայ ձեր անձրեւ . զի անդ ՚ի ձեղ ա-  
պականնեցաւ ասպար զօրաւորաց մերոց : Զօրաւորք  
մեր ՚ի վայրի դաշարւով Հայաստանի ընակեցան ,

և առ ՚ի ջուրս հանգստեան քառավիշտակացն սնան,  
բայց բաղումք ՚ի նոյցանէ միամուարտը յարգելով  
զօրէնս հաւատարմութեան, յետ բաղումքաստակոց  
և արտթեան՝ անկան վիրաւորք ՚ի վերայ հեռաւոր  
և ապառաժ լերանց ձերոց, ո՞հ մեռան ՚ի վերայ օ-  
տարաց ՚ի զուր՝ կարօտակեզ մնալով ըմպելոյ զումզ  
մի ՚ի ջրոցն քառավիշտակացն : Եւ ահա եղեն ամք  
բաղումք, յորս զօրաւորք մեր յետ այնչափ վաս-  
տակոց և արեանց, ՚ի յօտարաց՝ ՚ի փոխարէն երախ-  
տեաց ընկալան և ոչ ինչ . իրրեւ երկրադործ որ  
յապառաժի սերմանեալ, առնու անտի և ոչ ինչ:  
Արդ՝ վասն այսորիկ ելթէ գոտիադիս գնել զանձն  
քո, մի դիցես զայն ՚ի վերայ օտարաց, այլ ՚ի վե-  
րայ բարեկամոց . զի ասէ Տէրն «Պան ըստ եւ Ան-  
դաս առնի . ոչ դիցէ ըստյն իւր ՚ի վերայ բարեկամոց իւրոց» :



### ԳԼՈՒԽ ԺԷ .

ԳԻՏՈՒԹԻՒՆ, ՀԱՆՃԱՐ, ԳԻՒՍ ԵՒ ԱՐՈՒԵՍ .



### ՅՈԴԱԿԱԾ Ա .

ԳԻՏՈՒԹԻՒՆ

1. Զիք յաշխարհի հին և նոր մատենադիր, որ  
զդիմութենէ նուազ կամ առաւել մասնաւոր կամ  
ընդհանուր ներբող ինչ ոչ գրեսցէ . չեք ոք մարդ  
յարաբաժս, որ լուսոյ դիմութեան և գեղցյ իմաս-  
տութեան ոչ լիցի ցանկացող : Զի մարդն անդստին

՚ի տղայութենէն մինչեւ ցհասանելն իւր 'ի ծերութիւն՝ ինքն ըստ ինքեամն ձգի և մղի 'ի հետազօտել և գտանել զգաղափարս և զպատճառս ամենայն իրաց . որք կամ ինքնին ծնանին 'ի միտս իւր , և կամ ըմբռնեալք 'ի հինդ զգայութեանց և առաջնորդեալք գան մոտանեն 'ի միտս մարդկան և բրռնագատեն զամենայն մտաւորական կարողութիւն մարդոյն լրջօրէն խորհիլ 'ի վերայ մասնաւոր և ընդհանուր զաղափարաց , յորս եթէ ըստ ուզզութեան մտաց , զոր բոլորից արարիչն հաստեաց 'ի բանական բնութիւնս մեր իրբեւ առաջին տարր էութեան մերոյ և դիտակցութեան՝ գտցէ զանմնար ճշմարտութիւնն ՚ի նոտա , որ ուզզէն զմիտս մեր առ ճշմարիտ բարին , անդ ուրախ լինի մարդն 'ի դիտութիւն իւր , և եթէ իրբեւ զկոյր խարխափեալ չկարիցէ գտանել զճշմարտութիւն , տրտմի և կամ մոլորի :

2. Զիք չափ և սահման դիտութեան . զի յանհունս տարածի շառաւիդ նորա . զիք չափ և սահման բաղձանաց և հետազօտութեան մարդկան առ դիտութիւն «Զի յանհունին ի հասուրանին ունի յարացանին . Եւ ու յափեացի ան պեսանելը լ , և ու լցի ունին լսելը : Եթէ գտցի այր , որ ոչ տենչչայ ճշմարիտ դիտութեան , չէ հեռի 'ի յանիրանից , որք զուրկ գտանին 'ի բանէ : Եթէ ոք ոչ բղձայ ճոխանալ դիտութեամբ իրբեւ այր բանասէր և չփութացի բանավարութեամբ ուզզել զընթացս իւր և իւրայնոցն 'ի կենցաղումն . ոչ համարեացի մարդ 'ի կարգութիւն մարդկան , ոչ քաղաքացի 'ի կարդս քաղաքացեաց , ոչ աղգային անհատ 'ի դասակարգութեան Հայ-

կազմանցս . զի ասէ իմաստունն « Անք է այս և դժուար բանն առաջ առաջ . ի ու ոքի դաստիան առաջ պահանջան » , և առաջն ասէ , « լաւ է իմաստնոյ հետ քար քաշել , քան տգիտին հետ մեղք ուտել » :

Յ. Առաջած հրաման ետ դիմութեան՝ ափել  
՚ի վերայ երկրի և ըստ օրինի կառավարել զմար-  
դիկ , և ինքնին Տէր դադանի խորհրդով , և ան-  
հուն իմաստութեամբ օժանդակ լինի այնոցիկ , որք  
սիրեն զգիտութիւն , որք ոչ երբէք արհամարհեն  
զուզութիւն նորաւ : Եթէ հաճեսցի Տէր ՚ի խոր-  
հուրդ իմաստութեան մտանել վասն նոր իմն բա-  
րիս առնելց մարդկան . զիմաստունս , զգիտունս .  
զքննիչս , զդպիրս և զհանճարեղս ՚ի մարդկանէ  
ընտրէ իւր խորհրդականս : Նա զհայրն ազգաց բաշ-  
մաց զԱրբահամ թողեալ՝ ՚ի խորհրդակորցս Սո-  
դոմացւոցն ոչ առնու . իւր խորհրդականս : Նա զայրն  
ժուժկալ և զհանճարեղ զՅովսէփ ՚ի խորհուրդ հրա-  
ւիրէ , և զանբարդյական Ուուրէն յատենէ ՚ի բաց  
վարէ : Նա զՄովսէս որ դիմութեամբ Եղիպտա-  
ցւոց վարժեցաւ՝ ՚ի Սորենովն՝ ՚ի յԵգիպտոս , ՚ի  
կարմիր ծովս , ՚ի յԱնապատին , ՚ի խորան վկայու-  
թեան , և ՚ի յինէական լիբինն առնու իւր խորհր-  
դական . իսկ զկորիս , զԴադան , զԱրիրան՝ զարս ան-  
խորհուրդս ոչ միայն մերժէ յերեսաց և յատենէ  
իւրմէ . այլ և պատուհասակոծ տռնէ : Նա տես-  
եալ զարրութիւն , զգիտութիւն Սամուէլի՝ ՚ի գիշերի  
երիցս ՚ի խորհուրդ կոչեաց զնս , ընկէց զհեղի յա-  
թուոյն , և զնա արար խորհրդական , դատաւոր  
և մարդարէ : Նա տեսեալ թէ իմաստութիւն , հան-  
ճար և արդարութիւն առաւել է ՚ի Դաւիթ քան

՚ի Սաւուղ, մերժեաց զԱսաւուղ ՚ի խորհրդականութենէն, և զԴաւիթ ընտրեաց և էօծ ՚ի աեզի նորս : Նա զՄողօմնն, որ եղեւ ցանկացող գեղց իմաստութեան, իբրեւ զխորհրդական բաղմեցոյց ՚ի վերայ աթոռայ արքային Դաւիթի, իսկ զադիտարարոյ Արքապուր, և զԱմօն մերժելով մերժեաց : Այս՝ «Տեր աւ Բնու առնե, ենիւ ունախ յայտնեցիւ վերհուրդներուն էւր Շառույց էւրոց հորդաբեկց» : Այս՝ նա բաղամ անգամ խորհրդակցի ընդ Եղիայի . բայց ոչ երրէք ընդ Աքայարի և ընդ Եզարէլի և նա ընտրէ զԱռաքեալն . առնէ զնոսա ինքեան խորհրդակիցս և ասէ «Դուք բորբեկա՞ էմ ետ, ով առնեայն ուր ըստ ՚ի հօրեւ էնք շառուցի յեւ» : Զի առաքեալք լուսն խմաստութեան Յիսուսի և ասնն . «Տեր աւ աւ Երիշեռու, բուս ինո՞յ յասկի ունեախանոց ունի» : Արդ՝ եթէ հազարապետ և խորհրդակից կամիս լինել խորոցն Աստուծոյ, ստացիր զգիտութիւն, ստացիր զՀանճար :

և երանի ազգի, որոյ համիլոք և իշխանք խորհրդակից են խորոցն Աստուծոյ գիտութեամբ, Արդ՝ եղեւ զի յորժամ ՚ի կեսարիա նստէր լուսամիտ զեւոնդ պատրիարք, և ՚ի յԱսորիս զգօն թակոր հայրապետն Մծբնայ . բաղմիսնստ և բազմերախան հայրն մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչ՝ լուսատուն հոգւոց մերոց աստուածային գիտութեամբ ուսուցանէր, լուսաւորէր և հովուեր զՀայաստաննեայս : Յորժամ բարսեղ յաթոռ հայրապետութեան Յունաց բաղմէր . նստաւ յաթոռ հայրապետութեան Հայոց մեծն Ներսէս . որ բնական, քաղաքական, տնտեսական, և աստուածաբանական գիտութեամբ պանծալի էը յաւս ամենեցուն : Յորժամ յԱսորիս

դանիէլ և Հռուփամնոս վիլխառովիայք իմաստասիրէին .  
և 'ի յաթոռոյն Բիւզանդիոնի Ռոկերերան ուկիա-  
բանելով զարմացուցանէր զճարտասանոս Յոնատ-  
անի , փայլեցան որպէս անազօտ արեգակն մեծն  
Սահակ Պարթեւ և ոռորըն Մեսրովալ 'ի Հայաստան,  
աստուածային իմաստութեամբ և արտաքին գի-  
տութեամբ և խորհրդակից լեռալ խորոցն Աստուծոյ  
բազմոհմուտ աշակերտոք պայժառացուցին զեկե-  
ղեցին և փառաւորեցին զհայրենիս : Ի յաշակեր-  
տացն սրբոցն՝ Գիւտ , Յովսէփ , և Մանդակունին  
արք լի իմաստութեամբ և զիտութեամբ , նուան  
յաթոռ սրբոյն Գրիգորի և առաջնորդք Եղին մեզ  
գնացիւք 'ի շաւիզս արքայութեան երկնից : Ի  
դարն Ը. ծաղկեցաւ Յովհանն իմաստակէր և Էտո-  
զգաւառան հովուապեսութեան Հայաստանեացն .  
զոր Ասողիկ Յովհաննէս վիլխառովիայ անուանէ : Ի  
յասմիկ զարու փայլեցաւ Ստեփաննոս դրան երէց .  
զօրմէ ասէ Սամուէլ . «Յայսմ ժամանակի էր Ստե-  
փաննոս դրան երէց , որ բանիբուն ճանաչէր . հաս  
'ի կաստարումն ամենայն իմաստասիրական և դրա-  
մատիկոս արհեստոց . դարձեալ 'ի կարգո վարդա-  
պետաց յիշատակէ զյտեփաննոս Սիւնեաց եպիսկո-  
պոսն թէ «Անձ իմաստասէրն Ստեփաննոս Սիւնե-  
ցին աշակերտ Յովսէփի »: Յովհաննէս կաթողիկոս  
ասէ վասն Սովորոն կաթողիկոսին . որ յամի Ցեառն  
791 նստաւ յաթոռ թէ «Սա . . . բազում առաքի-  
նաշան երկոց դանձն տուեալ 'ի մեծ ուխտն Մաքե-  
նացւոց . այլ և վարժեալ եւս էր 'ի վիլխառովիայական  
արուեստու»: Պատմիչը մեր հաւաստի առնեն մեզ թէ  
Աղան Արծրունի , Մաթոս ազա , Անանիա և Գրիգոր

Նարեկացիք, Անանիա Շիրակացին, Գրիգոր Փելիք-  
սոփիայ քոր եպիսկոպոս Արշարունեաց, Քրիստո-  
փոր կաթողիկոս, Մխիթար դօց, Սարկաւագ վար-  
դապետ և այլք ընդ սոսա էին արք հռետորք և  
ներհուն խնասուանէրք: Ագաթանգեզոս ասէ վասն  
Տրդատայ թէ «Յունական աշխարհական դպրու-  
թեանն, երկրաւոր իմաստութեանն յառաջադայն էր  
տեղեակ, առաւել փիլիսոփայական մոտաց հանճա-  
րագիտութեանն, զիւսեալ էր զայս»: Ղազար վասն  
վահանայ Մամիկոնէի ասէ «Խնասափց յառաջասե-  
սութեամբն արդարախոհութեամբն, աշխարհագի-  
տութեամբն և քաջութեամբ» արդէն Գրիգոր Մա-  
գիստոս փիլիսոփայ անուամբ հռչակեալ է 'ի գիրու:

5. Ազաքէն դու յորժամ զսուրբ մատեան և  
ընդ նմին զշայ մատենադիրս ընթեռնուս, յիշեա  
զարս խնասունս, զդործո նոցա, զիշխանութիւնս  
նոցա և զժամանակս նոցա, յորում տեսանի թէ,  
Տէր ոզորմելով որդւոյս Արամայ 'ի ձեռն հաւատա-  
րիմ և խնասուն մնուեսաց, այն է հայրապետաց,  
վարդապետաց, և իշխանաց, ո՞րչափ պարդեւո  
րարիս, և ո՞րչափ ժամանակս ուզութեան, խա-  
ղաղութեան, զօրութեան և փրկութեան չնորեաց  
աշխարհի մերում «Զի է հասունին Ասունծոյ ոսաց, ոսու-  
ուցից 'ի նստ ողէրս և իշխանան». իսկ յորժամ 'ի պատ-  
մութենէ 'ի միտ տանուս թէ արք անիմաստք, ան-  
խորհուրդ, անհանճարք և տղէտք նստին յամոռ-  
հայրապետաց, վարդապետաց, թագաւորաց և  
իշխանաց, տե՛ս թէ ո՞րչափ աղէտք, և ո՞րչափ ժա-  
մանակ արեանց և խոռոչութեանց և սասանութեանց  
գոն 'ի վերայ աշխարհի և ազգի . որոց իրքեւ բար-

կացեալ Տէրն ասէ . «Եւ իշտուիշ ՚է վերայ նոյս Հռւ-  
իւնն էլլեւն , և իսբեթոյ ոկրեսցն նոյս» : Արդ՝ եթէ  
Տէր զայնոսիկ սիրէ , որք ընդ իմաստութեան իցեն,  
և զայնոսիկ ընտրէ իւր խորհրդակիցս և ՚ի ձեռն  
նոցա առնէ զբարտութիւնս ազգի մարդկան . ուրեմն  
սիրեսցուք զիմաստութիւն , «Ընուբէսցուտ և իշտու-  
յուն ՚է վերայ ուրոյնց եւրոյ շրա նոհանը ուբաւ » զի  
Տէր սիրեսցէ զժողովուրդու և զժողովրդապետու մեր  
և տացէ զօրութիւն և յաջողութիւն ազգի ՚ի ձեռն  
նոցա :

6. Յիմարն յորժամ երեւեսցի ՚ի հրապարակս ,  
որք խելօք ծաղր առնեն և արհամարհեն զնա ,  
տգէտն յորժամ նստիցի ՚ի բազմականի իմաստնոց ,  
նախատակոծ լինի ՚ի նոցանէ : Այսպէս ազդ յոր-  
ժամ ժողովրդովք և պետովք ՚ի յիմարութենէ և  
՚ի տգիտութենէ իրեւ ՚ի խաւարային իշխանութենէ  
Եղիպտոսի չեւանիցէ վազվազակի , ՚ի հրապարակս  
հանուր աշխարհի և հանուր ազգաց ծաղր լինի և  
արհամարհի : Զի յորժամ ընդ օտար ազդաց ՚ի խոր-  
հուրդ մտանիցէ և բազմեսցի , իրեւ զտգէտ և ան-  
խորհուրդ . ՚ի նոցանէ նախատակոծ լինի և ար-  
տաքարի : Արդ՝ եթէ չկամիս արհամարհիլ ՚ի մարդ-  
կանէ , և չառնել զաղգն քո նշաւակ առաջի օտար  
ազգաց , ուսիր ՚ի մանկութենէ քումիշ զգիտութիւն ,  
եթէ կամիս ուրախութիւն փառք և պսակ լինել  
հայրենեացդ , ստացիր զիմաստութիւն : Զի «Ուրէ  
իշտուան ուբաւ ունեն շնորհ էւր , իսէ ուբու անմիու որդու-  
նէւն և հոր» : Ազդ բազումք և բազմաթիւք են ՚ի վե-  
րայ երկրի , բայց ՚ի շարս ազդաց թէն իցեն սակա-  
ւաթիւք՝ նոքա միայն պատուեալ մեծարեալ և փա-

ռաւորեալ էն , որք ստուդապէս պատուեցին , մեծարեցին սիրեցին և ուսան զգիտութիւն . իսկ որք ոչ պատուեցին և ուսան զգիտութիւն , անպատուեցան անկան ՚ի մեծութենէ և տկարացան , թէ և էին բազմաթիւ :

7. Գին անդամանդի ՚ի հոծ , ՚ի պինդ և ՚ի փայլուն ընութէնէ իւրմէ չափի , այսպէս արժամապատութիւն ազգի ՚ի գիտութէնէ ՚ի միութէնէ և հայրենասիրութէնէ չափի . ապաքէն առանց գիտութեան շրջ միութիւն և առանց միութեան շիք հայրենասիրութիւն : Արդ՝ յորժամ բազմանայ գիտութիւն , համատարած մինի միութիւն , գօրանայ և հայրենապիրութիւն . յայնժամ արժամապատութիւն ազգին բարձրանայ առաջի ամենայն ազգաց և անուն նորա փայլի իրքն անդամանդ ՚ի բարձրութիւն աշխարհի : Դու ինքնին խելամունջիր թէ գիտութիւն չէ բերք ցրապին գաւառացն Հիւսիսոց , որոյ շդայի հնար մշակել զայն ՚ի ջերմային դաւառան Հարաւայ , կամ անդրադարձ սորին : ԱՄ դլուխ որ ՚իվերայ ուսոց մարդկան բարձր տեսանի , նա համահաւաքող ընդունող և շտեմարան է ամենայն գիտութեանց , զի ուր չպարասին ջանք մշակելոյ զդլուխ մարդկան , անդ երբէք չպակասին ժողովել զանհուն արդամիս գիտութեանց . եթէ ստուգին ՚ի վերայ հասեալ իցես թէ ունիս զլուխ ՚ի վերայ ուսոցդ , կարես անտարակոյս մշակել դնա . եթէ հաւաարիմ լիցիս թէ դլուխ ազգի քո պատուական և ընդունակ են քանի զդլուխս ամենայն ազգաց , կարես վազվազակի առնել զնա շտեմարան ամենայն գիտութեան :

8. Անդրանիկ ՚ի մէջ ամենայն գիտութեանց՝ Ենախ գիտել թէ ոբարէս պարտէ զմիտս և զսիրտս որդւոց մերոց պատրաստել անդստին , զի ըղձակերտ միցին գիտութեան . եթէ բան Աստուծոյ որ առէ մարդարէիւն թէ « Զէ քո առեցէր զվարութիւն է » , և եռարէց շենք » չէ բաւական ըղձակերտս առնել . ամենօրեայ փորձն նախանձ արկցէ ՚ի նոսա , զի հաւանապօր տեսանեմք թէ գիտունք սիրելի են յաշս ամենայն մարդկան . իսկ տգէտք ատելիք . գիտունք ՚ի պատուի , անդէտք յանարդանս . գիտունք տէր և իշխանք , անդէտք ծառայք և գերիք : Յուսկ որբաններէ ուսանիս և ուսուցանիցն զայն երկնաւոր և ՚ի վերոստ ինեալ գիտութիւն , որ հոգւոյ և մասց քոց , անձին և կենաց քոց , եղբարց , և հայրենեաց քոց միշտ օգտակար և հարկաւոր է , կեցցես յաւխեան : Իսկ եթէ ուսանիս և ուսուցանես զայն գիտութիւն , որ երկրասոր չնշաւոր և գիւական է . կորուսաննես զանձն քո զբնկերն և ըդհայրենիս քո :

## ՅՈՒՂԻԱՆ Բ.

## ՀԱՅՆՔԱՐ

9. Հանճարն է որ ողևորէ և օգտակար առնէ զտեսական գիտութիւնս , որ բնութեամբ իրեւ զլոյս արեգական թափանցիկ և ծաւալական է . որ առանց միջնորդութեան օդոյ չզօրէ ճառագայթել զլոյս իւր ՚ի վերայ երկրի . դի՛ք զհաճար առաջնորդ գիտութեան իրրիւ միջնորդ նորա . զի

ըսյու բարութեան նորա առաջնորդ լիցի երջանկութեան մարդկան :

2. 'Ի կարգս մարդկան երևեցան անուանեալ գիտունք, որք առաջի սեռի մարդկութեան զանգունդու կորստեան բացեալ՝ անձամբ 'ի նոյն գահավիմեալ՝ զուզութիւն մոտաց բաղմաց հեղձուցին 'ի նոյն շնչառեալ առ էնուպուն առնելն, յիշաբեցան : զի չհարցեալ զխորհուրդ 'ի հանճարոյն՝ անկան ՚ի մազորութիւն . և ըիծ սի ադրոշմառեալ 'ի վերայ ճակատուց խրեանց՝ սեանուն և ապարդիւն մեկնեցան յաշխարհէ : Զի ոմն 'ի նոցանէ զկանայս հասարակաց ասելով զհայրութիւն, զմայրութիւն և զորդիութիւն ուրանայր և եղծանէր . ոմն զիւրովի դնախն, արութիւն և երջանկութիւն քարոզէր : Յուլիանոս զԱստուած ուրանալ զքրիստոնեայս չարչարել զրօսանս համարէր . վոլթէռ զյայտնութիւն աստուածային ուրանալ, զրարոյական առաքինութիւնս ծազրել պարծանս համարէր : Ոնան զիրիստոս մարդ . և զԱւետարան մարդկային հանճարոյ ծնունդ համրաւեալ՝ 'ի յԱստուծոյ չերկնչէր, և 'ի մարդկանէ չամաչէր . զի նեռին էր և կարապետնեռին, զի հոմանուն են Նեռն և Ծնան : Ահա Յակոբոս զհանճարազուրկ դիտութիւն այսպիսեաց կոչեաց երկրաւոր, չնչաւոր և դիւական :

3. Պարտք հայրենասիրութեան բռնադատէ զիս զդուշացուցանել զուսանողս և զգիտունս մեր 'ի մոլորամբա գրութեանց այնոցիկ, որք ոչինչ են, և ոչ ինչ օգտեսացին : Եթէ մտեր 'ի խորս բնական գիտութեան և անսարի զօրէն խորասուզելոց և ընկըզմելոց չկարես : 'ի վեր ելանել և տեսանել զԱս-

տուած , զյաւիտենականութիւն և զմշտնչենաւութութիւն նորա . զհանճար՝ որ է ճաճանչ և ճառագայթ իմաստութեանն Աստուծոյ՝ կոչեա , զի եկեալ փարատեսցէ զմէգ մժութեան մնաց քոց և լուսուորեալ զդատումն զիտակցութեան քո՝ մերձեցուացէ զհոգի քո հուպ ամենիմաստ Աստուածութեան , որ հոգի է և կեանք : Հանճար զբնական և զբարոյական դիտութիւնն 'ի կշիռ պահեալ՝ զխորհուրդոս , զբանս և զգործումեր ուղղէ առ բարին ընկերին , ազգին և հայրենեաց , զի նա ճշմարիտ բարեկամ և բարերար գոլովլ բնութեան մարդկան . զիմսումեր 'ի բնական յաշխարհէ վերառեալ՝ 'ի բարոյական աշխարհն 'ի կարգս առաքինեաց հանդուցանէ . զի դիտութիւն առանց հանճարոյ է մարմին առանց հոգւոյ :

4. Գիտունք երբեմն սխալին 'ի դիտութեան , և կոչին իմաստունք սխալական , բայց հանճարն ու երրէք սխալի 'ի դիտութեան . հանճարն 'ի դեպ ժամանակի աղատ խօսի և աղատ գործէ առանց ինչ տարակուսի . իսկ յանդէպ ժամանակի մոտախոհութեամբ ջանայ ելս հնարից դասանել և համբերադար հոգւովլ դիմագրաւ լինի յանկարծադէպ արկածից : իսկ հանճարազուրկ դիտունք կամ իմաստակք 'ի հասանելնեղութեանց և հալածանաց վաղվազակի դայթակղին յուսահատին և գահավիժին յանդունդս անհաւատութեան . զի հիմն հանճարոյ և հաւատայ նոցա 'ի վերայ աւաղց է եղեալ : Հանճարեղն 'ի յեռութիւնս , 'ի դոյտիւնս ամինայն իրաց զհանճար ամենիմաստ Արարջին տեսեալ փառաւորէ զանհուն բարութիւն նորա . իսկ անհանճարն 'ի

բնութիւնս ամենայն իրաց սշնչոթիւն տեսնար  
նանքանայ ՚ի խորհուրդս և սպանանէ զհանճար  
իւր Արդ՝ եւ իրրեւ գմարդ հանճարեղ և զգօն՝ զհո-  
դիս , զմիտո , զգիտակցոթիւնս և զկամն իմ՝  
զնոյն վեղբարս զազդս և զհայրենիս վատահո-  
թեամբ յանձն առնեմ հանճարոյս . բայց սոսկ բնա-  
կան և փիլտրտայական գիտոթեամս չկարեմ յանձ-  
նել . զի եթէ չունիցիմ առ ընթեր զիտոթեամս  
զհանճար իրրեւ գաստիորակ և խորհրդատու նմա ,  
գուցէ ՚ի խորխորաց անկանիցիմ : Զի հանճարն ՚ի  
ներքս ՚ի բնութեան մերում է վիկոյ և պաշտպան  
ներքին էութեան , դոյտոթեան և անմահութեան  
հոգւոյ մերոյ . իսկ բնական գիտոթիւն երբեմն ՚ի  
միտս անհանճար զիտոնց զհակառակն հանճարոյն  
վկայեալ՝ կորուսանէ զյոյյ , զհանճար և զգիտո-  
թիւն իւր , ընդ նմին զիտահութիւն և զհու-  
արմութիւն առ ազգն իւր :

5. Որ հանճարեղն է , առէ՝ զառաջնորդու-  
թիւն ստացի՞ արդէն ՚ի յօդուած գիտոթեան  
գրեցաք թէ հանճարեղք միայն եղին հաւատարիմ  
և անձնանուէր ծառայք եկեղեցւոյ և հայրենեաց .  
իսկ սոսկ բնադէտք զամենայն ՚ի շահ և ՚ի փառս  
անձին գործեցին և գործեն : Ի հսումն արք զօրա-  
ւորք բաղում էին ՚ի Հայաստան , բայց հանճարա-  
ւորք սակաւ . զի ոչ միայն բազմութիւն ռամկաց ան-  
հակ թողեալ զհանճար իւր՝ տգիտոթեամբ զառա-  
ծանէր , այլ նախարարք և իշխանք զուրկ էին ՚ի  
կատարեալ գիտութենէ . անձառի զօրաւոր և հա-  
րուստ էին , բայց մատք աղքատադոյն : Աշխարհ  
և գաւառ բազում էր Հայոց , բայց հանճար իմաս-

տութեան սակաւ էր 'ի նոսա . զօրեղ զօրականք բազում էին 'ի Հայս , բայց հանճարեղ զօրագլուխք պակաս էին 'ի նոսա . բազմութիւն աշխարհաց և զօրաց չկարեր փրկել զնոսա , յորժամ հանճարեղ խորհրդականք պակասէին 'ի նոսա . զի Հանճարեղն ՚ի թագաւորն ասէ . ՅԱՅԻՆՈՒՅԻՆ ՅԵՍՈՒՏԻՆ ՔՅՈՒՆՈՒՅԻՆ ԱՆԴՐԱՅԻՆ ՅԵՍՈՒՏԻՆ ։ և թէ ՅԻՆՈՒՅԻՆ ՔՅՈՒՆՈՒՅԻՆ ՅԵՍՈՒՏԻՆ ԱՆ ՇԱՏԱԿ ոյը . և թէ ՅԻՆՈՒՅԻՆ ԱՆ ՇԱՏԱԿ ոյը . և թէ ՅԻՆՈՒՅԻՆ ԱՆ ՇԱՏԱԿ ոյը :

Յ. Եթէ սիրես զադգա և դհայրենիս քո , վութասնիր յամենայն ճանապարհս և 'ի գործս քո ստանալ նախ դհանճար , և ուսուցանել զայն որդւոց մարդկան . Եթէ փրկութիւն , ասպահովութիւն և խաղաղութիւն անձինդ . և Հայրենեացդինդրես , ստացիր դհանճար . Եթէ միութիւն , զօրութիւն և բնդարձակութիւն խնդրես , ստացիր դհանճար . Եթէ ստառածածութիւն , մարդարեւթիւն , և անմահութիւն խնդրես , ստացիր դհանճար . Եթէ զիփասս և զպատիսս խնդրես 'ի Հօրէն լրւոյ , ուսո՞ ամենեցուն դհանճար : Մի՛ տոր երբեք քուն աչաց քոյ և մի հանդիսատ իրանաց քոյ , մինչեւ դացես զհանճարեղութիւն . ուր տեսանես զհանճարեղս հարց 'ի նոցանէ զխորհուրդս և գործեա ըստ խորհրդոյ նոցա . ուր դացես զհանճարեղս առ ըեր 'ի տուն և 'ի հայրենիս քո . զի առանց հանճարեղ խորհրդականաց ոչ տուն տունէ , ոչ աղդէ , և ոչ հայրենիք հայրենիք է : Մեծն Պետրոս իրբեւ այր հանճարեղ յածեալ ընդ բազում աշխարհս , և հարց և ուսաւ զամենայն խորհրդոս և զգործս հանճարեղաց , զբազումն 'ի նոցանէ երեր յաշխարհ

իւր . հանճարով դիտութեամբ և արուեստիւք ե-  
լից զաշխարհ իւր , որովք մեծացաւ և մեծացոյց զաշ-  
խարհ իւր :

7. Այն է իսկապէս հանճար . որ ամենեւին ան-  
մասն է՝ ի չարին խորհրդոց և՝ ի նորին դիտութենէ .  
հանճար՝ որոյ ուսուցիչն Քրիստոս է , և առաջնորդն  
Հոգին ոուրբ . զի ՚ի սկզբանէ Տէր զմատեան դիտու-  
թեան բարւոյ և չարի երաց առաջի մոտաց մարդկան  
«Ահա Եւլ (առ) Առու Եւրեւ զի ՚ի Թնջ Շիուեւ Շբորիւ և  
շար » . վասն բարւոյ դիտութեան հրամայիշ ընդունել  
զնա գործել և արդիւնաւորել , բայց վասն չարին ասէ  
դիտել զնա . բայց չմերձենալ և յդործել զնա . «ԱՌ՝  
Գրիլնոր , ՏՌ՝ Զաշմիւր և ՖՌ՝ Կներ : Արդ՝ ՚ի դիտու-  
թենէ բարւոյն միտք մեր ազնուացեալ և զգօնաց-  
եալ իրեւ դհանճարեղ տենչայ բարւոյն , և ձգտի  
միշտ ՚ի նոյն . իսկ չարին դիտութեամբ տգեղաց-  
եալ և յիմարեալ անհանճարաբար գահամիշժ անկա-  
նի ՚ի նոյն . զի ըստ Պօղոսի հոգին ցանկայ հակա-  
ռակ մորմնոյ , այսինք հոգին ՚ի հանճարոյն առաջ-  
նորդեալ փափագի միշտ առաջնորդ լինել մարմնոյն  
՚ի կատարեալ բարին . «Լ Հորէն շանկայ հակառակ  
հոդայն , այն է առաջնորդեալ ՚ի չարին դիտութենէ  
կամի առաջնորդ լինել հոգւոյն ՚ի կատարել զա-  
րիս . Արդ «Եւ ՚ի սիրեալ հոդառակ իսկանեւ զի ործու-  
նոյ» սիրեալ զհանճար . որ կարտզն է զամենայն ճա-  
նապարհս ուղղութեան և բարութեան հորդել տ-  
ռաջի քո . սիրեալ զհանճար , որ դիտէ զհոգւոյն  
ամենայն հոգւոյն տալ և զմորմնոյ հարկաւորսն  
մարմնոյն տալ . սիրեալ զհանճար , որ դիտէ զհայ-  
րենեացն ամենայն հայրենեաց տալ , զօտարին հար-

կաւորսն օտարին տալ : Յետ այսր ամենայնի ծանիր ;  
թէ վասն ստանալոյ գդիտութիւն բարոյ և հան-  
ճարոյ՝ ջան և վաստակ բազււմ՝ պիտոյ է , իսկ  
վասն գիտելոյ զշարն , չիք ինչ վաստակ : զի չա-  
րըն իբրեւ որոմ սերմանի ՚ի բարի խորհուրդս մարդ-  
կան , զորս ՚ի ձեռն հանճարին իբրեւ . ՚ի ձեռն հրեշ-  
տակի խլեսցես ՚ի մտաց քոց , և ՚ի խորհրդոց եղ-  
բարց քոց :

## Յ Օ Դ Ա Խ Ա Յ Դ .

## ԳԻՒՏ ԵՒ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ

1. Հանճար և խմաստութիւն Աստուծոյ փայլի  
՚ի յարարչագործութիւն ափեղերաց . որ է երեւելի  
գործ հանճարոյ և խմաստութեան նորա : իսկ հան-  
ճար և խմաստութիւն պատկերի նորա , որ է մարդ ,  
երեւելի ՚ի գիւտս և յարհեստագործութիւնս , որ է  
երեւելի գործ մտաց և հանճարոյ նորա : Հայեցեալ  
՚ի հրաշակերտս տիեզերաց՝ օրհնեմք և մեծացու-  
ցանեմք զջեր . Հայեցեալ ՚ի հրաշակերտ գիւտս և  
յարհեստս՝ գովեմք և մեծարեմք զտեր գիւտին և  
արհեստին : Այլ մի որ գտանեէ զնոր գիւտս և  
հնարէ զարհեստս , անուն նորա հռչակ հարկա-  
նի ընդ ամենայն աեղիս , նոյնպէս ազդ . եթէ  
հանճարով զհետ պնդիցի գտանել զնորանոր գիւ-  
տըս և հնարել զգտակար արուեստս , անուն նորա  
հանճար և խմաստութիւն նորա հռչակ հարկանի  
ընդ ամենայն աշխարհ :

2. Հաւաստարիմ հնավէակ մատեանք հաւաստի  
առնեն թէ գիւտ բաղադրութեան զեղօրէից , որ

Ի յարմատոյ խոտոց և ծաղկանց . զգիւտն պատուաստելոյ զծաղիկն , որ զծաղիկ մանկունս սեռի մարդկութեան շժողուտ տգեղանալ և մեռանել . առաջին գտումն և յառաջադիմութիւն արհեստի բժշկութեան , ծնունդ . են լուսապայծառ . հանճարոյն Հայոց : Զգիւտ և զարուեստ զերկաթն ՚ի հանքաց հանելըյ և զգործիս երկրագործաց պատրաստելոյ՝ գտին որդիք Հայաստանի . յորմէ ապա ընդամենայն աշխարհ տարածեցաւ . կտաւագործք Հայաստանի զբուրդն ոչխարաց մանեցին , զործեցին և արարին արկանեցիս , զգիւտ աստղադիմութեան զշափ շրջելոյ ժամանակաց արեղական , լուսնի , մոլորակաց և աստեղաց եգիստ Անմ՞ որդի Նոյի . զորս քոյր նորա Աստղիկ նախ ՚ի Հէր և Զարեանդ , և ՚ի յՈլսիրանք դաւառին Մողաց ուսուցաներ Հայմածին որդւոց :

3. Ի հնումն գիւտից և արհեստից ուխք ՚ի կեդրոնէն Հայաստանի իրըեւ զյորդ վտակս աղբերաց բղխեալք՝ Ժաւալէին ընդ չորս որորտս աշխարհի . յորը հանճարաւորքն ՚ի մարդկանէ վութացան յղիել և ՚ի կատար ածել զնախնական գիւտս արհեստից . Արպէս արար ՚ի հնումն Ասորեստան , Պարսկաստան , Հնդկաստան , Չինաստան , Եգիպտոս , Յունաստան և Խոտայս : Խոկ ՚ի նորումնս Անդզիա , Ամերիկա , Գաղղիա , Գերմանիա , Ռուսիա , Աւստրիա ՚ի զիւտս և յարուեստ հանճարեղ վորձառութեամբ այնչափ յառաջադէմ եղեն . մինչեւ զարմանալ ամենեցուն ՚ի վերայ հրաշակերտ ձեռակերաց նոցա և կարծելթէ հնարողք ամենայն գիւտից և արհեստից ՚ի սկզբանէ եղին նոքա : Տես թէ հանճարն ՚ի հին ՚ի

պարդ կ արքնութենէ քանի՛ քանի՛ նորանոր դիր-  
ուս մեքենայից և արտեստից հնարեաց , զի ՚ի ձե-  
ռըն մեքենայի զնուն ՚ի վերայ ծովու , և երկաթի  
տային ՚ի վերայ երկրի իբրեւ զմռաչական կենդանի  
սրացուցանէ : Բարէ՛ , ահա հանճար դարբնին մշա-  
կեալ եղեւ մեքենագէտ , և հանճար երկրագոր-  
ծին մշակնալ բնագէտ և քիմիագէտ . և երկո-  
ցուցն հանճար ՚ի խորհուրդ մտեալ՝ տասն դժու-  
չափ թերիւ զքաղաքս ընդ քաղաքաց . զպետու-  
թիւնս ընդ պետութեանց , զին աշխարհ ընդ նոր  
աշխարհին միացուցեալ՝ զաշխարհս ամենայն հիա-  
ցուցին : Հանճարն ՚ի ձեռն մեքենայի զին երկրա-  
գործութիւն զինւմնութիւն զտարադադործութիւն  
այնչափ ծաղկեցոյց , մինչզի բուրդն և բամբակն ՚ի  
մշնջ առեալ զիւրագնի և արտեստիւք աղնուա-  
ցուցեալ՝ բերէ վաճառէ մեղ ծանրագնի իբրեւ  
զմետաքս : Խոկ բժշկութեան և աստղագիտութեան  
զիւտ և արտեստ ընդարձակեցին յոյժ յոյժ : Ալո-  
մի թէ յետ այսչափ բարձրագդոյն յառաջադիմու-  
թեան բաւականացեալ՝ յետս կասեցա՞ն ՚ի յառաջա-  
դէմնն նկրտելոյ , ո՞չ . զի զցայդ և զցորեկ անձան-  
ձիր աշխատութեամբ տենչան զնորանոր զիւտս  
և արհեստս գտանել , ՚ի հեռաւոր աշխարհաց հա-  
մահաւաքել յաշխարհս իւրեանց . զի հետաքննին  
հանճարեղք նոցա ոչ միայն յայլ և այլ կողմանս  
աշխարհի , այլ ստէսլ ճանապարհորդեցին ՚ի չա-  
յաստան , զի ՚ի հին ձեռակերտաց և ՚ի ծաղկէնկար  
կերպասեաց առցեն օրինակս , զի ըստ ասիացւոց ճա-  
շակին պատրաստեցեն տարագս , որով զհարստու-  
թիւն նոցա փոխեացեն յաշխարս իւրեանց :

և եթէ զհանճար Հայոց համեմատել կամիցիս  
ընդ հանճար ազգաց բարձրաց , գքոյդ առաւել  
գտանես քան զնոսայն : Զի՞ ՚ի բնական , ՚ի թու-  
ագիտական , երկրաշափական , և մեքենական  
գիտութիւնս և ՚ի գիւտս կարէ հանճար Հայոց  
յառաջաղէմ լինել քան զհանճար Անգղիացոյն :  
Ի յուսանողական , յաստուածաբանական , ՚ի յառ-  
աեղագիտական գիտութիւնս կարէ յաջողակ լինել  
քան զամենացին : և անտեսական , ՚ի քաղաքա-  
կան , ՚ի զինուորական մարդս կարէ անուանի լի-  
նել իբրեւ զդերմանացին : և յերկրագործական .  
և ՚ի վաճառականական արհեստ կարէ հնարագէտ  
լինել իբրեւ զհնդկաստանցին : և նուրբ արհեստո-  
որպէս է նկար , քանդակ և ուկերչութիւն ՚ի  
յամենայն դարս վայլեցոյց զհանճար իւր , որում  
վկայեն գործք ձեռաց իւրց :

Յ. թե՛ր քննեսցուք թէ զիա՞րդ վսեմագոյն  
հանճարի վիճակեալ ժողովուրդս այս , բաց ՚ի սա-  
կաւոց , գոգթէ մեծագոյն մասամբ այսօր ՚ի յե-  
տադէմ վիճակի սառապի . Ա՛հ , թողից երկարա-  
տեւ արշաւանաց արհաւիրս և որածութիւնս և սա-  
սանութիւնս , որք զրազմաքեզուն հանճար Հայոց  
հեղձուցին ՚ի լաց ՚ի սուգ . և ՚ի տրտմութիւն .  
լացից զբազմաժամանակեայ անուր ծանր երկաթոյն  
Հագարայ , որ անհնարին ծանրութեամբ զպարանց  
և զգլուխ մեր յերկիր կցեալ ոչ միայն գերէ զմար-  
մին և զազգ մեր , այլև զամենայն ծնունդո և  
զյառաջադիմութիւնն հանճարայն սպանանէ ան-  
զէն : Զի՞ անողոք և անկուշտ հարկապահանդք  
Հագարայ կեղեքելով աղքատացուցին զարհեա-

տաւորս , որով աղքատացուցին գճսխութիւն հանձարոյ նոցա : Ժողովուրդ , որ ատէ զգիտութիւն և զհանձար , արդ ևս շուրջ պատեալ է զհայտատան և խստութեամբ նեղէ վմարմին և զհանձար Հայոց , բայց յետ այսր ամենայնի գարձեալ տեսական և գործնական արտեսառք և գիտութիւնք ՚ի հանձար Հայոց ապահնեալ՝ յառաջ որչափ ներեն նման ժամանակք : Արդ տուր Հայորդւոյն ժամանակ խաղաղութեան ապահովութեան և ազատութեան . և տես' թէ որչափ արագ արագ զարդանայ և զօրանայ հանձար նորա յօգուտ հայրենեաց և համարէն մարդկութեան : Որք գիտէք զարժանիս հանձարոյն Հայոց , բանիւ արդեամբ քանալերեցէք զնա , որք իրրեւ աղդք ազնուագութք արդարեւ սիրէք զմարդկութիւն և զհանձար , փութացէք զապահովութեան և զխաղաղութեան ժամանակ չնորհել նման . որպէս զի զրաղմարեղուն պտուզ հանձարոյն Հայոց վայելիցէք դուք և մեք , զի հանձարն ուերմանի ՚ի ժամանակի խաղաղութեան , աճի ՚ի յապահովութեան և առնէ զալտո զս բազմապատիկս ՚ի յապատութեան :

6. Արդ եթէ հանձար միոյ առն զարմանալի իրագուտանէ և հրաշակերտ արուեստ յառաջ բերէ . եթէ սուր և յաջողակ հանձարք բաղմաց հայրենասիրաց միասցեն ՚ի մի , խորագիտութեամբ խորհեցցեն , ստէպ և զօրութեամբ ձեռն արկցեն ՚ի դտանել զազգն և զհայրենիս , և հայրենասիրութեան հրաշակերտ արուեստիւ նորոգեացեն զայն , ահա աստ է խմատութիւն և հանձար . աստ է հրաշալիք հայրենասիրութեան : Լուր որտարիկ

ձայնի խմում ովկ հանճար որ երբեմն նստիս անշառ  
գութեամբ ՚ի գլուխս անճնասէր մարդկան , ել  
՚ի յայտ ՚ի մենասէր անձկութենէդ , մուտ ՚ի յընկե-  
րականութիւն ազդիք քո և հայրենեացդ , որդիք  
հայաստանի սպասեն հանճարոյդ , սպասեն դիւտի  
և արհեստի քում . եթէ վասն նորոգութեան ան  
հօր քո զշնարս արհեստից դիտես , արկ ՚ի դործ .  
ոզի որ գիտէ զբարին և ո՛չ առնէ մեղք են նմա» :

7. Գովեցից զարս . որք ՚ի յառաջադիմութիւն  
մարդկային հանճարոյն , և վասն ապահովութեան  
կենաց մարդկան գտին և գտանեն զօդտակար  
դիւտս , հնարեցին և հնարեն զշահաւէտ արուես-  
տըս : Յըհնեալ է որ եգիտ զրժշկութիւն և զթիւ-  
րակէն , զշոդին , զելեքդրիկն , զջերմաշափն , զո-  
դաշափն , և զջրաշափն , և զայլ այսպիսիս օդտա-  
կարութիւնս . օրհնեսցի և զովեսցի . որ եգիտ  
հնարս զդէմ և զառաջս առնուլ փախադրական  
ախտից , զի մի ճարակեսցի յայլ տեղիս , և ՚ի  
մարդիկո :

8. Անէծո ՚ի Տեառնէ ընկալաւ կային որ զա-  
ռաջին ձեռն էարկ սպանանել զեզբայը իւր զԱրէլ .  
նզումեալ որ հնարեաց զտէդ , զնիզակ , զսուր և  
զսակր , բիւրիցս անժեալ որ եգիտ զվառօդն .  
և հնարեաց զշրազէնս՝ զլեցանկիւնիս , զասզնաւորս  
և զշասրոս . երիցս անիծեալ որ ծուլեաց զթնդա-  
նօթս և մէթրայօզս : Ահա մահացու և սատանայա-  
կան զործիք . որովք անագորոյն մարդիկ իբրեւ  
զկային սպանանեն զեզբարս իւրեանց , զմարդիկ  
որ ՚ի սպակեր Աստուծոյ արարան : Ամենայն  
արիւն անսպարտ սպանելոց՝ տղայոց , սպատանեկաց ,

երիտասարդաց , ծերոց , արանց և կանանց յեղեալ յերկրի , յարենէն Աբէլի , յարենեն Յիսուսի , յարենէն Առաքելոց , Մարգարէից և Մարտիրոսաց մինչեւ ցարին հայորդւոյն և աղամարդւոյն որ յայսմ վայրկենի յեղանի յերկիր , խնդրեցի ՚ի ձեռաց այնոցիկ , որ հնարեցին զմահահրաւէր դործիմ :

9. Տէր՝ դու սաստեցեր Պետրոսի , որ սրով եհատ զականին Մաղքոսի . «Դաշնա՞ շառա՞ ՚է պատեան , ՚է ո՞ւ սուցեան , ՚է ո՞ւ սուցեան : Արդ՝ ընդէ՞ր ոչ սաստեցեր ամբարտաւանից , որք ոչ զականիս , այլ զալարանոց բաղմաց հատանեն զսուր , զսլաք , և զդնդակ միսեցին և միսեն անխնայ ՚ի սիրաս անմեղաց և հեղուն զարիւն սրբոց քոց շուրջ դքաղաքաւ . և դու Տէր տեսեր զայս ամենայն , լոեցեր համբերեցեր և սաստկութեամբ քով ոչ սաստեցեր ամբարտաւանից : Ասացեր սուրք նոցա մոցեն ՚ի սիրտս նոցա և աղեղունք նոցա փշրեցին . բայց սուրք նոցա մոտին ՚ի սիրտս անմեղաց , և աղեղունք նոցա ոչ փշրեցան . ասացեր զարիւն ամենայն շնչոց խնդրեցից ՚ի ձեռաց նոցա , ահա արիւն մեր ոչ խնդրեցաւ ՚ի ձեռաց նոցա . զի ոտք նոցա արտեն առ ՚ի հեղուլ զարիւն : Մինչեւ յե՞րբ մոռանաւ զմեղ խապառ . մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս քո ՚ի մէնչ . մի յաւիտեան բարկանար մեզ Տէր , և մի ձդեր դրարկութիւն քո յազգէ յազգ . այլ արա առ մեզ ըստ ողորմութեան քոմք . և փառաւորեցի անուն քո յաւիտեան :



ԽՈՐԱԿԻՑԱՐԱՅԻ Ա. ԿԵՆՅԱՆ. Ա. ԳԻՏԱՐԱՅԻ ԹԻՒՆ ԵԽ  
Ք. Ա. Ա. ՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## Յ Օ Գ Ո Ւ Ա Մ Ա Ռ

## ԽՈՐԱԿԻՑԱՐԱՅԻ Ա. ԳԻՏԱՐԱՅԻ ԹԻՒՆ

1. Խորագիտառթիւն ինքնին պարզապես նշանակէ սուսանալ զխորին դիտութիւն 'ի վերայ ամենայն իրաց . զի՞ որ զկերպեւն իրաց տեսանէ և չօշափէ, չէ խորագէտ. այլ որ մոտք մոտանէ 'ի ներքս ամենայն բնական երեւութիւց և 'ի խորս ամենայն բարոյական էից ձեւոց հշարժմանց , և ամենայն զգուշութեամբ միշտ զգուշանայ արտաքին երեւութիւց և շարժմանց , անուանի այր խորագէտ. իսկ որ յարտաքինն միայն հայի և 'ի յարտաքինայարգար երեւութիւց և 'ի ձեւոց շլացեալ պատրի , ասի այր պարզամտ :

2. Զինչ օդափցի մարդ , յորժամ' միայն հայիցի 'ի պատկեր մարդոյ և կամընազնական արուեստիւ գիտասցէ զթիւ սոկերաց , ջղաց , երակաց մարմնոց նորա և չգիտասցէ թէ զինչ են կամք և խորհուրդք 'ի նմա և կամ չխելամսիցէ թէ զբանական և զպարզ հոգի կենդանի , որ բնակի 'ի նուրբ և 'ի թանձր մասունա մարմնոց մարգկան , նաէ որ ներդգործէ 'ի մեղ զկենողանութիւն մարմնոյ և զուղղութիւն մտաց . Զինչ օդուտէ զիտել զբորբմունս և զշրջանս երկնային մարմնոց , և զտարերաց վոփոխմունս և չճոնեաչել զանհուն և զանսահման հոգին Աստուծոյ , որ ստեղծ և հաստատեաց զամե-

նայն որ ինչ յերկինս ՚ի վեր , և որ ինչ յերկիբը  
 ՚ի խոնարհ , և չոփի և սահման և ժամանակ եւ  
 ամենեցուն . զի պարտէ խորագիտին զամենայն  
 իրաց հարցանել , զամենայն ինչ փորձել և քննել ,  
 և հաւատոյ ճանաշմամբ զշետ դնալ բանիցն Աս-  
 տուծոյ , և զխորին խորհուրդս նորա խորագիտո-  
 թեամբ ՚ի վեր բերել . զի գրիչ երկրորդ Մակա-  
 րայեցոց վասն գտանելոյ զճշմարտութիւն բանիցն  
 Աստուծոյ առէ : « Սոյնալէս և մերս հարցանելն  
 և փորձելն և քննելն զշետ վարել ճշմարտո-  
 թեան բանիցն . և զխորին խորհուրդս խորագի-  
 տութեամբ ՚իմեր բերել , որ առաջնորդ եղեւ այնց  
 գպրութեանց ՚ի նմանէ խնդրելի է : Գլ ” Բ. 21 :

3. Եթէ պարզ աչօք հայիցիմք ընդ մոկերե-  
 ւոյթու երկրի . ընդհանրապէս ՚ի հողոյ և ՚ի քարանց  
 բազագրեալ տեսանեմք զայն . բայց եթէ խորագի-  
 տական տեսութեամբ հայեցորեք ՚ի խորութիւն  
 երկրի , յայնժամ խելամուտ լինիք թէ ամենայն աղ-  
 նիւ ակունք , ոսկին և արծաթն և այլ մետաղք ծած-  
 կեալ են ընդ կեղեւոք հողոյն և քարին . Եթէ  
 պարզ աչօք հայիցիմք ՚ի վերայ ընդարձակութեան  
 ծովոց , անբաւութիւն ջրոց միայն տեսանեմք .  
 բայց եթէ հետազոտութեամբ խորամուխ լիցուք  
 ՚ի խորութիւն ջուրց , զբազմութիւն ջրային կեն-  
 դանեաց և զգոյացութիւն մարդաբանին տեսա-  
 նեմք անդ : Եթէ պարզ աչօք հայիցիմք ՚ի վերայ  
 ծաղկանց և խոտեղինաց տեսանեմք թէ ամենե-  
 քեան իբր ՚ի զուարճութիւն մարդկան և ՚ի ոչտա-  
 ճարակաւոր կենդանեաց են գոյացեալք . բայց յոր-  
 ժամ բժշկական նուրբ տեսութեամբ հայեացուք .

փորձիւ գտանեմք թէ զօրացոցիչ և առողջացոցիչ բազում բազում յատկութիւնք կան ծածկեալ 'ի նիւթն նոցա , և 'ի յոմանս ևս թունաւոր հիւթութագեցեալ :

4. Եթէ 'ի բայ արասցես 'իքէն զխորագիտութիւն , բազում անդամ արտաքին երեւոյթք գքեղ խորեցնն իրեւու զտղայ . ապաքէն դիտակ ես թէ ամենայն սպիտակ չէ արծաթ , ամենայն դեղին չէ ոսկի . բայց խորամանկն արհեստի պղնձոյ զգոյն արծաթի և ոսկոյ տուեալ խարէ զքեզ , եթէ զներքին յատկութէնէ արծաթոյն և ոսկոյն անտեղեակ իցես : պարզամիտն զփայլուն ապակին 'ի ծանրագին անդամանդէն չկարէ որոշել իսկ խորագէտն նոյն հետայն ճանաչէ : Պարզամիտն չգիտէ զանազանել զգայն 'ի շանց , և զկապիկն 'ի մարդկանէ վասն մերձաւոր նմանութեանն . իսկ խորագէտն զամենայն կենդանիս 'ի յատկութենէ և 'ի ներքին բնութենէ խրեանց ճանաչելով . գիտէ թէ ոչ կապիկն մարդ է և ոչ մարդն կապիկ :

5. Յիսուս ասէ « խորագէտ լերուք իրեւու զօհ և միամիտ իրեւու զաղաւնի », նա չասաց պարզապէս գիտուն լերուք , այլ խորագէտ . խորամանկէ աղուեմն , և ճարտար է մուկն . բայց զուրկ գլուխ 'ի խորագիտութենէ օձին , խարին և անկանին 'ի թակարդս : Թռչուն գեղեցիկ է յոյժ քան դօձն , և թեւոքն թռչական . բայց առանց խորագիտութեան խոյացեալ նետահար լինի կամ անկանի 'ի վարմս : Չուկն 'ի ծովին լողացմամբ ոլանայ արագ . բայց չունելով զխորամանկութիւն օձի ան-

կանի յուռկանս ձենորաց : Ահա այսպէս եթէ  
մարդ զանազան յաջողածեռն ձրիւք կատարեալ  
գտանիցի , իսկ 'ի խորագիտութեան թերի . միշտ  
'ի խարերայ որորդաց աշխարհիս պատրեալ ան-  
կանի 'ի ժակարդս , կրէ զվնաս մեծամեծու Սոյն-  
պէս ազգ մի եթէ ամենայն յաջողութեամբ և դի-  
տութեամբ պերճացեալ գտանիցի , եթէ խորագի-  
տութեամբ չիցէ սպառազինեալ զմիտս և զխոր-  
հուրդս իւր , 'ի յորսորդաց աշխարհիս խարի և  
անկանի 'ի ծուղակս կորատեան :

6. Օձն դոլով խորագիտ զամենայն զժնամիւ  
իւր ճանաչէ , զգուշանայ և խորչի 'ի նոցանէ . եթէ  
ծանր և վերջին վտանդ հասանիցի 'ի վերայ , զրո-  
վանդակ մարմին իւր բոլորեալ իրրեւ զվահան ,  
զգլուխն ընդ մարմնովն պատսպարէ . դիտէ նա զի  
եթէ զգլուխն առանց վիրաց ազատեսցի , մարմնոյն  
վերքն չվնասեն կենաց նորա . իսկ եթէ դլուխն  
վիրաւորեացի , մարմնոյն ողջութիւնք չօդնեսցեն  
նմա : Աբդ իրրեւ զօձն զգուշ լե՛ր 'ի թշնամեաց  
քոց , մանաւանդ 'ի կեղծաւորաց , որք երեւերի  
հանդերձիւք , քաղցր բանիւք , և արտաքին ամե-  
նապատիր երեւութիւք ջանահնար վնին խարեւ  
զմարդիկ . և ուտել զտունս այրեաց . որք արտա-  
քուստ երեւին մարդկան գեղեցիկ , իսկ 'ի ներ-  
քուստ լի են ամենայն չարտինեամբ խորամնկու-  
թիամբ և ստութեամբ : Առ զխորագիտութիւն  
և զգուշացիր 'ի յոչխարազդեստ դայլոց . զի  
դայլք յափշտակիչք 'ի յօտարաց եկին մտին 'ի մեզ  
և ոչ խնայեցին հօտին . որք արտաքուստ հրեշ-  
տակ լուսաւոր , իսկ 'ի ներքուստ ստատիոյ նեն-

պաւոր, որք արտաքուստ ձեւանան եղբայր, հայրը  
բարեկամ, բոյց 'ի ներքուստ են կային, դահիճ  
և չարակամ։ արաւաքուստ են մեզը քաղցրութեան-  
իսկ 'ի ներքուստ խմօր չարտօնեան և թոյն գառ-  
նութեան ։ ահա 'ի յայսովիսեաց զդուշ մինել տոէ  
Տէրն։ իսկ Յօվհաննէս ասէ, «որդեան է ամենու-  
հաքոյ հաստություն, ոյլ է ունենալ սնունք, ելեւ լուսություն էն ու  
վասնորոյ պարտէ մեզ խորագիտութեամբ զիւրա-  
քանչիւր անհատի և ազդի զներքինն, այն է զկան-  
զխորհուրդս և զնպատակն իմանալ, որք եթէ բառ  
Աստոծոյ կամաց բարի են, հաւատալ, իսկ եթէ  
չար, երբէք չհաւատալ։

7. Եթէ 'ի հնումն պետք, նախարարք և եժո-  
զովուրդք մեր իրեւ զխորագէտս գիտացեալ  
էին թէ դուռն Պարսից և արքունիք Յունաց վասն  
հայրենին աշխարհին իւրեանց չխորհէին երբէք  
զրարիս։ պարտէին հեռատես խորհրդով զգես-  
տանս յղել առ երկոսին պետութիւնս, և լրտե-  
սել զամենայն զներքին և զարտաքին զիտմն և  
խորհուրդս նոցա, և ամենայն զգուշութեամբ  
զգուշանալ։ զի յորժամ վտանդ ինչ հասանէր  
աշխարհին յերեսոց խորամանկութեան Յունաց  
և Պարսից, ոչ վասն այլ ինչ պատճառաց հասանէր,  
այլ վասն անտեղեակ գորյ մերոցն ներքին խորհր-  
դոց նոցա։ Զի եթէ մեծն խորալ 'ի դուռն Աբ-  
տաշրի Աստանեան զմի ոք 'ի մտերիմ խորհրդ-  
գականաց իւրոց գեսպան կամ լրտես առաքէր,  
զխորհուրդ գաւաճանութեան Արտաշրի իմացեալ,  
'ի մահուանէ զերծ և 'ի յաղթութեան իւրում  
մնայր միշտ անյաղթելի։ բայց յայսպիսի լուրջ

զգուշութենէ անփոյթ արարեալ դաւաճանեցաւ  
ի խորամանկութենէ լյասանեան , և սպանաւ :

Յ. Խակ արքունիք Պարսից Յունաց և Արարաց-  
ոց չունեին երբեք պէտո զուեսպանս և զլրտեսս ա-  
ռաքել 'ի յարքունիս Հայոց զի արքունեաց և նա-  
խարարաց Հայոց կարծեցեալ խորհրդապահ ծա-  
ռայք , անթշակ դեսպան , և հաւատարիմ լրտես  
էին իրբեւ 'ի կողմանէ օտարաց ընտրեալ և կա-  
ցուցեալ . որք դհացն արքունեաց Հայոց ուտէին .  
և աղայամիս պարզութեամբ զներքին խորհուրդա-  
խորհրդականաց Հայոց և զնպատակս պետաց  
մերոց գրով արագ արագ 'ի դուռն Պարսից Յու-  
նաց և Արարացոց հասուցանէին , վասն խորա-  
մանկ և խարէական խոստմանց նոցա . զի զպատիր  
և զուռուս պատիս ընդունեացեն 'ի նոցանէ : Խո-  
պատ զուրկ ՚ի խորագիտութենէ՝ զդազտնի խոր-  
հուրդու և զնպատակս արքունեաց վաստար  
և սորկարար մատնելով . չդիսէին բնաւ թէ այ-  
նու , զազգ և զպետութիւն և դհայրենիս իւրեանց  
մատնեն անդարձ կորստեան . որոց մըուր դառ-  
նութեան այսօր յոյժ դառնանայ 'ի կոկորդու մեր  
ֆիսակ որ սենեկապետ և իրբեւ ներքին խոր-  
հրդական էր Տիրանայ արքային , որ ֆիսակայ  
իրբեւ ներքին խորհրդականի և մուերմի մերկա-  
նայը զամենայն զխորհուրդու իւր . խակ ֆիսակ  
իրբեւ զլրտես զներքին խորհուրդու տեառն իւրոց  
հասուցանէր առ վարտզապոհ իշխան Պարսից  
որոյ 300 զօրօք 'ի դէմն բարեկամի եկեալ 'ի Հա-  
յաստան , և 'ի յանդդուշութեան լմբոնեալ  
զջիրան . կուրացոյց : Վասնզի տիրանենդ ֆիսակ

յետ մատնելոյ զամենայն դադտնիս Տիրանայ ,  
հաւատարմացուցանէր զնա ասելով թէ Վարագա-  
պուհ բարեկամ է քեզ յաւխռեան :

9. Փիսակայ տղայամիտ հետեւողք բազ-  
մաթիւ են ի պատմութեան . որոց յիմարագոյն ա-  
րարք եւ անուանք չհամարիմ ինչ յիշատակութեան  
արժանի : Արդ՝ հետեւողք եւ աշակերտք Փիսակայ  
խորադիսութեամբ զգօնացին եւ զգաստացին  
ուղել զստ իւրեանց ի ճանապարհս հայրենասի-  
րութեան . զի անսի ի դաւառու ի քաղաքս եւ ի վա-  
նըս Հայաստանի զփիսակս . տեսի ի խորհուրդս եւ  
ի խորհրդականս կաթուզիկոսաց , պատրիարքաց ,  
առաջնորդաց բազմեցան արք այլ եւ այլ անուամբ  
եւ վերտառութեամբ , արք երեւելիք իւրեւ մը-  
տերիմ խորհրդականք եւ պաշտպանք հայրենեաց .  
բայց յորժամի խորհրդական յատենէ արտաքս ելին ,  
զգործան փիսակայ կատարեցին , իրքեւ ուխտեալ  
թշնամի հայրենեաց , և իրքեւ երդուեալ բարե-  
կամ օտարաց զի ծամաձուռ մեկնութեամբ մեր-  
կացան օաարաց զփորհուրդս անմեղաց մերոց իր-  
քեւ զվասակարաց նոցաւ Եղեկիա զծածկեալ գանձո  
հարստութեան իւր ցուցանէ օտարազգի բարեկա-  
մաց իւրոց . որք ՚ի կողմանէ թագաւորին Ասորոց  
եկեալ էին ուրախակից լինել նմա վասն ապաքի-  
նութեան նորա ՚ի մահառիթ հիւանդութենէն :  
բայց Եսայի եկեալ յանդիմանէ Զեղեկիա ասելով .  
զամենայն գանձս զոր ցուցիր , մատնեցի ՚ի ձեռու  
թագաւորին Ասորեստաննեայց : Բան մարդարէին  
կատարեցաւ յետ սակաւուց և դործ պարզմու-  
թեան արդար թագաւորին պատմեցաւ ՚ի ջեառնէ :

10. Արդ՝ վասն այսորիկ խորագիտութիւն պահանջելէ զկենսական գաղանիս և զխորհուրդս պահելի ի խորին թաքնութեան իբրեւ զդանձս թանկագին, և ոչ երբէք մասնելի ի ձեռու օտարաց. զի որ մատնէ զխորհուրդս իւր և ազգին իւրոյ, մատնէ դանձն, զգօրութիւն և լրութիւն ազգին ի վտանգս մեծամեծս : Խորագէտն միշտ զհետ լինի գիտել զչափ նիւթական և բարոյական զօրութեան այլոց, և առնուլ զչափ թաքնու խորհրդոց նոցա, զի պաշտպանեսցէ զանձն և զազգն իւր ընդդէմ արտաքին և ներքին զօրութեան նոցա : Խորագէտն նախ քան զգործել ինչ չհարկանէ հոչակ, զի մի նախանձորդք խափանեսցեն զզօրութիւն գործելոյ նորս, խորագէտն նախ քան զշինումն աշտարակին նստեալ խորհի նախ զծախուց, զի մի ծազր լիցի յետոյ : « Խորագէտն յորժամ տայցէ պատերազմ ընդ այլում թագառիքի, նախ նստեալ խորհի, թէ կարող իցէ տասն հաղարաւ զգէմ ունել այնորիկ որ գայցէ ի վերայ նորս քան հաղարաւ . ապա թէ ոչ կամ չպատերազմի կամ զհրեշտակս առաքեալ խօսի ընդ նմա ի խաղաղութիւն » Դուկա ԺԴ. ԳԼ. 28-32 :

11. Ազգայինք առ ազգայինս լիցին միշտ անսենդ անխարդախս իբրեւ միամիտ աղաւնի, որպէս եղբայր առ եղբայր և ընկեր առ ընկեր . միշտ խոստանալ և կատարել, միշտ ասել և առնել . որով ազգութեան և միութեան փոխադարձ սէրն պահի և արծարծի : Խակ առ արտաքինս գնացեն խորին զիտութեամբ. վասն զի նոքա վասն շահու իւրեանց մերձենան առ մեղ իբրեւ բարեկամ և մտերիս . և

խորամանկութեամբ խառեն զմեզ : Բայց փորձք անցելոյն և վիճակք ներկայիս կարծել տան խորագիտաց թէ Հայք չխրադիտելի եղեալ ընդ մեարա գլխոց խրեանց՝ խորդան ՚ի վերայ նորա իրեւ զթօվնան . մինչդեռ այլք զխորագիտելին հանդերձ խորամանկելովն ՚ի ներքո ուշոյ խրեանց ծրարեալ շարժին և գործեն յօդուա հայրենեաց ժիր և արագ : Խակ Հայք ՚ի խորս քնոյ երեւակայական անընդովքք զառածեալ կարծեցին թէ հասեալ իցեն ՚ի նպատակ հայրենասիրութեան . ուսկայն եթէ զսին զոլոշիս ՚ի ծանրաբեռնեալ գլխոց մերոց չիարատիցեմք . զխոհականութիւնն և զխորագիտութիւնն ՚ի տեղի նորա չգետեղիցեմք , անհուն ասպարիզու . ի բուն նողատակէն հեռափ գտանեմք : Ահա դրսնք դպրոցաց մերոց բացեալ են . ուսք արու եւ եզմանկանց յաճախէին ի նոսա , ուսան զդպրութիւնն և զեղուագիտութիւն, յօրինեցին ոտանսաւորա, աահունս և գոլարիկու , խօսեցան վսեմ եւ պերճ ներբողեանս, որովք արտաքին ականջք մեր զուարճացան եւ երեւակայութիւնք յափշտակեցան . բայց արտաքնովքն բաւական եղեն զներքին միտս մեր դոհացուցանել . զի ՚ի մէջ գիտութեան գիտութիւն , ՚ի մէջ իմաստութեան իմաստութիւն , ՚ի մէջ խորագիտութեան խորագիտութիւն ոչ խնդրեցին . զի առաջնորդ լիցի խորհրդոց , բանից և գործոց որդոց մերոց հասանել ՚ի ցանկալի նպատակն հայրենասիրութեան : Ապաքին գիտասցէ հայրենասիրըն թէ արտաքին սակաւ ինչ կերակուր և գիտութիւն բաւականէ անհատական անձանց , բայց բազում շաեմարանք ցորենոյ , և բազում դանձք

իմաստութեան , և քաղաքմարին խորհուրդք խորագիտութեան պիտոյ է վարատական հայկազնացը և տառապեալ հայրենեացը :

## ՅՈՒՂԻԱԾՈՒՅՈՒՆ Բ:

ԿՐԵՑԱՌԱԳԻՑՈՒԹԵԱՆ

Ա. Այս՝ կենցագաղիտութիւն պիտոյ է մեղ , զի ծնաբ և կեամբ 'ի մէջ կենցաղոյս , որ զաւուրա կենաց մերօց 'ի վերայ հոսանուտ այեաց իւրոց տաեւալ իւրեւ զհողմակածեալ նաւ վարէ անդուլ սաստիտթեամբ 'ի նաւահանդիսան , այն է աս խողաղութեան գերեզմանն : Ով անկոյտն , չարժան , գնայուն և սահուն կենցազ : զիա՞րդ մարդմահկանացու մարմնովն 'ի մրրկայրցդ ալեացդ զրեկանուդ . նաւ իւր դերծուցանել կարիցէ , թէեւ 'ի ժադաւորաց և 'ի զօրաւորաց ոք իցէ , զի անընդմիջելի շրջան արեգական և մոլորակաց չորից եղանակաց փոխիմունք տարւոյն , և արշաւասոյր ժամբ և վարկեանք դիշերոյ և տուննեան զանիւո նաւիդ քան դշոքենաւից հաղարիցս արագ յառաջն վարեն , և դու մինչ յետս նայել և զճաշակ կենցաղոյս առնուլ կամիցիս , առագաստալիր նաւդ . հասանէ յանկարծակի յալխարհ , յորում անաղան մասնել կամէիր : Վայ նաև ին յորում չիցէ զեկավար ճարտար , նաւապետ իմաստուն , և ժիր նաւատակիք . բիւր մօտալուտ արկածք 'ի վերայ հասանեն 'ի բեկանել և 'ի յընկըդմիլ զնաւն : Աստ զնկարագրութիւն բն կանուտ նաւին , զոր նարեկացին 'ի դլուս մէ աղօթից

իւրոց յուշ առնէ , ընթերցեալ ծանխյես զսահման անկայուն կենցաղոյս :

2. Եթէ ի մարմինս իւրտքանչիւրոց հաւատոյ ներքին ճանաչմամբ հոգւոյ անմահութեան ծանօթութիւն , առաքինութեան իղձ և զգացումն , հայրենասիրութեան խանդ և եռանդ չիցէ . ահա արդարե նաւ կենաց նորա առանց զեկավարի , նաւապետի և նաւատեաց կենցաղոյս կարստական բուռն հողմոց և ալեաց մատնեալ մերձ է յընկդմիլ , վայ մարմեոյ մահկանացուի , որ առանց դորժունեաց ճարտարացո միայն մնացեալ իցէ 'ի կենցաղոյս ճանապարհին , ոչ ապաքէն գործ կարի յեմարի է բիւր զբազմամբ բեռնաւորեալ նաւ կենաց մերոց հաւատալ ունայնութեան մտաց և ունայնութեան աշխարհի իրբեւ փոթորկալից ալեաց թորժամ ուրուք մարմին առանց հոգւոյ է , միտք առանց ուղիղ գատման և արդարութեան , սիրութն առանց հայրենասիրութեան եռանդագին զգացման . պտոյտք ջուրց և անդուդք խարոց կենցաղոյս պատեալ պաշարեացեն զմարմին նորա առ 'ի մահ , և զհոդին նորա 'ի կորուստն յաւիտենից . զի զառօրեացս զպատրանս կենցաղոյս միայն համարեցաւ բաժին իւր և ասէ « Աբեցու և բիբուն , զի Հայուն Քռանելոց եմտ »

3. Կանխապէս պարտ է նախատեսել զսունեայն դժանը և զմեթեւ երեւոյթս արկածից կենցաղոյս իրբեւ զփորձ և զանվեհեր նաւապետ . որ իմաստութեամբ իւրով զհոդմոց զփոթորկաց և զզէկոծութեանց կանխապուշտկ լինելով ճարտարէ դնաւ իւր առ նաւահանդիսան : Զվարս , զկենցաղս և

Ղարիկածո գոլոմզոսի մեծի առն առցեռ քեզ օրինակ ՚ի կենցաղոյս ճանապարհին . հոդի Աստուածեղբէն , խորհուրդ լսյն և ընդարձակ լնակէր ՚ի վեհագոյն սիրտ Գոլոմզոսի , որ խորին կենցաղագիտութեամբ իւրավ առ ոռն կոխեալ զամենայն զյանկարծական մրրիկո , զիօթորիկո և զփրփրադեզ զայիս կենցաղոյս՝ եհաս ՚ի նաւահանգիստ կենաց իւրոց . զի ոչ վարանեալ յուսահանցաւ յաղքատութեան և ՚ի ձախորդութեան իւրում , և ոչ բարձրամունցաւ ՚ի հարատութեան և յաջողութեան իւրում . Մինչդեռ ընդ անհուն անդունդո Ռվիկիանու անհուն համբերութեամբ վարեր զնաւ իւր , ահադնատեսվլ անսաստ աղէկոծութիւնք ՚ի ծովին , անհամբոյր և անսողոք ըմբոստութիւն նաւաստեաց ՚ի նաւէն զնովաւ շրջապատէին , և զանդունդո կորստեան առաջի նորա բացեալ՝ մահ սպառնային . նա իրրեւ երկնային էակ՝ զինեալ հաւատով և իրրեւ անսասան նաւապետ և զօրապետ զինեալ արիութեամբ՝ դիստութիւն ծովուն ամոքէր համբերելովն , և զնաւաստեաց կատաղի ըմբոստութիւն խափանէր սաստելովն մինչեւ եհաս ՚ի նորառակեալ տեղին և եզիս զնոր հայրենիս ՚ի պարծ անս Սպանիոյ իւրոյ հայրենեաց , ՚ի փառո և ՚ի պատիւ անուան իւրոյ . ահա այր որ ՚ի մէջ կենցաղոյս գիտաց իմաստութեամբ վարել զնաւ մարմնոյ իւրոյ և ՚ի ծովու զնաւ հայրենեայն :

4. Ի կենցաղումն անողոք և գմնդակ թշնամի կենաց մերոց՝ է յուսահասութիւն . սա յանկարծ զանիւ կենցաղավարութեան մերոյ յետս ընկրկեալ՝ զնաւ յուսոյ կենաց մերոց ՚ի յասակութեան

Խորաստղէ : Փութասցի խրաքանչիւր ոք համբեռատար հոգւով յաղթել դժոխադէմ թշնամւոյս , զի յաղթել կարասցէ հայրենեաց թշնամւոյն , զի ժառանգել և վայելել կարասցէ զվերին հայրենիս : Յորժամ արկածք եւկեալ պաշարեսցեն զանձդ . և զհայրենիս քո , մի՛ լինի՛ր վեհերոտ և յուսահատարիացի՛ր հաւատով , յուսով և սիրով , յայնժամ տեսցես թէ արկածք ՚ի քէն և ՚ի հայրենեաց քոց փախտական երթիցեն . յորժամ սուր թշնամւոյն մահ սպառնայ քեզ և չիցէ ձեռն քո բաւական զգէմ ունել բանութեան՝ ուրախութեամբ արհամնարհեա զունայնութիւն՝ կենցաղոյս . զի մահ որ վասն հայրենեացն է , քազզը է քան զգառնութիւն կենցաղոյս : Զի որ առանձին վասն անձին կեայ , վասն անձին խրոյ մեռանի . խակ որ վասն աղգին կեայ , վասն աղգին մեռանի :

5. Զի՞ լինչ ՚ի կենցաղոյս սահուն և գիւրափոփոխ քան զկենցաղս , յորում՝ ՚ի կենցաղավարելն մեր ընդ մարդկան , պիտոյ է ստանալ մեղ ծայրագոյն կենցաղագիտութիւն . զի ոչ շահ անձին մերոյ միայն ստիպէ զմեղ՝ ՚ի խորս նորա մոտանել , այլ և բարին հասարակաց և օգուտան հայրենեաց միշէ զմիտո մեր ՚ի նոյն : Տե՛ս թէ զի՞ արդ Տիրան երեկն սիրէր զջօնիկն , խակ այսօր ոչ : Կիրակոս՝ այսօր ինձ բարեկամ , վաղիւն ոչ : Տեսի զԱսորին , որ երեկ յեկեղեցւոջ ազօթէր ընդ Հայս , բայց յետ աւուրց ինչ ոչ Տեսի զՅոյնս , որ եռանդն բարեկամէր աղդին իմոյ և օգնական , խակ այսօր թշնամի և հալածող երեկ աղդ մի հարուստ էր և զօրաւոր , խակ այսօր աղքատ և տկար . Երեմն արեւելք և արեւմուտք

Հաշտ էին , իսկ այժմ անհաշտ . ահա քեզ կենցազոյս և մարդկան գոյզն ինչ նշան : վասն որոյ լեր շրջահայեաց ընդ մարդիկու և ընդ աղինս աշխարհիս այսորիկ , որք երբէք չկարեն 'ի նոյն կարծիս և 'ի խորհուրդս մնալ 'ի յարածուփ բռնութենէ կենցազոյս . ուստի չկարեն միշտ յարատեւիլ 'ի բարեկամութիւն . նոյնպէս եւս 'ի ժշնամութիւն . բայց եղեն արք և ազգք խստասիրտք և գաղանաբարոյք , որք անփոփոխ պահեցին զիշնամութիւն խորեանց առ մեզ , որպէս Պարսիկք :

6. Ի վերայ կենցազագիտութեան նախնեաց պատմիչք մեր , է ուրեք զի զգովեստս սակաւո գրեցին , և է ուրեք զի պարաւո բազումն թողին . արութիւն նախնեաց յամենայն ուրեք գովեալ տեսանի , բայց կենցազագիտութիւն նոցա ոչ այնպէս : Զի եղիշէ վասն խրոյ ժամանակակից մարդկան այսպէս ասէ «Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ , և մոտօք աղքատագոյն , այնպիսին ոզորմելի է քան զբաղում . որպէս տեսանեմք իսկ ոչ միայն 'ի չափաւոր մարդիկ . այլ որ մեծն է քան զամենայն , թագաւոր եթէ չունիցի զիմաստութիւն ամֆոռակից իւր , ոչ կարէ 'ի զիճակի խրում վայելուշ դոլ » : Այսանց և կանանց և ամենայն հասակի մարդկան հարկ է կենցազագէտ լինել . մանաւանդ այնոցիկ , որոց հառեալ է զիճակ պետ , առաջնորդ և զօրավար լինել աղդի և ժողովրդեան :

7. Եթէ ոք 'ի կարի զօրաւորաց , 'ի պետաց և 'ի փարթամաց իցէ , եթէ միայն 'ի խորհուրդս և 'ի կենցազագիտութիւն իւր ապաստան եղեալ

գործէ , չէ աղատ երբէք զվրիպակս գործելոյ .  
 զի չէ բաւական զամենայն եղեալս իրը զներկայ  
 առաջի աշաց տեսանել , զբանս և զնորհուրդու  
 ամենեցուն լսել . ուստի խորախորհուրդ և կենցա-  
 զագէտ անձինք շուրջ բոլորին զաթոռով նորա ,  
 որպէս զի զիրս և զբանս ամենեցուն տեսանելի  
 և լսելի առնիցեն նմա , որպէս երկոքին յիշե-  
 ցուցիչքն վաշարչակայ : Սողմանն , որ գոդ թէ  
 չունէր պէտս խրատատուի , բայց կենցաղադէտ  
 խորհրդականութք վարէր զիշխանութիւն իւր . Մով-  
 սէս՝ այր աստուծատես և մարդարէ , բայց ան-  
 ձամբ միայն զբաղեալ 'ի հողս ժողովրդեսն տա-  
 ռապէր յոյժ , ուստի լուեալ կենցաղադէտ խորհր-  
 դոյ աներոյն իւրոյ Յոթորայ , ընարեաց զարս 72  
 լինել խորհրդակից և օդնական ինքեան . և կա-  
 ցոյց յիսնապետս , հարիւրապետս և հազարապե-  
 տըս 'ի վերայ ժողովրդեսն : Ապաքէն Տրդատ  
 հմուտ էր փիլխոփայական գիտութեան , և փորձ  
 'ի կենցաղական իրս , սակայն առանց խորհրդոց  
 մեծին Գրիգորի շվարէր զիշխանութիւն իւր :

8. Վարազգատ արքայն գոլով զուրկ 'ի կեն-  
 ցաղագիտութենէ , որում սպարապետն Մուշեղ  
 իրեւ կենցաղադէտ խրատ տայր , թէ՝ պարտ է  
 ընդ . Հաւատակից թագաւորին կոել դաշն միարա-  
 նութեան , և միամնութիւն առ նա ցուցանել ,  
 և ոչ առ մոխրապաշտ Պարսիկս . նա և խորհուրդ-  
 տայր արքային շինել 'ի Հայաստան զօրանոց վա-  
 սըն կայսերական զօրաց , որովք կարող լինիցին  
 պաշտպանել զհայրենիս ընդդէմ յարձակմանց  
 Պարսից և այլ թշնամեաց : Սակայն կարճամիտ

և անխորհուրդ վարագդատ ՚ի նախանձաբեկ քը-  
սութենէ կատ արանց հրապուրեալ՝ վասն այս-  
պիսի խորհրդոց զկորովին Մուշեղ յարեւէ հանէ ,  
զխորհուրդո իմաստութեան նորա յանցանս հա-  
մարեալ նմա : Մեծն Ներաէս և Սահակ պարթեւ  
յոյժ հմուտ և փորձ էին ՚ի կենցաղադիտութեան.  
բայց ոչ Բ. Արշակ, ոչ Պատ, և ոչ նախարարք ժա-  
մանակին անսացին խորհրդոց նոցա : Մանաւանդ  
նախարարք, որք մատնեցին Արտաշիր ՚ի գուռն  
Պարսից, երբէք չմատուցին ունին իմաստութեան  
Սահակայս: Ուստի Հ. Խնճիճեան ՚ի հնախօսութեան  
իւրում զրանս Դաղարայ ընդարձակեալ ասէ «Ա.Ա.  
նախարարք վատախորհուրդ.ք և խստապարանոցք  
առ ոտն հարեալ զրանս խորախորհուրդ. առն մեծի  
սրբոյ Հայրապետին՝ ընկեցին զնա յամուռոյն, որ  
եթէ յւրոպա գտանէր՝ թագաւորաց խորհրդա-  
կան առնէին, նաեւ վախարքայ. իսկ թէ ընդէ՞ք  
անարդեցին զրանս սրբոյն. յայտ է թէ, զի յառա-  
ջիկայ չարեացն խորշեցին . այսինքն է յանարժան  
գնացից թագաւորին իւրեանց Արտաշրի . և ոչ զի-  
տէին նախատես լինել չարեացն որ գալոցն էր ՚ի  
մատնութենէ իւրեանց. . . զի միայն տեսեալ Պար-  
սից զամենայն նախարարան եկեալ խոնարհեալ ա-  
ռաջի իւրեանց ոչ զի հաստատեացէ, այլ զի բարձցէ  
զթագաւորն՝ զտուաշնորդն ազգին և ինքն աիրեսցէ  
՚ի վերայ Հայոց . այս միայն բաւական էր անկել  
՚ի սիրտ Պարսից ոգի բոնակալութեան ՚ի վերայ  
մեր» :

9. Հայեցեալ ՚ի թերութիւն նախնեաց՝ զդաստ  
և փորձ լիցու.ք ՚ի կենցաղադիտութեան ժամանա-

կիս . զնշանաւոր կէտո անցեալ թերութեանց  
առաջի աչաց բերեալ՝ զգուշացուք չախտանալ  
՚ի նոյն ախտո . ՚ի ներկայ գէպս ազդաց , ազանց  
և ժողովրդոց հայեցեալ զգօնացուք , որչափ  
պարտ է մեզ զգօնանալ . և եթէ զապագայ  
ժամանակու , զիենցաղս և զկեանս որդւոց մերոց  
յապահովի առնել կամիմք , փութասցուք զամե-  
նոյն զբարի յաջողուածու կիենցաղոյս անցապազ  
՚ի դործ արկանել , այսինքն զայն ամենայն իրու-  
ղութիւնու , զոր այսօր հնար է սկսանել կամ ՚ի կա-  
տար ածել , երբէք չյանձնել վազեան , և չհաւա-  
տալ ապագային , որոյ խոստումն միշտ երկրայտ-  
կանէ և փոփոխմանք անհրաժեշտ . զի ամենայն  
յաջողուածք ապագային միշտ ՚ի ժրաշխան դործու-  
նեւթենէ ներկային է ապահովեալ . ուստի միշտ  
բուռն հար զգիսպող առթէն :

10. Արդ՝ կենցազագիտին պարտ է լինել նախ՝  
հեռատես , տնտեսագէտ , և միշտ անձնուեր Հայ-  
ըբենեաց . ո՛չ ապաքէն երջանիկ է առն , որոյ  
պետն և ժողովուրդն է կենցազագէտ . Ոհ , նախ  
քան զամն հնդետասան երարձ Տէր ՚ի գլուց  
մերոց զբաջ կենցազագէտ հայրապետն զէ . Ներ-  
սէսն , որոյ գործք , ժամանակ , կեանք և կենցաղ  
ահաւոր էր թագաւորաց և սիրելի ժողովրդոց , որ  
հայր էր որբոց , և միփթարութիւն սղաւորաց :  
Ոհ , գեռ երեկ Հայ նախարարք , Գրիիդոր Յտեան  
և Սերվիշէն եղերական բանիւ ողբացին կմահ  
Աղաթնեան Գրիդորի քաջ տնտեսագիտի , կենցա-  
զագետի և Հայրենասիրի : Եթէ ամենայն հայ-  
րապետ և վարդապետ լինէր կենցազագէտ իրեւ-

շներսէս, պայծառապը եկեղեցին Հայաստանեայց  
ըստ առաջին պայծառութեան . և եթէ ամենայն  
այր , որ 'ի ժողովրդեան՝ լինէր անտեսագէտ և  
կենցաղագէտ իբրեւ Աղաթոն Գրիգոր , փառօք  
բարձրանայր Հայաստան ըստ առաջին բարձրու-  
թեան փառաց : Թերեւս դոն և լինիցին բազում  
կենցաղագէտք յազդի և յաշխարհի մերում , զորս  
չճանաչիցեմք յանուանէ , և չտեսանիցեմ յետ  
ելանելց իմայ յաշխարհէս . ուստի ազաւեմ զմի մի  
'ի նոցանէ զի զարուեստ և զհանճար կենցաղի-  
տութեան իւրեանց 'ի գործ արկանիցեն , ոչ 'ի  
յօդուտ անձանց իւրեանց և եթ . այլ յօդուտ  
ազդի և հայրենեաց : Արդ՝ Քոքեցէ+ Ճնշ օր իւ ,  
չոյ հենքը , արում ու կաբէ+ Քոքել » : Ահա այս  
է իսկապէս կենցաղագիտութիւն և գործոնէու-  
թիւն . եթէ գործիցէք 'ի փառս Աստուծոյ և  
յօդուտ ազգին , օրհնութիւն ձեզ 'ի Տեառնէ ,  
և դովութիւն ձեզ 'ի մարդկանէ : Կեանք և կեն-  
ցաղ ձեր լիցի միշտ արեւ Հայաստանի . յիշատակ  
ձեր մոտաց Հայոց մնունդ . գերեզմանք ձեր ուխ-  
տատեղիք ուստերացն Հայոց :

## ՅՈՒՂԻԱԾ Դ:

ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱՎՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԻՒԹԻՒՆ :

1. Եթէ ոք ունիցի բնական հանճար , խելա-  
մուտ իցէ իրաւաբանութեան և իրաւագիտու-  
թեան՝ 'ի միտ առեալ իցէ զանցս և զպատմութիւն-  
ազգաց ազգաց , մուեալ իցէ 'ի խորս խորհրդոց բը-

նակաց ամենայն քաղաքաց և մայրաքաղաքաց .  
դիտէ զներքին կողմնապատակի իշխանաց , զօրա-  
ւորաց և պետաց աշխարհիո այսորիկ , եղեւ ոյր  
քաղաքագէտ և դիտաց թէ զինչ է քաղաքակա-  
նութիւն : Որդիք թագաւորաց և իշխանաց անաշ-  
խառ ուսանին զայս , զի ՚ի դոյն իսկ ծնանին .  
որդիք ուստիմասէր քաղաքաբնակ ժողովրդոց  
ուսմամբ և աշխատութեամբ գտանեն զայս . իսկ  
որդիք աղքատաց և դիւղարնակաց գոդ թէ հեռի  
գտանին ՚ի քաղաքագիտութենէ : Ազդք մեծա-  
մեծք , զօրեղք և փարթամք առաւել փորձ երեւին  
՚ի քաղաքականութեան , իսկ տկարք և աղքատք  
առաւել անփորձ :

2. Սա է ըստ ինքեան աշխարհային դիտու-  
թիւն . և շարժառիթ նորա շահ իւրաքանչյւր ան-  
հատի և ազգի , որ առաւել յառաջադէմ եղեւ-  
յայսմիկ , առաւել կարէ զշահ անձին և աշխար-  
հին իւրոյ խնդրել և պաշտպանել : Ամենայն ան-  
հատի և ազգի քաղաքականութիւն չէ մի օրինակ ,  
որպէս շահ նոցա չէ մի օրինակ : Քաղաքագէտան ե-  
թէ զարուեստ հնարագիտութեան չկարիցէ հեշտիւ-  
ուղեալ հասուցանել ՚ի նպատակն իւր , դիմէ ՚ի  
զէն և ՚ի բռնութիւն , և երբեմն զանց արարեալ  
զսովաւ զկրօնական աղղեցութիւնս կոչէ իւր զօրա-  
վիդ : Ուստի ըստ զանազանութեան կրօնից , զանա-  
զանին քաղաքական աղղեցութիւնք նոցա : Յիսուս  
միայն պատուէր ետ ամենայն ազգաց քրիստոնէից  
այսպէս քաղաքավարել յաշխարհի ընդ ամենայն  
անհատու և աղդս «Ռուկէս խոնցիւ Ան արացեն յեղ ճարդին ,  
այնուհետ ուսուժ նոցա : զի այս նու են օքենիւ և ճար-

Քաբեց» և ահա այս է բնական ճշմարիտ հանրական քաղաքականութիւն՝ տուեալ ոչ միայն քրիստոնէից, այլ և վասն ամենայն մարդկան։ Բայց Հրեայք զհիմն քաղաքականութեան իւրեանց ՚ի վերայ օրինացն Մովսիսի եղին, որ ասէ, «Ան ընդ ուն և ապահով ընդ ապահով»։ զշահ և զօդուտ ազգի իւրեանց նախապատելը օտարազդիս՝ անարդս պիզծս և անթլպատս համարել, զվկայութիւն նոցա չընդունել։ Մովսիսի հետեւեցաւ քաղաքական գուշակն չագարացւոց։ իսկ չինացի կռապաշտք կոնֆիւկոսի դրութեան հետեւեալ՝ առաւել յառաջադէմ գտան ՚ի քաղաքականութիւն քան զչըրէայս։

3. Եթէ կամիս քաղաքագէտ լինել, վութացիր ՚ի միտ առնուլ թէ զի՞նչ խորհին, խօսին և գործեն կարծեցեալ քաղաքագէտք աշխարհիս, զի այլ են խորհուրդ նոցա, այլ խօսք և այլ գործք նոցա։ ամենայն ինչ երկու են ՚ի նոսա և ոչ մի ։ լեզուաւ իւրեանց խստանան ունել ընդամենայն մարդոյ զիսաղազութիւն, իսկ ձեռօք պատրաստին ՚ի պատերազմ՝ վրուովել զիսաղազութիւն ամենայն մարդկան, ՚ի վերին երեսս ասեն՝ շահս բաղումս հասուցանել բաղմաց։ իսկ ՚ի ներքուստ խորհին զշահս բաղմաց հանել ՚ի ձեռաց նոցա։ և ահա խարէմիան կեղծիք այս կոչեցաւ յոմանց քաղաքականութիւն։ Բայց եթէ ոք յիշխանաց, յաղասաց և ՚ի քաղաքացեաց ՚ի կառավարել իւրաւմ զժողովուրդն խորամանկութեամիւ մերթիսարդախէ և պատրէ զմարդիկ։ և մերթ հաւատարմութեամիւ գործէ զարդարութիւն և խօսի

զճշմարտութիւնն չկարէ ոք վառահիլ և հաւատալ  
բանից և գործոց նորա . զի մերթ արդար երեւի  
և մերթ անիրաւ , մերթ խօսի զճշմարիսն և  
մերթ նախապատուէ զսուտն . մերթ երեւի ջատա-  
գով և ջանացող հասարակաց բարւոյն . և մերթ  
զբարին ազգին և ժողովրդեան զոհէ անձնական  
փառաց և շահու իւրոյ . այսպիսիք կարեն 'ի  
հրապարակս քաղաքաց ստանալ զտիտղս քաղա-  
քագիտի . բայց զպարծանս ճշմարիս քաղաքագի-  
տի ոչ երբէք : Պղատոն զսուտեր երկսայրի ետ  
'ի ձեռու քաղաքագիտաց զբանս զայս ասելով .  
«Ով ոք չգիտէ պատրիել , չգիտէ և կառավարել »  
բայց ես ասեմ , եթէ ոք պատրէ զժողովուրդն .  
նման է կիսաւեր և խարխուլան , ընդ որով բնա-  
կելն է միշտ վտանգաւոր :

4. Ի ներկայ դարս քաղաքագիտք հրաւիրե-  
ցան յաթոռս կայսերաց և թագաւորաց , ընտրե-  
ցան վոխարքայ , և դեսպան , նախագահեցին  
հասարակապետութիւնց , երեւելի հանդիսացան  
'ի գետպանաժողովս , և 'ի գումարս քաղաքագի-  
տաց : Արդ՝ բատ որում լրագիրք զօր հանապազ  
հռչակ հարին զքաղաքականութենէ քաղաքագիտ  
արանց և ցուցին զնոսա յաշս ամենայն մարդկան  
մեծ և երեւելի , ուստի բաղումք 'ի ժողովրդոց  
կարծեցին թէ ուսումն քաղաքականութեան միայն  
թագաւորաց , բարձրապաշտօն արանց է միշտ սե-  
փական և հարկաւոր , զի թէպէտ ամենայն պաշտօ-  
նավարք պարաին զծուծ դիտութեանս այսմիկ առ-  
նուլ . բայց այր իւրաքանչիւր լրջաբար խելսմաւա-  
լիցի յանձն իւր թէ՝ ուսումն այս պիտանի և հար-

կաւոր է ամենայն հասակի և աստիճանի մարդկանց  
զի հարկ է առն քաղաքացւոյ գիտել զօրէնս, զի-  
րաւունս, զդասասատանս, զսովորութիւնս, եղա-  
նակ կառավարութեան ամենայն ազգաց, խելա-  
մուտ լիցի ներքին և արտաքին զօրութեան և հա-  
րասութեան շըջակայ ազգաց, Նոյնպէս գիւզարը-  
նակաց պարտ է գիտել զուզզութիւն և զանուզզու-  
թիւն գատաւորաց և իշխանաց, ՚ի միտ առնուլ  
զօրէնս և զիրաւունս կառավարութեան, իմաս-  
տութեամբ կենցազավարել ընդ քաղաքացիս և  
ընդ օտարազգիս, միշտ զգուշանալ ՚ի նենգաւոր  
և խարեւքայ արանց: Ժողովուրդն յորժամ տեսա-  
նէ թէ տիրողք և կառավարողքն միշտ հետամուտ  
են դնել ՚ի վերայ պարանոցի ժողովրդեան ղծանը  
հարկս և խստութեամբ պահանջնեն, բայց անփոյթ-  
ինին զինչս, զկեանս և զպատիւս ժողովրդեան  
պաշտպանել որպէս պարան է. ամէն ասեմ յոր-  
ժամ ժողովուրդն չբողոքէ ընդդէմ զրկանացս, չէ  
քաղաքադէտ. իսկ յորժամ բողոքէ, է ճշմարիտ  
քաղաքադէտ և իրաւադէտ:

5. Նաբոլիսն Գ., Պիզմարդ, և Մէթիոնիկ զա-  
մենայն հանճար քաղաքակրնութեան խրեանց ՚ի  
վար արկեալ տառապէին և խնդրէին զժողովուրդ-  
քըն ՚ի հնազանդութեան և ՚ի խաղաղութեան պա-  
հել, և չյարուցմել զնոսա ընդ գէմ պեսութեան.  
զի գիտէին, թէ գտանին, ՚ի ժողովուրդս խրեանց  
արք հանճարեղք, կենցազադէտք և խորին քաղա-  
քադէտք, որք կարէին խստիւ բազոքել ընդդէմ  
կառավարական զեղծմանց և ՚ի յուղութիւն հրա-  
ւիրել զնոսա: Ռւսաի քաղում անդամ խոհեմու-

թեամբ զիջանէին 'ի բողոք և 'ի խնդիր ժողովը դեան : Սակայն պետք և պաշտօնեայք ժողովը դոյ այնոցիկ , որք չեն յառաջադէմ 'ի լուսաւոր քաղաքականութիւն ժամանակիս այսմիկ , չեղեն աշխատ երբէք , զի գիտացին թէ ժողովուրդն իբրեւ զկոյր չտեսանէ զեղծմունս իւրեանց , և առ երկիւզի բանաւորութեան իւրեանց իբրեւ զհամբ չկարէ բողոքել ընդդէմ անիրաւութեան իւրեանց : Արդ՝ վասն այսորիկ ժողովրդոց մերոց պարտ է լինել միշտ իրաւագէտ խորագէտ և քաղաքագէտ , զի ունիցի վարկ , պատիս և ազդեցութիւն առաջի պետաց և պաշտօնակալաց , և բաւական լիցի առ ամենայն դէպո զձայն իւր լսելի առնել յատեան պետաց և պաշտօնակալաց և պաշտպանել զպատիւ և զիրաւունս ժողովրդեան իւրոյ :

6. Ազգային պատմիչք զքաղաքականութենէ հին թագաւորաց և ժողովրդոց մերոց որոշակի ոչ ինչ գրեցին , և մանաւանդ 'ի հինս մեր չէր այնչափ յարդի և յառաջադէմ ուսումն այս , որպէս այժմ աեսանի 'ի կիրթ և 'ի մեծ ժողովուրդս ժամանակիս այսմիկ : Ոչ ապաքէն 'ի հարիւրամեայ ժամանակաց հետէ տեսանեմք թէ առաջնորդք և իշխանք մեր վասն անքաղաքագէտ դորս ժողովրդեան մերոյ տրանշեն . իսկ ժողովուրդք հանապազօր բողոք ունին ընդդէմ առաջնորդաց և իշխանաց , իբր այն թէ գիտութեամբ , խոհեմութեամբ , և քաղաքականութեամբ չդիտեն կառավարել զժողովուրդքն : Առաջի ուղղութեան մոտաց , և առաջի անկեղծ աղդասիրութեան ճշմարիտ և արդար է բողոք երկոցունց կողմանց ընդդէմ միմեանց . վասն

զի ոչ առաջնորդք իբրեւ զքաղաքագէտ դիտեն զեղանակն հովուելոյ, ոչ իշխանք զեղանակն իշխելոյ, և ոչ ժողովուրդք իբրեւ կենցաղագէտ դիտեն զեղանակ և զահման հնաղանդելոյ: Թողեալ զմանքամասն պարագայս զեղծման և անդիտութեան երկոցունց կողմանց, զրան Յիսուսի առաջի եդից նոցա ասելով «Երաք Էսթէ յուժութեան առաջարկեանք, Երիսեւն ՚ի Խորիսորդ անդանին»: Ժողովուրդն՝ ստէպ խնդրէ ՚ի յառաջնորդաց և յիշխանաց զօրաւոր պաշտպանութիւն և ապահովութիւն յամենայն դէպս՝ թէ ՚ի կրօնականա և թէ ՚ի քաղաքականա: իսկ սոքա չունելով զկրօնական և զքաղաքական խորին հմտութիւն, անդիտական և անկարանան օդնել և փրկել զժողովուրդն ՚ի ձեռաց նեղչաց իւրեանց: Նոյնպէս ժողովուրդն՝ քաղաքական իրաց և անցից անհմուտ չկարէ առնուել զշամի ձեռնահատութեան իշխանաւորաց ազդին, յորոց երբեմն զմեծամեծո և անկարելի իրս խնդրէ չարաշար և յորժամ չկարէ առնուել զմանդրելին, տագնապեալ խուզի յանձն իւր, առ ոտն կոխէ զիշխան և զիշխանութիւն: Եւ երբեմն խնդրէ զբարին և զկարելին, բայց իշխան կամ վասն տգիտութեան: և կամ վասն չարանութեան զշանայ կամ յապաղէ կատարել զհայցուածս ժողովուրդեան: յայնժամ ժողովուրդն արդար վրէժխնդրութեամբ առնու ՚ի ձեռաց չար մշակաց զայդին, և տայ զնա ՚ի ձեռս բարի մշակաց, որ առնիցէ զկամն Տեր Ալն: Եղեւ զի երբեմն իշխանք և իշխեցեալք մեր միայն սոսկ վասն անդիտութեան ատեցին զմիմիա-

( 446 )(

նըս ՚ի տարապարառուց , բաժանեցան ՚ի միմիանց տկարացան , և եղեն այլն կատականաց թշնամեաց իւրեանց և անկան իրօք ՚ի խորխորատ կորառեան , ուստի պարտէ հովուաց և իշխանաց մերոց այնչափ յառաջադէմ լինել ՚ի քաղաքադիտութիւն մինչեւ իրօք պարծել ըստ Պօղոսի և ասել ցժողովուրդն թէ « խելօք էի և կարայ զձեղ » :

7. Եթէ ոք կամի խելամուտ լինել տեսական քաղաքականութեան ժամանակիս , չէ բաւական ունել հմտութիւն օրինաց հին և նոր աղդաց . այլ պարտ է գիտել զոհ , զեղանակ և զդրութիւն խորհելոյ իրաւաբանելոյ ամենայն աղդաց և լեզուաց , ստէպ ընթեռնուլ զպատմութիւն հանրական , ՚ի միտ առնուլ զվեպս հին և նոր աղդաց . ուշի ուշով տեսանել ՚ի նոսա , և ՚ի պատմութիւն միջին գարուց զքաղաքական անցս և զյնդավոխութիւնս աղդաց . հետազոտել զպատճառույառաջադիմութեան և յետագիմութեան ժողովրդոց . ստուգիւ հասանել ՚ի վերայ թէ ոյք էին , որք խմաստութեամբ մղեցին պատերազմ և տիրեցին ՚ի վերայ աղդաց . և ոյք էին որք անդիտութեամբ ճակատեցան ընդդէմ զօրաւորաց և յաղթեցան , ոյք էին որք ճարտարարուեաս վաճառականութեամբ և հաւատարիմ ընկերութեամբ դհարատութիւն բազում աղդաց ժողովեցին յաշխարհ իւրեանց և ոյք էին , որք անարուեստ և անհաւատարիմ մնալով դհարատութիւն իւրեանց մատնեցին ՚ի ձեռս այսոց և աղքատացան :

8. Այսու մանրակրկիստ դննութեամբ հրահանգեալ զմիսս և զխորհուրդս ՚ի մարզ քաղաքակա-

նութեան , ապա հաճութեամբ և ընտրանօք ազգին միջամուխ լինել պարտ է 'ի գործնական քաղաքականութիւն . 'ի սէր ազդին և հայրենեաց յօժարակամ' ստանձնել զնութիրական և զծանր պաշտօնս ազդային , խոհական արիութեամբ , անձնութէր ջանիւք յարատեւիլ 'ի նոյն , որչափ կտմք իցեն ազդին : Ենանիր թէ զի՞արդ քան զամենայն վերացական գիտութիւնս և գործնական արհետու աշխարհիս գժուարըմբաների է արհետու կառավարելոյ զմարդիկ . զի թէպէտ բազումք են , որք ընթանան յասպարիզի քաղաքականութեանս , բայց 'ի հազարաց այր մի հազիւ գտանի , որ առցէ զպասկ և զյազթանակ ժողովրդասէր քաղաքականի : Քանզի եթէ ոք կարի առաւելեալ իցէ տեսական գիտութեամբս , և զուրկ գտեալ 'ի հայրենասիրական առաքինութենէ վասն փառասիրութեան և ազահութեան միայն ձեռներէց լինիցի 'ի պաշտօն ազդին , ոչ ապաքէն գործէ նա 'ի շահ և 'ի փառս անձին , 'ի մնաս և 'ի կորուստ հայրենեաց : Արդ լաւ է առն հայրենասիրի զուր երկայիրի սրեալ տեսանել կախեալ 'ի վերայ գլխոյ իւրոյ , քան թէ տեսանել զայսպիսի վտանգաւոր այր կացեալ 'ի գլուխ ժողովրդեան իւրոյ : Ռւստի պարտ է քաղաքագէտ ժողովրդականաց նախ զփորձ առնուլ իմաստութեան և առաքինութեան առն , ապա կոչել զնա 'ի պաշտօն ազդային . զի եթէ մեռեալ է խիզն առն և վերացեալ հաւատն 'ի նմանէ ոչ ոք կարէ հաւատալ նմա զմանդազին մեծութիւն ազդին , զոր կարէ անխղճարար վաճառել օտարաց :

9. Բազումք կարծիցեն թէ ավնուականք ընդ-  
հանրապէս են քաղաքագէտք . իրրեւ այն թէ ,  
եթէ լինիցին հմտւտ , և եթէ ոչ , ժողովուրդն արա-  
տի զմեծամեծ պաշտօնս աղդայինս յանձնել նոյսա ,  
և կոյր հնազանդութեամբ հպատակել կամաց և  
հրամանաց նոյսա : Սակայն ՚ի կարծեցեալ ավնուա-  
կանաց բազումք են , որք վարելով զկեանո զեզիս  
և դատարկապորտսա անփոյթ լինին ուսանել զքա-  
զաքականութիւն . վասնորոյ արհամարհեալք ՚ի  
ժողովրդոց մերժին ՚ի յաղդային պաշտօնավարու-  
թենէ . ընդ այսպիսի արդար արհամարհանս ժո-  
ղովրդեան սրտմտեալ նոյսա՝ դուն դորժեն բռնու-  
թեամբ իրրեւ բարբարոս տիրել և իշխել ժողովր-  
դոց . բայց այսու տապալին զհիմն ավնուութեան  
իւրեանց , և հասուցանեն դրազումաղէտս և վնասս  
ժողովրդեանն : Արդարեւ ՚ի ձեռն հարստաց և  
ավնուաց առաւել արտգ յաջողի և յառաջ մղի  
քազաքականութիւն , զի գրամ և հոմբաւն է  
շոգի քաղաքականութեան , բայց եթէ լիցին նո-  
քա անհմուտ քաղաքական իրաց և անցից փոխա-  
նակ լինելոյ բարերարք հայրենեաց լինին միշտ  
աղէտարեր . զի առէ իմաստունն « Հաւ է հանուն ու-  
տու և ինսպուն , ուն զներ որէ ու նարուոք » : Ի շա-  
րըս աղդայինոց նա է ըստ իս ավնուական , որ գի-  
տաց զակրտ իւր բարոյական և քաղաքավարական  
կրթութեամբ ավնուացուցանել և ՚ի յառաջաղի-  
մութեան հայրենեաց ՚ի վար արկանել թէ և ՚ի կա-  
րի կրտսերագունից և յաղքատաց ոք իցէ : Զի լու-  
են միշտ սրտիւք ավնուականք , քան գանձիւք  
ցեղիւք ավնուականք . որպէս ոմն երիտասարդ

գանձիւք աղքատ . այլ սրտիւ հարուստ և աղնիւ ,  
արհամարհեաց զփափկակեաց ավնուական երիտա-  
սարդ մի , որ պանծայր յաղնուականութիւն առհմի  
իւրոյ և արհամարհեր զաղքատն . ասէ ցնա «Առ է  
յինէն ուստի և ույտ՝ զիւ էսընչիւ :

10. Ոչ ահաւասիկ լուր եզեւ թէ 'ի դստերս  
յառաջադէմ ազդաց եզին իմաստոն կանայք ,  
որք բազմեալ 'ի գահոյս քաղաքագիտաց՝ 'ի վերայ  
քաղաքական խնդրոյ միճարանեցին և իմաստոն  
բանիւք ետուն զյուծունն կնճռափոց խնդրոց 'ի զար-  
մանս բարձրաց : Արդ եթէ ուստերք Հայաստանի  
առհասարակ չուսանիցին զքաղաքականութիւն ,  
արդարապէս յանդիմաննին 'ի քաղաքագէտ կա-  
նանց : Ոչ ակաքէն մեծատարած կայսրութիւն  
Հնդկաց երբեմն քաղաքագէտ հանճարով Հայոցս  
կուսակալութիւն քաղաքագէտ հանճարով Հայոցն  
Նուրար Փալյաչ կառավարի և բարեկարգի : Ոչ ահա  
'ի դուռն Օսմանեան Գետութեան երեւելի են 'ի  
քաղաքագէտս վսեմ . Դրիգոր Օտեան , Ստեփան  
Փալյաչ Արամեան , և Դամիթ Փալյաչ , յորոց յայտնապէս  
երեւի թէ հանճարն Հայոց կարէ քաղաքագէտ լի-  
նել . որչափ եզեւ Պիղմարքին և Մեթեռնիկին .  
եթէ ըստ արժանւոյն մշակեսցի :

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՕՏՈՐ ԱԶԻՆՍ ։ ՇԱՀԱ-  
ԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

## ՅՈՂՈՒԱԾ Ա.

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՕՏՈՐ ԱԶԻՆՍ։

1. Մերիլ մարդկան ՚ի զանազան Նահագետա-  
կան ցեղից, յանդիմադրելի վերին հրամանէն բռնա-  
դատիլ ազգի մարդկան խօսել տարորոշ լեզուաւ։  
ընդ նոսքն կրօնից, դաղավարաց, դաստիարակու-  
թեանց, զգացմանց, կարծեաց և համոզմանց տար-  
բերութիւնք, հեռաւորութիւնք վայրաց և ան-  
համաձայնութիւնք կամաց և խորհրդոց վիճ մեծ՝  
անջրպետ տարածիդ՝ խորականութիւն անկարկատ  
բերեալ ՚ի մարդիկ՝ բաժանեցին զցեղս ՚ի ցեղից,  
անջրպետեցին զազդս յազդաց, և հեռացուցին  
զթ ադաւորութիւնս ՚ի թագաւորութեանց։ Արդ՝  
ըստ որում իմաստունք և զօրաւորք աշխարհիս այ-  
սորիկ զրուն արմատս այսչափ խորականութեանց  
չկարեն երբէք արմատախիլ բառնալ ՚ի միջոյ, տստի  
չկարեն երբէք ազգ ընդ ազգի համազոգել և  
ծուլել զնոսա ՚ի մի մարմին ազգայնութեան, և կո-  
չել զնոսա աշխարհաքաղաքացիս։ Զի թէպէտ իւ-  
րաքանչիւր ազգ ՚ի ներքոյ ծանրակշիռ պատժա-  
պարտ դիպուածոյս անկեալ հեծէ հառաչէ։ սա-  
կայն դարձեալ մէն մի ՚ի նոցանէ տեհնչայ, զի տմե-  
նայն ազգ երկրի միասցին ընդ ազգայնութեան  
իւրեանց և խօսեսցին զլեզուս իւրեանց։ Այսմիկ

վիավագին ոչ միայն ազգք մեծք և երեւելիք այլ և ազգք սակաւաթիւք և աննշանք, որոց լեղուն և ազգութիւն չէ այնչափ յարգի և երեւելի առաջի հանուը ազգաց :

2. Զինացիք ոչ միայն ներքին յարաբերութեամբ հեռացան յամենայն ազգաց. այլ ընդ երկար դարս և ժամանակս հատին զկապ արտաքին յարաբերութեանն ընդ օտար ազգիս. զի գեռ ցայտօր ընդդիմանան չթողութ օտարաց կոխել զսահմանս խրեանց : Հըէայք, Պարսիկք և այլք խորեցին չուտել զկերակուրս այլոց ազգաց. բայց իբրեւ այլ վաճառական արտաքին յարաբերութեամբ հազիւ հազ առնէին տուր և առ ընդ օտար ազգու. խոտելի խորականութիւնս այս համարեցին նոքա 'ի տեղի սրբութեան, հայրենասիրութեան և ազգասիրութեան. զի զօտարազգիս համարէին որդիս պղծութեան և կորստեան, խոկ զինքեանս որդիս Աստուծոյ և սրբութեան : Խիթային յանձինս. զի եթէ կերիցեն զկերակուր օտարաց, օտարանան 'ի հաւատոյ և 'ի հայրենեաց խրեանց: ինակեալքն 'ի Հայաստան՝ Հայ հաւատացեալք, և մանաւանդ կանայք նոցա շրմակն զջուրն 'ի յամանէ, յորմէ էարք այլազգին. չուտեն զկերակուր 'ի յամանէ, յորմէ եկեր օտարազգին. և եթէ տեսանիցեն զոք որ անխատիր կենցազավարիցի ընդ այլազգիս, ուտիցէ և ըմպիցէ 'ի յամանէ նոցա, ասեն կանայք զնմանէ թէ շնորհք մեռնի և քրիստոնէութեան հեռացեալ են 'ի նմանէ: ի կանոնագիրս մեր յետ այլ և այլ խորական օրէնս պատուիրելոյ, ասէ «Եթէ ոք ննշցէ ընդկանայս այլազգեաց, 7 ամ արտաքոյ եկեղեցւոյ,

և երեք ՚ի ներքս պահօք և աղօթիւ.ք ապացառաց  
ըեսցէ»։ Թերեւս խորականութիւնս յոյժ խոտելի  
երեւեսցի յաշս բանասիրաց, բայց յաշս հայրենա-  
սիրաց ոչ այնպէս. վասն զի աղդ.ք որ առաւելուերտ  
պահիցեն զիստրական օրէնս նախնեաց իւրեանց,  
այնչափ միարան և աղդասէր եղեն յինքեանս, ան-  
խառն և անարատ պահեցին ազգայնութիւն իւր-  
եանց ՚ի վերայ երկրի. որպէս ջինացի.ք, Պարսիկ.ք  
Հրէայ.ք և Հայ.ք. իսկ որք ներքին և արտաքին  
յարաբերութեամբ անխափիր վարեցան, զհնութիւն  
և աղդութիւն իւրեանց կորուսին, որպէս Ասորի.ք  
և այլ.ք :

Յ. Բայց արդ՝ պարս է մեղ միայն ՚ի յարտաքին  
յարաբերութիւնս աղդաց այնպիսի իմաստու-  
թեամբ կենցաղավարել, որպէս վարեցան և վարեն  
ընդ միմեանս աղդ.ք յառաջադէմ և իմաստուն.ք :  
Ոչ ապաքէն իւրաքանչյուր աղդ.ք, որք բնակեալք  
են ընդ ամենայն երեսս երկրի ցանկանալով ցանկան  
զամենայն մեծութիւն, զօրութիւն, զիշխանութիւն,  
զհարստութիւն աստելից, և զհանրահռչակ համ-  
բաւս բարեաց մաննաւորապէս աղդի իւրեանց սե-  
մականել՝ յորժամ առնիցեն ընդ նոսա յարաբերու-  
թիւն. իսկ մեք ընդ հակառակն բաղում անդամ  
տամ.ք զնոսա օտարաց, յորժամ առնիցեմք ընդ նոսա  
յարաբերութիւն և բարեկամութիւն. Եթէ միջիւն  
ունդ ՚ի բերան սխալմամբ երթիցէ ՚ի բոյն այլ  
մըջմանց. այլք իբրեւ օտար զունդն ՚ի բերանոյ  
նորա յափշտակեն և զնա խեղդամահ առնեն. նոյն-  
պէս մեղուն եթէ զնիւթ մեղեր բարձեալ սխալմամբ  
մոտանիցէ ՚ի փեթակ այլոց մեղուաց. այլք խայ-

թելով սպանանեն զնա : վասակ մինչդեռ զմեծութիւն և զհարստութիւն չայոց 'ի գուռն Պարսից տարեալ պսակաց և վարձուց անկնկալէր . 'ի նոցանէ 'ի բանդ և 'ի մահ դատապարտեցաւ : ի ներկայ դարս բազումք 'ի մեծամեծաց մերոց փութացին տանել 'ի տունս այլոց զհարստութիւն իւրեանց և զմեծութիւն աղդին, բայց 'ի նոցանէ անկան վիրաւոր և մեռան . Մկրտիչ ձեզայիրեան դպատիւ, զհամբառ, և զհաւատարիմ ծառայութիւն 'ի փեթակ այլ մեղուաց տանէր, մինչեւ խայթեալ և կողողաեալ 'ի նոցանէ՝ մեռաւ 'ի յաղքատութեան : Խակ Պօղոս պէջ Տատեան յետ այնչափ մեծամեծ վաստակոց և հաւատարիմ ծառայութեան տարաշխարհիկ եղեալ՝ մեռաւ յօտարութեան :

4. Օտարազգիք երկու բնչ խորհին վասն մեր . նախ ջանան զհարստութիւն մասնաւորաց և աղդին հանել 'ի ձեռուց մերոց . երկրորդ իրրեւ նախանձարեկ կամին խոչ յարուցանել ընդդէմ յառաջադիմութեան աղդին . ուստի իրրեւ արթուն և զդաստ զդուշանալ պարտիմք անձնական և սեփական հարստութեանց ազգայնոցս չմատնել զնոսա 'ի ձեռու օտարը յափշտակողաց իրրեւ աւար : Ե ուրեք զի օտարազգիք յօժարամիտ երեւին տալ յառաջադէմ հանճարաւորաց մերոց պատիւ, պաշտօն և մեծութիւն . սակայն խոհական իմաստութեամբ զդուշանալ պարտիմք 'ի չարանախանձ դարանակարաց նոցա, որք շուրջ պատեալ են զօտարազգի միապետոքն . ուստի միշտ լաւագոյն է զիսոնարհ պաշտօնա ընդունել 'ի ձեռուց ազգայնոց և մեծաւ ջանիւ աշխատիլ 'ի պայծառութիւն աղ-

գին և 'ի շինութիւն հայրենեաց , քան 'ի ձեռաց  
 օտարաց ընդունել զրաբձր պաշտօնս և չկարել օդ-  
 նել և բարերարել հայրենեաց . այլ յակամայիցու  
 ընդդէմ խղճի իւրոյ գործել 'ի վնաս ազգի իւրոյ ,  
 զի մի երեւեսցի կասկածաւոր , որպէս տեսանեմք  
 հանապաղօր : Արդ՝ Յովսէփ եղեւ վորսարքայ ար-  
 քային Եդիպատացւոց , բայց 'ի սէր տան հօր իւ-  
 րոյ խանդակաթ գոլովկ կարող եղեւ ազատել զհայր ,  
 զեզբայր իւր 'ի սովալլուկ տառապանաց , և զբո-  
 վանդակ ընտանիս և զծառայս տան հօր իւրոյ կե-  
 րակը ել 'ի սովու , և առնել վնսսա մեծարուս ա-  
 ռաջի իշխանացն Փարաւոնի : Յորժամ Դարեհ ար-  
 քայ զարմացեալ 'ի վերայ իմաստութեան Զօրաբա-  
 րէլի , ասէ՝ խնդրե՛ա յինէն զպատիւ և զմեծութիւն  
 զի տաց քեզ . նա վասն անձին ոչ ինչ խնդրեաց ,  
 այլ խնդրել խնդրեաց զազատութիւն ազգի իւրոյ  
 'ի գերութենէն , զշինումն տաճարին Աստուծոյ , և  
 զկանդնումն պարսպացն Երուսաղէմի : Եթէ այսու-  
 խանդակառ խորհրդով բարձրանալ կամիս և դու-  
 առաջի օտարաց , բարի է յոյժ , և միշտ ընդունե-  
 լի առաջի Աստուծոյ և մարդկան . իսկ եթէ 'ի  
 շահ , 'ի պատիւ , 'ի մեծարանս անձինդ , և 'ի յօդուտ  
 օտարաց մեծասցիս . զինչ օգուտ , յորժամ զանձդ .  
 և զօտարս միայն շահեսցես . իսկ զադդ . և զընտա-  
 նիս քո տուժեսցես և զրկեսցես . զի յերկրէ հա-  
 ռաւաշնը և աղաղակ նեղեալ ընտանեացդ . բարձ-  
 րանան յերկինս , և դու բարձրացեալդ 'ի պաշտօն  
 անկանիս յերկիր . բայտ այնմ թէ և Տեսէ զահարէւշն  
 վերացեալ և բարձրացեալ իբրւու պայտան Լիբանանու . ուշէ  
 և ահա ու էր , ինդրէցէ և ու բարձրաց ունչ նորուն :

5. Արագէս մեք իրրեւ անհտտական մարդիկ ՚ի  
ստիպել հարկին զիջանեմք առնել յարաբերու-  
թիւն ընդ այլ օտարական մարդիկ աշխարհիս թէ  
՚ի ճանապարհի , թէ ՚ի տուր և ՚ի յառ . և թէ  
յայլ զանազան գործս հարկաւորս , որք պիտոյա-  
նան մեղ : Նոյնպէս Հայք իրրեւ աղդ ՚ի շարս աղ-  
գաց ընդ միշտ կարեն առնել արտաքին յարաբե-  
րութիւն ընդ հանուր աղդս աշխարհիս այսմիկ , յոր-  
ժամ օդուտն հայրենեայն պահանջէ : Բայց ՚ի յա-  
րաբերութեան անդ մի տար զիմառս քո այլում ,  
և մի զօդուտ քո աղդի օտարօտոյ . որպէս օտարք  
ոչ երրէք զիջանեն , զայնոսիկ տալ քեզ : Զորդիս  
մօր քո միշտ նախապատուեցես առաջի օտարաց  
և մեծարեցես զնոսա յոյժ : Ուր հնարաւոր է  
դտանել զջայ ընկեր . չէ պարտ երրէք ընկերա-  
նալ օտարին . ուր հնարաւոր է ընդ Հայս առնել  
զտուր և առ , չէ պարտ դիմել ՚ի դրունս օտարաց:  
Ուր դտանին Հայ մշակք և աշխատաւորք , չէ  
պարտ զտարս կանուլ ՚ի վարձու : Ուր դտանի  
Հայ իշխան և դատաւոր , իրրեւ անազդի և մու-  
րացկան չէ պարտ ՚ի դրունս օտարաց դիմել , զի  
ոճիր է ընդդէմ ազդին և հայրենեաց : Ուր դտա-  
նի տաճար և եկեղեցի Հայոց , անդ չէ պարտ  
դիմելն յեկեղեցի օտարաց , զի վերջին դայթակ-  
զութիւն է եղբարց : Ուր կարելի և հնարաւոր է  
խօսիլ ընդ աղդայինս և ընդ օտար աղդիս Հայ  
լեզուաւ , անդ չէ պարտ խօսել օտար լեզուաւ ,  
զի վերջին կործանումն է հայրենեաց :

6. Զիւրաքանչիւր աղդս ըստ չափու արժա-  
նաւորութեան իւրեանց պատուել սեպուհ պար-

տականութիւն է մեղ . մանաւանդ զնոսա , որք  
 զազդո մեր արդեամբք սիրեցին և պատուեցին .  
 բայց որք զմարդկային արժանապատռթիւն առ-  
 ունե կոխեալ միշտ անարդեցին զազդո մեր , և ար-  
 համարհանոք ամբարտաւանից հայեցան ՚ի վերայ  
 մեր . զիա՞րդ կարասցուք զմեծարանս և զապահուս  
 ընծայել այնպիսեաց , որք ՚ի չարամիտ ոխակա-  
 լութենէ գրդուեալ սովորեցան հանապադ զազդ ,  
 զեկեզեցին և զկրօն մեր հայհոյել և անարդել ,  
 զիա՞րդ կարեմք հաշտ սրտիւ առնել ընդ նոսաւ  
 յարաբերութիւն , Հայն ՚ի ընէ չէ սովոր զազդ և  
 զկրօն օտարաց անարդել , բայց յօրժամ աեսանէ  
 թէ ոչ միայն այլադենք , այլ զի դմանք ևս ՚ի բրիս-  
 տոնէից ՚ի Պատականաց և ՚ի Յունաց այլանեն , ար-  
 համարհեն զազդ և զեկեզեցին մեր . յայնժամ՝ ար-  
 դար ցամամիք յանդիմանեմք զնոսա : Ո՛չ ապա-  
 քէն յունական կատաղի մոլեկրօնութեան հետե-  
 ւելով Մարկոս մետրապօղիտ կեսարիայ զանուն  
 շան իւրոյ կոչեաց արմէն ՚ի նախատինս հանուք  
 Հայութեան . զոր լուեալ Գագիկ թ . Հայրենասէր  
 թագաւորն մեր բորբոքեցաւ ՚ի վրէժինոդրութիւն  
 ժայիրէ հայհոյութեան Մարկոսի . ուստի քաջակո-  
 րով թիվնապահօքն դնաց ՚ի կեսարիա , եմուտ  
 ՚ի տուն Մարկոսի և առէ ցնա . լուա զքէն թէ ու-  
 նիս շուն մի զեղեցիկ , կոչեա , զի աեսից : Ստիպ-  
 եալ եպիսկոպոսին կոչէ դշուն յանուանէ Արմէն Ար-  
 մէն , և իբր ամօթահար առէ , դեռ մանուկ է շուն-  
 վասն այն կոչեմք զնա Արմէն . առէ ցնա Գագիկ ,  
 այժմ տեսցես թէ Արմէն է տղայ թէ Յոյն : Յայն-  
 ժամ վաղեցին պատանիք կալան զշուն և զՄար-

կոսն , և եղին 'ի պարկի , բրով պրկեցին զշուն ու  
շարաչար խածառելով զտէրն իւր զՄարկոս՝ սպան՝ ի  
պարկի անդ : Ի 1868 ամի ՚ի Տարօն ՚ի գիւղն Սլկան  
՚ի խթման երեկոյեան Զատկի քիւրտ մի անուն  
ֆնտո մնեալ յեկեղեցի , զնշխար սրբութեան յա-  
փշտակեալ բռնի՛ կապէ ՚ի վիզ շան իւրոյ վասն  
յետին անարդութեան քրիստոնէական կրօնիս :  
Ոչ միայն Հայք հագւով Գագիկ թագաւորին ,  
այլ և համօրէն քրիստոնեայք պարտ են վրէժ-  
ինդէր լինել ամբարիչա սճրագործիս , բայց չե-  
ղեն : Արդ ՚ի 1830 ամէ , մինչեւ ՚ի 1874 ամն թէ  
որչափ վանօրայք , եկեղեցիք կաղոպտեցան և պըղ-  
ծեցան ՚ի յանօրինաց , արդէն գրեալ են ՚ի տա-  
րեգիրս ազգային :

Դ . Քաղաքակիրթ տղթք խատիւ պահանջեն  
զհատուցումն ՚ի նոցանե , որք դոյզն ինչ զազդ-  
ե զկրօնի իւրեանց անարդէն , և կարի իրաւամբ ,  
զի եթէ վասն վորունց չխնդրեացեն զվրէժ , ծայ-  
րայեղյանդ գնութեանց ասպարէղ բանան առաջի  
նոյա . ուստի որ լոէ ընդ դէմ անարդանաց ազ-  
դին , չէ ազգասէր . և որ լոէ ընդ դէմ հայհոյա-  
նաց կրօնի իւրոյ , չէ կրօնասէր և աստուածասէր :  
Նախ պարտ է բողոքել յատեան իշխանաց և դա-  
տաւորայ , որոց պարտ է ինդրել զվրէժ ամենայն  
անարդանաց վասն անդորրութեան ժողովրդոց .  
ապա թէ ոչ ժողովուրդն ինքնին լուծանէ զվրէժ  
ազգի և կրօնի իւրոյ : Արդ՝ սրակէս չէ ներելի ազ-  
գայնոց մերոց ՚ի տարապարատոց անգոսնել զազդ-  
ե զկրօն այլոց . նոյնպէս օտարաց չէ երեք նե-  
րելի զազդ և զեկեղեցին մեր անարդէլ և հայհոյել ,

ապա թէ ոչ, ընդ այնպիսիս հաց ուտել և յարաբերութիւնս առնել կարի գժուարին է :

8. Առաքեալն պատուիրէ առ արտաքինս իմաստութեամբ գնալ, այն է իմաստուն խորհրդով և գործով, վաեմական ընթացիւք և պատուով երեւիլ պարտ է մեզ առաջի օտարաց . վասնդիներքին և արտաքին բարեձեւութիւն անհատից զփառս և զպատիւս ազդին յաճախէ առաջի օտարաց, որոց տեսեալ զվեմական ընթացյս 'ի վերայ մասնաւորաց, զայն ընդհանրութեան ազդին վերածելով զյարդանաց գաղափարս մնուցանեն առ համօրէն ազդն : Խակ եթէ ոք 'ի մասնաւորաց իբրեւ անարդ, անկարդ, և անբարոյական երեւեսցի առաջի օտարաց . ոչ միայն անձին իւրոյ անարդութեան լինի այնպիսին առիթ . այլեւ զյութիւն ազդի իւրոյ առնէ հաղորդս անպատւութեան իւրոյ զի ասէ առածն « ԱՇԻ իւնն ՆԵՒ չեւ անուն էտարէ » :

## ՅՈՒՌԻԱԾ Բ.

ՇԱՀԱԲԵՐՈՒԹԻՒՆ :

1. Որպէս մարդն 'ի բնէ հետամուտ եղեւ ապահովել զշահ անձին իւրոյ . նոյնպէս ամենայն ազդք և ազդն.ք 'ի բնէ սովորեցան երթալ զհետ բարոյական և նիւթական մասնաւոր շահուց ազդին իւրեանց . զի մէն մի 'ի նոցանէ ջանահնար լինի զշահ և զօդուտ ազդի իւրոյ նախադաս համարելքան զմիւոյն և զմիւոյն : Վայրենիք իբր ընազդմամբ վարեալ՝ զշահ անձանց և զհայրենեաց հոգացին . խակ քազաքակիրթ՝ գիտութեամբ աշխատու-

թեամբ և պէսպէս արուեստիւ ապահովեցին զշահ  
անձանց և զհայրենեաց իւրեանց : Որպէս 'ի դրու-  
նըս տան քռ , նոյնպէս 'ի դրունս աղդային դեր-  
դաստանի քռ կաց'ո պահապանս . զի մի ճարտարք  
աշխարհի մոցեն 'ի ներքս և զամենայն ներքին և  
արտաքին հարստութիւն քռ աւարի առեալ՝ տար-  
ցեն յաշխարհ իւրեանց , մեծասցին և զօրասցին .  
իսկ դռ աղքատասցիս և անմտարար վարեսցիս  
'ի ծառայութիւն օտարաց :

2. Ցնտեսագիտութիւն ըստ ինքեան պահանջէ  
զամենայն դրամական և զկալու ածական հարստու-  
թիւնս աղդին դնել 'ի ներքոյ ապահովութեան և  
պաշտպանութեան անխարդախ և հաւատարիմ ան-  
ձանց , որք փութասցին ըստ քանքարաշահ ծառա-  
յին կրկնապատկել զաւանդն աղդային , զի 'ի  
տեառնէ կոչեսցին աղնիւ ծառայ բարի և հաւա-  
տարիմ . . . : իսկ եթէ ոք զաւանդն աղդային  
իրբեւ անհաւատարիմ փոխանակ շահելոյ ծածկէ  
կամ գողանայ կամ գողանալ տայ , կոչեսցի 'ի  
Տեառնէ և 'ի ժողովրդենէ ծառայ չար և վատ և  
իրբեւ զդողն Յուդայ արհամարեսցի . և այլ եւս  
մի ' կոչեսցի այնպիսին 'ի պաշտօն աղդային : Այլ  
աւա՛ղ աւա՛ղ աշայս որ տեսանեմ , զի դրեցի եւ  
զայսոսիկ յայնպիսում ժամանակի , յորում ոչ մի-  
այն 'ի վանօրէից մերոց զտուրս սշխարաց և տասա-  
նորդական հարկս բռնի պահանջեն . ոչ միայն զշար-  
ժական և զանշարժ կալուածս եկեղեցեաց . այլեւ  
զսրբազան անօթս տաճարաց 'ի տումարի դրոշմեն  
և որպէս զտունս աշխարհիկ արանց դազատ եկեղե-  
ցին արկանեն ընդ հարկօք և տուգանօք . իսկ կը-

Ղերք, իշխանք և ժողովուրդք մեր սառնասիրտ անտարբերութեամբ հայեցեալ՝ վերայներ, քին սեփական յագուակութեանցու տակաւին չմիապան պաշտպանել զներքին շահս ազդային սեփականութեանց:

3. Զգիտիցե՞ս արդեօք, թէ՛ յորժամ օտարազգին ողջոյն տայ քեզ, չէ երբէք ձրի և առանց շահուց ակնկալութեան . զի ազդք, որ խառն բնակեցան ընդ մեզ, և որք շուրջ բնակեցան դմեօք, յամենայն դէպս և յանդէպս խնդրեցին զշահս անձանց և զօդուտ ազդայ խրեանց : Այնպէս ազդք որք բնակեալ են ՚ի տար աշխարհս, միշտ զիտու, զշահս և զօդուտ անձանց և հայրենեաց խրեանց խնդրեն . մի՛ կարծիցես երբէք թէ՛ ՚ի նոցանէ ոք յոժարեսցի սակաւ ինչ ձրի չսորհը, օգնութիւնս և շահս մատուցանել քեզ և ազդի քում առանց տասնապատիկ մեծի շահուց ակնկալութեան : Արդ՝ ըստ որում ՚ի ներկայ դարս չիք ինչ թանկագին և նուիրական քան զշահասիրութիւն խրաքանչիւք ազդայ, զոր քաղաքական իրաւաբանութեամբ արդ արացուցանեն . ուստի Հայք այլ ևս Նահապետական պարզութեամբ և անշահասիրութեամբ զկարեն երբէք կեալ և կենցազավարել յաշխարհի իրբեւ ազդ և ժողովուրդք . զի օտարազգին եթէ չունիցի հինգ դահեկանի ակնկալութիւն ՚ի մէնջ, մի դահեկանի շահ և վարձք զկամի տալ մեզ : Իսկ Հայք բազում անդամ առանց երբէք շահու ակնկալութեան՝ շահս բազում ցուցանեն օտարաց, կամ եթէ ունիցին միոյ դրամի ակնկալութիւն, տասն զրամի շահս հասուցանեն օտարաց :

է. Բազում՝ անդամ՝ ի մէջ քաղաքակիրթ աղջաց վասն դոյզն ինչ շահու ծաղին մեծամեծ խռով վուժիւնք և պատերազմունք . որպէս յանցելում ամի վասն բարոյական լիոքը ինչ շահու եղեւ սոսկալի և արիւնըուշտ պատերազմ՝ ի մէջ գաղղիացոց և Գերդանացոց : Սոյնպէս եթէ գաղղիանկատեսյէ թէ Անդդիա և այլք Կ վսաս շահուց խրոց առնէ պատրաստութիւն ինչ կամ շարժումնեւ, իսկոյն պատերազմ հրատարակէ քնդդէմ նորա . Եթէ միոյ միլիոնի վեսան նկատեսյէ, տասն միլիոն դրամի, և միոյ միլիոնի զօրաց դռհողութեան շմայէ և շնդնէ . վասն զի կարէ կասկածիլ թէ ներկային միոյ միլիոնի կարուստ կարէ ապագային տասնամյասիլ բայց մարդարատիլ . ուստի այնշատի հարստութիւն և բազմութիւն զօրաց առ ովնչ համարեալ՝ պատերազմի . որոյ վախճան յաղթութիւնն է կամ պարտութիւն . և այսպիսի շահասիրութիւնն կոչի ծայրայեղ աղահութիւն, մարդակորոյս և հոգեկարոյս արծաթմիրութիւն :

5. Արդ՝ անսահման շահամոնն թէ անհատ իցէ և թէ աղդ, միշտ պարաւելի է, զի առաջին վասն կոյր շահամութեան զամենայն բարոյական և զիւթական շահս աղդի և հայրենեաց խրոց առ ուն կոխէ վասն անձնական դոյզն շահու, որովք Կ համարոց և ի կարդէ համազդեաց ինքնին արտաքս անկանի . իսկ երկրորդն վասն անհագ աղահութեան զօրէնս մարդկութեան և զիրաւունս ամենայն աղզաց առ ոսն կոխեալ՝ դահիճ լինի կենաց համայն աղդաց առ ոսն կոխեալ՝ դահիճ լինի կենաց Աղջքանդը՝ Աղջքանդը, Անկ-թէմուր,

և ձէնկիոլ խան , որք վասն շահու դաշխարհ արեամբ մարդկանց ողողեցին : Խոկ անհատ շահամոլք Կ մէջ ազգին նմանին Յուղայի , որ զջէր , զվարդապետ , և զԱստուածն իւր վաճառեաց ընդ երեսուն արծաթի . նման է Կիրակոս չերեցին , որ զբանալիսն Անոյ վասն անիրաւ մամոնայի վաճառեաց Յունաց : Ահա այսպիսիք են ընտանի թշնամիք , եօթնապատիկ լիսասակարք քան զօտարազգի շահամոլս . զի ոչ երբէք խղճեն զպատիւ , զմեծութիւն , և զհարստութիւն ազգային վաճառել օտարաց վասն գոյզն ինչ անձնական շահուց իւրեանց :

6. Ոչ ապաքէն ճշմարիտ հայրենասէրն ոչ միայն միշտ զգուշանայ զբարոյական և զնիւթական շահս ազգին չմատնել 'ի ձեռոս օտարաց . այլ փութայ վասն պահպանութեան նոցա՝ զամենայն անձնական շահս իւր զոհել և հրաժարել յամենայն ընչից իւրոց . զի ինչք հայրենեաց յապահովի կացցեն մեասցեն : Հայրենասէրն յորժամ տեսանիցէ թէ սեփհական կալուածք վանօրէից , եկեղեցեաց մատնին 'ի ձեռոս այլազգեաց , զորս եթէ այլ իւրք հնարիւք չկարէ ազատել . փութայ զամենայն ինչս իւր վաճառել տալ և ազատել զսեփհականութիւնս ազգին : Եթէ տեսանիցէ զոմանս յեղբարց իւրոց անկեալ 'ի յետին ծառայութիւն կամ 'ի գերութիւն , հատուցանէ մինչեւ ցյետին նաքարակիտն և գնէ զազատութիւն եղբարց իւրոց . եթէ տեսանիցէ թէ սուր թշնամոյն շողայ 'ի վերայ բնակչաց հայրենեաց իւրոց , և չկարէ զայն փրկել յետին լուսայիւն , անձն և արիւն չխնայէ դնել 'ի վերայ եղբարց . զի հաւատայ եթէ ինքն իրրեւ զհատն

ցորենոյ ոչ անկեալ յերկիր մեռանիցի , արդիւնս  
բաղում ոչ առնէ . իսկ եթէ մեռանիցի արդիւնս  
բաղումն առնէ : Որպէս վարդան յետ գնելոյ զա-  
մենայն ինչս իւր վասն աղասութեան եկեղեցւոյ  
և հայրենեաց . և տեսեալ թէ չեն բաւական  
ինչքն , յաւել գնել զանձն և զարիւն իւր ըստ Յի-  
սուսի փոխանակ բաղմաց :

7. Մովսէս խրատ ետ դստերացն Խարայէլի զի  
՚ի գրակցէ և յերդակցէ իւրեանց՝ ՚ի կանանց Ե-  
ղիպտացւոց ՚ի գրաւի առցեն զծանըադին զարդո-  
նոցա . առին իւրաքանչիւրք և զարդարեցան , և  
ասեն «Երնիշուր Երիշ առաջ հանուպարհ շննիշուր Տեռա-  
ւ գործուր առ յեւ» . բայց յետ անցանելոյ նոցա ընդ-  
ծովն կարմիր , ոչ եւս դարձան յետս և ոչ դարձու-  
ցին զզարդո առ տեարս իւրեանց : Խորագիտական  
դործն Մովսիսի արդարացուցանէ իմաստուն ՚ի զիրս  
խմաստութեան իւրոյ ասելով «Իոհաննի առաջ կողուու-  
ցին շմբուրիւր , և կառաւուրիւրին շննուն ու սոսքը ,  
Տե՛ր» : Զայս արար Մովսէս . զի ետես թէ աղդ իւր  
ընդ երկար տաժանեցաւ ՚ի դործ ծառայութեան  
Եղիպտացւոց , որք հանդերձ ֆարաւոնիւ խսպառ  
զլացան հաստոցանել զվարձն որդւոցն Խարայէլի .  
ուստի Մովսէս հնարեաց այսպիսեաւ կորզել զվարձն  
աշխաստութեան իւրայնոց ՚ի ձեռաց Եղիպտացւոց :  
Այսնպէս առաջնորդք մեր և զվաստորք ժողովրդեան  
իրաւունս ունին կորզել հնարիւք զվարձն ժողո-  
վորդեան իւրեանց ՚ի ձեռաց ազգաց , որք ՚ի բա-  
զում ամաց հետէ յետ գրաւելոյ զհարաստութիւն  
աղդին՝ բռնարար կողոպտեցին և չարչարեցին զոր-  
դիս Հայկայ , զի եթէ չիցէ հնար յայտ յանդ իման

պահանջել, օրէն է մեծաց և կոռքունց դժնարս հնարելով ստանալ :

8. Մասն մի յիւնիաբնակ ժողովրդոց գոլով երկաթագործք, և վաճառականք երկաթից և պայտից, զորս ընդ ժամանակս ժամանակս բարձեալ ՚ի վերայ դրաստուց տանեն ՚ի մերձաւոր և ՚ի հեռաւոր քաղաքս առ ՚ի վաճառել անդ՝ սակայն լեռնաբնակ բարբարոսք երբեմն տեսեալ թէ սակաւուորք են կարաւանք Ռւլնեցւոց, յարձակեալ յափրշտակեն զգբաստու ՚ի ձեռաց նոյա . ուստի իշխանք Ռւլնեցւոց նախ յղեալ հրաման՝ սիրով ինդրեն ՚ի յափշտակողաց զգբաստու. Եթէ համառեսցին առ ՚ի չոտ, բողոք բառնան առ տեղական կառավարութիւն . բայց եթէ սա անհոգ իցի ՚ի ձեռու բերել և առաքել առ Ռւլնեցին զգբաստունոյա . յայնժամ դումարտակ կազմեալ երթան ՚ի սահման յափրշտակողացն, և վոխանակ մրոյ դրաստու զերիս և զինէն առնուն բերեն յանձնեն առ տեարս դրաստուցն, և զիրաւացի զարարս իւրեանց ծանուցանեն կառավարչին իւրեանց թէ գտաք մեք զգբաստոն մեր զյափշտակեալն : Ահա դործ քաջութեան և արդարութեան . ահա դործ յոյժ յարմարաւոր այժմեան դրից և ընթացից աղգայնոց մերոց . զի եթէ հարատահարեալ գտաւառացի եղբարք մեր ըստ Ռւլնեցւոց գուն գործէին և հնարս հնարեէին փոխանակ մրոյ զգբաստու կամ ընդ ո՛ և իցէ յափշտակութիւն զերիս և զինդու ՚ի ձեռու բերել . յայնժամ ոչ ոք համարձակեր զգբաստու և զինչը Հայոց յափշտակեալ, ոչ ՚ի տանց, ոչ ՚ի ճանապարհի և ո՛չ ՚ի յանդի :

1. Բազմութիւն վաճառականաց և արհեստուուրաց գանձարանն են աղդային հարստութեանց, որք միշտ թէ ՚ի հեռաւուրաց և թէ մերձաւորաց ժողովին զայնեկանութիւնն բարյմանանակն ՚ի յաղդախրեանց . զի է վաճառականն, որ զրերս և զտարագա հեռաւոր աղդաց բերեալ ՚ի հայրենիս իւր՝ նոքը շահի և հարստանայ, և է վաճառականն, որ զրերս բուն հայրենեաց իւրոց տարեալ յօտար աշխարհ՝ վաճառէ, հարստանայ և հարստայուցանէ զհայրենակիցն իւր : Հին վաճառականք հայտառանի զվայրուն կերպասեղինս և դկտաւեղինս ՚ի Հնդկաց աշխարհէն բերեալ՝ ոչ միայն վաճառեին հայրենակցաց իւրեանց, այլ և տարեալ ՚ի զաղեստին և . ՚ի Յունաստան վաճառեին օտարաց : Նոյնողէս Հայ վաճառականք զափկինն Սոփերայ, զաղ, դիաշնդեղ, զախար, զերինս, զնժոյդ ձիանս, զրուրդ . և զմորթ անամենոց ցամաքայինն և դեռագնաց ճանապարհուտանէն ՚ի հեռաւոր աղդս, և վաճառելով զրագում հարստութիւնն բերեին գանձէինն ՚ի տունս և ՚ի հայրենիս իւրեանց : Զայտաննէ լիովին տեսայես ՚ի Հնախօսութեան Ա. հատոր, յերես 207. ՚ի Գլուխ վաճառականութեան հայտառանեայց :

2. Հանճարեղ և աշխարհաշէն կայսերք ծանեան զմեծ յաջողակութիւնն Հայոց ՚ի վաճառականութիւն . ուստի Հնարիւք և պատերազմաւ զՀայս ՚ի ձեռաց միմեանց կորդեալ՝ տանէին յաշխարհ իւրեանց առ ՚ի ծաղկեցուցանել զվաճառականութիւն:

Աւստի յորժամ մեծն գետրոս ՚ի սկիզբն ժՈ.թդ. դարուն ամենայն ճգամբ զհետ եղեւ յառաջ վարել զարուեստս և զվաճառականութիւն ՚ի Ռուսաստան , մեծառ ջանիւ աշխատ եղեւ զչայ գաղթական բերել և բնակեցուցանել յերեւելի քաղաքապետութեան իւրոյ . նոյնպէս յաջորդք Պետրոսի . Բ. կատարինէ և այլք միշտ ջանացին զչայս իրաժնէն Պարսից , և յօսմանեանց տանել յաշխարհ իւրեանց : Ռուսաստան առ ինքն ժողովելով զչայս ՚ի սակաւ առարս ետես դշահեկանութիւնն նոյցա . զի նոքա յետ հաստատելոյ անդէն զբնակութիւն իւրեանց , սկսան նոր կենդանութիւն տալ վաճառականութեան Ռուսաց . մանաւանդ ՚ի դաւառան կաւկասեան : ի մեծամեծ քաղաքս բացին զդործարանս մետաքսի և աղնիւ կերպաստոց . և զճարտարութիւն մտաց և մասանց իւրեանց ցուցին օտարաց : Նոյնպէս Սուլթան Մէհմէտ Բ. յետ տիրելոյ Բիւզանդիոնի , և Սուլթան Սէլիմ Ա. յետ հանելոյ զչայստան ՚ի ձեռաց Պարսից՝ զրադաւմ արտեստառորս և վաճառականս ՚ի Դաւրէյ քաղաքէ և յայլ քաղաքացն Հայաստանի բերին բնակեցուցին ՚ի Կ. Փօլիս առ ՚ի ծաղկեցուցանել զարուեստս և զվաճառականութիւն . որպէս տեսանի ցայսօր :

Յ. Պատմութեամբ խելամուտ արարից զհայս թէ յորում աշխարհի բազմացան և յառաջադէմ եղեն արուեստառորք և վաճառականք . անդ բազմացան ոսկին , արծաթն և հարաստութիւնք . զի ուր բազմացան կատարեալ և գեղեցկաստեսիլ գործք արտեստականաց , անդ գիմեցին ոտք վաճառականաց յամենայն աշխարհաց , և անդ թողին զմեծ

մասն վաստակոց իւրեանց : Ահա Անդդիա , Գաղզ-  
դիա , Ամերիգա և Զին աշխատ եղեն պատրաս-  
տել զնիւթու վաճառականաց . ուստի այժմ ոսկին  
և արծաթն իրբեւ զվատակա ուղիսօրէն յամենայն կող-  
մանց հսկին յաշխարհու նոցա և ժողովին ՚ի դոդո  
նոցա : Խոկ Հայադդի ճարտար արուեստաւորք և  
վաճառականք գործվ ընդ Եշխանութեամբ զանազան  
պետութեանց , մանաւանոր պարսկարնակք և թուր-  
քարնակք , որք բազում անգում հարստահարեալ  
և կողոպեալ յաւազակաց՝ չկարացին ընդլայնել  
զգործս վաճառականութեանն . ուստի անկան ՚ի  
մնանկութիւն , որով աղքատացաւ Հայաստան : Եթէ  
պետութիւն զատուր և առ և զգործս վաճառակա-  
նացն Հայոց յերաշխի առցէ . ոչ ապաքէն նոքա  
արագ յառաջադիմեն , հարստանան , և ոչ թողուն  
դշահս աշխարհի իւրեանց երթալ ՚ի հեռաւորա :

Կ. Վաճառականութիւն որ ՚ի հնումն զանազան  
փորձիւք և վնասիւք ուստինեին մարդիկ , մինչ դրա-  
ւոր օրինօք և հրահանգօք չէր կանոնաւորեալ ,  
խոկ այժմ գիտութիւն և յառաջադիմութիւն աշ-  
խարհի մասնաւորազէս ինամ տարեալ՝ զօրէնս զկա-  
նոնս և զազայմանս հաստատեալ՝ իրբեւ ուզգեցոյցս  
եղ առաջի վաճառականաց , զորս պարտին ու-  
սանիլ , ՚ի միտ առնուլ , և ՚ի զործ արկանել : Զի  
եթէ հետամուտք վաճառականութեան ոչ վիութառ-  
ցին դոնե ուսանել զթուադիտութիւն , զկրկնատօ-  
մար , զտեսական և զքաղաքական աշխարհազրու-  
թիւն , զեղզուադիտութիւն , զնամնակագրութիւն .  
զգիծս ծովային և ցամաքային ճանապարհաց ամե-  
նայն կողմանց և աշխարհաց . եթէ չդիտիցն զատի

զկարութեաս ամենային հանքային և հեղանիւթիւնաց . նոյնպէս եթէ չունիցին դռնէ հմտութիւն 'ի վերայ տեսական երկրագործութեան , կենդանաբանութեան , և 'ի վերայ ամենային գործոց արուեստաւորաց , որք պատրաստեն զնիւթու վաճառելի իրաց . չէ հնար կոչել զնոսա հմուտ վաճառականս . զի որչափ բնապէս ճարտար իրցի ոք , սակայն հնար է նմա խարիլ և զնասիլ . ոչ միայն այս չափս , այլ և պարտ է նմա գիտել թէ այս ինչ վաճառելի իր յորում աշխարհի կարէ գնել գիւրագնի , և յորում կողման աշխարհի վաճառել կարէ սղադնի և շահել . ահա աստ է խմաստութիւն և ճարտարութիւն ամենայն արուեստաւորաց և վաճառականաց :

5. Գտանին տակաւին յազգս մեր հարուստ և միջակ վաճառականք , որք անդիր և անհաջիւ մի միայն 'ի ճարտարութիւն մոտաց ապաստան եղեալ առնեն վաճառականութիւն ընդ հեռաւորս և ընդ մերձաւորս , արդարեւ սոքա 'ի հնումն բազում անդ գամ յաջողեցան , և սակաւ զնասեցան . բայց այժմ միայն բնական ճարտարութիւն մասց չրաւէ , և եթէ ուսմամբքն չմարդեւոյին , յորով անդամ վնասին և ոչնչանան . և սակաւ շահին : Զի յորժամ ոտք Անդդիացի հմուտ վաճառականաց չէր մուտ գործեալ 'ի Հնդկաստան , գաղթական վաճառականք Զուզայի՛ որ 'ի Հնդկաստան , բնական ճարտարութեամբ իւրեանց զդլիսաւոր վաճառականութիւն աշխարհին գրաւեալ՝ օր ըստ օրէ ճոխանային . բայց յորժամ եմուտ 'ի ներքս անդք ոտք ճարտարարուեստ վաճառականացն Անդդիացւոյ . տակաւ առտակաւ էառ . 'ի ձեռաց Հայոց զյառաջնթացու-

թիւն և ինքն էանց 'ի տեղի նորա և հարստացաւ .  
իսկ Հայք հետ գհետէ աղքատացան և անկան .  
այսպէս արարին Եւրոպացի վաճառականք , յոր-  
ժամ մոտին 'ի թուրքաստան :

Յ. Վաճառական , որ ունի զգբամադլուխ , զհա-  
ւատարիմ դործակատարս և զաղասաւորս , որ 'ի  
մոփ եղեալ է Երբեքք չխարդախել չխարել զյաճա-  
խորդս իւր . ստանայ զհամբաւո , կրկնապատիէ  
զվարկն , առ ինքն ձգէ զբազմութիւն յաճախոր-  
դաց . իսկ որ չունի զայսոսիկ , կորուսանէ զհամ-  
բաւսն , զվարկս և զյաճախորդս իւր , և անկանի 'ի  
մնանկութիւն : Բայց Հայք միշտ եղեն հաւատարիմ  
թէ 'ի տուրս և թէ 'ի յառու . և թէ 'ի սպասաւորու-  
թիւնս : Ուստի պարտին ամենայն զիսաւոր վաճա-  
ռականք Հայոց իբրեւ զհայրենասէրս 'ի սէր աղ-  
դին և հայրենեաց առնուլ իւրեանց զգործակաւ-  
տարս 'ի ճարտար և 'ի գործունեայ պատանեկաց  
և յերիտասարդաց Հայոց . մանաւանդ յաղքատաց .  
ոչ միայն 'ի շահ անձանց և եթ զնոսա 'ի գործա  
իւրեանց հրահանդ եսցեն . այլ իբրեւ հայր ինսամ  
ունիցին 'ի վերայ նոյցա պատրաստելով նոյցա զգբա-  
մադլուխս և զապագայս : Զի եթէ վաճառականք  
մեր և մեծատունք զորդիս օտարաց առյեն ինքեանց  
սպասաւորս , մեղամնչեն ընդդէմ ազգին և հայ-  
րենեաց , և բազմաց անսարդութեան պատճառք  
ինին . զի են բազումք 'ի սրամիս 'ի յաջողակ և 'ի  
գործունեայ պատանեկաց ազգիս , որք չուներով  
դրամադլուխս ցանկան մտանել 'ի ծառայութիւն  
փարթամաց , յորոց ումանք թողեալ զհամազգայինս  
իւրեանց զատարմն ածեն 'ի գործս իւրեանց . այս-

պիսիք առաւել անազորյն են քանի զօտարազգի  
վաճառականո . զի զսակի ընտանեաց խնամ ոչ  
տանեն . յորժամ տեսանեն թէ բարեկիրթ պա-  
տանիք ազդին առ ՚ի չգոյէ գբամազլօի պարտ-  
պին ՚ի գործո անարգս իբրեւ սորուկո , և օտա-  
րամոլութեամբ զգածեալ՝ զանց առնեն զնոքոք ,  
ատելով ատեն զազդն և զհայրենիս և պարտական  
մնան Հայ անուան և արեան : Ա.յլ ես աչօք իմովք  
խակ տերափ զոմանս ՚ի հայրենամբ վաճառականաց  
մերոց , որք ինմամատար եղեն ազդային մանկո-  
տւոյն , մինչդեռ ուստինին նոքա ՚ի դպրոցի , զո-  
րս յետ ուսման իբրեւ զորդիս սիրելիս առին ՚ի  
գործո խրեանց , շահեցան նոքոք , և շահեցուց-  
եալ զնոսա՝ արարին վաճառականո , և մեծի հա-  
րբառութեան տիրացուցին . որոց յիշատակն միշտ  
օրհնութեամբ եղիցի և զովաւթեամբ հոչակեցի :

7. Յորժամ ընկերակցութեամբ կամիս առնել  
զվաճառականութիւն , առաւել սիրելի և ապահով  
է ընդ արենակիցս և ընդ ազդայինս ընկերանայ՝  
որոց միութեան ընկերութեան և հաւատարմու-  
թեան ներքին և արտաքին հանդամնոք և պա-  
րագայք առաւել հոծ և մերձաւոր են միմիանց  
քան ընդ օտարազգաց , որք ամենայն իրօք և հան-  
դամնոք կարեն հեռափ մնալ ՚ի մէնջ և անհաւտա-  
րիմ : Ումանք իբրեւ անփորձ և ումանք վասն փորձ  
փորձելոյ ընկերացան ընդ օտարազգիս , բայց յետ  
սակաւ աւորց մեծամեծ տուժիւք հաղիւ հաղ կա-  
րացին բաժանիլ ՚ի նոցանէ . ուստի ընկերակա-  
նութիւն ընդ համազգայինս է միշտ ապահովա-  
դոյն : խակ եթէ գտցի ոք ՚ի նոցանէ անհաւտա-

րիմ, և չկամիցի կամ չպիտիցէ զօրինս մոներմութեան և հաւատարմութեան յարդել որպէս պարտըն է, նա ինքնին կորուսանէ զարժանիս վասակոց խրոց և ոքատոյ: Վասնորոյ խրատ պատուիրանի տամք երկոցունց կամ բաղմաց ընկերացելոց, մի երբէք խարել խարդախել և ծածկել զվաստակա ընկերութեան 'ի միմիանց, զի որ ծածկէ և ստէ, նման է Ասկիրայի, որ զիէս գանձուց միարանութեան հաւատացելոց ծածկեաց և ստեաց, բայց մահուամբ ելզյծ զվրէժ սառութեան և անհաւատարմութեան խրոյ: Վասնզի որ 'ի վաստակոց ընկերաց գողանայ, ծածկէ և ստէ, արդարեւ 'ի կարդս բարոյական մարդասպանից համարեալ է, եթէ 'ի մարդկանէ չպատժեսցի, 'ի Տեառնէ ընդունի զվատիմն պատուհասի. որպէս ասէ առածն Հայաստանի «Մէ առներ զբու անօքէն զինարէն քառներ յերկուառին»: Եթէ ընկերացար ընդ ումերք յայնմ օրէ զիտասնիր թէ փոխազարձ հաւատարմութիւն ընկերակցաց միշտ բարի միշտ շահաւետ են. և որք պահեն զօրինս հաւատարմութեան, օրհնեսցին 'ի Տեառնէ և գործք ձեռաց նոցա յաջողեսցին նոցա որպէս Հայ վաճառականաց կոսպորայ և Մարիսասայ:

8. Զեղ ասեմ, ձեղ ասեմ վաճառականացդ Հայոց, որք յածիք ընդ ծով և ընդ ցամաք և ասէք «վազէն լընկուառ + յայս անուն + աղու + . . . , Հաճուաւացոււլ շահեցոււ»: Արդ՝ ուր ուրեք և հասանիցեն ուրք ձեր, մի մոռասնիք զադդ և դհայրենիս ձեր. ինդրեցէք իմաստութեամբ և աստուածպաշտութեամբ կեալ յաշխարհի. ուսարուք հեղ և խնարհ եղ-

բայրախրութեամբ և հայրենասիրութեամբ վերանալ  
 'ի վերին հայրենիքն, որոյ վասն ասէ Տէրն ո՞ւ ճան է ու-  
 ռոյսունիկն եքնէց ուն վաճառականի, որ ինդրիցէ հարգաբերիու-  
 թեսկցիս, և գործու մէ պարուսական հարցարիու եքնեալ վաճառ-  
 եաց զամենայն ինչ իւր և ջնեաց զայն հարցարիու : Եթէ մուա-  
 դիր ես 'ի վերջոյ զամենայն ինչս քո վաճառել և  
 դնել զհայրենասիրութեան և զերկնից արքայու-  
 թեան զմարդարիսն . հրաման է քեզ արիութեամբ  
 և արդ արութեամբ այնչափ հարստանալ և ճոխանար  
 մինչ զի կարողացիս զհայրենիս քո և զարքայութիւն  
 երկնից 'ի գնայ առնուլ : Զհայրենիս քո , յորում  
 բնակին բազմութիւնք եղբարց քոց և ազգականաց-  
 յորում տեսանին շէն և կիսակործան բազմաթիւ  
 վանօրայք և եկեղեցիք , զորս 'ի գնոյ առեալ  
 կարեսնոքօք զմարդարիսն արքայութեան քեզ սե-  
 փականել : Արդարեւ Յովսէփի իրրեւ փոխարքայ զհո-  
 գային կալուածու եղիսատացւոց ցորենով գնէր 'ի  
 կալուած Փարաւոնի , բայց ոչ մոռանայր երբէք  
 իրրեւ զվաճառական ցորենով յագեցուցանել  
 զեղբարտ և գնել զընտանիս իւր 'ի սովոյ . ոչ մո-  
 ռանայր զգեղեցիկ և զզարարտ երկիրն զդեսեմ  
 խնդրել և առնուլ 'ի կալուած և 'ի բնակութիւն  
 սոռհմակցաց իւրոց : Առաջին հարուստ վաճառա-  
 կան և սեղանաւոր Ռոշիլտ , որ յաղդէն հրէից  
 բազմիցս խնդրեաց 'ի թագաւորաց տալ զամենայն  
 ինչս իւր և գնել զքաղաքն Երուսաղէմ' և զՊա-  
 զեստին . ահա ծայրագոյն և անզուգական օրինակ  
 հայրենասիրութեան . զոր հարուստ վաճառականք  
 միտին կարեն 'ի դործ արկանել . եթէ ունիցին  
 զսիրտ և զգացումն Յովսէփայ և Ռոշիլտի , զհո-  
 գին և զտենն վարդանայ Մամիկոնէի :

ԿԵՌՆՔ ՍՈՒՐՃՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԻՈՒԹԻՒՆ

## ՅՈՒՂԻԱԾ Ա.

ԿԵՌՆՔ

4. Աստուած կերանք է և պարզեւատու կենաց ամենեցուն : Աստուած սահմանեաց վասն մարմելոյ ամենայն մարդկան առ ժամանակեաց կեանս վարել՝ ի վերայ երկրի : Աստուած դորպի յաւիտենական կեանք, խօստացաւ չնորհել սիրել եաց իւրաց գկեանս յաւիտենականս յետ անցաւոր կենացս : Աստուած իւր արարչագործ խմաստաթեամբ զսկիղըն և զառաւոտ կենաց մերոց ծածկեաց ՚ի մշնջ . քանզի շիք բնաւ ոք ՚ի մարդիկը, որ ետես և գիտաց զյուանակն , զգայաւորելն , զհուգեւորելն իւր ՚ի յարդանդի մօր և զծնանելն ՚ի նմանէ մանսուկ կենաստոր : Ննողք իրքեւ միջոց սուեզծաղործութեան Աստուծոյ արքանեկեն և պահպանեն գկեանս մեր մինչեւ հասցուք յեօթներորդ ամեն . յորում սակաւ ինչ բնազդմամբ հազիւ կարեմք յմանալ զկեալն և զգովն կենաց մերսց բայց յետ ամացս վասն հողածութեամբ պահպանելոց զկեանս մեր՝ հետ դհետէ սասանամք արթնութիւն և դաղափարսց բնդարձակութիւն . զոր օրըստ օրէ բնդ աճել և բնդ հաստատել մարմնական կենաց մերոց՝ աճին և հաստատին ՚ի մեզ մտաւորական կարողութիւնք հոգեկան , որ պահեն իմպաստաթեամբ զմարմին ՚ի վտանգաց և զհու-

գին ՚ի մեղաց : Մինչդեռ եւմք ՚ի պատահեկութեան, զկենացս առնումք զբազցր ճաշակ , և զըրբեշտակային անմեղ հրճուանս և զբերկրանս : Արդյորժամ վարդափթիթ զեղօն կոկն մանկութեան մերոյ ձգտելով ձգտի ՚ի վարդածաղիկ պատահեկութիւն, և անտի ՚ի յառոյգ երիտասարդութիւն, բազմազան արկածս և վտանգս մահուան շորջ գան և սպառնան խամրել զգեղ և զկեանս մերուստի ծնողական արտաքին բիւր զգուշութիւնք, և մերովսանն խակ ներքին բազում ուշագրակթիւնք պիտոյ են մինչեւ հասցուք անվտանգ ՚ի չափ կատարեալ մարդկութեան :

2. Կեանք գեռուածին տղայոց նմանի գեռուարոյս դաշարագեղ ծաղկանց և խոտեզինաց , որք ՚ի խիստ ցրտութենէ խամրին և ՚ի սաստիկ տօթութենէ թարշամին . բայց եթէ ՚ի նոյնս տակաւ առտակաւ սովորեսցին , ՚ի նոյնի ոչ ինչ վնասեսցին : Մանկունք չափաւոր կերակրովք մնունդ առնուն , խակ չափաղանց կերակրովք պէսպէս հիւանդութեանց ենթակային . ծնողք եթէ անփոյթ լիցին փութով չպատուաստել զորդիս իւրեանց մինչդեռ են նոքա երկու կամ երեք ամաց , յանկարծ ՚ի ծաղկէ ըմբռնեալ՝ կամ մեռանին կամ ՚ի գեղոյ աչաց և գիմաց զրկին : ի յանզուշութիւնէ ծնողաց և զաստիարակաց կէսք ՚ի յորդւոց մարդկանէ ՚ի տղայական հասակէն զրկին ՚ի կենացս , ըստ ասից արդի երեւելի բժշկաց . ուստի բազում արթնական զգուշութիւնք պիտոյ են նոցա . զի ասարաժում մահ աղայոց ոչ միայն զծնողս զրկէ ՚ի յուսալից միիթարութենէ խրեանց և ցտաղին հա-

ուաշմամբ տրտմազգեացս առնէ զնոսա . այլ զադր  
և զհայրենիս անդամատէ ՚ի դեռաբողբոջ անդա-  
մակցաց իւրեանց . ուստի ծնողք ոչ թէ միայն  
իրբեւ զհայր և զմայր ծնանիցին և զգուշացին կե-  
նաց աղայոց վասն ինքեանց , այլ իրբեւ զհայրե-  
նասէր գաստիարակօ վասն հայրենեաց ծնանիցին  
զաւակս . պահեացեն զկեանս նոցա ողջս առողջս , զ-  
րացուցեն զարդացուցէն և գաստիարակեացեն  
զնոսա վասն տանց և հայրենեաց իւրեանց :

3. Աղաչեմ դձեզ ո՛ հայկազն պատանիք և երի-  
տասարդք , որք ծնաք , մնաք , և զարդացաք ՚ի  
դիրիս մարց և հարց ձերոց , որք իրբեւ ուշաբեր-  
եալք և դդնացեալք՝ այլ եւս չկարօտիք ինամոց  
և պահպանութեան նոցա , դուք այսուհետեւ իր-  
բեւ ինքնին ՚ի չափ հասեալ՝ ծաներուք զհարկ  
թանդադին կենաց ձերոց . խնայել խնայեցէք կե-  
նաց ձերոց , և հսկեցէք ՚ի վերայ նորա . ջանացա-  
րուք ՚իսկզբանէ կենաց ձերոց միշտ մերժել զան-  
բարոյական կեանս , որ ժունաւորէ զկեանս ձեր ,  
և վաղվազակի մահ բերէ ՚ի վերայ . սիրեցէք միշտ  
զբարոյական կեանս , որ ընդ երկայն աւուրս առնէ  
զամս կենաց ձերոց , վասնք և մեծութիւն յաջմէ  
և յահեկէ . զգուշացարուք ՚ի յերիտասարդական  
ցանկութեանց , որք յուղեն և ասգնապեն զմոլէ-  
կան կիրս ձեր և բազում անդամ երեւակայական  
քաղցրութիւն եղեալ առաջի ձեր՝ հանեն և յա-  
փրշտակեն զկեանս ձեր ՚ի ձէնջ . զի եթէ յեռնուք,  
ուարտիք ըստ օրինացն ամնւանանալ « Զէ լու և ա-  
ճառնանալ ուն զջուանանալ » : Խակ որ չկամիցի ամնւա-  
նանալ , ընդ նմին և չկարիցէ ժուժել , դահիճ լի-



Նի զինաց իւրոց , և սպանանէ զամենայն զայնուսիկ , զորս պարկեշտ ամուսնութեամբ կարէր սպարեցուցանել : Զբազումն տեսի ՚ի սպատանեաց և յերիտասարդաց , որոց պաշտեալ զմովեկան զախարօ իւրեանց , տարաժամ մահուամբ բարձան ՚ի միջոց , և առանց յիշատակի և բարի անուան հեռացան յաշխարհէ . չդիտեմ թէ որ պէս համարս տալոց են զինաց իւրեանց առաջի գարզեւատուողին կինաց :

4. Քանդի չիք ինչ ՚ի կեանս աշխարհիս մեծ և առաջին տուրք բարիք , պարգեւք կատարեալք ՚ի Հօրէն լուսոյ իջեալ առ մարդիկ քան զիեանս մեր , զոր ոչ միայն վասն անձանց մերոց , վասն ծնողաց և ազգականաց մերոց , վասն հայրենեաց և ազգակցաց մերոց ողջանդամ և անտարատ պահել պարտիմք՝ այլ եւս առաւել վասն ամենամեծ փառաց կենսաշնորհին Աստուծոյ , վասն սիրելոյ և օրհնելոյ դիմէրն . որպէս սաղմանէր Դատիթ Շեշտան է , և օրհնեաց դժու և իրաւունք ու օրհնեացն ինչ Զի որք ոչ ծնան , կամ յղացեալ վիմեցան . կամ յետ ծնանելոյ արագ մեռան , նոքա ոչ զլոյս , ոչ զիեանս , և ոչ դիրաշակերտ գեղեցկութիւն տիեզ զերաց կարացին տեսանել . և չեղեն արժանի դիմէրն տիեզերաց օրհնել և փառաւորել « Զէ ու նէ Առեւուլ օրհնեացն դժու Տէր . և ու նէ ոյտ էջանեն ՚ե ու ու այլ ինդանիս օրհնեացն դժու Տէր . որպէս և և այսուհետեւ ճանիսան ձնոյց , ոյտ պատրիսցն զարդարութիւնն ու զայս ասէր Եղեկիս ՚ի գոհացողական ազօթը իւր . զի ետես թէ Տէր չնորհեաց նմա այլ եւս հնդետասան ամս կետը ՚ի կենդանութեան :

Ե. Արդ՝ ըստ որում շեմք անձանց, կենաց և դռայցութեանց մերոց տէր և սկզբնապատճառ. ուստի չունիմք երբէք տիրապէս իշխանութիւն ՚ի վերայ կենաց մերոց կարճել դառուրս նորա . կամ դիւրովի գնալով խզել զկատ կենդանութեան մերոյ . ոչ միայն բարեկիրթ աղդք . այլ մինչ զի բարբարոսք ուստի ՚ի բնական օրինաց չտալ երբէք օրինաւոր թաղումն անձնապանին : Քանզի չնորհեցաւ մեզ յարարչէն ներքին սէր, որով պարտիմք ընդ միշտ սիրել, պահպանել և դարմանել զիեանս մեր մինչեւ տարեալ հասուսցուք զնա ՚ի սահմանեալ կէտ ծերութեան իւրոյ, յորում պարարտացեալք մի աւուրբք և առաքինութեամբ զարդարեալք աւանդեսցուք զմանն հողազանդուած մարմնոյն երկրի և գերեզմանի . իսկ զմանն լուսաճաճանչ հոգւոյն աւանդեսցուք ՚ի ձեռն Աստուծոյ, որ ետ զնա . յուսով և հաւատով սպասեցուք աւուրին մեծի, յորում եկեսցէ Տէր բիւրաւոր հրեշտակօք և սրբովք առնել այցելութիւն իւրոց ծառայից, որք աղապակեն առ նա ՚ի տուէ և ՚ի դիշերի և երկայնամիտ լինին . յայնժամ նորոգին հոգիք ննջեցելոց և յառնեն ՚ի գերեզմանէն անապական մարմնով, ընդ նոսին յարուցանէ Տէր զմարմինս մեր զերսափին, նորոգէ և փոխէ ՚ի կեանս անմահը և յաւիտենական : Ուստի հաւատալ արժանէ թէ Տէր զարկաւորեայ զիեանս մեր ետ մնզ իրեւու զգաւական և առ հաւատչեայ յաւիտենական կենաց, արժանէ հաւատալ թէ վասն ժառանդելոյ զմշաննենաւոր զիեանս երկնից, ետ մեզ Աստուծած զարկաւորեայ կեանս երկրաւորս . «Զ»

ԵՐԵ այսու իւնսդա միայն յառատցեալ եւր ՚է բրենդու, ուշրժել  
եւր ուն պահենոյն ճարդելի ։ :

6. Արդ՝ որպէս ամենայն ոք զանձն և զկեանս  
իւր սիրէ և գարմանէ, նոյնպէս պարտի զկեանս  
ընտանեաց, զաւակաց, ազգականաց, բարեկամաց  
և ազգայնոց իւրոց սիրել և գարմանել, իրբեւ հայր  
և հայրենասէր՝ վութալ զկեանս նոցա փրկել՝ ի  
քաղմագատիկ փորձութեանց աշխարհիս, ՚ի ձե-  
ռաց մարդադէմ գազանաց ազատել զնոսա և ա-  
պահովել. եթէ կերակրոց և համդերձից ինչ պէ-  
տըս ունիցին հոգալ: Վասնզի եթէ անհոգ լիցուք  
պահպանութեան կենաց եղբարց մերոց, յորժամ  
կարող էաք պահպանել, երկնչիմ գուցէ Աստուած  
զարիւն և զկեանս եղբարց մերոց ՚ի մէնջ պահան-  
ջնոցէ, որպէս զարիւն Արէլի խնդրեաց ՚ի կայինէ.  
զի ասէ «Գուշաճ ոքեան եւթէր ու բռնչէ առ է» յերէրէ: :  
Արդ մի թէ կարե՞ս ըստ եայենին պատասխանել  
թէ, մի թէ պահպան իցեմ եղբօրն. արդարեւ  
Աստուած պահպան արար զքեզ կենաց եղբօր  
քո. որպէս զնա կենաց քոց: Լեր հաւատարիմ  
պահպան կենաց համօրէն ազգայնոցդ, զի Տէր  
ինքնին պահեսցէ զկեանս քո և զքցոցդ: եթէ  
ոք ՚ի վերայ մահուան հայրենակցաց իւրոց ուրախ  
լինի, և ՚ի վերայ կենդանութեան նոցա արտում\*  
նա դահիճ և թշնամիէ հայրենեաց. վասնզի հայ-  
րենասէրն միշտ հեծէ հառաչէ ՚ի վերայ մահուան  
եղբարց և ազգակցաց և արտաստօք ցօղէ զհող  
գերեզմանի նոցա. և հառաչք հեծութեան արտա-  
սուաց նորայաց առնեն թէ սիրէր նա զկեանս  
և զկենդանութիւն եղբարց իւրոց: Եթէ ոք միշտ

զհոգ և զդարձման կենաց խրոց միայն հողայ և  
զլնկերին անվոյթ առնէ , նա կեռպ վասն անձնն  
և մեռանի վասն անձնն . նա խոլ է գազան մար-  
դակեր , քան այբ մարդասէր . վասնդի մարդ կա-  
տարեալ ոչ միայն խնամ ածէ ի վերայ կենաց ան-  
ձին և կամ աղդականաց խրոց . այլ ցանկանալով  
ցանկայ , զի ամենայն մարդիկ կեցցեն և ՚ի գիտու-  
թիւն ճշմարտութեան եկեռոցեն : Այլ ամենեքեան  
ծանիցեն զյաւիտենական կեանս . որ ծածկեալ էր  
առ հօր և երեւեցաւ մեզ , իրրե դպիլք և դառինք  
ի միասն ճարակեացին , մի մեղիցեն և մի վնա-  
սեցցեն զմիմեանս . և եղիցին մի հօտ և մի հովիւն .  
ապաքէն կեանքն յայտնեցաւ , զի ամենեքեան կեն-  
դանի լինիցին նովաւ , և ասիցեն ըստ առաքե-  
ցյն թէ՝ « ինչ Քէիսուս Հեռաւ է և Դառանեն ( Հան Քէի-  
սուս ) ըստ » :

## ՅՈՒԴՈՒԱՅՆ Բ:

## ԱԽՈՐԻՉՈՒԹԻՒՆ

1. Բնական է մարդոյ միշտ սիրել զառապջու-  
թիւն և ատել դհիւանդութիւն , վասնդի առող-  
ջութիւն է ներքին երջանկութիւն մարդոյ , խոկ  
հիւանդութիւն ներքին թշուառութիւն նորա-  
քայց մի թէ սիրելն զառաջին , և ատելն զերկլոր-  
դըն կարեն զբնութիւնս մեր ՚ի յառողջութեանս պա-  
հել , ոչ երբէք . այլ պարտ է մեզ զներքին և զար-  
տաքին , զբարոյական և զբնական զամենայն ըրէնս  
առողջութեան սիրել է . նոքօք զօրացուցանել և  
դարմանել զանձինս մեր , յորմէ կախեալ է առող-  
ջութիւն բնութեանս : Նոյնպէս պարտիմք միշտ

զգուշանալ և խորշիլ ՚ի բարոյական և ՚ի բնական խանդարիչ պատճառաց . որք ածեն բերեն ՚ի վերայ բնութեանս զպէսպէս տաղնապս՝ զցաւոց և զհիւանդութեանց : Արդ՝ եթէ ոք հպարտութեան, նախանձու, և բարկութեան կրից և մեղաց անձնատոր լեալ՝ զհոդի և զմիսս իւր սաստիկ տաղնապաւ յուղեացէ և անկցի ՚ի հիւանդութիւն . եթէ ոք ծուլութեամբ, ագահութեամբ, որովայնամոլութեամբ և բղջախոհութեամբ սաստիկ տաղնապաւ մաշեացէ զմարմին և զսիրտ իւր և անկցի ՚ի հիւանդութիւն և ընդ ցաւօք հիւծեալ և մոշեալ տարաժամ ելանիցէ յաշխարհէ , ոչ ապաքէն ինքնն եղեւ տոիթ մահուան և կորսաեան իւրայ . ըստ որում ասէ Սողոմոն . « Զէ ո՞ւ Եղանակն ո՞ւուեցած էն Էնոց իւրեանց » : Զի մոլութիւնք իրիւր իմք և ժանտախտք թունալիցք թունաւորեն զառողջութիւնս մեր : Վասն այսորիկ եթէ ոք ցանկայ զաւուրտ իւր տեսանել ՚ի բարութեան և յառողջութեան , ատելով ատեսցէ և մերժելով մերժեացէ յանձնէ իւրմէ զամենայն ախտս մոլեկանս :

2. Տեսի զրժիշխո՞րք իրեւ զխստովանահայր քահանայս կացեալ առ մահճօքն հիւանդաց՝ զբննէին զերակս և հարցամնէին զգաղտնեաց նոցա , որպէս զի ծանիցին թէ յորմէ բնական և բարոյական ախտէ ընբանեալ և ընկճեալ մնկան ՚ի հիւանդութիւն : Որպէս բաղումք առ ահի և ամեն թոյ ծածկելով զմեղս մեռանեն ՚ի մահ հոդւոյ . նոյնպէս բաղումք ծածկելով զներքին զախտս իւրեանց ՚ի բժշկաց՝ մեռան մարմնով . որպէս որք որով վիրաւորեալ ՚ի մարմին , ծածկեն դվիրու

մարմնոյն և չառնուն զդեղ ի գեղատուէ իմաստ։  
Նոյ և մեռամնին. այսպէս և սոքա : Սաւուզ ՚ի սաս-  
տիկ նախանձուէ ըմբռնեալ այսահարեցաւ, և մե-  
ռաւ : Ամօն անձնատուր լինելով սիրահարական կրից  
հիւծէր, և մաշէր : Սամիփան ըմբռնեալ ՚ի ցան-  
կական կրից՝ անկանէր յուժոյ և մեռանէր : Ոմանք  
՚ի բարկութենէ ընդ մէջ հերձան, և բաղումք ՚ի գի-  
նեմոլութենէ խեզդամահ կաթուածահար եղեն :  
Ուստի եթէ զհոգիոդ առողջ պահել կամիս, ընդ նը-  
մին և զմարմինդ, ՚ի հոգեւոր բժշկաց, ՚ի հմաւա խոս-  
տովանահարց առջիր զիսրատս կեցուցիս : Զի եթէ  
ներքին հոգի քո լիցի առողջ ըստ բալորին, ապաքէն  
արտաքին մարմին քո վայելեսցէ զառողջութիւնս  
լիովին . զի միտք և հոգի առողջ բնակին ՚ի յառողջ  
մարմին . խոկ միտք և հոգի հիւանդ բնակին ՚ի հի-  
ւանդ մարմին . զի որոյ ներքին հոգին հիւանդէ, ար-  
տաքին մարմին չկարէ կալ մնալ ՚ի յառողջութեան :

3. « Ասուած ոչ արար զմահ և ոչ խնդայ  
ընդ կորուստ մարդկան . այլ խռաքանչիւր ոք յիւ-  
րոց ցանկութեանց ձգեալ՝ պատրեալ՝ անկանի ՚ի  
փորձութիւն և ՚ի հիւանդութիւն » : Ուստի եթէ  
յասուածուստ առ ոմանս հասին փորձութիւնք  
և հիւանդութիւնք, այն խրատելոյ և սիրելոյ  
էր նշան, և ոչ ատելութեան : Հիւանդութիւն  
զՅոր փորձեաց և զլցեկիս խրատեաց, բայց ՚ի  
մահ ոչ մատնեաց . Դաւիճ ցրտացաւ ՚ի ծերու-  
թեան, բայց ոչ մեռաւ յերիտասարդութեան : Զի  
սոքա էին որք ոչ միայն զանձանց առողջութիւն  
սիրեին և խնդրէին, այլ ՚ի վերայ առողջութեան  
բազմաց խնամունէին : Բայց Անտիոքոս որ սպառ-

Նայր զՀրէայս բնավինջ առնել յաշխարհէ , որդնաս  
հար սատակեցաւ տարտիմ : Հերովդէս որ յետ  
զկեանս բաղմաց բառնալոյ՝ յաւուր միտմնստեալ  
յերեւելո՞ գոռողաբար հրատարակախօսէր , 'ի  
հրեշտակէն Աստուծոյ հարեալ սատակեցաւ : Յու-  
լիանոս որ ուխտ ետ ընդ դեւս և ընդ Աբամազգ-  
ի զրաւել զքրիստոնեայս 'ի կենաց՝ 'ի Զինաւորէն  
Քրիստոսի տիպահար եղեալ սատակեցաւ 'ի Պար-  
սս : Արդ՝ եթէ լարեկամ ես Աստուծոյ և մարդ-  
կան, մի երկնչիր 'ի հիւանդոթենէ , որ յաճախսն  
քեզ երկարութիւն կենաց . իսկ եթէ ատելի և  
թշնամի ես Աստուծոյ և մարդկան՝ երկի՛ր . զի  
մեծութիւն և առողջութիւն մարմնոյդ զանձն քո  
չկարեն երբէք փրկել 'ի հիւանդութենէն և 'ի մա-  
հուանէն , որ իբրեւ զորագայիժ հասանէ 'ի վերայ  
բռնաւորաց :

4. Արդ՝ երանի այնոցիկ , որ հաստատեալ են 'ի  
միտս զառողջութիւն իւրեանց նուիրել Աստուծոյ  
և հայրենեայ . որպէս նուիրեցին սուրբք և նահա-  
տակք : Խնդրեմ զի Տէր յաւեցցէ յաջմէ և յահեկէ  
նոցա վառք մեծութիւն , և երկայնաւուրս արաս-  
ցէ ըստ ծերունւոյն Սիմէօնի , որ ակն ունէր միտ-  
թարութեան խրայէլի և Հոգին սուրբ եր 'ի նը-  
մա : Զի եթէ դու մնաս միսիթարութեան Հայա-  
տանի «Զուարճասցիս յաւուր մանկութեան քո և  
դնասցես ի ճանապարհս սրտի քո անարատ , և  
Տէր եղիցի 'ի վերայ ճանապարհաց քոյ և հաստա-  
տեսցէ զոտս , զի մի' դայիժակընոցիս » . Հոգին  
սուրբ միշտ բնակեսցի 'ի քեզ , և զօրութիւն բարձ-  
րելոյն հավանի լիցի 'ի վերայ քոյ » : Վկայ կոչե-

շից քեզ այսօր զլովկաէս , զբազէք , զթեսու զոր-  
դին նաւեայ , որք առանց ինչ հիւանդութեան  
ողջ առողջ ապրեցան մինչեւ ցհարիւր քաններորդ-  
եւ մինչեւ ցհարիւր քառասուներորդ ամմ , որոց ոչ  
հերքն ապիտակեցան , ոչ երեսք խարշունեցան , ոչ  
ատամունքն անկան , ոչ արմանկունք թուլացան . զի  
առքա էնս որ նուիրեցին զկեանս իւրեանց Աստու-  
ծոյ , և ՚ի վերայ ժողովրդեան եղին դանձինս . ուս-  
տի օրհնեցան ՚ի Տեառնէ , զօրացան և ապրեցան :  
Վկայ կոչեցից քեզ այսօր զԱրգար , որ վասն ժողո-  
վրդասիրութեան և Հայրենասիրութեան բուժեցաւ  
՚ի յանրութելի բորսութենէն , և ապրեցաւ ընդ-  
երկար : Վկայ քեզ ըուսատուն հոգւոց Սուրբն  
Գրիգոր , որ ՚ի սոսկալի չարչարանացն ողջանդամ  
ապրեցաւ և ՚ի խոր վիրապին դամն հնդետասան  
կեցեալ ՚ի տղմին և ՚ի մեջ թունաւոր վեռնոց , ա-  
ռանց հանդիպելոյ հիւանդութեան ինչ ել անտի ողջ  
անդամ , ապրեցաւ ընդ երկար և վաղճանեցաւ ՚ի  
խորին ծերութեան : Արդ եթէ դու ունիցիս զուր  
զգութ և զգորով արանցս այսոցիլ . իրեւ զնուիր-  
եալն ապրեցիս ընդ երկայնաւուրսն և վաղճա-  
նեցիս ՚ի վաղճան արդարոց : Այլ մի Սերաստա-  
ցի անուն նորա Մատթէոս Քէսոսայեան , Հմուտ  
մարդկային բնութեան և առողջութեան , անցեալ  
ընդ բազում փորձս հիւանդութեան և առողջու-  
թեան և հասեալ ՚ի ծերութիւն , ասէր . եթէ ոք  
առանց ծերութեան և սպիտակութեան հերացն  
մեռանիցի , նա պատժեալ է յԱստուծոյ , զի ոչ  
պահեաց զբնական զօրէնս և զսահմանս նորա :

5. Ըստ անձին մերոյ առողջութեան բնապէս

միշտ սիրելի է մեղ . ընտանեաց , ազգականաց , սիրել-  
 լեաց և բարեկամաց մերոց առողջութիւն . վասն զի  
 յորժամզմիմեանս տեսանեմք . նախ քան զայլ ամեւ-  
 նայն հարցմունս՝ նախ զողջունէն և զառողջութենէն  
 միմեանց հարցանեմք , խաղապատմմք զմիմեամմք ,  
 ողջադուրեմք զմիմեանս , և խնդադին զուարժու-  
 թեամբ ուրախանամք 'ի վերայ միմեանց . մանա-  
 ւանդ . յորժամզմիսադարձ հարցմամբ տեղեկանամք  
 'ի միմեանց թէ ամբողջ ազգատոհմք մեր 'ի յառող-  
 ջութեան և 'ի բարօրութեան են : Խակյորժամ տե-  
 սանեմք դհիւանգութիւն միմեանց . և լսեմք դհի-  
 ւանդութենէ ազգականաց և բարեկամաց մերոց ,  
 որտեմութեամբ վարակիմք , դեղս , հնարս և քժիշ-  
 կրս որոնեմք , յուղեալ և անհանդարտ որախ-  
 առ . հիւանդն փութամք , զմամն մի հանդստու-  
 թեան և առողջութեան մերոյ վասնելով և 'ի վե-  
 րայ հիւանդին գներով զիութապէս զառողջութիւն  
 նորա խնդրեմք . և այսպիսի ուրախական և որա-  
 մական կիրա կրերով յայտ առնեմք թէ՝ արդարեւ  
 սիրելի են մեղ միշտ ողջութիւնք և առողջութիւնք  
 ազգականաց և ազգայնոց մերոց : Հայրն հեժմանո-  
 սաց մեծն Պօղոս զամենայն հաւասարեալն Քրիս-  
 տոսի իրեւ զորդեակս իւր սիրելով յուղեալ սըր-  
 տիւ գրէր առ կորնթացիս , թէ՝ « հիւանդնուայ ,  
 և ես ու հիւանդնուամ , » ֆայնուին , և ես ու գուունուամ » Հարք եկեղեցւոյ , և հայրենասէրք որք բարոյա-  
 պէս իշխեցիք և իշխէք 'ի վերայ ամբողջական  
 մարմնոյ Հայկազանցս . ուսեալ 'ի Պօղոսէ իրեւ  
 յորժիշկս հոկեցէք 'ի յառողջութեան պահել զոր-  
 դիս հայրենեաց : Վասնզի երբեմն ախտք համա-

Ճարակը դքաղաքու, զգիւղը անմարդի և անսպասութեացանեն իրբեւ զհութը, որ մզեալ 'ի մրրկէ՝ զանտառս լավիթու յանկարծակիր . աստանօր հսկողութեան հոգածութեան և բժշկական անմիջական դարմանաստարութեան կարօտիմք զառաջու տռնուլ ախտիցն արարութեան : Որպէս 1866 թիւզանդարնակ ազգական ազգասէրք դվառանդս մահուան յանձն առեալ մութային զրազումն 'ի յազգականաց իւրեանց 'ի մահաշունչ ճիրանէ ախտին ազատել . յորս յականէ, յանուանէ ճանաչեմք գժամանակակից զհայագի երեւելի բժիշկս մեր, Ռուսինեան\*, Սէրվիշեն, Քերաթիպեան, Ստեփան Ասլանեան, Խորասանեան բժիշկս, որք մահու չափ աշխատեալ զրազումն յեղբարց իւրեանց ազատեցին 'ի յանկարծական մահուանէն . յորոց Տէր հրաշիւք իմն զերծս պահէր զկեանս այխատողաց . որոց վարձք բազում են յերկինս . իսկ որք իրբեւ անձնապաշտ, զանձանց զկեան , և զառողջութիւն և եթ հոգացին յահէ ախտին մեռանէին :

6. Բազմիցս յիշեցաք զանուն մեծին Ներսիսի, բայց մի թէ հնար է բիւրիցս զնմանէ չհռչակել, զիեթէ լռեացուք, որք նորա բարձրաձայն ազազակեն : Զինա վասն առողջութեան համօրէն որդւոցն չայսատանի մութայր բազմաթիւ անկելանոցս, ուրիանոց և հիւանդանոցս շինել ընդ ամենայն դաւառմն . իրբեւ հայր հասարակաց, և իրբեւ բժիշկ հոգւոց և մարմնոց հաւաստացերոց զցայդ և ցերեկ հսկէր 'ի վերայ առողջութեան որդւոց իւրոց, զուրկութիւն, զբորոտութիւն և զտարափոխիկ ախտու

\* Առ դոլով երեւելի բժիշկ, ունի հմտալից վաստակս

հալած ական առներ ՚ի Հայաստանէ : Եւ թէպէտ  
 Հոգւով ախտացեալն Պապ Խորհեր ՚ի փոխարքն այս-  
 չափ երախտեացն թունալից բաժակաւ վատարել  
 զառողջութիւն և զկեանն նորա ՚ի նմանէ . սա-  
 կայն նա երբէք չդադարէր անդուլ հակողու-  
 թեամբ դնել զանձն ՚ի վերայ որդւոց իւրոց Բայց  
 դուք ո՛ իշխանասէր կվերականք և աշխարհականք  
 ժամանակիս ընդ է՞ր ոչ հայեցարուք ՚ի Ներսէնն .  
 ընդ է՞ր զիշխնեն միայն սիրէք , և ոչ զինամելն ,  
 ընդ է՞ր վասն անձին առողջութեան զամենոյն ինչ  
 պատրաստէք և հոգայք իսկ վասն աղդայնոցն ա-  
 ռողջութեան անփոյթ լինիք : Իրրեւ մնյրաքաղա-  
 քացի մի պարծիք յանձինս թէ ահա ունիմք հի-  
 ւանդանոյ ՚ի յեօթնաշտարակի . այդ պարծանք մի-  
 այն սեփական է Պեղճեան Յարութիւն ամիրայի ,  
 զի դուք ամենեքեան մինչեւ ցայսօր չկարացիք  
 հառասարիլ ՚ի չափ առն միոյ . զի նա մի անձն դո-  
 լով շինեաց հաստատեաց , զհիւանդս կերակրեաց  
 և դարմանեաց . իսկ դուք առ ՚ի չդոյէ հայրե-  
 նասիրութեան՝ նեղիք և դժուարիք առ ՚ի անտե-  
 սել և հոգալ զհիւանդան , և առանց ինչ խղճի  
 դիէսն ՚ի ծախուցդ առնուք ՚ի պանդխտեալ եղ-  
 բարց ձերոց : Մի թէ ո՞չ խմանաք և ոչ ՚ի միտ  
 առնուք , թէ բաղմաթիւ են ՚ի Հայաստան անտե-  
 րունջ աղքատք և լքեալ հիւանդք , որք առանց  
 ինչ դեղոյ՝ դարմանի և բժշկի մնացեալ իրրեւ ա-  
 նոք և անօդնական մեռանին ՚ի թեթեւ ինչ հի-  
 ՚ի յառաջադիմութիւն աղդային մնատենադրութեան , և  
 առաջին հեղինակ համարեալ է Աղդային Ասհմանադրու-  
 թեան :

ւանդութենէ . զի ոչ ոք է որ դարմանեսցէ զնոսառ և չէ ոք որ 'ի թիկունս հասանէ : Աւա՛զ , մի թէ չդիտիցես թէ 'ի տարւո՞ն որչափ անձինք այսպիս եաւ . պակասին 'ի յամբողջութենէ ազգային մարմ նոյդ . և անդամատեալ քո այսոլէս՝ նուազիս 'ի բարոյական և 'ի բնական զօրութենէ և տկարանաս . որպէս ոք զի կորուսցէ դձեռն կամ զոտն և նուազեցի 'ի զօրութենէն : Ո՛վ Տէր՝ յարո՛ զնոր Ներսէս . զի ողորմ և գութ ածցէ 'ի վերաց լքեալ , և ախտացեալ որդւոցն Հայաստանի :

6. Ա.Ա. աւա՛զ աղէտիցս , զի մինչ դեռ վութամ ճեպիմ հրաւիրել զուշ պաշտօնապիրաց ազդէս 'ի վերայ համօրէն հիւանդացն Հայաստանի . սակայն 'ի յայլոյ կողմանէ տեսանեմ զրիւրաւոր զկենդանիս և զառողջս ազգայնոց մերոց , որոց կեանք մատնեալ է 'ի վտանգ մահու , և 'ի բարոյական հիւանդութիւն : Զի առանց ապաւինի և օդնականի մնացեալ ընկեցան ընդ լծով նեղչաց և հալածաց իւրեանց , և հանապազօք հեծեն հառաչէն և հոգւոց հանեն իրեւու գհիւանդս 'ի մահճի . զի մերձ 'ի տասն յորելեան է , յորս որդիք Հայաստանի ողջոյն են 'ի բարոյական հիւանդութեան : Աւսոի 'ի բազում ամաց հետէ աղաղակեն և խնդրեն զրժիշկս իմաստունս և ճարտարագետս , և ոչ գտանեն : Աւաղակք , բարբարոսք , և հարստահարիչք նեղեցին զնոսառ , և նոքա խոնարհ եղեն 'ի ներքոյ ձեռաց նոցա : Մանաւանդ գիւղաբնակ ժաղավուրդք մեր հարուածս մեծամեծու և վէրս մահացուս կրելով առանց ինչ հիւանդութեան , բազում անդամ իրեւով զՅովեան ինդրեցին զմահ անձանց և ոչ

դամին : Զի աղքատացաւ ՚ի տեկարոթենէ զօրութիւն նոցա : Պաշտօնաաէրք աչօք իսկ հայեցան և տեսին զվերս նոցա . սակայն ըստ բարեկամացն Յուրայ փոխանակ ապաքինելց զվերս և միմիթարելց զսիրս նոցա՝ եղեն բժիշկք մեղանչականք , և յաւելին զվերս ՚ի վերայ վիրաց , և ինքեանք իրք գչքմեզս արգարացուցին զանձինս իւրեանց առաջի մարդկան . սակայն Աստուած գիտէ զսիրս նոցա, թէ բժիշկք եղեն նոքա մեղանչականք, և ողջացուցիչք չարեաց և ոչ բարեկաց :

7. Մի թէ՞ ՚ի զուր յանդիմանեսցէ Յիսուս զմեղաւորսն ՚ի յեանում աւուրն թէ՞ «Հիւանդ էի , և ոչ եկիք առ իս» . մի թէ՞ ՚ի զուր շնորհակալիս մատուցէ արդարոց , թէ՞ «Հիւանդ էի և տեսիք զիս» : Արդ՝ եթէ ոք զանց առնիցէ զմիով հիւանդիւ , յանդիմանի սաստիապէս . ապա թէ՞ ոք զրադում հիւանդօքն աղդայնովքն զանց առնիցէ . որպիսի յանդիմանութեան ո՛չ հանդիալեսցի : Զի ահա ազգ մի ողջոյն անկեալ ՚ի մահճճու՝ յոտից մինչեւ ցողուխ չիք ՚ի նմա առողջութիւն . վերք խղխայթումն և այտումն ՚ի նմա : Ո՛հ փութացէք Ժամանել առ վիրաւորն Հայատան և սրբեցէք զիս ՚ի վիրաց անտի , զի նա ըստ Յորայ ձեռն կարկառեալ ՚ի մահճէ աղերսէ «Ոստիցարուտ ոզորմեցարուտ ինչ» «Հարբեկամուտ է՛տ , ոչ Յեռն Տետան մեցաւ յիս» : Եւ ըստ Երեմիայի կական բարձեալ կոչէ , «Դարձարուտ առ իս ո՛տնապարտնի , և ուսկէտ , ենէ վեու են ցաւուցաւոց էնցաւ : Ո՛հ , ընդ է՞ր ծնաւ զիս մայր իմ : մի թէ միայն զվիշտ , զցաւու և գհիւանդութիւնս հայրենեացս տեսանել ծնաւ զիս : Ահա անդարման ցաւք

և հիւանդութիւնք քո ով Հայաստան զիս 'ի գերեզման հրաւիրեն . վասն զի յոյժ սակաւք մնացին որք ընդ իս հոգալ հոգացին և աշխատ եղեն զվերս Հայաստանի սրբել և բժշկել , Զի եղեն բազումք . որք միշտ զանձին ողջութենէ հոգացեալ՝ անփոյթ եղեն հարցանել զողջունէն Հայաստանի , և դարման տանել ներքին և արտաքին առողջութեան նորա : Այլ երանի աւուրն այնմիկ , յորում այր իւրաքանչյուր խանդավառ հայրենասիրութեամբ փոթացի իրրեւ խմաստուն բժիշկ դուժ ածել թէ 'ի վերայ անհատական հիւանդայ , և թէ խնամն տարածել 'ի վերայ համանդամայն հիւանդացելոցն Հայաստանի :

## ՅՈՒՂԱՆԱՐ Դ.

## ԱՐԻՈՒԹԻՒՆ

1. Արի՝ առոյգ և առողջ ծնողք ծնան որդիս կորովիս և արիասիրտս . իսկ թուլասիրտք և վատառողջք ծնան որդիս վատս և երկչոսա . սոյնպէս արիական ազգք ծնան արիական ժողովուրդս . իսկ անարիք ծնան անարիս : Հայկ՝ արին կորովին և ուժաւորն 'ի հակայմ՝ ծնաւ դհայս և եղեւ հայր արիական Հայկաղանցու : Որդիք Հայկայ ընդ երկար ժամանակս զիորովութիւն հօր իւրեանց կրցին 'ի կուրծու իւրեանց , և թողին զանուն քաջութեան 'ի յերկրի . իսկ այժմ տեսանի թէ արիութիւն որդւոց Հայկայ իրրեւ զորբազան հուրն ծաճարին թաքուցեալ 'ի խաւարչտին դրի տղիառու-

թեան և անկրթութեան, և ՚ի տիղմ խռովութեան  
և անմիաբանութեան, դորս եթէ ձեռք Հայոց իր-  
բեւ զձեռն հայրենասէր Նեեմայ փութասցին դշուրն  
զայն սրբազն գովելի դաստիարակութեամբ հա-  
նել՚ի դրոյ, և եղբայրական համապոյգ միաբանու-  
թեամբ զտիղմն խառնակութեան սրբեացեն ՚ի նը-  
մանէ : Յայնժամ ջերմագին ճառագայթք սիրոյ իր-  
բեւ դճառագայթու արփոյն ծագեալ՝ի վերայ սրբա-  
զան հրոյն արծարծի և բորբոքի արփական մասն  
սրտի նորու . որով յայտնէ Հայոն զանձն իւր աշ-  
խարհի թէ չէ ծնեալ ՚ի վատ արտնց , այլ ՚ի քա-  
ջաց և յանալարաելի կորովեաց : Վասն այսորիկ խակ  
դրեցի ՚ի յերկրորդ յօդուածիս թէ պարտին Հայք  
զգուշանալ անձնական և աղդային առողջութեան:  
Զի առողդ և առողջ բնութիւն աւանդեցեն որ-  
դւոց իւրեանց իրբեւ գհայրենի բնական ժառան-  
գութիւն և զհարստութիւն : Զի որ պաշտելով  
զախոս և զշանկական կիրս եղծանէ զառողջութիւն  
անձին , եղծանէ ապականէ զարմ , զաւակ և զա-  
պագայ սերունդ աղջի իւրոյ , և լինի թշնամի ան-  
ձին ազդին , և Աստուծոյն : Խակ որք յանարատ և  
յաղնուական ծնողաց եկին ՚ի մարմին առողդ և  
յանարատ , և ոգւոյ բարուոյ հանդիպեալ պահեցին  
զանձինս ՚ի չափու անարատ մարդկութեան , եղեն  
բարեկամք անձին , ազդին և Աստուծոյն :

2. Որոց փոյթ եղեւ կրթել զմարդիկ ՚ի յարփա-  
կան մարզս . նոքա յառաջեցին եղին զպէս պէս  
առողջապահ կանոնս , սահմանեցին զզանազան  
խաղս մարմնամարզս , որք յաւելուն ՚ի մարմին մար-  
դոյն զաշխոյժ և զկորալ , որք կրկնապատկեն ՚ի

մարդն զարիութիւն և զարագութիւն . սակայն որք  
 'ի բնէ 'ի վեհերոտ և 'ի հիւանդոտ ծնողաց ծնան  
 'ի մարմին վատառողջ , արտաքին մարդք մարմնա-  
 կանք ոչ բնչ օգնիցեն նոցա . դի բուն էական տ-  
 րութիւն բնակի 'ի ներքին կողմն որտի և երիկա-  
 մաց մարդոյն , որ ժառանգաբար էառ 'ի յարենէ  
 արխասիրաց ծնողաց իւրոց . այս' որչափ մասուցես  
 զմարմին սոցա 'ի մարզո , այնչափ աղնուանան ,  
 զօրանան և քաջանան : Ե երրեմն՝ դի սիրտ մեծ  
 և արփ բնակի 'ի մարմին փոքրահասակ՝ որ առանց  
 երկիւղի գործէ զգործս զմեծամեծս . և է՛ դի սիրտ  
 մեծ և արփ բնակի 'ի մարմին փոքրահասակ , որ ա-  
 ռանց երկիւղի գործէ զգործս զմեծամեծս : Եւ է՛  
 դի սիրտ փոքր և երկշոտ բնակի 'ի մարմին յաղ-  
 թահասակ , որ յար պաշարեալ 'ի յերկիւղէ՝ խոյս  
 տայ 'ի գործելոյ զմեծ և զարիական գործս : Գա-  
 գիկ Աբասեան թագաւոր կարուց 'ի պատերազմերն  
 ընդ զօրաց Տուղրիի՝ Թամթուլ քաջ սպարապետն  
 չայոց որ էր մարմնով կարճահասակ միով հարուա-  
 ծով վիրաւորէ զորդի Աբսուրան ամիրային Պար-  
 սից , զոր սիրէրն Տուղրիլ . բայց յետոյ Թամթուլ  
 ըմբռանեալ 'ի զօրաց Պարաից կացուցաւ առաջի  
 Տուղրիի , սորա գիտացեալ թէ սիրելին իւր 'ի քաջ  
 բաղկէն թամթոյ է հարուածեալ . ասէ ցթամթուլ ,  
 «Եթէ ապրեսցի սիրելին իմ , աղատեցից դքեզ ,  
 իսկ եթէ մեռանիցի , դքեզ ընդ նորա զոհեցից»:  
 Ետ քաջն քաջութեամբ պատասխանի . «Ենէ ի՞ւ է  
 հարուածն , չև ապրեսցի , ի՞ւ ենէ այլոց է , չէ՞դեմ» : Ցեւտ  
 սակաւուց մեռանի հարուածեալն . ուստի Տուղրիլ  
 տայ սպանանել ցթամթուլ և զաջ բաղուկ նորա յղէ

առ. Արտուրան ամիսայն առ. 'ի միսիթարել դնա առսելով . թէ՛ « Որո՞ն ո՞ւ չէ հռետու 'ի կոտ բազի՛ : Կարճահասակ մարմին Աղէքսանդրի համեմատութեամբ հսկայից՝ արտաքուստ երեւէր մարմին նապաստակի . բայց սիրտ նորա 'ի ներքուստ մեծ էր քան զսիրտս հսկայից և առիւծուց : Դաւիթ արտաքուստ յաշն Գողիամի երեւէր մանուկ, որ ներքին արութեամբ սրտի՝ տանն աստիճանաւ բարձր էր քան դԳողիամի . զի համարելով դնա շուն մի 'ի շանց այլազդեաց՝ քարիւ յարձակեալ եհար սատակեաց դնա, և եհատ զգլուխ նորա :

3. Բայց եթէ հասակ հսկայի, կորով սրտի և մարզք մարմնոյ միասցին 'ի մի մարդ . նա դիւցազնարար յամենայն դործս արութեան առնու դառնաջին զմիցանակն յաղթութեան : Մերս Տրդատէս մարմնով հսկայ, սրտիւն կորովի, անդամնվքն մարզեալ 'ի մանկութենէ՝ բազում դործս արութեան ցուցանէր յաշխարհին Յունաց : Եւ երբեմն 'ի սպատերազմենն ընդ Պարսս, նժոյդ երիվար նորա վիրաւորեալ անկանէր . բայց նա հետխոտս սուր 'ի ձեռին յարձակէր 'ի բանակ Պարսից, զհազարաւորս դիամթաւալ յերկիր կործանեալ դիւցազնաբար յաղթէր պատերազմին : Վահան Մամիկոնեան քառասուն կորովի արամբ աներկիւզ յարձակեցաւ եմուտ 'ի բանակ Շապհոյ զօրավարին Պարսից, զերեք հազարեան թշնամին ճեղքեալ ընդ մէջ՝ իրբեւ զգերանդազէն սպառազէնս դզօրս Պարսից աստի և անտի իրբեւ զցորեան հնձելով ճանապարհ արարեալ՝ անմիսաս ելանէր 'ի բանակէն : Անդ զգիւցազնական դործ վահանայ տեսեալ զարհուրեցան Պար-

սիկը , լքան վհատեցան , և առ երկիւղի չկարէին հայել 'ի վահան և 'ի զօրս Հայոց : Զօրապետն Պարսից զանվեհեր քաջութենէն վահանայ յատեան Արեաց արքային զարհուրմամբ և զարմացմամբ պատմէր . թէ՝ « ի՞նչ երբեք ունետել այնունի ոյր . բայց Դայն 'ի նախնի պատմանեանց լուեւու եաւ . . . » Փարփեցին :

կ. Ի նախընթաց դլուխս ՚ի վերայ արութեանց քաջութեանց և յաղթութեանց նախնեաց մերոց դրեցաք ըստ բաւականին , որոց վկայ են ներքին պատմութիւնք ազգային , և արտաքին պատմութիւնք Յունաց , Հռովմայեցոց , Ասորոց և Պարսից և այլոց : Բայց այժմ հայելով 'ի ներկայ վիճակ և 'ի սերունդ ազգային . մեք մեղեն ստիպիմք հարցանել զմէնիջ , թէ՝ արդեօք գկորով սրտի և զքաջութիւն բազկի ՚ի յերկրի թաղեալ և ազդի օտարեն վաճառեալ՝ անսիրա և անբազուկ մնացա՞ք . զի մեղկ , թոյլ և երկշոտ կացութեամբ այնչափ թրշտառացեալ երեւիմք յաշխարհի . մինչ զի ամաչեմք պատմել քաջայաղթ ազգաց թէ իցեմք մեք 'ի յարիական սերնդոց Հայկայ և Արամայ . որոց անուամբիքն պարծիմք միշտ , բայց 'ի քաջամասնութեանցն վերջացեալ գտանիմք այժմ : Գեղ և հակայութիւն պահեմք 'ի մարմնի . իսկ անվեհերութիւն և կորովութիւն մարմնոյ նոցա չկըեմք 'ի սրտի : Բ'հ , ահա մարմին առանց սրտի , մարմին որ առանց սրտի չկարէ շարժիլ , գործել , և ընթանալ . զի որպէս մարմին առանց հոգւոյ մեռեալ է . նոյնպէս մարմին առանց քաջապինդ . սրտի յոյժ ընդ ահեւ անկերալ՝ յամենայն հողմոց շարժի և յամենայն բանէ խռովի : Մարդարէացաւ Զաքարիա վասն

ոլովոյ խւրոյ Յովհաննու . թէ՝ « Դաքը հայոց շնչը յորդիս » . ուստի և ես յետինս 'ի բանասիրաց երբեւ ղձայն բարբառոյ յանապատի վութացոյ ոյս սոքիւք բանիւք զսիրոտ անվեհեր քաջութեանցն Հայկայ , Արամայ և Տիգրանայ , զսիրոտ աստուածակալութեան Դրիգորի , Ներսիսի և Ատհակայ գարձուցանել յորդիս Թօրդումայ : Յորժամ միայն երկիցես 'ի Տեառնէ , և չկամիս երկնչիլ բնաւ 'ի մարդկանէ , որք զմարմին սպանանեն . բորբով սրախ յուսա 'ի Ցէր , նովաւ սպառազինեալ արիացիր , և մի թերահաւատիր 'ի նմանէ , զի երկիւդ թերահաւատութեան է նշանակ :

Յ. Ի վերջին դարս և 'ի ժամանակս 'ի տեղիս տեղիս 'ի վերայ անհատական անձանց երեւեցաւ կորով արիական սրտի , որք գող թէ չունէին երկիւդ և ոչ յումեքէ . բայց այսքանեաց սակաւաթիւ անձանց արութիւն մի թէ բաւական իցէ՞ զաղդ և զհայրենիք փրկել , ոչ . զի սոքա երբեմն հազիւ զանձինս խրեանց կարացին պաշտպանել ընդ գէմ թշնամեաց : Ուստի պարտ է զտարակացեալ սիրսա արի արանց մերձ բերեալ՝ ընդ միւնեանս շաղկապել իբրեւ զընապատ պարիսպս քաղաքաց . և զսիրսա այնոցիկ , որք երկիւզիւ լքեալ և պաշարեալ են քաջալերել 'ի մի միութիւն արութեան : Պան զի արութիւն 'ի միութեան անդ գգործ իւր կատարեալ ունի , զի արութիւն բովանդակ սիտք խորհուրդ և կառավար . ոչ ապաքէն սիրս ընդ սրտի շաղկապեալ և միտք մտաց հաղորդեալ՝ արտադրեն զարիական ահագին զօրութիւնս , որք վլերինս շարժեն , զրլուրս

հարթեն , զձորս լցուցանեն , զաւելակս հայրենեաց կանդնեն , դքաղաքս բնակչօք հանգերձ զարդարեն . «Հեթանոսք յահէ զօրութեան նոցա երկիցեն , և հրեշտակս առաքեացեն 'ի խաղաղութիւն» . դապանք անապատի փախիցեն 'ի լերինս , օձք և կարիճք տեղի տակով ծակամուտ լիցեն 'ի սորս երկրի : իսկ տկարք մեր զգեցցին զջորութիւն , զօրաւորք զգեցցին զվառաւորութիւն , ժողովուրդք վայելեացեն 'ի խաղաղութիւն , որդիք գերելոց աեսցեն զիրկութիւն , վայելեացեն զաղամութիւն , և օրհնեսցեն զջէր զօրութեանց :

6. Աստուած օրհնէ զարիասիրտ մարդն . թադաւորք պատուեն և մեծարեն զնա : Աստուած տայ զօրութիւն արիասիրտ ժողովրդեան և թադաւորք երկրի օդնական լինին նմա , Որպէս առաքինացեալ բռունք յափշտակեն զարքայութիւն երկնից . նոյնպէս արդարութեամբ արէացեալ բռունք յափշտակեն զիրաւունտ իւրեանց 'ի յարքայութեանց երկրիս : Որպէս յուլից և ծուլից փակեալ է դուռն արքայութեան երկնից . նոյնպէս յուլից և ծուլից փակեալ են դրանք արքայութեանց երկրիս . զի որպէս 'ի դուռն Տեառն արդարք միայն մտանեն . սոյնպէս 'ի դուռն մարմնաւոր տերսանց արիացեալքն միայն մտանեն : Արիասիրտ ժողովուրդն ճանաչէ զիրաւունտ իւր , և չտայ յափշտակել զնա օտարաց . արիասիրան սիրէ զարդարութիւն , և ատէ զանիրաւութիւն . արիասիրտն գիտէ զժամանակ խաղաղութեան և պատերազմի . արիասիրտն զտառվութիւն 'ի միջոյ հայրենեաց արագ բառնայով 'ի տեղի նորա ոէր և

միութիւն փոխանակէ : Արիասիրտ թէ այլ և թէ  
ժողովուրդ՝ զարիական փորձն իւր ոչ փորձէ 'ի վե-  
րայ եղբօր կամ ազգի իւրոյ . զի ոչ երբէք զսուր  
իւր 'ի սիրտ բարեկամի իւրոյ միէ . զի արին իրբեւ  
զգաստ զօրական մի միշտ պահապան է տանն հայ-  
րենեաց , և հսկող հրեշտակ որդւոյն հայրենեաց:  
Արւոյն կեանք , կեանք է հայրենեաց . և մանն  
անմահութիւն . 'ի վերայ գերեզմանի արւոյն փոխան  
խաչաքարին՝ խաչափայոն Քրիստոսի է կանգնեալ,  
և դգլուխն փոխան դափնեայ պսակի՞՝ պսակաւն  
Ստեփաննոսի և Վարդանայ է պսակեալ : Զանուն  
կռապարիշտ արեաց քերթուածք հոմերականք դո-  
վաբանեն . իսկ զանուն քրիստոսաէր և հայրենա-  
սէր արի արանց հրեշտակք 'ի յերկինս 'ի դպրու-  
թիւն կենաց դրեն , և օրհնաբանեն . իսկ եկեղե-  
ցիք 'ի յերկըրի տօնեն և յիշատակեն :

7. Խակ արք անարիք ծոյլք և յոյլք չեն սիրե-  
լիք յաչ Տեառն զօրութեանց . ոչ 'ի սպատոփ են  
առաջի թագաւորաց , և ոչ օգնութիւն ինչ դտա-  
նեն 'ի զօրաւոր արանց : Վայ՝ որ յամենայն իրաց  
երկնչի , յամենայն հողմոց խոռվի , և յամենայն  
ըանէ զարհուրի . զի ըստ Եղիշէի երազագէտ է այն-  
պիսին և յանգիւտ կորուստն առաքի : Վայ վեհե-  
ռոտ և վատասիրտ արանց . զի չկարեն դտանել  
բարեկամն 'ի վերայ երկրի ; զի տարերք և բնու-  
թիւն թշնամի են նոցա : Վայ մեղկութեան նոցա,  
զի ոչ միայն չկարեն օգնել հայրենեաց . այլ և չկա-  
րեն ունել տուն բնակութեան 'ի հայրենի դտառու-  
վայ պղերդութեան նոցա . որոց մարմին ստուդիւ-  
գերեզման լեալ է տառապեալ հոգւոյն , և սիրան

յակիշտակեալ է ՚ի նմանէ . զի ըստ առասպելին  
սիրա վատին , քաջը հատին , ետուն կեր կատուին :  
Երկչունն որպէս զիսլուրդն դողն ՚ի դող ընդ երկ-  
րաւ շրջի , առ ահի չկարէ ելանել արսաքս և տե-  
սանել զճաճանչս արեգական և բնակել ՚ի մէջ կեն-  
դանեաց . երկչունն նման է շղկանի , որ ՚ի գիշերի  
դաշտագողի շրջի , և ՚ի տունջեան ՚ի խաւարչունին  
տեղիս զօղեալ ծածկի . սա ըստ որում ՚ի կեանս  
իւրում չկարէ երբէք օդնել ումեք , և ինքն յա-  
րաժամ օդնականի կարօտեալ յորժամ խնդրէ ,  
չկարէ դատանել . ուստի առանց օդնականի կորնչի :  
Ահա այսպէս միշտ վնասակար է վաստափրուն ան-  
ձին , ազդին և հայրենեաց . իսկ արին միշտ օդտա-  
կար է անձին ազդին և հայրենեաց : Ուստի դաս-  
տիարակէք ազդին յամենայն ժամ և յամենայն դա-  
սըս աշակերտաց փոյթ յանձին կարցեն հանել զպէս  
պէս մնութի պառաւական կախարդական երկիւդո  
՚ի մոսաց մանկանց և պատանելեաց , որք յանդդու-  
շութենէ ծնողաց , և յայլոց մուեալ ՚ի սիրտ նոյս՝ եղ-  
ծանեն զարիական մասն սրտի նոցա , և արհաւրօք  
պաշացեալ վատթարեն , դորս յարսնատոյ քանցեալ  
իրեւ զորուն . ՚ի տեղի նորա անկեայեն զարիու-  
թիւն և զկորովովթիւն սրտի :

ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ · ԱՅՐ · ԵՒ ՄԻՋԻԹԻՒՆ :

## ՅՈՒՌԻԱԾ Ա.

ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

1. Որ էջն՝ ի յերկնից, և ընակեցաւ՝ ի մորդիկ՝ խորին խոնարհութեամբ հաճեցաւ անուանել զանձն եղբայրս հաւատացելոց իւրոց . նա ասաց «Դուք անեւեան եղբայր եւ»: Նա որ զծառայի զկերպարանս էառ, և եկին պաշտօն մատուցանել մարդկան ասէ «Ու չառ ՚է չենչ մեջ վնաւ եղբայր անենցան ժառայ»: Որք ՚ի սուրբ աւազանին ուխտեցին որդեգիր լինիլ ՀՕՔ երկնաւորի. մօրին՝ ՚ի սուրբ աղդակցութիւն Աստուծոյ, կոչեցան ընտանի և եղբայր Քրիստոսի. որք մօրին՝ ՚ի յանսահման թագաւորութիւն Քրիստոսի, այլ եւս չեն ծառայ. այլ աղատ, ժառանդ. և ժառանդակից Քրիստոսի: Զամենայն զոր միանդամ Յիսուս եղբայրս անուանեաց, ոչ ոք կարէ զնոսա իրրեւ օտարականս մերժել յինքենէ և ասել թէ չէ իմ եղբայր: Եւ ամենեքեան, որք կամին մեծ լինիլ, Յիսուս զնոսա ծառայս և կրտսեր կոչէ. ուստի ոչ ոք կարէ զնոսա մեծ կոչել: Ահա առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի միահաւասար եղբայրութիւն անսանի եղբա՛րք. աղքատն, տնանեին, մերկն և հիւանդն և ծառայն, զոր տեսանես, է եղբայր և ծառայ Քրիստոսի և քեզ. տէր իշխան, թագաւոր և մեծատոն, զոր տեսանես, է եղբայր և ծառայ Քրիստոսի և քեզ:

2. Ոչ միայն չորրհօքն Քրիստոսի աղդակից եմք

Առառնելոյ և եղբայրը միմեանց . այլ Առառնեած որ  
՚ի միոջէ արենէ արար զամենայն մարդիկ . Նա Ա-  
գամաւ զամենեսեան քնութենակից , հաւասարակից  
և եղբայրակիցս արար միմեանց . յորմէ խուսափել ,  
և զոր ուրանալ չկարեմք երրէք : Եղբայրասէք մար-  
դարէն Մոլուշ տեսեալ զարս երկուս . որք յերա-  
նաց և յարենէն Արբահամու էին սերեալ . զի մի-  
ճէին ընդ միմեանս , վարեաց զնոսա ՚ի խաղաղու-  
թիւն և ասէ «Աչ եզրոյք ե+ , ընդէ՞ր զբիե+ զիմեան» .  
Երանին թէ՝ ամենայն մարդիկ զրան Յիսուսի պա-  
հէին ՚ի մոի թէ՝ «Դուք ամեննեւուն եզրոյք ե+» և զրան  
Մոլուսի ՚ի լեզուի թէ՝ «Աչ եզրոյք ե+ , ընդէ՞ր զբիե+  
զիմեան» . յայնժամ հասանէք խաղաղութիւն ամե-  
նայն աշխարհի , և մինէր մի հօտ մի հօվիւ :

3. Առաքեալք ուսան ՚ի Քրիստոսէ ոչ միայն  
զմիմեանս եղբարս անուանել , այլ և զաշակերտս  
և դհաւատացեալն եղբարս անուանեցին . զի գի-  
տացին թէ անուն եղբայրութեան գեր ՚ի վերոյէ  
քան զամենայն անուն . զոր տուեալ ՚ի մարդիկ :  
Զի Յիսուս յետ յարութեան ասէ ցկանայն . «Գնա-  
ցե+ , ասոցէ+ եզրոյքն իւաց . զի երնիցն ՚ի Գուցէւու և անդ  
ուեցն զիւ» . ոչ միայն զաշակերտս , այլ և զմեղու-  
ցեալն եղբարս անուանեաց Առաքելոց և մեղ .  
«Զի ենէ եզրոյքն +ու մուցէւ +եղ , ասոցէւ նշա . ենէ ապաշ-  
խորէ , նու նմա . և ենէ եզրուասան և եզրն անդամ մուցէւ +եղ  
և ապա պարզէլ և առէց , ապաշխորէւ նու նմա» : Պետրոս  
վասն Պօղոսի գրեաց ՚ի Կաթուզիկեայս իւր , թէ՝  
«Աչ ենէ եզրոյքն մէ Պօղոս ու ինչ ուժուարէ նաց բանս գրեաց» :  
Պօղոս վասն Տիմօթէոսի աշակերտի իւրոյ գրէ .  
«Աչ ենէ եզրոյքն մէ Տէմինեան» :

կոչե . «Եղբարք էմ , սիրելի + , և անջիւղիւ սրուի իշոյ պառկ  
 և կուս+ իմ : Պօղոս զԱռաքեալրն և զաղքատան ՚ի  
 միասին անուանէ եղբարս և սուրբս : Պետրոս Պօ-  
 ղոս և Սանգիաննոս զանհաւան Հըմէայս անոդամ եղ-  
 բարս անուաննեցին . «Արք եղբարք + , սրուի + ԱԲբանամեռն  
 պահան : Զայս Աստուածական , առաքելական և  
 սրբազն կոչումն . զոր սրբեցին և նուիրեցին մեզ  
 վարդապետն և Աշակերտքն . զիոյն մեք յամեննայն  
 ժամ նուիրելով միմեանց կոչելոց եմք զմիմեանս  
 եղբարս . զի եթէ քան զայս առաւել կամ նուազ  
 անուն տացուք եղբօրն , մեղանչեմք ընդ գէմ եղ-  
 բայրական սիրոյն . զի եթէ կոչեմք զնոսա ուսու-  
 ցիւ կամ վարդապետ , վարեմք . քանդի ասէ՝ «Մի  
 զոք կոչէք . զի ուսուցիւ և վարդապետն ձեր Քրիս-  
 տոս է» . ոչ կարեմք զեղբայրն յիմար և մորսն կո-  
 չել . «Չէ ո՞ր ասէ ցեղացոյք իւր , ուորուուր լիշէ իւ-  
 ճան հրցն » : Արդ՝ եթէ այսպիսի սուրբ սիրով և  
 սրբազն ազգակցութեամբ չկոչեսցուք զմիմեանս  
 եղբարս , մերժիմք , և զրկիմք ՚ի քաղցր անսութե-  
 նէն , ՚ի միւռթենէն և յեղբայրութենէն Քրիստոսի ,  
 որպէս զրկեցան դպիրքն և փարխեցիքն , որք ցան-  
 կային կոչել ՚ի մարդկանէ ուարի ուարի , որք խընդ-  
 րէին նախաթոռ . և բարձնափր լինել , որք զեղբարս  
 իւրեանց խառնիճազանն և նզովեալ ժողովուրդ-  
 կոչէն . ուստի բացէ ՚ի բաց մերժեցան ՚ի Ցեառնէ ,  
 որ զրանն իւր առ նոսա ուղղեալ ասէր . «Ի բաց  
 իւցեւ ցինեն ամենայն հումկ անիբառանին , ու իւում զինւ :

Կ . Յառաջ մատիք եղբարք սիրելիք . ուստրուք  
 զեղբայրութիւն և զհաւասարութիւն ՚ի չեղ և ՚ի  
 խոնարհ վարդապետէն . զի գտնիք հանդիսատ ան-

Ճանց ճերոց : Ի մի հաւասար եղբայրութիւն միառցուք զի երկինք և երկիր անբարբառ վկայեսցեն, թէ՛ եղբայր եմք մեք . իրբեւ սիրասնունդ հարազատ եղբարս սիրեցաւք զմիմեանս , զի թագաւորք երկրի , և ամինայն աղինք աշխարհի գիտացեն թէ՛ եղբայր եմք մեք : Ի հրաշափառ եղբայրական անուանէ թշնամիք սասանին , և լեզեհոնք գիւաց հալածական երթան : Առ եղբայրական միութիւն բանակը անմարմին զօրաց հրեշտակաց յերկինից 'ի յերկիր խոնարհեալ մարտակից և նիզակակից լինին մեզ 'ի պատերազմելին մեր ընդդէմ թշնամեաց մերոց : Զի յորժամ Յուղայ Մակարէ հնդեսին հարազատ եղբարբք , հանդերձ բաղմաթիւ աղդակեցօք և եղբայրակցօք մարտ եղեալ կոռւէք ընդթշնամին հայրենեաց և աղդին , տեսաներ զգունդ մի սպառազէն հրեղէն զօրաց զինուօրեալ և սաւառնեալ ընդ օդս , որք նետ և հոր տեղային 'ի բանակ թշնամեաց , յարմէ զարհուրեալ և սասանեալ թշնամին վախստական լինէք , իսկ Մակարէ և Մակարեանք զօրացեալք յաղթէին :

5. Սէր եղբարց մերոց առաւել զօրանոյ , սասականայ և քաղցրանայ 'ի մեզ . յորժամ խելամնուցուք թէ ամենայն նախնիք մեր , որք 'ի Տէր ննջեցին , և ամենայն ծերունիք արք և կանայք , որք կենդանի են առ մեզ իրբեւ հայր մայր և նախնիք համարեալ են մեզ . ներկայ ամենայն մարդիկ և կանայք եղբայր և քոյր են մեզ . իսկ մանկունք և սպագայ սերունդք զառակք են մեզ : Հայրենիք ամբողջութեան մերոյ գերդաստան , եղբայրութիւն ընտանութեան և աղդութեան մերոյ անուն . սէր

մեզ իշխան . միութիւն մեզ թագաւոր . համահաւասարութիւն մեզ հաղատակաթիւն . աշխատութիւն մեզ հարստաթիւն . իմաստութիւն մեզ դատաւոր , արդարութիւն ալժու , ուղղութիւն դաւազան խոնարհութիւն ծառայ և սպասաւոր . ճշմարտութիւն զէնք և զօրական , եղբայրսիրութիւն յազթութիւն , հայրենասիրութիւն պատկ և փառք : Այսուհետեւ ամիսարտաւանք խոնարհեսցին 'ի ներքոյ եղբայրական քսողըր անուան . խոնարհք բարձրասցին 'ի թեւս եղբայրական սնուան . զօրաւորք յանուն եղբայրութեան բարձցեն զտկարութիւն տկարաց . և տկարք զօրութիւն զգեցցին յանուն եղբայրութեան . մեծասունք յանուն եղբայրութեան սեղանակից արասցեն զաղքատ , և աղքատք մի երբէք արհամարհեսցին առ դրունս փարթամաց . իմաստունք յանուն եղբայրութեան խրամեսցեն և հաստատեսցեն զտկարամիսաս , տղայամիտք և պարզամիտք միշտ անսասցեն խրամուց իմաստնոց և ծերոց՝ ծերք 'ի սէր եղբայրութեան սիրեսցեն և քաջալերեսցեն զերխտասարդու , երխտասարդք պատուեսցեն զծերս . որպէս զի ամենայնի և յամենայնի բարձրասցի և վառաւորեսցի անուն և սէր եղբայրութեան Հայոց առաջի Աստուծոյ և մարդկան :

6. Մի այլ եւս ողբար ո՛վ հեք Հայաստան , սրբեա զարտասր 'ի յաչացդ . զի որդիք քո դտին և նորոդեցին զեղբայրական սիրատենչ սուրբ անուն . զոր ատելութեամբ եղծին և կորուսին . ահա որդիք քո զարթեան 'ի քնոյ , և արթնական միր դործովք իւրեանց ցուցին զնշան եղբայրական սիրոյ ազգաց և աղանց : Ցնծա՛ և ուրախ լե՛ր , զի

թշնամի որդիք քո յանուն եղբարց խրեանց հաշ-  
 տեցան և նորոգեցան . տդէտ որդիք քո իմաստ-  
 նացան . տկար որդիքդ զօրացան . մատնիչ որդիքդ  
 տորջացան . կոյր որդիքդ լուսաւորեցան . անմիա-  
 բան որդիքդ միացան և զօրացան . հեռացեալ որ-  
 դիքդ մերձեցան : Վասն զի նոր ՚ի նորոյ հաղիւ  
 ծանեան թէ՝ յորժամ թողին և մոռացան զսէր և  
 զանուն եղբայրութեան , արհաւիրք , խոռվութիւնք  
 և նուազութիւնք ՚ի ներքուստ , կործանումն , մահ  
 և սասանութիւնք արտաքուստ եկին հասին ՚ի վե-  
 րայ եղբարց , ազդականաց և բարեկամաց խրեանց .  
 բայց ահա այժմիկ դդաստացեալք քաղցր ձայնիւ  
 ազաղակեն և ասեն եղբարք եմք մեք . զի Հայն  
 որ ՚ի Հնդիկս բնակեր , այժմ խելամուտ եղեւ թէ  
 եղիսլտաբնակ Հայկազն եղբայր է ինքեան . սոյն  
 օրինակ տարաշխարհիկ Հայկազունք հաստատելով  
 հաստատեցին ՚ի միտս խրեանց թէ ՚ի հայրենի  
 տան բնակեալ համօրէն Հայք սիրելի և մեծարելի  
 աւագ եղբայր են ինքեանց . նոյնպէս ՚ի բուն ՚ի  
 Հայաստան բնակեալ եղբարք ծանեան թէ ՚ի  
 գաղթականութենէ տարաշխարհիկ եղեալ Հայք  
 հարազատ և սիրելի եղբայր են ինքեանց : Ուստի  
 սկսան կաթողին սիրով որոնել զմիմեանս , խան-  
 գաղատել ՚ի վերայ միմեանց . և յորժամ տեսին  
 զմիմեանս խազապատեցին զմիմեամքք , դուրդու-  
 րալով դիրկս արկեալ համբուրեցին զմիմեանս , և  
 եղեն միոյ հօր Հայկայ միաբան որդիք , և միոյ  
 Մօր Հայաստանի հարազատ որդիք : Զայս ամենայն  
 ետես Հայք մեր , որ յերկինս է , ուրախ եղեւ յոյժ և  
 ասէ , վատահութեամբ և համարձակութեամբ կո-

Հեցէք զիս հայր, զի դուք եղբայրական սուրբ սիրով սիրելի որդի իմ էք ։ Ետես Որդին, և առէ . կոչեցէք զիս եղբայր, զի դուք սուրբ սիրովդ սիրելի եղբայր իմ էք ։ Ետես Հոգին սուրբ, և առէ . կոչեցէք զիս բարեկամ, զի դուք սուրբ սիրովդ սիրելի բարեկամ իմ էք :

## ՅՈՒՍԻԱԾ Բ.

Սէր

1. Ա' ՚ի մարդկանէ ստեղծ զանուն սիրոյ . ո' զառաջին նուագ զսէրն անուանեաց սէր . ո' դիւաց զխորութիւն զրարձրութիւն զերկայնութիւն և զլայնութիւն սիրոյ : - Մէրն ընդ Աստուծոյ անստեղծ է . զի անուն Աստուծոյ սէր է : Ծնդ Մովսէսի խօսեցաւ Աստուծ ՚ի մորենո՞ն և առէ . անուն իմ ՈՐ ԷՆՆ է . Մարդարէք մեծ և սքանչելի անուն կարդացին նմա . Որդին Միածին Հայր և Աստուծ անուանեաց զնա . իսկ սիրելի աշակերտն Յովհաննէս ճշմարիտ թարդման մատաց և հոգւոյն Յիսուսի ասէ «ԱՅՍՈՒԱԾ Սէր Է՛ւ Անեղ Էռթիւն և բնութիւն Աստուծոյ , անթարդմանելի և անճառելի անուն նորա անըմբունելիք են մատաց և իմացականութեան մարդկան . բայց Էռթիւն իսկութիւն և ամենասուրբ անուն նորա սիրով թարդմանելի և ըմբռնելի է մատաց մերոց : Զի սէրն Աստուծ անդատին ՚ի սիրապատաք Էռթենէն սէր տպաւորեաց ՚ի բնութիւնս և ՚ի սիրտս մեր . զի կարող լինիցիսք սիրով ըմբռնել , ճանաչել , հաւա-

տալ և սիրել զԱստուած , որ ոչ շատացաւ միայն դճառագայթու և ճաճանչս աստուածային սիրոյ հաղորդել համայն բնութեանս , և 'ի միտս իւրաքանչիւրոց տապաւորել , այլ համեցաւ զբումն բովանդակ սիրոյ աստուածային էութեան իւրոյ զծոցածին որդին միածին զօֆտուս առաքել յաշխարհ . զի փրկ կեսցի աշխարհ նովաւ . բայ Շնորհալոյն «Սէրն 'ի սիրոյ զսէրդ առաքեաց . . . : Սիբով մերձեցաք յԱստուած և կոչեցաք մերձաւոր , բնտանի , բարեկամ և որդին նորա : Ուստի եթէ զսէրն Աստուծոյ 'ի սրտէ մերմէ մերոք մերժեսցուք . կոչեացուք նմա հեռաւոր , թշնամի , չարակամ և խորթ : Զի սէրն է սուրբ սիրակապ Աստուծոյ ընդ մարդկան . սէրն է որ զօֆրաս մեր բարձրացոցանէ առյաւիտենական Սէրն . և հաղորդու առնէ զբնութիւնս մեր անեղ և անման բնութեան Աստուծոյ 'ի յարութենէ մեռերց :

2. Աստուած զմարմին նախկին մարդոյն էաւ 'ի հողոյ . իսկ զհոգին նորա 'ի յանմահ բնութենէն իւրմէ սիրարդիսեալ փչեաց 'ի մարմին մարդոյն , և յայսմիկ աստուածահրաշ փշմանէն կեանք , հոգի և սէր տապաւորեցաւ . և ծաւալեցաւ 'ի բնութիւն մարդոյն : Ուստի յորժամ երաց զաշս իւր նախ զսէրն ետես . յորժամ արձակեցաւ լեզուն նորա սէր անուանեաց զԱստուած , և օրհնեաց զանուն սիրոյն . զի սէրն իրեւ երկնառաք հուր բորբոքեցաւ 'ի սիրտ մարդոյն , որ 'ի ներքին բնութենէն իւրմէ ուսաւ . որոնել զԱստուած պաշտել և ոչեւ չնայացաւ : յանուայն զբութենէն և յանուայն հորոց իւրոց : դեռածին մանկունք մինչ բանան զաշս և տեսա-

Նեն զ՞այր և զմայր խրեանց , և մինչ չունին լեզու թարգման մտաց և զգացմանց խրեանց զանուն գորովադութ ծնողացն սէր խմանան և զգան ՚ի սիրոս խրեանց և սիրապատար հրճուանօք խաղաղատեն զնոքօք : Սոյնաբէս յորժամ մարգիկ իրեւու զտղայ չկարեն բովանդակիել և ճառել զանուն զանանան և զանհուն էլլիին Աստուծոյ , զնա սէր և անսպառելի ազրիւր սիրոյ ճանաչեն և պաշտեն Յիսուս որ ՚ի յէութենէ Հօր էր , և ճանաչէր զըրշութիւն մարգոյն , ՚ի ստորեւ ամենայն օրինաց և մարգարեկից , և ՚ի լրումն ամենայն օրինաց և մարգարեկից կնքեաց զրան խւր այսպէս . « Ուշեցնե զջեւ Աստուծու ու . . . սիրեացն զնուերն ու էրեւ զնույն ու , ու յոյս երիւու պատուիրան ամենայն օքենք և հորդաբէւ հսկեւու էննօւ : Արդ՝ եթէ սիրեացն զԱստուած , նա սէր է . և դու սիրեցեալ ՚ի նմանէ՝ լինիս սէր . եթէ զեղբայր և զբնկերն քո իրեւու զանձն քո սիրեացն , ոռքա սէր են , և դու սէր լինիցիս . եթէ զբայման զպատառէր սիրոյ , որ առ Աստուած , առ անձն և առ ընկերն քո սիրով կատարեացնես , եղեր առնող և կտարող ամենայն օրինաց և մարգարեկից :

3. Աստուած ՚ի սրբութենէ խրմէ , հրեշտակք ՚ի բարձանց երկինից , և սուրբք ՚ի սուրբ սրակ իւրեանց ՚ի սկզբանէ սէր բարբառեցան առ մարգիկ իսկ ես տրուպս դարձայ և հայեցայ յերկինս ՚ի վեր , և յերկիքը ՚ի խոնարհ , և բաց ՚ի սիրելոյ Արարչին և ընկերին ոչ ինչ քաղցր և հեշտակի տեսի յաբարածու . վան որոյ մինչ կամէի զմիսս իմ գարձուցանեւ յայլ դարձուածու բանից . սէրն Աստուծոյ , սէրն ընկերին և սէրն հայրենեաց զանիս մը-

տաց իմոյ առ ինքն գրաւէր . զգրիս յայլում բանի  
պաշտել ինդրեցի , սէրն զընթացս նորա առ ինքն  
ուղղէր . բազում անգամ ջանացի զծառ սիրոյն ամ-  
փոփել , սէրն զպողոտայն իւր առաւել ընդարձակէր .  
զի քան զսէրն առաւել վսեմ դեղեցիկ և բարի ոչ  
ինչ դտանէր . Ավշութիւն կալաւ զիս և եօ ո՛չ  
դիտէի թէ՛ զի՞արդ յորժամ զջէրն և զընկերն սի-  
րեցի , սիրա իմ ընդարձակեալ զուարձանայր յիս  
և հանդէշէր . իակ յորդամ սառնայեալ յինէի 'ի սի-  
րելց' տրտմութիւն և անձկութիւն սրտի իմոյ յաջմէ  
և յահեկէ , 'ի դիմոց և 'ի թիկանց պատելով պա-  
տէր զանձն իմ , զխայթ խղճի իմոյ հարկանէր ,  
զմիտս իմ բռնտղատէր , զսիրա իմ յուղէր և ատպ-  
նապէր , և սիրել ստիպէր . մինչեւ տեսցէ 'ի յիս  
զկատարութեան ճշմարիտ ընկերսիրութեան : Ո՛հ , բա-  
զում անգամ ջանացի զխողճո , զմիտս և զսիրտս  
իմ ծածկել 'ի զդացմանց և 'ի ներդործութենէ սի-  
րոյն . բայց սէր բնութեամբ իրեւ զլոյս թափանցիկ  
գոլով եղիտ զիս 'ի քուն սառնութեան և յանդի-  
մանեաց ասելով թէ , «Են՛ զընէեւ , չը սիսանես ,  
ու սիրես . զԱռունո՞ւ , չը ՞Ն առեւ չնո՞րդ ի՞րեւ սիրեւ » :

Կ . Որդիք Հայկաց 'ի ծերոց մինչեւ ցտղայս 'ի  
սիտ առցեն , թէ՛ զիա՞րդ վասն մարզելոյ զնոսա 'ի  
յաստուածսիրութիւն , 'ի յընկերսիրութիւն , յաղ-  
գասիրութիւն , և 'ի հայրենասիրութիւն գրելով  
գրեցաք , և կրկնելով կրկնեցաք զրանս սիրոյ , մին-  
չեւ եկեալ հասաք 'ի ճառն սիրոյս , բայց արդ՝ մի՞թէ  
այսքանեօք միայն հասանել կարացաք 'ի սահմա-  
նեալ կէտ ուխտանուէր նպատակի մերոյ . ո՛հ , ի-  
ցիւ թէ յառաջ քան զհասանել յաւարտ ճառիս

հասանեածք յաւարա նպատակիս : Ալդ՝ ո՞ կարէ  
տալ ինձ տեսանել զսէրն համատարած ծաւալեալ  
՚ի սիրտս Հայկազմնցս . ո՞ վոթասցի աւետիս տալ  
ինձ թէ Հայք սիրով միացան յԱստուած և յըն-  
կերն և եղեն մի սիրտ , մի կամք և մի հոգի :  
Ո՞ , գէթ ՚ի քնարան գերեզմանիս զձայն խաղաղու-  
թեան միութեան և սիրոյ Հայկազմնցս ինձ լոեցի  
արացէ . բայց այժմ անձն իմ յոյժ խռովեալ է և  
զինչ ասացից , զի սիրտ իմ խոցեալ է զանցեալն և  
զներկայն ազգին խնց ՚ի յուշ ածելով . հասաւցի  
յանլուելի հեծութեան իմում և ասացի , ո՞հ , սէ՛ր ,  
ո՞ւր է սէր . ո՞վ Աստուած սէր . ո՞վ հայր և մոցր  
սէր . ո՞վ եղբայր և ընկեր սէր . ո՞վ ազգ և հայ-  
րենիք սէր . աւա՛զ սէր , աւա՛զ սէր . ո՞ւր ես սէր ,  
մի թէ իրկնիցեմ սէ՛ր , սէ՛ր , սէ՛ր . . . զի ՚ի ձեզ  
տպաւորեացի սէր : Երկինք՝ վոյանակ անձրեւի  
սէր ցօղեա ՚ի մեզ . Երկի՛ր վոյսանակ ցորենոյ զսէր  
տուր մեզ , վասն զի առանց սիրոյ անձրեւ մեզ  
կայծակ և կարկուտ է , ցորեան թոյն և մահ : Ա  
Տէր ՚ի շնորհաց սիրոյդ շնորհեա մեզ զսէրն . զի ա-  
ռանց սիրոյ ամենայն քայլցրութիւն՝ գառնութիւն  
է մեզ . ամենայն ուրախութիւն տրամութիւն . ա-  
մենայն բարութիւն չարութիւն . ամենայն բարե-  
կամ թշնամի . ընտանիք օտար , ազգ գերի և չուա-  
ռական , հայրենիք աւեր և անլէն :

5. Ալդ՝ էթէ գու ՚ի հայրապետաց ոք իցես .  
եթէ չունիս զսէր առ Աստուած , առ ընկերն , և  
առ ազգն . չես հայրապետ . եթէ ՚ի վարդապետաց  
իցես , եթէ չունիցիս զսէրն , չես վարդապետ .  
եթէ քահանայ իցես , առանց սիրոյ չես . եթէ թա-

գաւոր առանց սիրոյ չես . եթէ հայր , մայր , եղբայր , բարեկամ իցես , եթէ զսէրն չունիցիս , չես . եթէ աղդ իցես , եթէ զսէրն չունիցիս , աղդ չես . վասն զի եթէ զանուն սիրոյն միայն ունիցիս . իսկ զդործ սիրոյն չունիցիս , ոչ ինչ ես : իսկ եթէ զսէրն ունիցիս մեծի շնորհաց մեծի բարութեանց և մեծի անուան արժանաւոր ես , և եղիցիս : Վասն զի եթէ զսէրն կատարեալ 'ի յանձին քում կրեսցես . յայնժամ մահն թուի քեզ կեանք , կեանքն թուի քեզ անմահութիւն , երկիր թուի քեզ երկինք , ընկերն թուի քեզ աղդ , աղդութիւն թուի քեզ հանուր մարդկութիւն , հայրենիք թուի քեզ թան-կադին քան զբովանդակ աշխարհ : Երանի՛ է քեզ զի ուրախութիւն յաւիտենից ժառանգեսցես , խա-զաղութիւն համրութեացէ զքեզ , և փառք աստ-տածպաշտութեամ պատկեսցէ զքեզ , և երեւեսցիս միշտ սիրեցեալ յաջն Ծետոն զօրութեանց :

6. Աշխարհ առանց ըստոյ արեգական մնայ 'ի մթութեան , մարդ առանց ճառագայթից սիրոյ խարխասիի 'ի մէջ խաւարի . որպէս կերակուր ա-ռանց աղի անհամէ , նոյնուկէս մարդ առանց սի-րոյ անհամանայ և անպիտանանայ . զի սէրն ամե-նայն իրաց բաւական է . Զի եթէ բանայ զբերան իր , ամենայն լեզուք լեռսցեն , եթէ ճառեսցէ ամենայն զիսութիւնք համրասցին . եթէ քարո-ղեոցէ , ամենայն մարդարէութիւնք խափանեսցին : Զի սէրն մեծ է քան զդիտութիւն և զհաւատ . ուստի եթէ ոք առանց սիրոյ միայն զիսութեամբ զըրեշտակաց և զմարդկան լեզուս խօսեցի , ոչ ինչ է . եթէ ոք առանց սիրոյ հաւատով միայն զիերինս

փոփոխեցէ , ոչ ինչ է . եթէ ոք առանց սիրոյ միայն սոսկ գործով զամենայն ինչս խըր տացէ աղքատաց , և մատնեոցէ զմարմին խըր յայրումն , ոչ ինչ է : Քանիդի սէրն ծածկէ զրազմաթիւն մեղաց , ՚ի վերայ թերութեանց եղբարց երկայնամիտ լինի . սէր ՚ի վերայ ընկերաց ո՛չ ամբարտաւանի . սէրն զշահ անձին ո՛չ խնդրէ . սէրն միշտ քաղցրանայ ՚ի վերայ հայրենակցաց խըրոց : Բերան Յիսուսի Պօղոս այսպէս ուսուցյ ամենայն աղգաց և լեզուաց արք սիրով զպարանոց իւրեանց խոնարհեցուցին քաղցր լծոյն Յիսուսի : Հայկակն դու . որ աշակերտդես Սւետառաբանին խազաղութեան , փութացի՞ր զմիակ նշան նորա գրումել ՚ի վերայ գագաթման քո . զոր Յիսուս մատամիր դրեաց ՚ի կուրծս աշակերտացն առելով . «Այսու շանէցն ոյնու ենե իւ աշիւրու եւ , ենե սէրէցն պահպանու » :

7. Եթէ սակաւիկ մի անսայցես ինձ . գտցես ՚ի քեզ զբովանդակութիւն սիրոյն , զի եթէ ուրեք նոտիցիս միայնակ զսէրն առ քեզ պահեա . անդ չմեաս երբէք միայնակ . ՚ի խօսելն քում զսէրն պահեա . ՚ի վերայ լեզուիդ , ունկնդիրս բազումն ստանաս , ՚ի գործելն եթէ զսէրն ՚ի սրտի քում ուահեցես , գտցես յաջողութիւն ուր և երթիցես . եթէ սէրն քան զբարմն առաւել ծրարես ՚ի սրտի քում , բարեկամն բազումն գտանես եթէ ընկերանալ և կենակցիլ կամիս ընդ մեծամեծս և ընդ փոքունս աղգի քո . զսէրն կոչինիր պահապան ՚ի մէջ երկոցունցդ . երբէք նախանձ ատելութիւն կադ և կռիւ չկարիցէ մուտ գտանել ՚ի ձեզ . եթէ հասանիցի քեզ պանդխովիլ յազդս օտարս , և յաշխարհու

Հեռաւորս . զսէրն աղդ ականաց և բարեկամաց քոյ մշտավառ պահելով՝ ի սրտի քում , յաւիտեան աղդամէր և հայրենասէր մնաս ։ Զսէրն ասացի , որ յառաջ եկեալ բղխի ՚ի սուրբ սրբէ , և ընդարձակեալ հաստատի ՚ի յանկեղծաւոր հաւատոց . որ սրբէ զներքին մարդոյն , որ դասակից պսակակից առնէ զմեղ ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան Աստուծոյ . որ արդեգիր Հօրն երկնաւորի ըստ Յովհաննու . որ ասէ «Տեսէ՞ Շորէսի ու՞ շնորհեաց Թռ Հոյք . ոչ որդիւ Աստուծոյ ի ուսուցու՞ և եմ» :

## ՅՈՒԴՈՒԱՅ Դ.

## ՄԻԼԻԹԻԿԻՆ .

1. Աստուած և սէր են միշտ միաբար , իսկ աշխարհ և ատելութիւն են միշտ բաժնաբար . ուր Աստուած և սէր է , անդ է միութիւն և խաղաղութիւն . ուր աշխարհ և ատելութիւն է , անդ է բաժնանուն և խոսվութիւն Բայց թէ զիա՞րդ զանրաւ զանհատական անձինս ՚ի մի միաբանութիւն սիրոյ համահաւաքող պատճառս բազումն և զօրաւոր տեսանեմք . իսկ տարօրոշող պատճառս սակաւս և տկարս . զի յաշխարհի աստ խնդրովք հետեւողք և սիրովք միութեան բաղումք են . իսկ զսիրովք սակաւք : Այս իւրաքանչիւր բաղձայ միշտ ՚ի միութեան տեսանել զամենայն մարդիկ . իսկ զանմիութիւն ատէ և հարածել կամի ՚ի մարդկանէ : Աստուած ՚ի յերկնից վկայեաց թէ միացէք ընդմիմեանս ով մարդիկ . և զոր ինչ խնդրիցէք արա-

թից ձեզ . Երկինք՝ ՚ի վերուստ հանդերձ աստեղօք  
 պատմեցին թէ միացէք մարդիկ , զի իբրև զմեզ  
 աթոռ լինիջիք Աստուծոյ կենդանւոյ . Երկիր ՚ի  
 ներքուստ վկայեաց , միացէք մարդիկ . զի պատ-  
 ուանդան լինիջիք ստիցն Աստուծոյ , և ոչ թէ ստից  
 մարդկան : Բնութիւն ՚ի խորոց անդնդոց աղազա-  
 կեաց և ասէ , միացէք ով մարդիկ զի անսասան  
 և անպարտելի մնասջիք յազդս յաւիտենից : Թըռ-  
 չունք , մրջունք և մեղսոք անմերժանելի ձայնիւ  
 գոշեցին , միացէք ո՛ բանական կենդանիք , զի ա-  
 րագաթռիչ , ժրաղան և ճաշակող քաղցրութեան  
 լիջիք ՚ի յերկրի Եթէ ՚ի զօրաւոր բանէց յայսմանէ  
 չեղեր բաւական ՚ի մի . միաբանութիւն ժողովել  
 զքեզ . և զամենայն եղբարս քո , ծանիք զիսոր-  
 հուրդս Աստուծոյ , թէ՝ զիսա՞րդ նա ինքն ըստ ին-  
 քեան միշտ մի անբաժանելի միամնական միութիւն  
 է , և զիմութիւն սիրէ տեսանել ՚ի մարդիկ և յա-  
 րարածս իւր . զի ՚ի նմանէ արարչագործեալ անբաւ-  
 ափեզերաց բովանդակութիւն ՚ի մի զուգակցու-  
 միաբանութիւն հաստատեաց զի թէպէտ խրա-  
 քանչիւրք ՚ի նոցանէ զանազան պէսպէսս . և ան-  
 հաւասարս ունին զիրս , քանակութիւնս , յատկու-  
 թիւնս և շրջանս ժամանակաց . սակայն մին առանց  
 միւսոյն էութիւն եղծանելցյ , և բազումք առանց  
 ընդ դէմ բազմաց ճակաս յօրինելցյ կամ և մնան  
 յար ՚ի զարմանահրաշ ներդաշնակութեան՝ ան-  
 խռովք և անսասանք՝ ՚ի յանդիմանութիւն մտա-  
 ւորաց և բանաւորաց , որք յար զբիսկալք ՚ի մի-  
 ութենէն՝ անկանին ՚ի յանմիութիւն :

2. Ո՛ սիրուն Հայիկազն որդեակ , դու յինէն

ինդրեցեր զեզանակ միութեան աղդի քո, որ վասն  
ծովացեալ մեղաց խմոց ՚ի վազոց հետէ ՚ի բա-  
զում ձուէնս պատառեցաւ : Ես արդէն կամա-  
կար մոօք խոստացայ պատկել զտենչ հայրենասի-  
րիդ, և ահա : — Բա՛րձ յաղդէ քումմէ զամենայն  
պատճառս անմիաբանութեան, միութիւն ինքնին  
եկեալ թագառորէ ՚ի միջի քում, ՚ի բաց արա ՚ի  
յաղդէ քումմէ զներշնչութիւն օտարաց, և մերա  
կացիր զձրի հակամիտութիւն քո առ օտարս .  
յայնժամ միաբան և միակրօն միանաս ՚ի մի միա-  
բանութիւն աղդի քոյ : Հեռացո՞ ՚ի քէն զիաւար  
տգիտութեան . յայնժամ լուսով դիտութեան մերձ  
եկեալ առ միմեանս, սիրով միանաս ընդ եղբօր  
քում . ՚ի բաց արա ՚ի սրաէ քումմէ զամբարտա-  
ւանութիւն և խոնարհեալ սրտիւ եկեալ միանաս  
ընդ ընկերի քում . թօմթափեա՛ խպառ ՚ի մասց  
քոց զնախանձ գեհենին, և զուարթ բերկրանօք  
եկեալ միանաս ընդ աղդականի քում, ուխտիք  
խնդրեա ՚ի ծեառնէ, և ուրացի՛ր զշահ անձինդ  
և վասն օդախ հանրութեան ուրախ սրտիւ զաս  
միանաս ընդհանուք աղդայինս քոյ : Ա՛ լինի՛ք կա-  
րի ինքնասէր . զի անձնուէր ջանիս կարազ լինիջիր  
միանալ ՚ի յանքակտելլի միութիւն աղդի քոյ . եւ  
թէ այսպիսեաւ սրաեռանդն հոգւով ջանահնար  
լիջիր մտանել ՚ի տաճար միութեան հանուք Հայ-  
կաղանցս . լեռ հաւատարիմ և հաւատա թէ աղդ  
քո ըստ քեզ միացեալէ ՚ի քեզ անմեկնելի սիրովն  
3. ընդ այս զարմացեալ եմ, և ՚ի զարմանալ  
իմում դրեցի զայս . վասն է՞ր յորժամ ես զիար-  
հուրդս բարիս յդանամ ՚ի սրտի իմում . վագուդիմ

զայն զուարթութեամբ պատմել եղբարց բարեկամաց և ազգականաց իմոց . վասն է՞ր յորժամ դործ մի բարի դործիցեմք , իդձ լինիմք , զի համօրէն աղդակիցիք մեր թէ հեռաւորք և թէ մերձաւորք տեսանիցեն զայն և գովեսցեն զմեղ . վասն է՞ր յորժամ յուղի անկանիցիմ , ցանկամ 'ի սրտէ . զի խումբ մի ՚ի համազգային եղբարց իմոց ուղղեկից լինիցին ինձ . վասն է՞ր յորժամ տրտում լինի անձն իմ , ինքնին կարօտի մխիթարութեան բարեկամաց . վասն է՞ր յորժամ հիւանդանայցեմ . կարօտիւ սպասեմ այցելու բարեկամաց , և 'ի նուցանէ խնդրեմ դեղ գարման և առողջութիւն կենաց :

վասն է՞ր յորժամ աղքատ լինիցիմք , հետամուտ լինիմք 'ի բազմութենէ խնդրել զողորմութիւն , և ոչ յառնէ միովէ : վասն է՞ր յորժամ ոք զմուտ ածիցէ , թէ մեռանիցի , ցանկայ և փափադի բազմութեամբ ազգականաց տանիլ 'ի շիքիմ : — Ահա այսպիսի ներքին սուրբ խանդք սրտից մերոց և զգացմանց իբրեւ երկնային յիշեցուցիչ աղդ առնեն ներքին բնութեան մերոյ , թէ միշտ ընկերութեան , բազմութեան և միութեան անհրաժեշտ պէտս ունիմք , և թէ առանց ընկերութեան և միութեան յոյժ տնկարելի է զկեանս ազգայինս վարել 'ի վերայ երկրի . և կարի դըժապատեհ է կոչել 'ի մարդկանէ աղդ և ժողովուրդ : Քանզի եթէ մեք մեղէն զծայրալիր շահաւէտութիւն ընկերութեան և միութեան ազգի մերոյ յանձնէ մերմէ մերժեսցուք . ուրանամք զբնութիւն մեր , սպասանեմք զսիրտ և զգացումն մեր :

կորուսանեմք զազդ և զժողովուրդն մեր . զոր  
 միայն միութեամբ կարեմք փրկել և կեցուցանել .  
 և . Զմիութիւն խնդրեցեր , սիրե՛ա զմիութիւն ,  
 առ ձեռն դացես զմիութիւն . միութիւն խնդրե-  
 ցեր , մուտ ՚ի միութիւն եղարց քոց , զանձդ . ՚ի մի-  
 ութեան գացես : Եթէ փոքր մի անսայցես ինձ ,  
 զրադմաշահ հետեւութիւն որ ՚ի սերա միութե-  
 նէն է , թուեցից քեզ . որպէս զի խելամուտ լիցիս  
 հրաշից միութեան , որ է մոյր ամենայն բարեաց :  
 « Զէ շաքունէն է հայր բուեաց . ի՞ն անշաքունէն շնոր-  
 շուեաց : ի տան միաբանելոց չէ կարող աւազակն  
 մուտ դտանել . յերկիր միութեան ոտք թշնամոյն  
 չկարէ համարձակ մուտ դործել . ՚ի վերայ միու-  
 թեան գաւազան բռնաւորաց չէ կարող տիրել :  
 ի բերդ . ՚ի յաշտարակ և ՚ի քաղաք միութեան  
 սուր և հուր թշնամոյն չկարէ ճարակ դտանել :  
 Միութեան ուժգին ձայն ՚ի խորոց երկրի մինչեւ ՚ի  
 կամարն երկնից բարձրանայ . միութեան ազգու  
 ազազակն զազդս սարսափեցուցանէ , զալիս ծո-  
 վու խոռվէ , և զլերինս ՚ի հիմանց շարժէ . միու-  
 թեան յազմող բազուկ զգերութեան և զսարկու-  
 թեան զլուծ և զանուը խսպառ խորաակէ . միու-  
 թեան ոտք ազատաբար ընդ . ամենայն աշխարհ ըն-  
 թանայ և ոչ վաստակիր ի միութեննէ մինն զհազարս  
 հալածէ , և երկուք զրիւս շարժեացեն . ընդդէմ  
 միութեան ամենայն անօժք պատերազմի պատկա-  
 ռին պատերազմել . ՚ի մէջ միութեան տեսանի ազա-  
 հովութիւն աղբային ամենայն անհատից . ՚ի միու-  
 թեան շիք բռնութիւն իրաւանց , բռնաբարութիւն  
 և յափշտակութիւն . ՚ի միութեան շիք աղքատու-

թիւն և սով հայի. 'ի միութեան չի.ք այլ արիւնահեղ  
նկնդառոր, և տարապարտ մահ արդարոց : Ի վեր-  
ջոյ 'ի միութեան է բարօրութիւն, անդորրութիւն  
փրկութիւն և կեանք աղդային. խոկ յանմիութեան  
թշուառութիւն խոռվութիւն կորուառ և մահ :

5. Մի ասիցես 'ի մոտի քում, և մի խօսիցիս  
շրմամի.ք քով զրանն թէ Հայք ոչ միանան, զայս  
արտաքինն թշնամի.ք հնարեցին, ընտանի թշնամի.ք  
տարածեցին, և պարզամիտ.ք հաւատացին, և իր-  
բեւ յուսահատ խորհեցան բաժանի 'ի միութենէն,  
որպէս թէ այլ ևս անհնարին եղեւ միանալ Հայոց  
Կ վերայ երկրի . կարի առասպել և պատրուղա-  
կան է բանս, որում չէ արժան ունին մասուցա-  
նել և հաւատալ երբէք . զի որ խօսի, և որ հաւա-  
տայ խանդարիչ լինի միութեան աղգին և թշնամի  
հայրենեաց : Խւրաքանչիւր ոք զանձն իւր քննես-  
ցէ . եթէ սիրով միացեալ է յԱստուած և յընկերն,  
եթէ իրրեւ գործունեայ անդամ միացեալ է 'ի  
յամբողջութիւն աղդային մարմարյն, նա դտանի  
'ի միութեան աղդային . խոկ եթէ չէ միացեալ  
յԱստուած և յընկերն, և չէ գործունեայ անդամ,  
արտաքոյ դտանի 'ի միութենէ : Առածն ասէ «Ու-  
շու աւունք ունաք իւրծէ» . Այլ իւրաքանչիւր կարէ  
դկարծիս բազումն յղանալ 'ի սրափ իւրում վասն  
անձնական գործոյն . բայց 'ի խորհուրդս միութեան  
աղդային 'ի կարծիս բազմոց պարտի միանալ, որ  
հիմնեալ է 'ի սէր և յիրաւունս աղդին, և չհամառիլ  
երբէք 'ի կարծիս անձին : Արդ գու միանդամ միջա-  
կէտ միութեան գիր զսէր հայրենեացդ . և աղդիդ .  
զմիսս, զխորհուրդս, դկարծիս և զգործս ամենայն

անհատից 'ի նոյն միջակէտն ուղղեա , անոլ ահա աղդովիմք եղեր մի սիրտ , մի խորհուրդ , մի կարծիք , և միաբանութեամք գործեցեր զմեծամեծս :

6. Ար Հայք եկայք հաւատով միացէք 'ի Հայրն ամենակալ , զի ըստ Յիսուսի համարձակ ասիցէք «Ես և հայր է ու եմ» : Արդեակիք իմ սիրով միացէք յԱրդին նորա . զի առէ «Ուշիս աւետոց չես հայր , և ես աւետոց նվել , հաստատան իշետ 'ի աեր իւս և դարձեալ թէ՝ «Ու ու ե ընդիւս , հայտան իւս , և որ ու ժառանձն ընդիւս , շրմեւս» : Հարավաստ որդիք Հայկայ յուսով միացէք 'ի Հոդին սուրբ օքէն ընդ նվել բնութեացի 'ի յանեածնան» : Լուարուք ինձ և միացէք յանուն միասնական սուրբ Երրորդութեան : Ի սէր և 'ի գովաճ հայրենեաց միացէք , վասն տառապանաց հեծութեան և արտասուաց որրոց և այրեաց Հայաստանի միացէք , վասն փրկելոյ զազդ զեղբարս և զընկերս ձեր 'ի ձեռաց անողորմ և անօղոք նեղչաց և հալածչաց՝ միացէք , վասն եկեղեցեաց և վահօրէից շինութեան և պայծառութեան միացէք , վասն մարզելոյ կրթելոյ և զօրացուցանելոյ զմատազերամ մանկան Հայոց՝ միացէք : Միութեամբ բարձէք զամօթ և զնախատինս յերեսաց աղդին . միութեամբ փարատեցէք զկեղատ և զվատ անուն 'ի ձենջ . 'ի վերայ հիման միութեան կանգնեցէք և նորոգեցէք զաւերակս և զշինուածս հայրենեաց « Զի 'ի միութեան անդ տեսանիցէք հրաշագործեալ 'ի ձեղ զամենայն յածողութիւնս փառս պատիւս զօրութիւնս և իշխանութիւնս : Միութիւն սուրբ Երրորդութեան օրհնեացէ զմիութիւն միաբանեացդ Հայոց , և նմա փառք յաւիտեանս Ամեն :

ԱՆՅԵՍԵԼՆ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿ ՆԵՐԿԱՅԻԱՅԻՍ.

ԵՐՐՀՐԴՈՎԱՆ ԱՌԱԾ Ի ՎԵՐԱՅ ԱՊՈՒԱՅԻՆ ՀԱՅՈՑ :

1. Մտավարժ մանուկն Հայելայ առ ստորոտս  
Մասեաց՝ 'ի վերայ աղբերն սուրբ Յակոբայ՝ ընդ  
հովանեօք դաշտագեղ ուռենեաց նստեալ ըն-  
թեռնոյր զանցեալն հայոց , հայէր 'ի բարձունս  
Մասեաց և ասէր «Խորհեցաց շառարձ շառաջն» Հայոց  
և շառաջառենէց Մառեցաց ոչ շառաջն» . հեծութիւննք և  
հառաջանք 'ի սրտէ մանկան մինչ 'ի դադախ Մտա-  
եաց հասանէր , և յորդ արտասուք աշայն ընդ  
սառնորակ ջուր աղբերն խառնեալ 'ի վայր 'ի  
գետն երասխ հստէին . խանդավառ սրտիւ աղա-  
ղակէր և ասէր . ո՞հ . ո՞ տայր ինձ տեսանել զա-  
ւուրս զառաջինս նախնեաց իմոց աստանօր . որ  
իլ էր փառք . որ իլ էր յիտթեամբ և աղատու-  
թեամբ . որ իլ էր խաղաղական և անդորրաւէտ  
կենօք . Արդ՝ երդ մնեցացանեմ դըեղ Մասիս , ե-  
թէ պահեցեր առ քեզ զնշխար ինչ տւուրցն այ-  
նոցիկ , հան ինձ այսօր , զի տեսմից յանուն Աս-  
տուծոյ կաց վայրիկ մի և դու երասխ , եթէ ընդ  
հոսանս քո տարար զամա ինչ նախնեաց մերոց ,  
դարցո այսրէն . զի ուրախ եղէց ընդ այն :

2. Զի ահա 'ի հայրական իշխանութենէն Հայ-  
կայ մինչեւ ցայսօր ժամանակի եղեն ամք 3978 .  
յորմէ ծանեան ամենայն աղդ և աղինք թէ հաս-  
տատութիւն Հայութեանս 'ի քառասուն դարէ  
անտի սկիզբն առեալ յաշխարհի , դայ հասանէ

մինչեւ ցայսօր ժամանակի ։ Փոփոխութիւնս ահ-  
ցից և դիպաց բազումն կրելով , իսկ զանուն Հայ-  
կայ 'ի վերայ իւր միշտ անփոփոխ պահելով : Բազ-  
մադարեան Հայութիւնս բազում անդ ամ եղեւ  
թագաւորող և յաղթող , իսկ երրեմն՝ յանմիութե-  
նէ իւրմէ իրրեւ յաղթեալ . բազում անդամ ճո-  
խութեամբ հարստացեալ և երրեմն ՚ի յաւազակա-  
բարոյ աղդաց կողոպտեալ . ընդ ամս բազումն  
բազմաթիւ երեւեալ մինչեւ 36 միլիօն . իսկ այժմ  
նուազեալ մինչեւ 5 միլիօն : Ի պատկեր անցելոյն  
Հայոց տեսանի քառեակ շքեղապանծ հարստու-  
թիւն , Ա. Հայկազանց հայրական և նահապետա-  
կան իշխանութիւն որ ՚ի յոսկեծաղիկ դարուն իր-  
րեւ մտավարժ ամրիծ մանուկ հովուական պարզ  
կենօք խնամէր զՀայատանեայս . հանդոյն դառ-  
նարածի , որ խայտալով արածէ զգառինս իւր ՚ի  
խաղաղաւէտ հովտի : Բ. Արշակունեաց իշխանու-  
թիւն , որ իրրեւ երիտասարդ առնական իշխանու-  
թեամբ պատսպարէր և զօրացուցանէր զՀայա-  
տանեայս իշխելով ՚ի վերայ բազում աղդաց : Գ.  
Բագրատունեաց իշխանութիւն . որ իրրեւ այր-  
կատարեալ փութայր պաշտպանել զադդ , զաշ-  
խարհ և զպեառութիւն իւր : Դ. Ռուբինեանց իշ-  
խանութիւն , որ իրրեւ փորձառու ծեր յիշելով  
զամն քաջազուն նախնեաց իւրոյ , աճապարէր ՚ի  
կողմին արեւմտեան Հայատանի ՚ի վերայ տաւրո-  
սական լերաց վերջին ճգամբ պաշտպանել զդա-  
րաւոր աղատութիւն ազգի իւրոյ , և ժառան-  
գութիւն աղատութեան Հայոցս կտակելով ապա-  
գայ սերնդոցս՝ անցեալ գնայր առ Հայկ նա-

հասպեսն իւր որ յաղթեաց թելայ , և յաղթակառ  
աղատութիւն կտակեաց ոերնդոց իւրոց : Թողից  
աստանօր յիշել զհայ նախարարո :

Յ. Անցեալ ժամանեակը նախնեաց միցին վար-  
ժապետք ներկայ և ամրագոյ Հայոց . զի որ ան-  
ցելցն իբր փոք վարժապետի չյօժարիցի աշա-  
կերտելո մտանի 'ի պէսպէս տառապանս : Անց-  
եալն ազգի քո ուսիր 'ի պատմութիւնէդ . մի՛ իր-  
րեւ թութակ շրթամբք միայն մերձենար 'ի նա-  
պայլ մոռք մուտ 'ի ներքին կողմն նորա , և տես-  
թէ քանի քանի բնական , բարոյական , քաղաքա-  
կան կրօնական վտափառութեանց ենթակայ եղեւ  
ժողովորդ քո . ո՞րով զօրութեամբ յաղթեայ և ա-  
հաւոր եզեւ , ուստի՝ տկարացաւ և անկառ . 'ի մէջ  
նահապետաց , թագաւորաց և իշխանաց ո՛ոք գի-  
տաց իմաստութեամբ վարել զժամանակ իշխանու-  
թեան իւրոյ և յաջողեցաւ . և ո ոք 'ի նոցանէ յի-  
մարութեամբ վարեալ՝ անկառ 'ի ձախողակ հան-  
գերձ ժողովրդովքն իւրովք : Աչ ապաքէն ժա-  
մանակն է իմաստուն քան կամենայն մարդիկ :  
ոչ ահա վորան ուսուցանէ մարդոյ զգործն . ծե-  
րունիք առաւել դիմեն քան զմնակունս վասն  
բաղմաժամանակեայ դոլցն . փորձառուքն առա-  
ւել դիտեն քան զանփորձն , վասն ստէպ փորձա-  
ռութեան : Արով ահա Հայն իրբեւ զըորս հագար-  
եան փոք ծերունի մի 'ի բաղմաղիմի փորձս մըտ-  
եալ և ելեալ՝ դիտէ զամենայն ինչ որ օդակառ-  
բագոյն է ինքեան . և թէ կամնկար մոռք կամիցի  
դիտել . դիտէ թէ յորժամ' 'ի սրաէ ինդրէր զզօ-  
րութիւն զիսառս աղդի իւրոյ , չորիցս գտանէր և

փառաւոր իւր. խակյորժամոչ լոնդրէր՝ ի սրտէ իւրմէ, կորուսանէր և անվառունակ լինէր։ Փորձառու ծերունիս այս դիտասցէ թէ որպէս ձախորդութիւնք միշտ առ գուրու կան և պատահին նմա, յորժամ նա ինքն ՚ի խորհուրդս իւր անմիաբան իցենոյնալէս յաջողութիւնք միշտ նմա առ գուրու կան և ողջունեն դնա, եթէ միաբանեսցի ՚ի խորհուրդս իւր։

Կ. Յաշխարհի տաստ աղդք անփորձք զգործողարմանայիս դործեցին և սակաւամենայ աղդք իւմաստութեամի ծերոց պերճացան, և վասն մերոց յիմարտ թեամն և ափշութեան եղեն դատաւոր և իշխան ՚ի վերայ մեր. և մանկաւիկան իմաստութիւն նոցա այսօր յանգիմանէ դինատուրց ծերութիւն մեր Շապուհ, Յազկերտ, Անընուկեանք, Ակիւթացիք, Արաբացիք Լէնկ Թէմուր, Ճինկիլլուան, Շահ Արամ՝ Հայոց անցելոցն վայրագ թշնամիք և անողոք դահիճք, որոց գաղանական սրտմութիւն սարսափի ածէ ՚ի վերայ ապառաժ վիմաց թող թէ մարդկեղեն մնաց : Բայց ո՛յորդեաց ճանապարհ առաջի ստից նոյտ մտանել ՚ի Հայաստան . ոչ ապաքէն բազում անդամ փորձ և իմաստուն կարծեցեալ անմիտ նախարարք մեր, որք եղեն առաջնորդք ՚ի կործանել և ՚ի կորուսանել զաղգն զհայրենիս և զինքեանս իսկ : Չորիցս իմաստուն և Հայրենառէր նախարարք զալեառութիւն Հայոց կանգնեցին . և շորիցս յիմար և Հայրենառեաց նախարարք կործանեցին . զի խորհրդով և արդեամի օգնէին օտարաց և անողոր և անօդնական առնէին դընտանիու . սուր երկսայրի տային ՚ի ձեռաթշնամեաց, զի ՚ի սուր սուսերի մաշեսցեն զազդ և

զընտսանիս իւհեանց : Եւ ահա յաւուրս մեր տակաւ-  
ւին մնացորդք անմիտ և ազդատեաց նախարարաց՝  
՚ի տեղիս տեղիս զնոյն չարիս մատաքերեն և գործեն  
՚ի կորուստ եղբայր և ազդականաց իւրեանց . զե  
ոչ եղին աշ անցեալ պատմութեանց և ոչ զգ օնա-  
ցան ՚ի յանցեալ դիմաց և ՚ի վորձառութեանց :

Յ. ՚ի բարձմանէ իշխանութեան Առորինեանց  
մինչեւ ցայժմ եղեն ամք 499. յորս Հայն զբաժակ  
կործանման և զմրուր դառնութեան էարբ մինչ  
խպառ . տարաշխարհիկ եղեւ , գերեցաւ ՚ի հայ-  
րենեաց , անկառ ՚ի ծառայութիւն , հաղածեցաւ  
և սպանաւ ՚ի տարապարտուց . նուալեցաւ ՚ի  
բաղմամրդութենէ , և լի եղեւ զամենայն աւուրս  
կենաց իւրոց անմիսիթար տրտմութեամբ : Բայց  
եկ տեսոյուք թէ յայսչափ միջոց ժամանակի ո՞ոք  
արդեօք իրրեւ զհայրենասէր փոյթ յանձնն կալաւ  
փրկել զանձն և զազդ իւր ՚ի գերութենէ և զհայ-  
րենիս իւր ՚ի ծառայութենէ : Եղեն Սակաւաթիւ  
հայրենասէրք , որք չկարացեալ տանել և տոկալ  
ազէտիցն հոլովութեան խորհեցան և ջանացին  
փրկել զանձնն և զազդայինս . զրեցին զոչեցին  
և աղաղակեցին . սակայն բաղումք անարդեցին  
զխորհուրդս նոցա և ոչ լուան ձայնի նոցա : Նա-  
խապաշարեալ ՚ի խորին տգիսառութենէ՝ ասացին թէ  
սարկութիւն է ճակատագիր Հայոց . բարուրս  
եղին ՚ի վերայ Աստուծոյ իրրու թէ նա ոչ երբէք  
կամի զփրկութիւն և զաղատութիւն Հայոց . և մե-  
զանչեցին ընդդէմ դժմած և մարդասէր կամացն  
նորա , որ արար զմարդիկ աղատ և ինքնիշխան -  
և ոչ երբէք գերի կամ սուրուկ :

Յ. վէտք անցելոյս մերոյ վլային թէ սուտ և  
մնութիւն կարծիք նոցու . զի Աստուած ոչ երբեք  
դրոշմեաց զստրկութեան դրոշմ 'ի ճակատս Հայոց-  
զի որպէս էր յաւուրս Հայկայ Արամայ Տիգրանայ,  
Վաղարշակայ . Ա. Աշոտայ Բագրատունոյ . և Ա.  
Լեւոնի Ռուբինեանց , նոյն է . ոչ փափոխի , ոչ  
հնանայ , և ոչ ծերանայ . բայց եթէ մեք փոփոխ-  
եալ հնացեալ ծերացեալ՝ իրրեւ կամովին ավշեալ  
բարձուք զլուծ դերութեան . և զստրկութիւն  
քան զամենայն աղատութիւն նախապատիւ հա-  
մարեալ՝ 'ի նոյն առնջեալ մեռանիցուք , չիք մեղ  
Աստուծոյ : Այլ յորդամ երկիւղ և վատութիւն 'ի  
որպից մերոց փարատեցուք , և աներկիւղ արու-  
թիւն հայրենասիրութեան զդեցցուք . Աստուած  
նոյն առաջին զօրութեանց և յաջոզութեանց Աս-  
տուածն է . որպէս Քր յառաջն : Ազգութիւն և  
հայրենիք նոյն է . որպէս էր յառաջն : Բայց աւազ  
աղէտիցս , և բիւրիցս աւազ . քանզի այնչափ վա-  
ստացեալ և թշվառացեալ եմք . մինչ զի ոչ միայն  
զազդութիւն և զհայրենիս փրկելոյն պաշտպանե-  
լոյ յարութեանց . և 'ի խորհրդոց խապառ հեռի  
գտանիմք . այլ և զի յետին թշուառութիւն մատ-  
նեալ եղբարս մեր . որք 'ի զուր տարապարտուց  
զօրհանապազ մատնին 'ի զանազան տանջանս , 'ի  
պէսսէս հարստահարութիւնս , 'ի յաւարառու-  
թիւնս , 'ի լիկանս , և 'ի սպանութիւնս , չկարեմք  
պաշտպանել յատեան տիրող աղզաց :

7. 'ի յառաջին դարսն , ոչ միայն զժամանակն  
իշխանութեանց մերոցն . այլ զժամանակն անիշխա-  
նութեանցն ասեմ , յորում մարդիկ բազում մասամբ

մեծամեծ արաւթիւնս և առաքինութիւնս գործեցին քանի զան զմարդիկ ներկայ ժամանակիս . զի մինչ յաւուր նոյս բարբարոսութիւնն ի վերջին կատար կատաղութեան հասանէր , և ոչ ոք առանց մահան , յանձնառութեան համարձակէր ելանելյաւուեան և յանդիման լինել երեսաց բռնաւորաց և խնդրել ինչ մի ՚ի նոյցանէ : Դարձեալ ՚ի ժամանակին յայնմիկ գառանէին անվեհեր առաքինի հօգիք որք երկիւղ մահու և տանջանաց արհամարհեալ համարձակ մուտ և ել առնեին յատեան գատառաց և թագաւորաց , զազդ և զիրաւունս ազգային հզօր բանիւք պաշտպանէին : Զի ոմանք ՚ի նոյցանէ զհրամանն շինութեան եկեղեցեաց առնեին , ոմանք ՚ի գլխաւումանէ և ՚ի կախաղանէ զմահապարտսն փրկէին . ոմն զգերիս դրամավ ՚ի գերողացն գնէր և աղասէր : Նախքան զերիս դարձիրանակերտցի իշխան ոմն զերիս հարիւք գերիս գնէ յայլազդեաց և աղատէ : Իշխան ոմն վանեցի՝ զերեսուն գերիս գնեալ աղատէ : Հարիւր ամօք յառաջ իշխան ոմն վանեցի յետ շինելոյ զքառասուն եկեղեցիս , եկեղեցական զգեստս , անօժս սուրբս նուիրեալ , զեկեղեցին զարդարէ . և այլք բազումք այսպիսեօք առաքինացեալք ՚ի ժամանակս իւրեանց որոց սակաւուց գործք և անուանք հաղիւ յիշատակեալ տեսանի ՚ի մագաղաթեայ ձեռագիրս . և ՚ի յարձանագրութիւնս եկեղեցեաց և վանօրէից :

8. Հարք մեր ամենեքեան յետ կօրուսանելոյ զմարմնաւոր զէն պնդապէս բուռն հարին զհոգեւոր զինաւորութենէն . եղն անհամեմատ կլո-

նասէր, որով անթերի կատարեցին ղպարտիս առաջուածսիրութեան ազգասիրութեան և հայրենասիրութեան։ Հոգեւոր զինուք խորսակեցին զրանութիւն բռնաւորաց և 'ի մահուն իւրեանց երեւեցան անահ և անմահ։ Խոկ այժմ թուլացեալք 'ի կրօնասիրութեանէ չկարեմք երբէք լիովին կատարել զպարտիս մեր՝ որ առ Աստուած առ ազգն և առ հայրենիս։ Վասնորոյ մինչ դեռ իննեւտասան գարս գհրուժարտակլ աղատութեան ամենայն ազգաց 'ի լուր աշխարհիք քարոզէ։ Որով առաքինիք վուժեան համբուրել զդրօշն աղատութեան։ Ասկայն մեք ընդ հակառակն զշղթայս գերութեան ձեռուք մերովք ամրապնդեմք։ մինչ զի եթէ զպարանոցս խնդրեն՝ զայս հանեն՝ 'ի ձեռաց և յուտից զրկելով անդամատեն՝ իբրեւ ոչխար առաջի կտրչի ոչ բանամք զրերան մեր, ոչ դատաստան և ոչ իրաւունս խնդրեմք։ որտէս թէ սիրու և լեզուն մեր 'ի մէնջ գողացեալ իցեն։ Յօրժամ կիւրս օժանդակութեամբ մերս Տիգրանայ յաղթեաց կրեսոսի լուղացւոց թագաւորին և էառ զլարտիքազաքն, «Ասի թէ յառնուլ քաղաքին մի ոմն 'ի զօրականացն կիւրոսի պատահեալ կրեսոսի, ոչ դիտելով թէ նա ինքն կրեսոս իցէ, իբրեւ վերացոյց զսուրն, և կամէր հարկանել զնա, որդի նորս որ համր էր 'ի ծնէ, առ սաստիկ ցաւոց մահու հօր իւրոյ լու ծեալ 'ի կապանաց լեզուի։ բարձրաձայն աղաղակեաց, կարճեա՛ զբազուկդ, զի կրեսոս զհայր իմ սպանանես։ Զայս լուեալ զօրականին ձգեաց դձեռանէ կրեսոսի և կենդանուոյն էած առ կիւրոս։ ( Զամշի Ա. Հ. 112. երես)։ Տե՛ս

զսաստիկ սէրն հարադատ որդիոթեան , որ վաս-  
որն բնական բուռն գիւղ հօրն ի ծնէ համբ լե-  
զուն որդւոյն բանայ : Ահ , մինչեւ ցարդ թէ ո՞րչափ  
զօրականք , ո՞րչափ ձեռքք , և ո՞րչափ սուրք  
բարձրացան դհարց , զեղբարց և ազգականաց  
մերոց զարեւն կարճերոյ . բայց արձակ լեզուք  
մեր քան ի ծնէ համբ լեզուն առաւել համբա-  
ցեալ գոլով ոչ ազագակեաց առ բռնակալ զօրա-  
պեսսն և առ վայրենիս թէ կարճեա զբազուկդ .  
զի դհայր զմայր զեղբարս և զադայինս իմ հար-  
կանես : Բնդէ՛ր է այս համբութիւն . եթէ ոչ վասն  
ազգային բնական գորովոյ , զիւոյ և սիրոյ խաղառ-  
նուազութեան . վասն զի սէրն խանդավառ և  
կատարեալն զկապեալ լեզուն արձակէ , զշղմայ-  
եալ ձեռս և զոտսն արձակէ , զտկարն զօրացու-  
ցանէ . զիմանըն խմաստն առնէ . և տմենայն  
գժուարութեանց յաղթէ : Խոկ առելն զարձակ լե-  
զուն համերս առնէ , զհամբարձակ ձեռս և զոտս  
կաշկանդէ , զհզօրն ակար առնէ , զիմաստունն  
յիմարեցուցանէ և ամենայն զիւրին իրս գժուա-  
րացուցանէ :

9. Յիսուս համբերութեան քարողն և օրինակն  
սաստիկապէս բոզոք երարձ ընդդէմ անիրաւ ապ-  
տակողին իւրոյ և ասէ « Բնդէ՛ր հարիսնէ » : Մի  
թէ հնար է Հայկազանցս լինել համբերող առա-  
ւել քան . զթիսուս . որ ոչ միանդամ իրբեւ զնա .  
այլ հանապազօր բիւրիցս բիւր տպատակեցաւ .  
հազարիցս հաղար դանակոծեցաւ , և հարիւրիցս  
հարիւր մեռաւ : Բնդ ժամանեակս ժամանակս  
եղեն եղակի անհատ անձինք , որք բոզոք բար-

ձին ընդդեմ անիրաւութեանց . սակայն չեղեն լսելի . ուստի ամենեքեան իրեւ . 'ի միոջէ բերանոյ յամենայն կովմանց և աշխարհաց զձայն բարձեալ բողոքեցին առ Աստուած , առ մարդիկ և առ թագաւորս : Որպէս զի լսելի լինիցի ըստ այնմ թէ « Առաջինուն » Տեր և Տեր ըստ այսուն և յամենայն առաջինուն այս էրիւնց նույն : Ի հնումն ձայն բողոքողացն Հայաստանի ընդ հորիզոն նորա չեղանէր արտաքս . սակայն զարդիս երկաթուղեաց . հեռագրաց , և լրագրաց միջոցովք բողոք Հայոց արադ հասանեն առ ամենայն արդարասէր ազինս : Զի այժմ 'ի խաւարի գործեալքն տեսանելի և լսելի լինին լուսաւորեալ աշխարհին : Ուստի յայսմ ամի հաղիւ թէ կամք եղեն մեղ զբողոք հարատահարեալ եղբարց մերոց 'ի բերանոյ ընդհանուր ժաղովայն լսելի առնել յատեան թագաւորին : Առ այս և իմ ոչ սակա աշխատ եղեալ տառապեցայ :

40. Որպէս նախնիք մեզ . նոյնապէս մեք ապագայից մերոց անցեալ լինելոց եմք . վասնորոյ յորդորեմ զձեղ սիրելիք , զի ամենեքեան միշտ լինիցիք 'ի պատմութեան Տիգրան , վարդան և վահան , և ոչ երբեք վասակ Սարդիս և Մերուժան : Ի բաց մերժեցէք 'ի ձէնջ զոգիտութիւն վատ արանցո . և զգեղեցկութիւն առաքինի նախնեայդ , զարութիւն , զհաւատ և զհայրենասիրութիւն 'ի միտս և 'ի սիրտս ձեր տագուորեցէք : Գործք և ժամանակք նախնի առաքինեաց լիցին ձեղ առաջնորդ և խիժան առաքինութեան . համատարած դաստիարակութեամբ զանկեալ հիմն ազգին կանգնե-

ոէք 'ի վերայ հիման չընաշխարհիկ հայրենասիրացըն : Յիշեցէք զգիւցաղնութիւն, դյաղթութիւն և զտիեղերակալութիւն նահապետաց, թագաւորաց և իշխանաց ձերոց . յիշեցէք զժողովրդասիրութիւն և զհայրենասիրութիւն հայրապետաց, վարդապետաց և քահանացից եկեղեցւոյ ձերոյ . յիշեցէք զժայաստան զպերճութիւն և զազատութիւն նորա : Զի անցելոցն մէն մի բարի գործք և անուանք և յիշատակք միշտ քաղցր են 'ի սիրոս հայրենասիրաց և մօտացն յոյժ ախործելի, զի հայրենասէր եթէ 'ի ներկայս չդտանիցէ զընկեր խըր, հին հայրենասիրացն աշակերտի և ընկերանայ, որով 'ի ժողովուրդս խըր կարէ պարծել իրրեւ. զչորս հազարեան ծերունի ոմնեւ, թէեւ տիօքն պատոնի կամ երիտասարդ գտանեցի, ուստի հարց զիտրհուրդ : 'ի հայրենասիրէ . զի իմաստնասցիս . խընդըրեա 'ի նմանէ օգնութիւն . զի փրկեսցիս . զնոտ զհետ նորա և զինի ձայնի նորա . զի երջանիկ լիւ պիտիս յայսմ աշխարհիս, և 'ի հանդերձելում :

## ՅՈՒՊԻԱՆ Բ.

## ՆԵՐԿԱՅՆ ՀԱՅՈՅ

1. Եթէ զներկոյ եկեղեցական և զքաղաքական զինակ աղդիս առաջի հայրենասիրին նկարագրես ցուք, գովելի և ոչ գովելի արարք արանց ժամանակիս յայտ յանդիման երեւին աշաց ամենեցուն . զի եկեղեցին օր ըստ օրէ 'ի նախնի պերճ փառազարդութենէն նոեմանայ վասն նուաղելոյ արթուն հովուաց, և բարենախաննձ քահանացից, ժողո-

վուրդն 'ի ջերմբարեպաշտութենէ նախնեացն օր  
ըստ օրէ հրաժարեալ սառն սրտիւ հայի յեկեղեցին  
և յեկեղեցականս : Բազումք յեկեղեցականաց 'ի  
սուրբ գիտութենէ զուրկ՝ անբաւականք են պայ-  
ծառացուցանել զեկեղեցին, միմիթարել և ուղղել  
զժողովուրդն : Ժողովուրդն իրեւ անընտրող՝ շո-  
ղոքորթաց և կեղծաւորաց առաւել ունին և պա-  
տիւ մատուցանէ քան ճշմարտախօսից և անաչառ  
յանդիմանողաց : Ուստի կզերք իրը յակամայիցս  
բռնադատեալ կեղծելն և շողոքորթելն առաւել բա-  
համարեն քան զդիտութիւն և զիմաստութիւն Աս-  
տուածայինս . զի որ անաշառութեամբ վարեալ չզի-  
տաց զեկեղծելն զշողոքորթելն, և ամենայն թերու-  
թեանց ժողովուրդեան զաշս կափուցանել, իրեւ  
ատելի և թշնամի հալածեցաւ 'ի ժողովրդոց: Ժո-  
ղովուրդ ժամանակիս արձակ համարձակ նշաւակէ  
կշտամբէ յերեսս իսկ զկրերս վասն դոյզն ինչ թե-  
րութեանց նորա . իսկ կզերք որք կոչեցան սաս-  
տել, յանդիմանել, խրատել զժողովուրդն և դար-  
ձեալ միմիթարել . չկարեն համարձակ բանալ զրե-  
րանս և զդոյզն ինչ թերութիւն ժողովրդեան ուղ-  
ղել, մանաւանդ մեծատանց և իշխան կոչեցելոցն :  
Շահասիրութիւն եմուտ ՚ի ժողովուրդո մեր, և  
աստուածախրութիւն ել արտաքս . զի բազումք  
վասն դոյզն ինչ շահու ժողին զմայրենի եկեղեցին,  
և հեռացան 'ի սուրբ ստեանց նորա :

2. Ժողումք զհանճարեզս և զօրաւորս ներկա-  
յիս՝ որք 'ի ճարպիկ 'ի ճապուկ և 'ի զօրաւոր քա-  
ղաքականութենէ ժամանակիս իրեւ տկարս ոմնաս  
այնպէս ըմբռնեցան 'ի յոստայնս խորամանկութեան

օտարաց և այնչափ պատեալ պաշարեցան հոդոք աշխարհականօք նոցա , մինչ զի զհայրենեաց և զադգութենէ իւրեանց չկարացին վայրկեան մի մոտածել ազատորէն : Սրատես և հեռատես քաղաքականութիւնն դիտաց զհանճար Հայոց ծառայեցուցանել նպատակի իւրոյ . զի զոմանս կարստական արծաթով և շքով , զոմանս փառօք և պատովք և զոմանս խոստմամբ որսաց , զոմանս խորագիտութեամբ ըմբռնեաց , և զոմանս երկիխզիւ ծառայեցոյց : Ահա այսպէս բազում հանճարեզք զմեծ մասն մոտաց և ժամանակի իւրեանց օտարաց վաճառեալ , փութացին զղեկ կառավարութեան աղդին եւս 'ի ձեռն առնուլ , կարծելով թէ օտարին և ընտանեաց միապէս կարին ծառայել . 'ի յուշ շածելով զտերունեան վճիռն . թէ՝ Ո՞ւ հոքէ՛ երիշաց թերոնց ծառայել » :

3. Ի ժամանակիս յայսմիկ արդարասէրք և հայրենասէրք հրաժարին 'ի յազդային ալաշտոնէութենէ . իսկ փառասէրք , շահասէրք և կաշառառուք զամենայն հնարս հնարեն , մինչեւ ծակամուտ և սորամուտ լիցին 'ի պաշտօն ազդային . ո՞հ , այսպիսիք փոխանակ պատելոյ զվերս ժողովը ըրդեան և փոխանակ դեղ և զարման մատուցանելոյ յաւելուն զնորանոր վերս 'ի վերայ վիրաց և ցաւս 'ի վերայ ցաւոց : Եւ յորժամ ժողովուրդն ընդդէմ այսպիսի մխասակար արանց բողոք բառնայ , նոքա վրէժինդը ութեան երկաթի դաւազանատ այնչափ հարկանեն զկառափ նոցա մինչեւ ակամայ 'ի ներքոյ երկաթի լծոյն խոնարհեցուցեն զպարան . նոցա : Այսպիսիք իբրեւ օձ դարանակալ նկա-

տեն թէ յորժամ հայրենասէք ոք հրաւիրի ՚ի պաշտօն ազգային , վասն զնոսա վազվաղակի կործանելոյ զամենայն որոդայթս նենդութեան պատրաստեն . և յորժամ այսու չյաջողին , յայնժամ հրէական սրտմտութեամբ և անզգամութեամբ մատնեն զնոսա պետութեանց և իշխանութեանց իրեւ անհաւատառիմն , միսասակարա յիրս արքունի և կասկածելիս . ասելով թէ՝ հակառակ է կայսեր և այլն : Որպէս զի ինքեանք իրեւ Սիւնեաց իշխան վասակ հաւատարիմ երեւեալ յաշ Յաղկերտից՝ իրեւ զնա առցեն ՚ի նմանէ փառս պատիւս և իշխանութիւնս : Ահա այս եղեւ թէ օտարաց և թէ մերոց առ մեզ դարանակալ քազաքականութիւն , զսիրոզս հայրենեաց , զհաւատարիմն ազգին զրկել ՚ի պաշտօնէութենէ ազգային . իսկ ինքեանք անսիրողք և անհաւատարիմք ազգին և հայրենեաց խարդախութեամբ և բուռն զօրութեամբ մոտանել ՚ի պաշտօն ազգին , որ զնոսա իրեւ իժ և քարր ՚ի յանդէտո մնուցանէ ՚ի ծոց իւր և միտափ : ՄՇ , զի մինչ յուսով սպասեալ մնայաք թէ թիւք այսպիսեաց օր ըստ օրէ պակասին , և թիւք հայրենասիրաց բազմանան . սակայն զհակառակին տեսաք և ողբացաք , զի թիւ հայրենասիրաց սակաւանայ օր ըստ օրէ , իսկ թիւն շահասիրաց և միսասակարաց բազմանայ :

4. Ի սեղան մեծատանց գոխանակ տնանկաց և աղքատաց բազմին միմոսք հայկատակք և շողոքորթք . ոչ յիշեցին թէ ՚ի սեղան Աշոտոյ ողորմածի քառասուն աղքատք բազմէին ընդ արքային : Ճ'ոխք և աղնուականք վասն պճնազարդելոյ դանձինս և

դկանայս իւրեանց . և վասն առօքեայ զբօսանաց  
և զուարճութեանց վատնեցին զմեծամեծ գումարս  
դրամոց . իսէ Հանն շնուանեան և աղապահնեան հայրենեաց և  
ողբին շլամայն ինայեցին և եղին անողորմ Պէտքառ : Իշ-  
խանք արհամարհեցին զադքատս , հատին զվարձս  
մշակաց , սիրեցին զկաշառս և զինչս և կալուածս  
որբոց և այրեաց նենդութեամբ կամ բռնութեամբ  
յափշտակեցին : Առաջինի մեծատունք , ճոխք ,  
ազնուականք և իշխանք 'ի հազարաց այր մի հա-  
զիւ դտանի , զի Արքահամ և Յօր սակաւք են ,  
իսկ Ղազարսի մեծատունք բազումք : Ի մէջ հա-  
րիւրաւոր մեծատանց և իշխանաց նուպար իշխան  
միայն դտաւ . որ զկտակն կարապետ վարդապետի  
Շահնազարեան եռապատիկ յաւելուածով 'ի կա-  
տար Էած և վասն թարդմաննութեան վիպամատե-  
նից Հայոց 'ի բարբառ Գաղղիացոց ոչ խնայեաց  
մեծամեծ ծախուց : Արդ՝ ուր են 'ի յանձինս պան-  
ծացեալ ճոխք և իշխանք Զմիւռնոյ , Բիւզանդիոնի ,  
Հնդկաստանի , Պարսկաստանի և Ռուսաստանի ,  
նա և մեծին և փոքուն Հայաստանի , եթէ ունին  
գործ ինչ հալրենասիրութեան ածցեն յանդիման  
և յերեւան . զի և մեք ներբողեսցուք զգործս  
նոցա : Շրջեաց ընդ ամենայն տեղիս . ուր բնա-  
կեցան Հայք , ահա անդ տեսանիցես թէ անուանք  
այժմեան մեծատանց ոսկեղէն տառիւք դրոշմեալ  
են 'ի ճակատս դրանց կրպակաց . սրճարանաց և  
պանդոկաց . իսկ 'ի սակաւ տեղիս միայն անուանս  
եզակի հայրենասիրաց հազիւ ուրեմն կարես տե-  
սանել 'ի դրանդիս դպրոցաց դրոշմեալ :

5. Յերեսուն ամաց հետէ ազգայինք մեր իբ-

թեւ սթափեալ 'ի քնոյ գովելի փութաջանութեամբ  
 ձեռն 'ի դործ արկին շինել զվարժոցս . և յաճախել  
 զթիւն ուսանողաց : Ոմանք 'ի բարեմիտ մեծա-  
 տանց արդեամբք ձեռնտու եղեն շինութեանցս և  
 բազում այրիք ոչ զլացան զլումայն իւրեանց ար-  
 կանել 'ի գանձանակն : Հայրենասէրք բիւր գժուա-  
 րութեանց յաղթելով , օր ըստ օրէ բազմացուցին  
 և բարձրացուցին զշինուածս : Զլեզուազիտութիւն  
 և զուսանողական գիտութիւնս մուծին 'ի դպրոցս  
 զմիտս մանկանց ուսմամբ ճոխացուցին , բայց ա-  
 ւազ զի յամենայն դպրոցս իսկ մոռացան կամ  
 զանց արարին նախ զսիրտս մանկանցն կրթել և  
 դաստիարակել 'ի մարզս աստուածսիրութեան աղ-  
 դասիրութեան և հայրենասիրութեան : Արդեթէ  
 բարեկարգ իցէ դպրոցն և թէ ոչ . եթէ գիտուն իցէ  
 վարժապետն և թէ ոչ . եթէ առ այս եղակի նպա-  
 տակ ոչ լիցին ուղղեալ և մարզեալ զմիտս և զսիրտ  
 մանկանց Հայոց՝ վայրապար է ուսանողութիւնն ա-  
 շակերտաց , և ընդունայն է աշխատութիւն վար-  
 ժապետաց : Ահա այսօր թէ բարեկարգ կարծեալ  
 դպրոցք մեր , և թէ անբարեկարգ առանց կրօ-  
 նական , բարոյական և աղդային նուիրական ինչ  
 նպատակի լոկ տեսական ուսմամբ բեռնաւորեն  
 զմիտս մանկանց . իսկ սիրտք նոցա անմարզ մնա-  
 ցեալ խոպանանայ և հեռանայ 'ի յառաքինական  
 և յազգասիրական գդացմանէ : Ուստի բազումք  
 ընդ իս ցանկանալով ցանկացան , զի միակերպու-  
 թիւն ուսման , միակերպութիւն հայրենասիրութեան , և  
 կրօնասիրութիւն անարդել մուտ դացի 'ի համօրէն

գպրոցս ազգային . 'ի ձեռն փորձ հայրենասէր և վկայեալ վարժապետաց առանց որոց ոչ դոյ ազգային միութիւն . փրկութիւն և նորոգութիւն , Յիշեցէք զրան Մօլթքէ զօրապետին Գերմանացւոց , որ ասէր , «Հնորհակալ Եմք 'ի դիւղացի վարժապետաց մերոց , զի դայս յաղթութիւն նոքա ուսուցին մեզ » :

6. Ի մասին Պարսից և Ռուսաց , 'ի կողմանս Մարաց և Ասորոց 'ի Ներքին սահմանս մեծին և փոքուն Հայաստանի , սակաւալթիւ դպրոցք միայն գտանին 'ի դլխաւոր քաղաքո . և այնոքիլ Եւս առանց ուղղութեան և բարեկարգութեան . և առանց ուսեալ վարժապետաց , իսկ յամենայն գիւղօրայս հայաբնակս 'ի տասանց և 'ի քանից զմին հաղիւ կարես տեսանել որ ունիցի զդպրոցս , և այն Եւս առանց օրինաւոր գասատուի և հարկաւոր գասագրի . զի իմ տեսեալ է 'ի գիւղօրայս , յորում մանկունք երեք և չորք 'ի վերայ միոյ քերականի և սաղմոսի դաս առնուին , վասն աղքատութեան : Ի քանիցս յայսցանէ կարէ հայրենասէրն իմաստասիրել թէ այժմ 'ի մանկանցս Հայոց 'ի քանիէ և 'ի քառամնէ մինն հաղիւ գտանի 'ի դպրոցի . իսկ մնացեալքն մնան զուրկ 'ի կրթութենէ և 'ի կարեւոր գիտութենէ : Ժողովուրդն ծարաւի գոլով ուսման և կրթութեան , յորժամ զեպիսկոսը զվարդապետ զքահանայ տեսանէ . յորժամ հայրենասէր իշխան և փարթամ' տեսանէ . հառաջմամբ օրտի զցաւն իւր յայտնէ տաելով . ոչ գոյ մեզ վարժապետ և վարժարան . մեք որբ և տէտէտ մնացաք , սակայն վասն զաւակաց մերոց ըդ-

ձամք զի կրթեսցին և խմաստնասցին : Ո՞ հայրենասէր կղերք և իշխանք, իրբեւ համազոյդ ամոլք առաքինութեան փութացէք խորհրդով բանիւ և արդեամբ կրթել զմանկացին Հայոց ՚ի յաստուածուաշտութիւն և ՚ի հայրենասիրութիւն . զի այս է առաջին և նորիցական պարտիք ձեր :

7. Ո՞հ , առապապեալ և խախտեալ ժողովուրդ . ո՞ կարէ զաղէտս և զտառապանս քո ՚ի քարտէզ մատենիս նկարել . ո՞հ , ողորմանուարան և աշխարհելի վիճակ քո սիրտ իմ բեկաննեն , և զաղիս խորովին յոյժ . բիւր հալածանաց և հարուածոց հանդիպեալ յաղթեցեր համբերատար կենօքդ մինչեւ ցարդ . սակայն այժմիկ այլ եւս չկարես աղքատութեան և փորձութեան համբերել . որ ժամանակի համեմատութեամբ առաւել ծանրանայ ՚ի վերայ ուսոցդ : Ժաղովուրդն ասէ հայրենիթէ փորձութիւն ՚ի Տեառնէ է համբերէտաք սակայն՝ մարդիկ աշխարհիս այսորիկ ընդդէմ կամաց Արարչին գաղանաբար յարձակին ՚ի վերայ մեր . զի ինչք , պատիւ և կեանք եղբարց մերոց և մեր յարաժամ ՚ի վտանգի գոլով չեն ՚ի յապահովութեան : Օտարք յարաժամ զվաստակս մեր առաջի աչաց մերոց ուտեն . քրոտամբ երեսաց բազումն վաստակեցաք , սակայն ՚ի քաղցէ և ծարաւէ մեռանիմք , զի բռնակալք , բարբարոսք , աւազակք և օտարք հարստահարեցին , գողացան գերեցին գերբեցին և սպանին զմեզ , ել , ել հայրենասէրդ ՚ի ծովեղերայ մայրաքաղաքացին մուտ ՚ի ներքան անդր ՚ի քաղաքս և ՚ի գիւղս Հայստանի , անդ տեսցես զանհանդուրժելի կաւակոխութիւն եղբարց քոց . միթէ օր մի վայր-

կեան մի կարասցե՞ս համբերել , քաւ լիցի , քաւ :  
 8. Այլ արդ՝ ո՛ իրրեւ զգթածն թիսուս ասիցէ  
 « Գլուխ ես ՚ է ժողովաբառ պէտք նշնչ Են ՚ է յանապար ուղիւ » .  
 որք բնակի.քդ՝ ՚ ի մայրաքաղաքս իրրեւ գերեալքն  
 ՚ ի Բաբելոն զիժացէ.ք ժողովրդեան , որ բնակին ՚ ի  
 յանապատս ՚ ի մէջ օձից և կարճաց , հարցէ.ք զող-  
 ջունէն Հայաստանի , ոյք սիրէ.ք զջէր . զի յոտից  
 մինչեւ ցղլուխն չիք ՚ ի նմա առողջութիւն . զի  
 Հայն է այրն այն որ յերուսաղէմէ իջանէր յերի-  
 քով , անկաւ ՚ ի ձեռս աւաղակաց . որք մերկա-  
 ցուցին զնա , վերս ՚ ի վերայ եղին , ժողին զնա  
 կիսամահ և գնացին : Արդ նմանեալ մարդասէր  
 Սամարացւոյն գինի և ձեթ ածէք ՚ ի վերայ նորա .  
 բարցէ.ք ՚ ի վերայ գրաստոց ձերոց յանձնեցէ.ք զնա  
 հաւատարիմ և մարդասէր պանդոկապետի միոյ .  
 Զի ժողովուրդս այս ոչ կոյր է աչօք , ոչ խուլ է ա-  
 կանջօք և ոչ յիմար է մոտօք , այլ վերաւորեալ է .  
 տեսանէ զմարդիկ հեռաւոր աշխարհայ ձայն ա-  
 զատութեան ՚ ի յըքեւմոյից և ՚ ի Հիւսիսայ հասանէ  
 տու նա . սակայն նա կիսամահ անկեալ կայ . անոր  
 Հագարու և սուրն Եստուայ արտօ զայս : Ուստի  
 ժողովուրդն առողջութիւն խնդրէ . զվաստակն  
 ձեռաց իւրոց ուտել յապահովի առանց բռնու-  
 թեանց : Արդարեւ եթէ զներկայս ընդ անցեալ  
 ժամանակս հարց և հաւուց մերոց ՚ ի կշիռ գիցուք  
 գուցէ ՚ ի մերս բարւոյ ինչ առաւելութիւն տեսա-  
 նիցեմք . սակայն եթէ զաւուրս և զվիճակս մեր  
 ընդ բարեկեցիկ ժողովրդեան իննեւտասաններորդ  
 դարու համեմատիցեմք , ՚ ի մեղ անհուն նուազու-  
 թիւն տեսեալ տրտմիմք յոյժ :

9. Արդ անցեալն չէ 'ի ձեռս մեր . ապագայն  
է միշտ կասկածելի է , սակայն ներկայն սեփական  
է մեղ . ումանք 'ի մէնջ նստեալ ողբս յօրինեն 'ի  
վերսայ անցելոյն և այլք սպասեն յաջողութեան  
ապագային , բայց պարտ է խելամտել թէ ամե-  
նայն յաջողութիւնք և բարութիւնք 'ի ներկայէն  
ունին զկախումն . զի եթէ յայսմ ամի սերմանեա-  
ցես , միւսում ամի անտարակոյս հնձեացես . իսկ  
եթէ յուլացեալ չսերմանիցես յայսմ ամի , չկարես  
հնձել յաջորդ ամին : Առածն առէ թէ՝ ժամա-  
նակն զամենայն ինչ տնօրինէ , սակայն ժամանակն  
չունի , ոչ դլուխ , ոչ ձեռք և ոչ ոտք . անկէտ և  
անկայուն ժամանակն որպէս 'ի վերսայ անշունչ ի-  
րաց սրարշաւ անցանէ , նոյնպէս 'ի դլխոց անդործ  
և անշարժ մարդկանց սահեալ երթայ . ուստի պարտ  
է ըստ մեծին Աղեքսանդրի զհարկ ներկայ ժամա-  
նակին ճանաչել . և զոմենայն յաջողութիւն 'ի  
նմանէ սպասել և ոչ 'ի յանցելոյն կամ յապագա-  
յէն . վասն այսորիկ որ սերմանելոցն է , սերմա-  
նեսցէ , որ կարող է առնել զբարիս ինչ այսօր եղբարց  
և ազգականաց իւրոց . վաղեան մի սպասիցէ :

10. Այժմիկ ընդհանուր ազգայինք մեր պար-  
տին յամենայն գաւառս , 'ի քաղաքս , 'ի գիւղ ,  
բանալ զվարժաբանս , զբարոյական գիտութիւն և  
զհայրենասիրութիւն և զշահաւէտ ուսմունս սեր-  
մանել 'ի սիրոս արանց կանանց և մանաւանդ . աղա-  
յոց . պարտ է ներկայիցս աներկիւղ արութեամբ և  
միութեամբ փութալ կարճել զձեռս հարստահա-  
րողաց և զանուր բռնութեան բռնաւորաց խոր-  
տակել . զուր վայրենի աւաղակաց և լեռնակա-

նաց վշլել և խորստակել . որք 'ի վաղուց հետեւ եղբարց մերոց մահ սպառնացեալ զսիրու նոցա ահաբեկեն և սարսափեցուցանեն , զի եթէ բռնութիւնք և հալածական , ընդ նմին սոսկումն և սարսափ գաղնաբարոյ արանց 'ի միջոյ բնակինջ չլիցի , կարի գժուարին է զազդայինս ըստ արժանւոյն կրթել և գաստիարակել . զի ձեռքք հարստահարաց զընթացս յառաջադիմութեան մերոյ կապեալ կաշկանդեն : Արդ զի եթէ միայն զթիւ սպանելոցն միոյ ամի 'ի հաշիւ բերիցուք , անցանէ քան զհինդ հարիւլն : Ո՞հ մանաւանդ միշտ պիտանիք և պատուականք յազգէ մերմէ անգութ երկաթոյն Մարացն մատնին . զի իբրեւ չարանախանձ դեւ չարակինեալ չժուժեն տեսանել 'ի մեզ զարս պատուականս և պիտանիս :

11. Արդ՝ որք որդիք էք Յարեթեան տոհմիս . զգուշ լերուք անձանց ձերոց , որ վասն անսիրելութեանցդ և անողոքութեանցդ քո զրիւրատեսակ արկածս մահուս կրեցեր . բաւ է արդ զգօնացիք . սիրով հայրենեացդ և ազգիդ արիացիք , և միութեամբ զգօրութիւն քո 'ի մի կետ նպատակի կեզրոնացո՛ . զի առանց միութեան ո՛չ դոյ ազդ , հայրենիք և վրկութիւն : ի ներկայու մէն մի ազգային ջանահնար ինի հարստանալ և 'ի հանգստեան վայելել միայն . բայց ոչ ապաքէն առանց ամբողջ ազգայնոցս հարըստութեան , հանգստեան , մասնաւորաց հարստանալն և հանգստանայն միշտ տագնապ է խղճի և մտաց . սիրուք անագորոյն և աղիք երկաթիք միայն կարեն 'ի մէջ հանրական աղքատութեան ազգին

հանդստեամբ զշարատութիւնն վայելել . ՚ի մէջ մահուան եղբարց զիեւանս տեսանել . այլ որ մարդասէրն է և հայրենասէրն չկարէ զայս տեսանել և համբերել :

12. Թողեալ զմանրապատում՝ իրողութիւնս ներկայիս յուշ արարից համայն հայրենասիրաց . զի փութասցին զեկեղեցիս և զվանօրայս բարեղարդել ընտիր ընտիր եկեղեցականօք , և վանականօք . զներքին կառավարութիւն ազգին բարեկարդեցն հանճարեղ և հայրենասէր առաջնորդօք և իշխանօք . զդպրոցս ծաղկեցուսցեն բարոյական և իմաստուն դպրօք և վարժապետօք . զբնդ հանրութիւն աղդին վերանորոգեցցեն ընդ հանրական միութեամբ և դաստիարակութեամբ . զրազուկ նորազորացուսցեն և քաջութեամբ , զիրաւունս նորապաշտպանեցցեն հզօր բանիւք և իմաստութեամբ , զիւառս ազգին և հայրենեաց բարձրացուսցեն մինչեւ ՚ի գլուխն Մասեաց անօրինակ հայրենասիրութեամբ : Եւ եղիցին ամենեքեան արք և կանայք , ծերք և տղայք մեր ուսեալ յԱստ.ծոյ և փառաւորեալք ՚ի նմանէ . ամենեքեան լիցին ազնուազութք , եղբայրասէրք , հայրենասէրք առաջի Աստուծոյ և մարդկան : Զայսոսիկ մազթեցի ՚ի Տեառնէ վասն ամենայն Հայոց . զայսոսիկ ցանկացայ տպաւորել ՚ի միուս ներկայիցս և ապա եկելոցն . զորս Տէր ինքն պահեսցէ ՚ի սէր և ՚ի միութիւն յայսմ հետէ մինչեւ յաւիտեան :

ԽՈՐՀՄԴԱԿԱՆ ԱՌԱՆ Ի ՎԵՐԱՅ ԱՊԱԳԱՑԻՆ ՀԱՅՈՅ  
Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵՆՔ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱՆԻՑԱ-

1. Ո.յ.ք ասէին ցիս որդի մարդարէաց  
՚ի վերայ Հայաստանի , որպէս Եսայի , Երեմիա ,  
Եղեկիէլ , և Դանիէլ հոգւովան սրբով կանխագուշակ  
եղեն ՚ի վերայ Հրէաստանի , Բարելացւոց , Ասո-  
րեստանեաց , Եղիպատացւոց , Յունաց և Պարսից .  
և պատգամք նոցա առ յապա ժամանակս առին  
զլուծումն և ճշոփէ կատարեցան ՚ի վերայ աղ-  
գաց , աշխարհաց և պետութեանց : Ո՛ Հայաստան  
Հայաստան՝ ահա տրուպս փոքր ՚ի շատէ գիտե-  
լով զանցեալն և զներկայն քո . մարդարէանամ ՚ի  
վերայ ապագային քո : Արդ եթէ զպատուէր Աւե-  
տարանին պինոտ պահեցես ՚ի սրտի քում հաւա-  
տով . և կատարեցես սիրով . եթէ պատուեցես  
զպատգամն օրինաց և մարդարէից . մտացդ ուղ-  
ղութեամբ , և առնիցես ճշմարտութեամբ . եթէ  
իբրեւ անկեղծ հայրենասէր սիրեցես զիրատ իմ  
զգօնութեամբ . և իբրեւ հարազատ որդի սիրելի  
նոքօք ուղղեցես իմաստութեամբ , զոր իբրեւ  
վշտակից հայր ոչ դանդաղեցայ աւանդել քեզ ա-  
պաքէն փրկեցես զանձն քո . զազդն քո . և զհայ-  
րենիս քո : Զի ուխտն աստուածսիրութեան և եղ-  
բայրսիրութեան քաւեցէ զմեզս մեր և զմեզս  
հարցն մերոց . և սրբեցէ զփուշ տատասին և զո-  
րոմն խռովութեան , ատելութեան և անմիաբանու-  
թեան ՚ի յադարակէն Հայկայ . եռանդավառ հո-  
գին և տենչ հայրենասիրաց ՚ի ծագաց երկրի ժո-  
զովեցէ զյորուեալն Գրիգորի ՚ի դաւիթ կաթողիկէ

եկեղեցւոյն Հայաստանեայց . կորով հոկայից աղեղ-  
նաւորաց վերստին բնակեսցի ՚ի սիրտս որդւոցն  
Հայաստանի . կրկին լարեսցի լայնալիճ աղեղն Հայ-  
կայ . և առաթուր արկցէ ոտից Հայկազանց զբէլն  
բռնացեալ և Հայն ժառանդեսցէ երկրորդումն  
զբաժին ժառանդութեան իւր Հայկայ :

2. Հայաստան , որ նստիադ . ՚ի գարաստանն Ե-  
ղեմակոն . աշխարհ ծննդեան և մննդեան դիւցա-  
զանց Հայկեան : Ցնծա և ուրախ լեր . զի երկիր  
քո ոչ եւս կոչեսցի լքեալ . զի տէր եղիցի պահա-  
պան ՚ի վերայ պարապաց քո զտիւն ողջոյն և զդի-  
շերն ամենայն . մերկացիր դհանդերձ սոդոյ քո , զի  
մարք քո զմանկունս իւրեանց ՚ի վերայ ուսոց բար-  
ձեալ բերիցեն և ամենեքեան որք տեսանեն և  
ասասցեն սոքա են զաւակք օրհնեալք յԱստուծոյ  
և ուրախութեամբ ուրախ լիցին ՚ի տէր . երկիր  
քո խռնեսցի ՚ի բնակութիւն . շինեսցին աւերակք  
քո յաւիտենից . և յայտնեսցի փառք տեառն Աս-  
տուծոյ մերոյ ՚ի նոսա զի ողորմեցաւ Տէր Հայա-  
տանի :

3. Զի ամենայն , որ կրէր զանուն Հայկայ և Ա-  
րամայ . կոչեցան միմեանց Հայր , մայր , քոյր , եղ-  
բայր , ազգ , ազգական , ընտանի , մերձաւոր և  
բարեկամ . որք սուրբ և անմերկին սիրով միացան  
՚ի մի միաբանութիւն բնտանութեան և զկեղու ա-  
նուն անմիութեան և սղծութեան ՚ի միջյ բնաջինջ  
բարձին . վասն այսորիկ , որ եղ սահման շափ և  
ժամանակ աղգաց երկրի և թագաւորութեանց ,  
զչափ և զթիւ աւուրց պանդխտութեան մերոյ Հա-  
մառօտեալ հանցէ զմեղ ՚ի տանէ ժառայութեան

Յաղարայ. Որպէս զորդիս Յակոբայ Եհան՝ ի տանէ  
ծառայութեան Եղիպտացւոց՝ ի ձեռն Առվաշսի ծա-  
ռայի իւրոց՝ ի յերկիր բարի և պարարո :

4. Արդ՝ դու տուն Յարեթի, աղդ և ժողովուրդ-  
Հայոց մի և մի երբէք անկցին ՚ի մտաց և ՚ի յու-  
շոյ քո բանքս այս . և մի մոռացօնք լիցին քեզ յի-  
շատակս այս թէ՝ դուք ամենեքեան ՚ի միոնչ նա-  
հապետէ սերեցաք, ամենեքեան ունիք զմի և  
նոյն պատմութիւն և զյիշատակ . զմի և նոյն լե-  
զու և զդպրութիւն . զմի և նոյն հայրենիք և  
գկրօն . զմի և նոյն նուիրական զդացումն ՚ի ժա-  
մանակի ձախորդութեան և յաջողութեան : Արդ՝  
յորժամ՝ այսպիսի երկնառուր, եղակի յիշատակօքս  
այնպիսի ներքին սիրային սերտ կապակցութիւնս  
առնիցես ընդ համադդային եղբարս քո . զորս ան-  
հնար լիցի մեզ առնել ընդ օտար աղինս . յայնժամ  
աչք ձեր տեսցեն զշայատան փառօք մեծացեալ .  
աչք ձեր տեսցեն զաստղն Հայկայ փայլեալ ՚ի գա-  
գաթն Մասեաց . աչք ձեր տեսցեն զհրեշտակն Հա-  
յաստանի . որ ՚ի տուէ իրբեւ ամազ հովանի լիցի  
՚ի վերայ քո և ՚ի գիշերի սեամբ ամսոյ առաջ-  
նորդեսցէ քեզ :

5. Ըստիրքն յուխտէն եկեղեցւոյ նստցին յա-  
թոռ սրբոյն Գրիգորի, հոգւովի մեծին Ներսիսի .  
հայրական սիրով հովուեսցեն զհօտն հովուապետին  
Յիսուսի . նորոդեսցեն և բարձրացուսցեն զփառմն  
սիօնի : Ժողովրդասէք Եպիսկոպոսք խնամակալք  
լիցին որբոց և այրեաց իրբեւ հարք հասարակաց.  
վարդապետք չնորհօքն Աստուծոյ. և գիտութեամբ  
Ա. դրոց զհուր աստուածային սիրոյն բորբոքեսցեն

Կ միտս և 'ի սիրտս համօրէն Հայոց : Շրթունք քահանայից զգուշասցին գիտութեան . միսիթարեսցեն զսդաւորսն ժողովրդեան . զբեկեալն պատեսցեն , զիմիրաւորեալն բժշկեսցեն : Ճըագ նոցա դիցի 'ի վերայ աշտանտկին Գրիգորի . լուսաւորեսցէ զխաւարն անդխոռութեան Հայաստանի . աղն համեմեսցէ զանհամութիւն տանն Յաքեթի :

6. Եռանդն աստուածագաշտութեան սրբոց Հարց մերոց , սէր կրօնի և հաւատոյ նոցա իրրեւ անմուտ արեգակ պայծառապէս փայլեսցի 'ի միտս և 'ի հոգիս հաւատացելոց . զի սէր հաճեսցի միւսանդամ ընակիլ 'ի յեկեղեցիս Հայաստանի . և դիցէ 'ի հիմունս նորա զվէմընտիր պատուական . ձայն պահապանաց նորա և ձայն փառափանչաց անուան Աստուծոյ բարձրասցի մինչեւ յերկինս . և 'ի նոյն բարբառ առ հասարակ ցնծասցեն . ողջոյն տայցեն միմեանց 'ի համբոյր սրբութեան . յօդիւ լրման սիրոյ և խաղաղութեան յօդեսցին 'ի դըլուխն Քրիստոս եւ եղիցին որդիք լուսոյ և որդիք տունջեան :

7. Նահապետք , թագաւորք և իշխանք Հայկայ յարիցեն 'ի ձայն հաւոյն հայրենասիրի , և ուրախ լիցին դատերք երդոցն մօրն Հայաստանի . Հայկ պասակաւոր որդւովք իւրովք ելցէ 'ի դահոյս մեծութեան իւրոյ . կառք նորա նման կառացն փարաւոնի , զօրք նորա ըստ զօրաց մեծին Արտաշեսի , յաղթութիւն նորա ըստ յաղթութեան Աղեքսանդրի : Կարմիրն վարդան ընտրելագոյն ընկերակցօք կայցէ զօրագլուխ արիագունդ բանակացն Հայկայ . և ուսուցէ որդւոյն Հոյտաստանի ա-

( 544 )(

բետմբ չափ նահատակել՝ ի վերայ հայրենի օրինաց  
և աշխարհաց :

8. Աղամախօս լեզուն Արամայ յայտնապէս քա-  
րովեսցի ամենայն աղանց երկրի իրը առաջնաստեղծ  
բարբառ . տառըն Մեսրովիրայ իրրեւ երկնատուր  
պարդեւ միշտ անշարժ և անփոփոխ մնասցէ ՚ի միտո  
և ՚ի լեզուս հայկաղանցս մինչեւ ՚ի կատարած աշ-  
խարհի . ոսկեղարեան դպրութիւնք թարգմանչաց  
մերոց ընդ ամենայն երկիր ծաղէ ՚ի ծաղ ծաւա-  
լեսցի ՚ի հեռաւորս և ՚ի մերձաւորս :

9. Մատենադիրք, վիսլասանք և բանաստեղծք ք  
չայոց հզօր բանիւք և արդեամբ բազմեսցին ՚ի  
կաճառս իմաստնոց, հանճարեղ բարբառ . նոցա ա-  
հաւոր իլիցի առաջի դատաւորաց և թագաւորաց  
աշխարհիս . աղդու դրիչք նոցա իրրեւ սուր երկ-  
սայրի հատցէ խորտակեսցէ զրոնութիւն բռնաւո-  
րաց և խոնարհեցուոցէ զանբարտաւանութիւն ամ-  
բարտա անից երկրի . խորհուրդք և իմաստու-  
թիւնք նոցա զօրացուոցին զսիրս լքելոց և տարա-  
կուսելոց , և եղիցին առաջնորդք և հայելիք հայ-  
րենասիրութեան :

10. Ամենայն՝ որ սիրէ զազդն և դհայրենիս պարտ  
յանձին կալցի զամենայն զբարի յատկութիւնս զձիրս  
և սովորութիւնս առաքինի նախնեաց անվիժար և ա-  
նաղարտ պահել . իսկ զօտարամուտսն իրրեւ զթոյն  
ապականիչ վարուց և բարուց աղդայնոցս մերժել  
և հեռացուցանել ՚ի միջոյ . որպէս զի ամբիծ հա-  
յութեամբ և անարատ քրիստոնէութեամբ կաց-  
ցուք յաշխարհի :

11. Ոսկերք քաջաց և առաքինեաց . որք ՚ի գե-

բեղմանս են ցողովն հայրենասիրութեան դուարթասցին և պատարեսցին։ Տօնք և յիշատակք նոցա զաստուածարեալ գհոգիս նոցին ՚ի բարձանց զսէր նոցա ՚ի գերեզմանաց բերեալ բնակեցուացին ՚ի սիրտակենդանեաց և որդիք Հայկայ անմուաց յիշատակօքս իրբեւ արծուի արագեսցին մանկութեամբ և արութեամբ երամովին երթիցեն և ոտք նոցա մի երբէք վառակեսցին։

12. Արք զօրութեան ելցեն ՚ի լերինս ՚ի բլուրս ՚ի համբաս հայրենեաց խայտալով ժողովիել զշուշան փառաց . անդ ՚ի յուշի եկեալ զգեցցին զզօրութիւն և զարագոթիւն հարց և հաւոց իւրեանց . ՚ի յանտառաց իւրեանց վանեսցին զորջացեալ գաղանս վայրենիս . և ինքեանք կերեցին զպառող ծառոց իւրեանց . և ՚ի բարձանց Հայաստանի տեսցեն զթշնամիս , որք գային ՚ի վերայ Հայկայ ընդ մի ճանապարհ պարտեալք ամաչեցեալք և տարակուսեալք վախիցեն յետ կրյս ընդ եօթն ճանապարհ։

13. Ամոն և արօրն միութեան հայրենասիրաց վարեսցէ զամենայն գաշտօրապյն Հայաստանի , անը բաժանելի սէրն ընկերական պտղաբերու արացէ զանդս և զանդաստանս . ՚ի վոքաւէ մինչեւ ցմեծամեծս կերիցցեն զվաստակս ձեռաց իւրեանց . զուարճասցին զինեաւ , ուրախութիւն յաւիտենից ժառանդեսցեն . օրհնեսցեն զջէր և ասացեն արդարեւ զի՞ բարի կամ զի վայելուչ է եղբարց ընտկիլ ՚ի միասին։

14. Բնակիրչք ամենայն քաղաքացն Հայաստանի քակեսցին իսպառ զիսարդախութիւն վաճառաց . զինճիւն անիրաւութեան հանցեն ՚ի սրտից իւ-

րեանց , սիրեսցեն և պատուեսցեն զգիւղաբնակ զեղբարս իւրեանց , զադքատոս անյարկս տարցին ՚ի տունս իւրեանց , զի կանուխ ծաւալեսցի լոյս դիտութեան միութեան և փրկութեան յորդիս Յարեթի . զի հանդարտեսցի ահն հեթանոտաց և խորտակեսցի աղեղն պատերազմողայն :

15. Օրհնութիւնք արդարոյն Նոյի եկեսցեն ՚ի դրուխ յարեթականացս . ընդարձակեսցին սահմանքն Հայաստանի ըստ աւուրցն Արամայ և Արտաշէսի . Արք զօրութեան Հայկայ ՚ի սղնդակազմ միութեան իւրեանց զօրասցին յոյժ յոյժ , դիմահար և ակնածելի երեւեսցին իրեւ անառիկ պատնէշն և իրբեւ անմատոյց բերդս : Զի ամենեքեան փութասցին ելցեն ՚ի բերդ ամրութեան . կազմեսցեն զվահան . և լուիցեն զպատգամ խրախուսանաց Տեառն որ ասէ . Զայն տուք Այրարատեան դնդին և ասքանաղեան դօրուրդ :

16. Վաճառականք ընդ ծով և ընդ ցամաք բազմասցին . վորձ և ճարպիկ ընկերութիւնք Հայկայ զշահարեր նաւս իւրեանց ուղղեսցին ՚ի վերայ ամենայն ծովային ճանապարհաց . ընդ ծով և ընդ ցամաք ժողովեսցեն զհարստութիւն ՚ի շտեմարանս Հայոց պարկեշտ կուսանք և երիտասարդոք զարդարեսցին զարդու և ուրախասացին որպէս ՚ի փեսայութեան Արաւաչէսի և ՚ի հարսնութեան Սամենկան :

17. Աշխոյժ մոտաց Հայոց՝ զգիտութիւն զհանճար և զարուեստոս այնչափ արադ ծաղկեցուացէ յորդիս Թորդոմայ , մինչ զի մանկունք Աթենացւոց , Խոտալացւոց Բրիտանիոյ , Գերմանիոյ և Գաղղիոյ ՚ի ծագաց երկրի եկեալ խնդըեսցեն զիմաս-

առոթիւն և դհանճար թորգոմայ. դարմասցին ընդ-  
մատանց արուեստաւորացն Հայկայ և գովեսցեն  
զճոխապանծ հանճարն Արամայ :

18. Հայք զպատիւ և զշահ համադդեացն միշտ  
նախապատուեսցեն յորժամ ընդ ազգս հեռաւորս  
և մերձաւորս առնիցեն հաղորդակցութիւնո . յա-  
ջողութեամբ և հարստութեամբ նախ յաղեցուացեն  
զմանկունս ժողովրդեան իւրեանց . խորադիտու-  
թեամբ և կենցաղագիտութեամբ պաշտպանեսցեն  
զանձինս և փառաւորեսցեն զազդն և դհայրենիս  
իւրեանց . և մի լիցին աւար և որսք օտարաց :

19. Եթէ առնիցեն ըստ բանիցս այսոցիկ օրհ-  
նեսցէ զքեզ Տէր ՚ի սիօնէ . նորոգեսցէ և երկա-  
րաձգեսցէ զկեանս քո և որդւոց քոց յաղդէ յազգ-  
յաւիտեան . դհրեշտակ իւր առաքեալ փրկեսցէ  
զքեզ և զարդիս քո ՚ի հեթանոսաց և ՚ի բռնաւո-  
րաց . կեանք քո և որդւոց քոց ըստ ծերւոյն Սի-  
մէոնի բազմացի ՚ի վերայ երկրի . արութիւն և  
առողջութիւն Յեսուայ և Սամիփառնի տացի քեզ .  
սուր տեսառն և գեղեհոնի եղիցի ընդ քեզ և պաշտ-  
պանեսցէ զքեզ :

20. Եթէ յօրէնս և յիրաւոնս Տեառն դնասանիք  
մնարտ և պաշտիցէք և սիրիցէք զոէր Աստուած  
յամենայն սրաէ , մատն Անեղանելոյն զեզրայրու-  
թիւն , զսէր և զմիութիւն նորոգեսցէ զօրացուացէ  
և տպաւորեսցէ ՚ի սիրտս ամենեցուն , որով իրրեւ  
խանդակամք ՚ի սէր եղբարց և հայրենեաց խրա-  
խուսեալք երկնալառ միրովն միասցուք ՚ի միաձոյլ  
միաբանութիւն . և ձեռք բռնաւորաց և ատելեաց  
մերոց մի և մի երրէք կարասցեն քակել զանքակ-

անլի միաբանութիւն տանս Հայոց զի ձեռն Ամենակալին հաստատեաց և պահեաց զնա :

21. Ահա զանցս անցելոցդ ժամանակաց դիմառ և պերճութիւնս և զօրութիւնս եղի առաջի քո . զաղէտու և անուղղութիւնս ներկայիտ յայտ արարի քեզ . ո' սիրահարդ հայրենեաց . ահա սրտաբուզիս և վերմեռանդ մաղթանօք մարգարէացայ ՚ի վերայ ապագային քո ՚ի բարութիւն , ՚ի սէր և ՚ի դութ քո իբրեւ որդեսէր հայր և իբրեւ վշտակից վարդապետ սաստեցի զքեզ յանդիմանեցի զքեզ , խրատեցի զքեզ , միսիթարեցի զքեզ օրհնեցի զքեզ , և զամենայն երկնաւոր և երկրաւոր բարութիւնս խնդրեցի ՚ի Տեառնէ վասն ձեր ամենեցուն . զի ապրեսնիք յերեսաց ազեղան և պաղարեր լինիչիք և պտուղն ձեր կացցէ յաւիտեան :

### ՄԱՐԹԱՆՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՒՐԻ

Տէ՛ր Տէ՛ր , զաղերս իմ առ քեզ , մտեալ ՚ի յիմանալի տաճար սրբութեան քո , ուժդին ձայնիւ և հառաջմամբ սրափի խնդրեմք ՚ի մեծ վայելլութեանց քոց , խոնարհեցո՛ զունին քո ՚ի լսել զձայն աղօթից մերոց , զոր միաբանութեամբ մատուցանեմք քեզ . զի ուր ժողովեալ են զօրութիւնք և զինուորութիւնք հրեշտակաց և ամենայն սրբոց քոց օրհնել և փառաւորել զամենակալ թագաւորութիւն քո . որ ամենազօր և անճառելի իշխանութեամբ տիրես տեսանելի և անտեսանելի անտեսանելի անտահման տիրեղերաց , դամք ահա և մեք առաջի շնորհաց

քոց , և հոգւոյ տեսանելեօք տեսամեմք թէ ՚ի  
յահէ անբառելի զօրութեան քո սարսեալ սասանին  
և դողան ամենայն կարծեցեալ թագաւորութիւնք  
աշխարհիս իրբեւ տերեւք ՚ի սաստկութենէ հող-  
մոց . զի զշունչ և զհոգի կարծեցեալ իշխանացո ՚ի  
բռին կալեալ խաղ առնես զփանաքի և զհեղիեզուկ  
մեծութեամբք նոցա . վասն զի դու միայն ես որ  
ունիս զանմահութիւն , մշտնչնաւորութիւն , թա-  
գաւորութիւն , վերացեալ և բարձրացեալ ՚ի վեր-  
քան զերկինս , նստեալ ՚ի Քերովքէս , և բնակեալ  
՚ի լոյս անմատոցց :

Վասն այսորիկ անկեալ առաջի քո ազերսեմք ,  
աղաւեմք և խնդրեմք ՚ի բազմագութ մարդասի-  
րութենէդ քումմէ . Տէ՛ր , մի անտես առներ զա-  
դերս և զմազմանս ամենայն սրբոց քոց նախկին  
լուսաւորչացն մերոց թագէսոսի և Բարդուղիմէսոսի ,  
բազմերախտ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին ,  
սրբոցն Գրիգորիսեանց , Ներսիսեանց , Ղեւոնդեանց ,  
Վարդանանց , Աստմեանց , Սուդիա-  
սեանց , Հռիփափիմեանց , Գայիմանեանց , Հովուաց Հո-  
վուապետաց և ամենայն Հայրատանեաց , զոր ա-  
րեամբ իւրեանց մատուցին ՚ի խորան վառաց քոց ՚ի  
յերկինս : Յիշեա Տէ՛ր՝ զուխտ զաղերս և զարիւն պաշ-  
տօնէից քո և հայեցեալ ՚ի մեծ վայելչութիւն վա-  
ռաց քոց և ընդ անսպառ ողորմութիւն գթութեան  
քո՝ այց արա՛ մեղ ՚ի բարձանց , խնայեա խնայեա  
և դարձեալ խնայեա անկեալ և տառապեալ Հա-  
յաստան աշխարհի մերում և կեցո՛ Տէ՛ր զժողավուրդս  
քո , և օրհնեա դժառանգութիւնս քո , հովուեա  
և բարձրացո զնոսա յայոմհեաէ մինչեւ յաւիտեան :

Ծանեաք մեք Տէր զանօրէնութիւնս մեր . զի  
մեղաք մեք ընդ հարսն մեր և դու բարկացար .  
եղեն մեղք հարցն մերոց ընդ մեզ . սաստեցեր  
ամբարտաւանութեան մերում . խրատեցեր զմեզ  
դաւազանաւ յանդիմանութեան քոյ . վասն մեղաց  
մերոց սակաւ մի տրտմեցուցեր զմեզ և արդ  
վութա' Տէր փութա' փրկել 'ի ձեռաց նեղչաց  
զիաշն արօսի Արդւոյ քո սիրելոյ , զոր դնեաց ա-  
նապական արեամբ խրով և լուսաւորեաց լուսով  
սուրբ աւագանին : Խղեա զանուր . 'ի պարանոցէ  
մերմէ և զլուծ բռնութեանց հեռացո՛ 'ի մէնջ ,  
զի մի կորեցուք խսպառ . , այլ փրկեալ և նորո-  
գեալ փառս վերառաքեցուք տէրութեան իշխա-  
նութեան և առոտւածութեան քում անլոելի օրհ-  
նաբանութեամբ : Աստուած , որ եսդ բովանդակու-  
թիւն անբաւ գթութեանց և մարդասիրութեանց  
առաքեա զհոգի քո սուրբ 'ի բարձանց 'ի միտս և  
'ի հոգիս որդւոյն համօրէն Հայաստանի . զի զհուր  
սիրոյ բորբոքեցէ 'ի նոսա , զհոգի միութեան եղ-  
բայրութեան աստուածսիրութեան և հայրեննասի-  
րութեան նորոգեացէ 'ի սիրտս նոյս . լցուսցէ զմիտս  
նոցա եօթնարփեան չնօրհօքն 'ի փրկութիւն 'ի  
շինութիւն և 'ի նորոգութիւն տանց և տաճարաց ,  
հոգւոյ և մարմնոյ զարմիցն Հայկազանց :

Ի լեռնէ սրբոյ քումմէ կարկառեա զամենազօր  
բաղուկ քո Տէր , 'ի հեթանոսաց և յամենայն ծա-  
դաց երկրի ժողովեա զմեզ 'ի լեռոն սրբութեան  
քո , ուր ընդ հարսն մեր ուխտեցեր ուխտս այլ  
եւս հեղեղաւ բարկութեան քո չապականել զերկիբ  
մեր , չննիւ զագդ և զորդիս մեր յերեսաց երկրի -

այլ խոստացար առնել ողորմութիւն ընդ մեզ և  
ընդ հարսն մեր յաւիտեան զեօթնահրաշաղան զծի-  
ածանն իրբեւ զնչան և զդրօշ հաշտութեան ցու-  
ցանելով յամս վերինս 'ի գագաթն Մասեաց Հոգի-  
քո սուրբ և բարի եկեալ առաջնորդեսցէ մեզ 'ի  
յերկիր ուղիղ ուր խորհրդով ուզգեցան սեղանք  
սիրանուեր պատարագին նոյի . որով խոստացար  
սիրել զնոյ և զորդիս նորա յետ նորա : Եեանք և  
խաղաղութիւն աշխարհի Յիսուս . աղաչեմք զքեզ  
միարան ուխայիւք եկեղեցւոյ քո , զի 'ի բաց ա-  
րացես 'ի մէնջ և յազգէ մերմէ զատելութիւն ,  
զանմիարանութիւն , զխուզվութիւն , և անմեկնելի  
սիրովդ հաստատեացես 'ի մեզ զսէր զխաղաղու-  
թիւն և զմիարանութիւն . երկիւզիւ քով որբով  
բեւեռեա ՚ի մեզ զսէր զյոյս և զհաւատ անրիծ  
և անարատ քրիստոնէութիւն հարցն մերոց , հզօր  
բազկաւ քով պահեա զմեր աներկիւզ յամենայն  
չարէ . զի և մեք խաղաղացեալք յամենայն աշխար-  
հական սահեցմանց . իցուք աաճար ամենասուրբ  
երրորդութեանդ : Որ եսդ Տէր Տէր զօրութեանց,  
ահա և ես տառապեալ երեմիասս ըստ նախկին  
քումդ երեմիաի վասն դստեր ժողովրդեան իմոյ  
՚ի տուէ և 'ի գիշերի դոչեմ և աղաղակեմ առ  
քեզ , անհանդիստ բարբառով աղերսեմ , արտա-  
սուեմ և ասեմ «Յիշեա՛ Տէր՝ որ ինչ անցք անցին  
ընդ մեզ . նայեաց և տես զնախատինս մեր : Ժա-  
ռանգութիւն մեր գարձաւ յօտարութիւն , և բնա-  
կութիւն մեր 'ի նժդեհութիւն : Որք մնացաք մեք ,  
և ոչ դոյր մեր հայր : Մարք մեր իրեւ այրիք  
՚ի ժամանակաց մերոց . . . . » : վասնորոյ ընդ ե-

ըիս մանկուսն միշտ հայցեմք 'ի քէն Տէր . մի  
մատներ զմեղ իսպառ վասն անուան քում սրբոյ ,  
մի ցրեր զուխտա քո . և մի 'ի բացեա առներ զո-  
դորմութիւնս քո 'ի մէնջ . այլ վասն Գրիգորի , Ներ-  
սիսի և Սահմակայ սիրելոյ քո ներեա յանցանաց մե-  
րոց : Եւ փրկեա զմեղ 'ի ծառայութենէ խոտաց  
ապստամբողաց վասն սքանչելեաց քոց Տէր և փո-  
ռաւորեսցի անուն քո յաւխտեան . զի հոգւով  
և ճշմարտութեամբ յամենայն ժամ երկրպագեա-  
ցուք միասնական սուրբ երրորդութեանդ . Հօր և  
Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ . այժմ և յաւխտեանս  
Ամեն :

# ՎՐԻՊԱԿԻ

---

<i>ԵՐԵՒ</i>	<i>ՏՀՂ</i>	<i>ԱԼԽԱԼ</i>	<i>Ուղիղ</i>
6	15	կնիկ	կնիք
8	19	նոյն	նոյնալէն
11	29	՚ի ստորոտին	՚ի ստորին
14	7	մեծաւոր	մերծաւոր
16	17	աչք	աջ
16	29	զտիս	զդիս
26	21	նսեհ	նսեմ
88	15	բռւասականք	բռւասականք
43	16	Հոյոց	Հայոց
44	7	զաւիրեալ	զաւերեալ
53	14	տիեզնէին	դիեզնէին
66	16	ոռկով	ոգւով
79	26	կուսն	կոյսն
80	25	բարբառոս	բարբարոս
80	28	եկեղեցւոց	եկեղեցեաց
97	19	՚ի մահկանացուած	՚ի մահկանացուած
117	24	թագուցանել	թագուցանել
119	22	յասուածութեան	աստուածութեան
155	26	գետն	գէտն
154	6	երբայէցիք	երբայէցիք
163	14	տնեց	տնկեց
167	4	Տորո	Տորոս
167	2	՚ի մարդարէն	՚ի Մարդարէն
167	36	սէրած	սերած
170	16	զագո	զազոս

<i>Երես</i>	<i>Տող</i>	<i>Այլամբ</i>	<i>Բւզիդ</i>
178	11	ձգանց	ձկանց
179	16	Մովսեսի	Մովսիսի
180	2	բանաւոր	բռնաւոր
188	21	զատամախոս	զԱդամախօս
491	13	'ի լեզուծա	'ի լեզուս
423	10	զհոդի Ս.	զհոդիս
423	15	ծառայեմ	ծառայեմք
213	10	յաջողուծա	յաջողուածա
220	22	հռաշկեն	հռչակեն
222	1	միացանց	միանձանց
240	19	մերոնց	մերոցն
249	18	ծեր	ծեր
251	10	տեղայն	տեղոյն
259	7	ծածեալ	ծածկեալ
262	20	նախահարձակ	նախայարձակ
227	21	ԳԼՈՒԽ ԺԲ.	ԳԼՈՒԽ ԺԴ.
262	30	պատշոտն	պակշոտն
271	24	զազարու	Ղազարու
272	7	զզազար	ՂՂազար
275	29	կուսանց	կուսանաց
276	22	պասիցն	պարսիցն
277	3	'ի Անւոյ	'ի յԱնւոյ
288	20	կանայնք	կանայք
290	5	զԶ. Ներսէս	զԵ. Ներսէսն
292	5	'ի կոչնակենի	'ի կոչնակի
294	4	Նախարարացն	Նախարարացն
300	17	կարմեր	կարմիր
304	26	Պազու	Պաչու

( 555 )

<i>Երես</i>	<i>Տաղ</i>	<i>Ախալ</i>	<i>Ուղիղ</i>
306	10	Երան	Երին
310	24	մոշեն	մոնշեն
316	19	զուրաթահայեաց	զուարթահայեաց
332	2	միջակէտս	միջակէտս
383	9	ծւվաց	ծովաց
394	3	դեռանի	դեռանին
414	13	լիներ	լինիր
431	40	հողմակածեալ	հողմակոծեալ
453	3	անկնկարէր	անկնկարէր
498	3	եզրարս	եզրայր
499	29	Տիմօթէոս	Տիմոթէոս
499	44	հովիւ	հովիւ
501	5	ամինայն	ամենայն

—\*—\*—\*—\*—\*

10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31  
32  
33  
34  
35  
36  
37  
38  
39  
40  
41  
42  
43  
44  
45  
46  
47  
48  
49  
50  
51  
52  
53  
54  
55  
56  
57  
58  
59  
60  
61  
62  
63  
64  
65  
66  
67  
68  
69  
70  
71  
72  
73  
74  
75  
76  
77  
78  
79  
80  
81  
82  
83  
84  
85  
86  
87  
88  
89  
90  
91  
92  
93  
94  
95  
96  
97  
98  
99  
100  
101  
102  
103  
104  
105  
106  
107  
108  
109  
110  
111  
112  
113  
114  
115  
116  
117  
118  
119  
120  
121  
122  
123  
124  
125  
126  
127  
128  
129  
130  
131  
132  
133  
134  
135  
136  
137  
138  
139  
140  
141  
142  
143  
144  
145  
146  
147  
148  
149  
150  
151  
152  
153  
154  
155  
156  
157  
158  
159  
160  
161  
162  
163  
164  
165  
166  
167  
168  
169  
170  
171  
172  
173  
174  
175  
176  
177  
178  
179  
180  
181  
182  
183  
184  
185  
186  
187  
188  
189  
190  
191  
192  
193  
194  
195  
196  
197  
198  
199  
200  
201  
202  
203  
204  
205  
206  
207  
208  
209  
210  
211  
212  
213  
214  
215  
216  
217  
218  
219  
220  
221  
222  
223  
224  
225  
226  
227  
228  
229  
230  
231  
232  
233  
234  
235  
236  
237  
238  
239  
240  
241  
242  
243  
244  
245  
246  
247  
248  
249  
250  
251  
252  
253  
254  
255  
256  
257  
258  
259  
260  
261  
262  
263  
264  
265  
266  
267  
268  
269  
270  
271  
272  
273  
274  
275  
276  
277  
278  
279  
280  
281  
282  
283  
284  
285  
286  
287  
288  
289  
290  
291  
292  
293  
294  
295  
296  
297  
298  
299  
300  
301  
302  
303  
304  
305  
306  
307  
308  
309  
310  
311  
312  
313  
314  
315  
316  
317  
318  
319  
320  
321  
322  
323  
324  
325  
326  
327  
328  
329  
330  
331  
332  
333  
334  
335  
336  
337  
338  
339  
340  
341  
342  
343  
344  
345  
346  
347  
348  
349  
350  
351  
352  
353  
354  
355  
356  
357  
358  
359  
360  
361  
362  
363  
364  
365  
366  
367  
368  
369  
370  
371  
372  
373  
374  
375  
376  
377  
378  
379  
380  
381  
382  
383  
384  
385  
386  
387  
388  
389  
390  
391  
392  
393  
394  
395  
396  
397  
398  
399  
400  
401  
402  
403  
404  
405  
406  
407  
408  
409  
410  
411  
412  
413  
414  
415  
416  
417  
418  
419  
420  
421  
422  
423  
424  
425  
426  
427  
428  
429  
430  
431  
432  
433  
434  
435  
436  
437  
438  
439  
440  
441  
442  
443  
444  
445  
446  
447  
448  
449  
450  
451  
452  
453  
454  
455  
456  
457  
458  
459  
460  
461  
462  
463  
464  
465  
466  
467  
468  
469  
470  
471  
472  
473  
474  
475  
476  
477  
478  
479  
480  
481  
482  
483  
484  
485  
486  
487  
488  
489  
490  
491  
492  
493  
494  
495  
496  
497  
498  
499  
500  
501  
502  
503  
504  
505  
506  
507  
508  
509  
510  
511  
512  
513  
514  
515  
516  
517  
518  
519  
520  
521  
522  
523  
524  
525  
526  
527  
528  
529  
530  
531  
532  
533  
534  
535  
536  
537  
538  
539  
540  
541  
542  
543  
544  
545  
546  
547  
548  
549  
550  
551  
552  
553  
554  
555  
556  
557  
558  
559  
550  
551  
552  
553  
554  
555  
556  
557  
558  
559  
560  
561  
562  
563  
564  
565  
566  
567  
568  
569  
570  
571  
572  
573  
574  
575  
576  
577  
578  
579  
580  
581  
582  
583  
584  
585  
586  
587  
588  
589  
580  
581  
582  
583  
584  
585  
586  
587  
588  
589  
590  
591  
592  
593  
594  
595  
596  
597  
598  
599  
590  
591  
592  
593  
594  
595  
596  
597  
598  
599  
600  
601  
602  
603  
604  
605  
606  
607  
608  
609  
610  
611  
612  
613  
614  
615  
616  
617  
618  
619  
620  
621  
622  
623  
624  
625  
626  
627  
628  
629  
630  
631  
632  
633  
634  
635  
636  
637  
638  
639  
640  
641  
642  
643  
644  
645  
646  
647  
648  
649  
650  
651  
652  
653  
654  
655  
656  
657  
658  
659  
660  
661  
662  
663  
664  
665  
666  
667  
668  
669  
660  
661  
662  
663  
664  
665  
666  
667  
668  
669  
670  
671  
672  
673  
674  
675  
676  
677  
678  
679  
680  
681  
682  
683  
684  
685  
686  
687  
688  
689  
690  
691  
692  
693  
694  
695  
696  
697  
698  
699  
690  
691  
692  
693  
694  
695  
696  
697  
698  
699  
700  
701  
702  
703  
704  
705  
706  
707  
708  
709  
710  
711  
712  
713  
714  
715  
716  
717  
718  
719  
720  
721  
722  
723  
724  
725  
726  
727  
728  
729  
720  
721  
722  
723  
724  
725  
726  
727  
728  
729  
730  
731  
732  
733  
734  
735  
736  
737  
738  
739  
730  
731  
732  
733  
734  
735  
736  
737  
738  
739  
740  
741  
742  
743  
744  
745  
746  
747  
748  
749  
740  
741  
742  
743  
744  
745  
746  
747  
748  
749  
750  
751  
752  
753  
754  
755  
756  
757  
758  
759  
760  
761  
762  
763  
764  
765  
766  
767  
768  
769  
760  
761  
762  
763  
764  
765  
766  
767  
768  
769  
770  
771  
772  
773  
774  
775  
776  
777  
778  
779  
780  
781  
782  
783  
784  
785  
786  
787  
788  
789  
780  
781  
782  
783  
784  
785  
786  
787  
788  
789  
790  
791  
792  
793  
794  
795  
796  
797  
798  
799  
790  
791  
792  
793  
794  
795  
796  
797  
798  
799  
800  
801  
802  
803  
804  
805  
806  
807  
808  
809  
810  
811  
812  
813  
814  
815  
816  
817  
818  
819  
810  
811  
812  
813  
814  
815  
816  
817  
818  
819  
820  
821  
822  
823  
824  
825  
826  
827  
828  
829  
820  
821  
822  
823  
824  
825  
826  
827  
828  
829  
830  
831  
832  
833  
834  
835  
836  
837  
838  
839  
830  
831  
832  
833  
834  
835  
836  
837  
838  
839  
840  
841  
842  
843  
844  
845  
846  
847  
848  
849  
840  
841  
842  
843  
844  
845  
846  
847  
848  
849  
850  
851  
852  
853  
854  
855  
856  
857  
858  
859  
860  
861  
862  
863  
864  
865  
866  
867  
868  
869  
860  
861  
862  
863  
864  
865  
866  
867  
868  
869  
870  
871  
872  
873  
874  
875  
876  
877  
878  
879  
880  
881  
882  
883  
884  
885  
886  
887  
888  
889  
880  
881  
882  
883  
884  
885  
886  
887  
888  
889  
890  
891  
892  
893  
894  
895  
896  
897  
898  
899  
890  
891  
892  
893  
894  
895  
896  
897  
898  
899  
900  
901  
902  
903  
904  
905  
906  
907  
908  
909  
910  
911  
912  
913  
914  
915  
916  
917  
918  
919  
910  
911  
912  
913  
914  
915  
916  
917  
918  
919  
920  
921  
922  
923  
924  
925  
926  
927  
928  
929  
920  
921  
922  
923  
924  
925  
926  
927  
928  
929  
930  
931  
932  
933  
934  
935  
936  
937  
938  
939  
930  
931  
932  
933  
934  
935  
936  
937  
938  
939  
940  
941  
942  
943  
944  
945  
946  
947  
948  
949  
940  
941  
942  
943  
944  
945  
946  
947  
948  
949  
950  
951  
952  
953  
954  
955  
956  
957  
958  
959  
960  
961  
962  
963  
964  
965  
966  
967  
968  
969  
960  
961  
962  
963  
964  
965  
966  
967  
968  
969  
970  
971  
972  
973  
974  
975  
976  
977  
978  
979  
980  
981  
982  
983  
984  
985  
986  
987  
988  
989  
980  
981  
982  
983  
984  
985  
986  
987  
988  
989  
990  
991  
992  
993  
994  
995  
996  
997  
998  
999  
990  
991  
992  
993  
994  
995  
996  
997  
998  
999  
1000





ՀՀ Ազգային գրադարան



NL0345688

